Մ - 25 19 MAR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ
2009

21.02.2013

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 283

Հրատարակությունը իրականացվել է
Արամ Մանուկյանի 130-ամյակի նշումը
նախապատրաստող հոբելյանական
հանձնաժողովի որոշմամբ՝
պետական ֆինանսավորմամբ

Գլխավոր խմբագիր և կազմող՝ պատմական
գիտությունների դոկտոր **Ամատունի Վիրաբյան**

Կազմողներ՝ **Գոհար Ավագյան, Մարո Ավետիսյան**
Առաջաբան հեղինակ՝ **Արմեն Ասրյան**

Մ 283 Արամ Մանուկյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ Գլխավոր խմբագիր՝ Ա.Վիրաբյան.-Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2009.- 575 էջ:

«Արամ Մանուկյան» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում ներկայացված են ինչպես արխիվներում պահպանվող, այնպես էլ ժամանակի մամուլում հրապարակված վավերագրեր 20-րդ դարասկզբի հայոց ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի ինքնապաշտպանության ղեկավար, 1918թ. մայիսյան հերոսամարտերի կազմակերպիչ, Հայաստանի Հանրապետության կերտող Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության մասին:

Ժողովածուն հասցեագրված է պատմաբաններին, քաղաքագետներին, հայոց ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի առաջին հանրապետության պատմությամբ հետաքրքրվողներին:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-878-2-9
© Հայաստանի ազգային արխիվ
648-2010



ԱՌԱՋԱԲԱՆ

Անհնար է պատկերացնել նոր ժամանակներում հայոց անկախ պետականության վերականգնման իրողությունը, առանց վերհիշելու և արժևորելու Արամ Մանուկյանի կյանքն ու գործունեությունը:

Հայոց պատմության էջերում իբրև հայաստանի հանրապետության հիմնադիր հսկայածաւ Արամ Մանուկյանը (ծննդյան անվամբ՝ Սարգիս Հարությունի Հովհաննիսյան) ծնվել է 1879թ. մարտի 19-ին Ղարաբաղի Շուշի քաղաքում: Արամի հայրը գինագործ էր, իսկ մայրը՝ Սոնան, զբաղվում էր երեխաների խնամքով, որոնք հինգն էին՝ Հովհաննես, Կարապետ, Սարգիս, Աննա. Սառա: Սարգիսը (Արամը) երեխաներից կրտսերն էր: Նա իր նախնական կրթությունը ստացել է Շուշիի Ագուլյաց ծխական դպրոցում, ապա 1895թ. ընդունվել է Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոց: Հայ ազգային-ազատագրական պայքարի վերելքի այդ ժամանակաշրջանում Շուշին դարձել էր ազգային-հեղափոխական գաղափարների խմորումների կարևոր կենտրոններից մեկը: Թեմականի աշակերտ Արամը շատերի հետ անդամագրվեց Շուշիում իր կազմակերպչական ցանցն ընդարձակող հայ ազատամարտի առաջատար ուժ ՀՀ դաշնակցությանը և իր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդի ազատության վեհ գործին:

Արդեն թեմական դպրոցում ուսանելու տարիներին Արամն աչքի ընկավ կուսակցական մեծ ակտիվությամբ: Նա քարոզչական-կազմակերպչական աշխատանքներ ծավալեց և՛ թեմականում, և՛ քաղաքում ու գյուղերում: Նրա գործունեությունը նկատելի էր հատկապես թեմական դպրոցում: Այստեղ նա նախաձեռնեց աշակերտական հավաքներ, մի քանի ընկերների հետ հրատարակեց «Կռկռն» անունով ձեռագիր թերթիկը՝ քարոզելով հայրենասիրական-հեղափոխական գաղափարներ: Հեղափոխական գաղափարներ տարածելու համար Արամը և նրա մի շարք կուսակցական ընկերներ 1900-1901 ուստարվա վերջին հեռացվեցին Շուշիի թեմականից, որից հետո ուսումը շարունակեցին Երևանի թեմական դպրոցում: Այստեղ ևս եռում էր աշակերտական կյանքը. աշակերտությանը կրթական հարցերից բացի հուզում էին նաև ազգային-հասարակական խնդիրներ: Արամն անմասն չմնաց այդ շարժումից: Նա պատրաստում էր «դասախոսություններ, ընթերցումներ, հրատարակում աշակերտական թերթ, կապ պահպանում ուրիշ քաղաքների աշակերտական միութիւնների հետ և մասնակցում կուսակցական ընդհանուր գործունէութեան»[1]:

Արամը բարեհաջող կերպով Երևանի թեմականն ավարտեց 1903թ. մայիսին[2]: Դեռևս 1901 թվականից նա գտնվում էր ՀՀԴ Բաքվի կենտրո-

---

[1] «Զանգ», Երևան, 1919, փետրվարի 9, N 16:
[2] ՀԱԱ, ֆ. 8, ց. 1, գ. 59, թ. 52:

նական կոմիտեի տրամադրության տակ, իսկ ուսումն ավարտելուց հետո նա հաստատվեց Բաքվում, որը 20-րդ դարասկզբին Անդրկովկասի հայ հասարակական-քաղաքական կյանքի խոշորագույն կենտրոններից էր: Այստեղ հայ քաղաքական ուժերը, առանձնապես ՀՀԴ-ն և հայ սոցիալ-դեմոկրատական խմբակները հայ բանվորության շրջանում ծավալել էին աշխատանքներ՝ ձգտելով իրենց շուրջը համախմբել նրանց: Քաղաքական հորձանուտ ներքաշված Արամը շուտով դարձավ Բաքվի կազմակերպության ճանաչված գործիչներից մեկը[3]: Նա մասնակցեց քաղաքական ցույցերին ու գործադուլներին, որպես Դաշնակցության ներկայացուցիչ 1903թ. ընտրվեց գործադուլային բյուրոյի անդամ[4]: Հատկանշական է այն, որ հավաքների ժամանակ Արամն արծարծում էր նաև արևմտահայության օգնելու խնդիրը:

Իբրև ՀՀԴ անդամ Արամն ակտիվ մասնակցություն ունեցավ հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին ցարական հրամանագիրը չեղյալ համարելու համար մղվող պայքարին: Այնուհետև ՀՀԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի հրահանգով նա մի կարճ ժամանակով եղավ Գանձակում՝ տեղի ինքնապաշտպանական աշխատանքները կազմակերպելու նպատակով, ապա անցավ Կարս՝ փորձառություն ձեռք բերելուց հետո Սասուն անցնելու մտադրությամբ:

1903թ. ամռան երկրորդ կեսին Կարսում հաստատված Արամը եռանդուն մասնակցություն ունեցավ ՀՀԴ Կարսի մարմնի ծավալած աշխատանքներին: Նրա գործունեության կարևոր կողմերից մեկը ազատագրական շարժման խորացմանն ուղղված քարոզչությունն էր: Նրանից մի փոքր ուշ Կարս անցած Ռուբենն այսպես է բնորոշել Արամի քարոզչական գործունեությունը. «Երբ ես Կարս եկայ, որպես փրոփականտի կեդրոնական դէմք մնացէր էր Սերգէյը, շրջապատուած ինձ պէսներով, որոնք թէեւ կը տեսնէին, կը հասկնային, բայց երբ գործը կու գար հասկցնելու դիմացինին, լեզուին փայտ կը կտրէր, կը ծանրանար: Ուստի լաւ էր որ մենք լռէինք եւ փրոփականտի գործը ձգէինք Սերգէյին»[5]: Ուղղամիտ, զրուցակիցների հետ անմիջական Արամը ժողովների ժամանակ խոր հավատով էր պաշտպանում իր ասածը և ոգևորում բոլորին: Ազատամարտի նվիրյալներից Մենակի (Եգոր Առստամյան) և Իսաջան Առաքելյանի նահատակության առիթով նա նշում էր. «սիրելիք, լացը, սուգը նրանց համար չէ. նրանք նահատակուեցին եւ անմահութիւնը վաստակեցին: Լացը, սուգը մեզի համար է, որ խօսում ենք նահատակութիւնից, բայց վախենում ենք վաստակել գայն...»: Ռուբենի արտահայ-

---

[3] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գ. I, Երևան, 2003, էջ 599:

[4] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, Պէյրութ, 1976, էջ 165:

[5] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990, էջ 88:

տությամբ «Սերգէյը իր նպատակին հասած էր՝ պատրաստած էր բոլորը «մատաղ» ընելու»[6]: Արամի հաջողությունները քարոզչական բնագավառում այնքան ակնհայտ էին, որ Դաշնակցության Կայսի կազմակերպությունը նրան վստահեց քարոզչական գործի ղեկավարությունը, հակառակ նրա անհամաձայնությանը, թե դա չէր Կարս անցնելու իր նպատակը: Արդեն այս շրջանում Արամը հանդես էր գալիս որպես հասուն քաղաքական գործիչ: Նա գտնում էր, որ ազգային իրավունքները վերականգնելու համար պետք է ապավինել սեփական ուժերին[7]:

Արամն ակտիվորեն մասնակցեց Երկիր ուղարկվող զինատար խմբերի կազմակերպմանը, որոնց միջոցով ազգային-քաղաքական ուժերը, ամենից առաջ ՀՀ դաշնակցությունը, հույս ունեին նոր թափ հաղորդել ազգային-ազատագրական պայքարին: Ավելին, 1903թ. սեպտեմբերին նա իր իսկ մասնակցությամբ ստեղծված խմբերից մեկի՝ Խանի (Բարսեղ Թիրեաքյան) և Նևրուզի (Օննիկ) 150 հոգանոց խմբի հետ փորձեց անցնել Արևմտյան Հայաստան (Երկիր), սակայն հիվանդության պատճառով կես ճանապարհից հետ վերադարձավ[8]:

Հերոսաբար կռվելով թշնամու գերակշռող ուժերի դեմ և տասնյակ անգամ ավելի զոհեր խլելով, Սասունին օգնության շտապող զինատար խմբերի մեծ մասը լրիվ կամ մասնակիորեն ջախջախվեց: Նման պայմաններում «Կարսի հնոցում» կուփված Արամը վճռեց անցնել Արևմտյան Հայաստան և տեղում նպաստել ազատագրական շարժման ծավալմանը: 1905թ. փետրվարի 6-ին նա հաստատվեց Վանում՝ նախապես ՀՀԴ ղեկավարությունից ստանալով համապատասխան հրահանգներ, նաև որպես կուսակցության Վանի կենտրոնական կոմիտեի իրավահավասար անդամ գործելու լիազորություն[9]: Վանում Արամին դիմավորեց և գործերի վիճակին ծանոթացրեց ՀՀԴ Վանի կազմակերպության ղեկավար Կոմսը: Վերջինիս տպավորությունն այն էր, որ Արամը լուրջ, խելացի և ունակ գործիչ էր, և կարող էր նպաստել գործերի հաջողությանը[10]: Կարճ ժամանակ անց՝ տեսնելով ՀՀԴ Վանի կազմակերպության ղեկավարությունը, նա, ելնելով ազատագրական շարժման անցյալից, և հետամուտ լինելով իր կուսակցության կողմից որդեգրվող պայքարի նոր մարտավարությանը, նոյնդում գործունեությունն ծավալեց ընդհանուր ապստամբության համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու, առաջին հերթին Վան գենք-զինամթերք փոխադրելու ուղղությամբ[11]: Արամը պաշտպանում էր Հրայրի

---

[6] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, էջ 45:
[7] Նույն տեղում, էջ 187-196:
[8] «Հայրենիք», Բոստոն, 1922, N 1, էջ 30:
[9] Հենց այս ժամանակից է նա ընդունել Արամ Մանուկյան անուն-ազգանունը:
[10] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, հ. Ա, էջ 350:
[11] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան ...., հ. Գ, էջ 105:

այն գաղափարը, որ եթե հայերը պետք է ապստամբություն բարձրացնեն, ապա դա պետք է լինի համաժողովրդական՝ նախապատրաստված բազմակողմանիորեն և հիմնավոր[12]*: Բոնի հեղափոխությունը, այսինքն՝ զինված ապստամբությունը համարելով իրենց վերջնական նպատակը՝ Արամը գտնում էր, որ այն պետք է դնել նպաստավոր հողի վրա*[13]*: Հատկանշական է այն, որ լինելով դաշնակցական գործիչ, նա չէր խորշում օգտվել Սմենականո կուսակցության նախապատրաստական աշխատանքների հարուստ փորձից և չէր բաբցնում այդ բանը:*

ՀՀԴ գործունեության կարևորագույն կողմը Երկրում հետագա պայքարի համար զենք կուտակելն էր: Արամի ղեկավարությամբ ՀՀԴ Վանի կազմակերպությունը նպատակամղված գործունեություն ծավալեց առաջին հերթին այդ ուղղությամբ: Միայն 1906թ. ընթացքում Վան փոխադրվեց ավելի շատ զենք-զինամթերք, քան նախորդ 15 տարիներին[14]*: 1906թ. Վան փոխադրվեց ավելի քան 400 հրացան: Այդ գործին Արամն ունեցավ անմիջական մասնակցություն: 1906թ. հոկտեմբերին, Վիեննա մեկնելուց առաջ, հաստատվելով սբ. Թադեի վանքում (Պարսկաստան)՝ նա Երկիր առաքեց մի քանի հարյուր հրացան, մոտ 100 հազար փամփուշտ և այլ ռազմամթերք*[15]*: Արամի ղեկավարության շրջանում ավարտվեց Վանի նահանգում ՀՀԴ ամբողջական հաստատման և գանգվածային կազմակերպության վերածման գործընթացը: 1908թ. թուրքական սահմանադրության նախօրյակին Դաշնակցությունը Վանում ուներ մոտ 1000 անդամ, իսկ գյուղերի «մեծ մասը՝ քահանայով, ձէտով և գզիրով՝ դաշնակցական էին...»*[16]*:*

Չեռնարկվեցին արդյունավետ քայլեր հայության ներքին կյանքին թուրքական կառավարության միջամտությունները կանխելու և ըղձական շահատակություններին վերջ տալու ուղղությամբ: Թուրքական իշխանություններն առիթը բաց չէին թողնում միջամտելու հայերի ներքին կյանքին, որը բանկ էր նստում վերջիններիս վրա. նրանք ենթարկվում էին հավելյալ սոցիալ-տնտեսական, ֆիզիկական ճնշման և անձնական նվաստացման: Ժողովրդի գլխին պատուհաս էին նաև թուրքական դատարանները, որոնք տարիներով ձգձգում էին դատական գործերը և դրանք լուծում միայն կաշառքի, ծեծի ու կեղծիքի միջոցով: Կառավարական անտեղի միջամտությունների կանխմանը միտված կարևորագույն քայլերից էր դատական

---

[12] Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գ. I, էջ 628:

[13] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 104:

[14] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 105:

[15] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մատենադարան, Նորագույն ձեռագրերի հավաքածու, N 146, Մանուկյան Արամ, Վերյիշումներ դիւցազնական աճցեալից, Տ. 6, էջ 22բ-23բ: «Արամը», Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 373:

[16] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, հունվարի 3, N 6, էջ 4:

գործի անօրինումը ՀՅԴ Վանի կազմակերպության կողմից: Դաշնակցական դատարանները դատերը կատարում էին անվճար, առանց ձգձգումների, տեղական սովորույթների համաձայն: Վանի հայտնի չեզոք գործիչ Հ. Երամյանը, որը տարբեր առիթներով քննադատել է Դաշնակցությանը, գովաբանել է նրանց դատական գործունեությունը՝ գրելով. «Երեք չեֆերը՝ Կոմս, Արամն ու Իշխանը, ինչպէս և իրենց զանազան գործակալները քաղաքի և գաւառներու մէջ դատական կամ առնելիքի ու տալիքի խնդիրներ ևս կը վճռէին այնչափ արագ և ուղիղ այնքան արդար, որ թուրքեր ու քիւրտեր անգամ անոնց գաղտնի դատարաններու կը դիմէին՝ պետական ատեաններու ձգձգումներէն և ծախսերէն խուսափելու համար»[17]:

Արևմտյան Հայաստանում ծավալված գործունեության առաջին տարիներից Արամն իրեն դրսևորեց որպես հետևողական, կազմակերպչական մեծ ջիղ ունեցող գործիչ: Նրա ղեկավարությամբ իրականացված քայլերի շնորհիվ ՀՀԴ Վասպուրականի կառույցը դարձավ ամենամարտունակ ու հեղինակավոր կազմակերպությունը Արևմտյան Հայաստանում, իսկ ինքը կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ հեղինակություն և ժողովրդի կողմից արժանացավ «փաշա» տիտղոսի: Նրան վարկաբեկելու և հեղինակազրկելու թուրքական իշխանությունների բոլոր փորձերը ձախողվեցին:

Իբրև ՀՀԴ Վանի կազմակերպության ներկայացուցիչ Արամը մասնակցեց 1907 թվականին Վիեննայում կայացած ՀՀԴ 4-րդ ընդհանուր ժողովին: Նա այն պատգամավորների թվում էր, որոնք ըստ ամենայնի դեմ էին ազատագրական պայքարի անցած տարիներին կուսակցության ծավալած գործունեության վերաքննման, սխալներն ընդունելու և դրանք չկրկնելու խնդրին: Նա նշում էր. «Ներկայումս մենք ոչ թէ պիտի նոր ձեռնարկների մասին մտածենք, այլ պիտի աշխատենք մի նպատակայարմար տակտիկա ընդունել, որից կը բխեն նոր ձեռնարկները: Հին մեթոդը շարունակելով մենք նոյն հին սխալները կ'անենք»[18]: Բոլոր խնդիրներում նրա մեկնակետը ժողովրդին ջարդերից ու զրկանքներից հեռու պահելու մտահոգությունն էր: Արամը հանդես եկավ նաև իբրև կուսակցության միասնության սկզբունքի հետևողական պաշտպան: Չնայած իր երիտասարդ տարիքին, նա արդեն բավականին փորձառու քաղաքական գործչի տպավորություն էր թողնում, որը չէր ընդունում ծայրահեղ ձախակողմյան-անջատական տրամադրություններով տարված որոշ երիտասարդ գործիչների տեսակետները՝ Ղափարքաղի բարբառով նրանց տալով «փոխեք» փաստարշական բնորոշումը:

[17] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, էջ 70-71:

[18] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան..., հ. Գ, էջ 110:

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Արամն արտահայտվեց նրանց հետ համագործակցելու իր կուսակցության քաղաքական գծի օգտին: Իսկ ՀՀԴ-ն փոխզիջման դիրք էր ընդունել և ձգտում էր արևմտահայության դրության բարելավմանը հասնել Օսմանյան կայսրության շրջանակում՝ խաղաղ ճանապարհով և առանց արտաքին միջամտության: Սակայն ժողովրդավարական կարգախոսներով իշխանության անցած երիտթուրքերը չընդունեցին Դաշնակցության և արևմտահայ հասարակական-քաղաքական մյուս ուժերի այս դիրքորոշումը: Նրանք նոր թափով շարունակեցին նախկին վարչակարգի հայաջինջ քաղաքականությունը:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական իշխանությունների հետ բանակցությունների միջոցով Արամն ամեն կերպ փորձեց Վանի հայությանը փրկել զրկանքներից ու ջարդերից, իսկ երբ խաղաղ միջոցներով այլևս անհնար դարձավ կանխել հայոց մեծամասնության ջարդերը, Արամը, որպես ՀՀԴ ներկայացուցիչ, քաղաքական այլ ուժերի հետ ձեռնարկեց 1915թ. ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպմանը. «Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն,– նկատել է Արամը:– Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»[19]: Արամը քաջ գիտակցում էր, որ հայոց դարավոր թշնամուն միայն ազգային միասնությամբ կարելի է հակահարված հասցնել և այդ իսկ պատճառով ամեն ինչ արեց այդ միասնությանը հասնելու համար: Ինքնապաշտպանության ընդհանուր գործի ղեկավարման մեջ ներգրավվեցին բոլոր հեղինակություն ունեցող գործիչները՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: 1915թ. ապրիլի 5-ին Արամի նախաձեռնությամբ ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը, որում նրա առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը, Կայծակ Առաքելը, ռամկավար Արմենակ Եկարյանը, անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ[20]: Որոշ ժամանակ անց Արամը նույնպես մտավ այդ մարմնի մեջ[21] և ղեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը[22]:

Արամի գործուն մասնակցությամբ ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա մի շարք կառույցներ՝ Զինաբաշխ մարմինը, Տեղեկատու դի-

---

[19] Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի: Հայաստանի ջարդերը, Թարգմանեց՝ Մ.Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 106:

[20] Հերոսապատում Մեծ Եղեռնի, Պէյրութ, 1978, էջ 59; Վան-Վասպուրականի հերոսամարտը-75 (կազմ.՝ Հ. Փափազյան). Երևան, 1990, էջ 22:

[21] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39:

[22] Այգեստանից մեկուսացված Քաղաքամեջում՝ Վան քաղաքի երկրորդ մասում, ևս հայերը դիմեցին ինքնապաշտպանության և փրկվեցին կոտորածներից:

վանը, զինագործարանը, հիվանդանոցը և այլն: Զինվորական մարմնի քարտուղար Օ. Մխիթարյանի հավաստմամբ՝ «Զինվորական մարմնի և անոր յարակից օրգաններու, ինչպէս նաև Վանի հերոսամարտի ամբողջ բարոյական ղեկավարությունը»[23] ընկել էր Արամի վրա:

Վանի ինքնապաշտպանությունը սկսվեց 1915թ. ապրիլի 7-ին: Այդ օրը թուրքերը, հուժկու հրետակոծությունից հետո, անցան լայնածավալ հարձակման հայկական դիրքերի վրա: Առանձնապես օրհասական դրություն ստեղծվեց Սահակ բեյի դիրքում: Գիտակցելով պահի լրջությունը՝ Արամը, համապատասխան ցուցումներ տալով Զինվորական մարմնի անդամներին, մի խումբ մարտիկների հետ անմիջապես շտապեց այնտեղ: Հայտնվելով հրացանային և բռնանոթային ուժգին կրակի տակ՝ նա առաջնորդին վայել իր պահվածքով (զինվորներից յուրաքանչյուրի հետ առանձին զրուցում էր, համբուրում նրանց, գոտեպնդում և խորհուրդներ տալիս) բարձրացրեց զինվորների մարտական ոգին[24]: Արամի, Զինվորական մարմնի անդամներ Ա. Եկարյանի, Բուլղարացի Գրիգորի և Կայծակ Առաքելի ղեկավարությամբ հայերը ոչ միայն հուսալիորեն պաշտպանվում էին, այլև արժանի հակահարված տալիս թշնամուն: Ապրիլի 8-ին և 9-ի լույս 10-ի գիշերը հայկական ուժերը. արիություն ցուցաբերելով, գրավեցին թուրքական զորքերի մի շարք կարևոր հենակետեր:

Արամի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Վանով: Դեռևս ապրիլի 14-ին, ընդունելով թուրքերի դեմ մաքառող շատախցիների պատվիրակությունը, նա հրահանգեց Շատախի, Փեսանդաշտի և Քերծի մարտիկներին վարել բացառապես պաշտպանական մարտեր ու միշտ լինել ժողովրդի հետ[25]: Եղնելով քաղաքի պաշտպանների բարոյահոգեբանական, ռազմական ու պարենային կացությունը չծանրացնելու նկատառումներից՝ Արամն արգելեց Շուշանց-Վարագ գծում հավաքված 5.000 - հայ փախստականների նահանջը Վան և Զինվորական մարմնի մյուս անդամների հետ քայլեր ձեռնարկեց նրանց պաշտպանության համար: Ապրիլի 14-ին Արամի հրահանգով այնտեղ ուղարկվեցին Այգեստանում ապաստանած 15.000 գաղթականներից առանձնացված զինված զյուտացիները: Ձեռնարկված քայլերի շնորհիվ տեղի ազգաբնակչությունը մինչև ապրիլի 25-ը դիմադրեց թշնամուն և հետո միայն հարկադրաբար նահանջեց Վան:

Թուրքական զորքերի հարձակումները Վանի վրա կրկնվեցին բազմիցս, սակայն միշտ էլ հաջողությամբ հետ մղվեցին: Հայոց դիմադրությունն այնքան հերոսական ու կազմակերպված էր, որ թուրքական զրոհներից մեկն առաջնորդող գերմանացի մի սպա, կրած անհաջողությունից

---

[23] Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 54:
[24] Նույն տեղում, էջ 74-75:
[25] Նույն տեղում, էջ 131:

հուսահատված, հեռացավ Վանից՝ խոստովանելով, թե այդպիսի դիմադրության չէր սպասում[26]:

1915թ. մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին թուրքերի վերջին գրոհը: Չկարողանալով կոտրել վանեցիների հերոսական դիմադրությունը և տեղեկանալով ռուսական բանակի առաջխաղացման մասին՝ կուսակալը դադարեցրեց քաղաքի պաշարումը և նահանջեց Բիթլիսի ուղղությամբ: Վանի ինքնապաշտպանությունն ավարտվեց հաղթանակով, ինչի շնորհիվ ավելի քան 150 հազար վնասպարակացիներ փրկվեցին անխուսափելի կոտորածներից:

1915թ. մայիսի 5-ին Արարատյան կամավորական գնդի հեծելազորը Դաշնակցական Խեչոյի և Դալի Ղազարի հրամանատարությամբ մտավ Վան՝ արժանանալով ցնծագին ընդունելության: Նրանց դիմավորեց Արամը՝ իր օգնականների և քաղաքի բնակչության հետ[27]: Մայիսի 6-ին Վան հասան կամավորական գնդերի հրամանատարներ Դրոն, Քեհին, Վարդանը, ռուս ռուսական բանակի Բայազետյան գործաջոկատի հրամանատար, գեներալ Ա. Նիկոլաևը, որին էլ Արամը վանեցիների անունից հանձնեց քաղաքի բանալիները[28]: Ի պատասխան հերոսամարտի հաղթանակի առթիվ ի. և ՀՀԴ հասցեին կատարած կամավորական գնդի հեծելազորի հրամանատար Խեչոյի գովասանքի՝ Արամն ազնվորեն նշեց, թե Վանում «կուսակցությունը չէ որ գործ տեսաւ, այլ ամբողջ ժողովուրդը»[29]: Հիրավի, թեև Դաշնակցության դերը հերոսամարտում վիթխարի էր, սակայն նրան մասնակցել էին նաև մյուս կուսակցությունները, ամբողջ ժողովուրդը:

1915թ. մայիսի 7-ին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ: Այդ նշանակումը միանգամայն բնական էր, քանզի նրա հեղինակությունն ընդունում էին բոլորը՝ և՛ դաշնակցականները ու ոչ դաշնակցականները, և՛ օտար գործիչները, և՛ նույնիսկ թուրքերը:

Արամի գլխավորությամբ Վասպուրականի հայությունը ծեռնամուխ եղավ հայրենի նահանգի վերաշինմանը: Ձևավորվեցին նահանգի վարչական կառույցներն ու կառավարման համակարգը: Հատկանշական է այն փաստը, որ Վանի կառավարությունը ձևավորելիս Արամը հերթական անգամ դրսևորեց ապակուսակցական մոտեցում՝ նրանում ընդգրկելով բոլոր կարող ուժերին, ինչ կուսակցության էլ նրանք պատկանեին: Եռանդուն աշխատանք ծավալվեց նահանգի անվտանգության ապահովման, քայքայված տնտեսության վերականգնման, գաղթականության խնամքի,

---

[26] Բարթի Հ., Սարսափի երկրին մէջ: Նահատակ Հայաստան, Թարգմանեց՝ Մ. Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 84:

[27] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 45:

[28] Նույն տեղում, ց. 1, գ. 2, թ. 45, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 44, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 51:

[29] Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 233:

օրինակաձեւության և կարգ ու կանոնի ապահովման և այլ ուղղություններով:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից էր ինքնապաշտպանության ապահովումն ու ճահճից հեռացած քրդերի վերադարձի կանխումը: Քրդական հարձակումներից պաշտպանվելու համար ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնք ընդհուպ մինչև հուլիսյան գաղթը հաջողությամբ կատարեցին իրենց վրա դրված խնդիրը: Այլևայլ, բայց հատկապես քրդերի վերադարձի առնչությամբ առկա էին լուրջ հակասություններ Արամի և ռուսական զորահրամանատարության միջև: Եթե Արամը ձգտում էր խափանել հայոց ցեղասպանությանը մասնակցած քրդերի վերադարձը, ապա ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում: Այսպես, Էմվկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարը 1915թ. հուլիսին թույլատրել էր ռուսական հպատակություն ընդունած քրդերի վերադարձը իրենց նախկին վայրերը[30]: Անհանգստացած իր ժողովրդի ճակատագրով՝ Արամը, դրսևորելով մեծ պատասխանատվություն իր ժողովրդի նկատմամբ, հուլիսի 26-ին և 27-ին դիմեց ռուսական բանակի հրամանատարությանը՝ փորձելով կանխել այդ որոշման կենսագործումը[31]:

Արամի մտածված, հետևողական միջոցառումների շնորհիվ Վանի ճահճազապետությունը օր-օրի ոտքի էր կանգնում. կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում: Ապագայի հանդեպ լավատես հույսերով տոգորված ժողովուրդը վերակառուցում էր ավերված օջախները, կառուցում տները, մշակում դաշտերն ու այգիները, վերաբացում արհեստանոցներն ու խանութները, փոխը, շուկան, աշխուժացնում առևտուրն ու կրթական կյանքը: Հաջողություններն այնքան ակնհայտ էին, որ ամենց չափազանցության կարելի է Վանի ճահճազապետությունն անվանել հայոց ազատագրական պետականության նախատիպ:

Սակայն, Վանի հայկական ճահճազապետությունը երկար կյանք չունեցավ: Էմվկասյան բանակի 4-րդ կորպուսի ճահճոջի հետևանքով հուլիսի 18-ին Վան-Վասպուրականի հայությունը հարկադրաբար բռնեց գաղթի ուղին: Արամը, հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, հայրենասիրություն, պատասխանատվության և պարտքի բարձր զգացում իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ, վճռականապես դեմ արտահայտվեց այդ ապետաբեր քայլին և փորձեց կանխել այն, սակայն գաղթի կասեցումը նրա և հայրենանվեր մյուս գործիչների ուժերից մեր էր:

Հարկադրաբար հեռանալով Վանից, Արամ Մանուկյանը մինչև 1917թ. դեկտեմբերը հաստատվեց Թիֆլիսում և ակտիվորեն մասնակցեց Անդրկովկասում ու նրա սահմաններից դուրս ետացող ազգային-քաղաքական

---

[30] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42; ֆ. 503, ց. 1, գ. 62, թ. 6:
[31] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42-47:

կյանքին, որի առանցքը ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականների ճակատագիրն էր: 1916թ. մարտի 2-ին Արամը ելույթ ունեցավ Բաքվի Հայոց ազգային բյուրոյի նիստում և իրազեկեց արևմտահայությանը պատուհասած արհավիրքի մասին[32]*: 1916թ. մայիսի նա մասնակցեց Պետրոգրադում գումարված հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների առաջին համագումարին*[33]*, որտեղ քննության դրվեցին արևմտահայ փախստականներին նյութական օժանդակություն ցուցաբերելու, նրանց բժշկական, կրթական և այլ կարիքները բավարարելու հարցերը (ցարական աստիճանավորները արգելել էին քաղաքական հարցերի քննարկումը): Այդ խնդիրները հաջողությամբ իրականացնելու համար հարկավոր էր ստեղծել փախստականների գործերը տնօրինող կենտրոնական մարմին, որը կկորդինացներ մնացյալ բոլոր մարմինների աշխատանքը: Մի շարք պատգամավորների թվում Արամը ևս գտնում էր, որ նոր կառույցի նստավայրը պետք է գտնվեր ժողովրդին հնարավորին չափ մոտ, քանզի այդ ժամանակ այն ավելի լավ կտեսներ նրա կարիքները և, բնականաբար, կգործեր առավել արդյունավետ: Համագումարը ցանկալի արդյունքը չտվեց, այդ իսկ պատճառով նոր հավաք գումարելու կարիք առաջացավ: 1916թ. դեկտեմբերին Արամը, Անդրանիկը և Ա. Դարբինյանը հանդես եկան արևմտահայերի համագումար հրավիրելու նախաձեռնությամբ, սակայն ցարական իշխանությունները արգելեցին:*

Արամի և ազգային-քաղաքական մյուս գործիչների և ուժերի գործունեությունն ավելի ակտիվացավ և, որ կարևոր է, արգասաբեր եղավ 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ նորաստեղծ Ժամանակավոր կառավարությունը Ռուսաստանում հաստատեց քաղաքական-դեմոկրատական ազատություններ: Արամը, Անդրանիկը և Ա. Դարբինյանը երկրորդ անգամ ձեռնամուխ եղան արևմտահայերի համագումար հրավիրելու աշխատանքներին, և այս անգամ հասան հաջողության: 1917թ. մայիսի 2-11-ը Երևանում գումարվեց արևմտահայերի առաջին համագումարը, որն ընդունեց կարևորագույն որոշումներ միտված արևմտահայության գոյության ապահովմանը, Արևմտյան Հայաստանի վերաշինմանը, ստեղծեց արևմտահայության կյանքը ղեկավարող մարմիններ և այլն: Մինչև համագումարի բացումը, մայիսի 1-ին տեղի ունեցավ հիշարժան իրադարձություն Արամի կյանքում: Այդ օրը Երևանում նա ամուսնացավ Կատարինե Զալյանի՝ Ղուրդուղուլիի (Արմավիր) մանկական որ-

---

[32] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 111, թ. 63:

[33] «Աշխատանք», 1916, մայիսի 4, N 1; Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 211:

բանօջի պլխավոր բժշկուհու հետ: Այդ ամուսնությունից 1918թ. հոկտեմբերին ծնվեց Արամի միակ ժառանգը՝ Մեղա Մանուկյանը (1918-2005)[34]:

Արամը ղեկավար մասնակցություն ունեցավ 1917թ. մայիսի 10-ին Երևանում գումարված արևմտահայ դաշնակցականների շրջանային ժողովին, որտեղ քննվեցին փախստականության կրթության, որբանոցների վիճակի բարելավման, տեղերում ժողովրդի կողմից ընտրովի վարչության ձևավորման և այլ հարցեր[35]:

Նա անմիջական մասնակցություն ունեցավ արևմտահայկական նահանգների վերաչինությանը՝ հանդիսանալով ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի քաղաքացիական մասի օգնական Հ. Ջավրյանի «աջ բազուկը»[36]: Նրա միջոցով 1917թ. ամռանը երկրագործական գործիքներ էին ուղարկվում Արևմտյան Հայաստան:

Արամն ակտիվորեն մասնակցեց նաև 1917թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարված Հայոց Ազգային համախորհրդակցության աշխատանքներին[37], որի քննարկմանն էին ներկայացվել փետրվարյան հեղափոխությունից հետո հրատապ դարձած Կովկասյան ռազմաճակատի և վտանգված հայկական շրջանների ապահովության, փախստականության, Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների և հայ ժողովրդի համար կենսական այլ հարցեր: Ս. Վրացյանի հաղորդման համաձայն՝ Արամն ընտրվեց արևելահայության կյանքը ղեկավարելու նպատակով ստեղծված Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհրդի անդամ[38]:

1917թ. հոկտեմբերի 21-ից մինչև 1918թ. ապրիլի 14-ը Արամը Երևանի «Աշխատանք» թերթի խմբագիրն էր: Նրա օրոք թերթը արձագանքում էր հայ իրականությանը հուզող խնդիրներին:

1917թ. վերջին Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որը սկսվել էր փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և խորացել հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանը: Դրությունը բարդանում էր նրանով, որ ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգում առկա էր իշխանության վակուում: 1917թ. նոյեմբերի 15-ին ստեղծված

---

[34] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը..., էջ 16, 147:

[35] «Աշխատանք», 1917, մայիսի 20, N 6:

[36] Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան. 1890-1950, Պատրաստեց՝ Ս. Վրացեան, Բոստոն, 1950, էջ 467:

[37] Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբեր: Փաստաթղթեր ու նյութեր, «Քանքեր Հայաստանի արխիվների», 1992, N 1-2, էջ 106:

[38] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 51:

Անդրկովկասի գործադիր իշխանության նոր բարձրագույն մարմինը՝ Անդրկովկասի կոմիսարիատը՝ բաղկացած հայերի, վրացիների և կովկասյան թաթարների (ներկայումս՝ ադրբեջանցիներ) ներկայացուցիչներից, չդարձավ գործող իշխանություն: Այն ավելի շատ զբաղված էր մութ խաղերով, ավելի շատ հետևում էր օրեցօր բարդացող կացությանը, քան ընթացք տալիս նրան:

Անդրկոմիսարիատի անգործության պայմաններում երկրամասի ժողովուրդները հայացքները սևեռել էին իրենց ազգային խորհուրդներին, որոնք էլ փաստորեն դարձել էին տեղական իշխանություններ ազգային սահմաններում: Երևանի նահանգում հայությունը հայացքն ուղղել էր դեպի տեղի Հայոց Ազգային խորհուրդը, որը կազմվել էր Թիֆլիսի Ազգային խորհրդի օրինակով: Սակայն նա, թեև ըմբռնում էր դրության ծանրությունը և իրադարձությունների հավանական ողբերգական ընթացքը, իր անելիքի մասին հստակ պատկերացում չուներ: Ս. Վրացյանը նկատել է, որ սկզբնապես այն «անգույն և անջիղ մի մարմին էր, որ գնում էր դեպքերի հոսանքի հետևից»[39]: Այն սպասում էր հրահանգների Թիֆլիսից, որի հետ կապն անկայուն էր:

Այդ իրավիճակում, 1917թ. դեկտեմբերին Թիֆլիսի Հայոց Ազգային և Հայ զինվորական խորհուրդները Արամ Մանուկյանին արտակարգ լիազորություններով գործուղեցին Երևանի նահանգ: Նրա խնդիրն էր վերջ տալ նահանգում տիրող խառնաշփոթին, ստեղծել ամուր իշխանություն և իրականացնել կազմակերպված զորահավաք: 1917թ. դեկտեմբերի 18-ին, ժամանելով Երևան, Արամ Մանուկյանը գերմարդկային ճիգեր գործադրեց հայությանը սպառնացող նոր ողբերգությունը կանխելու համար: Նա առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանության ու ազատության միտված հստակ և իրատեսական քաղաքական ուղեգիծ: Երևանի Հայոց Ազգային խորհրդում ունեցած իր ելույթում, նկատի ունենալով թուրքական վտանգը, Արամը շեշտեց, որ հայությունը պետք է հենվի միայն ու միայն իր ուժերի վրա. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք եւ պէտք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[40]:

---

[39] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 125:

[40] «Հայրենիք», 1964, ապրիլ, N 4, էջ 70:

. Արամը ցուցաբերեց նախանձելի համառություն, երկաթյա կամք, արտակարգ կազմակերպչական ունակություններ և հետևողականություն՝ ժողովրդի գիտակցության մեջ սեփական ուժերին ապավինելու գաղափարը ամրապնդելու և քշնամու դեմ համազգային շարժում կազմակերպելու համար: Նրա առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության նոր մարմին՝ Հատուկ կոմիտե, որի նախագահ ընտրվեց ժողովրդի մեջ հարգանք վայելող Մ. Մուսինյանը: Սակայն ինչպես Հատուկ կոմիտեի, այնպես էլ Ազգային խորհրդի և Երևանի նահանգի փաստացի ղեկավարն ու ոգին դարձավ Արամը: Նրա ազգային-պետական մտածողության ու եռանդուն գործելակերպի շնորհիվ, աշխատանքի լծվեցին ամենքը, անկախ կուսակցական պատկանելությունից: Արամի առաջադրած՝ սեփական ուժերին ապավինելու քաղաքական գիծն ամրագրվում էր կոնկրետ ծեռնարկներով: Այս ուղղությամբ առաջին ու կարևորագույն քայլը հայկական զորք ստեղծելն էր. անհրաժեշտ էր զորահավաք հայտարարել: Արամի գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները ժողովրդի շրջանում քարոզչական լայն աշխատանք ծավալեցին: Արդեն 1917թ. դեկտեմբերի 21-ին հայկական առաջին գունդը ռազմաճակատ ճանապարհելու առիթով Արամը հուզիչ ելույթով դիմեց ժողովրդին՝ կոչ անելով խտացնել հայրենիքի պաշտպանների շարքերը: 1917թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց նրա հեղինակած «Կոչ հայ զինվորներին» շրջաբերականը, որը բոլորից պահանջում էր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Հատուկ կոմիտեի հայտարարած զորակոչը նպատակ ուներ հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Վճռական պայքար ծավալվեց զորակոչից խուսափողների, դասալիքների, զենք-զինամթերք, պետական գույք հափշտակողների, անիշխանական տարրերի, և հատկապես՝ Թուրքիայի կողմից ուղղորդվող կովկասյան թաթարների հակահայկական խռովությունների դեմ: 1918թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեցին 50-ից ավելի թաթարական գյուղեր[41]: Ձեռնարկված քայլերի շնորհիվ հաջողությամբ ծնավորվում էր հայկական զինուժը, իսկ իրադրությունը երկրում սկսում էր կայունանալ:

Արամը, որպես հայրենասեր ու հեռատես քաղաքական գործիչ, դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին երկրորդական համարելով գաղափարախոսական տարաձայնությունները, ՀՀԴ մի շարք այլ գործիչների և առաջին հերթին՝ Ռոստոմի հետ համախորհուրդ, փորձեց դաշնակից ծեռք բերել՝ ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում ՀՀԴ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների հետ տարվող բա-

[41] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:

նակցություններին: Այդ ընթացքում ՀՀԴ գործիչների և Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր թուրքերի դեմ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ)[42]: Հայ գործիչների ջանքերը հաջողություն չբերեցին: Ստ. Շահումյանը չկարողացավ կատարել իր խոստումը, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ու թուրքական սրընթաց առաջխաղացումը ջնջեցին հետագա գործակցության հնարավորությունները:

1918թ. մարտի 24-ին, երբ թուրքերը գրավեցին Սարիղամիշը, Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին ընտրեցին Երևանի նահանգի «դիկտատոր»: Պատմության մեջ, թերևս, եզակի դեպքերից էր, երբ ժողովուրդը կամովին ընտրեց դիկտատոր, որն իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հօգուտ համազգային շահերի, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: Համագործակցելով հայրենասեր բոլոր ուժերի հետ՝ Արամը շարունակեց նահանգի ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման դժվարին գործը: Արամի հաջողության կարևոր պայմաններից մեկն այն էր, որ նա լավ էր հասկանում, որ հայրենիքի փրկությունը կախված է միմիայն ժողովրդի կամքից և ամեն ինչ արեց այդ գործի մեջ նրան ներգրավելու համար: Այսպես, «դիկտատոր» ընտրվելուց հետո նա ժողովրդին հայտարարեց. «...Դուք պիտի իմանաք, որ ես անձամբ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթէ ժողովուրդը պատրաստակամութիւն ունի... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»[43]:

1918թ. մայիսի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, մայիսի 20-ին՝ Երևանից 40 կմ հեռու գտնվող Արաքս կայարանը, իսկ հաջորդ օրը՝ Երևանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատ կայարանն ու գյուղը: Առջևում Ս. Էջմիածինն ու Երևանն էին, հայկական զորքի զգալի մասը կազմալուծվել էր, իսկ բնակչությունը խուճապահար գաղթում էր Երևան: Ամբողջ սրտությամբ դրվեց հայության լինել-չլինելու խնդիրը: Հայերի մեջ իշխող պարտվողական տրամադրությունները հանգում էին նույնիսկ Երևանից նահանջելու անհեթեթ մտքին:

Այդ բախտորոշ օրերին Արամ Մանուկյանը դրսևորեց քշնամուն հակահարված հասցնելու աներեր կամք ու մեծագույն եռանդ: Ս. Աֆանասյանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի

---

[42] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշուոակները. հ. 7, Երևան, 1990, էջ 142-143:
[43] «Ձանգ», Երևան, 1918, մարտի 27, N 24:

հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջությամբ»[44]: Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ Արամը՝ կանխատեսելով, որ թուրքերը չեն բավարարվելու նվաճածով, վճռականորեն արտահայտվել էր բշնամուն դիմադրություն ցույց տալու օգտին՝ նշելով. «Եթե երբեք մեր ճակատի վրա թուրքերը սկսեցին առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, քնդանոթով, ոչ թե ստրկորեն անձնատուր ըլլանք և կոտորվինք»[45]:

1918թ. մայիսի 19-ի առավոտյան, երբ բշնամին նոր էր ներխուժել Արարատյան դաշտավայր, Երևանի շրջանում գործող հայկական երկրորդ դիվիզիայի հրամանատար, գեներալ Մ. Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում ճակատագրական համարելով զորքերի հետագա նահանջը ու Երևանն էլ ավելի մեծ վտանգի տակ դնելը, Արամը պահանջեց նահանջի առաջն առնել և դիրքերը պահպանել: Արարատյան դաշտում բշնամուն հակահարված հասցնելու՝ նախօրոք դրված խնդիրն իրագործելու համար նա խստացավ երկու օրվա ընթացքում զորավարին տրամադրել անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք և թիկունքի աջակցությունը[46]: Դրա համար Արամը հրահանգեց անհապաղ, առանց տարիքի ու դիրքի խտրության ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց լքել քաղաքը: Արամը, որը նախընտրում էր ամեն ինչին անձամբ հետևել, «իբրեւ շարժական ոգի, ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում եւ կ'ոգեւորեր իր խօսքերով ու կը ներշնչէր ամէնքին»[47]: Մայիսի 19-ի երեկոյան, երբ Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը բշնամուն հանձնելու մասին, Արամը ամենայն վճռականությամբ բացառեց նման հեռանկարը՝ նշելով. «... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության եւ մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք եւ մեռնիք»[48]: Այս վճռական կեցվածքը դարձավ Ազգային խորհրդի անխախտ վճիռը և զորքի հրամանատարությանը հանձնարարվեց այն ի կատար ածել:

Արամ Մանուկյանի ջանքերի շնորհիվ վերջ տրվեց նաև ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին: Մայիսի 21-ի երեկոյան քաղաքա-

---

[44] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918). Երևան, 1991, էջ 41:

[45] «Դրօշակ», Փարիզ, 1928, մայիս, N 5, էջ 137:

[46] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), գ. Ե, Երևան, 1999, էջ 62:

[47] «Ճակատամարտ», 1921, հունվարի 30: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության. գ. Ե, էջ 63:

[48] Նույն տեղում:

յին խորհրդարանի ամառային շենքի հրապարակում կայացած հանրահավաքում, որում սկզբնապես տիրում էր հուսահատության մթնոլորտ, նա հանդես եկավ հակիրճ, բայց բովանդակալից և ազդու ելույթով. «Կրկնութիւններ անելու այժմ տրամադիր չեմ և ժամանակ էլ չկայ ճառերով զբաղուելու: Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարապաղը և շարժւում է դէպի Էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զէնք վերցնել ու դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորուել ոչխարի պես... Ով ուզում է ապրել, առանց րոպէ կորցնելու, թոյլ վերցնի զէնքը, վերցնի նաև երեք օրուայ պաշար ու իսկոյն և եթ դիմէ ուսուցչական սեմինարիայի շէնքը՝ ցուցակագրուելու և այնտեղից էլ ճակատ ուղարկուելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»[49]: Սարդարապատի հերոսամարտի մասնակից Մ. Մանասիրյանը տարիներ անց՝ 1968 թվականին, խոսելով այս հանրահավաքի մասին, վերհիշում էր, որ Ա. Մանուկյանը, գրող Դ. Դեմիրճյանը և այլոք ոգեշնչում էին ժողովրդին, կոչ անում անկախ տարիքից, սոցիալական դիրքից, քաղաքական համոզմունքներից զենք ստանալ ու մեկնել ճակատ: Ժողովուրդն էլ, արձագանքելով իրեն ուղղված հորդորներին, բացականչում էր, թե ավելի լավ է ճակատում զոհվել, քան սեփական օջախներում մորթոտվել[50]:

1918թ. մայիսի 22ին, զորավար Մ. Սիլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած պլանի համաձայն, հայկական զորքը Սարդարապատի ճակատում հակահարձակման անցավ թուրքական գերակշիռ ուժերի դեմ և ծանր մարտերից հետո թշնամուն դուրս շպրտեց Արարատյան դաշտավայրից[51]: Պարտված թշնամին հարկադրված նահանջեց Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Քիչ անց հայկական զորքերը՝ Դրոյի գլխավորությամբ, թուրքերին պարտության մատնեցին նաև Բաշ-Ապարանի ճակատում: Արամ Մանուկյանի՝ Դիլիջանում կուտակված Հայկական կորպուսի հիմնական ուժերի հրամանատարությանն ուղարկած հեռագիրը կարևոր դեր խաղաց այստեղ իշխող պարտվողական տրամադրությունների փոփոխության, հայկական զորքի՝ Ղարաքիլիսա վերադառնալու և այստեղ հերոսական ճակատամարտ տալու գործում:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպմանն Արամ Մանուկյանն ունեցավ առաջնակարգ դերակատարություն, փրկեցին հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից և հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը: 1918թ. մայիսի վերջին Թիֆլիսի Հայոց

---

[49] «Հորիզոն»,. Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 6, N 178:

[50] Մանասիրյան Մ., Հիշողություններ Սարդարապատի հերոսամարտից. տե՛ս Հայաստանի պատմության թանգարան, նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, բաժնի մատյան 960, մայր մատյան 12441, թ. 6:

[51] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5, գ. 82, թ. 5, Աֆանասյան Ս., նշվ. աշխ., էջ 44; Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս. Երևան, 1998, էջ 95-96:

Ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հիշենք, որ մինչև մայիսյան հերոսամարտերը քուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի[52]:

Արամի գործունեությունը բարձր է գնահատվել արդեն իսկ նրա ժամանակակիցների կողմից: Հատկանշական է գնդապետ Արարատյանի կողմից 1919թ. փետրվարին տված բնորոշումը. «Երևանի շրջանում այն ժամանակ ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում, որը լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Միլիկովի և, զորքին ու ժողովրդին ոգևորող, Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը, միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին և, եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա դա կարող եմ վերագրել բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Միլիկովին և Դրոյին»[53]: *Արամ Մանուկյանին բարձրագույն գնահատականներից մեկը տվել է խորհրդահայ պատմաբան Հ. Թուրշյանը՝ 1964թ. գրած իր անտիպ հոդվածում. «Արամ Մանուկյանը հայ ժողովրդի բովանդակ պատմության այն սակավաթիվ իրատես դեմքերից մեկն է, որոնց մեծությունը ճիշտ տեսնելու և ճիշտ գնահատելու համար հարկավոր է ժամանակի հեռավորություն: Քանի գոյատևի և հարատևի մեր ժողովուրդը, նա այնքան ավելի հստակորեն կտեսնի ու այնքան ավելի բարձր կգնահատի Սարդարապատի հերոսամարտը, որտեղ մենք, վերջապես, բռնեցինք անկախության իրավունքի քննությունը, և այդ հերոսամարտի հաղթանակի ապահովման հետ սերտորեն միահյուսված Արամ Մանուկյանին»*[54]:

Սարդարապատի ճակատամարտից հետո Արամ Մանուկյանը ստանձնելով անկախ Հայաստանի նախակառավարության դեր կատարող Երևանի Ազգային խորհրդի վարչության նախագահի և զինվորական վարիչի պաշտոնները, ընդհանուր գործին շաղկապելով բանիմաց և հասարակության մեջ հեղինակություն վայելող ուժերին, կարողացավ նորանկախ երկիրը պահել համեմատական կայունության մեջ, մինչև որ Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը տեղափոխվեց Երևան և Հ. Քաջազ-

---

[52] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник., Ереван, 1995, с. 508:

[53] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 6; Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 224:

[54] Թուրշյան Հ., Հուշեր նվիրված Վանի 1915թ. ինքնապաշտպանության հերոս Արամ Մանուկյանին, ՀՊԹ, Նոր պատմության բաժնի վավերագրերի ֆոնդ, թ.մ. 941,մ.մ. 11844, թ. 39:

Նուբար գլխավորությամբ 1918թ. հուլիսի 24-ին ձևավորվեց ՀՀ կառավարությունը:

ՀՀ կառավարության մեջ Արամ Մանուկյանին վստահվեց ներքին գործերի նախարարությունը, որի իրավասության տակ էր նաև լուսավորության, հաղորդակցության, պարենավորման ու խնամատարության գործը, ինչպես նաև տեղական իշխանության խնդիրները: Նոր պաշտոնում ու նոր պայմաններում նրա ազգային-պետական մտածողությունն ու գործելակերպը նոր շունչ ու որակ ձեռք բերեց: Նա միշտ հանդես եկավ նախածեռնողի, իրադարձություններին ընթացք տվողի դերում, որպիսիք կարևորագույն գծեր են յուրաքանչյուր բարծրաստիճան պաշտոնյայի համար, հատկապես այն օրերի նման բախտորոշ ժամանակաշրջանում:

Արամն անսպառ եռանդով իր մասնակցությունը բերեց հանրապետության առջև ծառացած հրատապ լուծում պահանջող խնդիրների կարգավորմանը:

ՀՀ իշխանությունների, հատկապես ՆԳ նախարարության առաջնակարգ խնդիրներից մեկը երկրում կյանքի և գույքի ապահովության, իրավակարգի, ամուր իշխանության հաստատումն էր: Անկախության սկզբնական շրջանում երկրում մեծ չափերի էին հասնում հանցագործությունները, այդ թվում և սպանությունները. սպանում էին անգամ մեկ պարկ ալյուրի համար: Ահավոր չափեր էր ընդունել մասուզերիզմը: Մասուզերիստների խժդժությունների զոհ էին դառնում բազմաթիվ քաղաքացիներ: Իրավիճակը մտահոգիչ էր նաև այն առումով, որ մի շարք գյուղերում բնակչությունը խուսափում էր հարկերի վճարումից և իշխանության ներկայացուցիչներին դիմավորում էր զենքով[55]*:*

Առաջադրված խնդրի հաջող իրագործման նպատակով Արամ Մանուկյանն առաջ քաշեց մասնավոր զենք-զինամթերքի պետականացման խնդիրը: Խորհրդարանում հիմնավորելով հարցը՝ Արամը իրավացիորեն նշում էր, որ երկրում ոչ մի իշխանություն չի կարելի հաստատել, քանի դեռ կառավարության կարգադրությունները չեն կատարվում, իսկ հարկադրանքի դեպքում հանդիպում են զինված դիմադրության: Նա իրավացիորեն գտնում էր, որ եթե ժամանակին ժողովրդին զինելն անհրաժեշտություն էր և ուներ ինքնապաշտպանական նպատակներ, ապա տվյալ պահին անձի անձեռնմխելիությունը, ունեցվածքի և այլ իրավունքների պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն է:

1918թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց Արամի ներկայացրած «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինա-

---

[55] «Ձայն», 1918, օգոստոսի 17, N 46:

մքերքների պետականացման մասին» օրենքը[56]*: Այն նախատեսում էր պետականացնել մասնավոր զենք-զինամթերքը, բացի որսորդական և անպահեստակավոր տեսակներից: Զենքը կամովին չհանձնելու դեպքում այն գրավվելու էր հարկադրաբար, իսկ օրինազանցները ՆԳ նախարարի որոշմամբ ենթարկվելու էին պատժի: Վտանգված գյուղերի ինքնապաշտպանությանը չվնասելու նպատակով նախատեսվում էր այդ գյուղերից գրավված զենքի մի մասը թողնել տեղում՝ հատուկ մարդկանց պահպանության ներքո:*

Դեռևս օգոստոսի 27-ին Արամը Երևանի միլիցիապետին հրահանգել էր ձեռնարկել եռանդուն քայլեր՝ քաղաքում հրաձգությունը դադարեցնելու և ապօրինի հրազեն կրող քաղաքացիների զենքերն առգրավելու ուղղությամբ: Նա նաև խստագույնս պատվիրել էր օրինախախտներին պատասխանատվության ենթարկելիս կազմել արձանագրություններ, իսկ առգրաված զենքի քանակի մասին զեկուցել իրեն[57]*:*

Զենք-զինամթերքի առգրավման ընթացքում թյուրիմացություններից խուսափելու համար սեպտեմբերի 27-ին Արամը զինագրավող հանձնաժողովին կարգադրեց խուզարկություններ կատարել միայն տվյալների առկայության դեպքում և հարգալից վերաբերվել բնակչությանը, բնակարանատիրոջը ներկայացնել իր ստորագրությամբ լիազորագիրը՝ խուզարկություն կատարելու մասին: Նա նաև հանձնաժողովին պարտավորեցնում էր զենք-զինամթերք գտնելու դեպքում կազմել առանձին արձանագրություն, որը պետք է ստորագրվեր հանձնաժողովի անդամների, բնակարանատիրոջ և վկաների կողմից:

Ծավալվեց հետևողական պայքար օրինազանցությունների դեմ: 1918թ. հոկտեմբերի 8-ին, ընթացք տալով Երևանի գավառային կոմիսարի դիմումին, Արամը երեք ամսով կալանքի ենթարկեց զինագրավման մասին օրենքը խախտած Գ. Ավանեսովին և Հ. Օրդուխին[58]*: Հոկտեմբերի 28-ին Արամի հրամանով մեկ ամսով կալանվեց Սարդարապատի բնակիչ Գ. Հակոբյանը՝ իշխանության ներկայացուցչի պահանջին չենթարկվելու և նրան ծեծելու համար*[59]*: Սեպտեմբերի 30-ին ձերբակալվեցին Երևանի գավառի Ավան գյուղի երկու բնակիչներ, որոնք ստեղծել էին ավազակախումբ և զբաղվում էին խաղաղ բնակչության թալանով*[60]*:*

ՆԳ նախարարության հետապնդած տարաբնույթ խնդիրների հաջող կենսագործումը ենթադրում էր սեփական շարքերի մաքրում անհուսալի,

---

[56] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 1; Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, էջ 2-3:

[57] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 52:

[58] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 16, թ. 35:

[59] Նույն տեղում, թ. 73:

[60] Նույն տեղում, գ. 15, թ. 121:

օրինագանց և անկարգապահ աշխատակիցներից, ինչը և կատարում էր Արամը՝ խտրականություն չդնելով ոչ ոքի մեջ: Դրա ակնառու դրսևորումներից է այն իրողությունը, որ հոկտեմբերի 12-ին Արամը պարենավորման բաժանմունքի վարիչին հրահանգեց նույն բաժանմունքի պաշտոնյա, Բաշ-Ապարանի հերոսներից Արսեն Տեր-Պողոսյանին ժամանակավորապես՝ մինչև քննության ավարտը, ազատել աշխատանքից՝ հիմք ունենալով նրա նկատմամբ առաջադրված մեղադրանքները[61]: Արամ Մանուկյանը հետևողական քայլեր ձեռնարկեց ներքին գործերի համակարգն ուժեղացնելու, նրանում խստակարգություն մտցնելու ուղղությամբ: Այսպես, եթե Դարալագյազի գավառային միլիցիան 1918թ. հուլիսին ուներ 13 միլիցիոներ, ապա նոյեմբերին՝ 37[62]: Եթե նույն թվականի օգոստոսին ՆԳՆ կենտրոնական ապարատն ուներ 26 ծառայող[63], ապա նոյեմբերին՝ 41 և իրենից ներկայացնում էր բավական կազմակերպված կառույց: Նրանում կային հատուկ հանձնարարությունների գծով երկու կոմիսարներ, իրավախորհրդատու, նախարարի գրասենյակի կառավարիչ իր ենթականերով, նախարարին կից Հայաստանի տարածքի վարչակազմի ու միլիցիայի կոմիսար և այլն[64]:

Արամը փորձում էր վերացնել նաև հանցագործությունների առաջացմանը նպաստող պայմանները: Այսպես, Հայաստանի խորհրդի նախագահի և քարտուղարի անուններով կեղծ վկայագիր կազմելու և դրանով հացահատիկ հավաքելու համար 1918թ. սեպտեմբերի 26-ին ձերբակալվել էր Ե. Լուսիկյանը: Սեպտեմբերի 27-ին Արամը գործն ուղարկեց Երևանի շրջանային դատարանի դատախազին՝ մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով[65]: Այստեղ էականն այն է, որ ելնելով այդ դեպքից՝ նա գավառային և տեղամասային կոմիսարներին հանձնարարեց ամենօրյա բյուրոմացություններից խուսափելու համար լինել զգոն, գործել իրենց պարտականությունների շրջանակներում, իսկ օրենքով չնախատեսված դեպքերում գործել միայն վերադասի արտոնությամբ[66]:

Արամն ամեն ինչ անում էր իր ենթակայության ներքո գտնվող պետական ծառայողներին զգաստացնելու, նրանց մեջ վստահված գործի հանդեպ պատասխանատվության զգացումը բարձրացնելու համար: 1918թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով Արամն ի գիտություն գավառային պաշտոնյաների հայտարարեց, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում

---

[61] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 1, թ. 122:
[62] Նույն տեղում, գ. 47, թ. 96:
[63] Նույն տեղում, գ. 3, թ. 65-67:
[64] Նույն տեղում, թ. 123-124:
[65] Նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 32-34:
[66] Նույն տեղում, գ. 16, թ. 39:

հրապարակված մեղադրանքները կարճ ժամանակում չհերքվեն, ապա նրանք կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն[67]: Մեկ այլ անգամ նա գավառային կոմիսարներին առաջարկեց ներկայացնել իրենց տեսակետները այն մասին, թե որքանով են վարչական մարմինների համար նախատեսված հաստիքները համապատասխան իրենց գավառներում: Կոմիսարներին առաջարկվում էր, իրենց տեսակետներն արտահայտելիս, ելնել պետական գանձարանի ծախսերը խնայելու անհրաժեշտությունից և, որոշված նորմերի ավելացման անհրաժեշտության առաջարկի դեպքում, ներկայացնել անհերքելի հիմնավորում[68]:

Արամ Մանուկյանը շոշափելի ներդրում ունեցավ նաև պարենային ճգնաժամի մեղմացման, լուսավորության, հանրապետությունում գրագրությունների հայացման, հարյուր հազարավոր փախստականների և որբերի դրությունը մեղմելու գործում և այլն: Արամ Մանուկյանի նախաձախնդրություններ ու սրտացավություններ ակնհայտ էր առանձնապես որբերի ճակատագրի հարցում: Քաջ գիտակցելով, որ բավարար միջոցների բացակայության պայմաններում միայն համժողովրդական մոտեցման դեպքում հնարավոր կլինի որբերին փրկել մահվան ճիրաններից, Արամը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին: Տեղեկացնելով, որ կառավարությունն իր խնամքի տակ է վերցրել 4000 որբերի և մըտադիր է նրանց թիվը հասցնել 10000-ի, Արամն ավելացնում է, որ հանրապետության կառավարությունն իր սուղ միջոցներով ի վիճակի չէ օգնել 50 հազարի հասնող բոլոր որբերին: Ժողովրդի աջակցությունն ստանալու համար Արամը դիմում է նրա գիտակցությանն ու բնազդին՝ հետևյալ հոգեցունց խոսքերով. «Թառամում է խշշորագոյն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի, որի համար ցեղի լաւագոյն մարդիկը պայքարեցին, տառապեցին և նահատակուեցին»: Հայտնելով, որ կարիքը մեծ է, միջոցներն ու ժամանակը՝ քիչ, Արամը ավելացնում է. «Օգնութեան եկէ՛ք Ձեր Կառավարութեանը, փրկեցէ՛ք անկումից վաղուայ յոյսը մեր Հայրենիքի, խնամոտ ձեռք կարկառեցէք մայթերի ու ճանապարհների վրայ մոմոացող անուժ որբերին, որոնց սովատանջ հայեացքը աղերսում է բէկուզ փշրանքը ձեր սեղանների»: Նա ժողովրդին կոչ էր անում օգնել որբերին և հույս հայտնում, որ փոխադարձ ջանքերով կարելի կլինի փրկել նրանց[69]:

Մեծ է նրա ավանդը հայոց պետականության նկատմամբ քշնամաբար տրամադրված թաթարներից երկիրը ազատելու գործում[70]: Դա հրամայական անհրաժեշտություն էր մի կողմից երկրի անվտանգությունն

---

[67] ՀԱԱ, գ. 1, թ. 79, 80, 81, 82:
[68] Նույն տեղում, ց. 2, գ. 47, թ. 120:
[69] Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 38, թ. 53-54; ֆ. 199, ց. 1, գ. 207, թ. 19:
[70] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44, գ. 32, թ. 15; Ռուբէն, հ. 7, էջ 145-146:

ապահովելու, մյուս կողմից՝ անօթևան տասնյակ հազարավոր հայ փախստականությանը տեղավորելու և կործանումից փրկելու համար:

Արամին, որպես ժողովրդին ընծայված պետական խոշորագույն գործչի, բնորոշ էր այն, որ նա, ելնելով ժողովրդի և ընդհանուր գործի շահերից, երբեմն անտեսում էր օրենքն ու գործող կարգը: Այսպես, ելնելով բազմահազար որբերի պատսպարման, հետևաբար նրանց անխուսափելի զրկանքներից և կործանումից փրկելու նպատակից, Արամն արդարացնում էր Երևանի դպրոցներից մեկը նրանց տրամադրելու մասին Ռուբենի ապօրինի արարքը և դրանով իսկ հավանություն տալիս վերջինիս այն մտքին, թե «ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարեւոր չէ, քան փողոցներում թափառածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը»: Նա իրավացիորեն գտնում էր, որ «կան դէպքեր...երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[71]*:*

Հայրենիքի նկատմամբ ունեցած բարձր պատասխանատվությունը, ժողովրդասիրությունը, համեստ կենցաղը, ազնվությունը, հետապնդվող խնդիրների նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրությունը Արամին ապահովում էին բարձր հեղինակություն: Ասվածի խոսուն վկայությունն է Ղարաքիլիսայի ազատագրումից հետո՝ հոկտեմբերի 20-ին դարաքիլիսացիների հղած հեռագիրը զոր. Սիլիկյանին և Արամին, որում ասվում էր. «Ուրախ ենք, որ Հայկական զօրքի և երկրի ներքին գործերի կառավարութեան գլուխ կանգնած էք դուք, որ հայկական կեանքի ամենածանր շրջանում չլքեցիք ձեր ժողովրդին և ցաւակից եղաք նրան: Հաւատում ենք, որ ձեր աշխատութեամբ և եռանդի շնորհիւ կը կազմւի ուժեղ բանակ և հաստատուն իշխանութիւն, որը վերջ կը դնի մեր ժողովրդի տանջանքներին»[72]*:*

Դժբախտաբար, Արամ Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել և շարունակել հանրապետության ամրապնդմանն ուղղված գործունեությունը: Ժողովրդի հետ ամենօրյա անմիջական շփումների մեջ գտնվող գործիչը 1918թ. դեկտեմբերին վարակվեց հանրապետությունում մոլեգնող բծավոր տիֆով և 1919թ. հունվարի 29-ին կնքեց մահկանացուն: Արամի մահը ցնցեց հայ ժողովրդին, պետական, հասարակական ու կուսակցական գործիչներին: Նրա հուղարկավորությունը վերածվեց համաժողովրդական սուգի: Հուղարկավորությանը մասնակցում էր ամբողջ Երևանը, մեծ ու փոքր, որպեսզի վերջին անգամ հարգանքի տուրք մատուցեր մի մարդու, որին վստահել էր իր ճակատագիրը ամենաօրհասական օրերին:

---

[71] Ռուբէն, հ. 7, էջ 139-140:

[72] «Ձանգ», 1918, հոկտեմբերի 27, N 65:

Թաղմանը, հանդես գալով ՀՀԴ Արևելյան բյուրոյի անունից, Ն. Աղբալյանը նշեց. «...մենք այս օր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին: Ի՞նչ է մեծ մարդը-Մեծ մարդը ան է, որ գիտէ ըմբռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կը պատկանէին-հայ ժողովրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ատոնք ...Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն-Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը: Երևանը վկայ էր այն հզոր ուժին, որ կար և կապրեր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան»[73]*: Նա հավաքված բազմությանը նշում էր. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամը, տո՞ւր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»*[74]*:*

Արամ Մանուկյանի կյանքը ամբողջական նվիրում էր հայ ժողովրդին, նրա ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղվող պայքարին: Ամենուր, որտեղ էլ որ գործեց՝ Արամ Մանուկյանն աչքի ընկավ քաղաքական հասունությամբ ու հեռատեսությամբ, կազմակերպչական բացառիկ ձիրքով, անշահախնդիր վարքով, անկոտրում կամքով, իրատեսությամբ և մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման և նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման համար Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

* * *

Սույն հրատարակությամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Արամ Մանուկյանի կյանքին ու գործունեությանը առնչվող հարյուրավոր վավերագրեր (1903-1919թթ.) և այլ նյութեր, որոնք հայտնաբերվել են Հայաստանի ազգային արխիվում ու ՀՀԴ կենտրոնական արխիվում և քաղվել ժամանակի մամուլի էջերից ու հուշագրություններից:

Թեմատիկ առումով ժողովածուն բաղկացած է հետևյալ բաժիններից.

---

[73] «Աշխատանք», Երևան, 1919, փետրվարի 12, N 4; Վրացեան Ս., Կեանքի ուղիներով: Դէպքեր: Դէմքեր: Ապրումներ, հ. Ե, Պէյրութ, 1966, էջ 54–55:

[74] «Աշխատանք», 1919, փետրվարի 12, N 4; Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 54-55:

- Արամ Մանուկյանի Վասպուրականում ազգային-ազատագրական շարժման կազմակերպիչ և ղեկավար.

- Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ.

- Երևանի ազգային խորհրդի փաստացի ղեկավար.

- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար:

Վերոհիշյալ յուրաքանչյուր բաժնում փաստաթղթերը տրված են ժամանակագրական սկզբունքով:

Փաստաթղթերի հիմնական մասը հրատարակվում է առաջին անգամ, բնագրի լեզվով, առանց ոճական փոփոխությունների, կատարվել են մասնակի ուղղագրական շտկումներ, քառակուսի փակագծերում հրատարակողների կողմից ավելացվել են բաց թողնված բառերը և տառերը:

Փաստաթղթերի վերնագրերը կազմվել են հրատարակողների կողմից, բացառիկ դեպքերում, եթե դրանք փաստաթղթային են, ապա այդ մասին տրված է ծանոթագրություն: Եթե ծանոթագրությունը հեղինակային է, ապա այդ մասին նշված է ծանոթագրության վերջում:

Ժողովածուի գիտա-տեղեկատու համակարգը ներկայացված է ծանոթագրություններով, անվանացանկով և տեղանունների ցանկով:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

N 1

ՔԱՂՎԱԾՔ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԸՆԹԱՑՆ ՄԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 մայիսի 1903 թ.
Երևան

Չ դասարան
Դպրանոցիս դասընթացն աւարտում են.

1. *Ադամեան Կարապետ*
2. *Թէոսեան Համբարձում*
3. *Թառլամազեան Արսէն*
4. *Խոջամիրեան Մարգար*
5. *Ղազարեան Խաչատուր*
6. *Յովհաննիսեան Սարգիս*
7. *Վարդապետեան Վահրամ*
8. *Տէր Խաչատրեան Սիմէոն*
9. *Տէր Մանուէլեան Միքայէլ*
10. *Տօշեան Բարդուղիմէոս*
11. *Տէր Գէորգեան Մատթէոս*

ՀԱԱ, ֆ. 523, ց. 1, գ. 59, թ. 52, բնագիր, ձեռագիր:

N 2

ԻՇԽԱՆԻ (ՆԻԿՈԼ ՊՈՂՈՍՅԱՆ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ), ՎԱՐԴԱՆ-ՇԱՀԲԱԶԻ (ՄԻՆԱՍ ՏՈՆԻԿՅԱՆ), ԱՐԱՍԻ (ՄԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) ԵՎ ՏԻԳՐԱՆԻ (ԿՈՂԲԵՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ) ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՀՀԴ ՎԱՆԻ(ՇԱՄ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՈՎ

17 մարտի 1905 թ.

Ընկերներ!

Երեք ամսից ի վեր ստեղծել ենք մեր գործերի մէջ անհիշխանական դրութիւն, ականատես եղանք անբնական դրութեան բոլոր վիժմունքներին, ճաշակեցինք ընկերական երկպառակութեան բոլոր դառնութիւնները, այդ բոլորը մի կողմը, գործը դէպի կոյուստ ենք տանում մեր զանազան քմահաճոյքների համար, մտածեցինք այս դրութիւնից ազատելու համար բազմաթիւ ճներ, ոչ մէկը չկարողացանք իրագործել, բացարձակապէս այն պատճառով, որ չենք ուզում իրագործել: Ի վերջո կանգ առինք կազմը փոխելու վրա և դրա մէջ գտանք թէ մեր, թէ գործի փրկութիւնը: Այդ վճիռը եղաւ ճիշտ 10 օր առաջ, և մենք ընկերաբար միջոցներ առաջարկեցինք

կազմի շուտափոյթ փոփոխութեան համար: Դուք իրաւաբանօրէն ընդունեցիք բոլոր առաջարկութիւնները, իսկ իրականապէս շարունակում էք (դեֆակտո) նախկին գործողութիւնը: Չգիտենք ինչո՞վ բացատրել այդ երևոյթը: Այժմ, երբ հարցը ծայրայեղութեան է հասել, ստիպուած ենք ուլտիմատում դնել հետևեալ պայմանների տակ.

Ա. Հին կազմը դադարելու է գործելուց: Բ. Կոմսը[1] և ընկերները տալու են իրենց գրաւոր հրաժարականը: Գ. Կազմը տալու է գրաւոր կերպով - իր անդամների ստորագրութեամբ և կնիքով – ռազմական (թէ կազմակերպութիւն, թէ ժողովրդական), դրամական (մանրամասն հաշիւ ելմտից և պարտքերի դօկումենտալ հաշուացուցակ), կազմակերպական, ստացվածքների ցուցակ, հաց, հագուստեղէն, գործիքներ, արխիվ, ձիաները և այլն իրերի...

Դ. Կազմակերպական տեղեկագիր գրաւոր կերպով (արած և անելիք ծեռնարկների համար):

Առայժմ կանգ ենք առնում այս չորս դրական առաջարկների վրա և դնում ենք հետևեալ պայմանները.

ա. եթէ չտաք դրամականի մանրամասն հաշիւ, չենք ընդունելու պարտքերը,

բ. եթէ Կոմսը և ընկերները չտան գրաւոր հրաժարական և չդադարացնեն գործունէութիւնը, կազմը փոփոխած չէ համարւելու և մենք այլևս այս դրութեան մէջ անկարող ենք մնալ,

գ. եթէ բոլոր դրուած պայմաններին մինչև վաղը առաւօտ բաւարարութիւն չտուեց, խնդրում ենք մեզ հետ կտրել ընկերական յարաբերութիւնները: Մենք կը հեռանանք քաղաքից:

Իշխան[2]
Վարդան
Արամ
Տիգրան

ՀՀԴ կենտրոնական արխիվ, թղթածրար 661, գործ 46:

N 3
ՇԱՄԻՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԱՄԻՆ ՏՐՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆ՝ Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հոկտեմբերի 1906 թ.

Սոյն վկայականը ներկայացնող Արամը Շամիրի[3] Կ[ենտրոնական] Կոմիտէի կողմից ընդունուած է պատգամաւոր Հ. Յեղ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին ներկայանալու համար:

Նախապէս գրուած բոլոր հարցերի վերաբերմամբ, փոխադարձ համաձայնութեամբ, նրան տրուած է իրաւունք՝ դրական կամ բացասական դիրք բռնելու:

Իսկ չնախատեսուած հարցերում՝ նա պիտի վարուի մեր (տեղեկագրի մէջ տրուած) ընդգծած ուղղութեան սահմաններում: Բացի դրանից նրան և մեր շրջանի մնացած ընկերներին իրաւունք է տրւում Ընդհանուր ժողովի կողմից յատկացուած բիւջէի դասաւորութիւնը կատարել:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿ. ՇԱՄԻՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ. հատոր, էջ.6:

N 4

ԻՇԽԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՐԿԻՐ ՉԵՆՔ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

25 հոկտեմբերի 1906 թ.
Քար-Ալեքսանդրապոլ

Սիրելի Արամ!

Երևի տարօրինակ կը թուայ - այսքան երկար իմ լռութիւնը, բայց սիրելիս, մինչև հիմա համարեա չէս ժամուայ ազատ ժամանակ չեմ ունեցած, մանաւանդ գծերի վերայ եղած աշխատանք: Այստեղ[4] կատարեալ ռեակցիայի շրջան է, ամենուրեք ընկերները յոգնած ու յուսահատ և համարեա շատ քիչ են հետաքրքրւում երկրով: Դա ոչինչ, առայժմ մեր ռազմական մուտքը, պիտի ասել, բաւականին կատարեալ վիճակ ունի և հաւանօրէն փառահեղ կէրպով պիտի կարողանանք օգտուել, մանաւանդ մեր վերաբերմամբ երկրի համար այդ մարմիններն ոչինչ չեն խնայում, այդ տրամադրութիւնից պիտի աշխատեմ օգտուել: Գծերի վերան աշխատում ենք ապրանք կենդրոնացնել – Քարաբերդում[5] արդէն բաւական ապրանք է կենտրոնացած – Կուադաշտ[6] էլ երէկ Երևանից փոխադրեցինք մօտաւորապէս 55 հազար հնի և նորի ծայրեր[7], պիտի Մաշտոցին[8] խրախուսել ըստ ամենայնի աշխատէ - տեղիդ գործը կանոնաւորել: Նոր ապրանքներ դարձեալ կը ղրկեմ երկու տեղն էլ: Իսկ Աւարայրի գիծը[9] Կոմսի հետ գնալով կանոնաւորեցինք - այնտեղից ուղղակի Աւետարան[10] փախադրուեց 8675 նորի և հնի ծայրեր, վերջին ոտքին[11] էլ ուղարկեցի 40 հատ խոզովակ[12] երէք հազար նորի ծայրով միասին, որը, հաւանական է, քանի մի օրից տեղ կը հասնի: Տեղս (Երևան) հասնելով, անմիջապէս գնեցի 20 կազաչի կոթ,[13] որը Աւարայրով Աւետարան ճամպեցի: Դուն լաւ կանէիր Էդվարտին[14] պատուիրել, որ մեզ կանոնաւոր նամակներ գրէ ստացածների մասին, որի համար սարսափելի մտատանջւում ենք: Անտառապատ[15] կայ քանի մի հարիւր հազար հնի գիլզի, ամեն ջանքս կը թափեմ այն էլ հասցնել գարնան փոխադրութեան համար, իսկ նորի

ծայրերը՝ Ջրաբերդ[16] և Քար մարդ դրեցի յատուկ մեզ համար ճարելու նորի ծայր: Չենք շատ կայ և լաւ կերպով պիտի օգտուինք, պատահած ձեռքից բաց չպիտի թողնեմ, թէ գնելով և թէ մարմիններից ձեռք բերելով: Մեր բուտքեն[17] ամբողջապէս պատրաստ է, այնպէս որ դրամից չպիտի նեղուինք:

Կոմսը մի քանի օրից հետոյ կը ճանապարհուի դէպի հող, մենք մի քանի մեր գործերի համար շտապում ենք Թիֆլիզ, բաւարարութիւն ստանալուց կը գայ անպատճառ: Տեղիս խառն դրութիւնը օր աւուր բարդանում է, նամանաւանդ մի քանի լրբեր, որ ծայրահեղութեան հասցրին իրենց տաճկահայ գործի նախանձախնդիր ձևացնելով: Բոլոր մարմիններն համարեա կիսաքանդ վիճակ ունին, իրար են կպցնում սոսկ: Ընդհանուր ժողովի[18] ընտրութեան համար [համբերութեամբ] զինւենք: Ինչպէս ասացի, մեծ ռազմական ոյժ պիտի ընկնի մեր ձեռքը, որը և քո հող մնալն անհրաժեշտ է դարձնում մինչև կը հեռագրեմ գործը պատահած պարագային: Ժողովրդի համար որոշեալ բիւտճէն ամենայն հեշտութեամբ այս աշուն պիտի ձեռք բերենք և գուցէ մերի մի քառորդը:

Չենքը էժանանում է. իմ առածը 90 րուպլիով, հիմա հնարաւոր է կարճերն գնել 80-70 րուբլիով – տարակոյս չկայ, որ պատահածն կառնեմ, մի խոսքով ամեն կերպ բիւրօն տրամադրուած է ռազմական, որքան ցանկանում ենք, բաց թողնել և կայ, պիտի ասել, վատատես լինելու ոչ մի կարիք չկայ: Հնարաւոր է կլինի 210 բերտաև[19] վերցնել Անտառապատից, բայց հրաշալի բաներ են: Աւարայրի համար երկու ոտքի էլ պատրաստի ապրանք կայ, որը պիտի փոխադրեն մինչև հիմա փոխադրող քրդերն, որոնց մասին անպատճառ տեղեկութիւն առած ես: Կուադաշտի վերա շատ ջանք թափելու ես: Քարադաշտ[20] կարգադրեցի այս ոտին դրկել N 1 - 17 հատ, N 2 - 10 հատ, N11- 25 հատ, հավանական է ամբողջ 12 հազար ծայրի հետ հասել է Աւարայր: Գրեցի իրանց, որ դառնալուց անմիջապէս նորից հանեն, նամանաւանդ, որ Սիսիանից ստացել է նոր ձիարանք, այնպէս որ հնարաւոր] է այդ: Մեր զինւոր Համբարձումն դրի Կուադաշտից փոխադրող լօլօների[21] հետ. կերքան ու կուգան նրանց հետ: Թէոսէ[22], հաւանական է, հասել է տեղը,[23] շատ խնդիրներու մասին խօսել ու բացատրել է երդորդում: Ռազմականի մասին միամիտ կաց – շատ կայ և շատ էլ պիտի տան - առանց բիւտճէի բերանին կամ որոշեալ քուի նայելու, դու միայն այնպէս դասատուիր, որ հեշտ հնար լինի ներս լցնել: Չալիկն դեռ չի վերադարձել. վերադառնալուց նրա հետ անվտանգ ապրանք կըփոխադրենք: Կոմսը, հաւանական է, նոյեմբերի 5-10-ը գայ, աշխատիր ամենակարճ ճանապարհով Նորօի հետ դրկել և այնպէս դասատրել, որ այդ օրերին նրանք այդտեղ գտնուին: Այդ արդէն քո գործն է: Թիֆլիզից երկար կը գրեմ: Ուրեմն ի նկատի ունեցիր 45+10 = 55 հազար ապրանք կայ – Կուադաշտ (նոր դրկուած) – մօտաւորապէս 40 հազար էլ Քարաբից[24] կը գան նորերն էլ:

Ջերմ եամբույրներով՝ Իշխան

[Հ. Գ.] Երկիր ևամակ գրեցի:

ՀՀԴ կենտրոնական արխիվ, թղթածրար 665, գործ 391:

N 5

Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՑԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՎ ԲԱՆԱՁԵՎԵՐ

փետրվար 1907թ.

1.- Ի նկատի ունենալով որ Երկրի եւրոպական հիւպատոսների հայ թարգմանները օգտուելով իրանց դիրքից, շատ անգամ չահագործում են մեր դատը յօգուտ իրանց շահի:

Ի նկատի ունենալով որ նրանք շատ անգամ չահագործում են յօգուտ իրանց գրպանի, արտասահմանից ուղարկուած սովեալների նպաստը:

Նկատելով որ նրանք միշտ կաշառքներով կամ իրանց դիրքը ամուր պահելու համար մեր գործերի վերաբերմամբ հիւպատոսներին տալիս են ամենաանճիշդ տեղեկութիւններ, և դրանով մեծապէս վնասում են մեր եւրոպական պրոպագանդի գործին:

Ընդհանուր Ժողովը յանձնարարում է Երկրի մարմիններին, ձեռք առնել նրանց դէմ ամենախիստ միջոցներ, կանգ չառնելով նոյնիսկ տեռորի առաջ:

1.Արամ, 2. Գագիկ [Մտեփան Տեր Մկրտչեան], 3. Համօ [Օհանջանեան], 4. Իշխան [Ն.Պողոսեան], 5. Ս. Գրուզինեան [Վրացեան], 6. [Ալեքսանդր] Մաշուրեան, 7. Չոփուրեան [Լեւոն Թադևոսեան], 8. Հայ-գուսան [Ավ. Իսահակեան], 9.Յուշիկ [Ժենեա Մելիք Քալանթարեան], 10. [Մկրտիչ] Սաքօ [Ս.Ծովականեան], 11. Ասլան [Ռ.Զարդարեան], 12. Վրէժուհի [Մտեփան Մտեփանեան], 13. Եղիշե] Թոփչեան, 14. Մեսրոպ [Ա.Ներսիսեան]

2.-Առաջարկ Դիւանին.

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռայոնական Ժողովների կոմպետենցիայի սահմանը Ընդհանուր Ժողովում չի որոշուել, ներքև ստորագրող պատգամաւորները առաջարկում են Դիւանին՝ Կազմակերպական Կանոնների վերաքննութիւնը օրակարգից չհանել նախքան այս հարցի մասին խօսելը:

1. Արշակ [Իսահակեան-Ջամալեան], 2. Արտեր [Ավ.Շահխաթունեան], 3. Գրուզինեան, 4. Ռոստոմ [Ստ.Զորեան], 5. Մաշուրեան, 6. Քարսեղեան, 7. Սաքօ, 8. Հայ-գուսան, 9. Վահագն [Տաքևեան],

10. Արամ, 11. Ե. Թոփչեան, 12. Չոփուրեան

3.- Առաջարկ Դիւանին.

Յուցական գործունէութեան ամբողջ պատկերը ժողովի առաջ պարզելու համար մասնաժողովս ցանկալի է համարում Ռուբինայի ներկայութիւնը այստեղ՝ որոշ կէտերի վերաբերմամբ բացատրութիւն տալու նպատակով, ուստի խնդրում ենք Դիւանից ժողովի հաւանութիւնն առնելով անմիջապէս հրաւիրել Ռուբինային Վիեննա:

Մասնաժողովի անդամներ

1. Ե. Թոփճեան, 2. Արամ, 3. Զարեան, 4. Ա. Վռամեան

5.- Ընդհանուր ժողովին,

Յուցական յանձնաժողովը գտնում է, որ բազմակողմանի պարզաբանութիւնների համար, կարևոր է Յուցական Մարմնի անդամներից՝ Թորգոմի ներկայութիւնը:

Ուստի առաջարկում է ժողովին՝ հրաւիրել նրան էլ:

Անդամներ

Արամ, Ե. Թոփչեան, Յ. Զարեան

15.- Եթէ պատժական պատկան մարմինը չի ընտրում Ընդհանուր ժողովից, անմիջապէս մենք յետ ենք վերցնում մեր ձայները՝ նրան մերժելով [հրաւունքը] որևէ պատիժ տալու:

Ե. Թոփչեան, Արամ, Մաշուրեան

23.- Աչքի առաջ ունենալով, որ ներքևում առաջ բերուած տողերը

Վառնայում հրատարակուող «Շարժում» լրագիրը խօսելով Կովկասում Դաշնակցութեան շարքերում սկսուած պառակտման մասին, որտեղ որպէս թէ դժգոհ ֆրակցիան նպատակ է դրել կազմակերպութիւնը ազատել բիւրոկրատների ճեռքից և տալ նրան ներկայ պահանջներին յարմար ուղղութիւն, իր կողմից հաղորդում է.

Ստույգ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Անդրանիկը ուր որ դաշնակցականների է պատահում, անկեղծօրէն դատափետում է կազմակերպութեան քերութիւնները և մատնանշում նրա ճեռնտուութեան բացակայութիւնը Երկրի յեղափոխական գործերին: Անդրանիկի կարծիքն և համոզումն է գործի ղեկը խլել բիւրոյականներից, սիրողներից և կենտրոնացնել յեղափոխական գինուորականութեան ճեռքում, այսինքն երկրում գործողների: Յաջողութիւն ենք ցանկանում Անդրանիկին և գինուորական խորհրդին իրենց ծրագիրների մէջ:

Անդրանիկի մասին կարող ենք մտքերի շփոթում առաջ բերել որոշ դաշնակցականների շարքերում, ուստի խնդրում ենք Դիւանից՝ հոգալ,

որպէսզի ընկեր Անդրանիկը հերքում գրէ այդ մասին և բացատրութիւն տայ իր յիշեալ կարծիքի վերաբերմամբ այտտեղ՝ ժողովում:

Բաբսեղեան, Իշխան, Միքայէլ [Հովհաննիսեան-Վարուժեան], Արամ, Արշակ, Մեր [Հ.Օհանջանեան], Մանուկ [Մանուկեան], Վարդան [Մինասեան], Չոպանեան, Յարձի, Մարօ, Մսպուն, [Մերտոտացի] Միքայէլ, Միշ [Մ. Գրիգորեան], Հայ-գուսան

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ. հատոր, էջ 26-29:

N 6

ՔԱՂՎԱԾՔ՝ Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 28-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

11 մարտի 1907 թ.

Ժողովն անցնում է Վասպուրականի խնդրին:

Արամ խնդրում է կարդալ մի նամակ, որ ստացել է Թիֆլիզից՝ Ընդհանուր Ժողովի անունով, որ վերաբերում է Վասպուրականին (խնդիրը յարգուելով, կարդում է նամակը):

Առաջարկւում է կարդալ մի այլ նամակ՝ Վասպուրականի կազմակերպութեան գործունէութեան մասին:

***Նախագահը** գտնում է, որ նամակների քննութիւնը անհետաձգելի բան է: Որոշւում է երկրորդ նամակը ամբողջովին չկարդալ ժողովի առաջ:*

***Թոփչեան, Վռամեան** առաջարկում են, որ իրանք մասնաւոր կերպով կարդան նամակը և համառօտ զեկուցում տան նրա բովանդակութեան մասին, եթէ ժողովը ցանկանայ:*

Առաջարկ է լինում թէ՛ նամակը և թէ Վասպուրականին վերաբերող ուրիշ թղթեր՝ յանձնել մի յատուկ մասնախմբի:

***Ռուստամ**.- Նամակը բաղ կարդացուի, և ապա որոշում կայացուի այստեղ՝ որ առհասարակ մասնաւոր նամակներ այլևս չկարդացուեն Ժողովում, այլ յանձնուեն դիւանին:*

***Թոփչեան, Վռամեան** գտնում են, որ նամակը ամբողջապէս լինելով Վասպուրականի Կ. Կոմիտէի դէմ, պէտք է բաղձալի Դատական Մարմնին: Նամակը ստորագրել են 10 հոգի, մեծ մասամբ նախկին գիւղապետներ:*

***Նախագահը** առաջարկում է մի նոր մարմին նշանակել այդ նամակը և առհասարակ այդպիսի մանր խնդիրներ քննելու և զեկուցանելու համար:*

Ժողովը ընդունում է առաջարկը և մասնախմբի անդամներ ընտրւում են՝ Տաճատ, Վահագն, Շահխտաբուեանց:

Վասպուրականի տեղեկագրի շարունակութիւնը:

Խաչակեան. *- Ի՞նչպէս պէտք է հասկանալ ընկ. Արամի այն միտքը, թէ «գաւառում յեղափոխական գործն աւելի բարեկեցիկ վիճակի մէջ է գտնւում շնորհիւ այն հանգամանքի, որ այնտեղ զինուորական դիկտատուրա չէ եղել»:*

Ռոստոմ. *- Յանկանալի է իմանալ, թէ տեղական տարրերն ի՞նչ չափով են չէզոքացւում: Որքան գիտեմ՝ տեղական տարրերը տեղ չեն գտնում կազմակերպութեան մէջ: Խորհուրդը որոշել էր շրջանը բաժանել երկու Կ. Կոմիտէների, որպէսզի այդպիսով առաջն առնւի միմիայն քաղաքում տեղի ունեցող ուժերի կենտրոնացման և ծանրութեան կենտրոնն անցնի նաև գաւառները: Յետոյ, ի՞նչն է ստիպում Ձեզ՝ Պատասխանատու Մասնին իրաւասութեան սահմանները տարածել և՛ հեռաւոր վայրերի վրայ: Ապա, ո՞րքան կարևորութիւն էք տալիս պրոֆեսիոնալ[25] միութիւններին, չէ՞ր կարելի, որ Կուսակցութեան անունով չկազմուէին դրանք: Ի՞նչ բնաւորութիւն են կրում այնտեղի աշակերտական միութիւնները իրենց գործադրուլներով:*

Տաճատ [վարդ. Մելքոնեան]. *- Ո՞ր մարմիններն են ընտրովի և որո՞նք նշանակովի:*

Մեպուն. *- Փորձուած զինուրներին հեռացնում են Կազմակերպութիւնից: Ի՞նչ է պատճառը:*

Զաւրեան. *- Գիտելում խմբեր կազմակերպելիս, ի՞նչ կարգի տարրերն են ընդունւում: Ի՞նչ միջոցներ են ձեռք առնում ժողովրդի տնտեսական կացութիւնը բարձրացնելու, վաշխառութեան ու կալուածատէրերի հետ կռուելուց զատ:*

Արամ *(պատասխանում է հարցերին). - Տեղացիներին չէզոքացնելը մի նկատողութիւն է, որը աւելի քան վիրաւորական է մեզ համար: Նախ՝ «տեղացի» և «ոչ տեղացի» ասելով մենք չենք հասկանում «տաճկահայ» և «ռուսահայ». օրինակ՝ Վարդգէսը՝ թէև տաճկահայ, Վանի համար ոչ-տեղացի էր: Ապա հարց է դրւում, թէ ինչու՞ ենք չէզոքացնում տեղացիներին, արդեօք այստեղ մեր անձնական կապրիզնե՞րն[26] են դեր խաղում: Մի՞թէ մենք այնքան անազնիւ ենք, որ մեր կապրիզները մեզ ղեկավարէին: Այսպիսի բան չէ կարող լինել: Այլ է պատճառը. ռէակցիայի[27] օրերին, ասպարէզի վրայ էին մնացել միայն այն մարդիկ, որոնք կոտրածից ազատ դուրս գալով, հեռու էին փախչում, սոսկում էին յեղափոխութիւնից. դժուար է դրանց մէջ աջակցող գտնել: Վարդգէսը Վան գալով, չկարողացաւ գտնել անձնուէր մէկին. միակ մարդը նրա նախկին ընկերներից՝ ուսուցիչ, որի վրայ նա կարող էր որևէ յոյս ունենալ, դա էլ հեռու մնաց Վարդգէսից: Վարդգէսն անպայման կարիք ունէր տեղացի ուժերի, բայց չկային: Այնուհետև երբ տեղացիները սկսեցին կամաց կամաց մօտենալ գործին, դրանցից շատերն այդ քայլն անում էին փառասիրութիւնից դրդուած, ուզում էին փափուկ պաշտօններ ստանալ. և մի՞թէ այդ պայմաններում դրանց կարելի էր գործ տալ: Ուրեմն զրպարտութիւն է (եթէ*

*թոյլ կը տրուի ինձ այդ խօսքն ասելու) երբ մեզ մեղադրում են տեղացիներին չէզոքացնելու [յանցանքով]: Յետոյ, մենք չէինք գործ յանձնի այնպիսի անփորձ ուժերի, որոնք յեղափոխական անցեալ չեն ունեցել: Միայն, ժամանակի ընթացքում, երբ նոր մարդիկ հրապարակ եկան, այդպիսիներին առաջ քաշեցինք, և այսօր Վանի Կ. Կոմիտէի անդամներից հինգը տաճկահայեր են, նմանապէս քաղաքի կոմիտէի չորս անդամները: Եւ պէտք է չեշտել, որ Կազմակերպութեան գործը իւր յաջողութեամբ պարտական է տեղացիներին: Ժողն գումարուած Խորհուրդը որոշել էր մեր շրջանը երկու մասի բաժանել. նախքան այս որոշումը սակայն, մենք էլ նոյն ցանկութիւնն ենք արտայայտած եղել և այդ մասին տեղեկացրել էինք Խորհուրդին: Հարցնում եմ, թէ չէ՞ր կարելի Վանի պրոֆեսիոնալ միութիւնները կազմակերպել ոչ Կուսակցութեան դրօշի տակ.- այդպէս էլ է: Արհեստաւորները միացել են ինքնաբերաբար առանց Կուսակցութեան դրդման կամ ղեկավարութեան: Վանը արհեստաւորական քաղաք է և արհեստաւորները կարիք են զգացել համախմբուելու իրենց ընդհանուր շահերի շուրջը, կազմելու արհեստակցական միութիւններ, որոնք աւելի շուտ համբերարութիւններ են: Երբ արդէն միութիւնները երևան են եկել, այն ժամանակ միայն կուսակցութիւնը միջամտել է գործին աւելի կանոնաւոր և յաջող ընթացք տալու համար: Նոյնը պէտք է ասել նաև աշակերտական միութիւնների վերաբերմամբ.- այստեղ էլ կովկասահայ աշակերտական շարժման տակ աշակերտները գործադրել են անում և պահանջներ դնում վարչութեան առաջ. մենք ոչ մի գաղափար չենք ունեցել այդ մասին: Երբ միայն վարչութիւնը փորձեց խիստ միջոցների դիմել և այդ առթիւ ծնողական ժողով կայացաւ, Կազմակերպութիւնը միջամտեց, հենց վարչութեան խնդրանքով և եղած պահանջներն արդարացի գտնելով, մեր կողմից խրախուսեցինք աշակերտներին, որից սրանք ոգևորուած իրենց սեփական միութիւնը կազմեցին: Շարժումը սկսեց Կենտրոնական Դպրոցից և անցաւ միւսները: Ինչ վերաբերում է կազմակերպական մարմնի անդամների ընտրովի կամ նշանակովի լինելուն, պէտք է ասեմ, որ բոլորը ընդհանրապէս նշանակովի են և այս սիստեմը աւելի նպատակայարմար է այն տեսակէտից, որ մարմինների անդամները մեծամասնութեանը անյայտ լինելով գերծ են մնում վտանգներից: Վերջերս երիտասարդութեան մի մասը կառավարութեան ներկայ քաղաքից խրախուսուած, ուզում են ընտրողական սիստեմ մտցնել: Այստեղ նկատեցին, թէ ժողովուրդը լռում է և չի համարձակում խօսել իր վրայ ծանրացած բռնութեան շնորհիւ: Միշտ փափաքել ենք ժողովուրդի ձգտումներին բաւարարութիւն տալ. տեղեկագիրը կազմելիս, մենք աշխատել ենք, որպէսզի նրա մէջ արտայայտուի լիովին ժողովուրդի տրամադրութիւնները: Մի գիւղում հետևեալ դէպքն է տեղի ունեցել.- շրջիկը իւր տասնեակով գնում է գիւղ, ուր ներքին կռիւ կար երկու հակառակորդ կողմերի միջև, կռուողներին հաշտեցնելու նպատակով. երբ սրանցից մէկի

դուրը բակում են, քանի հրացան յանկարծ որոտում են շրջիկի և նրա զինուորների վրայ. վերջիններս բողնում հեռանում են, բայց դեռ կէս ժամ շարունակ նրանց ետևից գնդակներ են տեղում: Այս և նման դէպքեր երկու կերպ կարելի է բացատրել. ժողովուրդը կամ հնամբերութիւնը կտրած է եղել բռնութիւնների հանդէպ, կամ թէ նա շատ է շռայլել: Ապա զինուորներն իրանք բռնութիւններ են գործ դնում, ընդհանրապէս առանց տասնապետի գիտութեան. օրինակ, զինուորը գնում է գիւղ և զանազան պահանջներ է դնում՝ հաւ, գուլպայ և այլն.. գիւղացիներն էլ տեղ տեղ ծանծրացած այդպիսիներից՝ ջարդել են դրանց գլուխները:

Իշխան հաստատում է Արամի ասածը:

Անդրանիկ.-Չարմանում եմ, որ զինուորի վրայ ժողովուրդը ձեռք է բարձրացնում. ոչ ոք իրաւունք չունի այդպիսի բան անելու. եթէ զինուորը կամայականութիւն է անում, այդ մասին պէտք է յայտնուի իր տասնապետին կամ խմբապետին. մեղաւորին սրանք պէտք է պատժեն: Չպէտք է զինուորին փարկաբեկ անել:

Արամ.- Հասկանալի է, որ ժողովուրդն երբ այլևս անկարող է լինում բռնութիւնը տանելու՝ իր ձեռքով է դատաստանը տեսնում: Սեպուհն ասում է, որ փորձուած զինուորական ուժեր հեռացուում են մեր շրջանից. մենք այդպէս ենք փարատում մեր մի ընդհանուր տակտիկի հիման վրայ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կառավարութիւնը իր ուշադրութիւնը գլխաւորապէս դարձնում է զինուորների վրայ. մենք ստիպուած ենք գտնուել նրանց հետ սահել շրջանից, փորձուած լինեն թէ անփորձ: Մենք ուզում ենք, որ զինուորական ուժեր մնան [?] մեզ մօտ.- ունենք միայն մեզ զինուոր և այդ թիւը բաւական ենք համարում: Այսօր մենք խոստում աշխատանքով ենք զբաղուած, վաղը եթէ դէպքեր տեղի ունենան, այն ժամանակ ատպարէզը կը թողնենք կռուողներին: (Պատասխանելով Խաչակեանի հարցին) Այն շրջանները, որոնք կազմակերպուած են զինուորական կամ կռպիտ ուժերի ղեկավարութեամբ, հասկանալի է, թէ դրանք ի՛նչ միջոցներ են կիրարկում գործ ստեղծելու համար, նրանք գործել են հրացանի, ծեծի և նման ձևերով: Համոզել ժողովուրդին, գիտակցութեան բերել նրանց, զարգացնել նրա ինքնագործունէութեան ոգին, այդ նրանք չեն կարող անել. իսկ թէ այդպիսի պարագաներում ժողովուրդն ի՛նչ վիճակի մէջ կը լինի և գործը որքան հաջող՝ դա պարզ է: Մինչդեռ վերոյիշեալ շրջանը ազատ է մնացել այդպիսի սիւրպրիզներից. նա կազմակերպուել է և մինչև վերջը ղեկավարուել է մի կիսահնտելիգենտ բնակչոջ ձեռքով: Արդիւնքի մասին տեղեկագրի մէջ կար. նրանք ինքնապաշտպանութեան համար աւելի զոհողութիւններ են արել քան աւելի հնուց կազմակերպուած շրջանները: Անգործ զինուորի վիճակն անտանելի է. նոր զինուոր ընդունել չենք կարող, աւելորդ բեռ չդարձնելու համար:

Զաւրեան.- *Ժողովրդի տնտեսականը բարելաւելու համար, կազմակերպութիւնն ի՞նչ միջոցների է դիմում:*

Արամ.- *Գիտական կերպով բարելաւման մասին խօսք լինել չէ կարող, այլ միայն ժողովուրդն ապահովւում է այս կամ չարիքից. քրիստոնեական արշաւանքներն, օրինակ, դադար են առել, վաշխառուները չեն համարձակում կեղեքել: Վանքապատկան հողեր տրւում են չքաւոր գիւղացիներին՝ ձրի վարելու համար և այլն:*

Շահխաթունեան.- *Քանի ձեր շրջանում գինուորներ չեն պահւում, էլ ի՞նչպէս կարելի է ասել, թէ գինուորները բռնութիւններ են գործ դնում, կամայականութիւններ են անում. գուցէ այնպիսիներ՞ը, որոնք տարիներ առաջ միայն գինուոր են եղած: Այս տեսակէտից, ցանկալի է պարզել, թէ որո՞նք են այնտեղ պաշտօնապէս «դաշնակցական» համարւում և որո՞նք ոչ:*

Մեպուհ.- *Գոհ չեմ ընկ. Արամի տուած պատասխան-բացատրութիւնից: 1905-ին երբ ես Պարսկաստան էի, այնտեղ շարունակ մարդիկ էին ուղարկւում Վասպուրականից և բոլորն էլ որպէս աքսորուածներ, և մենք բնաւ չենք կարող ենթադրել, որ այդ «աքսորուած» կոչուողները վիճակի խաղաղ լինելու պատճառով է, որ Երկրից դուրս են ուղարկուել:*

Արամ *(պատասխանելով Շահխաթունեանին).- Երբ մի գինուորի գինաքափ ենք անում, իրաւականօրէն նա դեռ շարունակւում է մեր գինուորը հաշուուել. դրանց տալիս ենք ծպտեալ մականունը. այդպիսիներն են, որ գլխաւորապէս անախորժութիւնների տեղիք են տալիս: Միևնոյն ժամանակ բռնութիւններ գործել են և՛ մեր գինուորները, ի մեծ ցաւ մեզ և ի մեծ նախատինք խմբապետների:*

[Մարգիս] **Մինասեան**.- *Ծպտեալները ի՞նչ միջոցներով են ապրում, Կազմակերպութե՞ն քէ գիտի:*

Արամ.- *Ծպտեալները մեզ շատ են տանջում. նրանք 60 հոգի են, իսկ մենք միայն վեց: Ինչի՞ցն է, ոչ թէ ամբողջ գինուորականութիւնն է զեղծումներ արել, այլ միայն անհատ-գինուորները: Ինչ վերաբերում է այն խնդրին, թէ արդեօք ներկայումս եղած սակաւաթիւ ուժերը կարո՞ղ կը լինեն վտանգի դէպքում գործել, սրա մասին կը խօսենք, երբ կը գանք տակտիկայի[28] հարցերին:*

2. Պրոպագանդա[29]

Ժողովը հարցնում է՝ ի՞նչպէս է կատարւում պրոպագանդը, տարբա՞ յ ո՞ր եղանակներին է լինում, հողային խնդիրը ի՞նչ կերպ է արծարծւում:

Արամ.- *Բանաւոր պրոպագանդան այնքան լայն չափեր չունի մեզ մօտ, ինչպէս հարկաւոր է, որովհետև գործնականով շատ ենք զբաղուած: Պրոպագանդի լաւ ժամանակը ձմեռն է: Հողային հարցը արծարծւում է այն չափով, ինչ չափով կայ մեր հիմնական ծրագրի մէջ:*

Շահխաթունեան.- *Ի՞նչպէս է նկարագրւում ապագան, պրոպագանդի ժամանակ:*

Արամ.- Մօտակայ նպատակն է՝ կեանքի և գոյքի ապահովութիւն:

3. Չէնքի խնդիր.

Յովհաննէս.- Տեղեկագրի մէջ ասուած է, որ 40.000 ռուբլու չէնք է գնուել. գումարի մի մասն էլ տուել է ժողովուրդը: Հետաքրքիր է իմանալ, ժողովրդի տուած փողի ո՞ր մասն է բոնի կերպով վերցուած, և ո՞ր մասն է՝ ժողովուրդը իր յօժար կամքով տուել, առանց Կազմակերպութեան ճնշման:

Շահխաթունեան.- Ինչո՞վ է բացատրում, որ գիտերը, չնայելով տիրոյ ալքատութեան և հարկերի ծանրութեան, դեռ կարողանում են այդքան հսկայական գումարներ տալ: Թէ՞ տնտեսական դրութիւնը այնքան էլ կրիտիկական չէ, ինչպէս մենք ենք կարծում:

Արամ.- Չէնքի համար դրամ հայթայթելու ձևը՝ 1904-ից կանոնաւորուել է: Պրոպագանդայի ազդեցութեան տակ, մի քանի երիտասարդներ ոգևորուած ինքնագլուխ չէնքեր սկսեցին հաւաքել. այնուհետև անցան գիտերը, ուր բացատրում էին ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, կազմում էին ցուցակներ, թէ գիւղացիներից ո՞վ որքան կարողութիւն ունի և ըստ այնմ կարգադրում չէնք գնել: Հարուստները սրանց դէմ էին և այստեղ բոնի ուժ է գործադրուել: Ժողովուրդը այսօր ինքն աւելի է կանոնաւորել չէնքի համար նպաստներ տալու հարցը. գիտերում փողը հաւաքում և բերում է քաղաք, իրենց՝ գիւղացիների ձեռքով:

Մինասեան.- Մի գուցէ պրոպագանդի միջոցին ժողովուրդին զանազան խոստումներ են տրում մօտալուտ ապագայի վերաբերմամբ, որոնցից և դրդուած՝ ժողովուրդը չէնքի փող է տալիս:

Արամ.- Մենք ոչ մի խոստում կամ յոյս չենք տալիս, մենք գլխաւորապէս շեշտում ենք ինքնապաշտպանութեան հարցը:

Վիճաբանութիւնները փակւում են:

***Նախագահը** յայտնում է Ժողովին, որ արդէն տեղ է հասել ընկ. Վարդանը Կովկասից, որին Ժողովը հրաւիրել էր քուէի իրաւունքով, իբրև ձեռնհաս ընկերոջ:*

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 72-75:

N 7

Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 29-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

11 մարտի 1907 թ.[30]

*Նախագահում է **[Խաչատուր] Մալումեան:***

*Բացակայ են՝ **Մինասեան, Իսահակեան, Թովհեան, Մաշուրեան], Մուրատ, [Թովմաս] Ջելալեան, Սաֆո [Մ.Մարգարեան]:***

Վասպուրականի տեղեկագրի քննութեան շարունակութիւնը.

4. Յարաբերութիւնները՝ թուրքերի, քրտերի, ասորիների հետ:

Վռամեան. *- Պրոպագանդը քիւրտ ազաների շրջանում ի՞նչ ուղղութեամբ պէտք է առաջ տանել, որպէսզի նրանց կարելի լինի շահագրգռել մեր գործով:*

Շահխաքունեան. *- Քրտերը գիտե՞ն, որ ներկայ կարգերը փոխուելուց յետոյ, գալիք փոփոխութիւնները տեղի պէտք է ունենան հայ յեղափոխութեան միջոցով:*

Արամ. *- Քիւրտ ազաներին ի հարկէ դժուար է մեր ծրագրով ոգևորելը, քանի որ վերջինս նրանց շահերին հակառակ շատ կէտեր ունի իւր մէջ. օրինակ՝ մեր տնտեսական ծրագրի հետ նրանք երբեք չեն կարողանայ հաշտուել: Եւ այդ մասին էլ բոլորովին չենք խօսում նրանց առաջ, այլ ծանրանում ենք բացառապէս քաղաքական ծրագրի վրայ: Մենք աշխատում ենք գրգռել քիւրտ ազաներին կառավարութեան դէմ, համոզելով՝ որ կառավարութիւնն իրենց թշնամին է: Անկասկած, դժուար թէ քիւրտերն այն աստիճան թշնամանան կառավարութեան, որպէսզի մեր ապստամբութեան ժամանակ միանան մեզ հետ, բայց յոյս կայ, որ չէզօք դիրք կը բռնեն, գոնէ այդպէս են ասում ազաներից շատերը. անմիջական օգնութիւն ցոյց տալ մեզ չեն կարող. եթէ օգնեն և այնուամենայնիւ կառավարութիւնն յաղթող հանդիսանայ, այս դէպքում նրանք աւելի են տուժելու, քան մենք: Քրտերը բացառապէս հայ յեղափոխականների վրայ չեն մատնացոյց անում, որ սրանք պէտք է փոխանակութիւն մտցնեն Երկրի մէջ. նրանք ազդուել են առհասարակ և՛ ռուսական շարժումներից, և՛ տաճկական վերջին ցոյցերից, և պարսկական շարժումներից, և՛ Պոլսի մահափորձից:*

Ստեփանեան. *- Այդ մահափորձը ի՞նչ տպաւորութիւն թողեց թուրք և քիւրտ ազգաբնակութեան վրայ:*

Արամ. *- Դատավարութիւնից յետոյ միայն իմացուեց, որ հայերն են եղած փորձը կատարողները և մեր հարևանները շատ ափսոսացին, որ ծեռնակութիւնն անյաջող էր անցել: Փորձը խորը տպաւորութիւն թողեց, Կազմակերպութեան հմայքը բարձրացնելու [տեսակէտից]:*

Վռամեան. *- Ինչպէս ասում են, քրտին քիրվայ դարձնելու համար, նախ և առաջ հարկաւոր է նրան տփել: Այս տեսակէտից, հետաքրքիր է գիտնալ,- արդեօք միայն այն քրտե՞րն են մեզ բարեկամ, որոնք արդէն մեր հարուածներն են առել:*

Արամ. *- Մենք համոզուած ենք, որ համերաշխութեան գործը առանց հարուստների պէտք է առաջ տանել. մենք պրոպագանդային ենք աւելի ուժ տալիս և յոյս ունենք, որ այդ ուղղութեամբ աւելի շուտ իրականացրած կը լինենք մեր ցանկութիւնը: Մանաւանդ ներկայումս միանգամայն անկարելի է հարուածներ տալ քրտերին:*

Վարդան. *- Քրտերի հետ կապ հաստատելիս, ի՞նչպէս էք վարում բանակցութիւնները:*

Արամ. *- Իւրաքանչիւր աշխրէքի մարմնացումն է աղան և մենք յարաբերութիւն ունենք աղաների հետ, որոնք իրանք են գալիս քաղաք՝ մեզ մօտ:*

Մեպուհ. *-Զարմանալի է, որ աղաները կարողանում են ոգևորուել մեր «աղալաթով»՝ արդարութեամբ. ինչո՞վ բացատրել այս երևոյթը:*

Արամ. *-Կառավարութիւնը սկսել է սանձահարել աղաների աւազակութիւնները, միւս կողմից էլ տուրքերն է ծանրացնում. այստեղ աղաներն կարծում են, որ կառավարութիւնն այլևս չարիք է դառնում իրենց համար: Աղաները «աղալաթ»-ի գաղափարը միայն այդ տեսակէտով են հասկանում:*

Գուսան [Աւետիք Իսահակեան]. *- Ի՞նչպէս են վերաբերում ռայա քրտերը դէպի համիտիէները:*

Արամ. *- Համիտիէների վրայ գէշ աչքով են նայում, որովհետև նրանք ճնշումներ են գործ դնում. ապա՝ համիտիէները լեռնական քրտերի ատելութիւնն են վաստակում նրանով ևս, որ փոխում են իրենց արտաքին կերպարանքը: Իսկ այն հարցին, թէ արդէօք «Քրտիստանի գաղափարը ուժե՞ղ է քրտերի մէջ» պէտք է ասեմ, որ [ուժեղ է] միայն Բոտանի կողմերում:*

Հարցերը սպառում են:

Նախագահը առաջարկում է Վասպուրականի տեղեկագրի միջից հանել Մարմնի արած առաջարկները՝ 10 կէտից բաղկացած և յանձնել դիւանին:

Համաձայնութիւն:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 75-76:

N 8

Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 56-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

27 մարտի 1907 թ.

*Նախագահում է՝ **Թոփչեան:***
Ներկայ են 24 ժողովական
*Բացակայ են՝ **Մեպուհ, Անդրանիկ (հիւանդ):***

***Նախագահը** քննարկութեան է դնում ապստամբական ձեռնարկների բանաձևերը:*

*1. **Թոփչեան-Մալումեան-Արամի** բանաձևը ստանում է 10 ձայն թեր, 3 դէմ, 8 ձեռնպահ:*

*2. **Զարգարեան-Ռոստոմի** բանաձևը ստանում է 5 ձայն թեր, 8 դէմ, 8 ձեռնպահ:*

*՝**Նախագահը** յայտնում է, որ բանաձևերից ոչ մէկը ձայների 2/3-ի մեծամասնութիւն չէ ստացել, ուստի և չեն կարող ընդունուած համարուել:*

***Ռոստոմ** առաջարկում է բանաձևերը քուէարկութեան դնել մաս մաս, որովհետև կան շատերը, որ որևէ բանաձևի ձայն չեն տալիս, որովհետև մի կէտի հետ համաձայն չեն: Ապա ձայների մեծամասնութեամբ անցած մասերը միացնել և կազմել մի բանաձև:*

***Մալումեան** առաջարկում է շատ ձայն ստացած, այսինքն առաջին բանաձևի վրայ համաձայնութեան գալ, նրան մի քանի փոփոխութիւնների ենթարկելով:*

***Ռոստոմ** առաջարկում է ամենից առաջ քուէարկել յատկապէս սկզբունքային հարցը, թէ ու՞մ են յանձնում որոշել՝ թէ այսինչ մտմենտին ապստամբութիւն կարևոր է, Երկրի Պատասխանատու Մարմնի՞ն, թէ Ընդհանուր Ժողովին կամ Խորհրդին:*

***Նախագահը** քուէարկութեան է դնում հետևեալը.*

«Ժողովը գտնում է, որ մինչև յառաջիկայ Ընդհանուր Ժողովը ոչ մի ապստամբական ձեռնարկ չէ կարելի անել Թղթախաչաստանում: - Այս ստանում է 13 ձայն թեր, 9 դէմ, 1 ձեռնպահ:

Նկատելով որ այս էլ չանցաւ ձայների մեծամասնութեամբ, ոմանք ժողովականներից ձայն են բարձրացնում, թէ հարցը մութ է, քոյլ տրուի ըստ էութեան խօսելու:

Քուէարկւում է այս առաջարկը և ձայների մեծամասնութեամբ վճռւում է շարունակել վիճաբանութիւնները ըստ էութեան:

Մալումեան.- Երբ Երկրում իրերի դրութիւնը նորմալ է և հարց է դրւում, թէ պէ՞տք է ապստամբութիւն անել. այդ դէպքում, մենք ասում ենք՝ ոչ, պէտք է սպասել մինչև յառաջիկայ Ընդհանուր Ժողովը, որ կը լինի երկու տարի յետոյ, գուցէ և մի տարի յետոյ: - Ես առաջարկում եմ քուէարկել հետևեալը.- «Ընդհանուր Ժողովը թոյլ չէ տալիս ապստամբական շարժում անել մինչև յառաջիկայ Ընդհանուր Ժողովը»: Եթէ այս անցաւ, ապա կը դնենք քուէարկութեան «անակնկալ դէպքերի» խնդիրը: Վերջին դէպքում պիտի խորհրդակցել Խորհրդի հետ, և չսպասել Ընդհանուր Ժողովին:

Մինասեան.- Մենք ձեռնպահ մնացինք, որովհետև, մենք ընդունում ենք ապստամբութեան հարցը իբր raison d'etre[31] մեր յեղափոխութեան: Մենք նկատի ունենք երկրի երկիւղի պայմանները և մենք ասում ենք, որ սկսենք անյապաղ կերպով պատրաստուել այդ ապստամբութեան գործին. իսկ եթէ անակնկալներ կը լինեն, որոնք կը վիժեցնեն գործը, աւելի լաւ է այն ժամանակ մի բան անել:Ապագայ Ընդհանուր Ժողովի անունը չյիշենք մեր բանաձևերի մէջ. դա կը լինի մի անվստահութիւն դէպի այս Ժողովը: Ապա մենք դեռ չենք խօսել Պատասխանատու Մարմնի մասին, թէ նա դո՞րսն է լինելու թէ ներսը:

***Մտեփանեան**.-Պատասխանատու Մարմինների մասին մենք դեռ չենք խօսել, թէ ու՞մ առաջ են նրանք պատասխանատու, ո՞րն է նրանց*

պատասխանատուութեան սահմանը, ո՞րն է անակնկալը: Մենք ասում ենք, որ մինչև Ընդհանուր Ժողովը մենք իրաւասու չլինենք ապստամբական շարժում յառաջ բերելու, իսկ յետոյ թող վճռի Ընդհանուր Ժողովը:

Վարդան.*-Առաջին կէտը պարզ է, որ երբ Երկիրը նորմալ վիճակի մեջ է՝ ապստամբութիւն չպիտի լինի. իսկ երկրորդը պարզ չէ.- որո՞նք են անակնկալները, թող բսեն:*

Զարեհան.*- Կարծում եմ, որ կան մի քանի թիւրիմացութիւններ. առաջին բանաձևում, օրինակ, ասուած էր, որ ապստամբութիւնը պիտի լինի այն ժամանակ, երբ ժողովուրդը իրեն պատրաստ զգայ: իսկ միւսները, որ առաջարկում են անակնկալների դէպքում ապստամբութիւն առաջ բերել, դրանով բոլորովին փոխում է առհասարակ հայեացքը ապստամբութեան վրայ:*

Արամ.*- Ապստամբութեան մասին խօսելիս, պիտի շեշտել, որ այսուհետև ապստամբութիւնը ընդհանուր լինի և ժողովրդական: Եթէ այսպես է, ապա ուրեմն հարկաւոր է ժամանակ և պարագայ ապստամբելու համար: Եւ եթէ մենք ասում ենք, որ սպասենք մինչև յառաջիկայ Ընդհանուր Ժողովը, դա այն նպատակն ունի, որ պատրաստուենք. քանի որ պատրաստութիւն չունենք, պիտի չշարժուենք. իսկ երբ կ՚ունենանք, այն ժամանակ կարելի է որոշել ժամանակը:*

Վռամեան.*- Ապստամբութիւն ասելով անպատճառ չպիտի հասկանանք, թէ պիտի սպասենք մինչև մենք պատրաստ լինենք: Թէ երբ պատրաստ կը լինենք, դա յայտնի չէ, դա կախուած է ոչ թէ միայն մեզնից, այլ նաև մեր դիմացինից: - Անակնկալներ են, օրինակ, Սուլթանի մահով առաջ գալիք խառնակութիւնները, թուրք-պարսկական պատերազմը ևն: Մենք չենք կարող ասել, թէ ինչքան է մեզ հարկաւոր, որ ասենք թէ պատրաստ ենք: Անակնկալների դէպքում մենք չենք ասում, թէ անպատճառ ապստամբենք, այլ որևէ ակտիւ քայլ անենք: Մինչև յառաջիկայ Ժողովը սպասելու բանաձևին ես հակառակ եմ, որովհետև դրանով մենք դէմ գնացած կը լինենք մեր այն որոշման, թէ զինուենք և պատրաստուենք: Սա հոգեբանական երևոյթ է, երբ մարդիկ գիտեն, որ մինչև յառաջիկայ Ընդհանուր Ժողովը չպիտի շարժեն. միշտ դանդաղում են իրենց պատրաստութեանց մէջ, ասելով որ դեռ ժամանակ կայ: Մենք այն ժամանակ չենք մտածի վաղուան անակնկալների մասին: Համաձայն եմ, որ նորմալ պարագաներում ապստամբութիւն չանենք: Բայց պատրաստութեան շահը պահանջում է, որ այդպիսի տարտամ սահմանափակումներ չմտցնենք:*

Թոփչեան.*- Մենք կարծես արհեստական կերպով ուզում ենք մեզ հարկադրել, որ աշխատենք. կարծես թէ գիտակցաբար չպիտի պատրաստուենք: Ապստամբութիւնը պիտի անել միայն այն ժամանակ, երբ լայն մասսաները կարող են մասնակցել և ոչ թէ միայն մի խումբ ջանֆէդաներ: Անակնկալները կարող են հասկացուել օրինակ՝ մէկի համար անակնկալ*

է, երբ մի գիտի վրայ յարձակւում են և մի քանի մարդ սպանում. մի ուրիշի համար խոշոր դէպքերն էլ անակնկալներ չեն: Անակնկալ ասելով պիտի հասկանանք միայն քաղաքական կարևորութիւն ունեցող երևոյթներ, իսկ մնացած դէպքերում պիտի սահմանափակել ձեռնարկները:

Ռոստոմ. *- Իմ զեկուցման մէջ կար նաև, մի կարևոր կէտ, այն՝ որ մենք ներմուծ պայմաններում ոչ մի դէպքում հնարաւորութիւն չենք ունենայ ապստամբելու: Այդ պիտի ի նկատի առնել: Կովկասում, օրինակ, մենք փորձեցինք թէ ի՞նչ է նշանակում գործող մարմինների ձեռքերը կապել զանազան որոշումներով: Այնտեղ որոշուած էր մնալ ինքնապաշտպանութեան սահմաններում. բայց ռուս-ճապոնական պատերազմը, որ փոխեց մեր գործունէութիւնը այնտեղ, մի անակնկալ էր, որը մենք երբեք չէինք կարող նախատեսել: Նոյնպէս և այժմ մենք չենք կարող անակնկալները նախատեսել: Անակնկալները նշանակում են՝ խոշոր քաղաքական դէպքեր, օրինակ ներքին խլրտումներ, եւրոպական կոնտրոլ. այս բոլոր դէպքերում պիտի Երկրի Պատասխանատու Մարմնին իրաւունք տայ, որ կարողանայ մի որոշ դիրք բռնել:*

Մալումեան. *-Մենք չենք ուզում կաշկանդել մեր Երկրի ընկերների գործունէութիւնը. մենք ուզում ենք միայն մեր ընկերների մանր շարժումներ անելու ճգտմանը սահման դնել. մտցնենք այդ խօսքը, իբրև զսպաւակ, բանաձևի մէջ, որ ընկերները անզգոյշ քայլեր չանեն մինչև Ընդհանուր Ժողովը և փաքրիկ առիթներից դրդուած շարժումներ յառաջ չբերեն:*

Միմասեան. *-Անխոհեմ քայլերի դէմ շարունակ մենք ենք եղել բողոքողը. մենք միշտ ասել ենք՝ լռին պատրաստուել: Բայց կարող են լինել անակնկալներ, ինչպէս քրտական խլրտումներ, և սրանք կոչ անեն միանալու իրենց: Անակնկալներ միշտ կարող են պատահել, որոնց դէպքում ստիպուած պիտի լինենք շարժուելու: Այժմ ասում ենք, ձեռնարկենք պատրաստուելու, զօրեղ, գաղտնի և անյապաղ:*

Մուրատ. *- Երկրում գտնուող մարմինները, ղեկավարելու կարողութիւն չունեն. նրանք շատ անգամ իրենց անփորձութեամբ շատ սխալներ են արել: Թող ուղարկեն երկիր խելացի, կարող ընկերներ, որոնք հասկանան կարևոր դէպքերի նշանակութիւնը և կարողանան ղեկավարել:*

Արամ. *- Մինչև հիմա Երկրից եկող ընկերները եղել են միշտ լաւատես. ես շատ ուրախ եմ, որ այս անգամ Ընդհանուր Ժողովը ունի Երկրից եկած մի ընկեր, որ յոռետես է: Դաշնակցութիւնը միշտ եղել է գործի կուսակցութիւն, նա միշտ գործել է, երբ անհրաժեշտութիւն է զգացել: Օրինակ, չնայած Խորհրդի որոշման, որ Երկրում կենտրոնացման գործը դադարեցնենք և սկսենք ուսումնասիրել, երբ հնարաւորութիւն ունեցանք՝ ուղարկեցինք Երկրի համար 300 հազար ռուբլի, ապրանքով և փողով: Պիտի նկատի ունենալ նաև այն՝ որ Երկրի ընկերը չէ կարող որոշել ճշդօրէն յարմար մոմենտը. շարունակ փակ կեանքը նրան ջղային է դարձնում և նա շատ անգամ հասարակ դէպքին չափազանցուած նշանակութիւն է*

տալիս: Երկրի ընկերների այս հոգեբանութիւնը պիտի նկատի ունենանք, որը կարող է արագացնել ապստամբութիւնը, եթէ որոշողը միայն իրենք լինեն: Այս պատճառով է որ ես ուզում եմ, որ Պատասխանատու Մարմինը Խորհրդի հետ միասին որոշէ որևէ քայլի դիմելը:

Բանաձևերի քուէարկութիւնը թողնւում է յաջորդ նիստին:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 138-140:

N 9

Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 77-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

11 ապրիլի 1907 թ.

Ռոստոմ.- *Մենք ոչ մի դէպքում չենք կրկնել մեր մի անգամ արդէն արած սխալը. բայց սկսել ենք մի տեսակ վախենալ արշաւախմբերից: Ջաւարեանը չէ ասում, թէ խաղաղ ժամանակներում վերցնենք խմբեր ուղարկենք. այլ խմբերի գործողութիւնները հարկաւոր է կապել խոշոր դէպքերի հետ, որոնց ընդառաջ գնալու համար, մենք պէտք է նախապատրաստուած լինենք: Ես համաձայն եմ Արամի հետ, որ աւելի լաւ է ունենալ 10 հրացան Երկրի ներսում, քան 100-ը դրսում. պէտք է աշխատել, որքան կարելի է՝ շատ զէնք մտցնել Երկիր.- թէև իհարկէ, չենք կարող որոշել, թէ անպատճառ այսինչ քանակութեամբ պէտք է լինեն մտցուելիք զէնքերը բայց այս ու այն պատճառով չուղարկուած կամ աւելացած զէնքերը, մենք կը պահենք արշաւախմբերի համար, հարկաւոր է ունենալ նախ ուժեր. խմբերի անդամները բոլորն էլ պէտք է վարժ լինեն զէնք բանացնելու մէջ և ապա գիտենան քալել. մենք այժմեանից միջոցներ պիտի ձեռք առնենք զինուորական կրթութիւն տալու հարկաւորներին:*

Արամ.- *Եթէ Երկրի ներսում չկայ ոչ մի շարժում, բայց յանկարծ մեռնում է Սուլթանը,- այս դէպքում հարկաւո՞ր են լինելու արշաւախմբերը թէ ոչ:*

Մուրատ.- *Արշաւախմբերն անհրաժեշտ են: Ես ասել եմ, որ մեր կոմուտները պէտք է լինին անկախ մարդիկ և այդպիսիները կարող են միայն դրսում կազմակերպուել. ներսում՝ մարդիկ ծանրաբեռնուած են ընտանիքներով և նրանց համար դժուար է՝ ամբողջովին ետիրուել գործին: Կարևոր է, որ խմբերը ստացած լինեն զինուորական կրթութիւն՝ խիստ տիսցիպլինայի վրայ:*

Միհրասեան.- *Սկզբունքով, ոչ ոք հակառակ չէ արշաւախմբերին, միայն թէ այնպէս վարել նրանց, որ օգտակար լինեն: Արշաւախմբերը պէտք է ասպարէզ ելնեն, երբ ներքին ապստամբութիւնը կը պայթի, նրանք լինելու են՝ ընդհանուր շարժմանը արձագանք տուող ցոյցեր, արգիլելու համար կառավարութեան ուժերը, որ չկրնան կենտրոնանալ ապստամբա-*

վայրին շուրջը և խեղդել ապստամբական շարժումը: Արշաւախմբերը պէտք է լինեն՝ մեծաքանակ և զինուորական գործին հմուտ առաջնորդներով, և մանաւանդ վալաղներով, որոնք Երկրի տեղաղրութեան ծանօթ լինեն:

Թոփչեան.-*Ոյքան էլ բացասական հետևանքներ ունեցած լինեն այդ արշաւախմբերը, չպէտք է մոռանալ նրանց տուած և՛ դրական արդիւնքները: Արամն էլ սկզբունքով չէ ժխտում արշաւախմբերի նշանակութիւնը. ուզում է միայն, որ միջոցներ ձեռք առնուեն՝ նախկին սխալների կրկնութեան դէմ, որպէսզի անտեղի արշաւանքների պատճառով չվնասուի Երկրում կատարուող ընդհանուր պատրաստութեան գործը: Իմ կարծիքով արշաւախմբեր կը կազմենք այն մարտական խմբերից, որ մենք ունենալու ենք կովկասեան գործի համար. երբ Կարինում, օրինակ, յանկարծ դէպքեր տեղի ունենան մեր մարտական խմբերը կը շտապեն օգնութեան հասնել: Այդ մարտական խմբերին հարկաւոր է ծանօթացնել Երկրի հետ, տեղագրական տեսակէտից:*

Զաւարեան.- *Ռոստոմն ասում է, որ ուղարկուած արշաւախմբերը բոլորն էլ ունեցել են արդէն նպատակ. ճիշդ չէ: 1904-ին Ռայոնական Ժողովում (Թիֆլիզ) հայց բարձացաւ, թէ շարունակե՞լ խմբեր ուղարկելը, թէ ոչ. և թէև մեծամասնութիւնը համոզուած էր, որ յաջողութեան ոչ մի շանս չէր կարող լինել, այնուամենայնիւ վճռուեց ուղարկել, որպէսզի այդպիսով իրագործուած լինէին Գ. Ընդհանուր Ժողովի որոշումները:*

Ռոստոմ և Համօ *ուղղում են ասում, թէ Ռայոնական Ժողովը այդպիսի որոշում չէ կայացրել, և չէր էլ կարող, քանի որ բոլոր արշաւախմբերը արդէն տեղի էին ունեցել նրանից առաջ:*

Համօ.- *Կրկնում եմ, որ անցեալում մեր վարած շարժումը եղել է՝ զինուորական, զուտ հայկական: Ներկայումս հարկաւոր է փոխել մեր այդ գործելակերպը. մենք պէտք է գործենք՝ համերաշխ Թուրքիայի միւս յեղափոխական տարրերի հետ. իսկ մէկ որ արդէն հաստատուի համերաշխ գործակցութիւն, արշաւախմբերը խոշոր չափով կորցնելու են իրենց նշանակութիւնը:*

Արամ.-*Հայց էք բարձրացնում, խօսում էք զանազան տեսակի արշաւախմբերի մասին և ես չհասկացայ, թէ դրանցից, որի՞ վրայ էք ուզում կանգ առնել: Ռոստոմն ասում է, իբր թէ մենք մեր սխալները չենք կրկնել. բայց առնուազն արշաւախմբերի գործում, մենք չենք ուզել օգտուել անցեալի դառն փորձերից - ապա թէ ոչ՝ Խաստուրից յետոյ մենք Օլթիի արշաւանքը չէինք կազմակերպեր: Եթէ դուք արշաւախումբ ուղարկէք, երբ Երկրում չկայ ոչ մի շարժում, ես ասում եմ, սա ձեր կողմից կը լինի քաղաքական դաւաճանութիւն: Քանի որ ժողովուրդը, ինքը պատրաստ չէ, դրսից եկող խմբերին նա թշնաբար է վերաբերւում: Ուժերը պէտք է կենտրոնացած ունենանք Երկրի ներսում, թէ՛ մարդիկ և թէ զէնքերը պէտք է լինեն այնտեղ: Այն ժամանակ երբ Վասպուրականի մարմինը զէնք էր*

պահանջում, փոխադրութեան միջոցներ առաջարկելով, միևնոյն ժամանակ Ռայոնական Ժողովը որոշում էր՝ մինչև սահման հասցրած զէնքերը գործադրել արշաւախմբերի համար:

Ռաստոմ *(ուղղում անելով).- Ոչ թէ Ռայոնական Ժողովը, այլ Բիւրոն էր. այդ այն ժամանակն էր, երբ յոյսեր կային, թէ Սուլթանի օրերը հաշուուած են. մենք ուզեցինք պատրաստ լինել անակնկալների համար. այս նպատակով էլ՝ զէնք հաւաքեցինք սահմանագլխի վրայ: Այդ միջոցին էլ, որ եկաւ Արամը, թէ՝ «դիւրութիւններ ենք գտել զէնք փոխադրելու»:*

Արամ*.-Փաստը բնորոշ է, ձեր այդ պատրաստութիւնները տեսնուել են կանխակալ մտքով՝ նոր արշաւախմբեր կազմակերպելու: Ես չեմ հաւատում, որ կռուողների ժամանակ, դրսի ընկերները կարողանան օգնութեան հասնել. բոլոր կէտերում ճանապարհները կը փակուեն և նրանք այլևս անկարող կը լինեն ներս մտնել: Համաձայն եմ Մուրատի հետ, որ մեր բոլոր զինուորական ղեկավարները, նոյնիսկ տասնապետները հմուտ լինեն իրենց գործին. թո՛ղ արտասահմանի մարմինները տան մեզ այդպիսի մարդիկ: Սահմանագլխի ցոյցերը գտնում եմ անօգուտ, քանի որ մենք երբեք հնարաւորութիւն չունենք երկար մնալու կռուի այդօրինակ վայրերում: Վերջացնում եմ խօսքս,- քանի դեռ չեն փոխուել Երկրի ներկայ պայմանները - ամէն մի արշաւախումբ ես համարում եմ վնասակար:*

Ահա իմ բանաձևը սրա համար.

«Հիմք ունենալով, որ լուրջ գործողութիւնների, ձեռնարկների տեղութեան համար ներսի շարժումները, ուրեմն դրա կից և ռազմական ուժերի կենտրոնացումը ներսում անհամեմատ աւելի նպատակայարմար և ցանկալի են,

Նկատի ունենալով որ Երկրի ներսը եղած շարժումների ժամանակ, սահմաններում զինուորական վիճակ ստեղծուելով, անցուդարձը դժուարանում է,

Նկատելով որ արտասահմանից գնացող խմբերը ֆիզիքական հնարաւորութիւն չեն ունենում ներս գնալու, կամ սահմաններում օգտակար գործ կատարելու:

Նկատելով, որ արտասահմանում արշաւախմբերի պատրաստութիւնը ահագին ադմուկ է ձգում և, ոգևորութիւն առաջ բերելով, անխոհեմ քայլեր անել տալիս.

Նկատելով, որ այդ շարժումները անարդիւնք լինելով հանդերձ, վնասում են Դաշնակցութեան դրամական և ռազմական բիւտճէին, և շատ ազնիւ տարրերի համար գերեզման պատրաստում սահմաններում,

Նկատելով, որ դրանով փակել ենք տալիս մեր կարևոր գծերը, և այդպիսով մեր ապագայ գործը զրկում իւր կենդանութեան մի գործօնից,

Այս և այլ բազմաթիւ նկատումներով,- մերժել առայժմ արշաւախմբերի ձեռնարկները, քանի որ Երկրում և մանաւանդ արտասահմանում ներկայի վիճակը չէ փոխուել:

Վռամեան.- Այդ բանաձեւը պարսաւանք է անցեալ Ընդհանուր Ժողովի դէմ, քանի որ ակնարկած ու քննադատած արշաւախմբերը միայն անոր որոշումովը տեղի ունեցան և իրրև սիստեմ չէ գործադրուած մեր կազմակերպական գործունէութեան մէջ. բացառութեամբը Խանասորի արշաւանքի:

Արամ խնդրում է Վռամեանի այդ նկատողութիւնը մտցնել արձանագրութեան մէջ:

Բանաձեւեր են առաջարկում Մալումեան, Վռամեան, Գագիկ, Չաւարեան: 22 ձայնով անցնում է Չաւարեանի բանաձեւը, որ հետեւեալն է.

«Ապագայում Թրքահայաստանում մեր մղելիք կռուի մէջ, այլեայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին, արշաւախմբերն ևս օգտակար կարող են լինել,- երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ դա կռիւը կը դարձնէ ազգու, լայն և յարատև: Միջոցներ ձեռք առնել միլիցիայի սկզբունքով կամ այլ ձևի, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբերը մարզել ապագայ գործողութիւնների համար:

Վռամեան.- Այդ բանաձեւերի մէջ մտցնել նաև, որ ջարդերի ժամանակ արշաւախմբերը պէտք է օգնութեան հասնեն:

Ռոստոմ.- Այդ հարցը արհեստական կերպով է յարուցւում: Շատ բնական է, որ մենք առանց այլևայլութեան անյապաղ օգնութեան ենք գնալու՝ ջարդերի դէպքում:

Վռամեան բանաձեւում է իւր առաջարկը. «ջարդերի պարագային ևս սահմանի երկու կողմը՝ Պատասխանատու մարմինները ինքնապաշտպանողական խմբեր կը կազմեն, փտանգի տակ գտնուող ժողովրդին օգնելու համար»:

Այս առաջարկը քուէարկուելով՝ ստացւում է 13 ձայն թեր, 10 ձայն դէմ և 5 ձեռնպահ:

Վռամեան բողոքում է քուէարկութեան այդ արդիւնքի դէմ, այդպիսի մի կարևոր կէտի մասին և պահանջում, որ իր բողոքը մտցուի արձանագրութեան մէջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 202-204:

N 10
Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 84-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

15 ապրիլի 1907 թ.

Նախագահը Ժողովի քննութեան է ենթարկում քննիչ յանձնաժողովի պատրաստած բանաձեւը «Միհրանական խնդրի մասին»:

Մուրատ.-Ես գտնում եմ, որ այդ խնդրի մասին չէ կարելի վերջնական եզրակացութեան յանգել, առանց կարդալու այն բողոքները, որ Միհրանական կոչուող դժգոհ խմբերի կողմից Ընդհանուր Ժողովին ուղղուած են:

Արամ.-Այդ նամակների մասին այստեղ խօսք չպէտք է լինի: Չենք խօսում այն ընկերների մասին, որոնք այս կամ այն պատճառով դժգոհ են մեր մարմիններից և ուզում են իրենց ձայնը լսելի անել: Ընդհանուր Ժողովում, նրանց մեջ անկասկած պէտք է լսենք, բայց միայն երբ այդ խնդրին կը գանք, առայժմ մենք խոսում ենք Միհրանի և ընկերների մասին իբրև զեղծարարների և ոչ իբրև բողոքողների:

Ժողովականներից ոմանք ի նկատի ունենալով, որ շատերը չփոթում են Միհրանական կոչուող հոսանքը այն յանցանքների հետ, որ գործել է Միհրանը իւր մի խմբակի հետ, առաջարկում են ընկ. Ռոստոմին մի յատուկ զեկուցում պատրաստել Միհրանական կոչուող հոսանքի մասին: Ժողովը հաստատում է այդ առաջարկը և անցնում է յանձնաժողովի բերած բանաձևի ընթերցանութեան (տես յաջորդ նիստին):

Մուրատ.- Նախ առաջարկում եմ կարդալ բանաձևը կէտ առ կէտ: Բացի դրանից առաջարկում եմ բանաձևի մէջ չբերել այնպիսի մեղադրական կէտեր, որոնք բոլորովին պարզ չեն: Միհրանի և իւրայիների գործած մի քանի յանցանքները այնքան ծանր են, որ լիովին բաւական են այդ մարդկանց ամենածանր պատժի ենթարկելու համար: Չպէտք է կէտեր մտցնել մեր մեղադրութեան մէջ, որ յետոյ յարձակման նիւթ ծառայեն մեր դէմ:

Թոփչեան միանում է Մուրատի առաջարկին:

Յանձնաժողովը կարդում է կէտ առ կէտ: Առաջին կէտը անցնում է անփոփոխ: Բանաձևի մնացած կէտերի քննութիւնը թողնում է յաջորդ նիստին:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 234:

N 11
Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 85-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

16 ապրիլի 1907 թ.

Արամ.-Ընկ. Մինասեանի զեկուցումից որոշ կերպով ես չկարողացայ հասկանալ համերաշխութեան այն խարիսխը, որի վրայ պիտի յենուի մեր ապագայ գործակցութիւնը: Այժմ պարզ է, որ լոկ համերաշխութեան կոչերով մենք չենք կարող գործ յաջողցնել. այսուհետև հարցը կարող է դառնալ միմիայն համերաշխ գործակցության մասին: Այս տեսակէտից շատ անորոշ է ընկ. Մինասեանի զեկուցումը, նա շարունակում է պնդել, որ մենք չենք կարող փոխել մեր ծրագիրը. այսինքն պիտի շարունակենք մեր

անջատողական ձգտումները, եւրոպական միջամտութիւնը միայն հայերիս համար եւն: Բաւական չէ որ մենք պիտի փոխենք մեր տակտիկան, ժամանակի և պարագաների համեմատ, հարկատր է ունենալ մի ընդհանուր ծրագիր, որի շուրջը կարելի լինի համախմբել բոլոր դժգոհ տարրերին: Մենք բաց ճակատով և յեղափոխական շիտակութեամբ պէտք է դուրս գանք նրանց դէմ և ոչ յետին ու մութ ծրագիրներով: Ես դժբախտաբար քաղաքական հարցերում ճեռնհաս չլինելով, չեմ կարող այս հարցի մասին որևէ հեղինակաւոր բան ասել, այլ պիտի բաւականանամ այն գործնական տպաւորութիւններով, ինչ որ ստացել եմ Երկրում: Մեր ամբողջ 17-ամեայ գործունէութիւնը մեզ ապացուցանում է, որ մենք մեն մենակ, մեր ուժերով, անկարող ենք որևէ նպատակայարմար գործ կատարել: Մեր դէմ դուրս եկան, ոչ միայն կառավարութիւնը, այլև մահմետական մասսաները: Սրանց կից, մեծ դեր են կատարում և՛ թուական քանակութիւնը, մանաւանդ ցրուած լինելը մեծ տարածութեան վրայ, շրջապատուած օտար տարրերով, որով չենք յաջողում կանոնաւորապէս կազմակերպել և զանազան վայրերը իրար հետ կապել: Այս բոլորից յետոյ դարձեալ շարունակել հին սիստեմը՝ անհնարին է, մանաւանդ որ տաճիկ մասսաները վերջին շարժումներով մեծ անակնկալ են տուել մեզ: Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, անմիջապէս աւելացնեմ, որ ես ամբողջապէս չեմ բաժանում դրսում տարածուած այն կարծիքը, որ ըստ մեղայի ծախսում է քաղաքական շուկայում.- որ իբր թէ Դաշնակցութիւնը տարուած իր ազգայնական ֆանատիզմով, արհամարհել է հարևաններին, կամ անկարող է եղել նկատել այն կայծերը, որ թագնուած էին թուրք մասսաների մէջ: - Հեշտ է կեանքում առաջ եկած մի երևոյթից, յետին թուով եզրակացութիւններ հանել, մոռանալով ամբողջ անցեալը, թուրք մասսաների տգիտութիւնը, թուրք ինտելիգենցիայի քաղաքական սնանկութիւնը, մանաւանդ ռուսական մեծ յեղափոխութեան ազդեցութիւնը, պարսկական շարժումների տպաւորութիւնը և այլ փոփոխութիւնները, որոնք անցեալում և ներկայում ազդել են թուրք ժողովրդի տրամադրութեան և վիճակի վրայ. նրանք մոռանում են մանաւանդ տնտեսական այլ ճնշումներ, որ վերջերս ծանրացել են թուրք ժողովրդի վզին: Իմ անհատական համոզումն է, որ մենք ձեռք պիտի քաշենք մեր առանձնացած շարժումներից և միանանք կամ սկիզբ դնենք համապետական շարժման, մեր երկրում բնակուող բոլոր ցեղերի հետ: Այդ գաղափարը կեանքում իրագործելու համար ես մի այլ ճանապարհ եմ առաջարկում. ես մեծ հաւատ չունեմ Եւրոպա ապաստանած «Երիտասարդ Թուրքեր»-ի կամ այսպէս կոչուած «Ժէօն Թուրքերի»-ի վրայ. նրանք մեծ մասամբ պաշտօնական յեղափոխականներ են, որոնք ունեն այս կամ այն դիւանագիտական թախտայիի[32] շահեր. դրանցից սկսելով շատ դժուարութիւնների կը հանդիպենք: Ըստ ամենայնի նպատակայարմար է սկսել հենց բուն Երկրից, հենց թուրք մասսաներից և նրա ծոցում ապրող

գործիչներից: Պէտք է յայտնեմ, որ այդ շարժումները ոչ մի կապ չունին արտասահմանի «Երիտասարդ Թուրքեր»-ի հետ. նոյնիսկ վերջինների թերթերը և գրականութիւնը մենք ենք տարածում Երկրում: Ես առաջարկում եմ կազմել Երկրում թուրքերի հետ միացեալ ուժերով խառն կոմիտէներ: Սրանք զբաղուելու են մասնաւորապէս այն բոլոր հարցերով, որ ընդհանուր են բոլոր ազգութիւնների համար, օրինակ՝ պրոպագանդա, քաղաքական տեռորներ, միացեալ ուժերով բողոքներ, բոյկոտ եւն: Ի հարկէ ժամանակի ընթացքում պիտի կազմուի մի ընդհանուր ծրագիր ըստ յեղափոխական կեանքի զարգացման: - Այս բոլորի հետ մենք շարունակելու ենք մեր գործունէութիւնը և նպատակը առայժմ այդ է լինելու: Առայժմ մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնելու ինքնապաշտպանութեան գործին, զոհ չգնալու համար կառավարական մի նոր պրովոկացիայի: Մնացած ամբողջ ուժերը պէտք է տալ համերաշխութեան գործին, խուսափելով տակտիկական այն բոլոր ձեռնարկներից, որոնք կը խանգարեն համերաշխութեան գործը:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 239-240:

N 12
Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 99-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

23 ապրիլի 1907 թ.

*Նախագահում է **Մալումեան:***

Ներկայ են 27 ժողովական:

*Բացակայ են՝ **Իշխան, Վարդան (հիւանդ), Անդրանիկ (հիւանդ):***

Օրակարգն է՝ «Թուրքիոյ ընդդիմադիր տարրերի հետ համերաշխութեան» բանաձևը:

Բանաձև ներկայացնում են՝ Միհասեան և Արամ: Նախագահը քուէարկութեան է դնում Արամի բանաձևը:

Ժողովը անհրաժեշտ է համարում մի երկու կէտերի վերաբերմամբ արտայայտուելու: Եւ վիճաբանութիւն ու կարծիքների փոխանակութիւն է տեղի ունենում գլխաւորապէս անջատ թէ խառն կոմիտէներ ունենալու հարցի շուրջը:

Ռոստոմ. *– Որ մեր կուսակցութիւնը անջատողական ձգտումներ չէ ունեցել, դրան իբր ապացոյց կարող է ծառայել հենց մեր գործունէութիւնը: Եթէ այժմ այստեղ այս խնդրի վերաբերմամբ հարց է բարձրանում, պատճառն այն է, որ մեր ընկերներից շատերը ուղղակի չգիտեն մեր որոշումների մասին: Մեր 17 տարուայ գործունէութեան ընթացքում մենք ապացուցել ենք շատ անգամներ, [որ նման ձգտում ունեցած չենք]: Բացի այդ, 1904-ի Ընդհանուր Ժողովում եղել է շեշտուած որոշում: Գալով համերաշ-*

խութեան, պէտք է ասեմ, որ այդ կեանքի մէջ լայն չափով չէ իրագործւում: Այդ ուղութեամբ կազմակերպութիւնը մեծ քանք է գործ դրել, բայց աչքի զարնող յաջողութեան չի հասել: Ես, ի հարկէ, միանգամայն համաձայն եմ համերաշխութեան գործառնութեան օտար ընդդիմադիր տարրերի հետ. բայց և վտանգաւոր եմ համարում միանալ թուրքերի և քիւրտերի հետ, խառն կոմիտէներ կազմակերպելով, քանի որ վերջիններս ղեկավարւում են հարուստների և բէգերի կողմից: Էրզրումի շարժման ղեկավարները եղել են երեք ամենայայտնի վաշխառուներ: Դժգոհութիւնը աշխատաւոր տարրերի մէջ, տգիտութեան պատճառով, դեռ շատ աղօտ է և քոյլ: Իմ կարծիքով տեղական մարմինները կարող են համաձայնութեան գալ քիւրտերի, թուրքերի և ասորիների հետ, և ի հարկին համերաշխութեան ձեռնարկներ անել:

Զարդարեան.- *Ես միանգամայն հակառակ եմ խառն կոմիտէներ կազմելու առաջարկին: Դեռ ժամանակը չէ նման ձեռնարկներ անելու, քանի որ թուրք մասսան անգիտակ է և անկարող մեր ծրագրով ղեկավարուելու: Սրանից զատ մեր գործակցութիւնը թուրքերի հետ առիթ կը տայ նոր կոտորածների և խլրտումների: Մենք պէտք է աշխատենք հեռուից տոն տալ շարժումներին և խիստ վերապահութեամբ վերաբերուել:*

Համօ.- *Ընդունելով հանդերձ, որ մեր շարժման մէջ երբեք անջատողական բնոյթ չկայ, բայց մենք միշտ էլ և այժմ, պէտք է շեշտենք դրա վրայ: Ինքնըստինքեան հասկանալի է, որ հենց մեր դրած խդէալից չէ բխում սեպարատիստական տենչ: Բայց ինձ բոլորովին զարմացնում է ընկ. Զարդարեանի առարկութիւնը: Մի՞թէ նա կարծում է, որ եթէ մենք մենակ գործենք և չմիանանք ընդդիմադիր տարրերի հետ, կառավարութիւնը չպէտք է կոտորէ հայերին: Առարկութիւնն ու վախը անհիմն լինելով, ես չեմ ուզում ծանրանալ դրա վրայ: Կառավարութիւնը միշտ էլ առիթներ կարող է գտնել կոտորածներ առաջ բերելու, եթէ ուզէ: Թուրքերը դիմում են մեզ և խնդրում մեր աջակցութիւնը և ղեկավարութիւնը: Մենք չպէտք է մերժենք այդ:*

Արամ.-*Փաստ է, որ Թուրքիայում տեղի ունեցող և քաղաքական գոյն կրող շարժումները ղեկավարուել են մեր ձեռքով. գուցէ մեր ընկերներից շատերը չգիտեն այդ մասին: Թուրքերը յաճախ ասել են մեր ընկերներին Վանում, Էրզրումում և Եւրոպայում, որ դուք պէտք է լինէք մեր ուսուցիչները: Մենք պէտք է մօտենանք այդ ընդդիմադիր ուժերին. այդ է պահանջում մեր իսկ շահը: Գալով անջատման խնդրին, ես առաջարկում եմ, ոչ թէ սոսկ որոշումով բաւականանալ, այլ պաշտօնապէս յայտարել, քանի որ մինչև այժմ էլ տիրում է առաջուայ թիւր կարծիքը և միշտ էլ կրկնւում է:*

Մուրատ.- *Մեր ընկերներից մի քանիսը խիստ լաւատես են. բայց ես դժբախտաբար անկարող եմ նրանց լաւատեսութիւնը բաժանել: Եթէ համոզուած լինեմ, որ թուրքերի մէջ առաջացած շարժումը յեղափոխական բնաւորութիւն է կրում, ես խնկով մոմով կը դիմաւորեմ, բայց*

իրականութիւնը այդպէս չէ: Նրանք ոչ թէ նոր պետական կարգեր են պահանջում, այլ հին խալիֆայութիւնը: Նրանց մէջ չկայ յեղափոխական շարժում, հետևապէս չենք էլ կարող միացած գործ ձեռնարկել: Շատ շատ մենք կարող ենք հեռուից տոն տալ, բելադրումներ անել, բայց երբէք խառն կոմիտէներ կազմել: Հայերս դեռ ջուրը չտեսած հանուել գիտենք:

Վռամեան.-*Ես ևս այն կարծիքին եմ, որ մենք խիստ վերապահութեամբ պիտի վարուենք: Ես համաձայն եմ աջակցելուն, դրամ տալուն, բայց մենք աշխատելու ենք երևան չգալ: Այս էլ պիտի ասեմ, որ մենք շատ էլ չոգևորուենք հեռուէն եկած ձայներով:*

Նախագահ.-*Զգուշութիւնը ինքնըստինքեան հասկանալի է. դրա վրայ խնդրում եմ չծանրանալ:*

Միաբոնեան.-*Մեր մէջ կայ անջատողական ձգտում, այդ չպէտք է ուրանալ: Մենք պահանջում ենք րեֆորմներ [բարենորոգումներ]՝ ոչ թէ համայն պետութեան, այլ վեց վիլայէթների համար. դրանից զատ մենք պահանջում ենք մի եւրոպական ներկայացուցիչ հայերի համար, և այդ բոլորը դիտում է թուրքերի կողմից իբր սեպարատիզմ: Այո՛, մենք միայն սեպարատիստներ ենք համարւում: Թուրքերը առաջարկում են մեզ Սաբահեդդինի ծրագիրը եթէ չընդունենք, հետևապէս կը համարուենք սեպարատիստներ:*

Վռամեան.- *Տաճկաստանից անջատուելու մասին, ոչ ոք չի մտածի. դա կը լինէր յիմարութիւն. ոչ թէ որովհետև չենք կարող, այլ հենց մեր տնտեսական շահերը կը պահանջեն միացած մնալ: Մեր պահանջած ֆեդերացիան չեն ըմռնում թուրքերը և դրա մէջ են տեսնում սեպարատիզմ: Անհրաժեշտ է համոզել և հասկացնել թուրքերին, որ դա միակ միջոցն է Թուրքիայի ամբողջութեան համար. հակառակ դէպքում նա կը բաժանուի:*

Մինասեան.- *Ժէօն Թուրքերն անգամ չեն կարողանում հասկանալ մեր այդ համերաշխութիւնը, ուր մնաց թէ անգիտակ թուրք ժողովուրդը: Թուրքը դեռ ղեկավարւում է կրօնական հոգուով և եթէ Թուրքիան կռուի բռնուի մի որևէ քրիստոնեայ պետութեան հետ, իսկոյն թուրքերը կը կանգնեն հայերի դէմ: Մենք պէտք է Ժէօն Թուրքերից սկսենք: Շատ շատ կարող ենք բելադրութիւններ անել հեռուից և քաջալերել, բայց միասին հրապարակ դուրս գալ պայքարելու, ես վտանգաւոր և վաղաժամ եմ համարում: Մեր կռուանը, ինչպէս շեշտել եմ բանաձևի մէջ, պիտի լինի կոնգրէն [համերաժողովը]:*

Նախագահը *քուէարկութեան է դնում Արամի բարեփոխուած բանաձևը մաս մաս: Ամբողջ բանաձևը, «նկատում»ներից զատ, անցաւ ձայների մեծամասնութեամբ: I մաս՝ + 18, - 5, ձեռնպահ՝ 2: II մասը՝ միաձայն, III մասը առանց քուէարկութեան ընդունուեց, աւելի քան հասկանալի հսմարուելով. IV մասը՝ + 23, - 1. ձեռնպահ՝ 2:*

Ապա քուէարկութեան է տրւում Մինասեանի բանաձևը:

*՝ **Մինասեան**.- Ես աւելորդ չեմ համարում նկատել, որ ընկ. նախագահը պէտք է առաջ իմ՝ իբր այդ խնդրի զեկուցանողի՝ բանաձևը քուէարկութեան դնէր:*

***Ջելալեան**.- Որովհետև դա գործիս չէ գալիս: (Լսւում են բողոքներ այս դարձուածի դէմ):*

***Նախագահ**.- Ես բողոքում եմ ձեր (Ջելալեան) անվայել նկատողութեան դէմ, և կ՝ուզէի, որ երբեք նման խօսքեր չլսուէին այս ժողովում: (Առաջարկւում է այս արձանագրութեան մէջ մտցնել): Ապա ներողութիւն եմ խնդրում ընկ. Մինասեանից՝ կատարուած թիւրիմացութեան համար: Ես կարծում էի, որ ընկ. Արամի հետ համաձայնութեան էք եկել:*

Մինասեանի բանաձևի առիթով ժողովը յայտնում է այն կարծիքը, որ ըստ էութեան զեկուցանողի մտքերը արդէն արտայայտուած են ընդունած բանաձևի մէջ:

Օշականցոց հարցի վերաբերմամբ լրացուցիչ բանաձևեր կային նաև Չաւարեանի, Ռոստոմի և Վռամեանի կողմից, որոնք ընդունուեցին ժողովից: Ուստի ժողովը ընտրեց երեք հոգուց - Չաւարեան, Ռոստոմ, Զարդարեան – կազմուած մի մասնախումբ, որին յանձնուեցին բոլոր բանաձևերը, որպէսզի դրանցից լրացած և մշակուած մի ընդհանուր բանաձև բերուի ժողովին:

Ապա ընկ. Համոն ներկայացրեց «Նախահաշուի» զեկուցումը, որ տևեց 30 րոպէ:

Նիստը փակուեց ժամը 1½-ին:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 247-248:

N 13
Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 113-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

30 ապրիլի 1907 թ.

*Նախագահում է **Մալումեան**:*

Ներկայ են 28 ժողովական:

*Բացակայ են՝ **Վարդան, Անդրանիկ**:*

Օրակարգն է ընտրութիւնների նախապատրաստութիւնը: Նախքան օրակարգին անցնելը, Ընդհանուր Ժողովը որոշեց ա) ընտրել Սասունի հանգանակիչ մասնաժողովի անդամները՝ Ընդհանուր Ժողովի կողմից, բ) եւրոպական հանգանակութեան անդամները ընտրել Արևմտեան Բիւրոյի կողմից և գ) Դաշնակցութեան կովկասեան խմբագրական կազմի ընտրութիւնը թողնել Արևելեան Բիւրոյին:

Առաջարկւում են Մուշ-Սասունի և Վասպուրականի Պատասխանատու Մարմնի համար թեկնածուներ՝

1.	Գէորգ Չաուշ	6.	Տաճատ
2.	Կոմս	7.	Վահագն [Տաթևեան]
3.	Սարգիս Վարդանեան	8.	Վարդան վարդապետ
4.	Արամ	9.	Մուրատ [Մերաստ.]
5.	Ռոստոմ		

Չաուշի վերաբերմամբ երաշխաւորում է Արամը:

Վռամեան.-*Իմ կարծիքով սխալ է Չաուշին պատասխանատու Մարմնի անդամ ընտրելը, քանի որ նա ապստամբ է, թուք կառավարութիւնը ճանաչում է և իսկոյն աղմուկ կը բարձրանայ: Իմ կարծիքով կարելի է նրան կարճ ժամանակով Երկրից դուրս բերել:*

Մուրատ.-*Եթէ մտաղրութիւն չունինք ապստամբական ցոյց անելու և քանի որ բիւտճէն էլ չի ներեր այդ, ես էլ համոզուած եմ, որ աւելի լաւ է նրան դուրս բերել. խաղաղ՝ այստեղ որոշուած տակտիկով գործելու համար հարկաւոր են աւելի ինտելիգենտ ուժեր:*

Ռոստոմ.- *Խնդիրը սխալ է դրւում: Սա տակտիկի հարց է, հետևապէս պէտք է թողնել Երկրի Պատասխանատու Մարմնին: Քանի որ Չաուշը Երկրումն է, պէտք է ընդունել նրա տեսակէտը:*

Արամ.- *Ես էլ կանգնած եմ Ռոստոմի տեսակէտի վրայ, աւելի լաւ է թողնել այս հարցը Երկրի ընկերներին: Մխալ է կարծել, որ Չաուշը սարերի վրայ է. ընդհակառակն, նա միշտ դաշտումն է, գիւղերի մէջ: Ճիշդ չէ ընկ. Մուրատի դիտողութիւնը: Մեզ ոչ թէ պակասում է դրամը, ոչ թէ բիւտճէն է որ անբաւարար է, այլ կազմակերպուած զօրաւոր ուժն է պակասում: Այժմ շատ աւելի դրամ կայ, քան երբևիցէ:*

Ռոստոմ.- *Չաուշին հեռացնելով, ոչինչ չենք շահի: Նրա տեղ նոր փախստականներ կը յառաջանան: Քանի որ նա հեղինակաւոր անձ է, ծանօթ է շրջանին, մի շարք կապեր ունի և վատ է պահում գործը, հետևապէս մինչև իսկ անհրաժեշտ է նրա ներկայութիւնը այնտեղ:*

Նախագահը *եզրակացնում է, յայտնելով, որ Չաուշի թեկնածութիւնը մնում է ցանկի մէջ:*

Նոյնը Կոմսի, Սարգիս Վարդանեանի, Արամի, Մուրատի և Տաճատի թեկնածութեան վերաբերմամբ: Ընկ. Արամը խնդրում է մի քանի անգամ իրեն դուրս հանել ցանկից և տեղը թողնել միւս ընկերներին:

Վռամեան.-*Ես դնում եմ այս հարցը.- արդեօք Վասպուրականի մարմինը դրսի ուժերի կարիք ունի՞, թէ տեղական ուժերը հերիք են:*

Իշխան.-*Մինչև այժմ եղածը բաւարար է համարուել, բայց ներկայումս մեծ կարիք կայ, մանաւանդ, որ երկուսը հեռանում են:*

Արամ.-*Մենք ընդհանրապէս պատրաստուած ընկերների պահանջ ունենք, կազմը ուժեղացնելու համար, բայց ոչ այս կամ այն դերի համար*

առնածնապէս: Կովկասում երկու ուժեր աչքի առաջ ունենք, վերադառնալիս նրանց պէտք է վերցնենք հետներս:

***Չոփուրեան.**-Ես ուզում էի գիտենալ, թէ Կովկասից ղրկուած տղաները ի՞նչ դեր են ստանձնում այնտեղ. արդեօք նրանք հեշտութեամբ տեղ գտնու՞մ են Կենտրոնական Կոմիտէի կազմի մէջ:*

***Արամ.**-Արևելեան կամ Արևմտեան Բիւրոների կողմից ուղարկուած և յանձնարարուած ընկերները ընտրւում են ընդհանրապէս Կենտրոնական Կոմիտէի անդամներ:*

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատոր, էջ 277:

N 14

ԱՐԱՄ ԿՈՂՄԻՑ Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանաձև 1.- Կովկասեան յեղափոխական շարժումը, որոշ քաղաքական սոցիալ-տնտեսական պատճառներ ունեցող մի երևոյթ լինելով, ոչ մի ժողովուրդ չի կարող դուրս մնալ նրանից, մանաւանդ որ դա որևէ կուսակցութեան ստեղծած շարժում չէ. ամէնքը, ինչպէս և հայ ժողովուրդը, ուժեղ կերպով պիտի դիմաւորեն նրան, իբրև իրենց կեանքի մէջ բարեփոխութիւն մտցնող մի շարժում: (Մեծամասնութեան բանաձև)

Բանաձև 2.- Կովկասահայ յեղափոխութիւնը ունի իւր տնտեսական-քաղաքական պատճառները. այդ շարժումը անհրաժեշտօրէն յառաջ պիտի գար և եկաւ, առաջադրելով իրեն համար քաղաքական ու տնտեսական որոշ իդէալներ. ուստի և այսուհետև էլ ուժեղ կերպով առաջ պէտք է տանել այդ շարժումը, մինչև իր քաղաքական ու տնտեսական իդէալների իրագործումը:

(Սա փոքրամասնութեան բանաձևն է, ուրիշ խմբագրութեամբ):

Իսկ այդ շարժման և ընդհանուր ռուսական յեղափոխական շարժման մէջ եղող կապի համար, բոլորի կողմից ընդունուեցաւ հետևեալ բանաձևը.- Ի նկատի ունենալով, որ ռուսական յեղափոխական շարժումների բուն պատճառները թագնուած են բիւրոկրատիկ կառավարութեան ռէժիմի մէջ և որ միայն այդ ռէժիմի տապալումով է, որ համեմատօրէն ազատ շունչ պիտի քաշեն բոլոր ճնշուած տարրերը, ուստի անհրաժեշտօրէն պէտք է միանալ ռուս բոլոր յեղափոխական տարրերի հետ, ընդհանուր ուժով տապալելու բոլոր չարիքների արմատ՝ միապետական բիւրոկրատիկ կառավարութիւնը, մանաւանդ եթէ այդ բռնակալական ռէժիմի անկումով մահացու հարուած կը տրուի ասիական բռնապետութիւններին:

… Նկատուեցաւ, որ մենք ընդունել ենք սոցիալիստական այն աշխարհահայեացքը, որի համաձայն՝ յեղափոխական տարր է ընդունւում և՛ պրոլետարը, և՛ գիտացիութիւնը, և՛ քաղաքի մանր արհեստաւորութիւնը. և հետևաբար մենք կարող ենք դաշնակցել յեղափոխական այն կազմակերպութեան հետ՝ որ իւր քաղաքական ու տնտեսական դաւանանքով ամենից աւելի մօտիկ է մեզ:

… Ամէն յեղափոխական կուսակցութիւն ունենալով իւր քաղաքական-սոցիալական դաւանանքը և ձգտելով այդ դաւանանքի իրագործման, բնականաբար պիտի աշխատի հասարակական ամէն յառաջադէմ երևոյթի արձագանք տալ, իւր աշխարհահայեացքի կնիքը դնելով նրա վրայ՝ ի՛ր դաւանանքների իրագործման համար:

… Նկատում է ընդհանրապէս, որ Դաշնակցութիւնը, ինչպէս Կովկասում, նոյնպէս և Տաճկաստանում, յեղուել է միայն ու միայն աշխատաւոր ճնշուած դասակարգերի վրայ, կռիւ յայտարարելով չահագործող դասակարգերին և նրանց պաշտպան կառավարութեան դէմ: Իբրև աշխատաւոր դասակարգի կազմակերպութիւն, նա երկու վայրերում էլ ունի նոյն քաղաքական-տնտեսական իդէալները. ուրեմն և ներքին զօրեղ կապ գոյութիւն ունի երկու վայրերի գործունէութեանց միջև. տարբերութիւն կարող է լինել միայն տաքտիկի մէջ, որ ձևակերպւում է ըստ միջավայրի պայմանների, սակայն լոկ այդ տարբերութիւնը չի կարող արգելք դառնալ այդ ներքին զօրեղ կապակցութեան:

Արամ

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ. հատոր, էջ 225:

N 15

Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԱԾ ՄԱԼՄԱՆԻ(ՀԱՄԱՉԱՍՊ ԲԱՂԵՇՅԱՆ) ՆԱՄԱԿԸ ԱՐԱՄԻՆ՝ ԻՐ ՉԱՅՆԸ ՆՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՄԻՆ

29 մարտի 1907 թ.

Սիրելի Արամ!

Ստացայ մարտի 21 նամակդ, բայց բաւականին ուշ. սրանից մի քանի օր առաջ էլի մի նամակ գրել եմ Մալումեանի հասցէով, անծնականիս վերաբերեալ: Չես գրում թէ մեր տեղեկագիրն ու Ռայոնական[33] Ժողովի որոշումները կարդացե՞լ էք թէ ոչ և ի՞նչ տպաւորութիւն է թողել: Ինչ վերաբերում է իմ ծայնիս, պարզ է, որ ես չեմ կարող տալ այնպիսի մէկին, որի հետ հիմնական սկզբունքներում չփոում չեմ ունեցել, այլ այնպիսի մէկին, որի հետ երկար խօսել, վիճել, և համաձայնութեան ենք եկել: Ըստ այդմ ես չեմ կարող օրինակ իմ ծայնը տալ Ամերիկայի որևէ պատգամաւորի. կը մնաք դու և Իշխանը. երկուքիցդ մէկը ներկայացրէք իմ ծայնը:[34]

՝ Ինչ վերաբերում է իմ կարծիքներին, դժբախտաբար ես դեռ պառկած եմ, ուստի հնարաւորութիւն չունիմ որևէ բան գրելու. ոչ գլուխս է տեղը, ոչ ձեռքերս, ոչ ուժս. իմ կարծիքներն այն են, ինչ որ արտայայտուած եմ տեղեկագրի և Ռայոնական Ժողովի որոշումների մէջ. տակտիկի մասին այնքան կ՝ասեմ միայն, որ եթէ ուզում են ժողովուրդը կոտորել տալ, թող նախկին տակտիկը ընդունեն:

Ժընևից ոչինչ չեմ ստանում:

Դրամ պատրաստիր որ ուղարկես ինձ:

Անչափ ուժասպառ եմ. չգիտեմ ե՛րբ պէտք է ոտքի կանգնեմ:

Համբոյրներով՝ Սալման

Համբոյրներս ծոյլ և ո՛չ ինձ չափ հիւանդ Իշխանին և բոլոր ընկերներին:

Նոյն

Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ. հատոր, էջ.6:

N 16

ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՐԿԻՐ ՋԵՆՔ ՓՈԽԱԴՐՈՂ ՔՐԴԵՐԻ ՀԵՏ ԾԱԳԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31 հուլիսի 1907թ.

Խուր

Հարգելի պ. Արամ

Երեկ երկար նամակ գրեցի արդէն քեզ, այսօր էլ ըստիպուած գրեցի նորից: Կանայք դրկեցի մեծաւորի ծառաներով, մեծաւոր էլ չգիտեմ ինչ պատճառաւ, միւս ցորեկ Չաթօն ուղարկեց և ուժով բերել տուաւ իր ծառաներին, իսկ կանայք երկու տղերք հանձնել էին, Ֆախկու Ալոն երկու ոսկի կխոստանան, Ֆախկի Ալին վերցնում տանում է, իսկ մեր մարդիկ [և] լօօներ ետ վերադարձան, եկան մեծաւորի քով, ես արդէն նոյն ցորեկին եկա Խուր ապրանքներ ըստանալու և փոխադրելու: Այս առաւօտ մեծաւոր իր երկու ծառաներ Խուր՝ ինձ մօտ ուղարկեց, թէ գնացէք ասէք, այսինք ինձ համար, որ մենք ամէն րօպէ պատրաստ ենք նրա օգնելու և ամէն օր էլ ազատ [կ/գնան և [կ/գան, բայց Արամ մեզ մի նոր կոթ [է] խոստացել և մի տասկրականի[35]: Այս խոստումներ, որ արել է Արամ, պէտք է կատարէ, իսկ [նրա] փոքր տղան էլ 200 նոր ծայր է պահանջում: Երեքն էլ երդում անեն, որ սինչև մահ ոչինչ էլ չեն պահանջեն մեզանից:

Այս բոլոր սարգող եղան կիրճեցի հայեր, բացարձակ ասում են մեծաւոր և իր տղաներ, թէ կալանի[36] ոչինչ բանի համար մի կոթ տուեցին աղին:

Աւետարան[37] այսքան ծայր երկու կոթի հետ տուեցին Սաֆօին[38] և տիրացուին: Մի՞թէ մենք նրանցից պակաս մարդիկ ենք, վերջապէս բոլոր հայեր լրբացրեցին մեծաւորին: Ես միայն թէ իրան լուր ուղարկեցի, թէ ձեր ըսածներ կգրեմ, բայց եթէ Արամ ձեզ հետ խօսել էր այդ կոթի և այլ բանի մասին, ինչո՞ւ ինձ չասացիր, երբ ես եկայ քեզ հետ պայմանաբանուայ և

1000 ծայրեր բերել տուի, դեռ 20 օր է ընդամէն մեր խօսածներ և այսօր դու քոյ խօսքի տէրն չես և ուրիշ պահանջներ կանիս, եթէ պահանջներ ունէիք, կարող էիր առաջի անգամ ըսէիր, մենք այն ժամանակ կը գնայինք մեր գործի հետ, այսպէս պատասխանեցի՝ գնացին, ուրբաթ օրն էլ գալու է ինձ մօտ, տեսնենք ինչ ենք անելու:

Այս խնդրի համար իմ կարծիքով մի ընդհանական նամակ գրելու էք, որ իբրև ազնիւ մարդ մենք ձեր խոստում կատարեցինք, իսկ դուք արդէն ըսկսեցիք անազնիւութեան, դեռ տասնեհինգ օր է՝ ձեր մի խօսքի վրա չէք մնում, էլ ինչ վստահութիւն ուրիշ բաների համար, միևնոյն է, կառնէք և նորից կպահանջէք միւս օր, ի հարկէ, իմ գրել աւելորդ է, դուք ինձանից աւելի կդատէք և կարգադրէք:

Խնդրում եմ, որ առանց ուշացնելու թիւրքերէն լեզուով նամակ ձեր կողմից անհրաժեշտ է, եթէ ոչ կնեղուինք այստեղ, այսինք նեղութիւն այն է, որ Կիրճի գիծ և Խուբին[39] էլ չի կարող աշխատել: Մի ուրիշ կարևոր բան, Աետարանի Ջալատ այն իրան քովի ծայրեր, որ ինք առում էր, թէ քրտից եմ ստացել, և իսկապէս, վաճառականին և աետարանցոց ներկայութեան [քուրտը] խօստովանեց, թէ գարնան ժամանակ կիրճեցի Չաթօն ինձ տուեց 2 դուրուշական և ես գնեցի նրանից, որտեղ որ ուզում էք ինձ տարէք, ես ասեմ, որ Չաթօն է ծախել ինձ, այս մարդ էլ ինձանից գնել է, այս խնդիր ուրիշ միջոց չկայ լաւ քննելու: Այդ երեքին էլ ձեզ մօտ կուղարկեմ, դուք գիտէք: Այն ժամանակ Արարատ ապրանքի մարդիկ գնացել են և այս գիշեր գալու են, իսկ Բլուրի[40] բոլոր [եկածները],[41] Կոպից եկածներ էլ բոլոր[ին] ուղարկել եմ կայան[42], 44 կապ գիրք և թերթ, 450 ծայր, երկու թիքան,[43] մին էդուարտ իրան հետ բերած է, մի հին կոթ առանց ծայրի պահել եմ Խուբ, 70 ցինկէ դրոպաներ,[44] բոլոր կնքուած և լեզմուած[45] են, մանրամասնութիւններ կգրեմ հետոյ, այս 70 ցինկերի այնպէս առանց սակարկելու խուրեցոց տուեցի փոխադրել այս պայմանաւ, որ դուք գրես մեզ, թէ այսքանի 1000-ի ծանրութիւնիւն է, որ մենք նրա համեմատ փողեր վճարինք, որովհետև բոլորն էլ գիլզ էին: Խուբի վարպետի ձին մեր գործով Կիրճ գնալուն ճանապարհին վնասում և սատկաւ, խնդրում եմ, որ նրան օգնել նիւթապէս, իսկապէս խեղճ է, կարողութիւն չունի և խեղճ ապրում է: Կայանի լօլօներ իրանց ձիեր փճացրել են և մեզանից ուրիշ ձի են պահանջում: Պարտաւորած մի ձին փոխել եմ, կանայք բերելուն մի օր ձիեր մեր մօտ մնացին, երկրորդ օր ուղարկել եմ:

*Բարևներով՝ **Շանթ***

Յ.Գ. Բլուրի գծի ապրանք, որ բերում են, այնտեղ ապրանքին պահապան կանգնում են և նրանց հետ խօսացել է վաճառական, ամէն անգամին 25 դուրուշ[46] վճարելու է, թէ ոչ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 55, թթ. 1-2 շրջ., բնագիր, ձեռագիր:

N 17
ԱԲՐԱՀԱՄ ՆԱՄԱԿԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԱԽՈՐԵՆՑԱՆԻ ԴԱՎԱՃԱՆԻ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 օգոստոսի 1907թ.
Վան

Պ. Արամ

Մօտիկ անցելոյն մեջ իրար ետևէն կատարուած այդ մի քանի փայլուն տէօրօներ, մտածել կուտային ինձ, թէ ժողովրդի մէջ որ աստիճանի ապականուած բարքի տէր մարդիկ ալ որ գտնուին, այլևս պիտի վարանին դաւաճանի ստոր դերի մէջ գտնուիլ: Բայց ի՞նչ, կը ցաւիմ ասել, որ այդ մասին ունեցած լաւատեսութեան բացասական արդիւնք տուաւ: Հրեշատիպ Արմենակին արժանի յաջորդ կար արդէն.- մի ոմն Գալուստ Խորէնեան, որն շուտով իր գործին գլուխն անցաւ և սկսաւ փութաջան ուտիճտոց[47] ընել այն, ինչ որ գետնաքարշ Ալիի նպատակն էր՝ տորոսկել հասարակութեան մէջ, դիտել ամէն ինչ և իր կարգին տեղն իմացնել:

Այդ սորուճին կը վերագրուի Գայլեանի և Խաչիկենց տուն եղող ծիանձներու մատնութիւն:

Ամիս մ'առաջ կուսակալի տուն ծառայող ներկայ մէկէն հասկցայ, որ գիշերներ երկարահասակ դիմակատոր և ոստիկանի զգեստով մէկ մը շարունակ կը տեսնուի կուսակալին հետ, քանիմ օրէն վերջապէս կրցի ստուգել, որ դա ևորէն այդ հրէշն է՝ Խորէնեանը:

Դորա փայլուն գործն է և երեկուայ խուզարկութիւնը:

Բարևներով՝ Աբրահամ

Յ.Գ. Այս մարդու դաւաճան լինելը աւելի շուտ կը տեղեկացնէի Ձեզ, եթէ չը մտածէի, [որ]յեղափոխականի ամենատես աչքէն ոչ մի բան չի վրիպի:

Նոյն

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 55, թ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 18
ԱՐՏՈՒՅՏԻ ՆԱՄԱԿԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՐԿԻՐ ՉԵՆՔ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

5 հոկտեմբերի 1907թ.
Մենավոր (ս.Թադեի վանք)

Սիրելի Արամ.

Նամակներ ստացուել են: Նրանց պատասխանուած է: Վերջին նամակովը կ'յայտնես, թէ նամակ չէք գրեր: Կ'երևի. թէ կուշանայ ճամբային:

Աւարայր[48] 2 ծիու բեռ ապրանք կայ միայն, այն էլ հէնց էս շաբաթուայ մէջ կ'փոխադրուի տեղս: Բլուրից[49] էլ անցեալներս Մաշտոց[50] մի 8-9 ծիու բեռ ճամբեց տեղս՝ որով հիմա տեղս գտնուի միայն 10-12 ծիու

բեռ ապրանք, գրեթէ ոչ աւել և ոչ պակաս: Մաշտոց միւս կողմից կ'գրէ, թէ. «էս տեղն էլ հետզհետէ կ'թեթևանայ և հազիւ 10 ձիու բեռ կգնատուի և այն էլ այս գծով կ'ճամբեմ, ուստի դուք փոխադրելու համար մարդ մի ղրկէք»: Կուարաշտից էլ մօտ մի ամիս կ'լինի, որ ապրանք փոխադրուած չէ Բլուր: Թերթեր կան տեղս Դրոշակի[51] 6-7-8 թիւեր, Խարիսխ[52] 21-էն մինչև 46, Խարիսխի յաջորդ[53] թերթանքը կայ 13-14՝ շատ, մնացած 8-9 թիւ էլ «Արօր»[54]: Առաջին պատեհութեամբ կ'ճամբուին:

Ես ինքս էլ հենց էս գիշեր Աւարայր գնալու եմ, էն տեղից էլ Մրգաստան[55] պիտի անցնեմ՝ աչքերուս և գլխի ցաւիս դարմանի համար: Տեղս արդէն բարդ գործ չկայ, մի ոտքով[56] կ'վերնայ ապրանք, հետևաբար աւելորդ է հոս մնալս: Մանաւանդ, որ ուրիշներ իմ ներկայութենէն օգտուելով կուզեն, որ Ընծայրի[57] դեմ բողոք բանամ և դրա համար իսկ կ'մեկնեմ տեղս, Ձեր յանձնարարութիւնը ի նկատի ունենալով, թէ «առանց երկրի ընկերներին չլինի թէ Ընծայրի տեղ ընտրելի ներկայանամ»: Ուստի կ'մեկնեմ ժամանակուայ մը համար, մինչև որ քո հրահանգը կ'ստանամ: Եւ արդէն կ'սպասեմ թէ իմ մասին ինչ որոշում պիտի տաս, ո՞ւր պիտի մնամ, ո՞ւր երթամ, որքան կարելի է շուտով պատասխանիր հարցերուս, որպեսզի դժուարութիւններու չմատնուիմ այսպէս կամ այնպէս:

Մարզպետի[58] և Ընծայրի յարաբերութիւնները ծայրայեղօրէն լարուած են, ո՛չ մի միջոցով հաւանական չէ, որ նրանք իրարու մօտենան: Այդ էլ մի պարագայ է, որ ինձ առիթ կ'տայ տեղէս բաժնելու: Մանաւանդ, որ անգործ եմ տեղս:

Եղիշէ Աւետարանից[59] ուղղակի Բլուր անցած է և էն տեղից էլ Կուարաշտ շատ դիւրաւ: Էս անգամն էլ յանձնարարեալ Ձեր կողմից՝ Տիգրանի հետ կայինն 2 գաղթականներ, էս տեղից դարձնել չլիներ, գրելու է Շանթին էդ մասին, նա կարող է առաջքն առնել: Տափարակի նամակներ դեռ չստացուեց, գրեցէք էնտեղ, որ Շանթին ղրկեն:

Մի բան էլ խնդրեմ, եթէ ներելի է, նպաստներից մի փոքրիկ բաժին էլ հանեցէք մօրս և եղբօր, նրանք ծայր սուտիճան կարօտ են, մանաւանդ անտուն և անտեղ: Խնդրում եմ. որ ներփակ նամակն էլ Ս. Հեղինէ Թուչուցին[60] ղրկես:

Յետոյ Մուշեղի մասին էլ գրէս (Քաջորիի), արդեօք ազատուե՞ց: Շատ կ'հետաքրքրուիմ նրա վիճակով՝ եթէ կարելի բարևներս ղրկիր նրան:

Գանք էս կողմերու լուրերին: Գրեթէ ոչինչ կայ՝ հանդարտութիւն և լռութիւն թէ Անջամայի և թէ Սէրդարի կողմից: Որպէս թէ՝ ժողովրդին զրոյց է, Էնջամայիները կուզեն աշունէն օգտել, քանի որ քրդեր բացակայած են այս եղանակիս, կուիը շարունակել:

Ինչպէս գրած էի, Սէրդարի կողմից մարդ է գնացել գօրս հաշտութեան մասին բանակցելու: Գնացողն է Մակուայ խաներէն՝ էքպիր խան և մի փաշա, բայց ընդունած չէ, միւս կողմից կ'պահանջուի, որ Սէրդար և Իգօ խան անձամբ հոն գնան, ինչ որ անկարելի է: Իգօ խանի և Սէրդարի

յպտաբերութիւնը, որ ասկէ առաջ լարուած էր՝ լաւացաւ, հիմա Մակուայ իշխանութիւն դատաւորական՝ որ առնուած էր ասկէ առաջ և տրուած էր Ալի խանին, դարձեալ յանձնուեցաւ Իգօ խանին: Կ'երևի Իգօ խանին սպառնալիքին զիջում ըրած է Սէյդարը, անցեալներ նոյնիսկ այցելած է Իգօյին:

Կ'սպասեմ վերարկուիս և ոտնամանիս, անշուշտ կ'ճամբիս Մենատր՝ Ընծայրին, ես կ'ստանամ, մի երկու ամսից դարձեալ կ'վերադառնամ: Ուրիշ բան, եթէ Ձեր հրահանգներ տայրեր կեանք ստեղծեն ինձ համար: Արդեօք կարելի՞ է այս ձմեռ ուսանել Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում իբրև ունկնդիր, եթէ մի այսպիսի կարգադրութիւն անէք ինձ համար, շատ լաւ կ'լինի:

Մրգաստանէն կ'գրեմ Ձեր կարևոր լուրեր և տեղեկութիւններ, բոլոր ընկերներին բարևներս, պ. Կարապետին յատկապէս: Նրա եղբայրը յաջողութեամբ անցաւ Էջմիածին, բայց ոչ մի յանձնարարականով:

Բարևներով Արտոյդ[61]

Յ.Գ. Տեսնուեցայ Բլուրում Արմենի հետ, շատ տխրեցուցիչ մի լուր հաղորդեց Թորգոմի մասին, տար Աստուած, որ անոր հաղորդածը ի դերև լինի: Արդեօ՞ք ինչպէս է Թորգոմը, երկրորդ անգամ կոտրելէ վերջ նրա ոտքը մի քիչ չէ՞ լաւացեր: Առողջութիւն կ'մաղթես նրան, քաղ չմտածէ, շուտով կ'աղեկանայ և կ'մոռնայ այն բոլոր ցաւ ու կսկիծներ, որոնք զինքն վերջին անգամ ուշաթափ են ըրեր: Բարևներս նրան:

Նոյն

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 55, թթ. 7-8, բնագիր, ձեռագիր:

N 19

ՔՐԴԱԿԱՆ ՅԵՂԱՒՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԱՄԱԿԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

17 հունվարի 1908թ.

Վսեմափայլ պ. Արամ

Մեր ու Ձեր բարեկամութիւն այսօր չէ, Շաքիր աղայի կենդանութեան ժամանակից մինչև հիմայ մենք եղբայր ենք եղել, և այսօր մենք նոյն խաստման ու պայմանի տէր ենք: Աւազակապետ Միրմիէն Ձեզ ծանօթ է արդեն, այլևս չկրցանք տոկալ անոր արարքներին, երբ տեսանք դրան ծառաներ մեր հայերին կը քալնին ու կը սպաննին, այլևս մեզ մտահոգում է այսօրուան դեպքերին մասին, մեր Առաջնորդն բոլոր Ձեզ[62] *ընդհարում ունենալ, պարզ է, մեր ոյժը չի օգներ:*

Ուստի բաւականաչափ ռազմական օգնութիւն ղրկելնիդ կը խնդրենք, մենք եղբայր ենք մինչև մահուան և ձեր տուած ուժին, երբէք չցաւէք, կարևոր տեղ չէ: Անպայման կամ պիտի ըսպանենք կամ պիտի ըսպանուինք, ահա մեր վստահելի մարդկանց միջոցաւ ղրկինցինք մեր նամակները.[63]

Բարևներով՝ Չերդ[64]

ՀԱԱ, ֆ. 2457, ց. 1, գ. 55, թ. 4, բնագիր, ձեռագիր:

N 20
ԱՐԱՄԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

6 սեպտեմբերի 1913թ.
Վան

1.

Սիրելի Վրացեան,

Նամակաբերս՝ Տոքթ. Ըէյնոլդս գալիս է Ամերիկա Վանի մէջ Ամերիկեան Կոլէճ մը բանալու համար հանգանակութիւն անելու:

Վերջերս սրանց հետ կրթական հարցերու շուրջը համերաշխած լինելով՝ մենք ուրախ կը լինենք, որ սրանք յաջողին կանոնաւոր կոլէճ մը ունենալ հոս:

Ոստի կը խնդրենք՝ ես եւ ընկերներ, որ թերթի եւ այլ միջոցներով ամէն կարգի աջակցութիւն ցոյց տաս:[65]

Ուրիշ խնդիրներու մասին չեմ գրում. ոտի վրայ եմ. գաւառ կը մեկնիմ:

Համբոյրներով քո՝ ԱՐԱՄ

2.

Սիրելի Սիմոն,[66]

Նախորդ երկար նամակս յուսամ ստացել ես եւ խնդրածներս միևդար ալբի[67] *չես անի: Գրաբերս խաս վանեցի է եւ ինձ շատ մօտիկ: Գալիս է այդտեղ միլիոններ վաստակելու:Նայիր, որ շուտ վաստակէ եւ վերադառնալով՝ մեզ էլ բաժին հանէ: Յանձնում եմ քո հոգատարութեան:*

Ուրախ եմ, որ հոգ ես տանում, որ «Հայրենիք»ում Վանից շատ թղթակցութիւններ երեւան: Քո յիշած տղաների մասին կ՝ասեմ, որ բոլորն էլ լաւ են, բացի Հրանտից, որ զաւզակին մէկն է: Առանձնապէս յանձնարարում եմ Հմայեակին, որ ապագայ ունեցող տղայ է, թէեւ քիչ մը դժուարամարս: Թոմազեանն էլ կարող է լաւ գրող դառնալ, եթէ վրան աշխատիս, դժուար տաշելիք քար է: Հումոր ունեցող տղայ է եւ կարող է լաւ երգիծաբան դառնալ:

Խնդրեմ լուրջ ուշադրութիւն դարձրու Վանին. հիանալի երիտասարդութիւն ունինք: Ես շատ եմ ոգեւորուած: Ջուր ես ծախրում իմ «գարաբաղցիական վանեցիութիւնը»: Իրաւունք ունիս, ես աւելի վանեցի եմ զգում ինչ, քան թէ դարաբաղցի: Եւ ի՞նչ ես կարծում.Վանի վերջալոյսը տեսնողը ուրիշ տեղացի կ՝ուզէ՞ լինել: Վանայ քեաղաք...[68]

Համբոյրներով՝ ԱՐԱՄ

Ս.Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 36-37:

N 20
ОТРЫВОК ИЗ КНИГИ Ф.И.ЕЛИСЕЕВ "КАЗАКИ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ: 1914-1917"

НА ВАН!..

Конные полки не могли двигаться в ночь. Подступать ночью коннице к этому большому, почти европейскому городу, каковым являлся город Ван, было рискованно. Так говорилось в штабах. И поход был отложен до утра следующего дня.

Но армянские дружины не выдержали - и в ночь одни двинулись к своему "обетованному городу", или к "Армянской Москве", как они называли город Ван.

Настало утро 6 мая старого стиля - день рождения императора Николая II. Накануне назначено три офицерских разъезда с выступлением в 4 часа утра.

Разъезд № 1 - хорунжий Кулабухов, с задачей идти на г. Ван восточным берегом озера Ван и войти в город с запада.

Разъезд № 2 - хорунжий Некрасов, центральный разъезд, идти прямо на г. Ван и войти в него с севера.

Разъезд № 3 - хорунжий Елисеев, с задачей пройти на восток до озера Арчак, изучить местность до г. Арчак включительно и потом уже идти в г. Ван.

Разъезды силой в шесть коней. Третьему разъезду предстояло пройти по горам около ста верст. Это очень много. Но... какие могут быть разговоры на войне!

Посланы самые старшие хорунжие. Выступили одновременно и по одной дороге. Втроем не страшно и даже весело. По заданию через шесть верст разъезды взяли свои маршруты и разъехались. И начальнику третьего разъезда стало скучно и ... страшно: уж больно мала сила разъезда, а идти по дикой гористой местности почти сто верст.

Прошли уже много. Кругом ни души. Вдруг лай собаки. Село. На рысях вскакиваем в него. По трупам вырезанных женщин и детей определяем, что село армянское. Трупы еще не разложились. Значит, резня была недавно. Кроме двух-трех худых собак - никого...Двигаемся дальше. Из-за глыб камней показались люди, человек двадцать. Нас восемь. Силы неравные. В нас не стреляют - примета хорошая. Курды всегда стреляют еще издали. То оказались мужчины армянского вырезанного села. Они скрываются в горах от курдов уже сколько дней. О движении русских войск ничего не знают. И какова была их радость, когда они узнали, что Ван уже занят русскими войсками. Объяснялись кое-как по-турецки. Со слезами на глазах они целуют мои ноги в стремени. Жуткая человеческая драма...

Отпустив их в свое село, разъезд дошел до озера Арчак. Мелкий пологий берег. Ни одной лодчонки на горизонте. Все словно вымерло. Осторожно вошли на окраины маленького городка Арчек. От старушки армянки узнали, что турок в городе нет.

Задача выполнена. По торной мягкой дороге переменным аллюром мы спешим в Ван. До него верст сорок. Кони уже устали. Мои казаки просят сократить аллюр. У них тяжелые вьючные сумы, в которых все зимнее обмундирование, 250 боевых патронов, комплект тяжелых казенных подков и другого необходимого на войне и в походе. А их офицер безо всякого вьюка, да и конь под ним добрее их коней.

Солнце было уже на закате, когда перед нами с небольшого холма открылась обширнейшая водяная гладь, дальних берегов которой не видно, а перед нею - сплошной зеленый сад, слегка почему-то дымящийся.

Мы поняли, что это и есть город Ван, конечная цель операции Араратского отряда.

Наши кони широко шагают, дергают поводьями, просятся вперед - к воде, к корму, к отдыху.

Уже стемнело. На улицах, у дворов, много местных жителей-армян. По-турецки спрашиваю, где находится "главный начальник русских войск".

Но так как город большой, где именно остановился "главный русский начальник" - указать никто не может.

В городе полная темнота. Освещения никакого. Улицы узки и кривы, едем словно в лабиринте. Наконец нашли штаб нашей Закаспийской казачьей бригады. В нем - ни души. Дежурный писарь доложил, что все господа офицеры отряда приглашены на ужин городским головой, и советует ехать туда. Беру одного из полковых ординарцев, знающего туда дорогу, и еду...

БАНКЕТ С ВОЖДЯМИ АРМЯНСКИХ ДРУЖИН

Мы у большого двухэтажного дома. По широкой лестнице поднимаюсь вверх. Открыв двухстворчатую дверь, вхожу в громадную залу, в которой за двумя длинными столами, покрытыми белыми скатертями с сервировкой, сидело до ста человек господ офицеров всего нашего отряда.

Со дня выступления из Мерва в августе прошлого года на войну мы еще ни разу не сидели за столом, накрытым для ужина "по-человечески", то есть накрытым белыми скатертями и с полной сервировкой, почему, увидев все это, да еще в полудикой Турции, я немало был удивлен.

По воинскому уставу рапортовать нужно старшему начальнику из присутствующих. В данном случае - генералу Николаеву. Он сидел у самой двери, спиной к ней. Около него, по обеим сторонам, сидели вожди армянских дружин - Амазасп, Дро, Кери и какой-то армянин в штатском костюме, с очень черной густой подстриженной бородой, с интеллигентным лицом матового оттенка и печальными глазами. То был городской

голова - Арам-паша. За ними сидели командиры наших полков - 1-го Таманского полковник Перепеловский и 1-го Кавказского полковник Мигузов. Дальше - все господа офицеры "по чинам". Ужин только начался.

При моем рапорте генерал Николаев, высокий сухой широкоплечий старик лет 65, с седой редкой бородой, поднялся на ноги. Его примеру последовали все остальные. И если было мне неловко, что потревожил стол, то было и приятно показать в Турции, в особенности Арам-паше, какова дисциплина в Русской императорской армии, одинаково обязательная для всех - и для генерала, и для хорунжего, и для тех, кто здесь присутствует.

Выслушав рапорт, поблагодарив и пожав руку, Николаев просил доложить обо всем "своему командиру полка". Полковник Мигузов, умный человек, только спросил, все ли благополучно. И, не желая нарушать порядок стола, как всегда, небрежно произнес:

- Хар-рашо... идите садитесь на левый фланг со всеми хар-рунжими...

Я среди своей кавказской и таманской молодежи. После войскового праздника прошлого года в Маку, в Персии, мы сегодня впервые ужинаем вместе - и со штабом бригады, и с офицерами Таманского полка. Вся молодежь бригады ликует в душе и хочет любить друг друга сильно, крепко, навсегда.

Хорунжие-кавказцы - Владимир Кулабухов, Шура Некрасов, Ваня Маглиновский, Коля Леурда, Шура Винников, Гаврюша Мацак, Володя Поволоцкий - и хорунжие-таманцы - Шура Зекрач, Борис Абашкин, Филипп Лопатин, Николай Просвирин, наш общий любимец бригадный пулеметчик Миша Васильев... - а дальше, ближе к начальству, сидят уже сотники и подъесаулы. Сел с ними и... все забыто; то, что с 4 часов утра и до 8 вечера в седле, по горам, по буеракам, по незнакомой и дикой местности, по разным "чертовым тропам" с ежеминутной опасностью наткнуться на засаду...

Стол накрыт по-восточному. Вначале подали сладкие блюда — финики, запеченные фрукты и что-то мармеладное. И потом уже на громадных круглых медных подносах горы плова из риса и баранины. Все приготовлено очень вкусно. На столе - только местное красное вино. И хотя оно кислое и нам не понравилось, мы пили его с удовольствием и даже бравирующе, так как мы сегодня были герои дня, победители, которых чествуют.

К удивлению, за столом стояла тишина. Старшие офицеры тихо говорили только с соседями. Ни оркестра полковых трубачей, ни хора песельников, без которых не обходилась ни одна офицерская пирушка.

Но вот встал Арам-паша. Он произнес тост за Русскую императорскую победоносную армию. Говорил он по-армянски. Целыми фразами переводил нам их самый храбрый и видный начальник 2-й армянской дружины - Дро.

Дро - коренастый человек среднего роста с густой черной бородой, подстриженной лопаточкой. В боевом костюме, с ремнями через оба

плеча, он производил могучее и приятное впечатление. Своим видом он походил на генерала Кутепова.

После нескольких приветственных фраз по адресу Русской армии и нас, присутствующих, Арам-паша обратился к генералу Николаеву с просьбой дать разрешение послать русскому императору ту телеграмму, которую он сейчас прочтет. Мы невольно насторожились: телеграмма самому русскому царю из далекой Турции и от армян - это было тогда что-то особенное и экстраординарное.

Вот ее полный текст:

"В день рождения Вашего Величества, совпадающий с днем вступления Ваших Войск в столицу Армении, желая величия и победы России, мы, представители национальной Армении, просим принять и нас под Ваше покровительство. И пусть в роскошном и многообразном букете цветов Великой Российской Империи маленькой благоухающей фиалкой будет жить автономная Армения"[69].

Всю телеграмму, по фразам умно и внятно переведенную Дро, офицеры Араратского отряда покрыли дружными долгими и громкими аплодисментами. Генерал Николаев, офицер Генерального штаба, оренбургский казак по рождению, очень добрый и мягкий человек, привстав со стула, произнес:

- Пожал-луйста, пожалуйста... я разрешаю.

Ужин скромно и достойно закончился сразу же для всех. Вестовые нам подали лошадей. В глухую полночь, в кромешной темноте мы долго блуждали по темным кривым и узким улочкам большого города, пока не нашли бивак своей Закаспийской казачьей бригады...

Из офицеров, присутствовавших на этом памятном ужине, никого не осталось в живых. В Брюсселе, в Бельгии, жил подполковник Ираклий Виссарионович Цагурия, тогда молоденький прапорщик 2-й Кавказской конно-горной батареи, только что выпущенный из артиллерийского военного училища. В 1957 году умер полковник Валериан Яковлевич Крамаров, тогда подъесаул 4-й Кубанской казачьей батареи.

Этим вечером закончилась Ванская операция, начавшаяся 22 апреля переходом через Тапаризский перевал, город Ван был занят 6 мая 1915 года. Всех офицеров, участвовавших в этой операции, приказано было представить к очередным боевым наградам, и мы их получили в Ване же. Подъесаул Маневский и автор этих строк за конную атаку против курдов 23 апреля были награждены вне этих наград следующими высшими по степени орденами.

Проснувшись поутру 7 мая, мы увидели, что бивак бригады раскинут среди роскошных сеяных трав люцерны. У лошадей - масса фуража. Торговцы-армяне продают казакам табак, вино, фрукты и сладости. Все это неожиданно и совершенно не соответствовало той Турции, по которой мы ходили раньше семь месяцев. Мы попали буквально в райский оазис... Но чтобы не было лишнего соблазна, к вечеру бригаду перевели на самую окраину города. Полки разбили палатки на больших площадях, а офицеры

- в непосредственной близости от своих сотен, во фруктовых садах, ломящихся от плодов. После всех лишений - все забыто. В походных кухнях в изобилии варилась баранина. Казакам позволено покупать и пить местное красное вино. Много виноградников и бесконечные фруктовые сады. Город Ван тогда был - рай, рай...

Елисеев Ф.И. "Казаки на Кавказском фронте 1914-1917", М., 2001, с. 94-98.

N 21
ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ՝ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ ՀԱՄԱԽՄՔՎԵԼՈՒ ՄԻՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

8 մայիսի 1915 թ.
Վան

Քաղաքացիներ!

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ և իրաւակարգ կբանայ մեր քաղաքի ու գաւառներու իրաւազուրկ ժողովրդի համար: Դարերու տարկուբեան և քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կապրինք այս օրերուն, հայ ժողովրդի շինարար և ստեղծագործող ոգիի ծնունդն է, որ մենք կտօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը - գեներալ Նիկօլաև[70] գնահատելով Վասպուրականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը բոլոր կառավարութիւնը անգամ դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ և հաւանելով հայ ժողովրդի ազգային-կուլտուրական ձգտումները բարեհաճեցաւ 7 մայիսի 1915 թ. N 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործը իւր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպուեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական և այլ վարչութիւններ: Ասով կայտարարեմ ամբողջ ժողովրդին, որ նոր կառավարութիւն կազմակերպուած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր նոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախմբին, քաղաքի և շրջակայքի մէջ բնական վիճակ ստեղծելու համար: Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ՝ համախմբել ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի և շրջանի մէջ, արժանի լինելու քառորդ դարէ աւելի մղած պայքարի մէջ ընկած հերոսներու յոյսերուն և յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտօնի գիտակցութիւնը Փոքր-Ասիոյ այս ծայրագաւառի մէջ:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ է, որ հայ ժողովրդի և իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կմնայ մեր այդ հաւակնութեանց և յոյսերուն ընդառաջ գնացող յաղթական բանակի և զեներալի վստահութիւնը բացարձականապէս արդարացնել և աւելի լաւագոյնին արժանի ու պատրաստ գտնուել:

*Վանի շրջանային կառավարիչ՝ **Աբամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 22

ՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 մայիսի 1915 թ.
Վան

Նկատելով, որ նոր իրաւակարգի մէջ կարգ մը անպատեհութիւններ տեղի կ՛ունենան, որոնք կարող են վատ հետևանքներ առաջ բերել, ներկայիս կը յայտարարեմ որ՝

1.-Հրազէն պարպելը ամենախիստ կերպով կ՛արգելուի:

2.-Կ՛արգելուի ոգելից խմիչքներ ծախել զօրքերուն, խանութներու և մասնաւոր տուներու մէջ:

3.- Իսպառ կ՛արգիլուի թալան, կողոպուտ, ծառեր կտրելը, փայտեր տանելը և այլն:

4.- Լքուած տուները ինքնագլուխ տիրանալը արգելուած է, ոչ մի գրաւում ոյժ չունի, ունեցողները պէտք է դիմեն ինձ:

5.-Հեռագրական և հեռախօսական թելերը՝ թէ հին և թէ նոր հաստատուածները – պէտք է խնամքով պահպանել, ոչնչացումէ ազատել և հսկել որ քրշնամին չկտրէ: Գեներալ Նիկօլաևի հրամանով, հեռագրական և թելեֆօնի թելերը կտրելու մէջ մեղադրուողը 24 ժամուայ ընթացքին դաշտային դատարանի պիտի ենթարկուի և գնդակահարուի:

6.- Ով որ թելեֆօնի և հեռագիրի գործիքներ ունի, անմիջապէս պէտք է բերէ կառավարչատունը:

Այս հրահանգներուն անսաստողները ամենաուժեղ պատժի պիտի ենթարկուին:

Կառավարչատունը կը գտնուի Դօմինիկեան քոյրերու դպրոցի մէջ (Փոքր Քէնտրչի), պաշտօնատուները բաց են առաւօտ ժամը 9-12 և կէսօրէ ետք ժամը 2-5:

*Վանի շրջանի կառավարիչ՝ **Աբամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 1, տպագիր օրինակ:

N 23

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐԸ՝ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՊԱՍՏԱՆ ՏՎՈՂՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 մայիսի 1915 թ.
Վան

Հայ հասարակութեան

Հայ կամաւորներու գնդապետներու դիմումին համաձայն կը յայտարարեմ, որ արտօնագիր չունեցող կամաւորներուն իրենց տան մէջ ապաստան տուող բոլոր քաղաքացիները պատասխանատուութեան կը կանչուին և կը պատժուին բանտարկութեամբ և տուգանքով:

Վանի նահանգապետ՝ Արամ

ՀԱԱ. ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 25, տպագիր օրինակ:

N 24

ՀԱՅԹԱՅԹԻՉ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՓՈՒԵՐԸ ԱՇԽԱՏԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1915թ. մայիսի 8-ից հետո

Յարգելի Պրն. Արամ, կառավարիչ Վանի շրջանին

Ազգ[ային] ինքնապաշտպան Հայթ[այթիչ] յանձնախումբս կուգայ շնորհաւորել Ձեր կառավարչական պաշտօնը, մաղթելով Ձեզ յաջողութիւն:

Նկատի ունենալով Հայթ[այթիչ] մարմնոյ այժմէականութիւնը և բանակի բազմազան և անհրաժեշտ պէտքերու կարևորութիւնը, և միաժամայն նկատելով, որ նոր մարմինը դեռևս գործերն չէ սկսած, յանձնախումբս պարտք կը համարէ 1-2 օրուան համար ևս տանել իր գործը պայմանաւ, որ 5 հատ փուռս աշխատցնել տալու չափով գիշեր և ցորեկը փոխնեփոխ գործող 40 աշխատաւորներ, Յայնկոյսներու շրջանի գէթ 2 ջրաղաց աշխատցնելու չափով ջրաղացներում, արմտիքի և ոչխարի փոխադրութեան համար բաւականաչափ սայլ, գրաստ և քանիմ գործաւորներ և գործակատարներ այս երեկոյ ժամ 11-12 մեզ տրամադրելի ընէք, հակառակ պարագային չպիտի կրնանք շարունակել մեր գործը վաղուանէ սկսեալ, որովհետև տիրող անիշխանութեան հետևանօք 3-4 օրէ ի վեր ամէն կերպով կաշկանդուած ենք և մեր ղիւրքն ու ազդեցութիւնը կոտրուած է, այնպէս որ գործաւոր մ՛իսկ ձեռք չենք կարող բերել նոյն իսկ վարձատրութեամբ: Իսկ ներկայ վիճակով գործը տանել աննպատակ կը համարենք և անհնարին, քանի որ բանակների համար նուազագոյն չափով իսկ

հաց չենք կարող հասցնել և այդ առթիւ արդէն իսկ դժգոհութիւններ սկսեցին ծայր տալ մանաւանդ ռուսների մէջ, որ որպէս թէ մենք կը խնդրենք կամաւորներին, հաց կուտանք, իսկ իրենց՝ ոչ: Կ'սպասենք ընդհանուր Ձեր դրական և վճռական կարգադրութեանց և պատասխանին:

Կեղրոն. յանձնախումբ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 25

ԲԱՅԱԶԵՏԻ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԱԿՈՑՆԵՐԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 մայիսի 1915 թ.

1. До сих пор слышу беспричинную стрельбу по городу и имею сведение, что есть случайное ранение.

Прошу принять самые энергичные меры к прекращению этой стрельбы и объявить, что все стреляющие будут мною арестованы, а в случае поранения кого-бы то ни было, буду без церемонии расстреливать.

2. Прошу поспешить представлением мне проекта цен на продукты. Имею сведения, что цены неимоверно взвинчиваются и повышаются. Прошу теперь же принять меры к урегулированию цен.

Начальник Баязетского отряда
генерал-майор ***Николаев***
Начальник Штаба подполковник[71]

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.61, թ.5 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 26

ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԻ ԴԻՎԱՆԻ ԴԻՏՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՅԹԱՅԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 մայիսի 1915թ.
Վան

Պարոն կառավարչապետ

Վարագայ վանքի այրուելը ու կողոպտուելը Ձեր մեծութեան ծանօթ իրողութիւն մը լինելով, ներփակ Ձեզ կը ներկայացնեմք կողոպտուած գոյքերու ցուցակը:

Նկատելով, որ այս գիւղերու մէջ ջարդուած հազարաւոր ընտանեաց որբերու գլխաւոր ապաստարանը Վարագի վանք պիտի լինի:

Նկատելով, որ վանքից կողոպտուած գոյքերու ու կենդանեաց մեծագոյն մասը հայերու ձեռք անցաւ:

Կը համարձակիմք խնդրել, որ ինչպէս որ մասամ ոչխար յատկացուելով սկզբնատրութեան մը շնորհ ըրէք, համեցէք վանքի պէտքերուն բաւելու չափով ոչխար, կենդանեղէն և իրեղէներ ու հայթայթելու միջոցներու խորհրդակցութիւնն ու գործադրութիւն յանձնարարել հարկ եղածներուն:

Մնամք խորին յարգանօք՝

Դիւան հոգ. Վարագայ վանայ

*Վ. Առենադպիրի՝ **Աև. Շատուրեան***

*Առենապետ՝ **Անտոխ Յ. Թէրզիպաշեան***

***Մակագրություն**. Գաղթականական և երկրագործական մարմնին: Դիւան, 9.V*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 3, բնագիր, ձեռագիր:

N 27

ԲԵՐԿՐԻԻ ԳԱՎԱՌԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 մայիսի 1915 թ.

Վան

Վանայ կառավարիչ պ. Արամին

Յարգանօք

Բերկրի գաւառի մէջ գտնուած Անձաւ, Պստիկ-գիւղ, Գործուբ, Ընգիզակ, Սուրբ Թաթէոս, Քապապեկ, Բերկրի, Քէօշկ, Առեղ, Շւաքար, Թառ, Գոմս գիւղօրէից 7 տարեկանէն վեր մինչ խոր ծերութեան մէջ գտնուած բոլոր արու բնակչութիւնը՝ Օսմանեան կառավարութեան կազմակերպած ապրիլեան ջարդի ժամանակ ամբողջապէս ջարդուած և կոտորուած լինելով՝ միմիայն Վան, Ռուսեան,[72] Լիմ անապատ ապաւինելով ազատուած ստորագրեալքս՝ 40-50 անձ, ներկայ աննօրմալ դրութեան մէջ գիւղ վերադառնալով մեր տնտեսական աշխատանքը վերսկսելու համար մեզ անապահով կզգանք, որովհետև մեր շրջակայ գիւղօրէից քիւրտ արու բնակչութիւնը թէպէտև հայ կամաւորներին և ռուսական բանակի յաղթական մուտքով մասամբ մը ջարդուած է, սակայն կարևոր մասերը այս ու այն շրջակայ լեռների և ծործորների մէջ զէն ի ձեռին պահուած են՝ որոց ներկայութիւնը մեր գոյութեան կսպառնայ ամէն րոպէ: Հետևաբար, որպէսզի, նախ ընդհանրութեան բշնամիի բնաջնջման և մեր գոյութեան ապահովութեան գործը կատարեալ լինի. կը խնդրենք մեզ՝ ստորագրելոցս պէտք եղած տեղէն պատօնութիւն և մեզմէ զէնք չունեցողներիս զէնք տալով, մեզ՝ մեր շրջանն ուղարկել բարեհաճէք, որու յանդէպ մենք կը խոստանանք

որպէս շրջուն պահակ՝ մեր վերոյիշեալ գիւղօրէից շրջանակը ամբողջապէս մաքրել, մեր գոյութիւնը ապահովել և այդպիսով ռուսական բանակին մեր շրջանի վերաբերեալ ստանձնած գործը մեր ձեռքով կատարել: Ասկէ զատ վերոյիշեալ գիւղերէն մօտաւորապէս 200 ընտանիք՝ հարս ու աղջիկ, կանայք արդէն շրջականերուն ապաստանած քիւրդերի մէջ կը գտնուին, որոնց բոպէմ առաջ ազատագրման համար հաճէք անհրաժեշտօրէն պէտք եղածն տնօրինել: Եւ որպէսզի գործը աւելի կազմակերպուած և՛ կատարեալ լինի, կը խնդրենք, որ նախ՝ Քերկրիի փոխան Գործոք բազմամարդ գիւղը՝ որպէս յարմարագոյն կեդրոն ընդունելով, հոն կազմակերպուելիք գիւղական վարչական կազմը ևս անմիջապէս որոշէիք: Որպէսզի ներկայ աննօրմալ դրութեան մէջ հոն պատահած և պատահելիք խաշոր քիւրիմացութիւններին և անպատեհութիւններին իսպառ վերջ տրուի:

Հետևում են 40 ստորագրություններ

Մակագրություն. *Տրուած է արդէն:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 28
ԱԶԳԱՅԻՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՆԴՐՄԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԹՆԵՂԵՆՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մայիսի 1915 թ.

Վանի կառավարիչ պ. Արամին

Կը խնդրէինք, որ բարեհաճէիք հրաման տալ ազգապատկան ոչխարներուն վրայ հսկողներուն, որպէսզի այնպէս կարգադրէին, որ այդ ոչխարներու կաթերը այս ու այն կողմ կթելով չտանէին: Իրենք կրնան յատուկ կթող կիներ ունենալ և մածուն պատրաստել: Ատոնց պատասխանատուն ո՛վ որ է, պէտք է յայտնի ըլլայ, որպէսզի մենք օրն օրին իրեն դիմելով հիւանդանոցէս պէտք եղած կաթ և մածուն ստանայինք: Մնացեալը ալ կրնայ ծախուել կամ տրուել ուրիշ գիւտրներու:

Նաև կը խնդրէինք հաղորդել մեզ նոր հայթայթիչ մարմնոյն անունները և պաշտօնատեղին, որպէսզի հիւանդանոցիս պէտքերուն համար անոնց դիմէինք, անշուշտ անոնց մեզ հայթայթածները, միս, իւղ, բրինձ և այլն, և այլն հիւանդանոցիս պիւտճէին պիտի վճարուին:

Հիւանդանոցիս նորինոյ կազմութեան համար հետզհետէ ծախքերը կը շատնան: Ուստի կը խնդրէի, որ բարեհաճէիք նորէն կարևոր գումար մը տրամադրելի ընել և ուղարկել հաւատարիմ անձի մը միջոցաւ:

Գրատուած պղնձեղէնները մեզ շատ անհրաժեշտ են: Կը խնդրէինք նոյնպէս ատոնց վրայ, իսկոյնին անուններ և տեղը մեզ իմացնել և հրաման տալ, որ մեզ պէտք եղածներ վերցնենք:

Յարգանօք՝ Ազգ. զին. հիւանդանոցի տնօրէն՝

Մ. Մկրեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 29

ԽԱՉԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՁԵՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մայիսի 1915թ.
Վան

Վսեմ կառավարիչ

Ապաղայի դաշտ գտնուող Խաչան գիւղի բնակիչներէն վեց անձինքս (երկուք կամաւոր) կուգինք մեր գիւղը վերադառնալ, զայն քիւրդերէն պահպանելու համար, որովհետև այժմ քիւրդերու ձեռքը կը գտնուի:

Արդ կը խնդրենք, որ կամ մեզի զէնք և կամ առանձին զօրք տուէք, որպէսզի կարող ըլլանք գիւղը երթալ և մեր կորսուած ընտանիքները ազատել: Անյապաղ կսպասենք ձեր հրամանին:

Յարգանքներով՝

Վարդան Մանուկեան, Մանուկ Յովհեան,
Սահակ Յարութիւնեան, Հմ. Մարգարեան,
Յովհ. Կիլոյեան, Նշան Յակոբեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 3, բնագիր, ձեռագիր:

N 30

ՄԻ ԽՈՒՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՎԵՐՎԱԾ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ

11 մայիսի 1915 թ.
Վան

Վանայ շրջանի կառավարիչ պ. Արամին

Ինչպէս յայտնի է, թուրքերը այրեցին մեր ղպրոցներէն, եկեղեցիներէն ու վանքերէն շատերը, որոնց վերաշինութեան գործը պիտի ծանրանայ կրկին հայ ժողովրդին վրայ, որը առանց այն ալ տնտեսապէս քայքայուած է արդէն:

Արդ, մենք, մի խումբ երիտասարդներս, կուգանք հետևեալ առաջարկը Ձեր ուշադրութեանը յանձնելու.-

1. Վերոյիշեալ շենքերը ամբողջապէս հասարակական հիմնարկութիւններ ըլլալով, լաւագոյն է կազմել մի յանձնախումբ՝ այրուած շէնքերու բաղականական կամ հոգաբարձական կազմերէն, որոնք այժմէն ձեռնարկէն շինութեանց ատաղձը հայթայթելու:

2. Որպէսզի շինութեանց ծախսը ամբողջապէս չծանրանայ հայ ժողովրդի վրայ, այժմէն քուրք լքուած այգիներէն ատաղձի և գերանի յարմար ծառեր կտրել և զանոնք փոխադրել յարմարատր տեղ մը:

Մի խումբ երիտասարդներու կողմէ
Խ. Հացագործեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, բ. 25, բնագիր, ձեռագիր:

N 31
ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱՑԻՆԵՐԻ ՄՆՁՆԱԿԱՆ ՁԵՆՔԵՐԸ ԱՌԳՐԱՎԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

12 մայիսի 1915 թ.
Վան

Վանի շրջանի կառավարիչ Վսեմ պ. Արամին

Անհատական գործերով Բերկրի գաւառ պիտի երթանք, սակայն լսելով, որ անհատական զէնքերը տեղական ռուս զօրքերից կը գրաւուի, հետևաբար հաճեցէք անհատական զէնքերը պաշտպանող և գրաւումէ զերծ պահող հրամանագիր մը և յատուկ նշաններ տալ:

Յարգանօք՝ ***Գազիկ Թօխմախեան***
Օհանէս Յարութիւնեան
Տիգրան Յարութիւնեան
Մկրտիչ Յարութիւնեան

Մակագրութիւն. Ուսերէն վկայագիր տալ: 13/V

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, բ. 1, բնագիր, ձեռագիր:

N 32
ԿՅՈՒՄՆԵՆՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ պ. Արամ կառավարիչ Վանայ շրջանի

Ձեզ արդէն ծանօթ է, որ Թիմարը ամբողջութեամբ թալանի մատնուեցաւ, ժողովուրդ հոս գաղթեց, վերջին օրերուն, երբ տիրող աղետալի դրութիւնը վերջացաւ. շուտ հասնող գիւղացիք և անհատները յափշտակեցին

եղած չեղած բոլորը: Հիմա մենք կիւսենցիներու գրեթէ մեծամասնութիւնը երբ կ'երթանք, ոչ մի կենդանի կամ երկրագործական գործիքներ կը տեսնենք ամէէր, բոլորը գրաւած են, մեր սեպհական կենդանիներ և սայլեր, գութաններ կը գտնենք Վարի Թիմարի գիւղերէն՝ Պայրաք, Ատնակաց և միւս գիւղերու մէջ, բայց ոչ մէկ կը բարեհաճեն մեզ յանձնել, ինչպէս ըրենք, մենք չգիտենք: Ձեզմէ կը խնդրէինք այդ մասին՝ կարգադրութիւն, առանց որոյ ոմանք պիտի մեռնեն անօթի և անճար, իսկ ոմանք մէկ մէկ աւատապետներ պիտի լլլան: Կը խնդրէինք ձեզմէ ըստ կարելւոյն շուտ կարգադրութիւն մը, որպէսզի երթայինք մեր աւերակներու մէջ ծուարէինք:

Կիւսենց գիւղի գիւղացիներ
*Քահանայ **Տ. Յովհաննէս***
*Ռես՝ **Խաչատուր***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 2, բնագիր, ձեռագիր:

N 33
ՀԱՅՆԿՈՒՅՄՆԵՐԻ ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵԿԵՂԵՑՈՒ և ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՀԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՄԱՆՔՈՎ

12 մայիսի 1915 թ.
Վան

Մեծայարգ պ. Արամ Մանուկեան
Կառավարիչ Վանի շրջանին

Մեծ. տէր.

Յայնկոյսներու այրեցաւեր եղած եկեղեցին և դպրոցը, վերաշինելու նախապատրաստութիւնները տեսնելու համար քաղ[ական] խորհուրդս որոշում է առայժմ պետումներ անել և հարկ եղած ատաղձեղէնները պատրաստել տալ:

Եւ նկատելով, որ ատաղձներու կարևորագոյնները՝ (սիւներն ու նետցումները) ոչ եկեղեցւոյ ծառատունկներու մէջ կարելի է ճարել և ոչ իսկ հայ շրջաններէն, Թաղ. Խորհուրդս ներկայիս կուգայ դիմել Ձեզ՝ խնդրելով, որ եթէ կարելի է բարեհաճէք արտօնել մեզ նոյն ատաղձները կտրել տալ թիւրք շրջաններէն, ուր մեծ քանակութեամբ կը գտնուի:

Կ'սպասենք ընդհուպ Ձեր տալիք արտօնութեան և ցորչափ հանգամանքները առ այժմ բոլլատու են, նպատակայարմար կը գտնենք րոպէ մ'առաջ՝ գործին ձեռնարկել տալ:

Մնամք յատուկ յարգանօք

Դիւան քաղաքականութեան Յայնկոյսներու
*Վ. ատեանապետիրի **Մկրիքէ Էլնաթեան***
*Ատենապետ՝ **Արմենակ**[73]*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թ. 26, բնագիր, ձեռագիր:

N 34
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱԶ ՀՐԱՆՏ ԳԱԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 1369 *1/14 մայիսի 1915 թ.*

Վանայ շրջանային վարչութեան պ. նահանգապետ.

Գործերու խճողումը և ատկէ ծնելիք հաւանական անպատեհութիւնները ի նկատի ունենալով, երրորդ անգամ ըլլալով ստիպուած եմ Ձեզմէ խնդրել, որ անմիջական կարգադրութեան ըրած դատարանին երկու ձիավոր կաչնակներ տրամադրելի ընելու համար, առանց որոյ գիւղացիներու կամ անոնց հետ առնչութիւն ունեցող բոլոր դատական գործողութիւնները ամլութեան սպիտի դատապարտուին:

Դատական գործերու չափազանց բազմանալուն բերմամբ, այլևս անկարելի է երեք գրագիրներով արագ և կանոնաւոր աշխատանք կատարել: Հետևաբար այս մասին Ձեզ ներկայացուցած թիւ 33 և 27 Մայիս թուակիր պաշտօնագիրը, որով երկու գրագիրներու ևս անհրաժեշտութիւնը բացատրած էի: Խնդրեմ այս մասին անմիջական կարգադրութիւն՝ մանաւանդ, որ մէկ երկուք առժամապէս կ՚աշխատցնենք այդէն:

Երրորդ և կարևոր խնդիրներէն մին ալ վարձակալութեան առժամեայ օրէնքի խնդիրն է. կը խնդրուի հաղորդել. 1. թէ յայտարարուած վարձակալական օրէնք միմիայն բնակավայրերու, թէ ոչ, խանութներու, այգիներու և այլ անշարժ կալուածներու մասին ալ գործադրելի է, 2. թէ այդ օրէնքը մինչև ո՞ր թուական գործադրելի է: Կը յուսամ ի նկատի ունենալով խնդրի այժմէութիւնը՝ վերոյիշեալ խնդիրներու մասին հարկ եղած կարգադրութիւնները ընել:

Հրանտ[74]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 35
ԱԼՋԱՎԱԶԻ ԳԱՎԱՌԻ ԲԱՐԿԱԹ ԳՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 570 *14 մայիսի 1915 թ.*

Վան

Վսեմ Տէր,

Ալճավազի նահանգի բնակիչներս ամբողջութեամբ, ինչպէս նաև մեր Բարկաթ գիւղի բնակիչներէն մաս մը չլլ կարողանալով դիմանալ բրքի և բրդի հարստահարութենէ և սպանութիւններէ, առիմք ընտանիքնիս, գաւակնիս այժմ պարտաւորած Վան եկած և ձեր վսեմութեան դիմելով՝ անմիջական օգնութիւն խնդրելու ցանկութեամբ, տեղս եկած ենք: Այժմ

եթէ երբէք չը կարողանանք մեր ընտանեօք հայրենիքնիս վերադառնալ և մեր վար ու ցանքով զբաղիլ, ապագային թէ մենք և թէ բոլոր քաղաքացիք անօթութենէ անատաղ պիտի մնան:

Արդ, Վսեմ տէր, հաճեցէք անմիջական կերպով օգնութեան խմբեր հասցնել և ուղարկել մէր շրջաններն ազատելու համար, այդ կողմեր մնացած բոլոր անտէր անտերունջ դժբախտ հայերս, երախտապարտ թողնելով ցկեանս:

Բարկաք գիւղացի **Ատաճ Մկրտիչեան**
Սահակ Պաղտօյեան
Բարկաքցի **Վարդան Պետրոսեան**

Մակագրութիւն. *Ձեր պահանջը կարգադրուած է արդէն: Ալճաւազը ռուսներու կողմէն արդէն գրաւուած է:* **Արամ**, *21/V*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 12, թ. 2, բնագիր, ձեռագիր:

N 36
ՌՈՒԲԻՆՍՈՆ ԳԼՃՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄԻՐԵՆ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մայիսի 1915թ.
Վան

Պարոն Նահանգապետ Վանի հրջանային վարչութեան

Տէր Նահանգապետ,

Մայիս 15 թուական և N 186 պաշտօնագրով մը բարեհաճած էք պատուել զիս՝ պաշտօն յանձնելով երկրագործական մարմնին մէջ: Փութալով խորին շնորհակալութիւններս մատուցանել այս առթիւ, ցաւ ի սիրտ ստիպուած եմ յայտնել, թէ հակառակ բուռն և անկեղծ փափաքիս աշխատելու ազատ հայրենիքի ազատամիտ վարչութեան մէջ, գոնս քանի անգամ առիթը ունեցած եմ Ձեզ յայտնել, չպիտի կարենամ ստանձնել ինձ տրուած պաշտօնը, վասնզի՝

Նոր ընտրուած երկրագծ[ական] տեսուչը, որոն պիտի գործակցիմք, ոչ միայն չունի գոնէ հայ երկրորդ[ական] վարժարանի ուսում, այլ զուրկ է նաև գիտական հիմնատարերքից և աւարտած է Պրուսայի նախնակ[ան] երկրագործական դպրոցը, որու շրջանաւարտներէն շատ քիչերը մասնատր պատրաստութիւնէ ետք կը յաջողին մտնել Հալքալըի բարձրագոյն վարժարանը, ուրկէ վկայուած եմ ինքս: Պ. Խաչիկի անձը վիրաւորել չէ երբէք նպատակս և սիրով կը պաշտօնակցէի իրեն ուրիշի մը տեսչութեան տակ, այլ պարզել սա կէտը, թէ այս պայմաններուն մէջ, գոնս բուրք ոէժիմը անգամ չէ ներած իրեն նախաղասելով երկրդ. վարժարանէ շրջանաւարտ մը բարձրագ. վարժարանէ վկայուածէ, անկարելի է ինձ արդիւ-

նատր աշխատանք յառաջ բերել, ուստի պիտի խնդրէի, որ ներկայ գրութիւնս իբր պատճառաբանեալ հրաժարական ընդունելով, զիս այդ պաշտօնէն ազատ կացուցանէիք:

Հաճեցէք ընդունել, Տէր նահանգապետ, անկեղծ յարգանքներուս հաւաստիքը:

Ռօպէնտո Գըլըճեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թթ. 10-11, բնագիր, ձեռագիր:

N 37
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՌՈՒՍ ՋԻՆՎՈՐՆԵՐԻՑ ԱՊՐԱՆՔ ԳՆԵԼԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մայիսի 1915թ.

Ամբողջ ժողովուրդին բացարձակապէս կ՚արգելեմ զինուորներէն և հայ կամաւորներէն ոևէ ապրանք, կենդանի և այլ իրեղէններ գնել:

Գնուած ապրանքները գողնալի ըլլալուն համար, ուր որ տեսնուին գրաւուելով տէրերուն պիտի յանձնուին, և գնողներն ալ ծանր պատիժներու պիտի ենթարկուին:

Վանի նահանգապետ Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, թ. 3, տպագիր օրինակ:

N 38
Ա. ԽԱՆԻԿՅԱՆԻ ԵՒ Մ. ԳԱՅՈՒՄՋԻՊԱՇՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՓԼԱՏԱԿՆԵՐԻ ՏԱԿ ՄՆԱՑԱԾ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏՕՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 302 *16 մայիսի 1915 թ.*

Վան

Վսեմաշուք կառավարչապետ

Արտօնագրեալքս՝ Խանիկեան Աբրահամ և Գայումջիպաշեան Միհրան, մեր վառուած խանութներու փլատակներու տակ մնացած գործիքներ դուրս բերելու համար պետք եղած արտօնութիւն տալնիդ կը խնդրենք:

Յարգանօք՝

Աբրահամ Խանիկեան
Միհրան Գայումջիպաշեան

Մակագրութիւն. *Արխիւ: 16 մայիսի*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 5, բնագիր, ձեռագիր:

N 39

ԾՎՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՔՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑԻՑ ԿՈՂՈՊՏԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

16 մայիսի 1915 թ.

Պ. կառավարչապետ

Ստորագրեալներս Ծվստանէն ըլլալով, քիւրքերէն ու քիւրդերէն ամբողջովին թալանուած ու կողոպտուած ենք: Երբ ուէ տեղ մեր տաւարները գտեր ու բերել կուզենք մեր ձեռնէն կառնեն, ոչ միայն ռուսական կօզակներ, նոյնիսկ մեր տեղական զինուորները ալ նոյն բանը կընեն:

Հետևաբար կը խնդրենք, որ արտօնագիր մը տաք մեզի, որպեսզի մեր ապրանքները կամ տաւարները գտած պարագային ոչ մէկ մարդ իրաւունք չունենայ մեզմէ խլել:

Բաց ատկի, բերդակցի գիւղացիները մեր ապրանքները թէ իրենց գիւղ և թէ գիւղին մէջ պահած ու չեն ուզեր ցոյց տալ: Կը խնդրենք, որ նոյնպէս հրամանագիր մը տաք, որպեսզի այդ պահուած ապրանքները կրկին մեզի վերադարձնեն:

Մնանք յարգանօք՝ ծվստանցիներ

Մակագրություն. *Յանձնել գավառային վարչութեան:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 8, թ. 10, բնագիր, ձեռագիր:

N 40

ՀԻՐԾ ԳՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՔՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՉԵՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԽԼՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 279 *16 մայիսի 1915 թ.*

Վան

Վսեմ կառավարիչ պ. Արամ.

Ձեզ լաւ ծանօթ է, որ Հայոց Ձորի Հիրճ գիւղ մեծ մաս քիւրտ էին, մնացած, փոքր մաս հայեր: Պ. Իշխանի սպանումէն վերջ 50 հոգիի մօտ տղամարդեր սպանուեցան քիւրդերէն: Մենք մնացած ենք 12 հոգի՝ բայց չենք համարձակեր գիւղ մտնել, որովհետև քիւրդեր սարերու վրայ են և մինչև անգամ անցեալ օր Անկշտանց գիւղի մէջ մի քանի հատ հայ սպանուած են: 150-ի մօտ կին և երեխայ անօգնական մնացած են գիւղի մէջ, անօթի և անճար, իսկ մեր ստացուածքներ, տաւարն ու մալեր մի մաս քիւրդեր փճացուցին, մի մասն ալ կեմցիներ և խոսպցիներ տարած են: Այս խնդրագրով կը խնդրենք ձեզմէ առաջին, մեզի կամ գէնք տայիք՝ որ մենք կրնայինք գիւղ մտնել, կամ գէնքով մարդ ղրկէիք, երկրորդ անօթի

ընտանիքներուն ճար մը ընէիք կամ մեր ապրանքները՝ լծկան ու տաւարը կեմցիներէն առնէիք ու մեզի տայիք՝ որ մենք կրնայինք ապրել:
Յարգանօք Հիրճ գիւղացի վասն անգրագիտութեան

Յարութիւն Ապօեան, Ծերուն Թիւթիւճեան,
Նշան Պաղտասարեան, Փայէղ Շահինեան,
Աւոմ Վէրտօեան, Ենօք Պետօեան

Մակագրութիւն. *Գիւղ տեղատրելու համար զէնք կամ զինաւոր, պատասխանատու:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, բ. 81 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 41
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ Պ. ԼԵՎՈՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ԽԱՎԵՆՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉԻՆ ԿՈՂՈՊՏԱԾ ՉԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 271 *17 մայիսի 1915 թ.*

Сегодня приблизительно в 10 часа утра шел транспорт верблюдов в Ван в сопровождении конвоя. Конвой этот, не доходя до сел.Аванц, встретил крестьянина сел. Хавенц (шедший в свою деревню) и потребовав от последнего оружие и получив отказ, ограбили его, избили чуть ли не до полусмерти и отняли револьвер системы "Маузер", удалились.

В виду этого, покорнейше прошу Ваше превосходительство распорядиться о наказании означенных чинов и о возвращении ограбленных револьвера и обувь.

За губернатора гор. Вана и округа
его помощник ***П. Левонян***

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.14, բ.6, բողոն, ձեռագիր:

N 42
ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՇՏԱՔԻ ՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔԱՂԱՔԻ ՏՆԵՐԻ ՄՈՏՈՎ ԱՆՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԸ ԱՆՎՆԱՍ ՊԱՀԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

17 մայիսի 1915 թ.

Сегодня вновь вырезали у ворот кабеля. Начальник отряда приказал объявить жителям, что за унесеня кабеля, пролегающих мимо домов,

будут привлекаться владельцы их, как к материальной ответственности, так и к личной.

Его превосходительство после многих бесплодных обращений к Вам по охране кабеля, находит этот способ достижения цели более целесообразным.

За начальника штаба Баязетского отряда
подполковник[75]

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.61, թ.9, բնագիր, ձեռագիր:

N 43

ԱԼՅՈՒՐ ԳՅՈՒԼԱՊԵՏԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԹԱԼԱՆՎԱԾ ՀԱՄԱԳՅՈՒԼԱՑԻՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

18 մայիսի 1915 թ.

Վսեմ. կառավարչապետ

Վերջին կռիւների առթիւ Ալիւր գիւղից տարուած գերիներ մօտ 700 հոգի 2 օրէ ի վեր վերադարձեր են գիւղ. ատոնց տղամարդիկ սպաներ են, իրենք թալանուած, կողոպտուած և ապրուստի տարրական միջոցներէն զուրկ են:

Կը խնդրենք, որ այդ կարօտեալներին պատսպարելու և սնուցանելու համար ոևէ կարգադրութիւն ընէք:

Մնամք յարգանօք՝ Ալիւր գիւղացիներ

Ռէս Արշակ Օխիկեան
Արշակ Մաղաճեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 5, բնագիր, ձեռագիր:

N 44

Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

18 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ տէր նախագահ Վանայ շրջանային վարչութեան

Այրացաւեր ս. Յակոբ եկեղեցւոյ և վարժարանի վերաշինութեան համար խորհուրդս ամենէն առաջ ու աւելին ատաղձի դժուարութեան հանդէպ գտնուելով ներկայ խնդրագրով կը դիմէ Ձեր վսեմութեան, որ շնորհի անէք արտօնել մեզ շրջակայի այրող տասն լքած սեպհականութեններէն պէտք եղած ծառեր կտրել և սկսել գործն:

Վստահ ենք, որ այս դիւրութիւն պիտի տաք մեզ էլ, որով կարողանանք յիշեալ աւերակներ վերաշինելով՝ բնակելի դարձնել տարիներէ վեր լքուած շրջապատի հայ բաղեր:

Խորին յարգանքներով՝

Դիւան ս. Յակոբ եկեղեցւոյ բաղականութեան

Ստենադպիր՝[76]
Ստենապետ՝ Գ. Պարիկեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, բ. 2, բնագիր, ձեռագիր:

N 45
ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 24 *18 մայիսի 1918 թ.*

Командующий Кавказской Армией утвердил назначение Арама Ванским временным губернатором с тем, чтобы он подчинялся военной власти, а именно начальнику гарнизона и чтобы через Арама передавались все распоряжения от военной власти.

Начальник отряда генерал-майор Николаев

ՀԱԱ, ֆ.1267, ց.2, գ.158, բ.1, պատճեն, ձեռագիր:

N 46
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՉՀՐԿԻՋՎՈՂ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԸ ԳՏՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

19 մայիսի 1915 թ.
Վան

Պ. Արամ
Նահանգապետ Վանայ

Մեր հրդեհուած պաշտօնատան թէ դրամի, և թէ դրօշմաթուղթերու երկու հատ երկաթեայ արկղները փլատակներու տակէն դուրս հանելու համար երկու անգամ պեղումներ կատարել տուինք, բայց դժբախտաբար արկղներէն և ոչ մի հետք չը գտնուեցաւ: Եվ որովհետև յիշեալ արկղներու մէջ բաւականաչափ դրօշմաթուղթ, մասնաւոր դրամ և կարևոր թուղթեր կային, կը խնդրեմ, որ հրաման տայիք քաղաքի ոստիկանական շրջանակի տեսչութեան, որպէս զի պէտք եղած խուզարկութիւնը ըճեղով՝ յիշեալ երկու երկաթեայ դրամարկղները ուր որ է դուրս հանուին: Մեր դրամարկղները թէթև և փոքր լինելով, աստին անդին փոխադրուելու դիւրութիւն կար և կը կարծուի, որ քաղաքի մէջ պէտք է լինի:

Տնօրէն Հանրային պարտուց վարչութեան՝ Խաչիկ Ս. Արծրունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, բ. 4, բնագիր, ձեռագիր:

N 47

ՎԱՆԻ ՊԱՐԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԺՈՂՈՎՆԵՐ ՄՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՅԱԶՈՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 29 *20 մայիսի 1915 թ.*

Начальник гарнизона приказал поставить Вас в известность, что для устройства всякого рода общественных собраний необходимо каждый раз испрашивать разрешения у Начальника гарнизона, представляя подробную программу.

Комендант города сотник Успенский

Մակագրություն. Ամեն մի հասարակական հավաքույթի համար յայտանել գեներալին և նրա թոյլտւութիւնը ստանալ: (Явочным порядком)

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.19, թ.9, բնագիր, ձեռագիր:

N 48

ՎԱՆԻ ՊԱՐԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՏՈՒԿ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ ՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N28 *20 մայիսի 1915 թ.*
Վան

Начальник гарнизона приказал объявить жителям города, что с наступлением темноты выходить из домов без особых удостоверений, выдаваемых Окружным управлением лицам городского управления – строго воспрещается.

С 22[րդ] сего мая вышеуказанное обязательное постановление входит в силу и лица, не имеющиеся удостоверений, с наступлением темноты будут арестовываться патрулями.

Комендант города Вана сотник Успенский

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.19, թ.10, բնագիր, ձեռագիր:

N 49

ՆՈՐԱՇԵՆԻ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

20 մայիսի 1915 թ.

Վսեմ. Վանի Նահանգապետ պ. Արամին

Նորաշէնի ս. եկեղեցին իբրև կեդրոնական եկեղեցի, իբրև հայաշատ խիտ ազգաբնակութեան կեդրոն, միշտ ունեցել է իր կարևորութիւնը և որմէ միշտ մեծամեծ պահանջներ արուել է և կարուին, բայց դժբախտաբար, եկեղեցիս իր կալուածներու և հատյքներու պակասի պատճառով չի կրցած գէթ ամենափոքր մասին կանոնաւոր բաւարարել:

Ասկէ վերջ, երբ աւելի փայլուն շրջան մը բևակոխելու յոյս մը ունինք, այդ պահանջներն ու պէտքերը պիտի կրկնապատկուին և մենք ասկէ վերջ այդ բոլորը հոգալու անկարելիութեան առաջ պիտի գտնուինք:

Ինչպէս Ձեզ յայտնի է ս. եկեղեցիս իր ննջեցեալները տեղատրելու տեղը, գերեզմանոցը չունի, եղածը ամբողջապէս բռնուած է, մանաւանդ այս կռիւներու ընթացքին, այնպէս որ կը պարտաւորուինք մէկի ոսկորները խախտել, քանդել, միւսին տեղ տալու համար: Նմանապէս դպրոցիս զբօսատեղին, որ մասնաւոր անհատի կը վերաբերի, գնելու համար 70-80 ոսկիի կը կարօտի: Գաղթականները տեղատրելու համար արդէն խարխուլ գրասեղանները աւրուեցան և գործածութիւնէ դադրեցան: Եկեղեցւոյ միակ կալուած խանութները և խորհրդարանը բլելու ենթակայ են: Իսկ նախկին տարիներէն մինչև այսօր հարիւր ոսկիի մօտ պարտքի ծանրութեան տակ կը գտնուինք:

Այս բոլորը գէթ փոքր չափով թեթևեցնելու համար կուգանք խնդրելու Ձեզմէ, որ մօտ դաշտի մէջ քիւրքերէն լքուած արտերէն մէկը և կամ այլ հողամաս մը իբրև գերեզմանատուն տրամադրելի ընէիք, իսկ աւերուած շէնքերու և այլ պէտքերու համար թոյլատրէիք քաղաքապետութեան տրամադրութեան տակ գտնուած ծառերէն պէտքի չափով օգտուել:

Դիւան քաղաքականութեան
Նորաշէն ս. եկեղեցւոյ Ատենապետը[77]
*Ատենապետ՝ **Մ. Մկրեան***

***Մակագրություն.** 1. Կառավարչատան դէմ եղող քուրքի տանն խանութներ շինել:*
2. Յարմար գերեզմանատեղի մը գտնել և յայտնել Տնտ. մարմնին:
*3. 200 ծառ կտրելու իրաւունք տալ: **Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 50
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

7/20 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ պ. Արամ
Արժանընտիր կուսակալ Վասպուրականի

1 նոյեմբեր և 5/18 մայիս թուակիր աղերսագրովս խնդրեցի Ձեր վսեմութիւնէն, որ Ընդհ. պարտուց վարչութիւնը[78], միջազգային կազմութիւն մը լինելով, բարեհաճէիք շուտով կարգադրութիւն մ'ընելով, յանձնել մեզ աղի ամպարները և տնօրէնութիւնը նախկին կազմի պաշտօնավարելու իմ երեք ընկերներու հետ: Թէև բերանացի խոստացուեցաւ երկու օրէն կարգադրութիւն ընել, բայց կարգադրութիւն մը չ'ըլլալով հանդերձ, այսօր գացի քաղաք և տեսայ, որ պատրաստ 1.400.000 էն աւելի աղին 2/3 էն աւելի, դժբախտաբար, եազմայ[79] եղած է և այս ի վերջոյ պիտի պատճառէ աղի սով մը:

Ուստի, եթէ պիտի ճանչուի Ընդհ. պարտուց տնօրէնութիւնը իբրև միջազգային կազմութիւն մը, բարեհաճէիք մեզ յանձնել տնօրէնութիւնը և Ձեր աջակցութիւնը, որպէս զի ըստ առաջնոյն պաշտօնավարենք և եթէ չը պիտի ճանչուի, հաճէիք նոյնպէս մեզ պաշտօնապէս իմացնել որևէ պատասխանատուութենէն զերծ մնալու համար:

Խորին յարգանքներով՝
Տնօրէն ընդ. պարտուց վարչութեան Վանայ և ենթակայի

Խաչիկ Ա. Արծրունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թ. 6, բնագիր, ձեռագիր:

N 51
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ Օ. ԿԱԿՈՍՅԱՆԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

N 605 — 21 մայիսի 1915 թ.

Վսեմ կառավարչապետ!

Ստորագրեալիս փեսան՝ կեմցի Օհանէս Կակոսեան անցեալ օրեր 15-20 հոգիով Նորդուզ երթացած միջոցին ռուս զօրքերի կողմէ կը ձերբակալուին: Յետոյ բոլորին բաց կը թողնին, իսկ փեսայիս տասնոց[80] զրաւելէն յետոյ՝ այժմ հոս բերած և ռուս տեղայս հրամանատարի քով բանտարկուած են:

Ուստի կը խնդրեմ, որ միջնորդէք և ազատէք փեսայիս և խնդիրը ի մտոյ քննէք:

Մոռացայ հեշտել, որ անցեալ տարի ամերիկայէն վերադարձած է և այդ փաշբորտը քովն է եղած բռնելու միջոցին և աւելի ծանրացած են այդ խնդրի վրայ:

Կրկին կը խնդրեմ, որ պէտք եղածը տնօրինէք:

Մնամ յարգանօք՝ հայկավանքցի ***Սիմոն Խաչատուրեան***

Մակագրութ՛իւն. *պ. Պարոյրին*
Բանտարկութեան խնդրանով գրել գեներալին: Գաւառ[ների] Դիւան՝ ***Արմենակ Փոխանեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 64, բնագիր, ձեռագիր:

N 52
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Ա. Մ.ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՈՍՏԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

22 մայիսի 1915 թ.
Վան

Имею честь сообщить Вашему превосходительству, что с Вашего разрешения еду с г. Вартаном сегодня в Восган. В дни моего отсутствия меня будет замещать прикомандированный ко мне адьютант 2-й Арм. дружины Паруйр Дживанович Левонян.

Губернатор гор. Вана и округа ***Арам***
Секретарь канцелярии

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.46, թ.2 և շրջ., բողոն, ձեռագիր:

N 53
Հ. ԳԱԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵՄՆԸ ԻՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՉՁԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՋԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

N 27 *22 մայիսի 1915 թ.*

Վանի շրջանային վարչութեան պ. Նահանգապետ

«Աշխատանք»-ի վերջին թուի մէջ Ոստիկանական տեսչութեան կողմէ պաշտօնապէս յայտարարուած զեկուցման մէջ զարմանօք տեսայ, թէ ինչպէ՞ս գողութեան խնդրով մեղադրուած է մը նոյն Տեսչութիւնն, որպէս տուգանք գումարմ է գանձած և այդ ձևով իբր թէ զինք պատժած էր: Ակներև է, որ գողութեան խնդիրը ուղղակի մեր պաշտօնին հետ առնչութիւն ունեցող խնդիր մը ըլլալով, նոյն Տեսչութեան իրաւասութենէն դուրս է: Երբ երբէք իւրաքանչիւր պաշտօնատուն չլմբռնէ և չը գործէ համաձայն

իրաւաբանօրէն իրեն տրուած իրաւասութեանց՝ բախում և գործերու խառնակութիւն բնականաբար ծայր պիտի տայ: Հետևաբար կը խնդրուի, որ զգուշացնէք զիրենք՝ նաև ազդարարէք, որ գանձուած տուգանքը նոյնութեամբ պաշտօնեութեանս յանձնուի:

Հրանտ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 15 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 54

ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՎԱՌԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

22 մայիսի 1915թ.

Վանի շրջանի նահանգապետ Վսեմ պ. Արամ

Մարտիրոսի կնքած ամբարներ արդէն ոչ մի չափ[81] [հացահատիկ] չկա, որ իր ասածով 200 չափի մօտ ցորէն, գարի և տարեկան կ՛գտնուէր, գիւղացիք ամբողջ բաժանած են իրենց վրայ և իրենց ասածով մէկ մասն ալ ուրիշ գիւղացիք տարած են, միայն 40-50 չափ գարի կազակներ տարած են Նօրտուզ երթալու ժամանակին:

Աստուածաշէն 18 տղամարդեղէն է մնացած, իսկ Կղզի գիւղ 6-8 մարդ, մնացած գիւղերի մասին տեղեկագիր կ՛ղրկեմ մեր գրագիր Երուանտէ ի քեզ:

Եթէ կարելութիւն կա, ազդմ փակցուցէք, որ քաղաքացիներ ընկերութեամբ տեղս գան և նոքա քուրդերու և քիւրդերի ցանքերին տէրութիւն անեն, գիւղացիք իրենց ցանքեր չեն կրնար տիրութիւն անել, որովհետև ոչ մարդ ունին և ոչ տաւար: Մեզ մի կնիք ուղարկէք:

Յարգանքներով Ձերդ Վերին Հայոց Ձորի գաւառապետ

Նշան Նալբանդեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 20, բնագիր, ձեռագիր:

N 55

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉ Կ. ԱՅԵՑՅԱՆՑԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՄՆՊԱՏՇԱՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

22 մայիսի 1915 թ.
Վան

Պ. նահանգապետ Վանի շրջանային վարչութեան

Վանի շրջանային վարչութեան բոլոր պաշտօնատուներու ընդհ[անուր] քննիչութեան մը կարիքը զգալով, Բ[արձր] Նահանգապետութենէդ նոյն պաշտօնը վստահած էիք ինծ և ըստ այնմ՝ 12 մայիս պաշտօնագրով մը հաղորդուած էր բոլոր պաշտօնատուներու:

Ինչպէս նախորդ կառավարութեան ատեն՝ նոյնպէս հայկական կառավարական կազմակերպութեան մէջ, պարտականութիւնը զգացած էի, պաշտօնատուներու գործառնութիւնը յատուկ տեղեկագրով՝ հանդերձ դիտողութիւններով, նահանգապետութեանդ հաղորդել այդու իրաւատութեամբ պարտք համարեցի 21 մայիս թուակիր գրութեամբ մը յանձնարարել պաշտօնատուներու, որ հաճեն գործառնութիւնների տեղեկագրերն ղրկել պաշտօնէութեանս: Բացառութիւն ըլլալով՝ միմիայն պ. քաղաքապետը՝ հաղորդուած գրութեան պաշտօնագրի մը հանգամանք ունենալը առանց ի նկատի ունենալու, որպէս թէ բոլորովին անկախ և միևնոյն ատեն անհամարատու մարմին մը իր գործառնութեանց մէջ, անպատշաճօրէն վերադարձուցած էր:

Երկրորդ անգամ 14 թուահամար պաշտօնագրի իբր պատասխան, նահանգապետութենէդ պաշտօնէութեանս պարտականութիւնը (անշուշտ իրաւատութիւնը ըսել կուգէ) ճշտուած չըլլալը առարկելով, չէ ուզած ճանչնալ ընդ. քննիչի մը հանգամանքը, նոյն իսկ ընդ. քննիչ բառին տառական իմաստն կարենալ ըմբռնելու:

Եթէ փափաքելի է ունենալ անաչառ և միևնոյն ատեն պարտականութեան գիտակից պաշտօնէութիւն մը, որուն կասկած չունիմ երբէք, պ. քաղաքապետին ուղղեալ 5 և մակագրեալ 14 թիւ պաշտօնագրերն Ձեր բարձր նահանգապետութեան ուշադրութեանը յանձնելով՝ պարտուպատշաճ տնօրինութեանը կրսպասեմ:

Ընդ. քննիչ **Կ. Այճճեանց**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 56
ՀՐԱՆՏ ԳԱԼԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1032 *22 մայիսի 1915թ.*

Պ. նահանգապետ

Ի նկատի ունենալով, որ երեկուայ նահանգային ժողովի որոշումով ընդհանրապէս դատարանի և մասնաւորապէս ընդհ. դատախազութեան անկախութիւնը խախտուեցաւ, նաև վերջինս անկարող համարելով անկախապէս գործելու, ընդհ. քննիչը խնամակալ կարգուեցաւ՝ այդ որոշումը դեմ համարելով արժանապատուութեան՝ որով միայն պայմանաւորուած է հանրային օգտակար գործունէութիւն մը, ներկայիս ստիպուած եմ հրաժարվելու ինձի տրուած ընդհ. դատախազութեան պաշտօնէն և կը խնդրեմ անմիջապէս փոխանորդ նշանակել, որպէս զի թուղթերս ըստ օրենքի իրեն փոխանցեմ:

Յարգանօք՝

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 26, բնագիր, ձեռագիր:

N 57

Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԲԵՐԿՐԻ ԵՒ ԱԲԱՂԱ ՎԱՃԱՌՔԻ ԱՊՐԱՆՔ ՏԱՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

22 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ Նահանգապետ Վանայ

Համաձայն Իգդիրու գաւառապետի և ինտենդանտստվոյի պալկովնիկ[82] Պարանովսկու վկայականներին՝ ունեմ առնտուր պատերազմի դաշտում, զօրաբանակի մէջ: Ի նկատի ունենալով Աբաղայում և Բերկրիում բնակտղ հայերի վիճակը, որ բոլորովին զուրկ են հագուստից և խիստ կարիք ունեն ախտարիայ[83] ապրանքի: Ուստի նրանց աղերսանքին մտիկ տալով, տեղւոյս վաճառականներից 3 բեռ ապրանք առնելով, ցանկութիւն ունեմ տանելու Աբաղայի դաշտ և Բերկրի՝ այդ ապրանքները բարեխղճօրէն ծախելու համար:

Ուստի խնդրում եմ տալ ինձ վկայական մը, որ ես տանեմ այդ ապրանքները ծախելու, 3 բեռ մանուֆակտուրայի[84], մելօչնիի[85] և կալաճերիյինի[86], Բերկրիի և Աբաղայի գիւղերը:

Յարգանօք Իգդիրի բնակիչներից առևտրական

Յովհաննէս Վարդանեանց

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 58

Ե. ՌՇՏՈՒՆՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՒ ՈՐԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՏՈՒՐՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10/23 մայիսի 1915 թ.

Արժանայարգ Տիար,

Ձեր բարեհաճ արտօնութեամբ պիտի համարձակիմ Ձեր ուշադրութեան յանձնել հետևեալ երկու կէտերը, որոնք հաւանաբար, արդէն նկատած ըլլալու էք:

1. Մեր հերոս կամաւորներու վիճակը, որչափ որ կրցած եմ հասկնալ, անոնք կ'ստանան օրական միայն հաց մը առանց կերակուրի: Ապահովաբար մեծ ամօթ ու անպատուութիւն է մեզի՝ հասարակութեան, թողուլ այդ հերոսները ատանկ վիճակի մէջ: Ասոր հետ միասին հասկցեր եմ, որ չարաչահ անձեր պարզապէս կը չահագործեն զանոնք, ունեցողներուն թէ

հակիք, թէ հաց, տուղ տուղ ծախելով, և լուացքի համար ալ, 12 կտոր լաթին 15 դահեկան կ'առնեն:

2. Հիւանդներ և վիրաւորներ Նորաշէնու դպրոցին կետրոնականի մէջ և այլուր ըստ արժանւոյն չեն հոգացուեր, ոչ պետք եղած սնունդ և ո՛չ ալ հիւանդապահ կայ: Ճիշտ ատենն է, որ բոլորս ալ ցոյց տանք՝ ո՛չ միայն կրնանք համբերատարութեամբ ու զոհողութեամբ կռուել ազատութեան համար, այլ ապրել ազատ կեանք:

Մոռնալ յարմար պիտի չ'ըլլայ, որ ամբողջիս վրայ ալ տուրք դրուի ըստ կարողութեան և այդ եկամուտէն հոգացուին թէ կամաւորներ և թէ հիւանդներուն ու որբեր:

Կը յուսամ, որ այս հապճեպօրէն գրուած կէտերը ներողամտօրէն ընդունուած պիտի առնուին, եթէ արդէն առնուած չեն:

Յարգանօք՝ Ե. Ռշտունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 10, բնագիր, ձեռագիր:

N 59

ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ Մ. ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 մայիսի 1915 թ.
Վան

Պ. Նահանգապետ

Յառաջիկայ տարեշրջանին նահանգիս դպրոցներն բանալ կարողանալու համար անհրաժեշտ է այժմէն ձեռնարկել կարգ մը անյետաձգելի կարգադրութիւններու:

Բայց, կրթական տեսչութիւնս բնականաբար չպիտի կրնար գործի ձեռնարկել, առանց ձեռք բերած ըլլալու Ձեր կամ վարչական խորհրդոյ կողմէ վաւերացուած առժամեայ կրթական կանոնագրութիւն մը:

Կրթական ժողովս պարտականութիւն կրզգայ մշակել նպատակայարմար կրթական կանոնագրութիւն մը և ուսումնական ծրագրեր ու ներկայացնել զանոնք վաւերացման համար:

Այս աշխատութեանց սկսելէ առաջ՝ կարևոր նկատեցինք մշակել հիմնական սկզբունքներ, որոնցմէ պիտի առաջնորդուենք մեր բոլոր գործառնութեանց մէջ:

Յարմար դատեցինք տարրական դպրոցներու վրայ կեդրոնացնել նախ մեր ամբողջ ուշադրութիւնը ու յետոյ անցնել բարձրագոյն կրթութեան վերաբերեալ հարցերու:

Ներփակ կը ներկայացնենք մեր մշակած առաջնորդող սկզբունքներու առաջին մասը, ուր ջանացած ենք ճշտել կառավարութեան ու

համայնքներու փոխադարձ յարաբերութիւնները տարրական կրթութեան գործին մէջ:

Հաճեցէք, պ. նահանգապետ, Ձեր յարմար դատած միջոցաւ ամենալուրջ նկատողութեան առնել այս գրութիւնը և իւրաքանչիւր յօդուածի մասին կրթական տեսչութեան ալ բացատրութիւնները լսելէ ու հարկ դատած փոփոխութիւնները կատարելէ վերջ՝ վաւերացնել զայն ու վերադարձնել մեզ ի գործադրութիւն:

Յայտնի է, թէ բացարձակապէս անկարելի է կրթական տեսչութեան համար իր պաշտօնին պարտականութիւնները կատարել, առանց առաջնորդուելու վարչութեանդ կողմէ վաւերացուած այսպիսի հիմնական սկզբունքներէ:

Կրթական տեսուչ՝ Մ. Միմասեան

Առաջնորդող սկզբունքներ տարրական դպրոցներ
Ա.- Կառավարութեան ու համայնքներու փոխադարձ
յարաբերութիւնները

1.- Տարրական երկսեռ կրթութիւնը պարտաւորիչ ու ձրի է: Կեդրոնի Կրթական Տեսչութեան կըվերաբերի այս սկզբունքը իրականացնելու պարտականութիւնը:

2.- Տարրական կրթութիւնը երկու սեռին համար ալ կը կը տևէ դպրոցական վեց տարի.- վեց տարեկան հասակէն մինչև 12 տարեկան:

3.- Տարրական կրթութեան ընդհանուր պիւտճէն կը գոյանայ երեք աղբիւրներէ. ա.- տեղական կրթական տուրք, բ.- համայնքներու ունեցած կրթական հաստատներ և նուէրներ, գ.- կեդրոնի կառավարութեան նպաստ:

Հարիւր տունէ պակաս բնակիչներէ բաղկացած գիւղերու տեղական կրթական տուրքը կը կազմէ իրենց դպրոցներու տարեկան պիւտճէին մէկ երրորդ մասը: Պիւտճէին մնացած երկու երրորդ մասը կը վճարուի կեդրոնի կառավարութեան կողմանէ՝ գիւղին ունեցած կրթական հաստատներէն գոյացած գումարը զեղջուելէ վերջ: Միւս հարիւր տունէ աւելի բնակիչներէ բաղկացած գիւղերու տարեկան պիւտճէին կէսը կ'ստացուի տեղական տուրքերէ և մնացած կէսը կեդրոնի կառավարութենէն ու կրթական հաստատներէ:

Հինգ հարիւր տունէն վեր բնակչութիւն ունեցող քաղաքներու կրթական պիւտճէին երկու երրորդը կը գոյացուի տեղական կրթական տուրքերով և մնացած մէկ երրորդը միայն կեդրոնի կառավարութենէն՝ տեղական կրթական հաստատները զեղջուելէ վերջ: Տեղական կրթական տուրքերու գանձումը կը վերաբերի կեդրոնի կառավարութեան, իսկ մատակարարումը՝ կրթական տեսչութեան:

4.- Համայնքի մը փոքրամասնութիւնը կազմող որևէ հատուած, ինչպէս նաև որևէ հայ կամ օտար անհատ կամ ընկերութիւն կրնայ անջատ դպրոց բանալ, երբ բացի ընկերութիւններէ միւսները նիւթական տէր տաս մարդ ներկայացնեն, որ անձնական ստորագրութեամբ երաշխաւորեն պահանջուած պիւտճէի իրենց կողմէ հայթայթումը և ստանան կրթական տեսչութեան արտօնագիրը:

Տեղական կրթական տուրքէն բաժին պահանջելու իրաւունք չունին այսպիսի դպրոցներ, բայց կրնան իրենց դիմող աշակերտներէն թոշակ պահանջել: Կեդրոնի կառավարութիւնը Կրթական տեսչութեան քննութեամբ ցոյց տրուած արդիւնքին վրայ՝ այդ համայնքին տրուելիք նպաստի գումարէն աշակերտաց թուոյն համեմատական բաժին մը պիտի հանէ այսպիսի դպրոցի մը: Այսպիսի դպրոցները պիտի ենթարկուին Կրթական տեսչութեան ճիշտ այնպէս, ինչպէս ընդհանուր տարրական դպրոցները: Գոհացուցիչ արդիւնք չտրուելու պարագային՝ Կրթական տեսչութիւնը իրաւունք ունի ետ առնել իր տուած արտօնագիրը այսպիսի ոևէ դպրոցէ մը:

5.-Ամեն ուր որ իրարու մօտ փոքր գիւղեր կամ մեծ իսկ գիւղի մը մօտ փոքր գիւղեր կը գտնուին՝ Կրթական տեսչութեան կատարած քննութեան հիման վրայ պիտի միացուին անոնց դպրոցները յարմար գիւղ մը: Քիչ մը հեռու գիւղերու փոքրիկները փոխադրելու միջոցներն ալ գտնուելու և գործադրուելու են Կրթական տեսչութեան միջոցաւ՝ ի հաշիւ այդ գիւղերու կրթական պիւտճէին:

Մի քանի գիւղերու հաւաքաբար կազմած դպրոցը՝ թէ վարչութեամբ և թէ ամէն տեսակէտով պիտի համարուի իբր մէկ համայնքի մը դպրոց:

6.-Համայնքի մը դպրոցները կը կառավարուին հինգ անդամէ բաղկացած հոգաբարձութիւններու կողմանէ: Հոգեբարձուներու երեքը կ՛ընտրուին ծնողներու, իսկ երկուքը կրթական տուրքը վճարողներու կողմանէ: Իգական սեռը իբրև ծնողք հոգաբարձու ընտրելու և ընտրուելու իրաւունք ունի:

7.-Կեդրոնի Կրթական տեսչութեան վերապահուած է ուսուցչական վկայական տալու, ուսուցչական աստիճանական դասատրում ընելու, ոճիկ սահմանելու, ուսումնական ծրագրեր ու հրահանգներ մշակելու և անոնց գործադրութեան հսկելու, դասագրքեր ընտրելու և հարկ տեսնուած պարագային պատրաստելու և հրատարակելու, գործիքներ գնելու և դպրոցներու ընդհանուր վիճակը պարբերաբար քննող ու տեղեկագրող քննիչներ նշանակելու իրաւունքը:

Իսկ հոգաբարձութեանց կը վերաբերի արտօնուած ուսուցիչներու մէջէն իրենց յարմար դատածները ընտրելու և հետերնին պայմանաւորուելու, թոշակ վճարելու, տեղական պայմաններու համեմատ՝ ուսումնական ծրագրի ընդհանուր ուղղութենէն չշեղելու պայմանաւ, մասնաւոր փոփոխութիւններ առաջարկելու և Կրթական տեսչութեան արտօնութիւն ստանալու, դպրոցի ընդհանուր վիճակի վրայ հսկելու, աւագ ուսուցչին

հետ խորհրդակցութեամբ՝ ոչ-ուսումնական ամէն կարգադրութիւններ ընելու իրաւասութիւնները:

Հոգաբարձութեան և ուսուցիչներու միջև ծագում առնող վէճերը իրենց մէջ իրաւախոհութեամբ չկարողանալ կարգադրելու պարագային, մէկ կամ միւս կողմը կրնայ դիմել Կրթական տեսչութեան՝ որու տուած որոշումը կամ վճիռը պարտաւորիչ է երկու կողմին համար ալ:

Հոգաբարձուներու և ուսուցիչներու միջև կնքուած պայմանագրերն կը վաւերացուին Կրթական տեսչութեան կամ իր ներկայացուցչի կողմէ:

8.- Ամէն ջանք ու զոհողութիւն պիտի ըլլայ առողջապահական և մանկավարժական պայմաններն լրացնող դպրոցական շէնքեր կառուցանել: Կրթ. տեսչութիւնը կընտրէ գիտը, կը սահմանէ ընդարձակութիւն և կատայ շէնքին յատակագիծը: Համայնքը պէտք է հայթայթէ գետին ու շինութեան ատաղձները, իսկ կենտրոնի կառավարութիւնը պէտք է իր դրամական միջոցներով հայթայթէ ճարտարապետ և աշխատաւոր, նոյնպէս կահաւորումը:

Գիւղական բոլոր դպրոցներ պիտի ունենան իրենց կից ուսուցչի բնակարան մը ու պարտէզ մը, երկուքն ալ առանց վարձքի կը տրուի աւագ ուսուցչի տրամադրութեան տակ: Պարտէզը կը ծառայէ աշակերտաց պարտեզամշակութեան վարժութիւններուն, մշակութեան ծախսերն ու արտադրութիւնները աւագ ուսուցչին վերաբերուելու պայմանաւ:

9.- Համայնքի մը դպրոցական պիտոյքն կը սահմանուի՝ տեղական տուրքէն գոյացած գումարին համեմատ՝ ըստ 3-րդ յօդուածի դրամատրութիւններուն:

Քսան տարեկանէն վեր ամէն արու իբրև կրթական տուրք կը վճարէ տարեկան երկու րուբլի: Բացարձակ աղքատներուն ինկած բաժինը կը բաշխուի համայնքին բաղդատաբար բարեկեցիկ անդամներուն վրայ:

10.- Մարդահամարի դիւանը պարտաւոր է ամեն տարի, մինչև մայիս ամսու 15-ին, Կրթական տեսչութեան հաղորդել ցուցակները կրթական տուրք վճարողներու և 6-12 տարիքի մէջ գտնուող երկսեռ մանուկներու:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 24, թթ. 3-4, գ.16, թ. 30-32, բնագիր, ձեռագիր:

N 60

«ՋԻՆԳԵՐ» ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԱՎԵՐԱԹՈՒՂԹ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 մայիսի 1915 թ.
Վան

Մեծայարգ պ. Արամ Մանուկեան,
Վասէմ նահանգապետ Վանի և շրջանի

Յարգելի կառավարիչ

Պատիւ ունեմ ներկայիս իմացնելու Ձեզ, որ՝ ստորագրեալս, լինելով ամերիկեան «Սինկէր» կարի մեքենաներու ընկերութեան Վանի մասնաճիւղի պատասխանատու գործակալը սոյն ընկերութեան անունով կուգամ խնդրելու Ձեզ, որ հաճէիք պաշտօնական վաւերաթուղթով մը հաստատել, թէ անցնող 7/20 ապրիլէն մինչ 3/16 մայիսը տիրող հայ-թրքական կռիւներու ընթացքին, «Սինկէր» կարի մեքենաներու ընկերութեան Վանի վաճառատան և «Տէնիօ»-ին մէջ պատրաստ գտնուած 125-էն աւելի «Սինկէր» կարի մեքենաները իրենց թէ՛ ոտքի և թէ՛ ձեռքի ամբողջական մասերով, պարագաներով և գործիքներով, ինչպէս նաև նոյն վաճառատան կահ-կարասիները, որոնք սոյն ընկերութեան սեփականութիւններն էին, ամբողջութեամբ թալանուած ու հրդեհուած են թիւրքերու կողմէ, որպէսզի տրուելիք Ձեր այս պաշտօնական վաւերաթուղթին միջոցով կարողանամ ընկերութեան քով ապագային պատասխանատու չմնալ:

Սպասելով Ձեր շուտափոյթ և որոշ կարգադրութեան, մնամ յարգանօք

«Սինկեր» կարի մեքենաներու ընկերութեան Վանի մասնաճիւղին կողմէ՝

Արամ Չիթճեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 6 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 61

ԽՈՀԱՊԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ ԱՐՄԵՆԱԿ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿԱՋՄԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

24 մայիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ Վանայ

Տէր

Խօշապ գաւառի մի քանի գիւղերը այցելելու առիթը ունեցած ըլլալով, պարտք կ'համարեմ ներկայ տեղեկագիրը հաղորդել Ձեզ:

Նախ քան այցելածս գիւղերու մասին տեղեկութիւնները տալ, կարևոր կը գտնեմ ընդի. տեղեկութիւններ մը արձանագրել և Ձեր ուշադրութիւնը հրաւիրել:

Ա. Հայ գիւղացիները տակաւ կվերահաստատուին իրենց գիւղերուն մէջ:

Բ. Բոլոր հայաբնակ և քրդաբնակ գիւղերու մէջ հրդեհում տեղի ունեցած չէ բնաւ, սակայն անխնայ կ'քանդուին փայտերը իբրև վառելիք գործածելու համար:

Գ. Ժողովուրդը ընդհանրապէս տարուած աւարառութեան բնազդներէն՝ ընդ[հանուր] լրած է իր իսկ ցանքսերը, արտերը առանց ջրելու կփճանան: Թէպէտ քրդապատկան գիւղերէն բաւական շատ հացահատիկ բերած են, այնուամենայնիւ երկանաքարերով կ'մանրեն և կուտեն,

ամենաանհրաժեշտ աշխատութիւն մ՛իսկ չեն յանձն առներ խանգարուած ջրաղացները նորոգելու: Հետաքրքրութեան համար մտայ մի քանի ջրաղացներ, որոց վերի քարերը միայն մէկ կողմ ձգուած էին, մնացեալը ամբողջութեամբ տեղն ու տեղն կ՛մնային և երկաթ առնակները կ՛դառնային ի զուր:

Դ. Այն գիւղացիները, որոնք նախապէս յաջողած են ոևէ պատրուակով հրազէն կրելու արտօնագիր ձեռք ձգել, ինքզինքնին տուած են միայն և միայն տաւարառութեան և յաճախ այդ վայրագ բնազդին զոհ կ՛դառնան անուժ հայ գիւղացիներ, նման դէպքերու մասին լսեցի Հիւրթիկի մէջ:

Այժմ տանք մասնաւոր տեղեկութիւնները.

1. Խօշապ.-Քոլըրովին անբնակ է և ամայի, դիակները նոտած կ՛մնան դէս ու դէն, բնակելի դարձնելու միջոցներ կան:

2. Ջերնակ.-Քոլորովին անբնակ, մօտ 100 չափ ցանքեր կան:

3. Հիւրթիկ.-50-է աւելի տուներ վերահաստատուած են, մօտ 100 չափ ցանքս կայ հայերուն և քիւրդերուն, գիւղացիները սակայն զէնք չունենալուն համար աւար չեն կարողացած բերել. մինչև իսկ յարձակում կրած են առեղցի և հաւիէսօրեկցի հայ և ասորի հրոսակախումբէ մը, մայիս 20-ին:

4. Փակակեղիկ.-9-10 տուն վերահաստատուած, հայեր ունին 50, իսկ քիւրդերը 120-140 չափ ցանքս, ասոնք բաւ անասուն չունին: Երկրագործ գործիներ հաւաքած են:

5. Ակրակ- 3 տուն վերահաստատուած, մէկ տուն ալ Քոելէն հոն հաստատուած է: Մօտ 80 չափ ցանքս կայ գիւղին սահմաններուն մէջ: Ունի 1 գոմէշ, 4 եզ միայն:

Այս գիւղին մէջ եղած ցանքսերը գրէթէ ամբողջապէս կ՛պատկանին Սէֆէք պէյ անուն քրդի մը, որու տունը նոյն գիւղի մէջն է և հոն եղած բոլոր գոյքերը Քոէլ գիւղացի Օհաննէս անուն մէկը վար դրեր է և դուռները փակել է, յետոյ սպառնացեր է, որ ոչ ոք ձեռք չդպցնէ:

6. Քոէլ.-70-80 տուն վերահաստատուած, մօտ 100 չափ ցանքս ունին, բստ իրենց միայն 7 եզ և 60 ոչխար ունին, սակայն տեղեկացայ, թէ բաւական շատ աւար բերած են, թէև իր կարգին այս գիւղն ալ աւարառութեան կ՛ենթարկուի, որովհետև հոն կ՛բնակի Քոթ գիւղացի Խալիլ պէյը, մի քանի օր առաջ գումաւպաշցի, շուշանցի և տօնեցի գիւղացիներ զինուած նոյն գիւղը մտնելով, կսպառնան Խալիլ սպաննել, ի վերջոյ 200 ոչխար իբր փրկանք վերցնելով՝ կ՛հեռանան:

7. Քոթ.-4 տուն վերահաստատուած, 70 չափ սերմանուած ունին, սակայն բոլորը փճացուած են քիւրդերու կողմէ: Ունին 2 գոմէշ, 5 եզն և 100-է աւելի ոչխար, երկրագործ, գործիքներ հաւաքած են:

8. Պհանց.-7 տուն վերահաստատուած, ունին 100 չափ ցանքս, նոյնպէս փճացուած, ունին մօտ 100 ոչխար, հազիւ 10 տղամարդ կան աշխատելու կարող:

Մնացեալ հայաբնակ գիւղերու մասին շատ մասնաւոր տեղեկութիւններ միայն լսած լինելու համար աւելորդ կ'համարեմ առ այժմ տեղեկագրել:

Կտոր.-որու բնակիչները բաւական շատ, մօտ 5-600 ոչխար և այլն աւար բերած են, տակաւին քրդապատկան գիւղերու սահմաններու մէջ կ'արածեցնեն, մօտ օրերս պիտի վերահաստատուին իրենց գիւղը:

Ինչպէս վեր յիշեցի, կատարեալ անարխիայի մատնուած է ամբողջ գաւառը, եթէ փութով հսկողութեան տակ չ'առնուի և մէկ մաս անկարող գիւղացիներն լծկան հայթայթելու հոգ չ'տարուի, արդէն կորսուած պէտք է համարել:

Այս առթիւ եթէ պէտք կ'տեսնէք աւելի մանրամասնութիւններու, հաճեցէք ունկնդրութիւն մը շնորհել:

Յարգանքներով՝

Արմենակ Տէր-Պօղոսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 4-5, բնագիր, ձեռագիր:

N 62

Գ. ԹՈՒՄԱԽՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ԳՈՐԾՈՒՔԻ ԻՐԵՆՑ ՆԱՎԹԱՀԱՆՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

25 մայիսի 1915թ.

Գործոք

Վանայ Վսեմ Նահանգապետին
պ. Նահանգապետ

Գործոքի շրջակայ գտնուած Նաֆթ-Փէթրոլի հանքը հանգուցեալ հայրս՝ Նիկողայոս աղա Թօխմախեան և ընկերց միջոցաւ, հետախուզութեամբ և ահագին ծախսերով գտնուած լինելը, 98-ական թականներին նախկին կառավարութեան արտօնագրով պաշտօնական խուզարկութեան, խաբիբա[87] ծախսեր և հազարաւոր լիրաներ[88] ծախսուած լինելը ամէնուն յայտնի է: Ի վերջոյ Վանայ կուսակալութեան արտօնագրով «Նիկողայոս Թօխմախեան» և ընկ. սեփականութիւն ըլլալը հաստատելով, շարունակաբար 30 տարիէ աւելի ամբողջ հսրստութիւնիս ալ ատոր վրայ ծախսուած և փճացրած լինելուն հակառակ, Օսմ. կառավարութիւնը բռնի գրաւեց այդ մեր իրաւունքը և Դալի Ֆուատ փաշային փոխանցեց, ինչ-որ հակաօրինական է: Խնդրում եմ պ. Նահանգապետ, նոյն հանքի վրայ ունեցած մեր սեփականութեան իրաւունքը պաշտպանելու համար պէտք եղած տնօրինութիւն և միջոցներ ձեռք առնելիդ:

Խնդրելով յարգանօք՝

Գագիկ Թօխմախեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թ. 6, բնագիր, ձեռագիր:

N 63

Հ. ՋԱՂԱՑՊԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆԻՑ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԱՏՐՃԱՆԱԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

N 780 *25 մայիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ

Այս առաւօտ միայնակ Տարման գիւղ երթալու պարագային, քաղաքի սահմանէն դուրս, Նորատունկներու գլուխ կոչուած վայրը, երեք ռուս զինուորներ յանկարծ զիս ձերբակալեցին և վրայիս ժամացոյցս առնել կուզէին: Մէջքիս կապին մէջ ծրարուած պրանուհիկ[89] ատրճանակս գտան, գրաւեցին և տարան Ա. Բարսեղեանենց տուն՝ իրենց մեծաւորին, ուր անուններս և ատրճանակիս նօմէր նշանակելով, ատրճանակս պահեցին, մինչև որ արտօնագիր ստանամ: Ուստի այս մասին Ձեր կարգադրութիւն կը խնդրեմ:

Մեամ յարգանօք Պարոնիկեան քաղեցի՝

Յակոբ Ջրաղացպանեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 4, բնագիր, ձեռագիր:

N 64

ԱՐՄԵՆԱԿ ՇԱԼՃՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 893 *26 մայիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ

Զօրահանութեան մէջ կառաւարութիւն ինձմէ բռնութեամբ մօտ երեսուն լիրայի ատաղձ տարաւ շինութեանց համար (մասնաւորապէս հիւանդանոցին գործածուած է), և ի փոխան տուաւ մի միայն մրի ստացագիր: Արդ, եթէ հնար է, ի փոխան վերոյիշեալ գումարին արտօնեցէք ինձ կտրելու թիւրքերի սահմաններից ծառեր, որ համապատասխան լինի վերոյիշեալ գումարին, քանի որ 300 լիրայից աւելի կորուստ ունեցայ վերջի կռիւների ընթացքին, և գուցէ այս պիտի լինի իմ ապրուստի միակ միջոցը:

Այս մասին Ձերդ շուտափոյթ կարգադրութիւն կը խնդրեմ:

Յարգանքներով Նալբանդեան քաղեցի՝

Արմենակ Շալճեան

Մակագրութիւն. *Տնտեսական մարմնին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 22, բնագիր, ձեռագիր:

N 65

ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՈԿԱՏ ԿԱԶՄԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 մայիսի 1915թ.
Վան

Տիար Արամ Մանուկեան
Նահանգապետ Վանայ և շրջանի.

Վանեցի զինուորներու ցույց տուած հերոսական քաջութիւն անարգ թշնամիին սարսափ ազդելով՝ մեծ փառք մեղաւ վանեցւոց թէև, բայց ներկայիս մէջ հայրենիքի մեծ մասը տակաւին թշնամիի ոտից կոխան լինելով ճոյն, ոխերիմ թշնամին հալածելու մասին Ռուսաստանէն եկած եռանդուն և ազնիւ կամաւոր հայ զինուորներուն մեր չը մասնակցելը, մեր արեան գնով շահած փառքը նսեմացնելէ յետոյ, մեր ցույց տուած այս քաղաքութիւն և անտարբերութիւն շատ յոռի տպաւորութիւն գործած է ազնիւ կամաւորներու վրա, որոնք իրաւամբ և յայտնի կերպով ամէն տեղ կը խօսին և կը զանգատին այս մասին և թերևս վանեցւոց այս ընթացքը քաղաքացնէ նաև անոնց կորովն ալ: Ուստի սոյն հանրագրով կուգամք խնդրել ձեզմէ, որ ծախքը ոչ զինուորների կողմէն հոգացուելու պայմանով գոնէ 300-ի չափ ճակատ մը կազմուի՝ մասնակցելու համար ազնիւ կամաւորներուն, թշնամին յետապնդելու գործին:

*Փաստաբան՝ **Կարապետ Յարութիւնեան***
*Խժիշկ գիւղի գիւղապետ՝ **Սահակ Մարտիկ***
*Նախկին Չալտրանի[90] գրաշար՝ **Վարդան Յովհաննիսեան**[91]*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 4, բնագիր, ձեռագիր:

N 66

ՀԱՅԿԱԶՅԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴՊՐՈՑԻՆ ՇԵՆՔ ԵՎ ԱՅԳԻ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 866 *26 մայիսի 1915 թ.*

Տէր Նահանգապետ

Վանի Հայկազեան Կեդրոնական վարժարանի[92] պիտոյքն հաստատուն եկամուտներով ապահովելու և ապագային յարմարագոյն շէնքի մը մէջ աւելի բարձր աստիճանի մը հասցնելու համար, վարժարանիս ուսուցչական ժողովը կը խնդրէ Ձեր ազնուութենէն, որ հաճի այդ մասին ատէն յարմարութիւն ներկայացնող Հւսմուտ Աղայի տուներն ու այգիները յատկացնել վարժարանին, ինչպէս նաև դպրոցական գոյքեր պատրաստելու և կահաւորման համար տրամադրելի ընել 400 ծառ:

Եթէ ուսուցչութեան տյն խնդիրը Ձեր հաճութեան կ՚արժանանայ, հաճեցէք արգելել նաև յիշեալ տուներու քարերն ու աղիւսները ածուրդի հանելու գործողութիւնը, որ այսօր կամ վաղը կը լրանայ, որովհետև այդ նիւթերը կարելի է գործածել դպրոցի և դպրոցապատկան կալուածներու շինութեան:

Յարգանօք՝ Հայկազ. Կեղր. վարժ. տնօրինութիւն

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 131, բնագիր, ձեռագիր:

N 67

Հ. ՄԱՐԳՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱԾ ԻՐ ՏՂԱՅԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 930 *26 մայիսի 1915 թ.*

Վան

Վսեմ նահանգապետ Վանայ

Միրավի-Չատըր արտի մը մէջ օշարակ ծախող զաւակիս ճիշտ քով նոյն գործով կը զբաղուին նաև մեր թաղեցի Վարդան Մարտիրոսեան և Խէրան Գրոգըրեան: Երբ կազակ մը վերջիններէս «Գինի կա՞յ» կը հարցնէ, յիշեալները «այո՛» ըսելով գինիի շիշը ձեռքերնին բռնած զաւակիս սեղանի վրայ դրին, որպէս թէ գինի ծախողը տղաս է: Կազակը սակարկութեան ատեն զաւակիս ծխախոտի տուփը (որպէս գինի ծախողին) գրաւեց 15 կոպեկի տեղ: Զաւակս Չախկըլ-Պէպի Ռուսաց հրամանատարին բողոքել կերթայ կազակի ընթացքի համար: Հրամանատարը զաւակէս գինի ծախողները կը պահանջէ և երբ վերջինս կըսէ «փախան», հրամանատարը զաւակս ձերբակալելով՝ նախ կառավարչատունս կը դրկէ, և հոսկէ ալ, ականատեսի մը ըսածին նայելով, կազակի մը հետ տարուած է, թէ ո՞ւր, անյայտ կը մնայ մեզ:

Ա՛րդ, դիմելով ձեր արդարադատութեան, յատկապէս կը խնդրեմ, որ հետախոյզ քննութիւն մը կատարել հրամայէք և զաւակիս ո՞ւր ճամբուել և կամ ո՞րտեղն ըլլալը ստուգելու համար պէտք եղածը կարգադրել հնորհ ընէք:

Խորին յարգանօք Վանայ Միրավի-Չատըրի թաղէն

Յակոբ Մարգիսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 144, բնագիր, ձեռագիր:

N 68

ՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԹՐՔԱԿԱՆ ՍԵՏԱՂԱԴՐԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 մայիսի 1915 թ.

Վան

Տէր նահանգապետ

Ժողովրդի մէջ գտնուող ու գործածուող թրքական դրամներու մասին՝ 1915 մայիս 20 թուակիր (N 24) տեղեկագրով Չեզի դիմում եղած է քաղաքապետարանիս կողմէ, սակայն մինչև այժմ որևէ կարգադրութիւն մեզի հաղորդուած չէ:

Մանաւանդ սև հարիւրնոց և մէքալիք[93] դրամներու մասին մեծ առարկութիւններ կըլլան ժողովրդական առևտուրին մէջ:

Արդ, կը խնդրուի, որ այս տեսակի դրամներու գործածութեան մասին որոշ կարգադրութիւն մ'ընէք և մեզի հաղորդէք, որպէս զի ըստ այնմ ժողովրդին յայտարարուի:

Քաղաքապետ ***Պ. Մօզեան***

Մակագրութիւն. *Այս մասին ոևէ պաշտօնական կարգադրութիւն չենք կարող անել, առայժմ բերանացի կարգադրութիւն արէք:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 15, բնագիր, ձեռագիր:

N 69
ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՓԱԿԱԳՅԱՂՈՒԿԻ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՁԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 մայիսի 1915 թ.
Աստվածաշեն

Վանի Նահանգապետ Վսեմ պ. Արամին

Տէր-Պողոսեան պ. Արմենակի տուած տեղեկութեան համաձայն, կիմանանք, որ Փակակեաղուկ գիւղի բնակիչները Հիւրքուկ գիւղ կը բնակին, ու զէնք չունենալուն պատճառաւ չեն համարձակէր իրենց գիւղ երթալ ու ցանքսերը տիրապետել, արդէն այդ գիւղ անվստահելի ու անապահով տեղ է, այդպէս ալ կը հաւաստիացնեն: Ուրեմն կը խնդրուի, որ մի քանի կտոր զէնք տաք, որ յանձնենք յիշեալ գիւղացիներին, որպէս զի երթան իրենց գիւղ ու ցանքսերը ու գիւղը տիրապետեն:

Վերի Հայոց Ձորաց գաւառապետ ***Նշան Նալբանդեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 14, բնագիր, ձեռագիր:

N 70
ՏԵՐՃԱՍՈՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ԳՅՈՒՂԸ ԹԱԼԱՆՑԻՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԽՆԴԱՆՔՈՎ

26 մայիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ

Կ՛լսուի, որ քանիմ գիւղացիք ևս կազմակերպուած են կրկին մեր եզդի գիւղերէն թալան բերելու, ևան պարսիկներ եկած են Ախռիկներ, Թակուրդի գիւղեր թալանելու և դիտաւորութիւն ունեն ևան մեզ թալանելու, ինչպէս խնդրած ենք մեզի միւսիր մը կարգեցէք, որ միատեղ երթանք մեր ինչքը պաշտպանելու:

*Տէրճամօք գիւղի եզդի **Շամէշ Պիճ Թէմօր**՝ գիւղապետ*

Մակագրութիւն.** Կարգադրուած է: **Արմ. Փոխտանեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 24, բնագիր, ձեռագիր:

N 71
ԿԱՌԿԱՌՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՄԻ ՔԱՆԻ ՕՐՎԱ ՊԱՐԵՆ ԵՎ ՈՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 մայիսի 1915 թ.

Վսեմ պ. Նահանգապետ Վանի

Ըստորագրեալքս՝ Կառկառ գաւառէն կողոպտուած և տված 70 անձէ բաղկացեալ կին, մանուկ, աղջիկ ընտանիքներ լինելով, Քաղաքամէջի կառաւարութեան ամբարի մէջ կ՛բնակինք՝ կենաց ապրուստէ բոլորովին զրկուած: Թէև ձեր փեմութիւն մեզ կ՛հրամայէ Ոստան երթալ, ամէնայն սիրով կ՛ընդունեմք այդ հրաման, սակայն ցաւօք սրտի կ՛յայտնեմք Ձեր մեծութեան, որ մեր մէջէն 15 անձ՝ թէ կին, աղջիկ, տղայ հիւանդ են անօթութենէն և 5 անձ այս երկու երեք օրուան մէջ մեռան: Այս վիճակով մեզ անկարելի կ՛լինի երթալ հոն: Ձեր գթութեան դիմելով մեր թշուառ վիճակի համար, մինչ Ոստան փոխադրուելնուս քանիմ օրուան օրապահիկ տալ կ՛խնդրեմք և, եթէ կարելի է, աւանցի ևաւափարներուն յանձնարարել, որ մեզ և մեր հիւանդներ միասին մի ևաւով մինչ Ոստան փոխադրեն:

Կառկառցի գաղթականներէն
Աղապէկ Շայէնեան
Նազար Միրզէեան
Թրպօ Խաչօեան
Վարդեր Խուռեղեան

***Մակագրութիւն 1.** Կարգադրուած է: Արամ*
***Մակագրութիւն 2.** 60 անձի հաց տալ: (ստորագրութիւն)*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 8, թ. 33, բնագիր, ձեռագիր:

N 72
ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 1087 *27 մայիսի 1915 թ.*

Վան

Վսեմ պ. Արամ Մանուկեան, նահանգապետ Վանայ

Ինչպէս յայտնի է Ձեր վսեմութեան՝ վերջին ահաւոր աղէտներու ատեն Վարագայ վանքը ամենէն շատ վնասուեցաւ, չէնքերը գրեթէ ամբողջապէս այրուած, անասունք և խոշոր իրեղէնք կողոպտուած, երկու վարդապետներն, երեք մրեպաններ[94] ու քանի մը մշակներն սպանուած ըլլալով:

Հոգաբարձութիւնս քէն ջանադիր կրգտնուի վանքին մնացեալ բեկորները հաւաքելու, վանքիս մէջ բնակութիւն հաստատելու ու երկրագործական աշխատութեանց վերսկսելով՝ յառաջիկայ հունձքը գոնէ վերցնել տալու, բայց դժբախտաբար ո՛չ մէկ հնարաւորութիւն կայ, քանի որ վանքը նիւթական միջոցներէ իսպառ զուրկ ըլլալով, նոյն իսկ ծանր պարտուց տակ ալ ինկած է, պատերազմին պատճառով տեղական հասոյթները նուազած, իսկ արտաքին հասոյթներն ալ ստանալու հնարաւորութիւն չըլլալով:

Ուստի կուգանք խնդրելու Ձեր վսեմութենէն, որ շնորհ ընէք՝ եթէ իբրև նպաստ կարելի չէ, գոնէ իբրև փոխ՝ յառաջիկային հասոյթներէն ստանալու պայմանաւ մեր տրամադրութեան ներքև դնել գոնէ 200 լիրայի չափ գումար մը, որով միայն հնարաւորութիւն պիտի ունենանք վանքի վերաշինութեան գործին սկսելու: Վարագայ վանքի անցելոյն թէ՛ ներկային մէջ ազնիւ մատուցած ծառայութիւններն յուսալ կուտան մեզ, որ մեր սոյն խնդիրն նկատի պիտի առնուի և կարելին չպիտի խնայուի անոր:

Մնամք խորին յարգանօք՝

Դիւան հոգաբարձութեան Վարագայ Վանայ
Ատենադպիր ***Ի. Հիւսեան***
Ատենապետ ***Աւետիս Յ. Թերզիպաշեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 164, բնագիր, ձեռագիր:

N 73
ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ՎԱՆԱՀՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆՔԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԵՒ ԻՐԵՆՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐՄԱՆՔՈՎ

27 մայիսի 1915 թ.

Կոտուց

Յարգելի պ. Արամ Վսեմ նահանգապետ Վանայ

Վսեմ Տէր,

Սոյն գրութիւնովս կուգամ Ձեր բարձր և միանգամայն ծանր ու փափուկ պաշտօն շնորհաւորել՝ յաջողութեան մաղթանքներովս:

Օսմ[անյան] վերջացած կառավարութեան՝ մեր ժողովրդին հատուցած չարիքէն մենք ալ զերծ չենք մնացած, մենք ևս մասնաւոր կորուստներ ու զոհեր տուած ենք, նոյն կառավարութեան կողմէ կղզեակիս մէջ կեցող ոստիկաններէն սպանուեցաւ մի վարդապետ, դպիր մը, մակոյկավար մը և մշակ մը: Յիշեալ ոստիկանները կողոպտեցին եկեղեցիի մէջ գտնուած կարգ մը արծաթեղէն եկեղ. սպասները, զգօրիճակ սկիհ, խաչ, կերպաս շուրջառներ, աչքի զարկած խալիներ, վարդապետներու սենեակէն աչքի զարկած պատառական ապրանքները, անկողին և այլն, և այլն: Այս գործողութիւնները կատարելու ատեն, նոյն իսկ մեզ բոլորիս վրայի շորերը հանել տալով և զմեզ խիստ ծեծելով՝ բանտարկեցին:

Նախքան զայս, Մօլագասըմ գիւղի թուրքերը վանք գալով, մեր բոլոր տաւար ու ոչխարները տարան, ըսելով, որ եթէ երկիրը բարւոքուեցաւ, նորից ձեզ կ'վերադարձնենք: Մեր տաւարի մէջ կային նաև վանքի չորս ձիերը, զորս մեր քաջարի զինուորները նոյն գիւղի թուրքերը կոտորելու ատեն, ձիերը հեծած տարած են, ասոր բնաւ ըսելիք չունինք, բարով վայելեն, բայց Կտուց անապատի գործերը շատ ընդարձակ և ցաւուցրիւ են, ինչպէս Աւանաց, Ճիկրաշէնաց, Մարմետու, Ամենաշատուց, Աննավանից և Ալիւրի մէջ կալուածներ կան, ասոնց հսկելու համար մեզի երկու հատ ձի հարկաւոր են, մանաւանդ, որ տեղւոյդ պաշտ. մարմիններու հետն ալ յարաբերութիւն ունենք: Ինչպէս Ձեր Վսեմութիւնն ալ գիտէ, ճամբաննիս շատ հեռու է, կ'խնդրուի, որ Ձեր տրամադրութեան տակը գտնուած ձիերէն գէթ երկու հատ վանքիս տալու շնորհ ընէք, ընդ որում նաև բարեհաճէք ազդարարել մեր շրջակայ գիւղացիներուն, որպէս զի մէկ երկու վկաներու հաստատութեամբ մեր տաւարները և ոչխարները առանց առարկութեան մեզ վերադարձնեն, որովհետև Մօլագասըմէն քշեր տարեր են նոյն գիւղը կոտորելու օրը, և մենք յաճախ կ'տեսնանք ու կը ճանչնանք մեր տաւարն ու ոչխարը մեր և Լիմ Անապատի թեմ գիւղերու մէջ:

Յուսով ենք, որ Ձեր Վսեմութիւնը մեր սոյն խնդրագրին բաւարարութիւն պիտի տայ, որովհետև մենք վանքի օգտի համար է, որ կաշխատենք, ուրիշ ոչինչ:

Յաջողութիւն և կարողութիւն մաղթելով Ձեզ՝

Մնամ աղօթարար վանահայր Կտուց անապատի՝

Եղիա ծ. վարդապետ Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թթ. 16-17, բնագիր, ձեռագիր:

N 74

ԿԱՏԱԼԱՎԱ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՇԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐԸ ԿՏՐԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

27 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ նահանգապետ Վանայ

Վսեմ Տէր

Մեր Կատալավա աառրի գիւղի եկեղեցին յայտնի դէպքի միջոցին քրդաց կողմանէ այրուելով, հրոյ ճարակ եղած է, և բոլոր քրիստոնէական արարողութիւնը երեսի վրայ մնացած ըլլալով, զրկուած ենք պատարագէ և այլն:

Վսեմ. Տէր, մեր տուրք Հակովք եկեղեցւոյ սրբազան արարողութենէ չը զրկուելու համար՝ և վերաշինութիւնը սկսելու և մինչև աշնան շինելու ու աւարտելու համար մեր գիւղի քրդաց ծառերն կտրելու արտօնութիւն շնորհելով՝ ամբողջ ազգը երախտապարտ կը թողուք:

Մնամ յարգանօք

Կատալավայ գիւղի ռէս ***Թաթոսեան Վերտոյ***
Ազո Նազարեան
Եւնան Սաֆարեան
Խամոյ Հավեզեան

Մակագրութիւն 1. *Գաւառապետին յանձնարարել Շահպաղիի գաւառապետութիւն պէտք եղած կարգադրութիւնը ընէ: Գաւառ[ների] դիւան՝* ***Արմենակ Փոխանեան***

Մակագրութիւն 2. *Շահպաղիի գաւառապետին. Դիւանէ Ձեզ եղած յանձնարարութեանց համար պատասխանը մեզի գրելու փոխարեն, ուղղակի հոն գրեցէք: Տնտ. մարմնոյ նախագահ, Վան. 6 Յունիսի 1915*

Մակագրութիւն 3. *Տնտեսական մարմնոյն. Կատալավա գիւղի եկեղեցին շինելու համար պէտք եղած ծառեր քիրտերի՝ կտրել արտօնութիւն տալու հաճեցէք: Գաւառապետ Շահպաղիի՝* ***Մինաս Օվիկեան***

Մակագրութիւն 4. *Գաւառական Դիւանին. Կէտալաւա գիւղի եկեղեցին վնասուած ըլլալով պէտք եղած տեղ գրեցէք նոյն գիւղի թիւրքի[95] լքած ծառերէն պէտք եղածին չափ ծառ կտրել արտօնուի: Շահպաղիի գաւառապետութեան օգն.՝* ***Մինաս***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 16 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 75
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27 մայիսի-19 հունիսի 1915 թ.

Նիստ 1-ին. 27 մայիս 1915 թ.

Օրակարգներ.

1. Վարչական խորհուրդի իրաւասութեան ճշտումը

2. Վարչական մարմիններու իրաւասութիւն և փոխյարաբերութիւն նահանգապետի հետ

3. Յանձնաժողովներու կազմութիւն և իրաւասութիւն

Որոշումները.

1. Մտքերու փոխանակութեամբ որոշուեցաւ, որ Վանի ընդհանուր կառավարութիւնը առաւել պայմաններու մէջ հաւաքական մի մարմին է, որու անդամներէն իւրաքանչիւրը վարչական մարմիններու նախագահները կընտրուին նահանգապետի կողմէ և ձայնի իրաւունք կունենան ժողովի մէջ: Վարչական խորհուրդը, բացի այս, առայժմ կրնայ ունենալ նաև խորհրդական անդամներ, որոնք ձայնի իրաւունք չունին: Վարչական խորհուրդը, իբրև օրէնսդիր մարմին, իրաւունք ունի որոշումներ քննարկելու՝ ենթարկելով պ. նահանգապետի վաւերացման, որ ունի վէտոյի իրաւունք:

2. Դատական ընթացիկ խնդիրներու չուտափոյթ լուծման համար որոշուեցաւ կազմել վարչական դատարան, որու անդամները պիտի լինեն ոստիկանապետը, իր օգնականը և դատարանի կողմէ ներկայացուած անձ մը: Բուն դատարանի և վարչական դատարանի վերաբերեալ գործերու քննչքը նախ պիտի ճշտուի քննիչի մ կողմէ: Քննիչ ընտրուեցաւ ը.թ. Կ. Այեճեան: Այսուհետև դատական գործերուն պատկանող դիմումները պիտի կատարուին պ. նահանգապետի անունով, որ քննիչի միջոցով պատկանեալ մարմիններուն պիտի ղրկէ: Նկատելով, որ դատական մարմինը շատ ծանրաբեռնուած է իր գործերով. որոշուեցաւ. որ յիշեալ մարմնի մէջ կազմուի հաշտարար դատարան. իսկ դատարանի կազմութեան, անոր իրաւասութիւններու ճշտման համար որոշուեցաւ, որ դատական մարմինը այդ մասին զեկուցում մը մշակէ և ներկայացնէ ժողովին:

Քաղաքապետարանի ոստիկանութեան խնդիրը

Մինչև այժմ քաղաքապետարանը իր վրայ կը պահէր իւր իրաւասութեան պատկանող խնդիրներու ոստիկանական դերը. որոշուեցաւ այսուհետև ոստիկանութեան թողուլ այդ գործը:

Տնտեսական մարմնի իրաւասութեան խնդիրը

Տնտեսական մարմնի իրաւասութիւն սահմանելու առթիւ անհրաժեշտ դատուեցաւ կազմել ելևմտից յանձնախումբ մը, որը 10 օրուան ընթացքին կազմէ նահանգային ելևմտացոյց: Յանձնաժողովի անդամներ ընտրուեցան պրք. Աւետիս Թէրզիպաշեան, Կարապետ Աջէմեան, Սարգիս

Արարատեան, Սեպուհ Խանճեան, Վարդան Յովակիմեան: Ժողովը պիտի շարունակուի վաղը ժամը 5-ին Տնտեսական մարմնի իրաւասութեան խնդիրը վերջացնելու համար:

Ներկայութիւն. Տիգրանեան Ս., Ջիտէչեան Գ., Թէրզիպաշեան Ա., Միհասեան Մ., Արարատեան Ս., Համբարձումեան Կ., Մէօչեան Պ., Այճեան Կ., Համբարեան Ա., Փափազեան Դ.:

Նիստ 2-րդ. 28 մայիս 1915 թ.

Օրակարգներ.

1. Տնտեսական մարմնի իրաւասութեան ճշտումի շարունակութիւն

Որոշումներ.- Դիտողութիւններ եղան այն մասին, թէ Տնտես. մարմինս լքուած կալուածներու հասոյթները վարձու տալու գործողութեանց մէջ ընդհանրապէս ածապարանք ցոյց տուած է և երբեմն ալ չէ կրցած լրիւ յարգել պահանջուած օրինական ձևակերպութիւնները: Որոշուեցաւ քանի մը օր դադրեցնել հասոյթներու վարձակալութեան գործը, և որ այսուհետև ինք՝ Տնտ. մարմինը վաճառելի գոյքերու, ինչպէս նաև վարձու տրուելիք կալուածներու արժէքը ինքը գնահատէ և ապա վարձու հանէ կամ վաճառէ: Այս նպատակով նախ պէտք է կազմել լքուած կալուածներու ցուցակ: Քաղաքի և շրջակայքի կալուածներու ցուցակ և արժէքը կրնայ կազմել ինքը՝ Տնտ. մարմին, իսկ միւս գաւառներուն՝ պէտք է կազմել յատուկ պաշտօնեաներու ձեռամբ: Իւրաքանչիւր գաւառի համար պիտի դրկուի մէկ-մէկ պաշտօնեայ, որ իրաւունք պիտի ունենայ նաև վաճառման իր շրջանի կալուածներու հասոյթը գաւառապետներու օժանդակութեամբ: Իսկ աճուրդի գործողութեան համար անհրաժեշտ դատուեցաւ վաճառման յայտարարութիւնը 48 ժամ փակցնել կառավարութեան պաշտօնատան դռան վրայ:

Տնտ. մարմնի կողմէ կատարուած վաճառման կամ վարձակալութեան որոշումները պէտք է ենթարկուին վարչ. մասմնի վաւերացման:

Նիստ 3-րդ. 4 յունիս 1915թ.

Բացականեր պ.պ. Տիգրանեան, Համբարձումեան, Արարատեան

Օրակարգներ.

Տնտեսական մարմնի իրաւասութեան խնդիրը. (շարունակութիւն)

Որոշումները.- Նախորդ ժողովի մէջ որոշուած էր գաւառներու լքուած կալուածներու հասոյթի վաճառումը կատարել իւրաքանչիւր գաւառի մէկ պաշտօնէյի ձեռքով, սակայն այս մասին կրկին կայացած մտքերու փոխանակութեամբ նպատակայարմար դատուեցաւ մարմինները յանձնել գործը, իւրաքանչիւր մարմինը պիտի ունենայ 3 անդամ, որոնցմէ մէկը նախագահի հանգամանքով 60 ր. ռոճիկ ստանայ, իսկ միւսները 45-ական րուբլի, բացի այդ իւրաքանչիւրը պիտի ստանայ հասոյթի 5%:

Նահանգային սնդուկի խնդիրը.- Որոշուեցաւ նահանգային վարչութեան կեդր. սնդուկը պ. նահանգապետի անմիջական հսկողութեան տակ պիտի գտնուի: Գանձապահ և հաշուակալ կրնդունուին պ. նահանգապետի կողմէ, վարչական խորհրդի կողմէ կրնտրուին հարցաքննիչներ, որոնք, իհարկին, պիտի քննեն կեդր. սնդուկի և միւս մարմիններու ելևմուտքի հաշիւները:

Ելևմտից յանձնաժողովի կողմէ կարգ մը դիտողութիւններ եղան Տնտ. մարմնի հաշուապահական գործառնութեանց բերութեանց մասին, որոշուեցաւ, որ ելևմտից յանձնաժողով ցուցումներ ըլէ այդ մասին յիշեալ մարմնին, որպեսզի կանոնաւոր...[96] որոշուեցաւ չեղյալ համարել այս գործողութիւնները, որոնց աճուրդահանութեան յայտարարութիւնը տեղւոյն վրայ չէ եղած և առարկութիւններ կան այդ մասին, այդ կարգի կալուածներ կարելի է առնել նախկին վարձակալներէն և տալ նոր գնողներու, եթէ միայն ստոնք յօժարին վճարել 3 % և եղած ծախքեր: Այս մասին Տնտես. մարմին պիտի ազդարարէ հասարակութեան:

Նիստ Դ. 5 յունիս 1915թ.

Օրակարգներ.

Դատարանի կազմ, ներկայացուած զեկուցում

Ընթացիկ խնդիրներ

Որոշումներ.- դատարանի նախագահը՝ պ. Ա. Համբարեան ժողովին բերած էր զեկուցումը դատարանի կազմի և անոր իւրաքանչիւր բաժանմունքի իրաւասութեանց մասին, ընթերցումէն յետոյ որոշուեցաւ յանձնախումբ մը կազմել, որ յիշեալ զեկուցագիրը ուսումնասիրէ և մշակէ դատարանիս, հաշտարար դատարանի, ոստիկանութեան և ընդհ. քննիչի իրաւասութեանց մասին: Յանձնախմբի անդամներ եղան Ա. Համբարեան, Կ. Այեճեան, Հ. Գալիկեան, Դ. Փափազեան, Ս. Տիգրանեան:

Ընթացիկ խնդիրներ.- Համայակ Սիմբլեան գրով մը (դիւան թ. 1534 և յունիս 4) բողոքած էր վարչական եղանակով եղած այն կարգադրութեան դէմ, որով Ծխտան գիւղի մէջ իր վարձած այգին ետ առնելու հրաման կը տրուէր Տնտ. մարմնին: Ժողովը նկատողութեան առնելով խնդիրը և ծանօթանալով այն իրողութեան հետ, թէ քանիմ կալուածներու վարձակալական գործողութեանց մէջ օրինական ձևակերպութիւնները լրիւ կերպով չեն կատարուած...[97] ապա կարդացուեցաւ կրթական ծրագիրը, մտքերու փոխանակութիւն շարունակուեցաւ, սակայն եզրակացութիւնը յաջորդ ժողովին թողնուեցաւ:

Ընթացիկ հարցեր.- Պ. նահանգապետ յայտնեց, որ Կովկասեան բանակի շտաբի նաչալնիկ գեներալ Ռէաբինկին[98] վաղը քաղաք պիտի գայ: Խորհուեցաւ և որոշուեցաւ քաղաքի կողմէ պաշտօնական պատշաճ ընդունելութիւն ընել, յայտարարութեամբ մը ծանուցանել հասարակութեան գեներալի մուտքը քաղաքի մէջ և հիւրասիրել զինքը քաղաքապե-

տուբեան մէջ, յարմար բնակարան մը դնել իւր տրամադրութեան տակ: Հիւրընկալներ ընտրուեցան քաղաքապետ, ոստիկանապետ և Ա. Թէրզիպաշեան:

Նիստ 5-րդ. 9 յունիս 1915 թ.

Բացակաները - Արարատեան Ս., Համբարձումեան Կ.

օրակարգներ.

Կրթական գործը

Ընթացիկ հարցեր

Որոշումներ.- Նախապէս առաջարկուած էր կրթական տեսչութեան ծրագիր մը պատրաստել կրթական գործի շուրջ և ներկայացնել ժողովին: Առաջարկուած ծրագիրը պատրաստուած լինելով, ժողովին բերուեցաւ: Նախքան զեկուցում-ծրագրի ընթերցումը, մտքերի փոխանակութիւն կատարուեցաւ այն հարցի շուրջ, թէ կրթական գործը ըստ նախկին դրութեան առաջնորդարանի՞ն թողնելու է, թէ՞ կառավարութիւնը իր ձեռքն առնելու է: Նախքան այդ հարցի վերջնական լուծումը, որոշուեցաւ ճշտել նախկին կառավարութեան և ազգ. առաջնորդարանի միջև եղած յարաբերութիւն, ասոնցմէ իւրաքանչիւրի իրաւասութեան սահմանը մտցուի հաշուապահական մատեաններու մէջ:

Նիստ 6-րդ. 19 յունիս 1915 թ.

Բացակայ չկայ.

Օրակարգներ

Կրթական ծրագ.

Դատարանի ծրագ.

Տնտես. մարմնի տեղեկագիր

Բնակարանի համար ազատ հողերու խնդրանք

Բերկրիի շրջանի Շարապխանէ գիւղի հանքային ջրերու շահագործման մենաշնորհի խնդիրը.

Ոստիկանական շրջանապետի պաշտօնանկութեան խնդիրը.

Որոշումներ.- Թէև ա. օրակարգի նիւթը կրթական խնդիրը պիտի լինէր ըստ նախորդ ժողովի որոշման, բայց ստիպողականութեան հանգամանքով Տնտ. մարմնի տեղեկագրի մասին, որոշուեցաւ խորհրդակցել, Տնտես. ժողովի նախագահութեան կողմէ 1915 թ. յունիս 19-ին պատրաստուած տեղեկագիրը կարդացուեցաւ, նկատողութեան առնուեցան հետևեալ խնդիրները.

Յունիս 4-ի ժողովի մէջ նախորդ ժողովի որոշումը փոփոխելով, որոշուած էր քաղաքի և շրջակայքի լքուած կալուածներու վարձակալութեան գործողութեան ձևը փոխել – քննիչներ նշանակել, անոնց միջոցով վարձու տրուելիք կալուածներու արժէքը որոշել, աճուրդի դնել և վարչական խորհրդի վաւերացման ենթարկել: Տեղեկատուն բացատրեէ յետոյ թէ գործի այդ եղանակէն ոչ մի օգուտ չտեսնուեցաւ, կաւելցնէր, թէ դարձալ

նախկին ձևը յարմար դատուեցաւ: Ժողովը թէև չեշտեց, թէ Տնտ. մարմին իրաւունք չունէր փարչ. խորհրդի որոշման հակառակ ընթացքի մը հետևել, բայց ընդունելով, որ իրապէս վարչ. խորհրդի որոշած եղանակով գործը դանդաղութեան կը մատնուէր -- մինչդեռ այգիներու, արտերու մշակութեան խնդիրը ստիպողականութեան հանդէպ կը դնէր, Տնտ. մարմինը թոյլատու գտնուեցաւ և ընդունեց Տնտ. մարմնի ընդգրկած նախկին ձևը:

Գաւառներու լքուած հասոյքներու, ինչպէս նաև երկրագործական բերքերու տասանորդի[99] վարձակալութեան համար որոշուեցաւ փոխել նախորդ ժողովի մէջ ընդունուած որոշումը, որու փոխարէն որոշուեցաւ լքուած կալուածներու հասոյթներու, ինչպէս նաև տասանորդի վարձակալութեան համար դրկել մէկ-մէկ պաշտօնեայ իւրաքանչիւր գաւառի կեդրոն, որոնք պիտի գործակցեն գաւառապետներուն:

Ժողովին ընտրուեցան 10 անձեր, մնացեալները պիտի ընտրէ Տնտ. մարմնի նախագահը և ներկայացնէ պ. նահանգապետին ի վաւերացում:

Ոմանք խնդրագրով դիմած էին պ. նահանգապետին և խնդրում էին արտօնութիւն ազատ համարուած հողի վրա բնակարաններ շինելու: Ժողով նկատելով, որ խնդիրը բարդ է և ստուգման համար բաւականաչափ փաստեր պէտք են, որոնք կապուած են դժուարութիւններու հետ, որոշեց առայժմ անհետևանք թողուլ այդ կարգի դիմումները:

Բերկրիի շրջանի Շարապխանէ գիւղի սահմաններու մէջ գտնուող հանքային ջրերու շահագործման մենաշնորհի խնդրած էին Ա. Թէրզիպաշեան և ինժ. տեխնոլոգ Միրիջանեան: Ժողով գտաւ, որ տուեալ պայմաններու մէջ հնարաւոր չէ մենաշնորհ տալ, այլ կարելի է ժամանակաւոր արտօնութիւն տալ շահագործելու, վերապահելով խնդրատուներուն առաջնութիւն ի[100]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 1-7, բնագիր, ձեռագիր:

N 76

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՔՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.

Վան

Պ. նահանգապետ,

Մայիս 25-ին ներկայացուցի ձեզ համայնքներու կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւններու մասին մշակած առաջնորդող սկզբունքներ:

Այս անգամ կը ներփակեմ ուսուցիչներու դասաւորման աստիճանաւորման ու վարձատրութեան մասին մշակած առաջնորդող սկզբունքներու բովանդակող ներկայ գրութիւնը:

Դուք ինձմէ լաւ ծանօթ էք նահանգիս կրթական պէտքերուն: Դպրոցական շէնքեր այրուած են, ուսումնական պիտոյքներ ու գոյքեր գրեթէ բոլորովին փճացած, պիւտճէներ բոլորովին անորոշ, ուսուցչական դասակարգ կազմալուծուած և ուրիշ պաշտօններու ու զբաղումներու հետամուտ և այլն:

Որպէսզի յառաջիկայ տարեշրջանին կարողանանք վերաբանալ այսպէս հիմնովին քայքայած դպրոցներ, անյետաձգելիօրէն իսկոյն ձեռնարկելու ենք անհրաժեշտ կարգադրութիւններու, անշուշտ ի ձեռին ունենալով վարչական ժողովոյ կողմէ վաւերացուած առժամեայ օրէնքներ՝ որոնցմէ առաջնորդուինք մեր կարգադրութիւններու մէջ:

Պ. նահանգապետ, քաջ գիտէք, թէ ապրել ու զարգանալ ձգտող ժողովուրդի մը կառավարութեան ամենէն հիմնական մտահոգութեանց մէջ առաջին տեղը կը գրաւէ ապահովել նոր սերնդի դաստիարակութիւնը՝ ուսուցչական կարող կազմի մը ու մանկավարժական ողջամիտ սկզբունքներու համաձայն: Ուրեմն, թոյլ տուէք ինձ ստիպողաբար խնդրել Ձեզմէ, որ վարչական ժողովին մէջ իսկոյն կազմուի կրթական յանձնախումբ մը, որ կրթական տեսչին ներկայութեան ուսումնասիրելով ցարդ ներկայացուած ու ներկայացուելիք կրթական օրէնքներու այս նախագծերն և հարկ տեսնուած բարեփոխումներն կատարելով՝ յանձնէ վարչական ժողովին ի վաւերացում:

Խորին յարգանքներով՝

*Կրթական տեսուչ՝ **Մ. Մինասեան***

Առաջնորդող սկզբունքներ

Ուսուցիչներու դասատրում, աստիճանատրում և վարձատրութիւն

1. Դասատրում.- Չորս դասի կը բաժնուի տարրական դպրոցի ուսուցչութիւնը:

ա. Արտօնուած օգնական ուսուցիչ.- Թեկնածուն յաջող գրաւոր քննութիւն անցնելու է հետևեալ նիւթերուն մէջ. ուղղագրութիւն, գեղագրութիւն, շարադրութիւն և տարրական թուաբանութիւն, իսկ բերանացի քննութիւն՝ կրօնի, ընթերցանութեան, թուաբանութեան, աշխարհագրութեան, հայոց պատմութեան, քաղաքացիական կրթութեան, երաժշտութեան և ուսումն բնութեան մէջ: Թեկնածուն ոչ 18 տարեկանէն վար և ոչ 21 տարեկանէն վեր ըլլալու է:

Բարձրագոյն նախակրթարաններէ շրջանաւարտներ կրնան առանց քննութեան արտօնուած օգնական ուսուցչի վկայական ստանալ կրթական տեսչութենէն՝ երբ իրենց ընթացաւարտութեան և դիմումին միջև երկու տարիէ աւելի ժամանակ չէ անցած:

Արտօնուած օգնական-ուսուցչի մը միայն երկու տարի պաշտօնավարելու վկայագիր կը տրուի:

Այս պայմանաժամի լրանալուն ետ վկայագիրը վերանորոգել չյաջողող ուսուցիչը՝ կը զրկուի պաշտօնավարելու իրաւունքէն: Որևէ վկայագիր նորոգելու առթիւ նկատի կառնուի թեկնածուին այդ երկու տարուայ ընթացքին ցոյց տուած իմացական ու բարոյական արդիւնքները:

Արտօնուած օգնական-ուսուցիչ մը չկրնար 50-է աւելի աշակերտ պարունակող դպրոցի մը մէջ աւագ-ուսուցչի պաշտօն վարել:

բ. Արտօնուած դաստիարակ-ուսուցիչ.- Թեկնածուն առնուազն հինգ տարի պաշտօնավարած ըլլալու է իբրև ուսուցիչ. 21 տարեկանէն վար ըլլալու չէ, երկրորդական վարժարանի մը վկայագիր ստացած կամ նոյն աստիճան զարգացում ունեցած ըլլալու ապացոյցն տալու է գրաւոր ու բերանացի քննութիւններով: Գրաւոր նիւթերն են՝ թուաբանութիւն և աշխարհագրութիւն, բնական գիտութիւններ և անոնց կիրարկումներ, շարադրութիւն, գծագրութիւն, օտար լեզուէ հատուածի մը թարգմանութիւն՝ բառարանի օգնութեամբ, պատմութիւն ընդհանուր ազգաց: Բերանացի նիւթերն են՝ կրօն, մանկավարժական սկզբունքներ, գործնական բարոյագիտութիւն, մայրենի լեզու և գրականութիւն, թուաբանութիւն և տնմարակայութիւն, գիտութիւն և արդի լեզու. աշխարհագրութիւն և պատմութիւն (մասնաւորապէս Փոքր Ասիոյ):

Արտօնուած դաստիարակ-ուսուցչի մը միայն երկու տարի պաշտօնավարելու վկայագիր կը տրուի: Այս պայմանաժամի լրանալուն ետ վկայագիրը նորոգել չկրցող ուսուցիչը՝ կը զրկուի պաշտօնավարելու իրաւունքէն: Որևէ վկայագիր նորոգելու առթիւ նկատի կ՚առնուին թեկնածուին այդ երկու տարուան ընթացքին ցոյց տուած իմացական ու բարոյական արդիւնքները:

գ. Վկայուած օգնական-ուսուցիչ.- Թեկնածուն վկայական ստացած ըլլալու է տարրական դպրոցներու կառավարական վարժապետանոցէն: Այսպիսին առանց քննութեան կը ստանայ օգնական-ուսուցչի մնայուն վկայագիր մը:

Վկայուած օգնական-ուսուցիչ մը չի կրնար 50-է աւելի աշակերտ պարունակող դպրոցի մը մէջ աւագ-ուսուցչի պաշտօն վարել:

դ. Վկայուած դաստիարակ-ուսուցիչ.- Որևէ վկայուած օգնական-ուսուցիչ՝ առնուազն երեք տարուայ պաշտօնավարութենէն վերջ կրնայ տարրական դպրոցներու վարժապետանոցը տարի մնալ հետևել մանկավարժական բարձրագոյն դասընթացքի մը: Այսպիսին կը ստանայ մնայուն վկայագիր մը դաստիարակ-ուսուցչի: Հինգ տարի վկայուած օգնական-ուսուցչի պաշտօն վարող ուսուցիչն ալ կրնայ վկայուած դաստիարակ ուսուցիչ ըլլալ՝ երրորդ տարուան մանկավարժական բարձրագոյն դասընթացքին հետևողներուն հետ յաջող քննութիւն տալով:

2. Աստիճանաւորում.- Ուսուցչական այս չորս դասերէն իւրաքանչիւրը յառաջացման երեք աստիճաններ ունի: Աստիճանական յառաջացումներ տեղի կ՚ունենան յատուկ կանոնագրի մը համեմատ՝ ուր պէտք

է նկատի առնուած ըլլայ պաշտօնավարութեան ոչ միայն երկարատեւութիւնը, այլ մանաւանդ անոր արդիւնաւորութիւն:

3. Պատիժ.- Որևէ ուսուցչի մասին եղած ծանր ամբաստանութիւնները կը քննուին կրթական տեսչութեան կամ ներկայացուցչի նախագահութեան տակ կազմուած դատաստանական յանձնաժողովի մը առջև: Դատաստանական ժողովին անդամներուն կէսը պիտի կազմուի դաստիարակ ուսուցիչներէ՝ ընտրուած իրենց պաշտօնակիցներէն: Դատաստանական ժողովը իրաւասութիւն ունի ամբաստանուած ուսուցչին գործած յանցանքին համեմատ պատիժներ որոշել ու գործադրել, որ ծանրակշիռ պարագաներուն կրնայ ըլլալ վերջնական վտարում:

Թեթև յանցանքները կը քննուին կրթական քննիչներու միջոցաւ և պատիժները կը տնօրինուին ու կը գործադրուին միևնոյն պաշտօնէութեան կողմէ: Ինքզինք անիրաւուած զգացող ուսուցիչը կրնայ կրթական տեսչութեան մօտ դիմում կատարել վերաքննութեան համար: Յատուկ կանոնագրութեամբ պիտի դասաւորուին յանցանքները և սահմանուին համապատասխան պատիժներ:

4. Մասնագէտ-ուսուցիչ.- Ձեռարուեստի, գծագրութեան, մարմնամարզի, երգի, կար ու ձևի ու խոհարարութեան դասերուն մէջ իբրև մասնագէտ ուսուցիչ պաշտօնավարել փափաքողները պէտք է մասնաւոր քննութիւն անցնին իրենց ճիւղերուն մէջ:

5. Վարձատրութիւն.-Գ-րդ աստիճանի վրայ գտնուող արտօնուած օգնական ուսուցիչ մը կը ստանայ երկու հարիւր (200) րուպլի տարեթոշակ, Բ-րդ աստիճանի վրայ գտնուող մը՝ երկու հարիւր յիսուն (250) րուպլի, իսկ Ա. աստիճանին վրայ գտնուողը՝ երեք հարիւր (300) րուպլի:

Գ-րդ աստիճանի վրայ գտնուող արտօնուած դաստիարակ-ուսուցիչ մը կը ստանայ երեք հարիւր յիսուն (350) րուպլի տարեթոշակ, Բ-րդ աստիճանի վրայ գտնուող մը՝ չորս հարիւր յիսուն (450) րուպլի, իսկ Ա-րդ աստիճանի վրայ գտնուողը՝ վեց հարիւր (600) րուպլի:

Գ-րդ աստիճանի վրայ գտնուող վկայուած օգնական ուսուցիչ մը կը ստանայ երեքհարիւր (300) րուպլի տարեթոշակ, Բ-րդ աստիճանի վրա գտնուող մը՝ չորս հարիւր (400) րուպլի, իսկ Ա-րդ աստիճանի վրայ գտնուողը՝ հինգ հարիւր (500) րուպլի:

Գ-րդ աստիճանի վրայ գտնուող վկայուած դաստիարակ-ուսուցիչ մը կը ստանայ հինգ հարիւր (500) րուպլի տարեթոշակ, Բ-րդ աստիճանի վրայ գտնուող մը՝ վեց հարիւր յիսուն (650) րուպլի, իսկ Ա-րդ աստիճանի վրայ գտնուողը՝ ութ հարիւր (800) րուպլի:

6. Վարժուհիներ.- Իգական սեռն ալ՝ միևնոյն պայմաններն լրացնելով կրնայ մտնել վերը ներկայացուած ուսուցչական որևէ դասու կամ աստիճանի մէջ: Իսկ ուսուցչուհիներու տարեթոշակները իրենց վերաբերած դասուն կամ աստիճանին յատկացուածներուն մէկ չորրորդը պակաս պի-

տի ըլլայ՝ իրենց պարտականութիւններն ալ համեմատաբար թեթև ըլլալու պայմանաւ:

7. Հանգստեան թոշակ.- Երկու սեռն ալ վկայուած օգնական-ուսուցիչներ և վկայուած դաստիարակ-ուսուցիչներ պիտի ստանան հանգստեան թոշակ՝ յատուկ կանոնագրով մը սահմանուած պայմաններու համեմատ:

8. Կանոնագրութիւն.- Ուսուցիչներու պարտականութիւնները, աշխատութեան չափերը և փոխադարձ յարաբերութիւնները պիտի սահմանուին յատուկ կանոնագրութիւնով մը:

9. Ներկայացուցչական ժողով.- Դաստիարակ ուսուցիչներ, երկու սեռն ալ, պիտի ընտրին հինգ անդամէ բաղկացած ներկայացուցչական ժողով մը, որ իբր խորհրդատու մարմին իրաւունք պիտի ունենայ ուսումնական ամեն հարցերու մասին թելադրութիւններ ընել կրթական տեսչութեան պարբերաբար կազմելով նաև խառն խորհրդակցական ժողովներ կրթական տեսչութեան խորհրդին հետ:

Կրթական տեսուչ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 24, թթ.4ա-5, 7-8, բնագիր, ձեռագիր:

N 77
ԱՐՄԵՆ ՀՅՈՒՄ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.

Վան

Ձենք կրելու արտօնագիր
ստանալու համար

Անուն - Արսէն
Ազգանուն – Հիւս Գալուստեան
Ո՞ր տեղացի է - վանեցի
Թաղը կամ գիւղը – Ջրբաշեան թաղէն
Քանի տարեկան է - (33) երեսուն երեք
Ի՞նչ տեսակ զէնքի իրաւունք կ'ուզէ ստանալ – մօղէլ հրացան մը և պրաունիկ[101] ատրճանակ մը
Ձենքի նօմէրը – մօղէլ հրացանի (4705), պրաունիկի (673249)
Ի՞նչ գործի համար

Վսեմ պ. կառավարիչ
Վանի շրջանային վարչութեան

Վանայ շրջակայ՝ ինչպէս նաև Թիմարի և Արճակի շրջանի գիւղերու մէջ ցանքեր և գործեր ունենալուս համար, պարտաւորուած եմ շատ անգամ նիս մինակ այդ գիւղեր պտտիլ գործիս համար: Ուստի վերոգրեալ մէկ հրացան և ատրճանակը հետս կրելու արտօնութիւնը տրուելու համար պետք եղողներուն հրաման ընելնիդ կը խնդրէի:

*Մնամ յարգանօք՝ **Արսէն Հիւս Գաղուստեան***

Մակագրութիւն.** Չէնքով չենք կարող արտօնել: **Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 41, բնագիր, ձեռագիր:

N 78
ՇԱՀՊԱՂԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԱՎԱՌԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿՆԻՔ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.

Վսեմ նահանգապետ,

Մեր գաւառապետութեան պատկանող գիւղերու գիւղապետներու կնիք թիւրքերէնէն հայերէնի փոխելը, ինչպէս նաև մեր գաւառապետութեան կնիք պատրաստել և ղրկել հրամայեցէք, որովհետև շատ կարևոր է գիւղերու հետ ունեցած յարաբերութեան համար:

Շահպաղիի գաւառապետութեան[102] պատկանող գիւղերը հետևեալներն են, որոնք հաճեցէք արձանագրել ղիւանի մայր տոմարին մէջ.

Գիւղերու անուններ

1.Շահպաղի
2.Աւանց
3.Լեսկ
4.Աւերակի
5.Պողանց
6.Չօպանօղլի
7.Մխկներ
8.Նապաթ
9.Կատալաւայ
10.Պախեզեկ (հայաբնակ)
11.Պախեզեկ (քրդաբնակ)
12.Անձաւ
13.Սղգա
14.Շուշանց
15.Կուռուպաշ
16.Լամզկերտ
17.Ձորովանք
18.Զրվանտանց
19. Կողպանց
20.Տարմանգիւղ
21.Ֆառուխ
22. Ոսկեբակ

*Շահպաղիի գաւառապետ **Մինաս Օվիկեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 19, բնագիր, ձեռագիր:

N 79
Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ

Մայիս 20 թւակիր արտօնագրով շնորհակալ ենք, իրաւունք տուիք մեզ Ս. Յակոբ եկեղեցւոյս մօտիկ շրջականերից 300 (երեք հարիւր) ծառեր կտրել, նոյն եկեղեցւոյ և վարժարանի վերաշինման համար: Բայց կը հաշուենք, որ արդքան ծառեր միայն եկեղեցիի ծածկին հազիւ բաւական լինեն, իսկ դպրոցը որ նոյն չափ ատաղձի կը կարօտի, չենք ունենար: Ուստի կը խնդրուի, որ շնորհ անէք նոյն չափ ևս կտրելու արտօնութիւն տաք, մանաւանդ որ տեղափոխութեան ծախսերն էլ կտրուելիք ծառերէն պիտի հանուի, քանի որ նոյն եկեղեցիի՝ Պջի, Կարօյի, Ս. Յակոբի և Թուխ Մանուկի միասին առած Խաչ-փողոցի քաղերի ժողովրդեան տները ամբողջապէս վառուած լինելով՝ ի վիճակի չեն ևիւրաբերութեամբ օժանդակել գործին:

Յարգանքներով՝

Դիւան ս. Յակոբ քաղականութեան
*Ատենադպիր՝ **Սահակ**[103]*
*Ատենապետ՝ **Գ. Պարիկեան***

Մակագրութիւն.** Նախ որոշեցէք դպրոցի վայրը: **Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թ. 11, բնագիր, ձեռագիր:

N 80
ԱՎԱՆՑԻ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴՊՐՈՑԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ Վանայ

Մեր գիւղի դպրոցի շինութեան նախապէս ձեռնարկուած էր թէև, բայց մինչև այժմ անկատար կը մնայ:

Արդ, դիմելով ձեր վսեմութեան, կը խնդրենք, որ հրաման շնորհէք մեզ, մեր գիւղ գտնուած թիւրք Իպօյի այգիի բարդի ծառերը կտրել, դպրոցի շինութեան համար: Յիշեալ այգիի ծառերէն 60 հատ մեր գիւղի Ազանեան Մկրտիչը հակառակ մեր ազդարարաութեան, գաղտնաբար գնած է: Այս մասին ալ պէտք եղածը կարգադրելու հրաման շնորհեցէք:

Դիւան Աւանցի քաղական խորհրդոյ
*Ատենադպիր՝ **Վահան Տ. Պետրոսեան***
*Ատենապետ՝ **Մեծէքէրիմ Մուրադեան***

***Մակագրութիւն 1.** Գաւառ. մարմնին յանձնել:*

Մակագրութիւն 2. Աւանցի քաղականութեան խնդիրը (դպրոցի վերաշինութեան համար ծառեր տալ) փոխադրուեցաւ Եղբայրական միութեան նախագահին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 19, բնագիր, ձեռագիր:

N 81
Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ԻՐ ՏՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1103 *28 մայիսի 1915 թ.*
Վան

Վսեմ նահանգապետ.

Ներքոյ ստորագրեալս, հայոց Ձորի Խառնուրդ գիւղին մէջ տուն և չորս (4) կտոր արտեր ունիմ, որոնք 30 տարի առաջ տեղւոյն քրդերի կողմէն գրաւուած և մինչև այս տարի անոնց ձեռքով կը մշակուին:

Ուստի հայկական ազատագրութեան այս օրերուն, երբ փախած են բոլոր յափշտակիչներ և աւազակներ, որով ամէն հայը իր ստացուածքին տէր կը լինի, իմ պապենական ստացուածք եղող յիշեալ տուն և արտեր ինձ յանձնել կը խնդրեմ: Պահանջած պարագային կարող եմ վկաներով հաստատել:

Սպասելով Ձեր կարգադրութեան Թագա-Քահրէզ բնակող վարժուտնեար՝

Գրիգոր Աբրահամեան

Մակագրութիւն 1. *Վերին հայոց Ձորի կառավարչին:* ***Արամ***
Մակագրութիւն 2. *Սոյն բռնագրաւած հողերու մասին կարգադրութիւն ըրէք: Գաւառ[ների] դիւան՝* ***Արմ. Փոխանեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 11, թ. 4, բնագիր, ձեռագիր:

N 82
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՆՈՒՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915 թ.
Վան

Ի գիտութիւն հասարակութեան կը ծանուցանենք, որ ասկէ վերջ դատական գործերու վերաբերեալ բոլոր դիմումները ուղղակի Նահանգապետութեան անունով պիտի ըլլան:

Վանի Նահանգապետ՝ ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 12, տպագիր օրինակ:

N 83
ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մայիսի 1915 թ.
Վան

Ձենք կրելու արտօնագիր
ստանալու համար

Անուն – Խաչատուր
Ազգանուն – Գէորգեան
Ո՞ր տեղացի է - վանեցի
Թաղը կամ գիւղը – Թերլեմէզեան թաղէն
Քանի տարեկան է - 32 տարեկան
Ի՞նչ տեսակ զէնքի իրաւունք կ՚ուզէ ստանալ – մօսինի հրացան
Ձէնքի նօմէրը – 36158
Ի՞նչ գործի համար - Խօշապի մէջ հանգուցեալ աներոջս արտեր ունիմ, որ բռնապետութեան ժամանակ մեծ մասէն քրդեր կ՚օգտուէին, ուստի կը խնդրուի յիշեալ զէնքի արտօնութիւն տալ, որպէսզի հնարաւորութիւն ունենամ երթալ և յիշեալ արտերու մասին մի կարգադրութիւն ընեմ:

Խաչատուր Գէորգեան

Մակագրություն. Տալ: Դիւանապետ ***Ա. Դարբինեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 50, բնագիր, ձեռագիր:

N 84
Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ՝ ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՒ ՃԱՇԱՐԱՆ ԲԱՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մայիսի 1915 թ.
Վան

Վանի նահանգապետության Տիար կառավարչապետ

Կառավարչատան դիմաց աշճի[104] Նշանի տուն վարձած և «Օթել-Վասպուրական» անունով հիւրանոց, ճաշարան և թէյարան բացած ենք: Հաճեցէք հարկ տեսնուած օրինական ձևակերպութիւններ ի գործ դնել տալ և արտօնագիր մը շնորհէք մեզ, որպէսզի ներկայիս և ապագայի մէջ որևէ դժուարութեանց չը հանդիպենք:

Յարգանօք՝ Օթէլ-Վասպուրականի վարչութեան կողմէ՝

Ի. Բարսեղեան

Մակագրութիւն. *Պարույր, առ իրաւունք տուր մայիս 20 թւագրով, որ իրաւունք է տրուած հօթէլ բանալու, ճաշարանի մէջ բաժակով միայն խմիչք կը ծախուի սպաներուն, շիշով դուրս տանելու համար պիտի առնուի հրաման կառավարութեան կողմէ:*

Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 23, բնագիր, ձեռագիր:

N 85
Բ. ՕՀԱՆԵՍՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆԻՑ ԽԼՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1234 *29 մայիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ

Ստորագրեալս Թրքաշէն գիւղի բնակիչներէն լինելով՝ կուի միջոցին Արքֆ պէյը մեր ամբողջ ընտանիքը գերի տարաւ իր հետ Խօշապի կողմերը: Բայց այդտեղ քիւրդերի կողմէն սպանուեցաւ իմ որդին, եղբայրս և եղբօրորդիս: Պ. Անդրանիկը այդ կողմեր գալով, մեզ ազատեց քիւրդերի ձեռքէն և մի թուղթի հետ մեզ 4 հատ եզ, 4 հատ կով, 1 հատ աջառ, երկու հատ ալ աւանակ տալով, դրկեց մեր գիւղը: Ճամբան Թիմարի Կէօլու գիւղին մէջ, ռուս տեղապահը չը ճանչնալով պ. Անդրանիկի տուած թուղթը, առաւ բոլոր կենդանիները ալ:

Ուստի Ձեր մեծութեան դիմելով, պէտք եղած միջոցներ գործադրել և իմ թշուառ ընտանիքի միակ յոյս եղող յիշեալ կենդանիները վերադարձնելու կը խնդրեմ:

Յարգանքներով՝

Բաղդիկ Օհանէսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 6, բնագիր, ձեռագիր:

N 86
Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՐԾԿԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՆՅԱԳԻՐ ԵՒ ՁԵՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1126 *29 մայիսի 1915 թ.*

Վան

Տէր Նահանգապետ

Քանիցս բէպէտև Ձերդ վսեմութեան հետ անձնապէս տեսնուել ուզեցի, բայց նկատելով, որ միշտ դռնապաններու կողմէ արգելքի կը հանդի-

պեմ, այժմ երկտողովս Ձեր ուշադրութիւնը կը խնդրեմ ստորև գրուածներուն մասին:

Վերջերս մեր գաւառներէն լաւ լուրեր չեն ստացուեր, իրականութիւնը ստուգելու և անճնապէս ապահովուելու համար եղած լուրերուն նկատմամբ, կուզեմ մեր կողմեր երթալ, ուստի կը խնդրեմ ինձի տալ զէնք մը արտօնագրով հանդերձ և անցագիր մը ռուս օգակներու և հայ կամաւորներու կողմէ արգելքի չհանդիպելու համար:

Արդ կը խնդրեմ հարկ եղած տնօրէնութիւն ընել հրամայէք:

Յարգանօք՝

Կարճկանցի **Մանուկ Պետրոսեան**

Մակագրութիւն. *Տալ զենքի արտօնութիւն Կարճկանի համար:* **Արամ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 8, բնագիր, ձեռագիր:

N 87

ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԲՌՆԱԳՐԱՎՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 466 *29 մայիսի 1915 թ.*

Ванскому губернатору.

Препровождая настоящую копию телеграммы командира корпуса за N 1577,[105] предписываю донести, при каких обстоятельствах имел место случай насильственного отобрания скота в Бегри-Кала, как фамилия начальника уезда, а равно, предупредить всех начальников уездов, что при повторении подобных случаев я не остановлюсь перед самыми решительными мерами воздействия, законом мне предоставленными.

Начальник отряда генерал-майор **Николаев**

Начальник штаба[106]

Ֆ.242, ց.1, գ.49, թ.1 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 88

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՉԱՏԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԵՐԻ ՄԱՍԻՆ

29 մայիսի 1915 թ.

Յունիսի 1-էն սկսեալ Կառավարչատունս բաց է առտուան ժամը 9-էն (ը.ե.)[107] *մինչև կէսօրէն ետք ժամը 2, անկէ յետոյ կը փակուի:*

Վանի նահանգապետ **Արամ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 18, տպագիր:

N 89
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ՝ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

N 1259 *30 մայիսի 1915 թ.*
Վան

Վանի նահանգային վարչութեան

Նահանգապետութեանդ մայիս 29 N 487 պաշտօնագրով կը հրահանգէք այս օրէն սկսեալ մեր միջոցով զանձուած դրամները կեդրոնացնել նահանգային վարչութեան կեդր. սնդուկին մէջ, որու զանձապահն է պ. Տիգրան Թէրլէմեզեան, ըստ նոյն հրահանգին օրս պատրաստ դրամները յիշուած տեղը յանձնեցինք քէև, բայց թող ներուի դիտել տալ, որ Ձեր այս վերջի հրահանգը բոլորովին հակառակ է այն կարգադրութեան, երբ տակաւին օր մ՛առաջ նահանգային ժողովի մէջ միաձայնութեամբ այն միտքն կը յայտնուէր, որ նահանգային զանձ մէկ պիտի լինի և ընդհ. ելումուտք Տնտեսական մարմնոյն կը պատկանի:

Մարմինս գործի սկսելու պէս իր անդամներու մէջ գործելու բաժանումներ ըրաւ, նահանգապետութեանդ յայտնեց և անմիջական վաւերացում ստացաւ Մայիս 11 N 62 պաշտօնագրով, բայց դրամները կեդր[ոնական] զանձը կեդրոնացնելու որոշումը բոլորովին պիտի սահմանափակէ մեր գործեր և ոչ մի իրաւասութիւն չը պիտի մնայ մեզ: Այդ պարագային Մարմնոյս գոյութիւնն իսկ աւելորդ պիտի լինի, իսկ թէ զանձապահի ընտրութեան մասին դիտողութիւն մը կայ, զանձապահի ընտրութիւնը բոլորովին նահանգապետութեան իրաւունքն է, կարելի է նոր որոշում մ՛ընել զանձապահի մասին, որն ամէն պարագային Տնտեսական մարմնոյս պատասխանատուութեան տակ պիտի պաշտօնավարէ միշտ:

Նախագահ Տնտեսական մարմնոյ՝ **Գէորգ Շիրեզեան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 211, բնագիր, ձեռագիր:

N 90
ՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻԲՐԵՎ ՇԻՆԱՆՅՈՒԹ ԿՏՐՎԱԾ ԾԱՌԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿՈՋԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԳԵԼԵԼՎՈՒ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1915 թ.
Վան

Տէր նահանգապետ,

Դէպքի ընթացքին մէջ թիւրքերու կողմէ այրուած ու քանդուած կարգ մը տուները և զինուրներու համար կարգի բերուող բաղնիքը, սոյն տան տէրերուն և բաղնեպաններուն մեզի ըրած դիմումը նկատողութեան առնե-

լով, Ձեր հրամանին համաձայն, քաղաքապետարանս, առանց բնաւ անձնական շահի ակնկալութիւն ունենալու, զանազան փողոցներու մէջ տնկուած անպէտք ծառերը ծախու հանուած և սոյն դիմողներուն տրուած են: Սակայն, այժմ կարգ մը ռուս կազակներու կողմէ կարգելուի կտրուած ծառերը փոխադրել և հիւս վարպետներու գործիքներն ալ գրաւած են:

Այս մասին Ձեր կարգադրութիւնը կը խնդրուի:

Քաղաքապետ Պ. Մօզեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 215, բնագիր, ձեռագիր:

N 91

ՆԱԽԿԻՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱԴՊԻՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1915 թ.

Վան

Բարձրապատիւ պր. նահանգապետ Վանայ

Պատիւ ունեմ ընդունելու Ձեր 1915 մայիս 23 թուականով պաշտօնագրութիւնը, որով Վանայ ուսումն. խորհուրդէն ուզած էիք մանրամասն տեղեկութիւններ Վանայ նահանգին բոլոր դպրոցներու մասին:

Կը ցաւիմ յայտնել, որ արդէն կազմալուծեալ Ուսումն. Խորհուրդը ի վիճակի չէ պահանջուած տեղեկութիւնները հաղորդելու: Ասկէ երկու տարի առաջ պատրաստուած խիստ մանրամասն վիճակագրոյցը մնաց պր. Միհրան Թէոլէմէզեանի քով, որ այժմ բացակայ է: Մի տարի առաջ ալ Վանայ թեմին օգնական կրթական տեսուչ պ. Արսէն Հացագործեան թէև ձեռնարկեց այդպիսի վիճակագրոյց մը պատրաստելու, բայց մնաց թերի: Նաև խորհուրդիս պատրաստած կրթական կանոնագրի միակ օրինակը մնաց տօք. Աշոտին քով, որ նոյնպէս այժմ բացակայ է:

Պարտք զգալով հաղորդել Ձեզ սոյն բացատրութիւնները.

Մնամ խորին յարգանօք՝

Նախկին ուսումն. Խորհուրդի ատենադպիր Մ. Մկրեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 24, թ. 6, բնագիր, ձեռագիր:

N 92

ԿՈՂԲԱՆՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆԻՑ ԹԱԼԱՆՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1915 թ.

Խնդրատետր

Կողպանց գիւղացի Մովսէս Մարտիրոսեան

Վսեմ նահանգապետ.

Կուի միջոցին քիւրտերը մեր տնէն քալած տարած են 150 (հարիւրյիսուն) հատ ոչխար, հինգ հատ կով, 10 (տաս) եզ, տաս-հինգ հատ աջառ, մէկ հատ ձի, 9 հատ գոմէշ: Թուրքերի և քուրտերի փախուստից վերջ, երբ բոլոր հայերն էլ գրեթէ քիչ-շատ կենդանիներ ունեցան, մենք մինչև այսօր ոչինչ չունենք: Անցեալ օրեր հօրեղբայրս՝ Սահակ Գէորգեանը Խօշապի կողմեր գնալով մեր կենդանիներից ութսուն (80) հատ ոչխար, երկու հատ կով, երկու հատ էլ գոմէշ ճանչցած, և երբ ուզեցերէ առնել և գիւղը բերել, բայց Քոէի աղայի գիւղին մէջ կարգ մը վանեցիներ արգելած են բերելու:

Ուստի դիմելով Ձեր մեծութեան, պէտք եղած միջոցներով՝ մեր այդ գտած կենդանիների համար, որոնց մեր լինելը շատ վկաներով կը հաստատեմ – մի արտօնագիր տալը կխնդրեմ:

Յարգանքներով՝ ***Մովսէս***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 23, բնագիր, ձեռագիր:

N 93

ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՆԻ ԸՐՋԱՆԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ «ՎԱՆ-ՏՈՍՊ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻՆ ՁԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

30 մայիսի 1915 թ.
Վան

Վսեմ նահանգապետ

Վանեցի պ. Եղիշէ Վարդանեան մեր կողմէ տեղւոյս «Վանտոսպ» թերթին[108] շրջան թղթակից և կուռուպաշցի պ. Աւարոն Աբրահամեան իրեն օգնական նշանակուած ըլլալով, կը խնդրենք, որ հաճիք երկու հատ առանձին զէնքի արտօնագիրներ տալ իրենց հետևեալ մանրամասնութեանց համաձայն.

-թղթակից - Եղիշէ Վարդանեան – մէկ տասնոց ատրճանակ N 133176, փամփ. 100
-օգնական Աւարոն Աբրահամյան - մէկ տասնոց ատրճանակ N 95224, փամփ. 150
- մէկ կարճ մօդել ատրճանակ 1912, փամփ. 100

Խնդրելով, որ հաճիք փութացնել սոյն արտօնագրերու յանձնումը, մնամք յարգանքով՝

Սահմ. Ռամկ. Կուսակց. Վանի շրջանակային ակումբ Յ. Գուլումճեան

Մակագրություն. *Եղիշե Վարդանյան N 548, Աւարոն Աբրահամեան N 549:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 53, բնագիր, ձեռագիր:

N 94
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐԸ՝ ԼՔՎԱԾ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՄԱՄՆԱՎՈՐ ԱՆՇԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

մայիս 1915 թ.

Հաստատուած ըլլալով, որ քանի մը կապալառուներ, օգտուելով տիրող անիշխանական վիճակէն, մէկ մէկ կազակ կամ հայ կամաւոր վերցուցած կը պտտին լքուած իսլամ գիւղերը և կը իւրացնեն հոնտեղ մնացած հացահատիկները և ապրանքները: Սրանով կը յայտարարենք, որ մասնաւոր անձինք իրաւունք չունին այդպիսի իւրացումներ կատարելու, որ այդպիսի ապրանքներ պիտի գրաւուին և անսաստողները պիտի պատժուին:

Վանի նահանգապետ՝ ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 24, տպագիր օրինակ:

N 95
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԼԵՄԿ ԵՒ ԱՎԱՆՑ ԳՅՈՒՂԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԸ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հունիսի 1915 թ.
Վան

Տէր Նահանգապետ

Երկրագործական ամբարի գործիքներէն բաւականաչափ գութան և ուրիշ գործիքներ մեր լքած քննութեան համաձայն Լէսկ և Աւանց գիւղեր տարուած են: Այս մասին նոյն տեղերու կառավարիչներուն պաշտօնապէս գրելով, որոց քով որ կը գործուին, ցուցակագրելու և պէտք եղած կարգադրութիւն ընելու համար յիշեալ՝ ցուցակ վարչութեան ղրկելու հրաման ընելիդ կը խնդրուի:

Երկրագործական տեսուչ՝

Խաչիկ Զիլինգեան

Մակագրութիւն. *Գրուեցաւ Շահբաղիի գաւառապետութիւն.*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 30, բնագիր, ձեռագիր:

N 96

ՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՂԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ԿՈՉԱԿՆԵՐԻՑ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԵՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 15 *1 հունիսի 1915 թ.*

Վսեմ նահանգապետ

Ի պատասխանի 523 N 30 մայիսի ձեր վսեմութեան դիւանապետի յայտարարութեան, պատիւ ունիմ իմացնել, որ աղի ամբարները տակաւին կը մնան զօզակների հսկողութեան և կամենտանտի կնքոյ տակ, որով արգելք կըլլան մեր ազատ գործնէութեան, և նոյնպէս չեն թողուր, որ հաղակոյտի տակ գտնուած աղերը դուրս հանելով, դիմացի ամպար փոխադրենք:

Ուստի կը խնդրեմ պ. կամենտանտէն, հրաման մը տրուեր, որ գազախները այլևս որևէ միջամտութիւն կամ պահպանութիւն չընէին, որովհետև արդէն տեղեր ունինք, որ կը հսկեն գիշեր և ցորեկ աղի ամպարներին:

Տնօրէն Հանրային պ. վարչութեան Վանայ՝

Խ.Ս. Արծրունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 97

ՄԿՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1585 *1 հունիսի 1915 թ.*

Մոկս

Յարգելի պ. Արամ Մանուկեան
Կառավարիչ Վանի

Յարգելի պարոն.

Մոկս գրաւելով հայ 2-րդ բանակի[109] 3-րդ վաշտի կողմէն այստեղ ալ որոշուեցաւ առժամեայ կառավարութիւն մը, որի անդամներն են՝

Գրիգոր Նահապետեան՝ գաւառապետ

Կարապետ Ղազարեան՝ գաւառապետի օգնական

Աւագ Մարտիրոսեան՝ տնտեսական մասի կառավարիչ

Կիրակոս Մարտիրոսեան՝ իրան օգնական, ջոկատապետ Քենօն՝ բերդապահ:

Այս բան ձեզ յայտնելով՝ կը յուսանք, պէտք եղած հրահանգներ որկէք գործերնիս վերաբերմամբ, որ պէտք եղած կերպով կրնանք օգտակար լինել մեր քանդուած, վառուած, վերան դարձած երկրին: Մէկ ալ յարգելիս, մեր շրջան սով է լինելու այժմ, մենք ունենք գաղթական դրսեցի 750 ոգմեցի, 400 կառկառցի, 500 մամուտանցի, 150 յակամերցի, հակուկցի, մօտ

երկու հազար ալ տեղացիներ զաղթական են դարձեր, որովհետեւ Տիմիս կալեն, Բալասո շրջան, Տալանից կալեն և Բառածորի կալեն ամբողջապէս կողոպտուած և վառուած են:

Մեր չեն մնացած տեղերն են քաղաքի թաղեր, Հաղին, Յաոնջա կալեն և Նանրնից շրջան: Մեզնից կայ մօտ 700 զոհ (մեծ մասամբ կին, երեխաներ, քիչ թւով տղամարդիկ և մօտ 6 զինւոր), իսկ քրդերից 300-էն աւելի զոհեր եղած են (կին, երեխա և տղամարդ):

Յարգելի պարոն, վստահ գիտցէք, որ մեր այս մնացած շրջանը բոլորովին անկարող է պահել այդ զաղթականներին, ուստի հրաման ըրէք տեղ ցույց տալ, որ հոն ղրկէնք, եթէ ոչ ամբողջապէս կը զաղթաի մեր շրջան և վերան կը դառնայ: Կսպասենք պատասխանի:

Մոկսի առժամեայ կառավարութիւն

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 30 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 98

ՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՂԱԼԱՋՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

N 64 — 1 հունիսի 1915 թ.

Վան

Պրն. Նախանգապետ

Նկատելով, որ ժողովրդեան մէջ պղնձեայ եւ դրամները փոխանակելու դժկամութիւնները և արգելքները կը յարուցեն, նոյն իսկ անհատական մարմին ևս առնելու դժուարացած է, ինչպէս կը լսուի: Ներկայիս կը խնդրէինք այդ մասին կարգադրութիւն մը, կամ բոլորովին փոխանակելէ դադարեցնելու որոշում տալ, կամ յայտարարել ժողովրդեան, որ փոխանակութիւն վերջականապէս:

Վանի ոստիկանապետի օգնական՝ Ղալիբ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 28, բնագիր, ձեռագիր:

N 99

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹԱԼԱՆՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հունիսի 1915թ.

Վան

Երկրագործական և գիւղատնտեսական ամբարէն զանազան գործիքներ և մասեր ժողովուրդէն ոմանց կողմէ կողոպտուած ըլլալուն համար կը յանձնարարենք, որ առանք չուտով երկրագործական տնօրէնութեան յանձնուին, որմէ արժէքին համաձայն նուէր պիտի ստանան:

Գործիքներ և մասեր չյանձնողները խուզարկութեան ենթարկուելով, դատարանին պիտի յանձնուին և պիտի պատժուին:

Վանի նահանգապետ **Արամ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, բ. 7. տպագիր օրինակ:

N 100
ՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՅ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՈՉԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԲԱՐԻՑ ԱՂ ՏԱՆԵԼՈՒ ԵՎ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հունիսի 1915 թ.
Վան

Վսեմ նահանգապետ.

Անցեալ ամսոյ 30-ի երեկոյին մեր քաղաքէն մէկնելէն վերջ գօզակները քաղաք գալով, մեր 9-րդ ամբարի դուռը կը բանան և չորս քիլե[110] մօտաւորապէս 400 քիլոյ աղ կը տանին, նոյնպէս ներփակ ռուսերէն տոմարի համաձայն 90 քիլօյ աղ ալ առանձին տարած են, որով կընէ 490 քիլոյ 269 ու կես դահեկան[111], և որովհետև ի վերջոյ նորեն մեծ կնքով կնքած են, կը հասկցի, որ պ. կամենտանտ ալ միասին եղած է, ուստի կը խնդրուի, որ սոյն քանակ ինքնագլուխ աղ տանելը արգելելով հանդերձ, աղի արժեքն ալ բարեհաճէք գանձել և մեր հաշուոյ նշանակելով, ընկալագիրը ղրկել մեզ:

Հանրային պ. վարչութիւն Վանայ
Խ. Ս. Արծրունի

ՀԱԱ. ֆ. 242, ց. 1, գ. 22, բ. 12, բնագիր: Ձեռագիր:

N 101
ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՋՐԱՂԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՑԻ ՓՌԵՐԸ ՄՆՀԱՊԱՂ ԲԱՅ ՄՆԵԼՈՒ ՄՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 714 *2 հունիսի 1915թ.*

Предлагаю Вам распорядиться немедленно открыть все мельницы и городские хлебопекарни и сейчас же назначить усиленную выпечку хлеба для нужд отряда.

Об исполнении сего ожидаю Вашего донесения сегодня же.

Генерал-майор **Николаев**
За отрядного интенданта, коллежский ассесор **Замятин**

ՀԱԱ, Ֆ.242, ց.1, գ.6, թ.67, բնագիր, մերենագիր:

N 102

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՆ՝ ԿՆՔՎԱԾ ԱՂԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 564 *2 հունիսի 1915թ.*

Ванское Управление "Dette publice" заявляет, что его склады соли поныне опечатаны печатью г. коменданта и находятся под надзором воинских чинов, что препятствует производству торговли солью.

Вместе с названным Управлением покорнейше просим Ваше превосходительство не отказать распорядиться о снятии печати и надзора воинских чинов, а также о предоставлении Управлению беспрепятственно распоряжаться принадлежащей ему солью под допущенным Вашим превосходительством мне контролем.

Ванский губернатор ***Арам***
Секретарь ***А. Дарбинян***

Մակագրություն. *Г. губернатору гор. Вана*
По приказанию начальника гарнизона, довожу до Вашего сведения, что в распоряжение Dette publice был передан один склад соли, что вполне достаточно для нужд города.
Для ознакомления с потребностью соли для городского населения не откажите сделать распоряжение о представлении сведений о количестве проданной соли, о количестве пудов соли, продаваемой ежедневно, и о числе пудов соли, остающемся в амбаре. 4 июня 1915г. г. Ван, Комендант сотник ***Успенский*** [112]

ՀԱԱ, Ֆ.242, ց.1, գ.6, թ.71, բնագիր, ձեռագիր:

N 103

ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ ՀՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՆԿՇՏԱՑ ԳՅՈՒՂԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

3 հունիսի 1915 թ.
Աստվածաշէն

Վսեմ կառավարչապետ պ. Արամ

Գիւղացիների տուած տեղեկութեան նայելով, երէկ 4-5 կամաւորներ Չեռնակի կամուրջէն անցած ժամանակ քիւրդեր կը հարձակուին անոնց վրայ, եւեւից եկող կազակները հրացանների ձայնը լսելով օգնութեան կը հասնին կամաւորներուն ու հոն կռուի ժամանակ մի կազակ կը վիրաւորուի, իսկ քիւրդերը կը փախչեն, կազակները կը բարձրանան լեռ քիւրդերին կը փնտռեն, չեն կարող գտնել, կը թողուն իրենց տեղեր, կը վերադառնան:

Ոչխրանից և Տմկոռնիի ռուսական կօրտօնները[113] վերցուեցան, իսկ Կասրիկի կօրտօնից տեղեկութիւն չունինք, Նորդուզի ժողովուրդը կը քաշուի Հայոց-Ձոր և Խօշապի հայ գիւղեր:

10 (տասս) ոստիկան և մի ոստիկանապետ ուղարկիր, որ զետեղենք Մենկշտանց, ժողովրդի ապահովութեան համար:

Կը խնդրուի, որ Հայոց Ձորոյ շրջանից Ձեր գրուած զէնքերը պատրաստէք, որ եւս տանք, որովհետև վերադարձնելու կարիք կայ:

Վերին Հայոց-Ձորոյ գաւառապետ՝ Նշան Նալբանդեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 27, բնագիր, ձեռագիր:

N 104
ՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱԶ Հ. ԳԱԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՁԻՄՎՈՐ ԿՈՉՆԱԿՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

N 76 *3 հունիսի 1915 թ.*

Վանի նահանգային վարչութեանն

պ. Նահանգապետ.

Կը փութամ Ձեզ տեղեկացնել նախ որ Թիմարի և Արճակի շրջաններու մեր ձիաւոր կոչնակները՝ Կրան և Արամ հրաժարած են և չեն շարունակէր իրենց գործերը, առաջին ամսականի պակասութիւնը և երկրորդ շրջանի հետաւորութեան և զէնքի չգոյութեան պատճառով, որով մենք այժմ տրամադրելի ունենք ամբողջ դատական կազմի համար միայն մի ձիաւոր կոչնակ: Աւելորդ կը համարեմ ձիաւոր կոչնակներու անհրաժեշտութիւնը շեշտել, պարագայ մը զոր յաճախ կրկնած եմ: Կը խնդրեմ անմիջապէս երկու ձիաւոր կոչնակներ որոշել և տրամադրելի ընել տալ:

Բ. Դատարանի նախագահութեան ուղղուած և ինձի փոխանցուած իրենց 2 Յուլիս թուակիր խնդրագրով դատարանի քարտուղարներէն Խաչատուր Գևորգեան, Մ. Ազնաուրեան և Բ. Դարբինեան կը խնդրեն յաւելում իրենց սահմանուած ռոճիկներու վրայ, քանի որ իրենց աշխատանքը անհամեմատ աւելի շատ է, քան այն քարտուղարներուն, որք կստանան առնուազն 40 ռուբլի ամսական միւս կառավարական պաշտօնատուներու մէջ:

Պարտականութիւնն ունեմ խնդրել Ձեզմէ, որ այս պարագան, նաև որ իրենց ռոճիկը հատապատասխան չէ իրենց աշխատանքին՝ ի նկատի ունենալով, յարմար յաւելում մը որոշել նաև ընդհ. դատախազութեան գրագիր պ. Դաշտօյեանի մասին, որու համար երեկ գրած եմ ձեզ:

Հրանտ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 117 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 105

«Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 11 *21 մայիսի / 3 հունիսի 1915 թ.*

Վան

Վսեմ Նահանգապետ.

Նախապէս ջանք կը թափուէր արդէն «Մ. Աւետիսեան» գրադարան-ընթերցարանի համար սեփական շէնք մ՛ունենալ, բայց կսպասուէր նպաստաւոր հանգամանքների. այժմ աւելի քան երբէք առիթը ներկայացած սեպելով[114], Ձեզ կը դիմենք, որ հաճէք քաղաքապետութեան պատկանող, Աւօյի-Դարիվար գտնուած Ջամալի արտի 1/4 մասը մեզ տրամադրել, ինչպէս նաև շէնքին համար անհրաժեշտ եղող առնուազն 1000-ի չափ ծառեր կտրելու արտօնութիւն մը տալ:

Լիայոյս ենք, որ չպիտի մերժուի առաջարկնիս այն օգտաշատ ձեռնարկին համար:

Ի դիմաց «Մ. Աւետիսեան» գրադարան-ընթերցարանի վարչութեան՝

Գ. Գալֆայեան

Մակագրութիւն. *Խնդրուած կտորն քաղաքապետութեան պատկանելուն ուրիշ կտորմ յատկացնել:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 24, թ. 2, բնագիր, ձեռագիր:

N 106

Տ. ԱՄՊԱՏՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՌՆԱԶԱՎՎԱԾ ԻՐԵՆՑ ԽՄՆՈՒԹԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 1526 *4 հունիսի 1915 թ.*

Վսեմ կառավարչապետ

Միրզախանեան խանի մէջ ունեցած մեր խանութի երկաթեղէններ խանութի վառուելէն յետոյ հանած ու ապահովութեան համար տարած էինք պօյախանէն:[115] Ասկէ վեց օր առաջ ռուս կառավարութեան կողմէ թիւրքի ապրանք կարծուելով՝ կնքուած են: Սոյն ապրանքներ մեր ըլլալ հաստատելով ու մեզի վերադարձնելու համար պէտք եղած կարգադրութիւնիդ կը խնդրենք:[116]

Յարգանքներով՝

Տիգրան Ամպատուրեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 107

ՄՈԿՍ ԳԱՎԱՌԻ ԳՈՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ԳՅՈՒՂԻ ՓՈԽԱՐԵՆ ՈՐԵՎԷ ՔՐԴԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1607 *4 հունիսի 1915 թ.*

Մոկս

Վսեմ. Նահանգապետ

ի դիմաց ութ ընտանիքներու խնդրատու Գրիգոր Պապիկյան, Մոկս

Այս դէպքին մեր գիւղ Մոկս գաւառի Գոմեր ըսուած գիւղը քիւրդեր այրած, կողոպտած և մեծ մասն ալ ջարդած են: Այդ ջարդին մենք 8 ընտանիքներով ազատուած ենք քաղաքի մէջ՝ Գրիգոր Պապիկեան, Յակոբ Վարդանեան, Մելիք Տէր-Մարտիրոսեան, Մանուկ Մարտիրոսեան, Յովհաննես Խլօեան, Դաւո Գիւլանեան, Աւետիս Խալօեան և մեր գիւղի քահանան: Որ ոչ մի միջոց չունենք գիւղ երթալու և արդեն գիւղը, ինչպէս ըսի, աւերակ դարձած ըլլալով՝ կը խնդրենք, որ այս 8 ընտանիքին մօտակայ քիւրդ գիւղ մը ցոյց տաք առայժմ հոն մնալու համար:

Յարգանօք՝ ի դիմաց Մոկս գաւառի Գոմեր գիւղի 8 ընտանիքին

Գրիգոր Պապիկեան

Մակագրություն. *Եթէ իրենց բնակավայրը կուզենան երթալ, կարող են, ապա թէ ոչ՝ ուրիշ տեղ երթալ չեն արտօնուեր:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 32, բնագիր, ձեռագիր:

N 108

ԹԻՄԱՐԻ ԳԱՎԱՌԻ ՓՈԽԿԱՌԱՎԱՐՉԻ Ա. ՓԱՀՃԱՃՅԱՆԻ ՉԵԿՈՒՑԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

4 հունիսի 1915 թ.

Ալիւր

Վանուայ Նահանգի վսեմ. կառավարչին

Գաւառական դիւանից N 18 գաւառապետներուն ուղղուած շրջաբերականը ստացանք, որով կը յանձնարարեն մեզ տեղեկագրել շուտով մեր շրջանի գիւղերի թիւը, բնակչութեան թիւը, իւրաքանչիւր տան ոչխարների և սևատաւարների[117] թիւը և բնաւ ոչխար կամ սևատաւար չունեցողներու թիւը:

Այս առթիւ թոյլ տուէք ինձ յայտնելու իմ դիտողութիւններս, որ կրցեր եմ ձեռք բերել պաշտօնավարութեանս ընթացքին:

Պաշտօնավայրս գալով, մի քանի օրից յետոյ շրջեցի իմ շրջանի բոլոր գիւղերը, տեղեկանալու ժողովրդի վիճակի, տնտեսական դրութեան

հետ, պատրաստեցի վիճակագրություններ, յանձնարարեցի գիտապետներին և քահանաներին որքան կարելի շուտ պատասխանել գրաւոր վիճակագրյիս հարցերին՝ գիւղի այժմեայ բնակչութեան թիւը, սպանւածներու ըստ սեռի և ըստ հասակի թիւը, կեղրրած ցանքսերու վնասը, վառած տներու թիւը, իւրաքանչիւր տան կորուներից առաջ և յետոյ ունեցած տան ապրանքներու, ոչխարների և սնատաւարներու արժէքն ու թիւը մօտաւորապէս և չքաւորներու թիւը:

Բայց դժբախտաբար պատասխանը և ոչ մէկից ստացայ: Հարուստները թագցրին իրենց հարստութիւնը ու կենդանիները ու ծածկաբար մորթեցին այն բոլոր կենդանիներ, որոնց տէրերը բողոքագրով կպահանջէին իրենց սեփական կենդանիներ: Աղքատներու, աշխատաւոր ծեռքերից զրկուածներու, տուն տեղ չունեցողներու, կենդանիներից բնաւ չունեցողներու խնդրագրերը ստիպեցին ինձ դիմել ծեռնարկութիւններու, հաւաքել մի գիւղի ամբողջ կենդանիներ ու կրկին բաշխում կատարել ընտանիքի թւի և արած ցանքսերի համապատասխան չափով: Փոքր գիւղերը վերջացրել եմ, մնացել է մեծ գիւղեր, որոնց պիտի ծեռնարկեմ լրւած գիւղերու աճուրդով ծախելէն յետոյ:

Այդ առթիւ սկսել է դժգոհութիւն հարուստներու մէջ, որոց վրայ կխրնդրէի Ձեր ուշադրութիւնը անոնց տւած հանրագրերու և բողոքագրերու վրայ:

Մեր շրջանի գիւղացիութիւնը կենդանիներէն ընդհանուր առմամբ աղքատ է: Կրծի ընթացքին այս շրջանի կենդանիները աւարի ենթարկուել ու տարել Նօրտուզ, կուէն յետոյ ծեռք է բերել լրւած գիւղերու կենդանիներ և ծեռք բերւածները հաւանաբար բաւարարութիւն տային, եթէ կամատորներու շահատակութիւններ չլինէին: Մի քանի կամատորներ, այն էլ մի քանի անգամ, կեղրոնի կամ կուսակցութեան անունով գիւղերու լաւագոյն կենդանիներ տարել են, չկայ մի գիւղ, որ զերծ լինի այս շահատակութիւնից, որ խոշոր չափերի կեսնսի: Բաշխում կատարելէն յետոյ էլ շատ քիչ տուներ երկու եզան կամ մէկ գոմշու տէր եղան, իսկ կթան տաւարներէն մէկ կով կամ երկու-երէք այծ-ոչխար, ոչ աւելի: Այս բոլորի հետևանքը եղաւ այն, որ Թիմար գաւառը, գոնէ Ալիւրի շրջանը բացարձակապէս հերկ չէ ըրած: Իսկ կենդանի ունեցողներն էլ հերկ չարին, կենդանիներ ախոռներէն դուրս չեն ըներ, որ մի գուցէ տաւարներին տէր դուրս գայ և օրինական ճանապարհով իր ծեռքէն առնէ, չքաւորներն էլ աշխատանք թողած փնտրելու է ելած իր կենդանիները:

Արդ, յարգելի նահանգապետ, Ձեր ուշադրութիւնը կխնդրէի այս կենսական հարցերի վրայ և որքա՞ն կարելի է շուտ մի դարման առնէք, տրամադրելի կենդանիներէն բաժին հանէք մեր շրջանին:

Ես ինչքան աշխատեցի լրւած գիւղերու աճուրդը գիւղացիութեան թողնել, չկրցի, գիւղացիութիւնը բացարձակապէս անտարբեր գտնուեց, միայն որոշման օր հրապարակ կուգան, կխնդրեն աճուրդի չհանել, ան-

ընշան գնով մը իրենց տալ, որ ես իրաւասութիւն չունէի իմարկէ: Այս առթիւ ես հանրագրութիւններ կղրկիմ Ձեզ, որոց վրայ ես Ձեր ուշադրութիւն կխնդրէի: Եթէ կարելի է առանց աճուրդի որոշ գնով մը տալ գիւղացիութեան, յանձնարարէք ինձ, խնդրեմ, մինչև վաղ երեկոյ, որովհետև աճուրդը կվերջանայ:

Ռուս կոզակները դեռ չեն դադարել ժողովրդին կողոպտելէն ու ցանքսերը կերցնելէն: Ինչքան հնարաւոր է մեր կողմից աշխատանք կլինի ատոնց դիմացը առնել, բայց կողոպտողները ծածկանունով են և իրենց տեղեր չեն ցուցներ կամ անծանօթ տեղերու անուններ կըսեն, իսկ դիմադրութիւն չկայ բնաւ, թէև այդ մասին հրահանգներ տրուած է իրենց:

Ինչքան որ գիւղացիութեան յորդորելի իրենց վառած դպրոցներ, եկեղեցիներ շինել տալու, խոստանալով կառավարութեան աջակցութիւն փայտ ձեռք բերելու լրւած գիւղերէն, իզուր եղաւ, այնպէս որ այս մասին բոնի միջոցներու դիմել անհրաժեշտ է: Այս գործեր վերջացնելէն յետոյ միայն հնարաւորութիւն կունենամ մանրամասն և անձամբ վիճակագրութիւն կազմել և Ձերդ Վսեմութեան տեղեկագրել:

Ծախսած բոլոր գիւղերու դրամի դրկելու մասին Ձեր կարգադրութիւնը կխնդրենք:

Ալիւրի փոխ. կառավարիչ [Արամ Փալճալճեան]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, քք. 28-29 շրջ., բնագիր, ձեռագիր:

N 109
ՎԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ Մ. ՄԻՆԱՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎՆԱՍՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N1528 *4 հունիսի 1915 թ.*
Վան

Պ. Նահանգապետ

Ներփակ կը դրկեմ 3-րդ գրութիւնը տարրական դպրոցներու մասին մշակուած առաջնորդող սկզբունքներու:

Նահանգապետութեան մէջ այնքան խճողուած ըլլալ կը թուին անմիջական լուծման կարօտ հարցերը, որ պէտք եղած ժամանակը չկրնար յատկացուիլ հիմնական և նոյնքան անյետաձգելի հարցերու:

Նկատելով, որ Ձեզ ներկայացուած կրթական առաջնորդող սկզբունքներու վաւերացման յետաձգումը անգործութեան կը դատապարտէ կրթական տեսչութիւնս, ինչպէս նաև անկարելի կը դարձնէ որևէ կարգադրութիւն յառաջիկայ տարեշրջանի դպրոցական գործերու՝ անգամ մը ևս կուգամ ջերմօրէն խնդրել Ձեզմէ, որ հաճիք անմիջական ուշադրութիւն դարձնել ներկայացուցած առաջարկներուս: Դպրոցական շէնքերու կառուցման հարցն ալ անմիջական լուծման կը կարօտի: Բարեհաճեցէք

քաղաքիս վճռաւած եկեղեցիներու և դպրոցներու ճուիրել չինութեան ծառեր, իսկ անդին գիւղերու այրած դպրոցներու չինութեանց մասին ոչ մէկ կարգադրութիւն եղաւ ցարդ: Չէ՞ր կարելի արդեօք մասնաւոր պայմաններով և վստահելի միջոցներով դիւրութիւն ընծայել գիւղական դպրոցներու ալ կառուցման:

Կը յուսամ, թէ պիտի կարողանանք երկրորդական հարցերով զբաղումիդ վստահել օգնականներու, իսկ Ձեր ժամանակն ու ջանքերը խնայել հիմնական կարևորութիւն ունեցող խմդիրներու կարգադրութեան համար, որոնց կարգին առաջին տեղ կը գրաւէ կրթականը:

Յարգանօք կրթական տեսուչ՝ Մ. Մինասեան

Ուսումնական ծրագրի հիմքեր

1.- Նպատակ տարրական դպրոցի

Տարրական դպրոցի նպատակը պիտի ըլլայ՝

ա.-Մանկութեան այդ հասակին ինքնաբուխ շահագրգռութիւններէն առաջնորդուելով՝ համակիր ու գործօն հաղորդակցութեան դնել տղան բնութեան հետ և այսպէս յառաջ բերուած գործունէութենանց միջոցաւ հաստատել անոր մէջ հնարիմացութեան, ճեռնէրէցութեան ու ճեռական աշխատութեան ունակութիւնները, ինչպէս նաև բնութեան գեղեցկութիւններն վայելելու սէր և արհեստական ճարտարութիւն ու ճաշակ:

բ. Բնութեան հետ եղած այս ներգործական յարաբերութիւններու ընթացքին, տղան զգացած պէտքերէն առաջնորդուելով՝ անճնական փորձառութեան միջոցաւ հաղորդել անոր տարրական ծանօթութիւններ բնական ուժերու, անոնց գործելակերպերու և տուած արդիւնքներու մասին:

գ. Կարողացնել տղան հասկնալու իր մայրենի լեզուով գրատրապէս արտայայտուած խորհուրդները և բերանացի ու գրաւոր մտքուր կերպով արտայայտելու բուն իր խորհուրդներ, ինչպէ նաև մշակել անոր մէջ ընթերցանութեան ճաշակ և ունակութիւն:

դ. Տղան ընկերական բնազդներէն առաջնորդուելով՝ ստեղծել ընկերական գործունէութիւններ ու այսպէս մշակել գործակցական ոգի, ընկերական ու քաղաքացիական առաքինութիւններ, ինքնավարութեան կարողութիւն և բարեկիրթ ունակութիւններ:

ե. Հայրենագիտութեան, ազգային թէ օտար, աշխարհիկ թէ կրօնական մեծ դէմքերու ու դէպքերու պատմուածոց և գրականութեան ազդեցութեամբ տոգորել տղուն սիրտը հայրենասիրական ու բարոյական զգացումներով:

2. Դպրոցական զբաղումներ

ա. Տուն և դպրոց.- Տղան առաջին տարիներու ամենագլխաւոր զբաղումներէն մէկը պիտի կազմէ տան և դպրոցի ուսումը: Անձնական փորձառութեամբ պիտի ծանօթանայ ան տան ու դպրոցի չէնքի մասերուն, կահ կարասիներուն և գարդարանքներուն, պիտի մասնակցի դպրոցական

ու տնայինֆիզիքական աշխատութիւններուն՝ իւրաքանչիւր սեռը իր յարմարութիւններուն համեմատ: Աղջիկները իրենց ժամանակին մէկ մեծ մասը պիտի տան կար ու ձևի, ճաշասեղան պատրաստելու, կերակուր եփելու վարժութեանց, սենեակ մաքրելու և յարդարելու աշխատութեանց:

բ. Պարտէզ ու դաշտ.- Մանուկը անճնապէս ուսուցչի օժանդակութեամբ՝ պիտի ծանօթանայ պարտէզի ու դաշտի կենդանիներուն, տունկերուն և աշխատութիւններուն, դպրոցի պարտիզին մէջ մշակելով ածուներ ու բուծանելով հաւ, մեղու, շերամ, այծ, ոչխար կամ կով:

գ. Աշխատանոց.- Տարրական ամէն դպրոցի չէնք պիտի ունենայ արհեստանոց-դասարաններ, ուր օրուան կարևոր մէկ մասը տղայք պիտի զբաղուին արհեստական աշխատութիւններով, պիտի ծանօթանան գործիքներու և անոնց գործածութեանց, պիտի շինեն տնական ու դպրոցական առարկաներ ու զարդարանքներ և գիւղատնտեսական փայտեղէն պարզ գործիքներ ու կահեր: Լայն պատեհութիւն պիտի տրուի տղուն գեղագիտական դրտումներու արտայայտումներուն՝ փայտի, կաւի կամ բոլքի վրայ: Իւրաքանչիւր աշակերտի անհատական նախասիրութիւնները նկատի պիտի առնուին բոլոր այս զբաղումներու մէջ:

դ. Բաւականաչափ ժամանակ պիտի յատկացուի «մշակոյթային» անուան տակ բովանդակուած գործունէութիւններու, ինչպէս երաժշտութիւն, թատերական ներկայացումներ, գծագրութիւն, գրական ու երաժշտական հանդէսներ:

ե. Ընթերցանութիւն.- պարտէզի, աշխատանոցի և պտոյտներու մէջ կատարուած այս գործունէութիւններէն բղխող շահեկանութեանց մղիչ ուժով՝ տղան պիտի առաջնորդուի օգտուելնաև ուրիշներու փորձառութիւններէն: Այսպէս կը մտնէ գիրն ու գրականութիւնը տարրական դպրոցին մէջ և ասկից կը ստանայ տղան ընթերցանութեան իր շարժառիթը: Իր դիտած երևոյթները, իր լսած պատմուածները, իր ձեռք բերած արդիւնքները կ՚արձանագրէ տղան գրով կամ պզտկերով, աւանդութիւններն ու պատմուածքներ կ՚արտայայտէ, թատերական ներկայացումներով՝ իր արձանագրութեանց տետրակներ կը կազմէ տղան կազմասենեկին մէջ: Այսպէս գործաբանական յարաբերութիւններով իրարու հետ կապակցուած ամբողջութիւն մը կը կազմեն տղուն բոլոր զբաղումներ:

զ. Վարժութիւն.- Օրուան կարևոր մէկ մասը պիտի յատկացուի բուսաբանութեան, ընթերցանութեան, գեղագրութեան, ֆիզիքական մարզանքի, գծագրութեան և ուսման ուրիշ ճիւղերու մեքենական այն մարզանքներուն, որոնց ունականալու համար կամ որոնց մէջ ճարտարութիւն ու ճշտութիւն ստանալու համար կը պահանջուի յարատև կրկնում: Բոլոր այս մեքենական բազմակրկնակ վարժութիւններուն շարժառիթը պէտք է բղխի տղուն արհեստական կամ մշակոյթային շահեկանութիւններէն:

է. Ազատ զբաղում.- Օրուան մէկ մասը.- յարմարագոյն է յետ միջաւուր վերջի պահը.-կը տրամադրուի աշակերտաց՝ իրենց նախասիրած զբա-

դումներով պարապելու: Ուսուցիչը ներկայ կը գտնուի միայն օժանդակելու անոնց, որ դժուարութեան կամ շուարման մէջ են և պէտք կզգան իր թելադրութիւններուն կամ օժանդակութեան:

Կրթական տեսչութիւն

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 10, գ. 24, թթ. 9-10 շրջ., բնագիր, ձեռագիր:

N 110
ԱԼՋԱՎԱԶՅԻ ՕՀՄՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ՄՄՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՇՐՋՄՆԻ ՄՆԿԱՅՈՒՆ ՎԻՃԱԿԻ, ԹՇՆԱՄՈՒ ՈՒԺԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ ՀԱՅՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4 հունիսի 1915թ.
Ալջավազ

Վսեմապատիւ պ. Արամ,

Ռուսի բանակ այժմ Ալջէվազի մէջ կը մնայ 1500 զօրքով, դէպի յառաջ չի անցներ, միմիայն թէ պահապաններ մինչև Ախլաթ գնում և դառնում են: Իրքը յառաջ գնալու դեռ միտք չկայ: Անորոշ դրութիւններով կը վարուին ժողովուրդի հետ: Թշնամու բանակներն ալ Ախլաթի գիւղերն են, բայց շատ ուժ ունեն ատոնցմէ, տեղւոյս ռուսներու ոյժ թշնամիէն պակաս է: Ահա մեր շրջանի գերիներ բոլորն ալ երկիր անցան, շատ նեղ դրութեան մէջ են, ոչ մի գիւղ ցորեն չի մնացեր, միմիայն թէ Ալջէվազի մէջ կայ երբեմն ցորեններ: Տեղի ժողովուրդ երբեմն մէկ-երկու կօտ ցորեն բերած միջոցին կազախներ գրաւում են և իրենց ձիերին են տալիս: Որ գրաւած ցուցակէն կը հասկընաք մեր շրջանի կոտորած, իսկ մնացող գերիներ բոլորովին անտէր և անպաշտպան են մնում, չունին ուտելիք, հաց, նաև լծկան, կթան և այլն: Դուք մեր շրջանի կեանքին լաւ ծանօթ էք, որ նրանց ապրուստ ցանքսերի վրայ է, ցանքերն ալ մի ամիս յետոյ կը հասնին, բայց չկայ քաղող կամ թէ լծկան, որպէսզի ինչպէս է օրէնքն՝ կատարեն, ուստի յատկապէս կը խնդրեմք ձեզանից, որ ի սէր Աստուծոյ և ի սէր ազգութեան այս գերիների ապրուստին մի ճարը գտնէք, որպէսզի չմեռնին, վերջապէս սրանց ապրուստի միջոցներ գտնել ձեր խղճին կը մնայ: Ռուս կառավարութիւն տեղս եկած միջոցին ժողովուրդ չկար մէջ, երկրի մէջ ոչ մի անասուն չկայ բոլորովին, թշնամիէն մնացած անասուններն ալ ռուսներն էին վերցրած և իրենց համար կը մորթէն: Մենք տեղւոյս գամանդիրին դիմեցինք անասուներ պահանջելու համար, ըսաւ, թէ մենք չունինք, Վան դիմէք, այնտեղ շատ կայ, թող ձեզի տան, այլևս ձեզ կը մնայ շրջանի գերիներու ապրուստի միջոցներ: Մէկ ալ կը խնդրեմք, որ հայ գաւառապետ մը ղրկէք այս տեղ, որպէսզի այս գերիներու համար կարգադրութիւններ ընեն: Ինչքան կարելի է՝ մեր պ. Գրիգոր ղրկէք այս տեղ գաւառապետ և 4 կամ 5 տասնեակ ալ գաւառապետի հետ տեղս ղրկէք,

որովհետև այս տեղ դեռ ամորոշ վիճակի մէջ է, թելիֆօճ[118] չունի, թշնամին ալ ուժեղ է:

Այս է Ալջէվազի կոտորածի ցուցակ

սպանեալ	*ողջ*	*գիւղերու անուն*
144	*6*	*Յարծկէ*
45	*40*	*Կոճերէր*
25	*5*	*Կուզէլ*
32	*6*	*Վիճկացոռուկ*
6	*28*	*Բարկաք*
42	*14*	*Ն. Սիփան*
175	*1*	*Վ. Սիփան*
25	*1*	*Վերանկազին*
101	*8*	*Գոզոխ*
15	*1*	*Յուռու*
55	*2*	*Այգեձոր*
170	*3*	*Չիրաքլու*
70	*2*	*Պէշնագոմեր*
55	*10*	*Նորշէն*
122	*95*	*Առեն*
60	*67*	*Առնջկուս*
87	*30*	*Ն. Արճրայ*
53	*17*	*Վ. Արճրայ*
50	*48*	*Գարաքէշիշ*
107	*16*	*Նորշուկջուղ*
33	*12*	*Անուշաղբիւր*
25	*12*	*Տանճուտ*
140	*10*	*Խորանս*
1637	*414*	

Ահա այս է մեր շրջանի կոտորուածներուն ցուցակ, սրանցից ի զատ ամէն մի գիւղէն 15 մարդ, 15-20 կին գերի են տարած: Արդէն հիւանդութեան ալ 600 հոգի զոհ տուինք, թէ երեխայ և թէ մարդ ու կին, այժմ ունինք 5000-էն աւելի գերիներ, որ բոլորն ալ մերկ ու բոբիկ թափառում են առանց տէր ու տիրականի: Մեր շրջանի գերիներէն ի զատ մօտիկ հազարի ալ Ախլաթի գերիներ են եկած Ալջէվազի մէջ առանց մի պաշտպանի: Մենք այժմ Ալջէվազի մէջ ենք, տեղւոյս զամանտէրն[119] ալ մեզի սիրով կընդունէ:

Վերջ, կրկին կը խնդրեմ, որ հնչքան կարելի է օր առաջ այս երկրի գերիների ներողութիւներ հոգաք, որովհետև ձեզմէ ի զատ չունինք ուրիշ տէր մը կամ պաշտպան մը:

Բարևներով՝ ***Օհան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 12, թթ. 23-25, բնագիր, ձեռագիր:

N 111
ՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԵՂԱԾ ԱՂԻ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4 հունիսի 1915 թ.

Պ. Նահանգապետին

Գառնիզօնի նաչալնիկի հրամանով ի գիտութիւն Ձեզ կը յայտնեմ, որ «dette publies»-ի տրամադրութեան տակ դրած է եղել աղի մէկ ամբար, որը կը բաւէ լիուլի քաղաքի պէտքերուն:

Ծանօթանալու համար թէ քաղաքի բնակիչները ի՞նչ քանակութեամբ աղ գործածելու պահանջ ունեն, կը խնդրեմ չմերժէք կարգադրելու, որ ներկայացուեն տեղեկութիւններ

1. *ծախուած աղի*
2. *օրական ծախուած աղի*
3. *ամբարի մէջ եղած աղի քանակի մասին*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 8, թ. 53, բնագիր, ձեռագիր:

N 112
ՔԱՊԱՊԻԿ ԳՅՈՒՂԱՑԻ Պ. ՏԷՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԻՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1591 *5 հունիսի 1915 թ.*

Վսեմ նահանգապետ Վանայ

Իմ սեփական 2 լծան գոմեշս և մէկ կթան գոմեշը գտած եմ Վարագայ կենդանիներու մէջ և վկաներով կը հաստատեմ, ես՝ ինքս Անդրանիկի կամաւորներէ եմ և իրմէ արտօնութիւն առած եմ այս խնդիր կարգադրելու մինչև 3 օր:

Ուստի կը խնդրեմ ձեր վսեմութիւնէն, որպէսզի խնդրոյս տեղեկանաք և գործադրէք, որովհետև չեմ կարող սպասել:

Յարգանօք՝ Գապապիկ գիւղացի ***Պապէ Տէր-Դանիէլեան***

Մակագրութիւն 1. *Նախապէս այս մասին քննութիւն մը կատարելէ վերջ տեղեկագրելու համար յանձնել ոստիկանապետութեան: Ընդհ. քննիչ* ***Կ. Այեճեան*** *5/6 1915*

Մակագրութիւն 2. *Վարագի ներկայ տաւարներ և ոչխարներ նահանգապետութեան կողմէ ետ տրուած է և միևնոյն ժամանակ ալ արտօ-*

նագիր մը շնորհուած է վերակացուին, որ ոչ ոքի կողմէ այդ տուարներ տանել ներելի և թոյլատրելի չէ: Ի գիտութիւն կը հաղորդեմ:
Օգնական նահանգապետի՝ ***Ղևոնդ,*** *1915 յունիս 5*
Մակագրութիւն 3. *Պ. նահանգապետին մատուցանելի:* ***Կ. Այճճեան,*** *5.6.1915*
Մակագրութիւն 4. *Վարագին յանձնուած կենդանիներու մասին վճռուած է չվերադարձնել նախկին տէրերին, այլ վանքին սեպհականութիւն պիտի մնան: Գաւառ[ների] դիւան՝* ***Արմենակ Փոխանեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 33 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 113
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ՝ ԿՏՐՎԵԼԻՔ ԾԱՌԵՐԻ ԽՆԴՐՈՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1649 *5 հունիսի 1915 թ.*

Վարչութեանդ կողմանէ միևնոյն ժամանակ նպաստից յանձնախումբէն ազգային հաստատութեանց և զանազան ձրիաբար տրուելիք ծառերու գործը Տնտես. մարմնոյս կը յանձնարարուի ի գործադրութիւն: Մեր տրամադրութեան տակ գտնուած ծառերը անբաւարար լինելով ցարդ եղած յանձնարարութեանց, Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրէինք քաղաքապետութեան տրամադրութեան տակ եղած փողոցներու մէջ գտնուած ծառերու վրայ, խնդրելով, որ յետ այսու եղած այդ գործի յանձնարարութիւնները քաղաքապետութեան ուղղէիք:
Տնտես. մարմնոյ նախագահ՝

Գէորգ Միտէչեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1. գ. 10, թ. 34, բնագիր, ձեռագիր:

N 114
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՐԶԲԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 հունիսի 1915 թ.
Վան

Վանի շրջանային նահանգապետութեան
Պ. Նահանգապետ,

Քաղաքամէջ գտնուած ապրանաց տոկոսէն տասը գանձելու գործն, որչափ որ իբր ուղղակի տնտեսական մարմնոյս վերաբերող գործ մը՝ մարմնոյս անմիջական հսկողութեան տակ պիտի կատարուէր, բայց սկզբէն ի վեր այդ գործին այս ու այն մարմիններու կողմէ միջամտելով,

կարելի է լսել, անկերպարան վիճակի մեջ բարկուած է: Ներփակ մատուցուած պաշտօնագրի մակագրութիւններից ինչպէս կը հասկցուի, մայիս 22 և 26 օրերից դուրս գանձուած դրամից 98 լիրայ ոստիկանակ. պ. տեսուչի կողմից վարչութեան կետր. գանձին յանձնուած է, իսկ անկէ վերջ և առաջ ոչ մի լուր չէ տրուած մեր ընկերներէն պ. Տ. Յակոբեանին և ոչ ալ մեզ այդ գործին հետևելու համար:

Արդ, եթէ գործը իր անկերպարան վիճակէն դուրս հանել պիտի տրուի, հաճեցէք պաշտօնագրով մը մեզ հաղորդել նոյն խնդրոյ մասին մեր իրաւասութեան սահմանը, թէ գնահատիչ յանձնախումբ մարմնոյս կողմէն պիտի որոշուի, թէ ոչ, արդէն եղած յանձնախումբին հետ պիտի խորհրդակցենք և թէ նախապէս կատարուած հաշիւները ստանալու և ճշտելու համար որո՞ց դիմել պետք է, և ի՞նչ կարգադրութիւններ պիտի լինի քաղաքամէջ տեղն ու տեղ մնացած ապրանքների մասին, որոց համար ալ կը լսուի, թէ անհաշիւ կերպով տէրերուն կը յանձնուին. ատոնց համար շուտափոյթ հրաման կը խնդրենք:

Նախ. տնտեսական մարմնոյ՝ **Գէորգ Ճիտէչեան**

Մակագրութիւն. *Պատասխանուեցաւ թիւ 692 գրութեամբ: 8 / VI:* **Ա. Դարբինեան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ.14, թ. 30, բնագիր, ձեռագիր:

N 115
ՎԱՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍԵՆԵԿԱՊԱՀՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ԿԱՐԳԱՆԾԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1593 *5 Հունիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ Վանայ

Ամիս ու կէսուան ընթացքին ի նկատ չունենալով մեր պաշտօնական ըլլալը տեղի կունենան շատ մը անտեղիութիւններ, որով մենք պատասխանատու կը ճանչցուինք:

Ուստի տուէք մեզի պաշտօնական մի նշան, որպէսզի ժողովուրդն ալ պաշտօնապէս մեզի հնազանդեն, իսկ եթէ միևնոյն դրութեան մէջ մնայ, մենք ժողովրդին դէմը չենք կարող կենալ:

Յարգանօք՝ Դիւանի սենեկապաներ

Միքայէլ Փէթիկեան
Լուսատորիչ

Մակագրութիւն՝ *Հաղուստ կարել:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 8, բնագիր, ձեռագիր:

N 116
ԻՍԿՈՒՀԻ ՓԱՐԱՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐ ԱՅԳՈՒՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N1624 *5 հունիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ,

Խնդրատու Իսկուհի Փարաղամյան, կ[illegible]ցի

Տուներնիս վառուած, անօգնական ու տնտեսապէս իսպառ քայքայուած, իմ միակ ապաւէնս այգիս էր, երեկ Անդրանիկի ընդունելութիւնը իմ այգիիս մէջ եղաւ: Ինչպէս յայտնի է Ձերդ Վսեմութեան, երեկուան բազմութեան թիւը, ամբողջ այգիս դաշտի է վերածուեր, եղած խոտերը բոլորովին փչացան ոտքի տակ, երեք հատ փոքրիկ երեխայ ունեմ, որոնք ընդունակ և կարող չեն աշխատելու, ուստի կը խնդրեմ Ձերդ Վսեմութիւնից, որ հրամայեք ընէք նկատի առնել ինձ հասած վնասը:

*Յարգանօք՝ **Իսկուհի Փարաղամեան***

Յ.Գ. Նմանապէս վնասուած է ծառ ու թուփ, եթէ երբէք պէտք կըլլայ վկայի, կարող եմ վկաներ բերել, որ անկարող եմ և ինձ հասած վնասը շատ է եղեր: Նոյն

Մակագրութիւն 1.** Դ. շրջանապետութիւն, կը խնդրուի քննել վնասն ու տեղեկացնել: Ոստիկանապետ՝ **Ղևոնդ

***Մակագրութիւն 2.** Սոյն խնդրատուի այգին քննելու համար ուղարկուած է մեր օգնական պ. Տիոս և նոյն թաղի գիտակիցներէն Մելքոնեան Առաքել և Միրզոեան Օհաննէս, որոնց տեղեկագրի իմաստէն հասկնալով, այգիի մէջ եղած տաս ածու[120] խոտը վնասուել է, իրաքանչիւր ածուի մէջ երկու-երկու խուրձ վնաս միայն տեսնուած է, որ ընդամէն 20 խուրձ երեքական ղուրուշէն = 60 (վաթսուն) ղուրուշ, իսկ խաղողի թուփերէն միմիայն երկու առու վնասուած է, որոյ արժէք 80-90 ղուրուշ գնահատուած է, որ վնասու ընդհանուր գումար 150 (հարիւր հիսուն) ղուրուշի չափ կրնէ: Այսու պարտ ու պատշաճ տնօրէնութիւն ձեր խղճին կը մնայ: 1915 Յունիս 9/22*

***Մակագրութիւն 3.** Անդրանիկի ընդունելութեան առթիւ խնդրատու տիկնոջ այգիին խոտի և խաղողի վնաս 150 ղուրուշի չափ ըլլալ գնահատուած է, սոյն վնասը ո՞վ պիտի տուժէ, կը խնդրուի կարգադրութիւն դիւանապետութիւնէն: Վանի ոստիկանապետ՝ **Ղևոնդ:** 1915 յունիս 19*

Մակագրութիւն 4.** 10 ռուբլի վճարեցէք: **Արամ

***Մակագրութիւն 5.** Վճարուած է*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 34 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 117

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՐԱՄԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՆ՝ ԹԱՅԱԶԵՏ ՔԱՂԱՔԻ ՊԱՐԵԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻՆ ԶԻՆԱԹԱՓԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

N 601 *5 հունիսի 1915թ.*

Несмотря на категорическое и повторное предписание Вашего превосходительства §1 приказа Баязетскому отряду N 28 от 27 мая, г. комендант в г. Баязете продолжает отнимать оружие у армян.

Позволяя себе игнорировать приказ Вашего превосходительства, означенный комендант более свободнее обходится с свидетельствами, выданными Ванским окружным управлением.

Так, что Вы изволите усмотреть из прилагаемого при сем проходного свидетельства N 482 от 28 мая, он отобрал револьвер у Егиазара Хлгатяна и собственноручно отметил об этом на том свидетельстве, которым Ванское окружное управление удостоверяло право названного Хлгатяна на ношение данного оружия.

Будучи уверен, что и Ваше превосходительства усмотрит в подобного рода актах совершенно недопустимое пренебрежение к официальным бумагам правительственного учреждения - пренебрежение, естественно умаляющее престиж не только Ванского окружного управления, но и высшей военной власти, его установившей, я позволяю себе надеяться, что Ваше превосходительство не оставит г. коменданта в г. Баязете без должного внушения и укажите ему тот порядок, которому он обязан придерживаться, в силу закона, в своем поведении по отношению к распоряжениям, установленных органов гражданской власти.

Покорнейше прошу также не отказать предписать г. коменданту г.Баязета о немедленном возвращении Е. Хлгатяну и его товарищам отобранное у них оружие.

Позволю себе покорнейше просить Ваше превосходительства не отказать уведомить меня о последующих с Вашей стороны по данному поводу распоряжениях.

Подписали: Ванский губернатор ***Арам Манукян***
Секретарь ***Дарбинян***

N 629 *6 հունիսի 1915 թ.*

В дополнение к моему письму за N 601 от 5 с. июня, сообщаю Вашему превосходительству о количестве оружия, отобранного г. комендантом в Панзе у Е. Хлхатяна и его товарищей: К.Чауша, А.Казаряна, Ов.Тер-Антоняна, Г.Симоняна и Л. Бабаяна.

2 маузера 9[1] зар. с 600 патронами
2 ружья Мартини с 200 патронами

2 револьвера "Маузер" с 200 патронами
1 револьвера "Браунинга" с 50 патронами
1 револьвера "Наган" с 4 патронами
2 малый револьвер с 200 патронами
2 сабли турецкие
2 штыка турецких
150 патронов к винтовке 3 линейной*
100 патронов к винтовке турецкой
а также 2 пилы

Все названные лица — армяне, были снабжены свидетельствами Ванского окружного управления для свободного следования на родину, в Алашкерт, в свидетельствах к тому же было обозначено имеющееся при них оружие,

Доводя об этом до благосклонного сведения Вашего превосходительства, покорнейше прошу Вас не отказать в распоряжении г. коменданту о возвращении названного выше оружия и предметов их владельцам.

Позволяю себе присовокупить, что названные лица, у которых отобрано оружие, направлялись на родину, для приведения в порядок разоренных, в связи с военными событиями, своих хозяйств.

Ванский губернатор
Секретарь

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թթ.76 և շրջ., 80-81, բողոն, ձեռագիր:

N 118
ՇԱՀԲԱԶԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ա. ԱՂԱՎՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄԱԿԱՆ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԵՐՆ ՈՒ ԱՅԳԻՆԵՐԸ ՓՈՍՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1753 *6 հունիսի 1915 թ.*
Ավանց

Վսեմ. Նահանգապետ Վանի

Մեր և քաղաքի դաշտը գտնուած ռուս հեծելազօրաց բանակը կաւերէ բոլոր արտերը, կը կերցնէ ցանքսերը, կաւերէ գիւղիս այգիները, խոտ հնձելով և այլն: Այգիների դռտները կը քանդեն և կը տանեն: Այս մասին պաշտօնապէս բողոքեցինք տեղւոյս հրամանատարի, թէև կը խնդրեինք, որ դուք ալ ձեր կողմէ բողոքէիք գեներալին:

Լէսկ գիւղացիները առանց մեզ տեղեկութիւն տալու, կը վարեն գարնանացանքսի և գարիի ցանուած արտերը: Ձեզ կ'ուղարկենք նոյն գիւղացի Ամիրեան Սարգիսը, որ վարած է գարնանացանքսի ցանուած արտ մը:

Առանց մեր հրամանին, տեղէս մեկնող նաւավարներէն Նազարեան Օհանը, որ թալան ընելու համար Արճէշ գնացած էր, գրաւեցինք իր ըրած թալանները և ձերբակալելով ձեզ կ'ուղարկենք: Թալանները ցորեն է:

Անցեալ երեկոյ ռազմամթերք փոխադրող նաւը և կամաւորները ուղարկեցինք:

Յարգանօք՝

Գաւառապետ **Աբէլ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թթ. 40ա - 41, բնագիր, ձեռագիր:

N 119
ԱՐՔԻՈՑ ԳՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՅՈՒՂ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՆԱՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 1730 *6 հունիսի 1915 թ.*

Վան

Վսեմ նահանգապետ

Մեր գիւղ այրուելով, բալանուելով, մենք 21 հոգի միմիայն մարդիկ ազատուելով, մնացած ընտանիքներ մեզ հետ անտէր և անպատսպար կը թափառենք քաղաքիս մէջ, դիւրութիւններ չունինք ուտքով երթալու:

Ուստի կը խնդրենք, որ հրամայէք նաւաւարներէն մէկին, մեզի ձրի մեր գիւղ վերադարձնի:

Յարգանքներով՝ Արբենց գիւղացիք

Օհաննէս Խօսրովեան
Օհան Նիկողոսեան
Մկրտիչ Ծատօեան
Մուրատ Նաւօեան

Մակագրութիւն. *Թող մնան կամ ցամաքով երթան:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 36, բնագիր, ձեռագիր:

N 120
ԹՈՒՐՔԵՍՏԱՆՅԱՆ 2-ՐԴ ՄԱԿՐԱՎՈՐ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔԱՂԱՔ ԼԱՍՏԱՆԱՎԵՐ ՔԵՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 194 *6 հունիսի 1915 թ.*

В дополнение переданного Вам мною 4 июня через секретаря правления словесного приказания начальства Баязетского отряда, прошу еще раз сделать по телеграфу распоряжение о доставке в город Ван, к утру 8 июня, согласно распоряжения командира 4 Армейского корпуса, барж из Арджеча[121], 2 баржи Назаряна Вано и Каликяна Арута и из Алджаваза - 2 баржи от Кочеренци Моси и Аствацатура Хачика. Всего нужно собрать не менее 12 барж. Кроме этого, я просил Вам передать о том, что необходимо достать 10 кусков холста для парусов и сделать распоряжение о высылке 150 рабочих к 1 часу дня 5 июня на пристань около Аванца.

Командующий 3 ротой штабс-капитан **Сафаров**

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.75 և շրջ, բնագիր, ձեռագիր:

N 121
ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑՈՐԵՆ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՁԵՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1738 *6 հունիսի 1915թ.*
Աստվածաշեն

Վսեմ Գահանգապետ պ. Արամ

Յունիս 3 բուակիր Գամակով յայտնած էիր, որ 300 չափ ցորեն, տարեկան և գարի հաւաքէինք, որպէսզի տարուէր Շատախ մեր կամաւորներին: Մենք անմիջապէս ձեռնարկեցինք Հիրճ ու Խոսպ գնալ հաւաքելու, այդ տեղ մասնաւոր բան մը հաւաքեցինք, մինչ մենք հոն էինք, ռուս բանակը արդէն եկած էր Նոր-գիւղ, Հնդստան, հոն թափած թէ երկու գիւղերի ցանքերը փճացուցած, ինչպէս նաև Առեղին ատկէ ի զատ ձեռք ընկած գարի, ցորեն, ալիր խլած ու կերած են, մի քանի հատ ալ հոր ամբողջապէս վերցուցած են: Մեր շրջանի 5-6 գիւղերէն ալ 8-ական գրուանկա, 12-ական չափ հաց տարան իրենց բանակին: Ուրեմն ժողովուրդ նեղուած է, անհնար է 300 չափ հաւաքել, առ այժմ 100-չափի խօսք կուտանք ինչ միջոցաւ ալ լինի հաւաքել, որոյ համար տաւար քաղ ուղարկեն, վերցնին: Եթէ կարողացանք աւելի հաւաքել, ձեզ կիմացնինք, կրկին ուղարկեցէք, վերցուցէք:

Անցեալներ թէև 10 ոստիկան ուզած էի Անկշտանայ տանելու, բայց նոյն գիւղացիների հետ խօսեցինք, որ 5 հատ կանոնաւոր զէնք եթէ տանք իրենց, իրենք կը խոստանան այդ 10-ի գործը հոգալ: Ուրեմն աւելորդ ծախքի տակ չի մտնելու համար, կը խնդրուի 5 հատ կանոնաւոր զէնք տաք անկշտանցոց: Հիրճ գիւղն ալ երբէք զէնք չունի, մի քանի հատ ալ ատոնց տալու է:

Նորտուզի հայեր լեցուած են Դէմկօռնի և մի քանի գիւղեր, բաւական թիւ կը կազմեն, եթէ արտօնութիւն կը տաք ինձ, տեղաւորենք քիւրդ գիւղեր:

Գործերը շատ լինելով, չենք կարող ցանքսերի մասին զբաղուիլ: Երկու մարդ խրկիր, որ զուտ այդ գործով զբաղուին (լաւ կը լինի, որ մին Պասեան Ներսէս լինի, որոյ կարելի է կատարեալ վստահութիւն ունենալ):

Կնիքը ուղարկեցէք, որովհետև ստորագրութիւնը չահագործողներ կը լինեն:

Հայոց-Ձորոյ գաւառապետ՝ **Նշան Նալբանդեան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 12, թ. 8-9, բնագիր, ձեռագիր:

N 122
ԱՐՏԱՄԵՏԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Հ.ԱՐՏԱՄԵՐՏՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԲԱՆԱԿԻՆ ՀԱՅ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N17 *6 հունիսի 1915 թ.*
Արտամետ

Վսեմ Նահանգապետ պ. Արամ

Նախապէս արդէն ձեզ գրեցի, որ 3 օրուայ ալիւր ունինք բանակին հաց տալու համար, այն ալ գիւղից հաւաքուած է, երէկ հաց տուի, այսօր ալ պատրաստած եմ տալու, միայն մէկ օրուայ համար մնացած է, ուստի կը խնդրուի, որ այդ մասին կարգադրութիւն մը անէք և կամ Անդրանիկ փաշային խօսեցէք, որ իր ապօգի ձիեր տայ ցորեն փոխադրենք ջրաղաց աղալու: Մեր քարգման 8-10 օր է, որ տկար է, քանիցս ուզեցինք փոխադրել քաղաք հիւանդանոց, սակայն ինք չուզեց գալ, իսկ օրս տեղւոյս բժիշկին նայել տուինք, նա առաջարկեց, որ անմիջական կերպով հիւանդանոց պէտք է փոխադրուի, ուստի կը խնդրուի, որ բարեհաճիք հիւանդանոցի և կամ ուրիշ ֆայտօն մը ղրկել, որ հիւանդը փոխադրենք, որովհետև ձիու վրայ չի կարող նստել՝ քիչ մը տկարութիւն ծանր է:

Տեղս ոդքան մեղուի փեթակ կար, բոլորը կամաւորները անգիտակցաբար փճացրին, այգիներ և արտերը բոլորովին արածացրին թէ ոչխարը և թէ ձիերով: Յաջորդով մանրամասնութիւններ կը գրենք:

Յարգանօք ***Յովհաննէս***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 8, թթ. 43-44, բնագիր, ձեռագիր:

N 123
Մ. ՄԱՐՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐ ՎԱՐՉԱԿԱԼԱԾ ԱՐՏԸ ԳՆԱԼՈՒ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 հունսի 1915թ.
գ. Բիրկարիպ

Վսեմ Նահանգապետ,

Ստորագրեալս Տնտեսական մարմնէն Խանական գիւղի երես[122] 21 օսմ. լիրայի վարձած ըլլալուս համար այժմ հոն երթալու և կալուածներուն տիրապետելու համար, ուրիշներու և կամ օտարներու կողմէն արգելանքի չի հանդիպելու պատճառաւ՝ այս անգամ ձեր բարձրապատուութեան դիմելով, կը խնդրեմ արտօնագիր մը տաք սոյն գիւղի Ապաշ Աղայի տներ նստելու ու վարձածս արտերուն տիրապետել:

Նաև եթէ կարելի է արտօնէք ինծի ձեր ներկայութեան ելլել ու քանիմ բերանացի խօսքեր մը ըսելու:

Մնամ յարգանօք՝

Բիրկարիպ գիւղէն ***Միրուն Սարօեան***

Մակագրություն. *Արմենակին. Սիրուն գործերը քննուա՞ծ են, ինչ եզրակացութեան եկաք: **Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 3, բնագիր, ձեռագիր:

N 124
ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՄԻՈՆԵՐ ՅԱՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՆԻ ՈՉԽԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

8 հունիսի 1915 թ.

Պատուարժան Տիար Արամ
Կառավարիչ Վանի շրջանի

Սիրելի Տէր:

Կը լսենք, թէ հազարատը ոչխարներ վարուած են Անդրանիկ Փաշայի կողմէ ցրուելու համար կարօտեալներու և ժողովրդեան: Ուստի կը խնդրեմ, որ մաս մ'ալ յատկացնէիք հիւանդանոցին համար, որը հիմա կը հոգայ բաւական խոշոր թիւով հայ կամաւորներ և ռուսական զինւորներ և բաւական դժուարութիւն կը քաշենք կերակուր գտնելու նոյնիսկ ամենաբարձր գնով:

Հիւանդանոցի հիւանդները առնուազն օրական մէկ ոչխար կուտեն, եթէ մէկ-երկու հարիւր ոչխար կրնար հիւանդանոցի յատկացուել, այն և ատեն շատ դիւրաւ կարելի կըլլար հիւանդներու և վիրաւորներու կերակուր հայթայթել մինչև յաջորդ աշուն: Նոյնիսկ եթէ լաւ ըլլան կրնանք զարգացընել և բարելաւել պահելով իբր մնայուն սնունդի աղբիւր:

Անկէ զատ նաև ունենք մեր շրջանակին մէջ 1000-է աւելի իսլամ ապաստանեալներ, որոնք օրական 5 ոչխարի պէտք ունեն, մօտաւորապէս 150՝ ամիսը: Քանի որ անոնք իրենց բոլոր ունեցածներէն կողոպտուած են հայերու կողմէ ի վրէժխնդրութիւն օսմանեան կառավարութեան չարաչար վերաբերումին համար, և որոնք դեռ չեն կրնար ապահով կերպիւ դառնալ իրենց տեղերը, ուր որ առ կամ աճ կըլլային, ըստ այսմ կը խնդրենք տեղական կառավարութենէն օգնելու մեզի ասոնց առողջութիւնը պահելու և կերակրելու գործին մէջ: Եթէ հօտ մէ ոչխար մեզի տրամադրելի կրնար ըլլալ, շատ երախտապարտ պիտի ըլլայինք: Կինեռէն և տղայներէն շատեր կը չարչարուին և կը մեռնին պարզապէս սնունդի պակասութենէն:

Խոնարհաբար Ձեր խղճամիտ քննութիւնը կը հայցենք այս ամենա արգահատելի վիճակին:

*Խորին յարգանքներով՝ Ձերդ **Ի. Է. Եարօ**[123]*

Մակագրություն. *Թէոս[124] աղային գրուեցաւ, որ 10 հատ ոչխար տայ հիւանդանոցին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, բ. 13, թարգմանություն,[125] ձեռագիր:

N 125
ԹԻՄԱՐԻ ԳԱՎԱՌԻ ՓՈԽԿԱՌԱՎԱՐԻՉ Ա. ՓԱԼՃՃՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ՝ ԿՈՉԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N1860 *8 հունիսի 1915 թ.*

Ալյուր

Վանի շրջանային վարչութիւն

Ամիւք գիւղի կենդանիների բաշխման խնդիրը ըստ կարելոյն կարկաղեցինք հետևեալ կերպով. հաւաքեցինք աւար բերուած բոլոր անասունները, ապա իւրաքանչիւր տան բնակիչների թուի համեմատ բաշխում կատարեցինք՝ բոլորովին չունեցողներին տրուեցաւ 40 հատ ոչխար և սևատաւար, մաս մըն ալ յաւելում եղաւ ունեցողների վրայ: Մեր շրջանի գիւղերու անասունների կողմից ներուելը արդեն գրած ենք, կսպասենք Ձեր կարգադրութեան:

Գիւղերու վիճակագրութեան ցուցակը շուտով պիտի ղրկենք:

Ռուս կոզակների հահատակութիւնները վերջին օրերս կը բազմապատկուի: Գարի գնելու համար բոնի կերպով տուներ կը մտնեն, ամեն կողմ կը խուզարկեն և խեղճ գիւղացիների ապրուստի միջոց, [որը այլ բան] չունի՝ միակ գարի, եթէ գտնեն, կը վերցնեն, դրամը կէս կուտան, գարիներ փոխադրող սայլապաններին ճանապարհին կսկսեն ծեծել, չարչարել ու ետ ղրկել, որպէս զի դրամը չի պահանջեն իրանցից, հրամանատարների անունով կը խօսեն: Այս մասին Ձեր անմիջական կարգադրութիւնը յայտնեցէք: Թէև մենք բացարձակապէս արգելեր ենք անոնց բոնի միջոցների դիմելու և յաջողել ենք այնպիսի տեղեր, ուր որ անմիջական օգնութեան ենք հասել, իսկ միւս տեղեր կը դժուարանանք՝ բարգմանչի ձի չունենալու համար:

Փոխ. կառավ. ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, բ. 14, բնագիր, ձեռագիր:

N 126
ԱՎԱՆՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ Պ. ՇԵԿՈՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎՆԱՍՎԱԾ ՆԱՎԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հունիսի 1915 թ.

Վան

Վսեմ նահանգապետ

Արճէշի գաւառապետը մեր նաւով իւր պաշտօնավայրը փոխադրելու միջոցին, մի ինչ ծովային արկածի հանդիպելով, նաւերնուս առագաստը ճեղքուեց: Սորա համար ևս, այժմ կառավարութեան վերաբերեալ ծառայութեանց չը պիտի կարողանանք մասնակցել մեր նաւով:

Յայտնի իսկ է արդէն, որ 11 ամիսէն ի վեր է, որ ձրի աշխատութեան մէջ գտնուելով, իսպառ անկարող դարձած ենք, հետևաբար նաւերնիս նորոգելու, կամ սորա մէջ գտնուած ոևէ պակասութիւնները հոգալու միջոցներէ զուրկ ենք:

Ո՛ւ այս, կը խնդրուի, որ շնորհ անէիք ճեղքուած առագաստնուս համար 3 թօփ կտաւ տալ, որպէսզի նորոգէինք զայն և դնէինք կառավարութեան տրամադրութեան ներքոյ, ծառայեցնելու համար:

Յարգանօք Աւանց գիւղացի **Պօղոս Շէկօեան**

Մակագրութիւն. *Գաւառապետին. քննիչ յանձնաժողով մը կազմել, որպէս զի ստուգե վնասուած նաւերու նորոգութեան ծախքերու քանակը և ցուցակը մեզ ղրկե:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 34, բնագիր, ձեռագիր:

N 127
ԿԻՐԱՇԷՆ, ԵԿՄԱԼ, ՄԱՐՄԵՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԶԻՎԱ ԳՅՈՒՂԻ ՅԱՆՔՄԵՐՆ ԻՐԵՆՑ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հունիսի 1915 թ.

Վսեմ. Նահանգապետ Վանայ

Տէր

Մեր Կիրաշէն, Մարմետ և Եկմալ գիւղերը յայտնի դէպքի ժամանակ կողոպտուեցան և ժողովուրդ մաս մ՛ալ սպանուեցաւ ու շատ մ՛ալ որբեր թողուցին: Մեր շրջակայ գտնուող դրացի Զիվայ քիւրդ գիւղի ցանուածները ըստ սովորութեան և որոշման, երկրագործի և մանաւանդ դրացի, երկրագործ գիւղացիներիս կողմանէ գնուելու արդար իրաւունք ըլլալը յայտնի է, մենք թալանուելով և օրապահիկի կարօտ ըլլալով, ֆշեալ Զիվայի ցանքերը խլճի մտօք մեզի տալու և կարգադրութիւնը ընելու փոխարէն: Ալիւրի գիւղախմբապետի կողմանէ առանց մեզի իմացնելու և ըստ օրենի հաղորդելու, իւր եղբայր Ն. Ռուբէն Մանուկեանին ծախած է, այս առ և ծախս մեզի խիստ վնասակար է:

Արդ, Վսեմ Տէր, յիշեալ առ ու ծախի գործողութիւնը ջնջելով և չեղեալ համարելով. դրացի երկրագործ քշուառ և չքաւոր երկրագործներիս ձգելու և ցկեանս երախտապարտ թողնելու մասին կարգադրութիւն ընելնիդ կը խնդրեմք:

Խորին յարգանօք ի դիմաց երեք գիտղի
Կիրաչէն գիւղի Յովհաննիսեան
Եկմալ գիւղի՝ Մարտիրոս Մելքոնեան
Մարմետ գիւղի ռէս Թաթէոս Նազարեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 35, բնագիր, ձեռագիր:

N 128

ՎԱՆԻ ԸՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉ Կ. ԱՅԲՑԵՄԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N24/19 *9 Հունիսի 1915 թ.*

Պարոն նահանգապետ

Յարութիւն Տօրտիկեան ստորագրութեամբ նահանգապետութենդ ուղղեալ և առ ի քննութիւն պաշտօնէութեանս յանձնարարեալ մի բողոքագրով, դատախազ Ռուբէն Աւագեանի հետ ունեցած դատի դատավարութեան օրը, յանիս երէքին նշանակուած և կոչնագիրը թէև իրեն ալ հաղորդուած է, սակայն նոյն օրը պաշտօնատունները բացասաբար փակուած ըլլալով, դատախազեալին առանց կրկին անգամ կոչնագիր հաղորդելու, յաջորդ օրը իր դեմ ի բացակայութեան վճիռ տրուած ըլլալը յայտարարելով, այս մասին քննութիւն կը պահանջուէր:

Դատավարութեան ծնակերպութիւնը, մակագրելով, վերադարձուելը դատ. նախագահին յանձնարարուած էր: Պ. նախագահը, ոչ միայն պատասխանած չէր այդ բողոքագրին, այլ այս առաւօտ նախագահի մը անպատշաճ հրապարակային վարմունքով մը չէ ուզած ճանչնալ ընդհ. քննիչի հանգամանքը իսկ:

Պ. նահանգապետ, այս երրորդ անգամն է, որ անպատշաճ և անվայել վերաբերում մը տեղի կունենայ կարգ մը ծանօթ պաշտօնէից կողմէ հանդէպ պաշտօնէութեանս, որ 22 մայիս թուակիր պաշտօնագրով մը տեղեկագրուած էր, սակայն կը ցաւիմ ըսելու, թէ, թէրևս նկատի անգամ առնուած չէ, և որով տեղի կը տրուի այդպիսի անպատշաճ և անպատկառ վարմունքի շարունակութեան, նոյն իսկ դատարանի նախագահի կողմէ, որ երբէք կարելի չէ ներուել:

Արդ՝ նկատելով, որ ընդհ. քննիչի հանգամանքը վարկաբէկ ընելով, անպատասխանատու պաշտօնէութեան մը կազմել կը ձգտի պաշտօնէութենէ մի խմբակ և որուն շարունակութիւնը դժբաղտաբար փափաքելի վախճան մը չ'ապահովէր, միևնոյն ատեն նկատելով, որ երբ շարունակուի այդ ընթացքը, գէթ ինձ համար չէ կարելի պաշտօնավարել իրաւասութեան գիտակցութեամբ ու պարտաճանաչութեամբ, առ այդ պարտաւպատշաճն տնօրինել նահանգապետութենդ պատկանած ըլլալով, ներկայիս (ոչ թէ

խնջոյքի հրաւէր չ'ստացող և կամ իր թագ-թիգը[126] յառաջ տանելու յաւակնող պաշտօնեայի մը պէս), այլ միևչև հիմա անաղարտ պահած պատիւս ու արժանապատուութիւնս պահելու համար կը հրաժարիմ պաշտօնէս, և կը խնդրեմ, որ ընդունել հաճէք:

Վանի ընդհ. քննիչ **Կարապետ Այճեան**

Մակագրություն. *Գրել պ. ընդհ. քննիչին, որ իր առաջադրած խնդիրը կքննուի, իսկ ինքը թող բարեհաճէ շարունակել իր պաշտօնավարութիւնը մինչև նոր տնօրինութիւն:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 16 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 129
ՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՂԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՒ ԿՈՐՍՏԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

9 հունիսի 1915 թ.
Վան

Վսեմ Նահանգապետ

Պատիւ ունիմ պատասխանել յետագայ հարցումներին, որ կառավարութեան դիւանապետը ըրած է յանուն Ձեր վսեմութեան իւր 5/18 Յունիս և 598 թուահամար պաշտօնագրով:

1. Աղի օրական սպառումը կախում ունի յաճախորդների գալէն, անցեալ մայիս ամսոյ մէջ յայտնի է թէ՝ ճանապարհները կատարեալ ապահովուած և գիւղացիքն ալ իրենց գիւղերի մէջ զետեղուած չըլլալով, յիշեալ ամսոյ մէջ օրական 150-400-1400 քիլօյ ծախուեցաւ, բայց ներկայ ամսոյս մէջ սկսած է օրական մինչև 500-1000-2000-2500-4800 քիլօյ ծախուել:

2. Մայիս 11-էն – 31 14016 քիլօյ աղ ծախուած է, իսկ Յունիս 1-էն մինչև 8-ի իրիկուն 14496 քիլօյ:

3. Պաշտօնատան հրկիզմամբ հաշուական ամբողջ տետրակները այրուած և ոչ մի արձանագրութիւն չէ ազատուած, նամանաւանդ ապրիլեան ծանօթ դէպքերի պատճառաւ մեր վարչութեան աղի ամբարներէն ոմանց դռներն հրկիզուած և օղիւսով շարուած և ոմանց դռներն ալ, ապագային քննութեան կարօտ, կարգ մը անձնաւորութեանց կողմանէ աղիկամի[127] բացուելով, թէ՛ կողոպտած, թէ՛ կողոպտուի տրուած և նաև ապօրինի ծախուած է. ժողովրդէն երկու զոհ ալ տալով կողոպուտի պատճառով: Ուստի կարելի չէ ոչ առձեռն ամբարի և ոչ ալ միւս ամբարների քանակը որոշել: Երբ Կարնոյ կամ Պօլսոյ հեռագրական և թղթատարական հաղորդակցութիւնը սկսեն, այն ժամանակ կարելի է ամբարների պարունակութեանն վերաբերեալ արձանագրութիւնները բերել տալ և

ամբարների մէջ մնացեալ ադերը կշռելով, ընդհանուր քանակը և հետևաբար պատճառուած կորուստը իմանալ: Շատ ամբարների 4/8 և 1/8-ը հազիւ մնացած է և արդեն ամբարներն ալ ոուս քաղաքապահի կնքոյ տակն են:

Այս առթիւ նորէն կը համարձակեմ յիշեցնել, որ հրկիզուած պաշտօնատան հողակոյտների տակը մնացած ադերը կշռելով, ուրիշ ամբար փոխադրելու համար, պէտք եղած հրամանը առնելով՝ խրկել բարեհաճէք:

Յարգանօք Տնօրէն՝ Խ. Ս. Արծրունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թթ. 14 և շրջ., բնագիր, ծեռագիր:

N 130
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽՄՆՈՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱՀԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՓԱՅՏԵՂԵՆԻ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1915 թ.
Վան

Վսեմ նահանգապետին Վանայ

Գաւառ. Առաջն. վարչութեան քաղաքային ժողովն իմացած է, որ Վանի շրջանային վարչութեան քաղ. խորհուրդներու խնդրանաց վրայ, Վանայ ու շրջակայ գիւղերու այրուած եկեղեցեաց, դպրոցներու և անոնց կալուածներու վերաշինութեան համար կարևոր քանակութեամբ ծառեր դրուած են, որու համար Առաջնորդարանս ոչ մէկ տեղեկութիւն ունի ու դժբաղդաբար կը լսուի, որ անկէ անհատներն ալ օգտուած են:

Որպէսզի Առաջնորդարանը կարող ըլլայ քաղ. խորհուրդներէն հաշիւ պահանջելու գեղծարարները պատասխանատուքեան հրաւիրել, ուստի կը խնդրուի, որ հաճէք այդ կարգի հաստատութեանց տրուած ծառերու մէկ ցուցակը ղրկել մեզ և որովհետև քաղաքային իշխանութեան յարաբերութիւնը Առաջնորդարանի ստորադասեալ մարմիններու հետ ըստ օրէնի պիտի ըլլայ Առաջնորդարանիս միջոցաւ միայն, ուստի կը խնդրենք, որ գէթ այսուհետև ուշադրութիւն ընծայուի ադրր. որպէս զի տեղի չը մնայ անկանոնութիւններու և գեղծումներու:

Մնամք յարգանօք՝ Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝

Եզնիկ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 15, բնագիր, ծեռագիր:

N 131
Ա. ԹԵՐԶԻՊԱՇՅԱՆԻ ԵՎ Լ. ՄԻՐՇԱՆՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՅՏ-

ՆԱԲԵՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1915 թ.

Տէր Նահանգապետ

Մենք ստորագրեալքս՝ Լևոն Մերճանեան՝ բնիկ Թաթար Պազարճըք-ցի և պուլկարահպատակ և Աւետիս Թէրզիպաշեան վաճեցի և ծնեալ թուր-քահպատակ, ներկայ գրութեամբս կայտարարեմք, որ մենք ընկերովի Վանի վիլայէթի Բերկրի գաւառի Ապաղա դաշտի Շարապխանէ և Տերշիկ գիւղերի սահմանի մէջ հանքային ջուրերու գոյութիւն նախատեսած լինելով, կխնդրեմք, որ յիշեալ Շարապխանէ գիւղի Վանէն Իգդիր տանող գլխաւոր ճամբայի եզերք գտնուող մասերու մէջ մենաշնորհը մեզ պատկանելու պայմանաւ խուզարկութիւններ կատարելու արտօնութիւն շնորհէք և մեր սոյն դիմումին առաջնութեան իրաւունքը հաստատէք:

Կայտարարեմք նոյնպէս, որ պատրաստ եմք մեր սոյն ձեռնարկի շահու մի որոշ տոկոսը յատկացնել Վան քաղաքի բարեգործական հաս-տատութեանց:

Յարգանքներով՝

Աւետիս Յ. Թէրզիպաշեան
Լևոն Թ. Միրճանեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 17, բնագիր, ձեռագիր:

N 132
ԹԻՄԱՐԻ ԳԱՎԱՌԻ ՓՈԽԿԱՌԱՎԱՐՉԻ Ա. ՓԱԼՃԱՃՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՄՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՉԻԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1915 թ.
Այտուր

Վսեմ Նահանգապետ Վանայ

Համազասպի խմբից Գրիգոր անունով մի կամաւոր եկած է այստեղ և իր խմբապետի անունով ձիեր կ'հաւաքէ մեր շրջանից, և այդ ձիերը իր ասելով, այս տեղերէն անցած ատեն թողած են գիւղացիների մօտ:

Այս մասին Ձեզնից որևէ հրահանգ չստանալուս համար, և կամաւոր Գրիգորն ալ պաշտօնական թուղթ Ձեզնից չունենալով ձեռքին, արգելեցի:

Ի նկատի ունեցէք և այս. որ իր մատնանշած ձիերը ընդամէն 2-3, որևէ կնիք չի կրեր իր վրայ, և տէրերն էլ կը յայտնեն, որ ձիերը թուրքերին են, կուի ատեն և կամ կուէն յետոյ ձեռք բերած:

Ձեր հրահանգը ինչ է այս մասին, խնդրեմ հրամանագրէք մեզ, կամա-ւորը մեզ մօտ է և պատասխանի կսպասէ: Մի ձիու տէրը Սարգիս Փոխա-նեանը, էրերինցի, իբրև ոստիկան վերցուած է հոս Ձեր հրահանգով, և որի զէնք կրելու վկայականը դեռ չէ ղրկուած, խնդրեմ ուղարկէք:

Այիւրի փոխ. կառավարիչ **Արամ**

ՀԱԱ, Ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 53, բնագիր, ձեռագիր:

N 133
ՎԱՆԻ ՋՈՐԱՀԱՆԳՐՎԱՆԻ ՊԱՐԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՌՎՈՒՅՏԻ ԴԱՇՏԵՐԸ ԻՐԵՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԴՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 92 *10 հունիսի 1915 թ.*

В Вашем распоряжении имеется огромная площадь, заросшая клевером, отданным Вами Армянской Араратской дружине под скос сена.

В виду того, что сена достать нигде нельзя, а в окрестностях трава уже покошена, но этапу экстренно необходимо запастись травой для проходящего большого транспорта лошадей, прошу предоставить этот клевер для неотложных нужд этапа.[125]

Комендант прапорщик **Четверко.**

ՀԱԱ, Ֆ.242, ց.1, գ.6, թ.88, բնագիր, մեքենագիր:

N 134
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ ՎԱՆԻ ԾՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ՝ ԻՐԵՆՑ ՀՈՒՋՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՒՄՆԵՐԸ ԳԱՎԱՌԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1915 թ.

Վանի շրջանի գիւղացիութեան

Նկատելով, որ գիւղացիութեան մեծ մասը իր դիմումները մեզի ղրկելով, կը պարտաւորցնէ մեզ նոյն դիմումները կրկին իրենց շրջանի գաւառապետներուն յանձնելու՝ որով և գործերը ուշացնելու:

Կը յայտարարուի, որ բոլոր այդ դիմումները ուղղուելու են գաւառապետներուն միայն:

Վանի նահանգապետ՝ **Արամ**

ՀԱԱ, Ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 27, տպագիր օրինակ:

N 135
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԴԻՏՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՏԵՐ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 հունիսի 1915 թ.

Վան

Վանի վսեմ. նահանգապետ

Վերջին դէպքերու ժամանակ Ստեր գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին ալ այրուած ըլլալով, անոր վերաշինութիւնը կարելի ըլլալու համար գիւղի քահանայի ու գիւղացի երևելիներու կողմէն մեզ եղած խնդրանաց և նպատակին գործածելու համար տուած ապահովութեան համաձայն, հաճեցէք հրաման ընել, որպէս զի շրջակայ Ամիւկ, Շխէնի, Շխկարա գիւղք գեղերէն պէտք եղած ծառեր կտրելու արտօնութիւն, ընդամէն 250 ծառ:

Աղօթարար Առաջնորդ. փոխանորդ Վանայ ***Եզնիկ վարդապետ***

Յ.Գ. Ամիւկ գիւղի ծառերը իրենց պէտքը լրացնելու կարող ըլլալուն միայն այդ գիւղէն կտրելու արտօնութիւն բաւական է:

Նոյն

Մակագրութիւն. *Համաձայն Վանի ազգ. առաջնորդարանի դիմումին որոշուեցաւ գրել Ճանիկի գաւառակապետութեան՝ արտօնելու Ամիւկ գիւղէն կտրել 200 ծառ Ստեր գիւղի Ս. Աստուածածին եկեղեցու շինութեան համար: 13 հունիսի 1915 թ.*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 17, բնագիր, ձեռագիր:

N 136
ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

13 հունիսի 1915 թ.
Աստուածաշէն

Վսեմ Նահանգապետ

Ձեր հրամանի համաձայն կեդ. կոմիտէին դիմեցի Քոէլը այժ ուղարկելու, բայց ոչ մի օժանդակութիւն ցոյց չի տուին, աւելի ճիշտ որոշ պատասխան մը չի տուին ու խօսեցին, որ իմ տեղս վերադառնալուն, ինձ պիտի գրէին ինչպէս ընելիքնին, բայց ցայժմ պատասխան չենք ստացած:

Այժմ Մարտիրոս ընկերներով Քոէլն է. երէկ 200 հեծեալ ռուսներ Ոչխարաց եկան, պահակ հաստատեցին՝ որպէս թէ քիւրտերին հետապնդելու համար, մեզմէ քիւրտերու բնակավայրը հարցուցին, մենք էլ Քոէլի կողմեր Կրզրլ Մէյտան ըսուած տեղը ցոյց տուինք, ատոնցմէ 90 հեծեալներ մեր Ստեփանի և ուրիշ երկու ընկերների հետ այդ կողմեր գնացին լրտեսելու, թէ ինչ ձևով պիտի վերաբերուին հանդէպ քիւրտեր, մեզ համար մութ է, վերջը ելքը ձեզ կը գրեմք:

Տեղս ոստիկանների պակասը կը տեսնուի, առաջն ալ այս մասին գրած էինք ու դուք ցանկ ուզած էիք, ստորև նշանակուած մարդիկ նշանակեցէք ոստիկան, զէնք, վկայականները, թևի նշանները տուէք:

Յակոբ Կանդալեան քաղաքացի
Արշակ Միրզոեան ,,
Ներսէս Կապուզեան ,,
Միհրան Պարտիզպանեան ,,

Վեր յիշուած մարդկանց հետ խօսած ենք իրենց կամքը առած ու հարմար գտած ենք, վերջի կարգադրութիւնը ձեզ կը մնայ:

Նշան Նալբանդեան

Յ.Գ. Շատախի կամատորների համար 100 չափի մօտ հաց հաւաքուած է, լուր տուէք քաղ գան տանին, չը լինի թէ կազակներն գան ու խլեն տանին:

Նոյն

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 36 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 137
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀՆՁՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԳՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

N 13 *15 հունիսի 1915 թ.*
Վան

Տէր նահանգապետ,

Նահանգիս ներկայ ցանքերու հնձման անհրաժեշտ պէտքերէն եղող 30-40 հնձելու մեքենայ բերել տալու մասին մարմնոյս կողմէ քիւ 2 մայիս 20-ի թուակիր տրուած պաշտօնական գրութիւնը նկատի առնուելով՝ հայ կամատորներէն Ռոստովի Նոր Նախիջևանցի պ. Ադամ Գևորգովիչ Կրասիկնիկով սոյն գործիքներ բերելու յանձն առնելով, Մայիս 22-ին ևս այդ գործին համար Վանէն մեկնած լինելը վարչութեանս ալ յայտնի է:

Յանքեր հնձելու համար մարմնոյս դիմելով, դիւրութիւններ պահանջող երկրագործներուն ևս միակ յոյսը այս գալիք գործիքներու վրայ է: Յայտնի է, որ հնձման օրեր մօտեցած են, բայց գալիս գործիքներու մասին մինչև ցարդ ոչ մի լուր չէ առնուած:

Սոյն գործիքներու առնուելը կամ չառնուելը հեռագրով և կամ գրութեամբ ստուգելէ յետոյ՝ եթէ առնուած ալ չըլլայ, անպատճառ գնել տալ և 15-20 օրուան մէջ տեղս հասցնելու միջոցներն նկատի առնուելն կը խնդրուի:

*Երկրագործական Տեսուչ՝ **Խաչիկ Չենոբեան***

***Մակագրութիւն.** Յայտնել Երկրագործական մարմնին, որ յոյսերը գալիք մեքենաների վրայ չդնեն, այլ աշխատեն տեղական միջոցներով գործը կատարել, միևնոյն ժամանակ հեռագիր տալ Կրասիկնիկեանին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 53, բնագիր, ձեռագիր:

N 138

*ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԵՐՊՈՎ ՔՐԴԵՐԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՀՈՂԵՐԸ ՋԱՎԹԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 884 *15 հունիսի 1915 թ.*

Վան

Վան քաղաքի նահանգապետին

Պանզա գիւղի շրջանում գաւառապետը ունենալով N 244 ձեր պաշտօնագիրը, Աբգար Պետրոսեանի անունով յայտնել է էտապի կամեոտանտին, որ ամբողջ շրջանի ցանքսը և խոտը՝ թէ հայերուն և թէ թուրքերուն պատկանող, հրամայուած է ծախել տեղացի բնակիչներուն: Նախազգուշացնում եմ, որ ձեր այդ կարգադրութիւնները սխալ են. հայ բնակչութիւնը պէտք է օգտուի միմիայն իրեն պատկանող հողերէն, իսկ քրդական հողերի ինքնակամ գրաւելու դէպքում, երբ այդ երևան բերուի, այդ հողերը գրաւող անձանց հետ կը վարուենք որպէս կողոպտիչներու հետ: Կառաջարկեմ համապատասխան կարգադրութիւն ընել գաւառապետներուն:

*Գեներալ մայոր **Նիկոլան***
*Զօրամասի հետեւոտանի **Ռիչակով***

***Մակագրութիւն.** Սրա ռուսերէն բնագիրը պ. Արամը տարաւ գեներալի մօտ, բացատրելու այդպիսի գրութեան անյարմարութիւնը: Գեներալը համաձայնեց փոխել և բնագիրը թողեց իւր մօտ: Սրա փոխարէն տուեց N 1055 27 յունիսի կարգադրութիւնը.[129]*

ՀԱԱ, 242, ց. 1, գ. 10, թ. 45, պատճեն, ձեռագիր:

N 139

ԱՌԵՎՏՐԻ ՄԵՆՅԱԿԻ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՄԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

16 հունիսի 1915 թ.

Վան

Տէր նահանգապետ

Ձեր յանձնարարութեան համաձայն առևտրական սեմեակս քանիմ նիստեր ունենալով, պատրաստուած է վեցն յօդուածներէ բաղկացած իրեն յատուկ օրինագիծը, զոր ներփակելս Ձեզ կ՚ներկայացունեմք և

կխնդրեմք, որ նկատողութեան առնելով, բարեհաճէք վաւերացունել և մեզ վերադարձունել զայն:

Դարձեալ որպէս մեր ժողովին պատկանեալ խնդիր նկատողութեան առնուելով, մօրաքօրհնումի[130] հարցը միաձայնութեամբ հետևեալն որոշուած է: Ներկայ յունիս ամսոյ մէջ վաճառականական ոևէ վճարում չպիտի լինի, իսկ յուլիս, օգոստոս, սեպտեմբեր երեք ամիսներու մէջ իւրաքանչիւր ամսավերջին տոկոսէն է միայն պիտի վճարուի, յետագայ ամիսներու համար օրուան պահանջին համաձայն նոր տնօրինութիւն կլինի:

Հազար դուրուշէն պակաս եղած առնելիքներ մօրաքուրհումի վերոյիշեալ որոշման ենթակայ չեն:

Ի մասին մօրաքօրհումի տրուած ուշ որոշումը ևս վաւերացունելն խնդրելով մնամք յարգանօք՝

*Առժամեայ Դիւան ատենադպիր **Ա. Լ. Երամեան***
*Ատենապետ՝ **Համազասպ Տէր Պօղոսեան***

Առևտրական սենեակի առժամեայ օրինագիծ

1. Առևտրական սենեակ կ՛բաղկանայ վեց անդամէ և մէկ նախագահէ, անդամներէն մին գանձապահի պաշտօն կ՛կատարէ և դուրսին ամսականառնօր քարտուղար մը կ՛ունենայ:

2. Առևտրական սենեակի նպատակն է. վաճառականութեան զարգացման հոգ տանել: Առևտրական գեղծումներ արգելել ամենախիստ կերպիւ, գեղծարարներուն պատիժ յանձնարարել, պէտք եղած դատարան՝ թէ ոտղակի իրեն դրուած և թէ դատարաններու կողմէ յանձնարարուած սահմանադրական հաշիւներ քննել՝ դատեր տեսնել և որոշումներ տալ, այն որոշումներ գործադիր մարմնոյ կողմէն գործադրելի են: Կ՛վաւերացնէ իրեն ներկայացուած ամէն կարգի առևտրական մուրհակներ՝ հաշտյ թուղթեր, տոմար՝ վկայագիր և կտակագիր, ամէն որոշում ներկայից մեծամասնութեամբ կտրուի:

3. Մէկէն տասը լիրայի թուղթիմ վաւերացումը «հինգ» դուրուշ տուրք կուգանձէ, տասնէն՝ յիսուն լիրայի «տասը» դուրուշ, յիսունէն վեր՝ քսան դուրուշ. նօթարի գործողութիւն կ՛կատարէ «տասը» դուրուշ գանձելով առաջին օրինակին, իսկ աւելի օրինակներուն՝ «հինգ» դուրուշ, փոստեթայի թուղթերուն՝ «յիսուն» դուրուշ և օրինակներուն՝ «տասնական» դուրուշ: Վկայականի վաւերացման համար «յիսուն» դուրուշ, մինչև յիսուն լիրանոց կտակին՝ «յիսուն» դուրուշ, յիսունէն վեր եղածներուն՝ լիրային «քսան» փարայ[131]:

4. Ժողովն կ՛քննէ և կ՛վճռէ տոմարի եղած հաշիւները, մինչև յիսուն լիրա եղած հաշիւները – որոշումները անվերաքննելի են, իսկ վեր եղած գումարներու համար վերին ատեաններ կրնան քննութեան ենթարկել: Այս

որոշումներու տասը լիրային՝ «տասը» դուրուշ, իսկ վեր եղած գումարներու լիրային՝ «քսան» փրոյ յաւելում կ'ընի:

5. Ի բացակայութեան տրուած ամէն վճիռներ վճռագրի հաղորդուելէն մինչ տասն օր ատենին մէջ վերաքննելի են, իսկ ի ներկայութեան տրուած վճիռներ անվերաքննելի են և մինչ տասը օր վերջնական հանգամանք ստացած լլլալով, որոշումներ գործադիր մարմնոյ կողմէն գործադրելի են:

6. Սենեակի հասոյթներէն ժողովն իրաւունք ունի իր պէտք եղած ծախսերը ընելու և տարին անգամ մը եղևմտից հաշիւը պատկանեալ պաշտօնարանին ներկայացնել: Անհատներու միջև փոխանակուած և տրուած մուրհակներ և ուրիշ թուղթեր, որոնք ատենին կողմէ վաւերացեալ են մինչև յիսուն լիրայ ժամանակ լրանալուն առանց դատարանի դիմելու, երբ գործադիր իշխանութեան դիմէ կրողն գործադիր մարմին զայն գործադրելու պարտական է:

Վեցն յօդուածներէ բաղկացած սոյն օրինագիծը ժողովիս ամբողջութեան կողմէ պատրաստուած և ընդունուած լլլալով կ'ստորագրեմք:

Ա. Լ. Երամեան
Համազասպ Տեր Պօղոսեան
Յով. Փիրումեան
Ն. Ճանիկեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, թթ. 24-26, բնագիր, ձեռագիր:

N 140
ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՆՔԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունիսի 1915 թ.
Վան

Նորին Գերազանցութեան նահանգապետին
Վանայ և նորա շրջանի պարոն Արամի

Ռուսական զօրքերը շարունակ ենթարկում են Վարագայ վանքը յափշտակութեան և աւերման մինչև այսօր:

Նախ յափշտակեցին երեսունևեօթ ընտիր տաւարներ, երկրորդ անգամ տասնևմի ոչխար, երրորդ անգամ տասն ոչխարներ, չորրորդ անգամ տասնմի ոչխարներ, հինգերորդ անգամ քսան ոչխարներ մի էշի հետ, վերջին քսան ոչխարը մի հայ կամաւոր կոզակների ձեռքից առել էր և տուել հովուին, իսկ էշը տարել էին... Շատ անգամ էլ յափշտակողների ձեռքից ապրանքը վանք ենք փախցնում և հետուն արածացնել չենք համարձակվում:

Իսկ խոտանոց և ցանքը արդէն ոտնատակ են տալիս և աւերում վերջնականապէս և եթէ այդպէս շարունակուի, հարկաւ, առանց այն էլ քայքայուած աւերուած վանքը վերջին կորստեան պիտի մատնուի:

Ուստի այդ չարեաց առաջ առնելու մասին խոնարհօրէն խնդրում եմ բարեհաճէք կարևոր կարգադրութիւն և տնօրէնութիւն անել:

Վանահայր Վանից Վարագայ ***Գրիգոր քահանայ Տէր-Աւագեան***

Մակագրութիւն. *Թող դիմեն գեներալին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 92, բնագիր, ձեռագիր:

N 141
ՎԱՐԱԳԱ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀՈՐ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՈՉԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՅԱՆՔՍԵՐԸ ՓՉԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունիսի 1915 թ.
Վան

Նորին գերազանցութեան Նահանգապետին Վանայ և շրջանի Նորին պարոն Արամի

Ռուս կոզակները վրանները խփած սահմաններում ուտացնում-արածնում են ցանքերն ու խոտանոցները և ձիերով, սայլերով քարշում. տանում են կորնգաները, վանքի պահապաններին ծեծում և խրկում են. ուստի ես ինքս գնացի և խնդրեցի, որ դուրս գան վանքի սահմաններից, նորանք արհամարհեցին և ծաղրեցին ինձ ասելով. «Մենք ուտացնում ենք, ուր գնում էք, գնացէք»: Ուստի խնդրում եմ կարգադրէք և տնօրինէք, որ վանքի սահմանը ազատուի աւերմունքից:

Վանահայր Վարագայ վանից ***Գրիգոր քահանայ Տէր Աւագեան***

Մակագրութիւն. *Թող դիմեն գեներալին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 93, բնագիր, ձեռագիր:

N 142
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌԵՏՅԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐՄՄՆԱՏԱՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ԳԵՆԵՐԱԼ ՕԳԱՆՈՎՍԿՈՒՆ ԾԱԾԿԱԳՐՎԱԾ ՀԵՌԱԳԻՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18 հունիսի 1915 թ.
Վան

Прошу Вас не отказать мне в просьбе отправить прилагаемую при сем телеграмму в Игдыр, на имя Его высокопревосходительства Командира Корпуса - шифровано. Ваше превосходительство надеюсь согласитесь со мной, что настоящая телеграмма не должна подлежать огласке, обычной при нешифрованных телеграммах.

Был бы крайне признателен, если бы Ваше превосходительство нашли возможным с Вашей стороны телеграфировать генералу от инфантерии Огановскому[132] то, что известно Вашему превосходительству, по поводу фактов, затронутых в моей телеграмме.

Примите уверения в искренной преданности и глубокого уважения.

Арам

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.46, թ.1 և շրջ., բողոն, ձեռագիր:

N 143
ԽՈՀԱՊԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՋԵՆՔԻ ԵՎ ՌՈՒՄԱՅ ԼԵՋՎԻ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2278 *18 հունիսի 1915 թ.*
Աստվածաշեն

Վսեմ. պ. Արամ Մանուկեանին,
Շրջ. կառավարիչ Վանայ

Տէր

Ամսիս 17-ին Աստուածաշէն գիւղը եկանք, ուր տեղեկացայ, թէ Պալեր լեռան շուրջ հաւաքուած քիւրդերը ասկէ առաջ սկսած էին հայերու և մանաւանդ ճամբարի կօազկներու վրայ յարձակումներ փորձել, այդ պատճառով Վանէն ուղարկուած զումարտակ մը, անոնց վրայ քալած է արդէն և հաւանական է, որ այսօր իսկ յարձակումը սկսի:

Գալով մեր շրջանի մէջ եղած գէնքերուն, արդէն Հայոց-Ձորի յայգելի կառավարիչը ամբողջապէս իւր տրամադրութեան տալ առած է, թէպէտ քանի մը հատ բողուցած է մի քանի գիւղացիներու քով, անոնք ալ ներկայ հանգամանքներու տակ ստիպուած է եղեր ցրուել կռուելու ընդունակ գիւղացիներուն: Այնպէս որ ներկայիս ոչ մէկ գէնք կարող ենք ձեռք բերել, իսկ մեր աստիկանները երբէք չեն համաձայներ տրուած պէրտանկաներով թշնամիի ուժեղ և աւելի հեռարձակ հրազէններու դէմ կուի երթալ, այսպէս բոլորովին անելանելի դրութեան մէջ կ'մտնենք ճիշտ այն րոպէին, երբ արդէն իսկ տնտրնալու[133] ժամանակ չունինք:

Միևնոյն ատեն, երբ արդէն ռուս զումարտակը մեր սահմաններու մէջ կ'գտնուի, այնքան կարևոր ձեռնարկի մը համար, ռուսերէնի գրագրի պակասը շատ զգալի և մինչև իսկ մեզի համար վարկաբեկիչ կ'դառնայ:

Սոյն կրկնակ անհրաժեշտութիւնները Ձերդ անմիջական ուշադրութեանը յանձնելով, վայրկենին պահանջներուն համաձայն կարգադրութիւնիդ կ'խնդրեմ:

Յարգանքներով՝ ***Արմենակ Յ. Տէր-Պօղոսեան***
Գաւառապետ Խօշապի

Մակագրութիւն. *Կատարել եմ:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թթ. 43-44, բնագիր, ձեռագիր:

N 144
Ա. ՄԱՐՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆԻՑ ԹԱԼԱՆՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

18 հունիսի 1915 թ.
Վան

Վսեմ Գահանգապետ,

Ստորագրեալս Ավգարիկ գիտացի լինելով, նախապէս մեր գիտ քիւրտերէ թալանուեցայ, յետոյ երբ քիւրտեր փախան, ես ալ քիւրտեր հետապնդելով իրենցմէ ետ առի թէ իմ սեպհական անասուններէն և թէ ուրիշներու 300 հատ ոչխար, 3 հատ գոմէշ, 8 հատ եզ և 3 հատ ձիու քուռակ: Ասոնք, երբ մեր գիւղ պիտի բերէի, եզտի Ջանկիր աղէն բռնութեամբ իմ ձեռքէն խլեց ու չ'տվաւ, որուն ներկայ էին վանեցի Եավրեան Գրիգոր և Սատաջեան Յովհաննէս ազաներ և ուրիշները: Կ'խնդրեմ, որ յայտնէք, թէ արդեօք իրաւացի է յիշեալի այդ ապրանքներու գրաւումը, որ մեր արեան գինն է և այս խնդիրս արդարութեամբ քննելով, իմ իրաւունքս յիշեալ եզտի Ջանկիրէն ետ առնելու, ուր որ պէտք է հրաման ընելու շնորհ ընէք:

Յարգանօք՝ վասն անգրագիտութեան Ավգարիկ գիտացի

Արիստակէս Մարջանեան

Մակագրութիւն. *Եզդի Խանէի Գաւառապետութիւն, սոյն ավգարիկցի Մարջանեան Արիստակէսէն գրաւած անասուններու մասին բացատրութիւն տուէք մեզ, թէ ինչո՞ւ գրաւած էք զանոնք և ի՞նչ բանի յատկացուցած էք: Գաւառ[ների] բաժնի Դիւան՝* ***Արմ. Փոխանեան.*** *8 Յուլիս*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 20, բնագիր, ձեռագիր:

N 145
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՆՈՐԴՈՒՅԻ ՇՐՋԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԱԾ Պ. ՔՈՍՅԱՆԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 975 *18 հունիսի 1915 թ.*

Мною назначены начальником Нордузского района и полицейской стражи этого района Петрос Косянц и помощником его Нерсес Боханян.

Доводя до сведения Вашего превосходительства об изложенном, покорнейше прошу не отказать выдать означенным лицам особые удостоверения[134] и предписать соответственным этапным комендантам об оказании содействия означенным представителям гражданской власти.

Ванский губернатор
Секретарь

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.130, թողոն, մեքենագիր:

N 146

ԱՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ԵԶԴԻ-ԽԱՆԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՋՀԱՆԳԻՐ ԱՂԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 973 — *18 հունիսի 1915 թ.*

Мною назначены начальником района Езди-Хане и полицейской стражи этого района Джангир сын Хато и помощником его Абраам Шакарян..

Доводя до сведения Вашего превосходительства об изложенном, покорнейше прошу не отказать выдать означенным лицам особые удостоверения и предписать соответственным этапным комендантам об оказании содействия означенным представителям гражданской власти.

Ванский губернатор
Секретарь

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.131, թողոն, մեքենագիր:

N 147

ՄՈԿՍԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

N 2418 — *20 հունիսի 1915 թ.*

Մոկս

Վսեմապատիվ պ. Արամ Մանուկյան
Բարեխնամ նահանգապետ Վան նահանգին
Ի Վան

Յարգոյ նահանգապետ,

Ստացանք Ձեր հրամանագիրը փախստական կամաւորների վերաբերեալ: Այստեղ փախած էին եօթը կամաւորներ հրամանատար պ. Համազասպի[135] գնդից, այդ եօթը հոգիից չորսը ինքնովին կրկին իրենց բանակ վերադարձան, իսկ մնացած երեքը՝ մէկը ձեռք կոտրած է, միւսը հիւանդ էր, անոնք առողջանալուն կրկին խրկեցինք, գացին իրենց բանա-

կին հասան նախքան Ձերդ Նամակի հասնելը: Եթէ երբէք ուրիշ ևս գտնուեցին, կը ձերբակալենք և կը խրկենք ձեզ:

Ինչպէս որ Ձեզ յայտնի է, տեղս հաւաքուեր էին ոգմեցի, մամրտանցի, սպարկերտցի և կաոկաոցի ու բարւարցի գաղթականներ, որոնց վրայ աւելացաւ նաև հրամանատար պ. Դրօյի գունդը, որոնց բոլորին կերակրելու համար, ըստ մեր նեղ պարագաներին, խիստ նեղութիւններ և դժուարութիւններ քաշեցինք, հազիվ հազ կարողացանք ժողովրդի ունեցած-չունեցածը հաւաքելով, կերակրել այդ ամբողջ բազմութիւնը: Թէև այսօր քաշուեցին տեղէն գաղթականներ և կամաւորների մի մաս, բայց վստահ պէտք է լինէք, այժմ տեղիս ժողովուրդ բոլորովին զրկուած է իր ուտեստեղէնից, տեղս մնացող կամաւորները այժմ կը կերակրուին պ. Դրօի Գաւաշից խրկած մի քանի չափ ցորենով, իսկ տեղի ժողովուրդ բոլորովին սովամահ կը լինի, այս մասին կը խնդրուի, որ ձերդ մասնաւոր ուշադրութիւնը դարձնէք ևս աղքատիկ շրջանի վրայ: Արդէն գաւառակիս արևմտեան կողմը եղած երեք՝ Դաճուն, Բաղաճոր և Թառաճու գոլիներ[136] բոլորովին այրուած և կողոպտուած են, ամբողջ բազմութիւն հաւաքուեր են գետի արևելեան կողմի գիւղերում:

Մենք թէև ընտրուած ենք իբր գաւառապետ, բայց մեզ համար կը պակսի կարգ ու կանոններ: Ուստի եթէ կարելի է, շնորհ ընէք կառավարչական կարգ ու կանոնից շատէ քիչ մեզ տեղեկացնել, թէ ինչպէս շարունակենք մեր պաշտօնը: Ոստիկանների և այլն կառավարական ծախսերի եկամուտը ո՞րտեղից պէտք է լինի: Մենք զուրկ ենք ամէն բանից:

Մնամք յարգանօք Ձեզ

Գրիգոր և Կարապետ

Միակազրութիւն. *Կարդացի: Արամ*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թթ. 1-2, բնագիր, ձեռագիր:

N 148

ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՆՔԻ ԽՈՏՀԱՐՔԵՐԻ ՀՆՉՈՒՄԸ ԿՈՉԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 111 *20 հունիսի 1915 թ.*

Վան

Վանայ Վսեմ Նահանգապետին

Հիմայ տեղեկութիւն ստացանք, որ ռուս կոզակներն, որոնք արդէն առաջւայ Վարագայ վանքի քանի մը խոտի արտերը քաղած էին, հիմայ ալ իսկ վանքի շրջապատի խոտերն ալ քաղել սկսած են, որմէ ինչպէս գիտէք, վանքը որևէ հնարաւորութիւն չունենար իր անասունները ձմռան պահելու:

Ուստի՝ կը խնդրենք, որ անմիջապէս հարկ եղած կարգադրութիւնը ընել տաք արգելելու համար այդ յափշտակութիւնը:

Աղօթարար առաջնորդ. փոխանորդ Վանայ՝

Եզնիկ վարդապետ

Մակագրութիւն. *Թող դիմեն գեներալին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 94, բնագիր, ձեռագիր:

N 149
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 114 *20 հունիսի 1915թ.*

Վան

Վանայ վսեմ. նահանգապետին

Ստացած ենք Ձեր Յունիս 10 թուակիր գրութիւնը, որով ներփակ ղրկելով մեզ Վանի ուսուցչութեան մէկ գրութիւնը՝ իրենց յետնեալ թօշակներու վճարման համար, հարկ եղած կարգադրութիւնը ընել կը յանձնարարէք:

Յիշեալ ուսուցիչք իրենց հաւաքական գրութեան մէջ կըսէն, թէ «մեր քաղական-հոգաբարձական կազմերը կամ քաղաք. ժողովը բոլորովին անտարբեր կը գտնուին՝ իրենց եկամտի աղբիւրները ցամքած լինելու հանգամանքը մէջ բերելը, կարծէք այլևս պատասխանատու չէն համարէր ինքզինքին՝ յարգելու մեզ տուած պայմանագիրը»:

Յիշեալ խօսքերը գոնէ քաղաք. ժողովի հասցէին ուղղելը սխալ է, որովհետև նախ՝ մենք ուսուցիչներու հետ որևէ պայմանագիր չունինք, որևէ բանով մը կապուած չենք, երկրորդ, ուսուցիչներն քաղաք. ժողովին երբէք դիմած չեն, ոչ ալ մեր որևէ պատասխանը լսած են: Ժողովը անոնց հանդէպ խտրական պարտականութիւն միայն ունի, ուստի յանձնարարած է քաղ. խորհուրդներուն, որ ջանան անոնց ըստ կարելոյն գոհացում տալու: Իսկ գալով այն ուսուցիչներուն, որոնք իրենց ռոճիկը կստանային Միութեան հաստքէն հայ վարժարաններուն յատկացած նպաստի գումարէն, բնական է, որ ոչ Առաջնորդարան պատասխանատու է և որն ալ որևէ բան կրնայ ընել այժմ անոնց գոհացում տալու համար: Ուստի կը խնդրէինք, որ այդ մասին մի տեսակ կարգադրութիւն ըլլար կառավարչութեանդ կողմէն:

Աղօթարար Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝

Եզնիկ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թ. 14, բնագիր, ձեռագիր:

N 150

ԱՌԵՎՏՐԻ ՄԵՆՅԱԿԻ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՄԵՆՅԱԿԻ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

22 հունիսի 1915 թ.
Վան

Տէր Նահանգապետ

Ձեր 1009 թիւ նամակն ստացանք, որով մօրաքօրիսմի և վաճառականական սեռնակի օրէնքի մասին տեղեկութիւններ կը պահանջէք:

Մօրաքօրիսմի օրէնքի բառացի թարգմանութիւն չկրցինք գտնել, բայց էական կէտն հետևեալն էր. պատերազմական վիճակ հրատարակուելու առաջին ամիս վճարի դադարում, իսկ յաջորդ 3 ամիսներին հարիւրէն հինգ, ապա վերջի օրէնք, որ սկսեալ 1914 դեկ. 21-էն մինչ 1915 Մարտ 31 հարիւր տաս: Այնուհետև Պոլսէն նոր օրէնքի կսպասուէր, երբ Ապրիլ 7-ի Վանի դէպք պատահեցաւ:

Գալով առևտրական սեռնակի օրինաց. քանիմ օրէնսգետների դիմեցինք, որոնք երկար յօդուածներէ կը բաղկանայ ըսին, որոնք ի ձեռի չունինք, միայն համառօտ ամփոփումը կրցեր ենք ձեռք բերել զոր արդէն նախորդ նամակաւ Ձեզ ղրկած եմք:

Յարգանօք՝

Ատենադպիր՝ Ա. Լ. Երամեան
Ատենապետ՝ Համ. Տէր-Պօղոսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 21, բնագիր, ձեռագիր:

N 151

Ի. ՄԻՐԱՔԵԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԻՒՂԱՑԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 հունիսի 1915 թ.

Խնդրատու՝
Բերկրիի շրջան Գիւզակ գիւղացի Իսայի Միրաքեան
Վսեմ նահանգապետ.

Եղբայրս կուի միջոցին սպանուած է, որով 10 անձէ բաղկացեալ ընտանիքի միակ յոյս ու ապաւէն ես եմ, որ չարաչար աշխատելով, հազիւ կարող եմ զանօնք կերակրել: Բայց մեր գիւղի գիւղապետը՝ Յարութիւնը, իմանալով թշուառութիւնս, սակայն քանիցս անգամներ ինձ իբրև օլամ, ձրի աշխատող, գործով ղրկել է քաղաք՝ իմ թշուառ ընտանիքը անօթի թողնելով:

Ուստի այս մասին Ձեր վսեմութեան դիմելով՝ յանիրաւի և անհարկի զրկանքներից զերծ մնալը կը խնդրեմ:

Յարգանքներով՝ Իսայի Միրաքեան

Մակագրություն. Թող դիմէ Բերկրիի գաւառապետին:
*Խնդրատուի բոլոր նկատի առէք և մի թոյլ տաք, որ գիւղապետներ այսպէսներին ձրի աշխատացնեն կամ շահագործեն: Գաւառ[ների] Դիւան՝ **Արմ. Փոխանեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 22, բնագիր, ձեռագիր:

N 152
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԲԵՐԴԱԿ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

22 հունիսի 1915 թ.
Վան

Վանի Վսեմ. Նահանգապետին

Բերդակ գիւղի ս. Յովհաննէս եկեղեցին Վանի պատերազմին ատեն այրուած ըլլալով, նոյնպէս ալ վարժարանն, հաճեցէք արտօնել, որ անոնց վերաշինութեան համար Արտամեղի լքուած ծառերէն 200 (երկու հարիւր) ծառեր կտրուեն:
Աղօթարար

*Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝ **Եզնիկ վարդապետ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 23, բնագիր, ձեռագիր:

N 153
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՄԽԿՆԵՐ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԵՐ ԿՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

22 հունիսի 1915 թ.
Վան

Վանի Վսեմ. Նահանգապետին

Մխկներ գիւղի ս. Յարութիւն եկեղեցին Վանի կռիւներու ատեն այրուած ըլլալով, շնորհ ըրէք արտօնել, որ նոյն եկեղեցւոյ վերաշինութեան համար 100 (հարիւր) հատ ծառեր կտրեն ու փոխադրեն գիւղը քաղաքին լքուած ծառերէն, որովհետև իրենց մօտիկ տեղեր կտրուելիք ծառեր չի կան:
Աղօթարար՝

*Առաջնորդ փոխանորդ Վանայ՝ **Եզնիկ վարդապետ***

Մակագրություն. Անհետևանք:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 26, բնագիր, ձեռագիր:

N 154
ՎԱՆԻ ՄԱՆՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՄԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԳԾՈՒՄ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՉԱՆՏԵՍԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

22 հունիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ Վանի շրջանի

Կ'իմանանք, որ վաճառականական սենեակ մը կազմակերպուեր է, և սոյն սենեակը իր իրաւասութեան շրջան որոշելու համար պատրաստուած է օրինագիծ մը, և այս օրինագիծ և թէ մօրաթօրիումի օրէնք մը գծելով յղած է Նահանգային ժողովիդ վաւերացման համար:

Ստորագրեալներս գրեթէ ամբողջովին Վանայ փոքր վաճառականներու դասակարգին ըլլալով և նկատելով, որ յիշեալ վաճառականական սենեակը և իր իրաւասութեան օրինագիծը և թէ մօրաթօրիումի օրէնքի գործադրութիւնը կրնան անմիջական ազդեցութիւն ունենալ մեր արդէն քայքայուած տնտեսական վիճակի վրայ, կը փութանք մեր հետևեալ արդար դիտողութիւնները և խնդրանքները ընել.

1. Նկատելով, որ վաճառականական սենեակի իրաւասութիւնը և պարտականութիւնը պէտք է լինի թէ մեծ և թէ փոքր վաճառականներու իրաւունքի պաշտպանութիւնը, հետևաբար անդամներու ընտրութեան գործը անհրաժեշտօրէն պէտք էր կատարուէր ամբողջ վաճառականներու քուէով և մասնակցութեամբ:

2. Քուէով չընտրուած մի ժողովի պատրաստած օրինագիծ կրնայ չափուած և ճևուած ըլլալ իրենց անձնական շահերու և նպատակի հիման վրայ, ասկէ զատ օրինագծի պատրաստութիւնը մի այնպիսի գործ է, որ կրնայ կատարուել միայն օրէնքի հմտութիւն ունեցող մասնագէտներու ձեռքով:

3. Գալով մօրաթօրիումի օրէնքին իմացանք, որ յուլիսի սկսեալ մինչև սեպտեմբերի վերջ իւրաքանչիւր ամսուայ վերջանալուն ամէն պարտապան պարտաւոր է տոկոսէն 5 վճարում ընել իր պահանջատիրոջ. այս օրէնք միայն կ'ազդէ մեր փոքր վաճառականներուս վրայ, վասնզի մենք պարտք ունենք միայն մեծ վաճառականներուն. մինչդեռ ներկայ ընդհ. պատերազմի պատճառով ամէն յարաբերութիւն խզուած ըլլալով վաճառականական կեդրոններուն հետ, այդ մեծ վաճառականներու Պօլսոյ կամ Եւրոպական հրապարակներու հետ ունեցած հազարաւոր լիրայ պարտքերնին երբ չի պահանջուիր և գանձուիր իրենցմէ, որքան անարդարութիւն կը լինի իրենց պարտք չվճարած ատեն առևելիքնին գանձեն: Մինչդեռ մենք՝ փոքր վաճառականներս ալ մեր կարգին առևելիքներ ունինք, որոց գրեթէ տոկոսին 90 քիւրդերու, քիւրքերու և գիւղացիներու քովն են, որոնք այսօր մէջտեղ չկան, շատ շատեր սպանուած կամ փախած են, որով ըսել է, թէ այսօր և թերևս շատ երկար ժամանակի համար մեր քիւրքերու, քիւրդերու և գիւղացիներու քով եղած առևելիքները գան-

ձելու հնարաւորութիւն չըլլալէ ի զատ, բոլորիս ապրանքներ մեծ մասամբ չարշիի[137] մնացած ըլլալով, վառուած կամ կողոպտուած են, մի մասն ալ ծամբան մնալով, այլևս ձեռք բերելու յոյս չունինք երբէք:

Արդ ամփոփելով խօսքերնիս, կը խնդրենք. 1. կազմել մի նոր վաճառականական սենեակ, ամբողջ վաճառականներու քուէներու մասնակցութեամբ, 2. սոյն սենեակի իրաւասութեան օրինագծի պատրաստութիւն յանձնել մասնագէտ և անկողմնակալ անձերու, 3. փոքր վաճառականներու դրամ գանձելու գործը յետաձգել մինչև այնօր՝ երբ Վանայ մէջ նորմալ կեանք կը սկսէ և կեդրոններու հետ յարաբերութիւն վերսկսելով մեծ վաճառականներ պարտատոր կ'ըլլան պարտքերնին վճարել և մենք ալ քիչ շատ մեր առնելիքներ գանձելու հնարաւորութիւն կունենանք:

Սոյն խնդիրը բոլորիս համար խիստ կենսական լինելով՝ խնդրագիրս ձեզ տալու և բացատրութիւններ տալու համար ընտրեցինք յանձնախումբ մը հետևեալ անհատներէ. Ռուբէն Յովնանեան, Օհանէս Թէրլէմէզեան և Սկրտիչ Սարուխանեան:

Սպասելով Ձեր կարգադրութեանց յարգանօք[138]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 16, թթ. 19, 20-21, բնագիր, ձեռագիր:

N 155
ԱՎԱՆՅԵՑԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՆԱՎԱՏԵՐԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

22 հունիսի 1915 թ.
Վանից

Վսեմ նահանգապետ Վանի

Ձօրաշարժի հրատարակումէն զկնի, մօտաւորապէս մի տարի կը լինի, որ կառավարութեան գործին մէջ կը ծառայինք, առանց կոպէկ մը վարձք ստանալու: Սորա հետ միասին ուղերնուս վրայ կը ծանրանայ նաև 5-6 նաւաստիների ուտեստը (իւրաքանչիւր նաւին մէջ), որոնք նաւերնուս մէջ կը ծառային: Անցեալ դէպքէն վերջ նաւաստիներէն շատերը սպանուելով, 2-3 ընկեր նաւատէրերէն միմիայն մէկը մնացած է, որ պարտաւորուած է վերջինս իւր մեռած ընկերների որբերի օրական ապրուստը, [բայց ստիպված է] խլել իրենցմէ ու իր նաւին մէջ դնել գործաւոր նաւաստիներին կերցնելու: Ասկէ ի զատ, իւրաքանչիւր նաւը, որ ռուսների կամ կամաւորների տրամադրութեան ներքև կը գտնուի, պատաւորուած է օրի աննպաստ լինելուն առթիւ, նաւերն զանազան նաւահանգիստները հանդիպած ատեն, նաւին մէջ գտնուած պահակներին ևս հաց տալ, որովհետև [նրանք հաց] չեն ունեցած: Ասկէ ի զատ գործաւոր նաւաստիներն ևս, փախչելով չեն ծառայեր նաւերին մէջ, որովհետև ընտանիքնին սոված մնացած են տուներուն մէջ:

Արդ, այլևս անկարելի լինելով տոկալ տոյն զրկանքներին, վերջին ծայր անկարողութեան և յուսահատութեան մատնուած ենք տելս գտնուող 10-12 նաւատէրերս. որ որևէ միջոց չունենալով աշխատելու, ստիպուեցանք խնդիրը ներկայացնել ձեզ:

Կը խնդրուի յատկապէս, որ գթալով մեր թշուառ կացութեան վրայ, շնորհ անէք կերպով մը վարձատրել մեզ, որպէսզի մենք ալ կարողանանք գոհացնել մեր գործատէր նաւաստիները և նաւերնիս դնել կառավարութեան ծառայութեան մէջ, ինչպէս որ մինչ այժմ դրած ենք:

Յարգանօք՝ ի դիմաց բոլոր նաւատէրերի՝

***Կազար Թումասեան** կանճակցի*
***Պաղտասար Ներսէսեան** կանճակցի*
Յարութիւն Կալիկեան
Խաչատուր Ասպատուրեան
Արմենակ Գրիգորեան
Կարապետ Թումասեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թ. 16, բնագիր, ձեռագիր:

N 156
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԹԵՐԱԿԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՍՄԱՆՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՕՐԻՆԱԿՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

22 հունիսի 1915 թ.
Վան

Նահանգի կառավարութեան իրաքանչիւր պաշտօնեայ և հաստատութիւն պարտաւոր է գործել իր իրաւասութիւններն ու պարտականութիւնները որոշող օրէնքներու գծած սահմաններու մէջ և օրինական ձևերով:

Ընդհանուր կանոնով իբրև ոյժի մէջ գտնուող օրէնք առայժմ ընդունուած են Օսմանեան օրէնսդրութիւնները, նկատի չունենալով վերջինիս այն տրամադրութիւնները, որոնք չեղեալ կը համարուին ռուս զօրքի կողմէ մեր նահանգը գրաւելու և պատերազմական վիճակի ու արտակարգ պայմաններու մէջ գլուխ ելլելու պատճառով:

Այս առթիւ յարմար նկատուած է, որ նահանգային կառավարութիւնը իր ձեռքի տակ ունենայ Օսմ. օրէնքներու բովանդակութեան հանգամանօրէն և ճշգրիտ կազմուած գրաւոր հայերէն շարադրութիւնը այն յատկացումներով և լրացում-փոփոխութիւններով, որ կը թելադրեն վերոյիշեալ

հանգամանքները, մատնանշելով շարադրած յօդուածներու թուահամարները և պատճառաբանելով կատարուած յապաւումները և լրացումները:

Այս մասին քանի մը անգամ ազդարարուեր է թէ նահանգային վարչական խորհրդի նիստերուն մէջ և թէ առանձին պաշտօնեութեանց:

Արդ, սոյն գործի կատարումը փութացնելու համար նահանգապետի կարգադրութեամբ դիւանատունս կը խնդրէ Ձեզ, մինչև ներկայ շաբթու վերջը ներկայացնել Ձեր պաշտօնէութեան և հաստատութեան վերաբերեալ Օսմանեան պատշաճ օրէնսդրութիւններու տրամադրութեանց հայերէն շարադրութիւնը:[139]

Վանի նահանգապետութեան դիւանապետ Ա. Դարբինեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 57, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 157
ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԵՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՏՆԵՐԻ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 2292 *22 հունիսի 1915թ.*

Խնդրատուներ քաղաքամիջի բողոքող Դաշնակց. ընկերներու կողմէ որոշուած անդամներ - Ա. Աւ. Կէօրկիզեան, Յարութիւն, Մարտիրոս Սարօեան, Մանուկեան, Վահան Յովյաննիսեան

Վսեմ նահանգապետ

Երէկուընէ սկսեալ խիստ խուզարկութիւն մը սկսած է քաղաքի մէջ ոստիկանութեան կողմէ: Մենք դէմ չենք խուզարկութեան, երբ այդ կը լինի յայտնի գողերու տուներ և ոչ թէ անմեղ ժողովրդեան: Մենք կը պահանջենք վաճառականաց յանձնախումբէն, քաղաք իջնալ և մենք խօսելիք ունենք իրենց հետ: Հոն, ուր իրենք ապրանքներ դրած են, իրաւունք ունին միայն անոնցմէ պահանջելու և ոչ թէ անմեղ ժողովրդի պատիւը ոտնատակ անելու: Կը պահանջենք նոյնպէս, հաստարակ ժողովրդի քիւրքերու տուներէն բերած կարգ մը մանր մունր բաներ, որոնք ոստիկանատան կենդրոնացած են, իրենց տեղերուն վերադարձուին: Ընկերներն ու ժողովուրդը խիստ զրգռուած են, ուստի կը խնդրենք ժամ առաջ դադրեցնել տաք սոյն ապօրինի խուզարկութիւնը և օրինական ձևի մտցնէք, անտեղութեանց առաջքն առնելու համար:

Յանձնախումբ

Մակագրություն. *Ոստիկանությունից խնդրում է տեղեկություն: Ես կհետևեմ:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 8, բնագիր, ձեռագիր:

N 158
ՄԱՆԴԱՆՑԻ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

N 2270 *22 հունիսի 1915 թ.*

Վսեմ կառավարչապետ.

Ստորագրեալներիս ընտանիքներ վերջին կռիւներուն քիւրդեր գերի տարած, իսկ այժմ երբ որ անձնատուր են եղած՝ գերիներ բերած են Սարայի շրջանի Տըվզըր գիւղ: Լսելով այս իրողութիւն, ուրիշ գիւղացիներու հետ մեր գիւղէն ալ 5 հոգի որկեցինք յիշեալ քիւրդերու քով՝ որոնք կրակ բացին մեր տղաներու վրայ. և մեր գիւղէն երթացող 5 տղաներէն 1 փախաւ, իսկ 4-ը այժմ յիշեալ քիւրդերու քովն են:

Այժմ կը խնդրենք մեր գիւղի մէջ այժմ բնակող մի քանի քիւրդերուն Ձեր կողմից կնքուած յանձնարարականս մը տաք՝ որոնք երթան և Տըվզըր գիւղի քիւրտերու քով միջնորդեն և թէ գերիներ և յիշուած 4 տղաներ ազատելով բերեն:

Յարգանօք Մրնդրնցի գիւղացիներ՝

Կրզըր Աւետիսեան
Գասպար Գրիգորեան

Մեր գիւղի քիւրդերու անունները. Ըյիք Խան Բէկի տղան Ըհմըդխան, Ըզիշէրի տղան՝ Հըսրըք:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թ. 154, բնագիր, ձեռագիր:

N 159
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻ ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՆԱՑՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 991 *22 հունիսի 1915թ.*

Վան քաղաքի նահանգապետին

Առաջադրում եմ յայտարարել գաւառապետներին, որ օժանդակեն զօրամասի պաշտօնեաներին՝ իմ տուած վկայագրերի համաձայն՝ տաւար գնելիս:

Գեներալ-մայոր ***Նիկօլաև***
Զօրամասի ինտենդանտ՝ ***Ռիչագով***

Մակագրություն. Յանձնարարել գավառապետերին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 50, պատճեն,[140] ձեռագիր:

N 160
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ՝ ՆԱՄԱԿԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ԱԼՉԱՎԱԶԻ ՇՐՋԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՎԱԾ Փ. ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1080 *22 հունիսի 1915թ.*

Мною назначен начальником Алчавазского района и полицейской стражи этого района Панос Марутян.

Доводя об этом до сведения Вашего превосходительства, покорнейше прошу не отказать выдать означенному лицу особое удостоверение и предписать этапным комендантам об оказании содействия ему, как представителю гражданской власти.

Ванский губернатор ***Арам***
Секретарь ***Айрапетянц***

Մակագրություն. *Г. губернатору Ванского округа*
Довожу до Вашего сведения, что Алчавазский район находится в ведении генерала Шарпантье[141]. Комендант Баязетского отряда Николаев. 26 июня 1915г. N181, Ван[142]

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.138 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 161
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՌԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

N 114 *23 հունիսի 1915 թ.*

Կառավարիչները պարտաւոր են հետևել հետևեալ օրէնքին.-

Ա. Ամէն կառավար (ֆայթօնճի) պարտաւոր է հինգ օրուան մէջ քաղաքապետարանը դիմել և իւր անունը, մականունն ու կարգին ճօմերօճ արձանագրել տալ:

Բ. Վկայական չունեցող, քսան տարեկանէն վար եղող կառավարիչները և առանց ճօմերօճի կառքերը գործելէ արգելուած են:

Չանսացուներէն առաջին անգամ 100-200 դուրուշ տուգանք պիտի առնուի, երկրորդին՝ պիտի արգելուին գործելէ:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 100, բնագիր, ձեռագիր:

N 162

Ծ. ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳՈՐԾՈՔԻ ՆԱՎԹԱՀԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

23 հունիսի 1915 թ.
Վան

Վսեմ. նահանգապետ Վանայ

1871 թուին, կնոջս հարազատ քեռին, Նազարէթ Աւետեանը, Գործոք գիւղի մէջ նաւթի հանքեր գտնելով, անմիջապէս Պոլիս կ'երթայ, ժամանակի հանքային վարչութեան (Մաղեն իդարեսի)[143] ներկայացնելու իր գիւտը, հողերը քննել տալու և արտօնութիւն խնդրելու՝ շահագործելու համար: Պօլսոյ հանքային վարչութիւնը՝ ինձատը մէկ տարուան մենաշնորհ մը կուտայ իրեն՝ ստուգելէ ետք թէ իրապէս Գործոքի մէջ նաւթի հանքեր կան:

Նազարէթը Վան վերադառնալով՝ գործի կը ձեռնարկէ և քանի մը տարի մենակ՝ բաւական թուով գործաւորներ բանեցնելէ և դրամ ծախսելէ ետք, Մմսարեան Մանուկի, Թօխմախեան Մարգարի և Սաֆրաստեան Դաւիթի հետ ընկերութիւն մը կը կազմէ՝ սկսուած գործը շարունակելու համար: Մենաշնորհի առնուած հանքերու տարածութիւնը տասը հազար (10.000) քառակուսի մեթրի կը հասնէր:

1872-76 թուին շարունակաբար այդ հանքերը բանեցնելէ ետք, կը յաջողին 10-12 հոգեր փորել տալ՝ 150 կանգունական խորութեամբ և բոլոր ատոնց ծախսը, մինչև 1000 (հազար) օսմ. լիրա, կը վճարէ միայն Նազարէթը, ինչպէս կը վկայէ հանգուցեալ Դաւիթ Սաֆրաստեանի 909, Յունվար 12 թուով Փափազեան Վահանին (բժիշկ) այդ առթիւ գրած նամակը: Բայց ռուս-թրքական պատերազմին (76-78) ջելօր քիւրդերը Գործոքէն անցած ատենները, յիշեալ ընկերութեան բոլոր գործիքները կը թալլին, որով ընկերութիւնը արդէն անզօր կ'ըլլայ իր գործը շարունակելու, մանաւանդ որ՝ ընկերութեան հոգին եղող Նազարէթը չուտով կը մեռնի Պաքուի մէջ:

1909-ին, Փափազեան Վահանը (բժիշկ), որ ինձ նման հարազատ ժառանգորդ մըն է յիշեալ Նազարէթին (Փափազեանի քոյրը՝ Նազարէթի կինն է), սկսաւ հետաքրքրուել այս հարցով և ինծմէ փաստեր ուզեց: Ես դիմելով այդ ընկերութեան միակ ողջ անդամ մնացող Սաֆրաստեան Դաւիթին՝ անոր մանրամասն նամակ գրել տուի բժշկին, այդ նամակի պատճէնը այժմ մեր քովն է: Բոլոր գործոքցիներն ալ այժմ կը վկայեն Նազարէթի և իր ընկերութեան աշխատանքներու և ծախսերու մասին:

Դժբախտաբար, սակայն, Փափազեանը չկրցաւ պետական տոմարներէն դուրս հանել մենաշնորհի և արտօնաթղթերը, հետևաբար սոսկ ա՛յն պատճառով, որ թուրք կառավարութիւնը չուզեց նման լայն իրաւունք մը հայերուն ձգել:

Արդ, կինս, Տիգրանուհին, լինելով յիշեալ Նազարէթ Աւետեանի հարազատ քրոջը աղջիկ, բնական ժառանգորդներէն մէկը կ'ըլլայ աճոր ստացուածքին: Եւ այժմ, երբ ռուսները արդէն սկսած են յիշեալ Գործոքի ճաւթահանքերը շահագործել, ես կուգամ խնդրելու Ձեզմէ, որ ձկատողութեան առնէք մեր ժառանգական իրաւունքները, մանաւանդ որ 909 թուին ես ինքս ալ 300-400 ղրշ. ծախսեր եմ ըրած այդ արտօնաթղթերը երևան բերելու համար:

Վահան Հացագործեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 54, թ. 4 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 163

ՁԻԱՎՈՐ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՄԻՍԱԿԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՁԻԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՏ ՀԱՅԹԱՅԹԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

N 2364 *23 հունիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ պրն. Արամ,

Ձիատոր ոստիկաններու կազմը հաստատելու օրէն Նահանգապետութեանդ մասնաւոր հրահանգովը որոշուեցաւ իւրաքանչիւր ձիատոր ոստիկանին յատկացնել ամիս 30 րուբլի, պայմանով, որ ձիերու խոտը կառավարութիւն ինքը հայթայթէր:

Թէպէտև Ֆառուղի մէջ առանձին արօտատեղ են յատկացուելու մեզի, սակայն քաղել տալու և փախադրելու համար դժուարութիւններ կը կրենք: Իսկ երամեանէն վերցուցած արտի համար վճարուած 300 ղուրուշ գրեթէ զուր գնաց, որովհետև կազախները ամբողջովին կերցուցին, այնպէս որ այս րոպէիս մեր ձիերուն խոտ չենք կրնար ճարել, ասկէ զատ ձմեռուան համար ալ պէտք կայ հիմակուընէ խոտի պատրաստութիւն տեսնալ, ուստի կը խնդրենք որոշ կարգադրութիւն մը ընել:

Յաստուկ յարգանօք՝ ***Միսակ*** *ձիատոր ոստիկանապետ*

Մակագրութիւն. *Կարդացի:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 110, բնագիր, ձեռագիր:

N 164

ԽՈՇԱՊԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ, ՌՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ԲԱՐՑԱՑԱԿԱՄ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՒ ՁԵՆՔԻ ՊԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

24 հունիսի 1915թ.
Ակրակ գյուղ

Վսեմ Նահանգապետութեան Վանայ

Տիար՛

Ռուս և քիւրդ յարաբերութիւնները ինչպէս կ՛երևի տակաւին վերջնական հանգամանք չ՛ստացան, երէկ յանձնուող քիւրդերը ռուսական զօմարտակի մը հետ, իրենց բնակատեղին գացած են, անցնելով Քոէլ գիւղէն, ուր Պէիրի պէկը շատ խիստ լեզու գործածած է նոյն գիւղի գիւղապետի և ժողովրդի հանդէպ: Ռուս զօմարտակի հրամանատարը նոյնպէս ամենախիստ կերպով պատիրեր է եղբայրաբար ապրելու քիւրդերու հետ, որոնք չուտով պիտի վերահաստատուին իրենց բնիկ գիւղերուն մէջ: Այս առթիւ Ձեր բանակցութիւններու եզրակացութիւնը, անշուշտ, բարի կ՛լինիք փութով տեղեկացնելու:

Յունիս 21-ին Քոէլ գիւղէն անցնող ռուս պահակախումբը, որ կերթար դէպի քիւրդերու բանակավայրը. իր հետ կ՛վերցնէ Քոէլ գիւղ գտնուող երեք քրդուհիներ և երկու երախաներ: Սոյն պահակախումբը Պհանց գիւղէն անցնելու ատեն աւարի կ՛մատնէ նոյն գիւղը հաստատուած քոէլցի Օհաննէսի տունը: Աւարուած գոյքերու ցանկը մեր արձանագրութեան տոմարին մէջ կ՛մնայ, ի հարկին պատրաստ եմ Ձեզի ղրկելու:

Յունիս 22-ին երեկոյ ժամ 8 ½ (ը.ե.) Հիւրթիկ գիւղէն վերադարձող մեր ոստիկաններէն երկուքը խաչ գիւղին քով կպատահին զինուած անծանօթներու, հակառակ ոստիկաններու կողմէ տրուած օրինական հարցումներուն, չարագործներն կ՛պատասխանեն կրակով, ոստիկաններ կ՛պարտաւորուին ինքնապաշտպանութեան դիմելու, մէկ քառորդ ժամ փախապակուած հրացանաձգութիւններէ վերջ չարագործները մութէն օգտուելով, կ՛փախչին: Ոստիկաններ արձակած են 15 պէրտանկի և 5 մօղէլի փամփուշտ:

Գիւղային պահակախմբերը տակաւ կ՛կազմուին անոնց ...[144] հաճեցէք ուղարկել:

Զինւոր-ոստիկաններուն յարմար հրազէն հայթայթել անկարելի է, քանզի եղածները արդէն նախապէս գրաւուած է նախորդ իրաւատու-[թեան] կողմէ, այս մասին անմիջական կարգադրութեամբ:

Շրջանային կնիքը ցարդ չ՛ղրկուեցաւ:

Դժբախտաբար ռուսերէնի թարգմանի պէտքը այնքան պարտաւորիչ կ՛դառնայ, որ խնդրելով միայն չենք կրնար բաւականանալ:

Քիւրդերու վերադարձի և կարգ մը այլ վարչական խնդիրներու մասին աճեմբ տեղեկութիւններ հաղորդելու և հրահանգներ ստանալու պէտքը անհրաժեշտ կ՛գտնեմ, այս մասին Ձեր հրամանը կ՛խնդրուի: Չմոռնամ յիշելու, որ ոստիկաններու ներկայ կազմով և թիվով իսպառ անհնար է սոյն ընդարձակ սահմաններով և խիստ կնճռոտ խնդիրներով լեցուն շրջանակը ոևէ կերպով, պէտք եղածին չափով դեկավարել:

Յարգանօք՝

Արմենակ Տէր-Պօղոսեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թթ. 20-21, բնագիր, ձեռագիր:

N 165
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՐԱՆԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ԱՎԵՐՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔԵՐԸ ՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 հունիսի 1915 թ.
Վան

Այս տարի վառուած և կողոպտուած եկեղեցիներն ու վանքերը զերծ պիտի մնան կառավարական բոլոր տուրքերէն:

Սակայն, կառավարական օրինական ծնակերպութիւնները ըստ կարգին պիտի կատարուին, պաշտօնական արձանագրութիւնները կազմելու համար:

*Վանի նահանգապետ՝ **Արամ***
*Դիւանապետ՝ **Ա. Դարբինեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 14, տպագիր օրինակ:

N 166
ՎԱՆԱՅ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ[145]

25 հունիսի 1915 թ.

Քաղաքապետարանին վերաբերող քրքական օրինագիրքը պարտատր չի գտնուելու համար, այդ մասին իմ ունեցած փորձառութեանս և օրինաց գիտութիւններու ծանօթութեանց հիման վրայ: Քաղաքապետարանի կազմակերպութեան և գործառնութիւններու մասին կազմած ու պատրաստած կանոնագիրն է:

Կազմ

Քաղաքապետարանին վերաբերող գործերը կատարելու համար Վան քաղաքին մէջ քաղաքապետարան մը հաստատուած է նախագահի և հինգ անձերէ բաղկացած վարչութեան մը ղեկավարութեան ներքև:

Քաղաքապետարանի կատարելիք գործառնութիւններն ու պարտականութիւնները շատ են և այլազան:

1.-Առհասարակ կամուրջներու և ճամբաներու շինութիւնն ու հիներու նորոգումը, վերաշինում է:

2.-Հսկել քաղաքին բարեզարդութեան և լուսաւորութեան ու անոնց համար պէտք եղող անհրաժեշտ պէտքերն ու զանոնք փոխադրելու միջոցներն հայթայթել:

3.-Արհեստաւորներուն և խանութպաններու առևտուրին հսկել:

4.-Ծովու, բաղնիքներու, ջրհորներու մաքրութեան և հղեւներու յառաջացման դէմ հոգածութիւն ունենալ:

5.-Հասարակաց պարտէզներ տնկել, աղբատեղներու, պանդուխտոցներու յատուկ բացուած հաստատութիւններու մաքրութեանը հսկել:

6.-Առողջապահութեան վնասակար ուսեկեղէններու, ընդհանրապէս քաղաքի մաքրութիւնն ու առողջապահութիւնը վնասող դէպքերու և հղէի առաջացնող շարժումներու առաջքն առնել:

7.-Առանց արտօնագրի եղած շէնքերու և խանութներու շինութեանց հսկել և զանոնք կարելի եղածին չափ ներկայ սիստեմով ու ճաշակով կառուցանելուն հոգ տանել:

Քաղաքապետարանի կազմակերպութիւն

1.-Քաղաքապետութիւնը, քաղաքապետի նախագահութեան ներքև ունի վարչական մարմին մը, գանձապահ մը, բարուցպար մը, երկրաչափ մը իր օգնականով միասին: Առողջապահական մարմին մը ու առողջապահական քննիչ մը, նաև քաղաքապետական և առողջապահական ոստիկաններ – հինգ գործակատարներ և գանձիչ մը:

2.- Քաղաքապետական և առողջապահական ոստիկաններու գործերը ըստ օրենի ոստիկանութեան միջոցով կը կատարուին և կը գործադրուին:

3.- Քաղաքապետարանի վարչութեան անդամները կատուածատէր ժողովրդին քուէներով կընտրուին:

4.- Քաղաքի մեծութեան համեմատ վարչութեան անդամներու թիւը կրնայ ըլլալ 6-12:

5.-Ներկայ քաղաքապետական վարչութիւնը Վանայ նահանգապետին կողմէ ընդունուած է, որ վեց ամիսէ կը բադկանայ:

6.-Քաղաքապետարանի վարչութեան գործունէութեան պարմանաժամը ըստ օրէնի չորս տարի է:

7.-Վարչութեան անդամներու մէջ քաղաքապետարանին յատուկ գործերը վարելու և կառավարելու համար կարող է ձեռներէց մէկ մը գտնուած պարագային, նահանգապետը իր կողմէ կարող և օրէնսգէտ անձնաւորութիւն մը քաղաքապետ կը կարգէ, ամսաթոշակը քաղաքապետարանի հասոյթներէն որոշելու պայմանով:

8.- Երկու տարին անգամ վարչութեան անդամներուն կէսը կը փոխուի: Քուէարկութեամբ նորը կընտրուէ և այսպէս յաջորդաբար:

9.-Քաղաքապետարանի երկրաչափին ու անասնաբուժը կրնան իրրև խորհրդական մասնակցել վարչական ժողովներուն:

10.-Վարչական ժողովը ընդհանրապէս շաբաթը երկու անգամ գումարուելու է, բայց երբ նախագահը պէտք տեսաւ, կրնայ մարմինը ժողովի հրաւիրել առ հարկին: Նախագահի բացակայութեան ժամանակ մարմնի անդամներէն ամէնէն տարեցը կրնայ վարել ժողովը:

11.- Մարմնի անդամներէն կէսէն մէկը աւելի ներկայ չգտնուած պարագային ժողովը չգումարուէր:

12.- Եթէ երկու անգամուայ հրաւէրով բացակայ անդամները չփութան ներկայ գտնուել, երրորդ անգամ անոնց բացակայութիւնը ի նկատի չառնելով, ժողովը կրնայ գումարուել ներկայ եղած անդամներով և իր օրինական որոշումը տալ:

13.- Որոշումները մեծամասնութեան քուէով կանցնին, բայց եթէ առաջարկի մը մասին ժողովին անդամները երկու հաւասար կողմերու բաժնուին, այն ատեն նախագահը իր ձայն ու քուէն որ կողմին որ տայ, այն կը վճռուի իբրև որոշում: Առանց բանաւոր պատճառի անդամներէն որևէ մէկը եթէ 3 անգամ բացակայէ ժողովներէն, հրաժարուած կը նկատուի ժողովի կոչմանէ: Մեռած ու հրաժարած անդամներու փոխարէն մինչև նոր ընտրութիւնը, նոր անդամներ կարգելու համար քուէարկութեան պարագային Բ. կարգի ընտրուածներէն ամենէն շատ քուէ ստացողները իբրև վարչութեան անդամ կը հրաւիրուին:

Վարչութեան իրաւասութիւն

1.- Քաղաքապետական վարչութիւնը քաղաքին պատկանող գործերը խորհրդակցաբար կը գործադրէ:

2.- Վարչական ժողովը խորհրդակցութեան կառնէ քաղաքապետարանի սովորական և արտաքոյ կարգի հաշուի կշիռը, տարեկան հաշիւը և արձանագրութիւնները: Ընդհ. պիւտճէին մէջ եղած գումարներու ծախսումին համար կարգադրութիւններ կրնէ: Քաղաքապետական կալուածներու վարձու տրուելուն կամ ծախսուելուն կը հսկէ, մէկ տարուայ չինելիք շինութիւնները տեղին վրայ բաժնելու, անջատելու, աճուրդի և պակաս աճուրդի գործողութիւններ կրնէ: Պաշտօնատան անուան համար ըլլալիք պայմանագրութիւնները կը հաստատէ: Նախագահին կողմէ առաջարկուած պաշտօնեաները ընտրելու և հրաժարեցնելու գործողութիւնները կընդունի կամ կը մերժէ: Գանձատան ամսագլխի հաշիւներն ու գործառնութիւններն կը քննէ ու կը գնէ: Երկրաչափական գործառնութիւններուն վրայ կը հսկէ: Տուգանքներու պատիժն հաշտ. ատեանին յանձնել: Քաղաքապետական վարչութիւնը իր բոլոր գործառնութիւններուն պատասխանատու է:

Քաղաքապետին իրաւասութիւնը

1.- Քաղաքապետը վարչական ժողովին խորհրդակցութեանը պատասխանատու է:

2.- Անոր պարտականութիւնն ու իրաւասութիւնն է վարչութեան սովորական և արտաքոյ կարգի ժողովներուն հսկել և վարել զատ, քաղաքապետարանի պաշտօնեաներու և գործակատարներու ընտրութիւնը կատարել, Վարչութեան որոշումներու գործադրութիւնը, պէտք եղած պարա-

գաներուն, հարկ զգացած խնդիրներու կարգադրութիւնը: Նահանգապետին միջոցով նահանգային վարչութեան խորհրդակցութեամբ ընել քաղաքապետարանին վերաբերեալ ազդարարութիւններ և յայտարարութիւններ լրել և գործադրել: Քաղաքապետարանի հաստոյքները գանձել, հսչումիին մէջ եղած գումարները նահանգային վարչութեան որոշման համաձայն ծախսել: Քաղաքապետարանի տարեկան հաշուեցուցակը պատրաստել և գայն Վարչական ժողովին ներկայացնել ու հաստատել վերջ լրագրով նրատարակել:

Քարտուղարի պարտականութիւն

1.- Քաղաքապետարանի գրութիւններու, հաշիւներու, տոմարներու և արձանագրութիւններու պահպանութիւնը քարտուղարին կը պատկանի:

Գանձապահ ու իր պարտականութիւն

Գանձապահ թուչակաւոր և երաշխաւորուած կրլլայ:

1.- Քաղաքապետարանի հաստոյքները կը գանձէ ու կը ծախսէ օրուայ եղած գործողութեան ու պատրաստի եղած դրամին ցուցակը: Նախագահին կը յայտնէ:

2.- Նախագահը մինչև որ չհաստատէ և քարտուղարը չստորագրէ մուրհակը, գանձապահը չի կարող որևէ դրամ տալ կամ ծախսել:

Գանձատան մէջ եղած գործառնութիւններուն նախագահը, քարտուղարը և գանձապահը պատասխանատու են հաւասարապէս:

Մեծ քաղաքներու մէջ քաղաքապետարանի վարչութիւնը կունենայ քօնթրաքթի պաշտօնեայ մը, որ քաղաքապետարանի կողմէ վարձու տալիք և առնելիք քոնթրագթի գործերը կը կատարէ: Առնելիք ծախսերը գանձապահին կը յանձնէ: Իւրաքանչիւր ամսուայ գործառնութեան հաշուեցուցակը նախագահին կը յանձնէ և հաշիւները գանձապահին հաշիւներուն հետ բաղդատելով հաշուեցուցակին տակը գանձապահին ստորագրել կուտայ:

Պզտիկ քաղաքապետարանիս մէջ այս գործերը քարտուղարիս կողմէ կը կատարուին: Այս կերպով ներկայ քաղաքապետարանիս քօնթրագթի գործերը քարտուղարին յանձնուած են:

Քաղաքապետարանի հաստոյքները

Քաղաքապետարանի հաստոյքները կը գոյանան կառավարութեան կողմէ տրուած և որոշուած սովորական և արտաքոյ կարգի տուրքերէ:

1.- Քաղաքապետարանի հաստոյք կը կազմեն քաղաքի բարեգործութեան համար ճամբաներէն առնուած և չահագործներու ծախսուած տեղերուն արժէքը:

2.- Այս բարեգործութենէն օգտուողներին առնուելիք բարեգործութեան տուրքը:

3.- Մաքրութեան և լուսավառութեան տուրքը:

4.- Քաղաքի մէջ ներմուծուող զանազան իրեղէններէն և անասուններէն առնուած տուրքը (տուխսիէ) (մինչև այսօր քաղաքիս մէջ այս կէտը գործադրուած չէ):

5.- Արտօնուած տուգանքները:

6.- Կշիռի, քաշի, քօնթրաքթի, մորթուածքի, անասուններու առուծախսի տուրքը:

7.- Ժողովրդին կողմէ քաղաքապետարանի փարչութեան տրուելիք նուէրներն ու ընծաները:

Պատժական բաժին

1.- Իրենց պարտականութեան մէջ թերացող գործակատարները Ա. անգամ նախազգաւէն կը յանդիմանուին, Բ. Վարչութեան տուած որոշումին համաձայն անոնց ամսականի 1/4 մասը կը զեղջուի, Գ. – 1/2, իսկ Դ. անգամին պաշտօնանկ կըլլան:

Նախազգաւին կողմէ անկարող համարուած գործակատարները ուղղակի անոր տուած վճռով պաշտօնանկ կը լինեն և ատոնց փոխարէն կարողներ կրնտրուին:

Անկարող բարտուղարն ընտրելն ու հրաժարցնելն քաղաքապետին իրատատութիւնը կը կազմեն: Իրենց գործերուն մէջ գեղծում գործող բարտուղարն ու գանձապահը նախազգաւին կողմէ պաշտօնանկ կըլլա և պէտք եղող քննութեան ենթարկուելով, փաստաթղթերով քաղաքապետարանի փարչութեան կը յանձնուի: Քննութիւններէ վերջ վարչութեան կողմանէ պէտք եղող օրինական պատիժը կը տնօրինուի:

Քաղաքապետարանի առնելիքներու գանձման մասին

Քաղաքապետարանի 5000 դուրուչէ վեր եղող առնելիքները ըստ օրինի դատարանին դիմելով կը գանձուին, իսկ 5000 դուրուչէ վար եղողները ուղղակի հաշտարար դատարանի միջոցով: Տուգանքներէ գոյացած առնելիքները գանձելու համար նախ քաղաքապետարանի կողմէ տեղեկագիր մը կուղարկուի պարտատէրին: Եթէ որոշուած պայմանաժամին մէջ այն իր պարտքը չի վճարէ, նոյն ատէն վարչութեան կողմէ տեղեկագիր մը կուղարկուի նահանգապետին, ապա սոյն տեղեկագիրը ընդհ. դատախազին կը ճամբուի: Պարտատէրը բանտարկութեամբ և կամ գործադիր պաշտօնեայի միջոցաւ ստիկանութեան յանձնուելով պարտքը կը գանձուի:

Քաղաքապետարանի ութամսեայ եկամտից պիւտճէն պատրաստուելով ի քննութիւն պիւտճէի յանձնախումբին յանձնուած է:

Ոստիկանութեան պարտականութիւնն քաղաքապետարանի հանդէպ

1.- Նոր չէնք շինողներէն քաղաքապետարանի արտօնագիր պահանջել:

2.- Մսագործներուն արգելել մսերը դուրս ծախել և բաց օդին դուրս չի ձգել:

3.- Նպարավաճառ, սրճավաճառ և այս տեսակ գործերով պարապողները իրենց ծախած ապրանքը պէտք է դնեն գոցուած տեղ:

4.- Փչելու մօտ եղող տուները նկատելուն պէս իմացնել քաղաքապետութեան:

5.- Փոապանները իրենց եփած հացերը լաւ եփելու են և քաղաքապետութեան որոշած գնով ծախելու են:

6.- Փոխանցիկ հիւանդութեամբ վարակուած հիւանդ մը տեսնելու պէս հիւանդի տեղը և անունը իմացնելու են քաղաքապետութեան:

7.- Յատուկ որոշուած տեղերէն զատ ուրիշ տեղեր աչխար և արճառ մորթելու և կառք թողուլ արգելուած ըլլալով, մորթողին և կառք թողնողին անունը շուտով ներկայացնել քաղաքապետին:

8.- Փողոցներու մաքրութեան հսկել:

9.- Կառքերու մաքրութեան հսկել և քաղաքապետարանի օրինաց հակառակ շարժող և վկայագիր չունեցող կառապանները քաղաքապետութեան ներկայացնել:

10.-Քաղաքապետարանի գործակատարներուն ոստիկանութեան դիմելու պարագային ոստիկանութեան կողմէ իրենց օգնել:

Պետրոս Մօզեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 59, թթ. 1-4 շրջ., պատճեն, ձեռագիր:

N 167
ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՁՈՐԱՋՈԿԱՏԻ ՊԱՐԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25 հունիսի 1915 թ.

Համաձայն Տամաճեան գնդի աւագ բժիշկի N 148 յայտարարութեան, որով քաղաքում դիզինտերիա և տիֆ հիւանդութիւններ են հաստատւում, գարնիզօնի մեծաւորը հրամայել է ինձ խնդրել ձեզ համաճարակի առաջն առնելու համար հրահանգել ոստիկանութեան հետևեալը.

1. Արգելել զանազան տեսակի օշարակների ծախուելը փողոցներում:

2. Պարտաւորեցնել ոստիկանութեան՝ հսկել թէյարանների, սրճարանների և փողոցներում թէյ ծախողների մաքրութեան վրայ:

***Մակագրութիւն.** N 174 շրջաբերականով հաղորդուեցաւ շրջանապետներուն և մունետիկով ծանուցուեցաւ ժողովրդին: 26. VI*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թ. 17, թարգմանութիւն, ձեռագիր:

N 168
ՄԻ ԽՈՒՄՔ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՉՆԱԿՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՁԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 2403

25 հունիսի 1915 թ.

Վսեմ նահանգապետ Վանի.

Նկատելով, որ առանձին տարազ կամ որևէ նշան չունիներ իրրև կառավարական կոչնակներ, շատ անգամ արգելքներու կը հանդիպիմք մեր գործառութեան շրջանին, չը ճանչցուելով մեզ հետ գործ ունեցող անհատներէ: Ներկայ գրութեամբ կը խնդրենք ինչպէս ուրիշ կառավարական պաշտօնեաներուն, մեզ ևս որոշ տարազ և յատկանշան մը տրուելու մասին ընէք:

Յարգանօք՝

Արտաշէս Վարդանեան
Աղավարդ Պուլուզեան
Սուրէն Մխչէվէրչեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 112, բնագիր, ձեռագիր:

N 169
ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

25 հունիսի 1915 թ.

Վանի նահանգապետ վսեմ պ. Արամ

Միրախորեան Տիգրան իր փափաքին համաձայն մեզ օգնական լինելու հօժար է, իմ կողմանէ ալ հարմար կ՚դատէմ, իսկ հրաման ձերն է:

Քանիմ ոստիկաններից ցանկ ղրկած եմ, խնդրեմ, որ շուտով վավերացնէք, ոստիկանի մեծ կարիք ունեմք, ռուսներ օրս Քոէլ գնացին Կրզրլ Մէյտան բնակող քրդերու ճանբաներ իմաստասիրելու համար (եթէ թօփ բերելու լինին, կարող են մինչ նպատակի տեղ անարգելք հասցնելու):

Մարտիրոսը իր խմբով մինչ հիմա դեռ Քոէլի սահմաներ է, խնդրում է, որ Խօշաբի գաւառապետ շուտով ուղարկէք, որպէս զի կարողանա վերադառնալ:

Հինգ հատ քէյէֆօնի գործիք ձեռք բերած ենք, որ օրս Տիգրանի հետ ղրկեցինք:

Ոստանի սահմանից առանց մեր գիտութեան ղրկին սահմանակից գիւղերէն փայտ, հացահատիկ և այլ խիստ կերպով կ՚պահանջեն: Շատախի համար մեր հաւաքած հացեր դեռ չեն տարած:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, բ. 37, բնագիր, ձեռագիր:

N 170
Կ. ՄԵՅԼԱՆԱՋՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՇԱՑՎԱԾ ԻՐ ԱՅԳՈՒ ԵՎ ԱՐՏԻ ՎՆԱՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2422 — *25 հունիսի 1915 թ.*

Վսեմ Նահանգապետ Վանի և շրջանի

Տնտեսական մարմնոյ կողմէ մեր վարձած երկու կտոր այգիներ,[146] երկու ցորենի և մէկ խոտի արտեր ռուս բանակի կողմէ ամբողջապէս փճացած է, այնպէս որ հակառակ մեր կողմէ Տնտեսական մարմնոյ վճարած 40 օսմ. լիրայ գումարին, կոպեկիմ արդիւնք յիշեալ տեղերէն ստանալ անկարելի է: Այս մասին բողոքած էինք քննիչ յանձնախմբին, բայց 20 օր առաջ տրուած այդ բողոքագիրը արդիւնք մը չունեցաւ օրս: Արդ կը խնդրեմ Ձեր վսեմութիւնէն, որ բարեհաճէք հրամայել ուր որ պէտք է, խնդիրը լուծել և վնասները դարմանել:

Ձեր խոնարհ՝
Կարապետ Մեյխանաջեան

Մակագրութիւն. Տնտեսական մարմնին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, բ. 69, բնագիր, ձեռագիր:

N 171
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՔԱՂԱՔԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ՝ ԹՈՒՐՔ ԵՎ ՔՈՒՐԴ ԳԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՋԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1264 — *25 հունիսի 1915 թ.*
Վան

Գեներալ Նիկոլաևի սոյն յունիսի 22-ի N 34 հրամանի § 2-ը թարգմանաբար ուղարկելով Ձեզ՝ առաջադրում է Ձեզ հրահանգել ըստ այնմ.

«Գերի թրքուհիներն ու բրդուհիները, որոնք գտնւում էին ամերիկական և շվէյցարական միսիաներում, սոյն յունիսի 23-ից կը թողնուին իրենց տները:

Վան քաղաքի շրջանակապետների վրայ եմ դնում պատասխանատուութիւնը այս կանանց ապահովութեան և իրենց գոյքը, հողերն ու ցանքերը ազատ տիրապետելու համար»:[147]

Սորան կցում է նաև յիշեալ գերիների և նրանց գոյքի ցուցակը:

Վանի նահանգապետ՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թ. 163, բնագիր, ձեռագիր:

N 172
ՆՈՐԴՈՒԶԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ ՊԵՏՐՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿ-ՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄԻՐԵՆՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺՈՎ ՕԳՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

25 հունիսի 1915 թ.
գ.Խրապաղար

Պ. նահանգապետ.

Քառասունի չափ զինուած և քսանի չափ անզէն ոյժերով Նօրտուզի մէջ լրտեսութիւն մը կատարելու նպատակաւ երեք օրից առաջ, երբ Նօրտուզի նախկին կառաւարչական կենտրոն եղող Շամանս գիւղը հասանք (ը. ե. ժամի 7-ին) անմիջապէս որսորդական ձիերով պէտք եղած զէներ և դիրքեր բռնել տալով քանիներս գիւղ մտած միջոցին կռուի բռնուեցանք անձանօթ քսանի չափ քիւրտերու հետ, որոց գալը լրտեսութիւն և կամ գիւղի մէջ գտնուած հացի հորեր բանալ և վերցնելու նպատակը լինել գուշակեցինք: Մի ժամէն աւելի տևող երկուստէք բացուած հրացանաձգութիւնէն վերջ անոնց դիրքերը ձեռ բերինք և զիրենք ալ հալածեցինք մինչև Շամանսէն վեր գտնուող Ակրակ Մզրէն: Բայց մեր հետապնդումին չդիմանալով, ճգեցին փախան:

Սակայն նրանց հիւսիս արևելակողմ գտնուող Պաշէթայ Մահմտանէն օգնութիւն գալ գուշակելով, չորս դիրքերով բռնելով շրջապատեցինք մինչ արշալոյսին: Առտուան խուզարկութեան միջոցին տեսնուեցան երկու սպանեալներ, որոնցմէ մէկը ծանօթ շիտանցի ըլլալով վրան գտնուեցաւ քիչիկ չափի[148] 50(հիսունի) չափ հրացանի փամփուշտներ և երկու եզներ, մեզանից ոչ մի վնաս: Միւս սպանեալը չկակցի (օյմալի հագուստով) մրն էր:

Առտուան (ը. ե. ժամի 9-ին) խիստ զգուշութեամբ, երբ ուզեցինք դէպ Սբունիս գիւղ յառաջանալ, տակաւին հազիւ հազ Լաջան լերան ստորոտ հասած հանդիպեցինք հինգ (5) լրտես քիւրտերու, որք քանի մը հրացաններ բանալով դէպ լեռ խոյս տուին: Իրենց հետապնդելով, միայն յաջողեցանք գրաւել ինը եզներ և մէկ կով:

Շարունակելով մեր ճամբան Բարէռաշ լեռան ստորոտ, երբ դարձեալ հանդիպեցինք (30) երեսունի չափ հեծեալ անձանօթ քիւրտերու, որք անմիջապէս լեռ բարձրանալով սկսեցին խիստ տեղատարափ մը մեր վրայ: Իսկ մենք պատասխանելով յալածեցինք իրենց մինչև Կալամրուկ լեռ: բայց նրանց մի ժամ հեռու գտնուող Քրէ Գաւրուշկան լեռ գտնուող

զօմաներից[149] հասնող օգնութիւններից իրենց ձեռք գտնուող քիչուկ չափ ու մօսին հրացաններու, և իրենց դիրքերու առաւելութեան շնորհիւ քաջալերուած սկսեցին ուժգին հարձակողականի մեզ վրայ. և չնայած մեր դիրքերու անհարմարութեան, մեր կորովի և ուժգին հակահարուածին շնորհիւ յաջողեցինք երեք անգամով իրենց դիրքերէն հանելով, հալածել մինչ հեռուն, լեռնակատար ձգելով դիակ մը ու վիրաւորեալ մը (Ա.-ը ձեռքին կարմիր դրօշ մը կը կրէր), իսկ Բ.-ը չհետացի մ'ներ Աիմուտ անունով:

Երբ ձգուած դրօշակը վերցնելու նպատակաւ քիչ մը յառաջացանք, կրկին 250-ի չափ ստացած անմիջական օգնութիւնից քաջալերուած. նոր և աւելի քան ուժգին հարձակողականի մը սկսեցին, որը տևեց վեց ժամ անընդհատ, մեր ոյժերի սակաւութիւնը հրացաններնուս տկարոյժ լինելը (մեծամասամբ բերտան) և դիրքերնուս անպաստութիւնը նկատի ունենալով, յարմար դատեցինք յետ նահանջել մեզմէ նախապէս պատրաստուած բաւական լաւ դիրք մը (Բարէոաշ բարձր լեռ):

Նահանջ կատարեցինք յաջող ու անվնաս, կռուի ընթացքին ունեցանք մէկ կորուստ, ոստիկան մը՝ որ ասորի Րաշօյի որդի Գաւրէոնը, որն մեզմէ անտեղեակ հեռացած էր՝ հաւանաբար քաղանի նպատակով: Մենք գիշերով ապահովաբար Կասրիկ գիւղ ապաստանեցինք: Պատերազմող քիւրտերու մէջ, [մեր] կարծիքով, կատրջահաւար և քանիմ գրաւցիներ, քանիներ օյմալի հագուստով և մեծամասամբ համիտիէ զօրքի մնացորդ և չքտանցիներ նկատուեցան, որոց զօմաներ նոյն շրջակայ լեռներ կ'գտնուին եղեր, և արդէն Սքոնիս ղրկուած մեր լրտեսներից ևս իմացանք, որ նոյն տեղ գտնուող ջրաղացին մէջն ալ բաւական քիւրտեր գտնուած են, որոց ընկերներուն ըլլալուն տարակոյս չկար: Պատրոնի վնասը վերջէն կը տեղեկացնենք:

Քաղաքէն նահանջի միջոցին կողմերս փախուստ տուող ու ապաստանող ահագին քիւրք ու քիւրտ ցեղերի մեծամասնութեան կենտրոնն առ այժմ Ֆառաշին և այդ գծերով բռնած և շրջապատած են ամբողջ Նօրտուզի արևելեան-հարաւային կողմեր մինչև Բարէսպի խաւշտանցոց զօմաներ, որ կը տևէ մինչև Շատախի և Բարաարի սահման: Ըստ մեր մօտաւոր տեղեկութեան, յիշելոց քիւրք քսան հազարի (20000) կը հասնի:

Ցեղերէն միայն ալանցիները չեն մասնակցեր ըմբոստութիւններուն, որովհետև վէճ ունեն գրաւցիներուն հետ հայ գերիներու համար, որպէս թէ նախապէս այս առթիւ կարևոր սպանութիւն մըն ալ տեղի ունեցած են, որոյ ստուգութիւնը դեռ կասկածելի է:

Նօրտուզի ժողովուրդը ներկայ դրութեամբ չի կարելի իրենց տեղեր վերադարձնել:

Եթէ օրինաւոր ոյժ մը ղրկէք, կը յուսամք, որ մինչև Մասիրոյ երթան և առանց նպատակի չը վերադառնան: Այն ատեն միայն կարող է Շատախի, Նօրտուզի և Խօշապի խեղճ ժողովուրդը քիչ մը հանգստանալ:

Իսկ եթէ այս կերպ ծգտումին թշնամիներ անպատիժ, իրենց չար նպատակները օրէ օր աւելի պիտի կրնան իրականացնել:

Սա կեղեքուած անտէր ու անլեզու ժողովրդեան համար մինչև իսկ կեանքս զոհ բերելու պատրաստ, կը յուսամ, որ խնդիրքս չպիտի մերժէք, մեզ ղրկել օրինաւոր ոյժ մը գէթ քնդանօթով ու մէքրայուզներով[150], ընդմիշտ արժանաւոր պատիժ մը տալով թշնամոյն՝ փրկել ժողովուրդային վախը և կառաւարութեանդ վարկն ու պատիժը:

Յոյսը տնօրէնութիւն կմնամ սպասու.

Նօրտուզի գաւառապէտ **Էֆենդի Պետրոս**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 6-7 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 173

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԴԵՐԻ՝ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

N 1317 *25 հունիսի 1915 թ.*

Ձերդ Գերազանցութիւն.

Ստացել եմ Ձեր վերջին՝ յունիս 23 թւակիր հրամանը N 34, որով յայտնում էք ինձ, թէ Վանի շրջանի քիւրդ ազգաբնակութիւնը IV կորպուսի հրամանատար գեն. Օգանովսկու կարգադրութեամբ վերադառնալու և հաստատելու է իր բնավայրերում: Այս առիթով ես ինձ թոյլ եմ տալիս մէջ բերելու մի քանի նկատումներ, պարզելու համար այն կացութիւնը, որ կստեղծուի այդ կարգադրութեան իրագործումի հետևանքով ռուս զօրքի համար և այն վտանգը, որ կառաջանայ հայ խաղաղ ազգաբնակութեան համար:

1) Վերադարձող ցեղերն են հայդարանցիք, քակուրցիք, մլանցիք, շամսրկցիք և գերաւցիք: Անցեալ աշնանը այդ ցեղերը կոտորեցին և կողոպտեցին Աղբակի, Սարայի, Արճակի և Սալմաստի հայ գիւղացիներին: Ռուս զօրքի նահանջից յետոյ քիւրդերն էին, որ կոտորեցին Բաշկալայի ողջ հայութիւնը, աւարելով և հրդեհելով նրանց տները: Բազ, Փիս, Ալաս, Ալալեան, Սորան, Ռաստալան և ուրիշ հայ գիւղերի արուներին հաւաքեցին Առակ գիւղը և ապա դաշտ հանելով կոտորեցին աւելի քան 500 մարդ, այնուհետև առևանգեցին և բռնաբարեցին կանանց ու երեխաներին, շատերին բռնի իսլամացնելով: Կարելի էր աւելի շատ դէպքեր յիշատակել, բայց բաւական համարեցէք այն սոսկալի ջարդն ու կողոպուտը, որի զարհուրելի հետևանքներին ականատես եղան Ձեր քաջարի զօրքերն ու հայ կամաւորները իրենց յաղթական արշաւի ժամանակ Իգդիրից Վան և հետոները: Ձեզ անյայտ չէ անշուշտ, որ այդ ցեղերը անցեալ աշնան կռւում էին քիւրք զօրքի հետ ռուս զօրքերի դէմ պարսկական գծի վրայ և

պարտելով՝ նրանց գլխատրներից ոմանք հպատակութիւն յայտնեցին ռուսներին: Բայց ռուս զօրքի նահանջն սկսելուն պէս՝ նրանք նորից միացան թիւրք զօրքին և կրնկակոխ հետևեցին ռուսներին: Այնուհետև նրանք մասնակից եղան այս գարնան բոլոր կռիւներին Դիլմանի շրջանում[31], բայց պարտելով՝ նահանջեցին հարաւ: Շեզ քաջ յայտնի է և այն յարձակումը, որ նրանք արին ձեր զօրամասի պարէնակիր սայլերի վրայ Աբաղայի շրջանում: Ներկայումս նեղուած մթերքի պակասութիւնից քրդերը նորից հպատակութիւն են յայտնում ռուս իշխանութեան՝ անկասկած յարմար առթիւ նորից աջակցելու համար թիւրք զէնքի յաջողութեան:

Նկատելով քիւրդերի վերաբերումը դէպի ռուս զօրքն ու խաղաղ հայ ազգաբնակութիւնը, նկատելով նաև, որ 17-60 տարեկան քիւրդերը զէնքի տակ լինելով կամ համիտիէ հեծելազօր են կամ միլիցիա - նրանք պէտք է համարեն կամ գերիներ և ուրեմն պէտք է վարուել նրանց հետ ինչպէս գերիների կամ պէտք է համարել պարզ ոճրագործներ և տալ նրանց արժանի պատիժ:

2) Ինչպէս ցոյց տւին աշնան դէպքերը՝ յիշեալ քիւրդ ցեղերը անվստահելի և վտանգաւոր տարր են ռուս զօրքի ռազմական յաջողութեան տեսակէտից: Վերահաստատելով քիւրդ տարրը ռուս բանակի թիկունքում՝ միանգամայն վտանգւում են Ջուլֆա-Վան և Իգդիր-Վան գծերը, անյաջողութեան դէպքում Վանի շրջանում գործող ռուս զօրքը կանջատւի իր յենարանից: Չի կարելի վստահել քիւրդ տարրի զինաթափութեան. նախ նրանք յանձնում են չնչին քանակութեամբ զէնքեր և մեծ մասամբ հին կամ փչացած, երկրորդ՝ վերադառնում են գլխատրապէս ծերունիները, կանայք և երեխաները, իսկ զէնքի ընդունակները շարունակում են մնալ լեռներում զինւած և սպառնալից: Վերադարձողները միայն դիւրութիւն կտան լեռներն ապաստանածներին արագ շարժելու և կը հոգան նրանց ապրուստը:

3) Հաստատելով ռուս բանակի թիկունքում՝ քիւրդերը Նորդուզի, Գեաւառի և Ջուլամերիկի գծերով ամեն դիւրութիւն կստանան կապ պահելու թիւրք բանակի հետ և լրտեսելով Ռուսաց ուժերի քանակն ու շարժումները՝ տեղեկութիւն կը տան մեր թշնամուն: Այդ լրտեսութեան դէմն առնելու ոչ մի տեխնիկական հնարաւորութիւն չկայ, քանի որ լեռնային բոլոր գծերը քրդերի ձեռքին են և անհնարին է բաւարար չափով պահակներ դնել ռուս տիրապետութեան սահմաններում, որոնք անորոշ են և բաց:

4) Քիւրդերի վերադարձից յետոյ կը խանգարւի Վանի շրջանի խաղաղութիւնը: Վերադարձողներն այն ցեղերն են, որ կոտորել ու կողոպտել են իրենց շրջանի հայերին: Մօտ 28.000 զոհերի մերձաւորները չէն կարող անտարբեր աչքով դիտել իրենց թշնամիների վերադարձը և անխուսափելի են վրիժառութեան դէպքերը, որոնք կարող են լայն ծաւալ ստանալ և աղմկել ռուս զօրքի թիկունքը: Նկատի առէք Ձերդ գերազանցութիւն, որ

դեռ քիւրդերի մօտ են գտնւում հայերից յափշտակած գոյքերը և առևանգած հարսներն ու աղջիկները, որոնց կոտորում են անճնատուր լինելուց առաջ, որ ազատւեն իրենց ոճիրների կենդանի վկաներից:

5) Թոյլ տալով քիւրդերին անպատիժ վերահաստատւել իրենց բնավայրերում՝ դրւանով այն համոզումն է արմատանում նրանց մէջ, որ կարելի է անարգել կոտորել ու կողոպտել հայերին, առանց վախենալու պատասխանատուութիւնից ու պատժից: Ձեր կարգադրութիւնը անուղղակի քաջալերանք կը դառնայ նաև այն քիւրդերի համար, որոնք ապրում են դեռ չգրաւած գաւառներում և ներկայումս կռւում են ռուս զօրքի դէմ: Նրանք կը շարունակեն անխնայ կոտորել ու կողոպտել հայերին, վստահ՝ որ պարտութեան դէպքում ոչ միայն պատիժ չեն կրելու իրենց ոճիրների համար, այլ և գտնելու են հովանաւորութիւն ռուս զինւորական իշխանութեան կողմից:

6) Ձեր կարգադրութիւնը յուսահատական տպաւորութիւն կանի այն հայերի վրա, որոնք այսօր կռւում են քիւրք զօրքի և քիւրդ ցեղերի դէմ դեռ չգրաւած շրջաններում՝ աղմկելով մեր բշնամու քիկռւնքը: Այն գիտակցութիւնը, որ խաղաղ հայ ազգաբնակութեան կոտորողներն ու կողոպտիչները պէտք է մնան անպատիժ՝ մեծապէս քուլացնելու է նրանց դիմադրական կորովը: Սոսկալի տպաւորութիւն պէտք է անի այդ կարգադրութիւնը և քիւրքահպատակ հայ ժողովրդի վրայ, որ միակ անկեղծ ցանկացողն է ռուս զէնքի յաջողութեան Թիւրքիայում և ուժը ներածին չափ աջակցում է այդ յաջողութեան: Նա պէտք է նկատէ, որ ռուս զինւորական իշխանութիւնը նոյն աչքով է նայում թէ բարեկամ հային և թէ թշնամի քիւրդին և հովանաւորում է բարեկամ տարրի կողոպտիչներին ու կոտորողներին: Իմքներդ կարող էք դատել, թէ որպիսի յուսախաբութիւն պիտի առաջ գայ հայ ժողովրդի մէջ դէպի ռուս պետութիւնը, որին նա համարել է և համարում է իր ազատարարն ու պաշտպանը քիւրդի և քիւրքի բռնութեան դէմ:

7) Վերջապէս Ձեր կարգադրութիւնը հակասում է. այն հանդիսատր յայտարարութեան, որ այս գարնան արին դաշնակից պետութիւնները՝ Ռուսաստան, Ֆրանսա և Անգլիա, յայտնելով ի լուր քաղաքակիրթ աշխարհի, որ հայերի ջարդն ու կողոպուտը կազմակերպող և իրագործող անհատները անձամբ պատասխանատու են իրենց արարքների համար:

Ձեր բարեացակամ ուշադրութեանը յանձնելով վերը յիշած նկատումները՝ պարտք եմ համարում յայտնելու, որ ես դժւարանում եմ պատասխանատուութիւն յանձն առնել Վանի շրջանի անվտրութեան համար և խնդրում եմ 1) չիրագործել ձեր հրամանը. 2) արդէն անճնատուր եղած քիւրդերից պատժել այն անհատներին, որոնք կողոպտել և կոտորել են Վանի շրջանի հայերին և 3) մի ազդարարութեամբ դիմել դեռ չգրաւած վայրերի մահմեդական ազգաբնակութեանը յայտնելով, որ հայերին կոտորողներն ու կողոպտողները կենթարկւեն ամենախիստ պատիժների:

Այս ամենը յայտնելով Ձերդ գերազանցութեան, ես կատարած եմ համարում իմ պարտականութիւնը հանդէպ ռուս քաջարի բանակի, որի յաջողութիւնից և ապահովութիւնից կախուած է հզօր Ռուսաստանի փառքը և նրան ապաւինած հայութեան կեանքի, գոյքի և պատի ապահովութիւնը:

Սոյն մտքով մի գրութիւն ուղղել եմ և IV կորպուսի հրամանատար գեն. Օգանովսկուն, որի մասին պարտք եմ ...[152]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թթ. 218-220 շրջ., բնագիր, ձեռագիր:

N 174

*ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ, 4-ՐԴ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԵՎ ԲԱՅԱԶԵՏՅԱՆ ՋՈԿՍՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻՆ՝ ԳԵՐԻ ՀԱՆՁՆՎԱԾ ՔՐԴԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌՈՒՍ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԱԼ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 1317 *26 հունիսի 1915 թ.*

В приказе начальника Баязетского отряда от 22 с. июня N 34, предписывается Ванскому губернатору оповестить армянское население, что командиром корпуса разрешено сдавшимся курдам возвратится в свои селения в районах Бегрю-Калы, Арчака, Сарая, Башкалы и Нордуза, причем настоятельно требуется от армянского населения не нападать и не грабить курдские селения; наблюдение за точным исполнением означенных требований приказом возлагается на строгую ответственность участковых начальников, а всякое проявление кровавой распри армянского и курдского сдавшегося населения - будет оно на экономической или какой другой почве, возлагается на ответственность Ванского губернатора.

Позволю я себе представить Вашему превосходительству некоторые мои соображения, для выяснения тех последствий, которые будут вызваны для русского войска приведением в исполнение означенного приказа, а равно той опасности, которая создается для мирного армянского населения.

1. Возвращающиеся курды принадлежат к племенам айдаранцев, такурцев, мланцев. шамскцев и геравцев. Прошлой осенью эти племена вырезали и оградили армянские селения районов Бегри-Калы, Арчака, Сарая, Башкалы и Салмаста. После отхода русских, именно эти курды вырезали все мужское население армянского Башкалы, начиная с 10-ти летнего возраста, разграбили и предали огню все их жилища. Они же собрали в сел. Арак мужское население армянских селений Панз, Пис, Алас, Алалян, Соран, Русулан и других и, выгнав их в поле, вырезали более чем 500 человек, после чего насильно увели и износиловали женщин и

детей, многих насильно обратили в ислам. Начиная с декабря месяца прошлого года они разгромили и предали огню все жилища и церкви во всех армянских селениях Адильджевазам, Арчешам, Беркри, Сарая, Башкалы, Хошапа, Айоц-цора, Гяваша, Каркара и Карчкана; сожгли следующие знаменитые монастыри: Тер-Ускан Ворди (Св. Степаноса), Св. Вар-феломея вблизи Башкалы, Сорп и Урганц в Карчкане, Св. Григория, Кармравор, Вараг... Очевидцами следов и последствий произведенных курдами ужасных избиений, разгромов и безпримерного грабежа были, отчасти победоносные русские войска и армянские дружины на пути следования их в город Ван и далее... Вышеперечисленные племена минувшей осенью воевали совместно с турецкими войсками против русского войска на персидской границе и, потерпев поражение, в лице некоторых из своих главарей изъявили свою покорность русской власти. Но лишь начался отход русских войск, так они тотчас же соединились с турецким войском и преследовали русских. Затем они же, нынешнею весною участвовали во всех боях в районе Дильмана, но после поражения отступили на юг. Общеизвестно также и их нападение на обоз Баязетского отряда в районе Агаби и на казаков, которые шли на встречу Абдул-Ризаку.

В настоящее время, оказавшись в крайне затруднительном положении вследствие недостатка в средствах продовольствия, курды снова изъявляют преданность русской власти, несомненно имея в виду при первом же удобном случае содействовать успеху турецкого оружия.

Принимая во внимание вполне определенное отношение курдов к русскому войску и действиям последнего, а также к мирному армянскому населению, к тому же имея в виду, что все курды в возрасте от 17-60 лет числятся в вооруженных отрядах либо Гамидиэ, либо милиции, полагаю, что они должны рассматриваться как военнопленные, и стало быть, с ними должно поступать как с таковыми, либо же в них следует видеть обыкновенных преступников (убийц, разбойников и грабителей) и, стало быть, они должны в этом случае понести достойное наказание.

2. События минувшей осени доказывали, что упомянутые курдские племена являются ненадежным элементом и представляют опасность с точки зрения военных успехов русских войск. Водворением курдского элемента в тылу русского войска подвергаются серьезной опасности коммуникационные линии Ван-Джульфа и Ван-Игдырь; в случае неудачи, русское войско будет отрезано от своей базы. Нет никакого основания рассчитывать на разоружение курдов. Во-первых: они сдают лишь ничтожную часть имеющегося оружия, при том почти исключительно лишь оружие старое и пришедшее в негодность. Во-вторых: в самые селения возвращаются лишь старики, старухи, женщины и дети, масса же боеспособных курдов продолжает оставаться в горах вооруженной и всегда угрожающей. Водворяющиеся в селениях курды лишь облегчают пребывающим в горах более быстрое передвижение и продовольствование. Свидетельством неискренности, изъявленной курдами преданности русской власти, может служить и то, что многие из боеспособных курдов

пользуются разрешением вернуться в свои селения лишь для того, чтобы немедленно переехать в пределы Персии.

3. Утвердившись в тылу русских войск, курды получают полную возможность поддерживать связь с турецким войском и доставлять ему сведения о численности и движениях русских войск. Не представляется никакой возможности воспрепятствовать этому шпионажу курдов, так как все горные тропы в руках их и немыслимо выставить в достаточном количестве дозоров в пределах районов, занятых русскими войсками и остающихся неопределенными и открытыми.

4. С возвращением курдов нарушается тишина и спокойствие в Ванском округе. Ведь возвращающиеся курды именно из тех племен, которыми учинены избиения и грабежи армян этих районов. Возможно ли ожидать, что близкие родственники около 28.000 жертв этих избиений и грабежей армян будут безразлично и бесстрастно наблюдать возвращение своих лютых насильников.

Случаи мести неизбежны, причем они могут принять во внимание и то, что до сих пор остается в руках курдов не только награбленное ими у армян имущество, но даже насильно уведенные женщины и девицы, причем были случаи избиения последних со стороны сдающихся русской власти курдов с явной целью уничножения живых доказательств и свидетельниц их преступлений.

5. Разрешение курдам безнаказанно вернуться в свои селения, вселяет и укрепляет в них то убеждение, что можно безвозбранно избивать и грабить армян, не опасаясь никакой ответственности и кары. Указанный выше приказ Баязетскому отряду послужит косвенным поощрением также и для тех курдов, которые находятся в еще незанятых областях и в настоящее время воюют против русских войск. Они будут продолжать непощадно избивать и грабить армян в полной уверенности, что в случае поражения своего они не только не понесут никакого наказания за совершенные ими злодяния, но даже встретят покровительство со стороны русской власти.

6. Упомянутый приказ вызовет чувство безнадежного отчаянья в тех армянах, которые в настоящее время, в незанятых еще районах выдерживают борьбу с турецким войском и курдскими племенами, лишая нашего врага обеспеченного тыла. Мысль, что убийцы и грабители мирного армянского населения должны оставаться безнаказнными, значительно ослабит стойкость и упорство их сопротивления. Ощеломляющее будет впечатление данного распоряжиния на турецкоподданных армян, являющиеся единственными в Турции искренними сторонниками успехов русского оружия и по мере сил содействующих делу этих успехов. Армяне не могут не заметить, что русская военная власть одинакого относится как к своему союзнику — армянскому народу, так и к своему врагу — курду, и покровительствует тем, которые избивали и резали сторонников России. Не трудно представить себе, какое тяжелое разочарование должно возбудить упомянутое распоряжение в армянском населении по

отношению к той России, которую оно почитало и почитает за свою освободительницу и защитницу против ига турецкого и курдского.

7. Наконец, упомянутый приказ не согласуется с той торжественной декларацией, в которой минувшею весной Императорское правительство, совместно с союзными державами (Англией и Францией), перед всем цивилизованным миром объявляло всех устроителей резни и грабежей в Армении лично ответственными за содеянные преступления.

Представляя благосклонному вниманию Вашего высокопревосходительства вышеизложенные соображения, почитаю долгом своим заявить, что в виду описанного положения вещей, я затруднился бы брать на себя ответственность за спокойствие и порядок в Ванском округе и, с своей стороны, позволяю себе ходатайствовать о том, чтобы: 1) Приказ г-на начальника Баязетского отряда от 22 июня 1915г. N 34 не был проводим в исполнение; 2) из уже сдавшихся курдов были привлечены к ответственности и наказаны участвовавшие в избиении и грабеже армян; 3) было издано предупреждение на имя мусульман незанятых еще областей, с объявлением, что участники избиений и грабежей армян должны будут понести строжайшие кары.

В искоренейшем изложении перед Вашим высопревосходительством вышеприведенных соображений я вижу исполнения с моей стороны долга относительно доблестного русского войска, с успехами которого связаны слава и осуществление государственных интересов Великой России и обеспеченность жизни, чести, достояния и преуспения вверившего ей свои судьбы армянского народа.

С письмами аналогичного содержания я имею честь обратиться также (смотр. в начале сего письма), (а в письме к начальнику Баязетского отряда значится еще следующее:)

В заключении выражаю свое глубокое сожаление, что мне не было дано возможности изложить все вышеизложенное Вашему превосходительству до опубликования Вами означенного приказа, так как я не был предупрежден о предполагавшемся издании столь важного распоряжения по столь крупному вопросу.

Подлинный подписал:
Ванский губернатор ***Арам***
С подлинным верно:[153]

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.77, թթ.1-3, պատճեն, մերենագիր:

N 175
ՎԱՆԻ ԸՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉԻ Կ. ԱՅՆՃԵԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ Ա.ՄՄՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 հունիսի 1915 թ.

Պարոն նահանգապետ,

Յունիս 26 թուակիր և 1294 թուահամար պաշտօնագրով մը, պաշտօնավարութեանս օրէն սկսեալ մինչև ներկայիս տեղի ունեցած գործառնութեանս գրատոր զեկոյցը մատուցանել յանձնարարուած էր, որ կը փութամ պատասխանել:

Հանդէպ պաշտօնատուներու: Ընդհ. քննիչի իրաւասութեան սահմանը ճշտող օսմ. օրէնսգիրքի քարգմանութիւնը, առաջին առթիւ յանձնարարուած ըլլալով, ընդ այնմ բնագրէն քարգմանելէ և կարևոր յաւելուածներ աւելացնելէ յետոյ 1915 մայիս 12 և յունիս 2 ամսաթիւ պաշտօնագրերով ներկայացուցած էի առ ի վաւերացում:

Եւ որովհետև օսմ. օրէնքներու նոյնութեամբ գործադրութիւնը առայժմ յանձնարարուած էր պաշտօնատուներուն, 21 մայիս թուակիր պաշտօնագրերով յանձնարարեցի վարչութեան բոլոր պաշտօնատուներու, որպէսզի իրենց գործառնութիւններու տեղեկագրերն ամսէ ամիս ղրկուեն մեզ, և յետ քննութեան, ամփոփ տեղեկագիրը, հանդերձ մեր դիտողութիւններով և բելաղրութիւններով, նահանգապետութեանդ ուշադրութեանը պիտի ներկայացնէի, սակայն ցարդ և ոչ մէկ պաշտօնատուն պատասխանեց, և այս առթիւ՝ 22 մայիս թուականով մատուցած պաշտօնագիրն արժանի է լուրջ նկատառութեան:

Պաշտօնավարութեանս օրէն սկսեալ մինչև ներկայիս դատ[ական], տընտես[ական] և ոստիկանական գործառնութիւններու հանդէպ եղած զանազան բողոքներու առթիւ պատկանեալ պաշտօնատուներէն բացատրութիւններ ընդունելով, կարգադրուած և վերջացած են ոմանք: Սոյն ժամանակամիջոցին ընդհանրապէս տնտեսական մարմնոյ գործառնութիւններու երբեմն օգտակար բելաղրութիւններ ընելէ զատ, օսմ. օրէնքի համաձայն անշարժ կալուածներու յատուկ և տասանորդի վերաբերեալ վարձագիր, պայմանագիր, ծանուցագիր, երաշխատրագիր, մուրհակով և ալն խմբագրելով յանձնուած է նոյն մարմնոյ:

Նահանգապետութենէդ 461 թուահամարաւ հաղորդուած պաշտօնագրով մը, դատական ընթացիկ գործերու շուտափոյթ լուծման համար ոստիկանութեան մէջ վարչային դատարան մը կազմուած ըլլալը ծանուցանելով, մեր կողմէ բողոքագրերը քննելէ ետք, պատկանեալ դատարանին յանձնել յանձնարարուած էր ըստ որոշման: Սոյն պաշտօնագրի համաձայն ատեն մը այդ պարտականութիւնն ալ կատարեցի ձեռնհասօրէն և գրէթէ մասամբ նոյնը կը շարունակուի այժմ դիւանին մէջ:

Պ. նահանգապետ, նշանակեալ գործառնութիւններէն աւելին և օգտակարը կարելի էր ընել, եթէ պաշտօնատուները հաճէին իրենց գործառնութեան տեղեկագրերը ղրկէին մեզ:

Ինչպէս յիշեցի, մինչև որ պաշտօնատուներն իրաւասութեան սահմանները ճշտող օրինագիծերը չներկայացուին և կամ պաշտօնիս վերաբերեալ օրինագիծը վաւերացնելէ վերջ չհաղորդուի պաշտօնատուներու, կարելի չպիտի ըլլայ մեր գործառնութիւնները փափաքելի եղանակով մը

օգտակար ըլլալ, հետևաբար կը խնդրուի, որ օրինագիծերի վաւերացումը փութացնել:

Խորին յարգանօք՝ ընդհ. քննիչ **Կ. Այեճեան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 71 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 176

Ա. ՄՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՋԻՆՎԱԾ ՔՐԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՍՈՐԻՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N1308 *27 հունիսի 1915թ.*

Վան

Довожу до сведения Вашего превосходительства содержание полученного мною донесения начальника Хошапского района.

20-го сего июня четверо айсоров, жителей сел. Авшасорик, шли из селения Каср в направлении сел. Крел мимо сел. Шусламерик с целью отыскать свои семейства, насильно уведенные в плен курдами. На расстоянии около часа пути от Касра они встретили десять вооруженных незнакомых людей, одетых по курдски. На вопрос "Кто вы?" курды открыли огонь и ранили из них одного - Михаила в рот. Безоружные айсоры бежали.

Курды же, увидев, что их жертвы спешат в селение Каср, поднялись в горы и исчезли.

Раненный вместе с товарищем был препровожден в Ван на излечение.

Жители селения Каср, донося о своем опасном положении, просят оказать им помощь. Начальник района, узнав о случившемся, отправил несколько стражников вместе с десятником на место нападения для расследования.

Ванский губернатор ***Арам***
Секретарь ***Айрапетов***

Ֆ.242, ց.1, գ.14, թ.156-157, բողոն, ձեռագիր:

N 177

ՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՈՉԱԿՆԵՐԻ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՂԻ ԱՍԲԱՐՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԽՆԴՐՄԱՆՔՈՎ

26 հունիսի 1915 թ.

Վան

Վսեմ նահանգապետ

Ժողովրդեան ծախելու համար, մեզ յանձնուած 7-րդ ամբարի աղը վաղը կը լմննայ: Դիմող ժողովուրդը ձեռնունայն չը թողլու համար, ռուս քաղաքապահի կնքոյ տակ եղած երեք ամբարները ամբողջութեամբ բարեհաճէք մեզ յանձնել և ռուս բոզակների հսկողութենէն ալ վերցնել տալ,

ըստ որում տնօրէնութիւնս ունի արդէն պահապաններ, որ գիշեր ցերեկ կը հսկեն աղի ամբարներին:

Ռուսական և հայ-կամատրական բանակների տարեկան աղի սպառումը, մի կողմանէ ապահովելու պայմանաւ, եթէ կարելի չը պիտի ըլլայ ամբողջ ամբարները մեզ յանձնել և տրուած կնիքները վերցնել տալով, քոզակների հսկողութենէն վերցնել, մեր հրկիզուած պաշտօնատան դիմացի ամբարը արդէն կողոպտուած և մէջը մասնատր աղ մնացած ըլլալով, նոյն ամբարէն աղ ծախելու և յիշեալ պաշտօնատան հողակոյտների տակը մնացած աղերն ալ, ինչպէս որ քանիցս գրած և տեղեկագրած ենք, կշռելով նոյն ամբարը փոխադրելու համար, պէտք եղած անմիջական հրամանն մեզ խրկել բարեհաճէք:

Տնօրէն հանրային պ. վ. Վանայ՝

Խաչիկ Ս. Արծրունի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 22, թ. 21, բնագիր, ձեռագիր:

N 178
ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՉԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԹՐՔՈՒՀԻՆԵՐԻՆ ԵՎ ՔՐԴՈՒՀԻՆԵՐԻՆ ՄԱՐԴԱՄԻՐԱՔԱՐ ՎԵՐԱԲԵՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 177 *27 հունիսի 1915 թ.*

Վանի հայ ժողովրդեան

Ձեզ յայտնի է արդէն, որ Նորին գերազանցութիւն գեներալ-մայոր Նիկոլաև քանի մը օրէ ի վեր ազատ թողած է գերմանական և ամերիկեան հիւպատոսական գործուեիները և քրդուեիները, որոնք ազատ են հիմա իրենց տուները մեկնելու և իրենց կայքերը, հողերը և ցանքերը ազատօրէն տիրապետելու պատասխանատուութեամբ տեղական ոստիկանութեան:

Մարդկայնական ամէնատարրական զգացում կը թելադրէ ամէն մի հայու վերին աստիճանի քաղաքավարութեամբ և փափկանկատութեամբ վերաբերուել յիշեալ գերիներու հետ, ըստ կարելոյն անոնց վիշտերը և հոգալով անոնց կարիքները:

Ուստի պարտք կը դնեմ բոլոր քաղաքացիներուս վրայ (որոց վեհանձնութեան և քաղաքացիական գիտակցութեան մասին մեծ յոյս ունիմ) ցուցանել ծայրայեղ մարդասիրական զգացում և հայ անուան վայել անյիշաչար և վեհանձն վերաբերմունք:

Կը փութամ յայտնել նաև, որ այս յայտարարութիւն անսաստողները կենթարկուին ամէնախիստ պատժի և պատասխանատուութեան:

Դաւիթ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 75, պատճեն, ձեռագիր:

N 179
ՏԿՍԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Գ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՏԿՍԻ ՍՈՎԻ ՄԱՏՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2812 *27 հունիսի 1915 թ.*
Մոկս

Վսեմաշուք պ. Արամ. Նահանգապետ Վան Նահանգին
ի Վան

Գ -րդ նամակ կը լինի, որ տեղիս գաղթականների ու նեղ կացութեան մասին կը գրեմ Ձեզ՝ սակայն պատասխան դեռ չեմ ստացել, և որովհետև խնդիրներ քանի երթան, բարդ կերպարանք կ՚ստանան և նեղութիւնք կ՚շատնան, ատոր համար ընկեր Աւագին տեղդ խրկեցինք, որ հետևեալ խնդիրների մասին բաւարարութիւն ստանայ ու վերադառնայ:

Ամառն է, քանի երթայ տաքութիւն կը շատնայ և երթալով հիւանդութիւն ալ խիստ ծաւալ կստանայ, ժողովուրդ բոլորովին անօթի մնացեր են: Տեղս հազիւ կը լիներ այնքան ցորեն, որ բաւականանար ժողովրդին մինչև նոր կալսեն: Սակայն կամաւորների և գաղթականների տեղս լեցուելով, ծեծով և բռնութիւնով հազիւ կարողացանք 2-300 չափ ցորեն հաւաքել և կերցնել կամաւորներին ու գաղթականներին: Այժմ բոլորովին հաց սպառեր է, թէ տեղաց ժողովուրդ և կամավորներ բոլորովին սոված մնացեր են, միայն պ. Դրօն մի քանի չափ ցորեն Գաւաշից խրկեց կամաւորների համար, բայց ժողովուրդ բոլորովին ցորեն չունի, արդէն տեղիս գիւղերէն 3/4 մասը վառուեր են և ժողովուրդ իրար վրայ են հաւաքուեր, այնպէս բոլորովին նեղ դրութեան մէջ ենք:

Պ. Դրօն իր կամաւորներից մի մաս ետ տարաւ Գաւաշ, էն տեղից Կարճկան կռիվի է գացեր: Միայն տեղս մնացեր են մի մաս կամաւորներ, որոնք ալ եթէ քաշուին տեղս բոլորովին անպաշտպան կը մնայ, ժողովրդական զէնքեր, եթէ մի քանի յուճաներ[154], պերտաններ[155], մարթէնիներ[156] և մօտէլներ[157] ունենք, այն ալ բոլորովին պատրոններ սպառեր են և երբէք այժ չունինք, ուստի կը խնդրուի, որ եթէ կարելի է ձերդ մասնաւոր ուշադրութիւն դարձնէք էս երկրի վրայ, որովհետև էս տեղ կը լինի ռուստածական սահմանը: Շիտակ է, Շատախն ալ վտանգաւոր է, սակայն Շատախին միայն ձախ թևի վրայ մի կէտից վտանգ կայ, մնացեալ կողմերից ապահովուած են, իսկ մեր երկրին չորս բոլորտիքից վտանգ կսպառնայ մեզ, ցարդ, եթէ կարողացեր ենք նստել, տեղս գտնուող կամաւորների շնորհիւն է, եթէ նրանք գաղթուեն և դուք մեզ չօգնեցիք, մեր դրութիւնը խիստ վատ կը լինի, ուստի կը խնդրուի, որ այդ մասին ալ մեզ օգնելու շնորհ ընէք, որովհետև եթէ տեղս վտանգուեց, կը վտանգուի և Գաւաշ և Ոստան:

Եթէ էս տեղ լաւ չապահովցնենք, պիտի ստիպուինք գաղթել:

Կիմանամ, որ ազգին որպէս նպաստ տեղ եկած են դեղեր, բժիշկներ, հագուստեղէններ ու դրամներ և ուտելիք, կը խնդրուի այդ նպաստեղէններէն մեր գաւառին ալ բաժին հանելու շնորհ ընէք, որովհետև ինչպէս ասիկա, հիւանդութիւն շատացեր է, դեղեր չունինք: Ուտելիք սպառեր է, ցորեն չունինք, օգնութեան և այժի կարօտ ենք, այժ և ռազմամթերք չունինք, ժողովուրդ բոլորովին մերկ է, հագուստեղէն չունինք, տեղական և կառավարական շատ մը ծախսեր ունիմք, դրամ չունինք: Կը խնդրուի, որ շնորհ ընէք այս կէտեր Ձերդ մասնաւոր ուշադրութեան առնէք և շուտափոյթ ու մասնաւոր կարգադրութիւն մը անելու շնորհք ընէք:

*Յարգանօք՝ **Գրիգոր***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 18, թթ. 31-32, բնագիր, ձեռագիր:

N 180
ՇԱՀԲԱՂԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ա.ԱՂԱՎՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՍՏԱՑԱԾ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԵՎ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

27 հունիսի 1915 թ.
Ավանց

Վսեմ Նահանգապետ Վանի

Երեկ ռուս մեքենիստների կողմէ շոգեմակոյկից վռնդուեցան Աւանցի 4 նաւաստիները, որոնք երկար ժամանակ կը ծառայէին իւր մէջ և իւրեանց արեանց գնով խլած էին շոգեմակոյկը թիւրք կառավարութենէ: Ասկէ ի գատ ռուս նորեկ մեքենիստները անտեղեակ լինելով ծովին կամ բոլոր նաւահանգիստների, չը պիտի կարողանան գործածել զայն:

Արճակի շրջանի գիւղերից և Արճէշից ստացած ենք ընդամեն 383 չափ ցորեան և 3 չափ գարի: Որմէ 111 չափ 1 կօտ ցորեան՝ և 2 չափ 1 կօտ գարի կեռնծովցի Փաշայեան Ղազարի նաւին հետ, ասկէ 3 օր առաջ ուղարկած ենք Աղթամար, իսկ 271 չափ 2 կօտ ցորեան և 3 կօտ գարի տեղս կը մնայ, որ օդի[158] աննպաստ լինելու պատճառաւ չենք կարողացած ճամբել դեռ: Այս երեկոյ կարելի է, որ ճամբենք: Ասկէ ի գատ ստացած ենք 21 սնդուկ բժշկական և զանազան տեսակի ապրանքներ, եղբայրական միութենէ ուղարկուած, որ Ռստան պիտի ուղարկենք:

Ռուս աֆիցերի մը կողմէ, մեր վրայ ի գործ դրած ստիպման ներքև, գիւղիս ճամբայի վրայ, մեր շրջանի 6-7 գիւղերից աշխատեցուցած ենք, ընդ ամէն 193 գործաւոր: Ատոնց որպէս թէ վարձք պիտի տրուին: Ի՞նչ կարգադրութիւն պիտի լինի այս մասին:

Ծովի ալեկոծ եղած միջոցին, երբ անկարելի կը լինի նաւ մը իւր նաւահանգստէն արձակել, ռուս աֆիցերները բռնի և ծեծելու ներքև բեռցնել կուտան նաւերը: Երեկ քիչ էր մնացած, որ նաւ մը կոտրէր բեռցուած

վիճակով: Այս մասին, երբ անգամ մը վտանգ հանդիպելու լինի, մենք պատասխանատու չենք:

Գաւառապետ՝ ***Աբէղ***

Յ. Գ. Արճակի շրջանից 8-10 բեռ ևս ևոր բերվեցաւ, որ դեռ չենք չափած:

Նոյնը

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 27, բնագիր, ձեռագիր:

N 181

ԱՐՃԵՃԻ ՓՈԽԱՌԱՋՆՈՐԴ ՄԱԹԵՎՈՍ ՎԱՐԴ. ԱՃԵՄՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ՀԱՐՋԱԿՈՒՄՆԵՐԻՑ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

29 հունիսի 1915 թ.

Արճէշ

Վսեմ նահանգապետ Վանայ

Ի Վան

Գաւառիս հիւսիսային լեռնաշղթաներում վրայ բնակող Զիլանճորի ըսուած քիւրդ աշիրապետութիւններն՝ ըստ տեղեկատու անճանց՝ թուվ 2-3000 զինեալ քիւրդեր դեռ անընկճելի վիճակի մէջ կապրին, որք զէն ի ձեռին միշտ պատրաստ են հայկական որևէ փոքրիկ յարձակումներուն դիմադրելու և կամ թէ հայկական անմարդաբնակ գիւղերը աւշաւելու խորուած հացահատիկներու խարերը քակելու, տանելու: Գիւղաքաղաքէս 2-3 ժամ հեռավորութեան վրայ յաճախ տեսնուած են և մինչ իսկ այսօր այնպէս կը տեղեկանամ գիւղացիներէն, որ համարձակած կըլլան կողոպտել պետական ապրանք փոխադրող սայլակները, տեղէս 15 վերստ հեռաւորութեան վրայ:

Գաւառիս թէ բախտավորութիւնը և թէ դժբախտութիւնը կախուած է Զիլանճորի աշիրապետութիւնների ընկճուած և անընկճուած վիճակէն: Եթէ հնար ըլլայ զանոնք ընկճել՝ ժողովուրդը թէ անասնեղէն կունենայ և թէ ապահովուած վիճակի մէջ իրենց գիւղերը կը քաշուին՝ ևորէն կսկսեն իրենց նախկին խաղաղ աշխատանքին՝ մանաւանդ ներկայ տարուանս հացահատիկներու առատութիւնը՝ ըստ գիւղացոց տեղեկութեանց՝ կը գերազանցէ նախորդ տարիներուն:

Գիւղացի ժողովրդեան փափագը, ցանկութիւնը ներկայ խճողուած, խռնուած կեանքէն ազատուելն, իրենց գիւղերն տեղաւորուելն է և եթէ գաւառիս ապահովութիւնը անմիջապէս վերահաստատելու ջանքերն ջլատուին կամ հետաձգուին, նախ՝ գիւղի մաքուր օդի և ջրի վարժուող ժողովուրդն տեղւոյս մէջ ճարակող հիւանդութեանց զոհ կերթայ և երկրորդ հացահատիկներն ալ, որ սկսեր են հասունանալ, կը փճանան անտարակոյս: Այն ատեն սովը ոչ միայն Արճէշի որը և այլի ժողովրդոյն կըս-

պառնայ՝ ապա ամբողջ վանեցոց, քանի որ աշխատաւոր ձեռքերը՝ անհամեմատ բաղդատութեամբ պակսած եմ: Թէ արդեօք ի՞նչ միջոցներու դիմելու է, որ գէթ ոչ ամբողջովին, գոնէ 3/4 մասը քաղուի, վերցուի:

Վերջապէս Արճեշ գաւառի վրայ ուշադրութիւնը դարձնել ամենակենսական խնդիր մըն է:

Գաւառիս վիճակագրութիւնը դեռ ամբողջովին պատրաստած չեմ:

Գաւառիս ներկայ դրութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ կրնայ հաղորդել պ. Յակոբ Տէր Յակոբեան, այս առթիւ մի քանի տեղեկութիւններ հաղորդել ևս աւելորդ կը համարեմ:

Ա. Առայժմ գաւառիս ժողովրդեան վիճակը ապահովցնել Զիլանածորի աշիրաթապետութիւնների ընկճմամբ:

Բ. Ժողովրդեան նպաստել թէ դրամական, լծկան, կթան անասուններու տեսակէտով:

Գ. Ուրիշ գաւառներէն աշխատող ձեռքերը մտցնել Արճէշին մէջ գէթ ներկայ տարուան հացահատիկներու 3/4 մասը վերցնելու և կամնելու նպատակաւ:

Դ. Համաճարակի ընթացքը արգելելու համար բժիշկ և դարման, թէպէտ տիկին Տէր-Գրիգորեան իւրովսան[159] կաշխատի օգտակար ըլլալ հիւանդներուն, դժբախտաբար իր պայմաններն ալ աննպաստ են:

Ողջունի սիրոյ՝

*Փոխ. առաջնորդ Արճէշի՝ **Մատթէոս վարդ. Աճեմեան***

Մակագրութիւն.** Կարգադրուած է: **Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 12, թթ. 19-20, բնագիր, ձեռագիր:

N 182

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՈՒ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՅԼԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 12 *30 հունիսի 1915 թ.*

Վան

Տէր Նահանգապետ

Երկրագործական գործիքներու փոխադրութեան սայլեր գտնելու համար՝ ոստիկանութեան մի քանի անգամ հրաման ըրած էիք: Մենք ևս քանիցս դիմեցինք՝ Ձեր հրամանը ի գործ դնելու համար, բայց մինչև ցարդ այս օր վաղ ըսելով ձգձգուեցաւ: Հաւաքուած գործիքն քաղաքամէջ այլ և այլ տեղեր տրուած և հսկողութեան տակ առնուած չը լինելուն պատճառաւ, փչանալու ենթակայ կը լինին, ուստի օր առաջ սայլեր մեզ տրամադրելի ընելու մասին, դարձեալ ոստիկանութեան հրաման ընելնիդ կը խնդրուի:

*Երկրագործական տեսուչ՝ **Խաչիկ Չենթրեան***

***Մակագրութիւն.** Յիշեալ գործիքներ փոխադրելու համար այսօր հինգ սայլեր երկրագործական տեսչին տրամադրելի եղած է:*

Ի գիտութիւն կը յայտնենք նահանգապետին:

*Օգնական ոստիկանապետի՝ **Ղևոնդ***

1915 յուլիս 2

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 76, բնագիր, ձեռագիր:

N 183

ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՐԱՐՈՒԱԾ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

N 2556 *30 հունիսի 1915 թ.*

Վանի Վսեմ նահանգապետ

Արարուց ս. եկեղեցւոյ սեպհական մէկ կտոր 60 ածուէ բաղկացեալ մի առուտնոց կը գտնուի եկեղեցւոյ բոլորտիքը, որու սահմաններն են. հիւսիսէն Շիլնամեանի այգին, հարաւէն գետ, արևելքէն Պուլօեանի և Տեհրցկի այգիներ, արևմուտքէն թիւրքի արտը:

Յիշեալ եկեղեցապատկան արտի առաջին քաղն, ըստ տեղեկութեան քաղ խորհուրդին, ռուս գազախներ կերցուցած են, իսկ երկրորդ քաղն պէտք լինելով եկեղեցիին, քաղ. խորհուրդը դիմած է մեզ, խնդրելով, որ մի կտոր յանձնարարագիր շնորհուի, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանել:

Ըստ խնդրանոց քաղ. խորհրդոյ տեղեկագրելով զայս նահանգապետութեանդ, կը խնդրեմ նորա պաշտպանութեան համար ընել հարկ եղած կարգադրութիւնը:

Աղօթարար Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝

Եզնիկ վարդապետ

***Մակագրութիւն 1.** Թող դիմէ գեներալին:*

***Մակագրութիւն 2.** Տրուեց վկայական:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 12, բնագիր, ձեռագիր:

N 184

ՄԻ ԽՈՒՄԲ ՎԱՆԵՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ ԲԱՑՎԱԾ ՓՈՂՈՑԸ ՉՓԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 2553 *30 հունիսի 1915 թ.*

Վսեմ նահանգապետ Վանայ,

Տէր,

Ամէն աշխարհի քաղաքապետարան քաղաքի բարեզարդութեան և յառաջադիմութեան համար ինքնաբերաբար կ'աշխատէ և հանրութեան օգտին համար ալ անհատի կալուածները կը գրաւէ: Օսմ. կառավարութեան շրջանին և ներկայ քաղաքապետի ժամանակաւ Թէրլէմէզեանի Ա փողոցի պատը քակուելով՝ ընդհանուրի օգտակարութեան համար փողոցի վերածուեցաւ՝ արժէքը քաղաքապետարանի միջոցաւ գանձուելու և տիրոջ յանձնուելու պայմանաւ: Սակայն օրս դժբախտաբար օսմ. կառավարութեան շրջանին և յիշեալի հրամանաւ և գիտակցութեան տակ տրուած որոշումը չեղեալ կը համարուի և Թէրլէմէզեան ունենալով իր կողմէն միջամտող պարագայ՝ հանրութեան օգտին համար հատուած յիշեալ փողոցը կը գոցուի:

Վսեմ. Տէր, օսմ. կառավարութեան շրջանին և քաղաքապետիս հրամանով և գիտակցութեան տակ տրուած որոշումը յարգելու և ըստ նախկին որոշման փողոցի արժէքը քաղեցիներէն գանձելու և ուրիշներու միջնորդութիւնն ու դիմումը չեղեալ համարելով հանրութեան օգտին համար բացուած յիշեալ փողոցի պատը չը քանդուելու համար անմիջապէս քաղաքապետարանին հրամայէք, նկատի առնելով պատի համար որևէ որոշում չըլլալը:

Խորին հարգանօք՝ **Գէորգ Ճնտեչեան**
Վարդան Կարապետեան
Խաչատուր Թորոսեան

Մակագրութիւն 1. *Քաղաքապետարանից բացատրութիւն կպահանջուի:*

Մակագրութիւն 2. *Սոյն փողոցի մասին քաղաքապետարանի կողմէ եղած և Ձեր Վսեմութեան կողմէ հաստատուած որոշումը հետևեալն է.*

«N 40

Նախկին քաղաքապետարանի վարչութեան ժողովի համաձայն հին նահանգային վարչութեան կողմէ Արըղլի փողոցէն դէպի Խաչ փողոց բանալու համար Տէր-Պօղոսեան և Թէրլէմէզեաններու պարտեզ և տուներէն կտրուելիք տեղերուն գինն իննսուն ոսկի սոյն փողոցէն օգտուող անձերէն գանձելու և տանտերուն վճարելու համար որոշուած և այս որոշումը ժամանակին փողոցին մէջ գտնուող տնեցիներուն հաղորդուած էր: Օրինական գործողութիւնն վերջի դէպքի առթիւ յետաձգուած ըլլալով, այս անգամ Տէր-Պօղոսեան պ. Համազասպին դիմումին վրայ կրկին անգամ նախկին որոշումը պէտք եղածներուն հաղորդելով և ոչ մէկ անձ յիշուած գումարն չըվճարելով մէկտեղ, նոր բացուելիք փողոցին պէտք չունենալին պատասխանած լինելնին գործակատարի կողմէ եղած պաշտօնական գործողութիւնէն

հասկցած է: Սոյն կտրելիք տուներուն գինն իննսուն ոսկին վճարել քաղաքապետարանին ներկայ պիտճէն անբաւական ըլլալուն և սոյն փողոցին բացուելն անհրաժեշտ չըլլալուն ու բացուած տեղն աղտեղութիւններու բոյն լինելուն համար, պահանջել հարկին նկատողութիւն առնուելու խորհրդով բացուած տեղին փակուելն, յարմար տեսնելով: Ի գիտութիւն նահանգապետին տեղեկագրել որոշումէ: 10 յունիս 1915 թ., Արամ, քաղաքապետ՝ պ. Մօզեան, անդամներ՝ Վահան Մարութեան, Մկրտիչ Հիւսեան»:

Սոյն որոշումը քաղաքապետարանի վարչութեան կողմէ վերջնական ըլլալով տրուած է, եթէ քաղեցիներ սոյն փողոցին բացուելն իրենց համար անհրաժեշտ կը համարեն, նախկին որոշումներն չեղեալ նկատելով, կրկին օրինական գործողութիւն ընելու համար կրնան քաղաքապետարանը պաշտօնապէս դիմում կատարել, Տէր նահանգապետ:

***Մակագրութիւն 3.** Նահանգապետին սոյն հրամանին հանձնել աղերսագրի տիրոջ, պէտք եղածն հաղորդելով, կրկին վերադարձնելու համար ոստիկանապետութիւն կը յանձնուի: 2/7/1915*

***Մակագրութիւն 4.** Յայտնեցէք քաղեցիներին, որ նախկին պայմանը չեղեալ է նկատուած, եթէ պէտք ունին այդ փողոցին, թող դիմեն քաղաքապետարան, արդի պայմաններով նոր կոմիսիոն մը կազմուի և նոր գնահատուին:*

***Մակագրութիւն 5.** Քաղաքապետութեան որոշումը և նահանգապետութեան հրամանը հաղորդուեցաւ խնդրատու պ.պ. Գևորգ Շիտիչեանի և ընկերներուն ի գիտութիւն, դիւանապետութիւն կը վերադարձնեմ: Օգնական ատենապետ **Ղևոնդ**, 1915 յուլիս 2*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 52, թ. 2 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 185
ԵՂԻՇԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2505 *30 հունիսի 1915 թ.*

Վսեմ կառավարչապետ.

Ստորագրեալս՝ 20 անձէ բաղկացեալ ընտանիք մը, վերջին կռիւներուն թալանուեցայ և զրկուեցայ լծկաններէն: Մեր պ. գաւառապետ երբ որ հաւաքուած կենդանիներ կը բաժնէր, ինծ այդ կենդանիներէն մաս չհանելէն զատ կորած անձնական գոմէշս, մանդացի Գաբրիէլի քով տեսայ և այս մասին գաւառապետին յայտնեցի, պատասխանեց, թէ. «մեր բաշխած կենդանիներ իրենց տէրերէն չենք կարող առնել», հետևաբար գոմէշս իբր բաշխուած կենդանի ետ չի բերուեր:

Այժմ կը խնդրեմ հրահանգէք պ. Շիրինին, որ կամ իմ գոմէշ առնէ հետ տայ ինձ, կամ թէ 20 անձէ բաղկացեալ ընտանիքս պահելու և եղած ցան-

քեր վերցնելու միջոց տալ, այլապէս չեմ կարող ապրել, նոյնիսկ միջոց չունեմ հոս մնացած մի քանի հիւանդներս գիւղ փոխադրելու:

Յարգանօք Խառակոնիս գիւղի բնակիչներէն **Եղիշէ Պետրոսեան**

Մակագրութիւն. Արճակի գաւառապետութեան
Սոյն խնդրատուի գումէշի մասին գրաւոր զեկոյց մը ղրկէք մեզ, այլապէս չի կարելի ամէն մի խնդրատուին չլսել և ըսել բաշխում եղած և վերջացած է: Գաւառ. Դիւան՝ **Արմ. Փափազեան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 18, թ. 34, բնագիր, ձեռագիր:

N 186

ԴԱՏԱԽԱԶ Հ. ԳԱԼԻԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 71 — 30 յունիսի 1915թ.

Վանի նահանգային վարչութեան

Պ. Նախանգապետ!

Համաձայն Ձեր 22 Յունիս թուակիր և N 1082 պաշտօնագրին՝ կը փութամ ձեզ ներկայացնել Ընդհ. դատախազութեան և հարցաքննիչ դատաւորի պաշտօնին վերաբերեալ օրինական յօդուածներու ամփոփ թարգմանութիւնները, առաջին 8 էջէ, իսկ երկրորդը 17 էջէ բաղկացեալ.[160] Ընդհ. դատախազը իրաւասութիւններ ունի նաև բանտի վրայ, որու մասի եղած օրինագիրքը չկարողացայ ձեռք բերել ցարդ, կը յուսամ դիւրութիւն պիտի ունենամ մօտիկ ժամանակի մէջ հայթայթել և այդ պակասն ալ լրացնել:

Հրանտ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 59, թթ. 6, պատճէն, ձեռագիր:

N 187

ՇԱՀԲԱՂԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՎԱՆՑ ԳՅՈՒՂԻ ՆԱՎԱՎԱՐՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂ ԲԺԻՇԿ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 64 — 30 յունիսի 1915 թ.

Ավանց

Վսեմ Նախանգապետ

Գիւղիս 160-է աւելի նաւավարները, Դաղուանի մէջ սպաննուելով, այլևս նաւավարները պակաս կը գտնուին տեղս մնացած նաւերը աշխատեցնել տալու: Իսկ տեղս եղած նաւատէրները, նաւը երթալու և աշխատելու համար կը դժկամվին և բացարձակապէս կը փախչին: Նաւապետ-

ները և նաւաստիները կ՚առարկեն, թէ մէկ տարիէն ի վեր, ծրիապէս ծառայելով և տեղէ մը ապրուստի ոնէ միջոց չունենալու համար, ընտանիքնիս այսօր տոված մնացած է: Ուստի կառավարութիւնը պէտք է, որ անպայման մեզ գոհացում տայ:

Գիտէք, որ նաւավարներ և նաւաստիները հողագործ լինելով, իրենց ապրուստի միակ միջոցը նաւավարութիւնն է: Այսօր, երբ գործավոր մը 20-30 դուրուշի կը ծառայէ, սոքա ստիպուած են թէ անցեալոցն և թէ ներկայիս մէջ ծրիապէս ծառայել իրենց հացով ու ջրով: Ի սէր Աստծոյ, մեզ՝ և թէ սոքա, պատասխանատուութենէ ազատելու համար բարի եղէք փութով, գեներալի և կառավարութեան կարևոր կարգադրութեամբ մը գոհացում տալ իրենց: Այլապէս պիտի խայտառակուենք:

Տիֆը ճարակելով նաև գիւղիս մէջ, աւելի շատ մանուկներէ մեծ զոհեր կը լինեն: Այսօր Աւանայ մէջ 100 է աւելի (մեծ ու փոքր) հիւանդներ կան սոյն հիւանդութեամբ վարակուած: Բժիշկ բերուելու հնարաւորութիւն չկայ: Բարի եղէք բժիշկ մը յատկացնել գիւղիս, որոշուած սակով մը:

Գաւառ. դիւանէս պաշտօնական նամակատ մը կ՚ազդարարուի մեզ. որպէսզի ռուսների համար ճմեռուայ խոտի պատրաստութիւն տեսնենք շրջանի մէջ: Այս մասին մեր կարծիքն էր, որպէսզի գիւղը գնող միլթէզիմներին[161] յանձնարարուէր այդ գործը, գիւղերի խոտի տասնորդները յատկացնելու: Որովհետև մենք այդ մասին մեծ դժուարութեան պիտի հանդիպենք:

Շրջանդանց գիւղին մէջ, պ. Թէոսի[162] կողմէ 10-12 չափանց ցանուած արտի մը հունցքը որոշած է վերցնել Իշխանի[163] տան համար: Մինչդեռ տեղւոյն մէջ գտնուած ոզմեցիները այս մասին արգելք հանդիսացած են: Ասոր կարգադրութիւնը Ձեզ կը թողումք:

Յարգանօք՝

Գաւառապետ ***Արել***

Յ.Գ. Գաւառապետութեան համար անհրաժեշտ պետք է ռուսերէն գիտցող գրագիր մը և պաշտօնական կնիք մը, խնդրեմ կարգադրել:

Նոյն

Մակագրութիւն. *Կարդացի: Արամ*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 54, թ. 2-3, բնագիր, ձեռագիր:

N 188

ԱՐՁԵՇԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ Ն.ԺԱՄԱԳՈՐԾՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՂԱԾ ՀԱՅԱՀԱՏԻԿԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հունիս 1915 թ.

Յարգելի կառավարիչ պ. Արամ Մանուկեան

Բաւական երկար ժամանակ է, որ Ձեզ գրած չունեմ պատճառ բաւստ և նաւ չը լինելն է: Քանի անգամ թէլէֆօնով գրեցի Բերկրի, որ այնտեղէն ձեզ հաղորդէին, բայց պատասխան չ'ստացայ, այսօր հազիւ պատեհութիւն գտայ և եթէ նաւ չը լինէր, ձիաւորներով պիտի ղրկէի:

Ռուսական զօրք այստեղ եկաւ, հրամանատար շատ ալ լաւ է և մեր հարաբերութիւն իրար հետ լաւ կերթայ, բայց յանկարծ Բերկրիէն գեներալ Նիկոլայէւի մարդ (բրիպարշիկ[164]) մը եկաւ և սկսեց ժողովրդի թէ սեփական և թէ համայնական ցորեններ կնքել, նոյնիսկ իմ կնիք գանձեց ու իր կնիք զարկաւ: Անմիջապէս կոմանտորին բողոքեցի, նա ըսաւ թէ բրիպաշիկ մեծ տեղէ է եկած, ես չեմ խառնուիր, ես արդէն ըսած էի և ձեզ ալ կըսեմ, որ գեներալին յայտնէք. այսպէս - երբ կառաւարութիւն այստեղի մարդիկ բոլոր (2660 հոգի) կոտորեր են, մնացած 12.000 կին և երեխաներ անօթի մեռցնելու համար անոնց տներէն մէկիկ մէկիկ խուզարկելով եղած ցորենները կը քաշէ ու կամբարէ, երբ ես եկայ կնքեցի, որպէսզի կանոնաւոր կերպով կրնանք հոգանք թշուառներուն: Այս մարդ կնքեց նաև անհատներու միակ ապաւէն եղող ցորենները: Այս մասին չափազանց դիմումներ կատարեցի կոմանտէրին, թէև կոմանտէր բարի ցանկութիւններ ցոյց կուտայ, բայց ինձ գոնէ այնպէս ցոյց կուտայ, որ չի կրնայ խառնուիլ: Բացի ասկէ այս բրիպարշիկ Բերկրիի զին. նաչալնիկէն հրաման մը բերեց, որ առանց խտրութեան ամէն տուն խուզարկեն, նոյնիսկ իմ բնակարանս ինձ անգամ սալդատներով խուզարկեցին, թէև ես ոչ գարի ունէի, ոչ ալ ցորէն և ամէն տեղ ընտանիքներու ապաւէն եղող կէս–մէկ չափ ցորէն առանց հաշուի տարաւ: Ես, ի հարկէ, չափազանց վշտացայ և վշտերս յայտնեցի իրենց: Վերջացնեմ ըսելով, որ այս մարդ չի թողնի, որ մենք ցորէն ամբարենք, շրջակայ գիւղեր (թիւրք գիւղեր) ահագին ցորէն կայ, չենք կրնայ դուրս հանել, իրենց պէտք եղած ցորէն առանց հաշուի և առանց դրամի կը տանեն: Հիմայ ժողովուրդ չափազանց վշտացած, ամէն կռմէ բողոքներ է, որ կը թափեն, ես ալ այս բանի մասին ձեզ կը դիմեմ և կը խնդրեմ, որ ժամ առաջ գեներալի մօտ երթալու շնորհք ընէք և ըսէք, որ «եթէ իրաւունք կը համարեն գաւառի մէջ գտնուած գարիներ ամբողջովին. ինչքան և երբ որ գտնեն, առանց հաշուի ծրիապէս տանեն, նորէն մեր միջոցներով պիտի խուզարկեն և տանեն, ցորէն նոյնպէս ինչքան որ պէտք է և ինչ պայմաններով որ պէտք է տանան, նորէն մեր միջոցով պէտք է տանք, որպէսզի ժողովրդի մէջ դժգոհութիւններ չը լինեն և գուտ ռուսների խուզարկութիւն կատարած ատեն անպատեհութիւններ չծագեն: Իսկ մեզ ալ պէտք է ազատ թողնեն մեր գործունէութեան մէջ (ցորէն կը հաւաքենք անտէր հորերէն, թիւրքի գիւղերէն և այլն): Հիմայ ցորէններ իրենց տրամադրութեան տակ առեր են և մեզ կառաջարկեն երթալ, որի տուն քանի չափ ցորէն աւելի գտնենք, այնտեղէն վերցնենք, ես առարկեցի, որ ես չեմ կարող ընտանիքների ապրուստներին ձեռք տալ:

Բերանացի տեղեկութիւններ կստանանք Հրանտից և միւս տղաներից, որոնք ձեզ կը տեսնեն:

Ինձ հետ եկող օգնական կը փափաքի Վան վերադառնալ, ինք կզգայ, որ չի կրնայ իւր ժամեր օգտագործել: Ճիշտ ասած, ես ալ յօժար եմ անոր փոխուելուն, որովհետև բոլորովին անմեղ, բարի և միամիտ երիտասարդ է, այնպէս որ, իր փափաքին հակառակ փոխանակ գործ շինելու, կաւրէ: Կը խնդրեմ մի ճարպիկ խօսող մէկ ուղարկէք ինձի և կառաւարելու քիչ մը ընդունակ:

Վերջապէս ժամանակ չունեմ, բերանացի քաղ պատմեն տղաներ ամէն բան:

Յարգանքներով՝ Արճէշի գաւառապետ **Նշան**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 32 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 189

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ-ՆԵՐԻՆ՝ ՍՈՎԻՑ ՓՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[հունիս] 1915 թ.

Հայրենակիցներ,

Թիւրքական եաթաղանէն ազատուեցինք թէև բաւական զոհերով, բայց այն ինչ չկրցաւ ընել մեզ նախկին ռէժիմի բռնութիւնը, կարծես պիտի ըլլեն սովն ու հիւանդութիւնը:

Մեր այս և այն գաւառէն սրտաճմլիկ լուրեր կուգան հիւանդութեան և մանաւանդ սովի մասին:

Անտանելի է դրութիւնը մասնաւորապէս Ոստան, Գավաշ և Կարճկան, ուր հիւանդութիւնը հրեշատոր ձևով գլուխ է բարձրացուցեր և ուր սովը անխնայ կը հնձէ մեր ժողովուրդը:

Նոր ստեղծուած կառավարութիւնը ձեռք առած է բոլոր միջոցները՝ շուտափոյթ օգնութեան հասնելու տվեալներուն և մանաւանդ հիւանդներուն:

Կովկասի մեր հայրենակիցներ ի տես մեր աղէտին ու մեր հերոսական պայքարէն խրախուսուած, ամէն կողմէն բժշկական օգնութիւն հասցնելու վրայ են. կը յուսանք, որ քիչ օրէն պիտի կրնանք կազմակերպուած պայքար մղել բնութեան արհաւիրքի դէմ:

Բայց բժշկութիւնը և դեղերը ամէն բան չեն, պէտք է սնունդ հասցնել հիւանդներուն, պէտք է կերակրել սովեալները՝ որ չը հիւանդանան: Բժշկութիւն, դեղօրայք, գիւղատնտեսական պակասներ լրացնելու համար միջոցներ կը հասցնէ Կովկասի հայութիւնը: Մենք տեղացիներս ալ պիտի

փութանք մեր իսկ միջոցներով օգնութեան հասնելու թշուառներուն և կարօտեալներուն:

Միք մոռնաք, որ փոխադարձ օգնութեամբ միայն կրնանք պահել մեր ազգային գոյութիւնը: Եթէ մէկը չ'օգնէ միւսին, մենք կորած ենք, մէկը ամէնքին, ամէնքը մէկին, հոս է մեր փրկութեան խարիսխը: Մի մոռնաք, որ ձեզմէ հատերը երէկ կ'ապրէին ուրիշներու հաշուին, և եթէ չըլլային այդ ուրիշները, դուք տակաւին կըլլայիք կամ ձեր լեռներու և կամ Վանի փոդոցներու մէջ:

Այժմ ալ ուրիշները կան թափառած Ռուսաց, Աղթամար-Կարկառէն, Սպարկերտէն, Խիզանէն և այլն, որ երէկուայ ձեր վիճակի մէջ էին, այն տարբերութեամբ, որ երէկ ձեզ ապաստան տալու դիւրութիւն ունէինք, իսկ այսօր այդ դիւրութիւնը չկայ:

Եւ մի' մոռնաք, որ այսօր բաղդը այս և այն չափով ձեզ ժպտացեր է, որ դուք ունիք հաց, ուտելիք, հագնելիք և տաւար, ո'չ միայն այսօրուայ, այլ և վաղուայ համար:

Հայրենակիցներ, հրահանգած եմ բոլոր շրջաններու կառավարիչներուն, որ լայն հանգանակութեան սկսին կեդրոնիներու և մանաւանդ հացի, սովամահ եղող վայրերու համար:

Ուրեմն դուք ալ ինքնակամ և բարեգութ զգացումներով դիմաւորեցէք այս հանգանակութեան, շտապեցէք հաց հասցնել սովամահ եղողներուն:

Մի' մոռնաք երէկուայ ձեր սև օրը, մի յուսադրուիք ձեր այսօրուայ ժամանակաւոր ապահովութեամբ, յիշեցէք, որ վաղը դեռ անյայտ է, իմացէք, որ ներկայ փոխադարձ օգնութեան պէտքի տակ ենք և պիտի գտնուինք:

Մեր մասին այն կարծիքը կազմել չը տաք դուրսը Կովկասի մէջ, որ երէկ մենք, հերոսական դիմադրութիւնը կազմակերպողներս, այսօր տառուած ենք միմիայն մեր գոռհիկ եսով, և որ անընդունակ ենք կազմակերպելու, անձնական զոհողութիւններ ընելու, մեր իսկ մօտիկներու կարիքները հոգալու: Ուրեմն դէպի գործ, դէպի զոհողութիւն:

Նահանգապետ՝ Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 68, թ. 1, տպագիր օրինակ:

Ն 190

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՋՐԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԱՐՁԱԿՅԻ ՏՂԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ն 1373 *1 հուլիսի 1915թ.*

Վան

Жители Арчака Саркис Акопян, Гарегин Вардапетян, Галуст Нахоян и Ншан Егиазарян обратились ко мне со следующей просьбой. Во время боев, из их селения курдами были уведены в плен 12 мальчиков. В настоящее время, по имеющимся у них сведениям, эти пленные находятся в селении Кизил-Мейдан, на склоне горы Пашет, в районе Хошап. Желая освободить и вернуть своих родных и детей, выше названные лица просят меня ходатайствовать перед Вашим превосходительством о снабжении их надлежащим свидетельством для беспрепятственного следования в упомянутое сел. Кизил-Мейдан Хошапского района, с целью отыскания, освобождения и приведения обратно плененных курдами их родственников, а также предписать военным властям на месте, относительно оказания им законного содействия.[165]

Ванский губернатор ***Арам***
Секретарь ***Айрапетян***

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.5, թ.173 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 191
ԿԱՐԾԿԱՆԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՍՈՎԻ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

1 հուլիսի 1915 թ.
Կարճկան

Վերջապէս Կարճկանը գրաւուեց, վերջնականապէս, երեկ Յունիս 30-ին ձեր որոշած 2 պաշտօնեաներս՝ գաւառապետ և ոստիկանապետ Սօրք գիւղ իջանք, առայժմ մեր պաշտօնատեղին որոշեցինք Սօրք: Մեզ պէտք եղած թւով ոստիկաններ չենք կարող պատրաստել, որովհետև առողջ մարդ չի գտնւում գաւառումս: Իսկ առանց ոստիկանների ալ դժուար է գործ անել, մէկ քանի հոգի ձշանակած ենք, նրանց ձեռքումն ալ զէնք չկայ, եթէ կարելի է, հեռաձայնով խօսացէք Արարատեան գնդի ընդ. հրամանատար պ. Վարդանին[166]*, նրանց մօտ կան նոր գրաւուած թիւրքական հրացաններ: Մէկ քանի հատ թող տրամադրելի ընեն մեր ոստիկաններին: Մենք այդ մասին մեկ անգամ դիմում ըրած ենք, մեզ ըսաւ պ. Արամին գրէք թող ինձ ըսեն, ես կուտամ:*

Գալով ժողովրդի մասին, ժողովուրդն ալ լսելով գաւառի գրաւումը, իրենց տեղեր են վերադառնում:

Հացի մասին, Փիկանց գտնուած ցորեն մէկ քանի օր չալակներով և մէկ երկու եզով փոխադրեցինք Աւանց գիւղ և Աստրանց գիւղեր, դեռ ժողովուրդ այնտեղ եղած ժամանակ, բաժանեցինք նրանց վրայ և մինչև այսօր առով ապրեցան: Իսկ մնացած ցորենի մեծ մասը տաւար և փոխադրութեան հարմարութիւններ չունենալով այնտեղ (Փիկանց) մնաց,

սալդատներ տարեցին: Այստեղ Սօրբի կառավարութեան ամբարում մօտաւորապէս 100-120 չափ ցորեն և տարեկան կայ, նա արդէն սկսած ենք բաժանել ժողովրդի վրայ, որը իհարկէ մէկ քանի օր հազիւ բաւէ: Եթէ կուզէք որ սօվամահութեան առաջ առնէք, օրով յառաջ հաց հասցրէք, եթէ ոչ գաւառս ողջ մնացածներից ալ կը զրկուի: Ի հարկէ, միայն հացով ալ չպիտի բաւականանաք, որովհետև պէտք է ըսել, որ համարեայ ամբողջ ժողովուրդ հիւանդ է, հետևապէս հիւանդներին պէտք է լաւ սնունդ, որ առողջանան, գոնէ ինչպէս Ուստանի և Գաւաշի ժողովուրդն է օգտւում: Ոչխար, տաւար բնաւ չունին, չի կարելի, Լանին խօսէք, մէկ քանի ոչխար գոնէ ուղարկէին գաւառս, նրանք շատ ունին: Խօտեր փճանում են: Դուք Մանուկին ասած էք, որ գերանդիներ կուղարկենք ձեզ, չուտով ուղարկեցէք և եթէ կարելի է այդտեղից առողջ գիւղացիներից մի խումբ պատրաստէք, ղրկէք վարժով քաղ ընեն, գարին ալ հասնելու մօտ է, մինչև խօտեր հնձուի հունձքերն ալ կը հասնին, իսկ մեզ մօտ առողջ մարդիկ չկան, որ կարողանան քաղել:

Պէտք եղած բաներ նաւով ուղղակի Սօրբ ուղարկեցէք: Իսկ հիւանդների մասին Ուստան փոխադրել անկարելի է: Եթէ կարելի է մէկ բժիշկ, դեղորայք ուղարկեցէք այստեղ: Տեղումս միայն կարելի է օգնել նրանց:

Ուղարկեցէք գաւառիս համար ամէնաառաջին ցորեն և մեծ քանակութեամբ աղ, որ բնաւ չի գտնւեր, շաքար՝ չայի հիւանդների համար, մէկ քանի հատ կաթսաներ, կերակուրի ամաններ, տաքսիներ[167], մեզ և ժողովուրդին, քարիւղ, իսկ անկողին, որ բնաւ չի գտնուիր, եթէ հնարաւորութիւն կայ մեկ փոքր քանակութեամբ գոնէ վերմակ ուղարկեցէք, որովհետև հայ գիւղերում ոչ մի ողջ տուն չկայ, որի մէջ բնակուին, ամբողջն ալ բացօթեայ կը մնան, իսկ եթէ մի ծածկուելու բան ալ չունենան, բնական է, որ մնացածներն ալ կը հիւանդանան և կը մեռնին: Խնդրում ենք վերոյիշեալ անհրաժեշտ իրեղէններ օր յառաջ նաւով մեզ ուղարկէք, նաւ ուղղակի Սօրբ քաղ գայ:

Մեզ համար պաշտօնական կնիքներ ուղարկեցէք:

Յարգանօք՝

*Գաւառապետ՝ **Մանուկ Պետրոսեան***
*Ստիկանապետ՝ **Մանուկ Միհրսեան***

Մակագրութիւն 1.** Կարդացի և կարգադրեցի: **Արամ
***Մակագրութիւն 2.** Գերանդի ղրկուեցաւ, իսկ միւս խնդիրներ մասին Ուստանի գաւառապետին գրուած է:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 27, թ. 1-2, բնագիր, ձեռագիր:

N 192

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔԱՂԱՔԻ ՄՆԱՑԱԾ ԿԱԼ ՎԱՃՔՆԵՐԸ ՋՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 142 *1 հուլիսի 1915 թ.*

Վան

Վանի շրջանային նահանգապետութեան

պ. նահանգապե՛տ

Յաւօք կը տեսնուի, որ քաղաքի շրջականերու ամբողջ խոտերը կերցուելէ յետոյ ցանքերու մեծ մասն ալ անոնց հետ ոչնչացուած և միշտ կերցուելու վրայ են. բաց ասկէ նմանօրինակ ոտնձգութիւններ երբալով աւելի ծաւալ կստանան մօտակայ գիւղերի խոտերի և ցանքերի համար և շատ բնականօրէն միևնոյն վիճակը պիտի տարածուի հետու գիւղերն ալ:

Գրեթէ բոլոր լքուած խոտհոցներ և այգիներն անջուր մնալով, բուսականութիւն դադրած է և նոյնիսկ արմատներն ալ բոլորովին չորանալու ենթակայ են: Այս վիճակով քիչ ատենէն խոտի և դարմանի անխուսափելի սով մը յառաջ պիտի գայ և մանաւանդ յառաջիկայ ձմրան աներևակայելի դժուարութիւնների առջև պիտի գտնուինք: Միւս կողմէ նկատի ունենալով, որ բարեբախտաբար ջուրերը ներկայ տարին բաւական առատ են և շատ տեղերի ջուրեր Յանկոյսների և Կուստպաշայ գետերի ջուրերու նման աննպատակ կը հոսին և ծով կը թափեն: Խոտի և դարմանի վերահաս սովին չափով մը դիմաց առնելու համար, Ձեր ուշադրութեանն կը յանձնէինք կարգադրելու, որ գէթ քաղաքիս համար յատուկ ջրկալ աշխատաւորները կարգել և առհասարակ աննպատակ հոսող ջուրերով ջրել բոլոր անտէր կալուածներու խոտհոցներն ու այգիները. և այսպիսով կարելի կըլլայ մասնաւոր չափով մը խոտ գոյացնել և հացահատիկները ոչնչացումէ ազատել, գոյանալիք խոտերը բանակի ձիաներուն յատկացնելով՝ ժողովրդի և գիւղացիութեան վրայ ծանրանալու սպառնացող դարմանի և խոտի հայթայթման գործը դիւրացած կըլլար և շրջանիս բուսականութիւնը տևական կը դառնար:

Կը յուսանք, թէ այս առաջարկը Ձեր կողմէ ուշադրութեան առնուելով, ժամանակը չանցած անմիջապէս գործի սկսելու հրամաններ պիտի տաք ուր որ պէտք է:

Նախ. Տնտես. Մարմնոյ՝ **Գէորգ Միրզեեան**

Մակագրութիւն. *Գրել գեներալին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 54, թթ. 7-8, բնագիր, ձեռագիր:

N 193

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՆ՝ ՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ, ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻՆ ԵՎ ՇԱՏԱԽԻ ՇՐՋԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1413 — *2 հուլիսի 1915 թ.*

Վան

Вследствие оставления полицеймейстером г. Вана, Д. Папазяном должности, мною назначены исправляющими обязанности Ванского полицеймейстера - Гевонд Ханджян, помощника ванского полицеймейстера — Габриэл Ильич Шахинян.[16*]

Мною назначен еще помощником начальника района Шатах и полицейской стражи того же района Варос Бабаян.

Доводя до сведения Вашего превосходительства об изложенном, покорнейше прошу не отказать выдать означенным лицам особые удостоверения и предписать военным властям об оказании содействия этим представителям гражданской власти.

Ванский губернатор
Секретарь

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.68 և շրջ., բնօրին., ձեռագիր:

N 194

ԿԱՏԱԼԱՎԱ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հուլիսի 1915 թ.

Վան

Մեր մանրամանր զաւակաց օրապահիկը հայթայթելու համար կարգ մը քաղաքացիներէն անասուններ Դարմանաւ տարած ենք: Սակայն դժբախտաբար ռուսական զօրքեր ամէն օր մեր Կատալավայ գիւղ գալով, յայտնի արօտատեղիներս կերցուցին և քաղել տալով՝ քաղաք փոխադրեցին, մեր քաղածներն ալ վերցուցին, ամենաընտիր ոչխարներս կը մորթեն, տուներնիս մտնելով և առաստաղներ քակելով կը վառին, հատընտիր ապրանքներս բռնութեամբ կառնեն, ուտելիքներս մեր ձեռքէն կը վերցնեն, վերջապէս ամէն եղանակաւ մեզի կը վնասին և անտանելի է մեր դրութիւնը:

Արդ վսեմ. տէր, հաճեցէք մասնախմբի մը միջոցաւ քննութիւն կատարել և մեր գիւղէն տարուած 180000 փութ խոտ ու միւս վնասները փակելու և ձմեռուան ժամանակ անասունները չը կորսնցնելու համար արգելու համար պէտք եղած կարգադրութիւն ընելը կը խնդրեմք:

Խորին յարգանօք ռէս ***Խամօ Համբզեան***
Այվազ Սիմոնեան

Սարգօ Պաղտօյեան
Եւեան Օզօյեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 136, բնագիր, ձեռագիր:

N 195
Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ Պ. ԼԵՎՈՆՅԱՆԻՆ ՎԱՆԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1409 — *2 հուլիսի 1915 թ.*
Վան

Покорнейше прошу Ваше превосходительство объявить в приказе по отряду о том, что помощник присяжного поверенного округа Петроградской Судебной палаты, доброволец адъютант 2-й Армянской дружины Паруйр Дживанович Левонян, откомандированный этой дружиной ко мне, с 10 мая 1915г. состоит вице-губернатором Ванского округа.

Кроме того, покорнейше прошу Ваше превосходительство о выдаче ему соответствующего удостоверения для предоставления им такового Петроградской городской управе, где состоял на службе.

Ванский губернатор
Секретарь Канц. Губернии

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.14, թ.138 և շրջ., բողոմն, ձեռագիր:

N 196
ԹԻՄԱՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Հ.ՀՅՈՒՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՀԱՍՏԻԿ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հուլիսի 1915 թ.
Ալիւր

Տէր նահանգապետ

Ձեր բերանացի հրահանգներու վրայ, բողորակակնաց շրջանակ այցելեցի, բայց ոչ որ չկրցայ գտնել, Վուփունիկեանի ցուցմունքի վրայ միակ մարդը Ֆէրջուլեան Գարեգին գտայ, ուստի գիւղապետները ղրկեցի, որ զինքը Ձեզ ներկայացնեն և պէտք եղած տեղերը իրեն տրամադրելի ընելու համէք, օր առաջ գալու և գործը սկսելու համար:

Յորէն և գարի հաւաքելու համար քաղաք յարմար մէկը չգտայ, բայց կը համարձակիմ յայտնել Ձեզ, որ առ այժմ մինչև այդպիսի մը գտնելը, կարելի է գործը սկսել և պիտի աշխատեմ ընկերներուս հետ միասին, գիւղեր պտտած ատեն, առիթ չփախցնել ձեռք ինկածը գնելու, ուստի, եթէ յարմար կը դատէք մաս մը գումար գրաբերովս ղրկելու, հաճեցէք: Պարբերաբար գործառնութեանց մասին կը տեղեկագրեմ Ձեզ:

Պ. Արմենակ Փախաճեանին մանրամասն գրած եմ արդեն, ուստիկաններու ամսաթաշակներու այս ամսու գլխու առթիւ, վճարում ընելու հրաման ընէք: Անցեալներ միայն հինգ ուստիկան առ հաշիւ 30-ական րուբլի ստացած են մինչ Յունիս 15-ը, անոնց մնացեալ հաշիւ և միւս 4 նոր ուստիկաններու յունիսի ամսականը կը մնայ դեռ, կրկին կարգադրութիւն ընելը հրամայեցէք:

Յարգանօք գաւառապետ Յ.Հիւսեան

Յ.Գ. Գաւաշ գտնուած սովեալ գաղթականներու հանգանակութեան համար Ձեր խստացած շրջաբերականը գրաբերովս ուղարկելու բարեհաճեցէք:

Նոյն

Մակագրութիւն. *Կարգադրուած է: Արամ*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 44 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 197
ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՌԻՉԱԳՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 1339 *3 հուլիսի 1915թ.*

միՅ

Этапным комендантам пунктов: Ван, Панз, Гелли и Бегри-Кала сделано распоряжение о том, чтобы они не чинили препятствий лицам, уполномоченным Вами по закупе местных продуктов по довольствию дружин, если лица эти будут иметь от Вас удостоверение в своих полномочиях с указанием в них для каких дружин продукты заготовляются.

Подполковник **Рычагов**
Делопроизводитель, коллежский ассесор[169]

Մակագրութիւն. *Սորա պատճէնը ուղարկուած է Ստարին N1462, 4/VII - գրութեամբ:*

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.14, թ.143. բնագիր, մեքենագիր:

N 198
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՀՃԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԱՐԱՇԵՑՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1429 *3 հուլիսի 1915 թ.*

Վան

Նորին Գերազանցութեան գեներալ-մայոր Նիկոլաևին

Ինձ մօտ գանգատներ են ստացւում, որ Վանում և ամբողջ շրջանում փչացնում ու կերցնում են արտերը և խոտերը:

Առ այժմ դառնալով միմիայն խոտհարքների հարցին, պարտք եմ համարում խնդրել Ձերդ գերազանցութեան յատուկ ուշադրութիւն դարձնել այդ բանի վրայ:

Կատարուած փչացումները, որանցից առանց վարձատրութեան թողնելը ժողովրդին ներշնչում է այն միտքը, թէ անօգուտ և իզուր են իր խնամքն ու աշխատանքը խոտհարքների վրայ, քանի որ բոլոր խոտը, որը աճել է շնորհիւ իր աշխատանքի, կինճւի և կնաւաքւի առանց իրեն համար մի որևէ օգուտի: Մինչդեռ սկսում է հնճի երկրորդ շրջանը, անհրաժեշտ է ձեռնարկել խոտհարքները ջրելու և ընդհանրապէս խնամելու գործին:

Անհրաժեշտ է ձեռք առնել շարք միջոցներ, որպէսզի հնարաւորութիւն տրւի ազգաբնակչութեանը անարգել կերպով ջրել արտերն ու արօտատեղիները և պաշտպանել խոտհնձները փչացնելուց ու կերցնելուց ապահովելով, որ իւրաքանչիւր ոք կ'ստանայ իւր աշխատանքի և սեփականութեան արդար վարձքը:

Հակառակ դէպքում խոտհարքները մերկ անապատ կ'դառնան և ինչպէս զօրքը, այնպէս էլ տեղական ազգաբնակչութիւնը կ'ենթլի խոտի պակասութիւնից.[170]

*Վանի նահանգապետ՝ **Արամ***
*Քարտուղար՝ **Ն. Հայրապետեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 90 և շրջ., թղթոն, ձեռագիր:

N 199

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՋԻՆՎՈՐԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԵՐՆ ՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԸ ՓՉԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1429 *3 հուլիսի 1915թ.*
Վան

Ко мне поступают многочисленные жалобы на порчи и потравы, производимыми воинскими частями как в окрестностях Вана, так и по всему округу.

Останавливаясь пока над вопросом лишь относительно сенокосных площадей, я считаю своим долгом просить Ваше превосходительство обратить особое внимание на этот предмет. произведенные потравы, оставление вознаграждения лиц, потерпевших от этих потрав, внушает населению мысль, что бесполезны и напрасны его заботы и работы над сенокосами, так как вся трава, возросшая благодаря их стараниям, будет скошена и забрана без всякой для них пользы.

Между тем, настанет второй сенокосный период, необходимо приступить к поливке сенокосных участков, и, вообще, уходу за ними.

Необходимо принятие ряда мер, чтобы дать возможность населению беспрепятственно производить поливку полей и лугов и оградить сенокосные участки от порчи и потрав, обеспечив каждому получение справедливого вознаграждения за труд и за собственность.

В противном случае, сенокосные участки обратятся в голые пустоши, и как войска, так и местное население будут страдать от недохватка в сене.[171]

Ванский губернатор ***Арам***
Секретарь ***Айрапетян***

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.10, թ.92-93, բնագիր, ձեռագիր:

N 200
ԿԵՆԴԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՑԻ ԹԱՍՏ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻԲՐԵՎ ԹՈՒՐՔԻ ՀԱԼԱՇՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2691 *3 հուլիսի 1915 թ.*

Վսեմ կառավարչապետ Վանի

Ինչպէս ձեր վսեմութեան յայտնի է, աշուն ես իմ գէնքովս գալով ձեզ յանձնուած եմ և ձեր շնորհիւ մինչև հիմայ անվնաս ապրած եմ ժամանակ մը մեր գիտացի Գէորգ Աւետիսեանի տուն ըստ ձեր յանձնարարութեան և կովի օրերին ալ նորէն ձեր շնորհիւ Կազանչի Մելօյի տուն ապրեցայ: Հիմայ նորէն ես քո գերին և ծառան եմ և իմ սեպհական գիտլը կենդանանց կբնակի մը աստուծով և ձեր շնորհիւ: Սակայն, երբեմն-երբեմն կ'լինի, որ ինք գիտցող չ'գիտցող ինծ տաճիկ է ըսելով, թէ կամաւորներուն և թէ ռուս զօրքերուն ու գոզաքներուն կ'մատնանշեն, որով կ'վախնամ, որ, մի գուցէ, ինծ վնասեն: Ես քո ավլատ[172] *եմ, կ'խնդրեմ, որ իմ ձեռքը մի վաւերական արտօնագիր մը տաք, որ ոչ ոք ինծ չ'վնասէ, ձեր շնորհիւ ազատ ապրիմ և ձեր կենաց միշտ աղօթող լինեմ:*

Յարգանօք
Վասն անգրագիտութեան կենդանանց գիտացի ***Թամօ Միրզոյեան***

Մակագրութիւն. *Վկայական տալ:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 54, պատճեն, ձեռագիր:

N 201

ՎԱՆԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՆԻ Ա. ՄԱՆՈՒԿ-ՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՓՈՂՈՑԸ ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2738 — *3 հուլիսի 1915 թ.*

Վսեմ. նահանգապետ Վանայ

Տ՛ր,

Յայտնի է ձեզ Թէրլէմէզեան ընդ բացուած փողոց, որ քաղեցիներու երկար աշխատութեամբ բացուեցաւ: Թիւրք կառավարութիւն սոյն փողոցը ժողովրդեան օգտակար լինելը վաւերացուց և փողոցի խնդիրը նահանգական ու քաղաքային ժողովով նաև դատարանի և այլն մարմինների միջոցաւ վաւերացուած և վերջացուած խնդիր մէ, միայն յիշեալ փողոցի արժէքի չը գանձուելը՝ վերջին զօրահանութեան և այլն, և նոյն իսկ քաղաքապետի թոյլութեան պատճառ դարձաւ, և այս բոլոր անցուդարձին ծանօթ էր մեր ներկայ քաղաքապետ, որմէ կը՛սպասէինք՝ խնդիրը գործնականացնել փողոցի արժէքը քաղեցիներէն գանձելով: Դժբախտաբար Թէրլէմէզեանի կողմէն Տ[եր] Պօղոսեաններ միջամտող դեր կը խաղան, որոնք պաշտօնապէս գրել տուած են ձեր մեծութեան, թէ քաղեցիներ ոչ փողոց կուզեն բանալ, ոչ ալ դրամն կուզեն վճարել, մինչդեռ քաղեցիներուս ոչ մի պաշտօնական հարցում եղած չէ և քաղեցիներ ոչ մի մերժողական պատասխան տուած չեն: Ձեր մեծութիւնն, նկատի ունենալով քաղաքապետարանէն եկած սխալ տեղեկութիւնը՝ որոշած էիք բացուած փողոցը գոցել: Մենք անմիջապէս դիմեցինք ձեզ, բացատրելով խնդիրը իւր իսկզբութեամբ, բայց մեզ անպատասխան թողուցիք և վերջին անգամ քաղաքապետարանի հակօրէն որոշումը ձեր կողմէն հաստատուելով, ոստիկանութիւն մեզ կը հաղորդէ հետևեալ կերպով՝ թէ «օսմ. կառավարութեան կողմէն տրուած որոշումը չեղեալ կը համարուի և կը յանձնարարուի ըստ քաղաքապետարանի որոշման նոր յանձնախումբ ընտրուի և նորէն կրկին գնահատում ըլլայ»: Բան մը, որ հակասութիւն է ներկայ կառավարութեան ուղղութեանը, քանի որ ժողովրդական շահն քաղաքապետի կողմէն նկատի չառնելով, անհատի շահը կը պաշտպանէ:

Այս անգամ ալ կուգանք քաղեցիներս բողոքել սոյն անարդար որոշման դէմ և խնդրել ձեզմէ՝ որն վստահ ենք պիտի լսէք, այս անգամ մեր արդարացի բողոքն և հրաման ընէք նախկին որոշման համաձայն, այսինքն օսմ. կառավարութեան կողմանէ որոշած կերպով դրամն քաղեցիներէս գանձելով տիրոջը յանձնուի և յիշեալ փողոցը կանոնաւոր վիճակի ենթարկուի:

Յարգանօք Առղեան թաղի քաղեցիները
Գէորգ Շիտեչեան[73]

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 52, թ. 3 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 202
ԱՐՃԵՒԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն.ԺԱՄԱԳՈՐԾՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՅՈՐԵՆ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄՈՒԼԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

3 Հուլիսի 1915 թ.
Արճեշ

Յարգելի Նահանգապետ
Պրն. Արամ Մանուկեան

Բոլորովին ապշած մնացի, որ սուրհանդակ Տիգրան Զաքօեան առանց որևէ պատասխանի վերադարձաւ:

Երեք անգամ հեռագիր տրուած է ձեզ, բայց որևէ պատասխան ստացած չեմ ցորէնի մասին, ձեր նամակով, մինչդեռ կը յայտնէք, թէ հեռագրուած է:

Դուք շատ լաւ էք մտածել, որ 1000 փութ ցորէն դրամով գնելու որոշում կայացուցեր էք, ինչպէս իմացած կը լինէք՝ ուրիշ կերպ ցորէն ճարել անկարելի է: Իսկ այս 1000 փութն ալ գնելու համար դրամ ինչո՞ւ Տիգրանի հետ չը ղրկեցիք, այստեղէն ինչպէս ճարէնք այդքան դրամ, ասոր համար ստիպուած պիտի հեռագրեմ: Բայց յոյս ալ չունիմ, թէ հեռագիր ձեզ պիտի հասնի: Ղրկած (Արմենակ Գալջեանի համար) ցորէն, որ վերցուցէր էք Ձեզ, տնտեսական մարմին դրամ կը պահանջէ, ուրեմն որին որ տրուած էք, կը խնդրեմ գանձեցէք և ուղարկեցէք, որպէսզի մեր պիտոյքն փակենք. այստեղ անագին դժգոհութեան առիթ տուաւ այդ յայտնութիւն: Լսեցի, որ էն խեղճ Կոթողեան Մարտիրոսի համար գնածս ցորէն, որ ղրկած եմ, ինչոր գրաւուած է Հրանտ Պղոլեանի ցորէնի հետ միասին, այդ ինչ բան է, միթէ դուք ինձ նոր կը ճանչնաք և կը փորձէք...

Կը խնդրեմ, ուր որ է հրամայէք, որ յանձնեն Մարտիրոս Կոթողեանին, թէև այս մասին որևէ ճիշտ տեղեկութիւն չունիմ, թէ իսկապէս գրաւուա՞ծ է:

Գերանդիներ այստեղի համար պէտք չեն. կայ: Պրն. Արամ, եթէ իմ խնդրածս պահանջներուն գոհացում չը տաք, ես դժուար պիտի կրնամ գործերս աւելի կանոնաւորել և փայլեցնել հայկ. կառ. գոյութիւնը:

Պ. Յակոբ Տ. Յակոբեանէն կը տեղեկանաք իմ պահանջներուս մասին:

Յարգանքներով Արճէշի գաւառապետ **Նշան**

Յ.Գ. Ներփակ նամակս Կազօյի գրած նամակն է, որ այն չտապի ապրանքներու մասին գրած է, որ չի ուզեր տալ, որովհետև ինքն ալ թալանուած է եղեր:

Նոյն

Մակագրութիւն. *Մերժելի գործերին միացնել:* **Արամ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 45 և շրջ, բնագիր, ձեռագիր:

N 203
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՆԻԿՈԼԱԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻՆ ԻԲՐԵՎ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐ ՎԵՐԱ-ԲԵՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1599 *4 հուլիսի 1915 թ.*

Представляя Ваше сношение от 26 июня сего года за N 1317 командиру 4-го Кавказского армейского корпуса на усмотрение, в целях поддержания Вами порядка в Ванском районе на строгом выполнении приказа моего от 22 июня сего года за N 34 и в развитии этого приказа, считаю необходимым сообщить следующее:

Для меня вполне понятны те непримиримые чувства к курдам, которые Вы питаете к ним после варварских, зверских и предательских их расправ с армянским населением. Только этим и объясняю Ваше удивление в вступительной части Вашего сношения о том, что приказом N 34 настоятельно требуется от армянского населения не нападать и не грабить курдские селения. Причем заключительная часть приказа о том, что выступления курдам воспрещаются мною под страхом смертной казни их заложников, Вами выпущена, тогда как это обстоятельство совершенно изменяет сущность Вашего сношения, являясь одной из твердых, принятых мною мер для установления порядка среди курдов.

Обращаясь к дальнейшим доводам в сношении N 1317, сообщаю: по п. 1, 2, 3, 4 и 6: сдача курдов последовала под давлением тяжело сложившихся для них обстоятельств и потому в полную искренность их преданности не верю, тем не менее, исключительное положение русских войск в крае вынуждает, для пользы дела, курдов, хотя бы временно покорившихся предпочитать курдам, враждебно настроенным и оттягивающим на себя наши войска.

Принимать их, как военнопленных мне не разрешено.

По п.п. 2, 5 и 7, указываемый Вами исход из создавшегося положения привлечением виновных в насилиях курдов к ответственности — вполне разделяю с Вами. В целях осуществления чего прошу выяснить фамилии и список их представить мне для передачи прокурорской власти.

Уверен, что виновные будут незамедлительно выделены из среды сдавшихся курдов,. что вместе с тем послужит и достаточной угрозой для курдов, еще не подчинившихся Русской власти.

Что же касается приказа N 34, то отмена его нежелательна уже потому, что в ней можно было бы усмотреть мое разрешение: "нападать на курдов и грабить их, а посевы их уничтожать", каковое недоразумение явилось бы только опрометчивым актом, недостойным представителя культурной страны.

Генерал-майор **Николаев**
За начальника штаба подесаул **Удавелко**

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.5, թ.176 և շրջ., բնագիր, մեքենագիր:

N 204
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՄԱՅ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԱՄՆՈԴԱՐ ՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 143 *4 հուլիսի 1915 թ.*
Վան

Վանի վսեմ նահանգապետին

Անցեալ տարուայ դեկտեմ. ամսին վանեցի ուսուցիչներ՝ պ.պ. Տիգրան Մելքոնեան Բաշգալէ և Մարգար Տ. Սկրտիչեան Սարայ կգտնուէին, երբ ռուս բանակը մտաւ այն տեղերը, իսկ բանակի նահանջած ատէն քրքական վրէժխնդրութեան զոհ չերթալու համար կը պատրաստուեն փախչել Պարսկաստան՝ ռուս բանակը, ուր իբրև գերիներ համարուելով, կը փոխադրուեն Ռուսիոյ Եկատերինօդար քաղաքը, ուր կրգտնուեն այժմ:

Յիշեալ ուսուցիչները հոս՝ մեր ամենուս ճանչցած և վստահելի անձինք լինելով, ռուսական ազատարար բանակի և ռուսական մարդասեր կառավարութեան իսկապէս բարեկամ անձեր են և ո՛չ երբէք տաճիկ կառավարութեան աջակիցներ, ինչպէս ենթադրուած է սխալմամբ, ուստի կը խնդրենք, որ շնորհի ընէք այս պարագաները յայտնել տեղւոյս ռուս բանակի վսեմ գեներալին ու վկայական մը առնելով ուղարկել մեզ՝ Եկատերինօդարի հայոց կոմիտէի նախագահին ուղարկելու համար, որպէս զի հօն պատշաճաւոր իշխանութեան ներկայացնելով, միջնորդէ յիշեալ ուսուցիչները վերադարձնել տալու 'ի հայրենիս:

Աղօթարար Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝ **Եզնիկ վարդապետ**
Դիւան քաղաքական ժողովոյ
Վ. Ատենադպիրի՝ ***Մ. Թ. Նալբանդեան***
Ատենապետ՝ **Գէորգ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 10, բնագիր, ձեռագիր:

N 205
ՆՈՐԴՈՒՀԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

4 հուլիսի 1915 թ.
գ. Կոսնի

Վանի վսեմ նահանգապետութեան
պ. նահանգապետ

Ձերդ վսեմութեան N 350 նամակի պատասխանը. Նորտուզի ժողովուրդ չի կարող այսպէս թափառական կերպով Հայոց Ձորոյ և կամ ուրիշ գիւղեր բնակիլ, որովհետև այսպիսով չպիտի կարողանայ իրեն ճմեռուան ապրուստը հայթայթել, որով թէ ինք սօվի պիտի մատնուի և թէ իր ձեռք գտնուած ոչխար, տաւար առանց խոտի մնալով, պիտի փճանայ: Ահագին դժուարութեամբ կետրոնացուած, այս ժողովրդեան մտքերը սա պատճառաւ պղտորուած՝ և օտար գիւղերը գաղթելը սկսելու վրայ են: Եթէ կուզէք Նորտուզի հայ բնակչութիւնը, իրենց տեղեր երթան և քիւրտերից յառաջ կանոնաւոր տեղեր իրենց համար գրաւեն, ածապարեցեք տեղիդ ոստիկանապետութեան հրաման արձակել, որպէսզի թէ տեղդ գտնուած և թէ Սղգայ գիւղ բնակած լինելը ստուգուած նորտուզցիները ժամ յառաջ բռնութեամբ հանել, տեղս դրկել, առ ի քաջալերութիւն տեղիս թշուառ ժողովրդեան:

Ներկայ ոստիկանութեան կազմով Նորտուզի կառավարուելը անկարելի է, որովհետև ցրուած են, ամեն մի գիւղ պաշտպանելը դժուար է, տեղի հարմար է ոստիկանութեան կազմ գոնէ առ ժամանակեայ կերպով բարձրացնել, որպէսզի դիւրութիւն ըլլայ մեր դեկաւարութեան գործադրութիւնը առանց պատասխանատուութեան:

Նորտուզի վարերը դրկուած մեր լրտեսներ գիշերս եկան, ալանցիները բաւականի մօտիկ եկած և առ այժմ մեր ուզած 32 հատ գերիները անվնաս ետ դարձրած են, բայց անցեալ օրուայ կռուի վրայ, կրասցիներ իրենց տներ բառնալով՝ դեպի յառաջ «Դարիայ Չեսենի» կողմեր գնացած են, իրենց միտքերն են ընտանիքը փոխադրել և ապա դեպի Նորտուզ արշաւել, թէև ասոր ալ կարևորութիւն տալ չպետք է, բայց պատրաստի արթնութիւն կարևոր է առ այժմ:

Հաճեցէք, յամենայն դէպս, առ ժամանակեայ կերպով, տեղիս ոստիկանական կազմ 50 հատ ոզմեցի և կամ շատախցիներով աւելցնել և N 2 նամակաւ ուղուած հրամանագրերը մեր ուզած մօսինով և ուժով ժամ յառաջ դրկելը, նաև հեծեալ ոստիկան Վանեցի Ալայվերդեան Մանուկի վկայագիրը ևս ուղարկելը:

Նորտուզի գաւառապետ՝ ***Էֆենդի Պետրոս***

Մակագրութիւն. *Գաւառապետը այստեղ կանչել: 9/VII*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 9-10, բնագիր, ձեռագիր:

N 206

ՄԿՍՄ ԳԱՎԱՌԱՊԵՏ Գ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՏԵՂԻ ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ, ՄՆԴԻ ՈՒ ՁԵՆՔԻ ՊԱԿԱՍԻ ՄԱՍԻՆ

N 2560 *5 հուլիսի 1915 թ.*

Վսեմաշուք պ. Արամ Մանուկեան
Նահանգապետ Վան Նահանգին
Ի Վան

Արդէն ընկեր Սարգսի հետ եղած նամակում երկար գրած և բացատրած եմ տեղիս ներկայ նեղ կացութեան մասին և որովհետև խնդիրներ քանի երթան կը կնճռոտին և նեղութիւնք կը շատանան, ատոր համար ստիպուեցի գրել այս երկրորդ նամակ ևս:

Հիւանդութիւնք քանի երթայ կը ծաւալի և կը վարակուին շատերը ու բոլոր ժողովուրդ: Գաղթականներ քանի երթայ կը շատանան, օր. ասորիներ և բարուարցիներ ևս տեղս եկած են, որով հացի ու ուտելիքի նեղութիւն ալ խիստ շատացեր է: Ձիւնառական այժը արդէն նախապէս պ. Դրօն մաս մը քաշած տարած էր և մնացած մասից ալ այժմ ևս մի յիսնեակ պահանջներ է, որը պիտի երթայ, այսպիսով բոլորը կը պատրաստուին կամաց կամաց քաշուել, որով և մենք կը մնամք բոլորովին անոյժ, և պիտի ստիպուինք նրանց հետ քաշուել և մենք ալ, եթէ նախապէս մի կարգադրութիւն չ'մտածէք և տեղս այժ չը խրկէք՝ տեղս կան մի քանի հատ զէնքեր, տաճ. մաւիգարներ[174] և յունաներ[175], նրանց ալ պատրոն չունիմք: Ուստի կը խնդրուի, որ շնորհ ընէք Ձեր մասնաւոր ուշադրութեան դարձնել տեղիս բժշկութիւն և դեղերի, ուտելիքի և այժի մասին մտածել և բարեկամ մի կարգադրութիւն անել: Նոյնպէս տեղիս ժողովրդեան և գաղթականների համար նպաստ ու հագուստեղէններ շնորհ ընել խրկելու:

Եղած ցանքերի համար (թէ քրդու և թէ հայու) ինչ անելու ենք, տասանորդ[176] պիտի վերցուի, թէ ինչ:

Ոստիկանների և պաշտօնեաների ամսականների համար ալ կը խնդրուի, որ մտածէք, և նրանց մասին ալ ի՞նչ անելու ենք՝ կը խնդրուի: Այս կէտերի համար Ձեր կողմից պէտք եղած հրահանգներ գրէք մեզ:

Յարգանօք՝

Գրիգոր Մեկացի

Մակագրություն. *Հիւանդութիւն, գաղթական, սով, զէնքի պահանջ, տասանորդ պէ՞տք է վերցնել թէ՝ ոչ, ամսավճար կուզեն:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 56-57, բնագիր, ձեռագիր:

N 207
ՋԱՐՈՒՀԻ ՆԽՇՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՏՂԱՋ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2989 *6 հուլիսի 1915 թ.*

Վսեմ նահանգապետ Վանի

Երեսնօրեայ կռուի Ա. օր նահատակուած փորագրիչ Եղիա զաւակս կռուէն առաջ թիւրք կառավարութեան համար կնիքներ փորած ու իր աշխատութեան վարձք 28 լիրան մինչև վերջն ալ անվճար թողուեցաւ: Եթէ հարկ ըլլայ այս իրողութիւնը իր արհեստակիցներէ կը վկայուի: Ի փոխարէն այդ գումարին թիւրքերի լքուած ատաղձներէն մեզ ևս տրուելու հրամանն ու շնորհք կը խնդրեմ, իր թողած որբուկներու համար մէկ-երկու կտոր բնակարան նորոգելու համար:

Յարգանօք վասն անգրագիտութեան խնդրատուի՝

Զարուհի Նիշանեան

Մակագրութիւն 1. *Չալտրանի[177] խմբագրութիւնէ ալ առանձնապէս կը պահանջէր 400 ղրշ.:*
Մակագրութիւն 2. *Թող դիմէ գեներալին:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 104, բնագիր, ձեռագիր:

N 208
Մ. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄՔՈՎ ՁԲԱՂՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

6 հուլիսի 1915 թ.
Վան

Վսեմ կառավարիչ Վանայ.

Հոս կազմուած է «Վանի հայ կանանց բարեգործական ընկերութեան կից որբախնամ մի մարմին», որու նպատակը պիտի ըլլայ գաւառներէն հոս հասած որբերը տուները տեղաւորել, հիւանդները խնամել, որբանոց բանալ և որբերու շուրջ եղած գործերը կատարել:

Սոյն մարմինը իր այսօրուայ նիստով որոշեց երկու հոգի ղրկել Ուստան, տեղւոյն վրայ ճշտելու հայր, մայր և խնամող չունեցող որբերը, զանոնք հոս ուղարկել և մնացածներու համար որոշ կարգադրութիւններ ընել: Ուստի սոյն ճանապարհորդութեան համար կը խնդրուի մի պաշտօնական թուղթ ուղղուած Ուստանի գաւառապետութեան, պէտք եղած օժանդակութիւնը հոն ընելու որբերու համար:

Ի դիմաց Վանի հայ կանանց բարեգործական ընկերութեան կից որբախնամ մարմնի՝

Մակագրութիւն. Գրուեցաւ Ուստանի գաւառապետին՝ տալ վկայագիր: 6/VII 1915, համար 1513:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 209
ԲԵՐԿՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 48 *6 հուլիսի 1915 թ.*

Վսեմ պ. նահանգապետ

Աբաղայի դաշտի 5-6 հայ գիւղերի դրութիւնը տսկալի է՝ նախ որ անճատուր եղած քրդերը յարձակումներ են գործում և տանում վերջին հացը, երկրորդ՝ կեանքները վտանգի մէջ է, 3) ոչ մի ցանք չունեն այս տարի, մերկ են, 4) անասունի խիստ պակասութիւն է զգացւում, մանաւանդ՝ լծկանի, որովհետև խառը ժամանակ անասունները քշուած են եղել այս միւս գաւառները և 5) երկրագործական գործիքների պակասութիւն է զգացւում: Վերոյիշեալի մասին կ'խնդրէի տնօրէնութիւն:

Բերկրիի շրջանի գիւղերից՝ Բերկրի, Պստիկ գիւղ, Շաքարի և Պշիգմբէթի հացը և խառը, Գործոթի և Գիւզակի ճօճջայ-խառը ռուս բանակը քաղել, կերցրել է: Ժողովուրդը մնում է ձեռնունայն: Իրենք պատրաստում են այդ վնատած ցանքերի ցուցակները և արժէքը, որոնք մօտ ապագայում կ'ներկայացնեմ ի տնօրէնութիւն:

Բերկրիի դաշտի գիւղերում զգացւում է խիստ հորի պակասութիւն, որոշ տեղերում թէ հագնելիքի և թէ տեղաշորի, մանաւանդ երկրագործական պիտոյքների այն է՝ մանգաղի, գերնտու և այլն: Եթէ այս ձևի պիտոյքներ լինեն, կխնդրէի բաժին հանել այդ շրջանի համար:

Գաւառապետ՝ Յակ. Մ. Գէորգեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 26, թ. 12 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 210
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ԱՌՈՒՆՑ ՍՏԱՑԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՉՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

6 հուլիսի 1915 թ.
Վան

Շրջաբերական

Ի գիտութիւն Վանի Նահանգի կառավարական պաշտօնէութեան և հասարակութեան կը յայտարարենք, որ ոչ մէկ պաշտօնեայ իրաւունք չունի առանց ստացական տալու դրամ ստանալ որևէ մէկէ, որ և է պատճառով:

Ամէն մէկ անհատ իրաւունք ունի պաշտօնեայի կողմէ պահանջուած դրամը չվճարելու, եթէ իրեն ստացական չտրուի:

Բոլոր անոնք որ մինչև սոյն յայտարարութիւնը առանց ստացական առնելու ո և է պաշտօնեայի դրամ վճարած են, իրաւունք ունին բողոքելու Նահանգային Դիւանատունը, հաղորդելով, թէ ե՞րբ, ո՞ւր, որո՞ւ և ի՞նչ պայմաններու մէջ վճարուած է այդ դրամը:

Վանի Նահանգապետ՝ ***Արամ***

Մակագրութիւն. Սոյն շրջաբերականները ամսոյս 7-9-ը ուղարկուած է հետևեալ շրջանները – 1. Շահբաղի՝ 6 հատ, 2. Ալիւր՝ 6 հատ, 3. Ճանիկ՝ 8 հատ, 4. Արճակ՝ 8 հատ, 5. Արտամետ՝ 6 հատ, 6. Հայոց-Ձոր՝ 6 հատ, 7. Ոստան՝ 8 հատ, 8. Նորդուզ՝ 6 հատ, 9. Մոկս՝ 6 հատ, 10. Եզդի-Խանե՝ 6 հատ, 11. Խօշապ՝ 8 հատ, 12. Շատախ՝ 10 հատ, 13. Կարճկան՝ 8 հատ, 14. Ալջավազ՝ 8 հատ, 15. Բերկրի՝ 10 հատ: Գաւառ. բաժին, Յուլիս 9:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 178, տպագիր օրինակ:

N 211
ՎԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ՌՈՒՄԱՍՏԱՆ ԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 223 *7 հուլիսի 1915 թ.*
Վան

Պ. Նահանգապետ հրամայած է յայտարարել մեզ, որ ամէն անոնք, որք կուգին Ռուսաստանի որևէ քաղաք մեծաքանակ կամ փոքրաքանակ դրամ փոխադրել, կրնան դիմել ուղղակի Նահանգապետին, դրամը յանձնել, որ պիտի վճարուի Ռուսական որևէ քաղաքի մեջ յանձնարարուած անձին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 105, պատճեն, ձեռագիր:

N 212

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ԱԲԴՈՒԼ ՌԻԶԱՅ ԲԵՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 1522 *7 հուլիսի 1915թ.*

Վան

Житель селения Чибухли езид Какэ Чатоян 6-го с. июля обратился ко мне с прошением следующего содержания.

Недавно отряд Абдул Ризай бея, придя в селение Чибухли, увел с собой Джангира Агу, брата просителя Шиваша, сына Чато, Рашо Мирзаяна и Шако Амояна. Джангир Ага вернулся, остальные же трое до сих пор не вернулись, почему их родственники и односельчане опасаются, как бы они не погибли понапрасну и безвинно и просят, чтобы от Абдул Ризай Бея было потребовано освобождение названных лиц.

Со своей стороны прошу Ваше превосходительство не отказать в зависящем распоряжении по данному делу.

Ванский губернатор
Секретарь

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.14, թ.164 և շրջ., թողոն, ձեռագիր:

N 213

Մ. ՏԻՆՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՁԲԱՂԵՑՐԱԾ ԻՐԵՆՑ ՏՈՒՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 հուլիսի 1915 թ.

Խնդրատու Միքայէլ Տինօյեան (Ջրբաշեան թաղ)
Վսեմ Նահանգապետ Վանի

Ջրբաշեան թաղին մէջ գտնուող սեպհական տուներնիս ասկէ 20 օր առաջ ռուս զինուորականների կողմէ իբրև բանտ որոշուած է ընել: Երկու եղբայրներիս պատկանող 15 անձերէ բաղկացած ընտանիքնիս մենակ մեկ սենեակ ունենալով, օդի և տեղի անձկութեան պատճառաւ հիւանդութեան ենթարկուած ու դուրս բակին մէջ մնալը պարտաւորուած ենք:

Այս դրութեան դիմանալու կարողութիւն չունենալով այլևս, ձեր գթասրտութեան դիմում անելով, յիշեալներու որոշումը ետ առնել տալու, և բանտի համար ուրիշ յարմար տեղ մը ընտրել տալու համար, հարկ եղած հրամաններ կը խնդրեմ:

*Յարգանօք՝ **Միքայէլ Տինօյեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 17, թ. 28, բնագիր, ձեռագիր:

N 214
ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ ԱՌՈՒՆԵՐՈՒՄ ԱՄԱՆԵՂԵՆ, ՍՊԻՏԱԿԵՂԵՆ ԼՎԱՆԱԼ ԱՐԳԵԼՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 233 *8 հուլիսի 1915 թ.*
Վան

Առողջապահական մարմնի հրահանգին համաձայն կը յայտարարենք, որ ասկէ ետք բացարձակապէս արգելուած է փողոցներէն անցնող առուներու մէջ ամանեղէններու, ճերմակեղէններու և իրեղէններու լուալը և այդ ջուրերը վերցուելով՝ տուներու մէջ գործածել, ինչպէս նաև աղբիւրները առուի մէջ թափիլը: Անսաստողները օրինական պատժուի կենթարկուին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 111, պատճեն, ձեռագիր:

N 215
Տ. ԱՄՊԱՏՈՒՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԵՐԿԱԹԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 2837 *8 հուլիսի 1915թ.*

Վսեմ Նահանգապետ Վանի

Ինչպէս յայտնի է, որ ես Քաղաքամէջ Միրզախանեան խանի մէջ ունէի խանութ, որ վառուած լինելով, մէջ գտնուած երկաթներս դուրս հանելով, աղբիւրի գլուխ՝ պօյախանի[178] մէջ ամբարած էի: Այժմ ռուսներ գրաւած են և ես կ'խնդրեմ, որ իմ երկաթի վաճառական լինելս քաղաքապետութեան միջոցաւ հաստատելու հրաման մը ընէք և յետ այնորիկ իմ ձեռքս արտօնագիր մը տալ բարեհաճէիք, որպէսզի ռուսներուն ցոյց տալով, կարող լինեմ իմ սեպհական երկաթներս վերցնել առանց արգելքի:

Յարգանօք՝

Տիգրան Ամպատուրեանց
Շատախցի

Մակագրութիւն 1. *Ի քննութիւն գործակատարին քաղաքապետարանի պ. Տիգրանին: 7/9 1915*
Մակագրութիւն 2. *Քննութիւն կատարելէ ետք, յիշեալ անձին երկաթի վաճառական ըլլալը կը հաստատեմ: Քաղաքապետարանի գ. Տիգրան Ս. 7/10 1915*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 27, բնագիր, ձեռագիր:

N 216

Հ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՎԱՆԻ ԸՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԱՐՁԵՇԻ ԳԱՎԱՌԻՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

8 հուլիսի 1915 թ.
Վան

Վարչութեանդ կարգադրութեամբ Յունիսի 19-ին Արճէշի գաւառն ուղեւորելով և մինչև յուլիսի 3 այնտեղ մնալով ու ծանօթանալով տեղի ազգաբնակութեան վիճակին ու գաւառի վարչական գործերին, սրանով պատիւ ունեմ ներկայացնելու իմ դիտողութիւններն այդ մասին:

Նախ և առաջ պէտք է ասեմ, որ Վանի վիլայէթում թիւրք կառավարութեան մեքենայած բարբարոսութիւններից ամենից շատ տուժող կազաներից մէկն է Արճէշինը: Առեղի են սրա կրած վնասները – թէ՛ մարդկային և թէ՛ գոյքային: Դրա գլխաւոր պատճառները, ըստիս, երկու են:

Ա. Որ հայ տարրն այստեղ, համեմատած թիւրքերի ու քրդերի հետ, մի փոքրամասնութիւն է կազմում: Կազայի[179] շուրջ 300 գիւղերից միայն 42-ում հայեր կան, այն էլ դրանից միայն 17-ը զուտ հայաբնակ, միջին թւով իւրաքանչիւրը 23 տնից բաղկացած, իսկ մնացած ճնշող մեծամասնութիւնը՝ քրդախառն և թիւրքախառն:

Բ. Որ Արճէշի կազայի հայերը չափազանց մեծ հաւատ են ունեցել դէպ իրենց գայմագամը, Ալի Ռիզա բէյը: Սա, թիւրք պաշտօնեային յատուկ իր խորամանկութեամբ, կարողացած է եղել այնպէս գրաւել, այնպէս խաբել գաւառի հայերին, որ սրանք բնաւ ենթադրել իսկ չէին կարող, թէ իրենց մօտ, երա՛ օրով, կարող է հայկական կոտորած լինել, թէև դէպքից 3-4 օր առաջ արդէն նրանց մէջ պտտում էր ջարդի յամառ շշուկը:

Շատ հմտութեամբ է այստեղ կազմուած եղել ջարդի ծրագիրը և հմտութեամբ էլ իրագործուած: Աղէտից փրկուածների միահամուռ վկայութեամբ այդ ծրագիրը բաղկացած է եղել 4 կէտերից.-

ա. Կոտորել հայութեան ամբողջ արական սեռը, սկսած պատանիներից մինչև գառամեալ ծերունիները.

բ. Այրիացած կանանց, աղջիկներին ու երեխաներին վերցնել և բաժանել իրենց մէջ.

գ. Բանալ դպրոցներ՝ հայ մանուկներին մահմեդական ոգով դաստիարակելու համար, և

դ. Կողոպտել, այրել և ոչնչացնել հայերի տնտեսութիւնը:

Մեծ յաջողութեամբ իրագործում են ծրագրի առաջին երկու և վերջին չորրորդ կէտը: Կոտորում են ամբողջ արական սեռը – վերոյիշեալ նպատակով խնայելով միայն մանկահասակ փոքրերին և կոտորում են ստոր տմարդութեամբ: Ամալիայի[180] պատճառով արդէն բոլոր հայ գիւղացի տղամարդիկ կառավարութեան ծանկերում էին գտնւում: Ապրիլի 7-ին

սրանց բոլորին, մէկիկ-մէկիկ խուզարկելուց յետոյ, բանտարկում են: Այն քաղաքացիները, որոնք ազատ էին ամալիայից, նոյն օրը գայմագամի անունից մէկ-մէկ կանչւում են ոստիկանատուն և ձերբակալւում: Ապրիլ 7-ի երեկոյեան սկսում է մի սոսկալի «քարտուղիմեան գիշեր» ամբողջ գաւառում: Խեղճ բանտարկեալներին մէկիկ-մէկիկ հանում են բանտերից, ձեռները յետևը կապում և խումբ-խումբ դէպ սպանդանոց առաջնորդում՝ զօրքի, ոստիկանների ու մարդասպանների վոհմակի վայրագ հսկողութեամբ: Անպաշտպան զոհերին սպանում և գետեզրեայ վայրերում նրանց դիակները գետն են ձգում՝ իրենց ոճիրը թագցնելու համար, իսկ շատերին էլ, այս կամ այն խուլ տեղերում սպանելուց յետոյ, աւազի տակ թաղում: Այդպիսի աւազածածկ մարդակոյտեր – թւով 6 հատ – տեսնելու դժբախտութիւնն ունեցայ ես՝ Ականցից դէպի Խարկէն և Օրօրան տանող ճանապարհների վրայ:

Տղամարդկանց կոտորելուց յետոյ, գազանացած քիւրտ ու թիւրք խուժանը, իրախուսւած կառավարական պաշտօնեաների ջերմ աջակցութիւնից, սկսում է յագուրդ տալ իր վայրենի բնազդներին: Կողոպտում, ոչնչացնում, հրդեհի ճարակ են դարձնում հայ գիւղերը, հայի տունն ու ստացուածքը: Առևանգում, տանում են նրանց անպաշտպան մնացած կանանց, քոյրերին, մայրերին ու որբերին և իրենց մէջ բաժանում, իրենց տներում պահում: Եւ մինչ դեռ, իրենց յաջողութիւններից արբեցած, կամենում են ծրագրի և՛ երրորդ կէտն ևս իրագործել, այն է՝ հայ մանուկներին դաստիարակութեան միջոցով մահմեդականացնել, լսում են ռուսաց բանակի և հայ կամաւորների մօտենալու սոսկալի լուրը: Ոգևորութիւնը փոխւում է մի յուսահատ վիատութեան: Հապճեպով վերցնում են հետները իրենց սեպհական և հայերից յափշտակած թանկարժէք իրերը, վերցնում են հայ գերիներից երիտասարդներին ու գեղեցիկներին և շարժւում՝ կամ դէպի երկրի խորքերը և կամ դէպի մերձակայ դժւարամատչելի լեռներն ու ձորերը, իրենց ճանապարհի վրայ աւերելով ու ոչնչացնելով ամեն ինչ:

Եւ գեղեցիկ Արճէշն ու իր գաւառը, որ կոտորածներից առաջ, իրենց հարստութեամբ և շէնութեամբ, Վանի վիլայէթի բոլոր կազաների մէջ առաջնակարգ տեղերից մէկն էին բռնում, այսօր նրանք աւերակ են, ամայի ու աղքատ: Հայաբնակ 42 գիւղերից միմիայն 5-ից է կենդանութեան ծուխ բարձրանում, միմիայն 5-ում բնակչութիւն կայ - Ականց կամ Արճէշ, Կտրած Քար, Խարկէն, Բլուրմակ և Օրօրան: Մնացած 37-ը բոլորովին ամայի են և անմարդաբնակ: Սրանց բնակիչներից կենդանի մնացածները ապաստանել են Արճէշում և մինչև այսօր այստեղ էլ մնում են:

Թէ որքան մեծ է եղել զուլումը Արճէշի գաւառում, դա երևում է հետևեալ վիճակագրական տախտակից[181], որ կազմւած է, անշուշտ, ոչ բոլորովին կատարեալ ճշտութեամբ:

Դժբախտաբար չկարողացանք մի քանի գիւղերի նկատմամբ լրացնել մեր բերած տախտակը, սակայն կարծում ենք, եղածն էլ բաւական է համոզելու, որ Արճէշի գաւառի շուրջ 9000 շունչ հայութիւնը տուել է 2251 սպանուած, 605 գերի և 58 զինտր: Եթէ զինտրներին և գերիներին ևս հաշուենք իրենց ընտանիքների և հայութեան համար մեռած – որ անկասկած է - այն ժամանակ կստանանք, որ Արճէշի գաւառի հայերի տուած մարդկային կորուստի, զոհերի թիւը 3000-ին մօտենում է:

Ոչ պակաս տխալի է նաև գաւառի հայութեան ստացուածքի, գոյքային կորստի պատկերը: Շատ գիւղեր ու շէնքեր աւերուած են այնպէս, որ նրանց վերաշինելը քայքայուած ժողովրդի ուժերից վեր է: Հայութիւնը կորցրել է - կարելի է առանց չափազանցելու ասել - ամեն ինչ, մանաւանդ ինչ որ արժէքաւոր է, պիտանի: Շատ-շատերը հազիւ հազ միայն իրենց գլուխն են ազատել, առանց մի որևէ բան իրենց հետ վերցնել կարողանալու: Աւերուած է նրանց ամբողջ տնտեսութիւնը: Աշխատող ձեռները, աշխատող տղամարդիկ շատ քիչ են: Ամբողջ գաւառում մնացել են ընդամենը – կլոր թուով – 250 աշխատունակ տղամարդ: Լծկանները, կթանն ու ոչխարը նոյնպէս շատ քիչ են: Մեր ձեռքի տակ եղած թուերը – թէև դարձեալ ոչ կատարեալ – ցոյց են տալիս, որ գաւառի հայութիւնը կոտորածից առաջ ունեցել է մօտաւորապէս 2858 լծկան, 2262 կթան և 8734 ոչխար: Իսկ այսօր այդ բոլորից միայն մի չնչին բան է մնում – 155 լծկան, 270 կթան և մօտ 100 ոչխար:

Երանի՜ գոնէ աղէտը դադանով վերջանար և իր կործանիչ հետևանքներով չը շարունակէր սպառել առանց այն էլ հիւծած ժողովրդին: Բայց նա տակաւին շարունակում է իր վնասակար գոյութիւնը և նորանոր դժբախտութիւններով տառապալից դարձնում քշւառների կեանքը: Անօթութիւնը, հիւանդութիւնները, մերկութիւնը, կարիքը, որոնք անմիջական ծնունդն են այդ աղէտի, ձեռք-ձեռքի տուած, գործում են անդադար, բազմաթիւ մարդկային զոհեր խլելով հարուածած հայ ընտանիքներից:

Ստեղծուած են այնպիսի պայմաններ, որ ժողովրդի մեծամասնութեան համար անտանելի են: Նա անկարող է մաքառել այդ զօրաւոր թշնամիների դէմ, որոնք նրա համար աւելի զօրեղ են, քան թիւրքն ու քիւրդը: Թիւրքից ազատուածը, քիւրդից ճողոպրածը սրա՛նց հարուածներից է ընկնում, խորտակւում:

Կարևոր եմ համարում արդյ վարչութիւնդ ուշադրութիւնը հրաւիրել հետևեալ մի քանի խոշոր հանգամանքների վրայ, որոնց վերացումով միայն հնարաւոր է փրկել տառապանքի ծովում խեղդուղ ժողովրդին:

1. Անօթութիւն.

Ճիշտ է, թէև Արճէշի գաւառը, ներկայումս ունեցած ցորենի պաշարով, ընդհանուր առմամբ այնքան էլ աննախանձելի վիճակի մէջ չէ, ինչպէս են գուցէ Վանի նահանգի միւս գաւառակներից շատերը, բայց այստեղ էլ ժողովրդի մեծամասնութիւնը քաղցած է, օրւայ հացի կարօտ: Արճէշում

կայ – կարելի է դրականապէս պնդել ցորենի ահագին պաշար, սակայն դժբախտաբար ո՛չ թէ ամբողջ ժողովրդի մէջ բաշխուած, այլ միայն այս կամ այն անհատի, զօրեղ, ճարպիկ անհատի ամբարներում թաղուած: Կան բազմաթիւ ընտանիքներ, որ ուտելու հաց չունեն, բայց կան ընտանիքներ էլ, որոնք 100-աւոր փթերով ցորեններ ունեն: Հենց միայն Արճէշ քաղաքում, որտեղ համախմբուած է գաւառի ամբողջ բնակչութեան 3/4-ը, հացի կարօտ ընտանիքների թիւ է 380, 2223 հոգով: Դժբախտաբար, շատ հնչին է տեղական կառավարութեան ցոյց տուած աջակցութիւնը նրանց: Մայիսի 31-ից մինչև Յունիսի 26-ը – ինչպէս երևում է քաղաքապետարանի հաշիւներից – 2537 հոգու ցորեն, ալիւր և հաց է տրուած ընդամենը 958 գ փութ, որ անում է մօտաւորապէս 15 ֆունտ իւրաքանչիւր անձին 26 օրուայ համար:

Դրա վրայ պէտք է աւելացնել մի հանգամանք ևս: Այդ այն է, որ մինչև վերջին ժամանակները ժողովուրդը հնարաւորութիւն չունէր ցորեն աղալու և հաց թխելու: Արճէշը և իր մերձակայ գիւղերն ունեն 12 ջրաղաց, որոնցից 8-ը գործօն վիճակի մէջ են, իսկ 4-ը՝ ոչ: Այդ ջրաղացները նորոգել և բանեցնել են սկսել հայերը, սակայն ռուս զօրքը գալիս և բոլորն էլ գրաւում է: Ժողովուրդը մնում է առանց ջրաղացի, չատերը երկանքով են ցորենն աղում, իսկ աւելի չատերն էլ ցորենը խաշում, «խաշիկ» են անում և ուտում: Մնացած կիսաւեր 4 ջրաղացները ժողովուրդը դժուարանում է վերաշինել 2 պատճառով.- ա. որ այդ ջրաղացները բանում են Հէդար բէյ կոչուած գետի ջրով, իսկ այդ գետի ջուրը ներկայումս շատ պակասել է, աւելացնելն էլ դժուար է և վտանգաւոր, որովհետև պիտի գնալ կապել քրդերի սահմաններից, բ. մտածում են, որ եթէ բանեցնեն, ռուսները դարձեալ կգան և կգրաւեն: Չմոռանամ ասել, որ յիշեալ 8 ջրաղացներից 2-ը, զօրքը քիչ լինելու պատճառով, այժմ ազատ են և ժողովուրդը օգտւում է նրանցից:

2. Հիւանդութիւններ.

Չափազանց տարածուած են ժողովրդի մէջ զանազան տարափոխիկ հիւանդութիւնները – տիֆը՝ ստամոքսային և բծաւոր՝ հասակաւորների մէջ, իսկ փորահարինքը, դիֆտերիտը և այլն - երեխաների մէջ: Դրա անհերքելի ապացոյցն է՝ մեռածների ու հիւանդների խոշոր քանակութիւնը: Մօտ մի ամսուայ ընթացքում, այն է՝ 1915 թ. Մայիսի 20-ից մինչև Յունիսի 24-ը, մեռել են 1067 հոգի, գլխաւորապէս երեխաներ, այն էլ դեռ չհաշուած այն մի քանի գիւղերը, որոնց մեռածների թիւը չկարողացանք իմանալ: Հիւանդների թիւը աւելի առկալի է: Յունիսի 20-ից – 24-ը եղած վիճակագրութեամբ, գաւառի հիւանդներն են 1180, չհաշուած ի հարկէ վերոյիշեալ գիւղերի հիւանդներին: Դա նշանակում է, որ տուն չկայ, ուր հիւանդ չլինի, այն էլ մէկից աւելի:

Հիւանդութիւնների ու մահացութիւնների գործած աւերմունքը բնական հետևանքն է այն դժոխային պայմանների, որոնց մէջ գաւառի

տանջած բնակչութիւնը քարշ է տալիս իր խղճուկ գոյութիւնը: Հարկաւոր է վերացնել, ոչընչացնել այդ պայմանները՝ ժողովրդին թևատարած իշխող հիւանդութիւնների ու մահաւան ճիրաններից փրկելու համար: Եւ դրանց վերացումը, ըստ իս, բնաւ անհնարին չէ:

Այդ պայմաններն են.-

ա. Անօթութիւն. Արդէն ասացի, որ Արճէշի գաւառի հայութեան խոշոր մասը անօթի է, քաղցած մէկ՝ ցորեն չունենալու պատճառով, մէկ էլ՝ ջրաղացներից օգտուել չկարողանալու և քխելու այլ յարմարութիւնները չունենալու պատճառով: Իսկ անօթութիւնը բոլոր հիւանդութիւնների ծնող ու սնուցանող մայրն է: Ժողովրդին քաղցի և հիւանդութիւնների ճանկերից ազատելու համար անհրաժեշտ է.- 1. Գրաւել մասնաւոր անհատների ամբարներում դիզած ահագին ցորենները, որ բալանի արդիւնք են, և հասարակական սեպհականութիւն դարձնել, 2. Միջնորդել զինւորական իշխանութեան առաջ՝ ջրաղացներից մի քանիսն ազատելու և ժողովրդին բողնելու համար, 3. Բանալ 2 կամ 3 փուռ՝ հասարակութեան համար հաց թխելու համար, ունևորներին հացը որոշած սակագնով վաճառելու, իսկ չունևորներին՝ ձրի տալու պայմանով:

բ. Բնակչութեան կուտակումն. կոտորածից յետոյ գաւառի ամբողջ բնակչութիւնը բողնում է իր գիւղը, իր տուն ու տեղը և Արճէշում ու նրան շատ մօտ գիւղերում ապաւինում: Այսօր գաւառի 42 գիւղերից միմիայն 5-ում բնակչութիւն կայ, իսկ մնացած 37-ը բոլորովին դատարկ են և անմարդաբնակ: Ահագին ժողովուրդ է համախմբուած մասնաւորապէս Արճէշ քաղաքում, մի տան մէջ, իրար վրայ թափուած, ապրում են յաճախ 3-4-5 ընտանիքներ: Այդ կուտակումը անհրաժեշտ հետևանք է նախ՝ գիւղերի աւերման և երկրորդ՝ վախի զգացման, վախ թիւրքից և քրդից, վախ ռուս զինւորների սանձարձակութիւններից:

Հիւանդութիւնների առաջն առնելու համար հարկաւոր է վերացնել այդ կուտակումը, իսկ դրա համար անհրաժեշտ է նախ՝ ապահովել ժողովրդի վերադարձը դէպի գիւղ՝ քրդերի յարձակումներից և երկրորդ՝ զինւորական բարձր իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրել զինւորների կարգապահութեան վրայ:

Քրդերը գտնւում են Արճէշից դէպի հիւսիս արևմուտք, 2-3 ժամ հեռաւորութեան վրայ, Ջիլանի Ձոր կոչւած տեղում: Տեղացիների ասելով, նրանց թիւը հասնում է մի քանի հազարի, որից մօտ 7-800-ը լաւ զինւած տղամարդիկ: Արճէշից դէպի հիւսիս գտնւած ամբողջ շրջանը, արևմուտքից արևելք, իր մէջ պարունակած բազմաթիւ հայկական գիւղերով, այդ քրդերի իշխանութեան և երկիւղի ներքոյ են գտնւում: Նրանք այնքան ուժեղ են, որ 2 անգամ կարողացել են յետ դարձնել իրենց հետապնդող ռուսական ջոկատները: Դեռ այդ բաւական չէ, Յունիսի 20-ի մօտերքը նրանք յարձակւում են ռուս զօրքի մի փոքրիկ աթոռի վրայ և կողոպտում, իրենց հետ տանելով նաև աթոռի ձիերը: Բնական է ուրեմն, որ այդ

կողմերի հայ գիւղացիները չեն կարող իրենց տեղերը վերադառնալ: Հարկաւոր է միջնորդել զինուորական իշխանութեան առաջ, խնդրելով նախ՝ ցրել քրդերի այդ բազմութիւնը, որով ապահովուած կլինեն թէ՛ ճանապարհները, թէ՛ հայ գիւղերի մի խոշոր մասը, և երկրորդ՝ Նորշէնի և Աղսրաֆի զինուրական էտապնի պունկտերը փոխադրել Բանոնի սարի վրայ, որտեղ տաճկական պունկտն էր գտնւում, դրանով էլ գաւառի այդ մասի հայ գիւղերը կապահովւեն քրդերից և այդ կողմերի հայերին հնարաւորութիւն կտրուի իրենց գիւղերը վերադառնալու:

գ. Բժշկական օգնութեան բացակայութիւն. Հիւանդութիւնների ծաւալման ու զարգացման գլխաւոր պատճառներից մէկն էլ բժշկական օգնութեան կատարեալ բացակայութիւնն է: Ամբողջ գաւառում, ուր հազարաւոր հիւանդներ ու մեռնողներ կան, չկայ մի հիւանդանոց, մի բժիշկ, մի ֆելդշեր... Գաւառի ժողովուրդն էլ, որքան կարողացայ ես նկատել, չափազանց տգէտ է և բնաւ հասկացողութիւն չունի հիւանդութիւնների ու առողջապահութեան մասին: Նա ոչ միայն նոյն իսկ ամենաստվորական հիւանդութեան դէմ մաքառել չգիտէ, այլ և չգիտէ հիւանդին խնամելու ամենատարրական պահանջները: Մաքրութիւն, զգուշութիւն ասած բանը գոյութիւն չունի այնտեղ: Դրա համար էլ հիւանդութիւնները, օրեցօր զարգանալով ու տարածելով, հսկայական նախճիր են գործում:

Հարկաւոր է անպայման ունենալ այնտեղ մի բժշկական պունկտ իր սննդատու կայանով միասին: Սրանք երկուսն էլ կարևոր են և անհրաժեշտ: Առաջինը՝ հիւանդներին մեկուսացնելու՝ իզօլե[182] անելու և բժշկական օգնութիւն հասցնելու համար, իսկ երկրորդը՝ հիւանդներին և կատարելապէս կարիքաւորներին սնունդ մատակարարելու համար, որովհետև նախ՝ չէ՞ որ դեղն առանց սննդի անզօր է, և երկրորդ՝ որ բոլոր հիւանդութիւնների ծնողն ու սնուցանողը սննդի պակասութիւնն է:

Գաւառի մի քանի կարիքների մասին խորհելու համար, յունիսի 24-ին Արճէշում հրաւիրեցի գաւառապետութեան ենթակայ բոլոր մարմիններից ընդհանուր ժողով, որին մասնակցում էին նաև Զեմստվոյական Միութեան տեղի սննդատու կայանի կառավարիչ պ. Մատթէոս Յովհաննիսեանը և գթութեան քոյր տիկ. Շուշ. Տէր-Գրիգորեանը: Ի միջի այլ խնդիրների, ժողովի քննութեան տրուեց գաւառում տարածած հիւանդութիւնների դէմ մաքառելու հարցը: Ժողովը որոշեց.- ա. հիմնել Արճէշում սննդատու կայան՝ գոնէ 300 հոգու տաք կերակուր մատակարարելու համար, բ. կայանին կից ունենալ բժշկական պունկտ կամ հիւանդանոց՝ հիւանդներին չէզոքացնելու և բժշկական օգնութիւն հասցնելու համար:

Ուրախութեամբ եմ արձանագրում, որ գաւառապետութիւնը յանձն առաւ հիմնելիք կայանների համար հարկաւոր հացն ու չէնքը տալ ձրիաբար, հասարակական միջոցներից, իսկ տիկ. Տէր-Գրիգորեանը – որը միակն է, որ կարողացածին չափ բժշկական օգնութիւն է հասցնում տեղի հիւանդներին – սիրով իր վրայ վերցրեց գործի կազմակերպութեան հոգսը

և կայանների ղեկավարութիւնը, բայց միայն այն պայմանով, որ Վանի «Եղբայրական Օգնութիւնը» ամսական գոնէ 200 րուբ. նպաստ տայ, ուղարկի մի բժիշկ կամ մի հմուտ ֆելդշեր և մի քանի օգնականներ:

Փակագծերի մէջ պարտք եմ համարում արգոյ վարչութեանդ զեկուցանելու, որ Վան վերադառնալուց անմիջապէս յետոյ, պատիւ ունեցայ այդ մասին զեկուցանելու «Եղբ. Օգնութեան» գեր. տէր Նախագահին, անդամներից մի քանիսին և բժ. պ. Օհանջանեանին: Նրանք սիրով ընդառաջ գնալով վերոյիշեալ ժողովի ոյշմանը և իմ առաջարկին, խոստացան իրենց աջակցութիւնը:

Այս բոլորից զատ, կկամենայի վարչութեանդ ուշադրութիւնը երաւիրել մի կենսական և խիստ կարևոր խնդրի վրայ ևս, դա ցորենի և առ հասարակ միւս բերքերի հաւաքման խնդիրն է:

Փաստ է, որ Արճէշ քաղաքի և գաւառի բնակչութեան գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւնն է. այգեգործութիւնը և խաշնարածութիւնը: Վերջնիս մասին խօսք լինել չի կարող, որովհետև գաւառում ոչխար չի մնացել: Ինչ վերաբերում է երկրագործութեան, մասնաւորապէս հացահատիկների մշակութեան, պէտք է ասեմ, որ Արճէշի գաւառը յիրաւի արժանի է, Ալջավազի հետ միասին, Վանի շտեմարան կոչելու: Հողը շատ է, ջուրը՝ առատ, բերքը՝ գերազանց: Մասնաւորապէս այս տարի թէ ցանքն է շատ և թէ բերքը յաջող, նամանաւանդ Արճէշ քաղաքից դէպի հիւսիս և արևմուտք ընկած շրջանում:

Իրերի ներկայ դրութեամբ, եթէ անհատական ոյժերին թողնւի խոտի, ցորենի և միւս հացահատիկների հաւաքման հոգսը, ոչ միայն շատ արօտներ, շատ արտեր, այլ և շատ գիւղերի բոլոր ցանքերը պիտի մնան առանց հաւաքելու, որովհետև, ո՛չ հարկաւոր չափով աշխատող ձեռներ կան, ո՛չ գործիքներ, ո՛չ լծկաններ, ո՛չ էլ սայլեր: Ո՛ր տունն աշխատող ձեռներ շատ ունի, որ տունը լծկաններ ու սայլեր ունի, ո՛ր գիւղն ապահով է, նրանք կապահովւեն ծմեռայ սովից, իսկ մեծամասնութիւնը, որ զրկւած է այդ ամենից, պիտի մեռնի քաղցից:

Այդ յոյժ կարևոր խնդիրն ևս կրկնակի քննութեան ենթարկելով – նախ՝ գաւառապետութեան բոլոր մարմինների ընդհանուր ժողովում և ապա՝ հասարակական մի բաւական բազմամարդ ժողովում – որոշւեց ինչպէս խոտի, այնպէս էլ հացահատիկների հաւաքման գործը դնել ոչ թէ անհատական, այլ համայնական հիմունքների վրայ: Դրա համար ընտրւեց մի յատուկ յանձնախումբ, նախագահութեամբ պ. գաւառապետի, որ պէտք է ցուցակագրի աշխատանքի ընդունակ տղամարդկանց և կանանց, նրանց ունեցած լծկանները, գործիքներն ու սայլերը և հսկի աշխատանքների կատարմանը:

Բացի դրանից, յանուն գործի յաջողութեան, կխնդրէի, եթէ հնարաւոր է, ջանալ անպայման ուղարկել Արճէշի գաւառը գէթ 100-ի չափ բանւորներ, հնձելու, կալսելու և այլ գիւղատնտեսական մեքենաներ, լծկաններ ու

սայլեր, որովհետև, ինչպես արդէն յիշեցի, դրանց կարիքն այնտեղ չափազանց մեծ է: Իսկ որ ամենից կարևորն է, պիտի ուղարկել նաև 15-20 զինուած մարդիկ, որոնց պաշտպանութեան ներքոյ կարողանային քրդերի բնակուած սահմաններին մօտ գտնուած գիւղացիները գնալ և իրենց ցանքերը ժողովել: Հակառակ դէպքում, նրանց արտերը պիտի մնան անքաղ և ձմեռը պիտի լինի նրանց համար սոսկալի:

Ինչ վերաբերում է այգիների բերքին, պէտք է ասել, որ այս տարի խաղողն ևս չափազանց առատ է - բէպէտ ընդհակառակը, միւս պտուղները շատ սակաւ են: Սակայն հարց է, խաղողը կհասնի՞, թէ ոչ, որովհետև բոլոր այգիները էլ ջրւում են Հէյդար-Բէյ գետի ջրով, իսկ – ինչպես արդէն ասացի- այդ գետի ջուրն այնքան նւազ է, որ ջրել նրանով այգիները չի կարելի: Ջուրը հնարաւոր է աւելացնել, եթէ բաւականաչափ զինուած մարդիկ գնան կապելու: Հակառակ դէպքում, բոլոր այգիները պիտի չորանան, հազարաւոր ոսկիների վնաս պատճառելով ժողովրդին: Ուրեմն, զինուած մարդկանց առաքումը անհրաժեշտ է և՛ այդ տեսակէտից:

Գալով գաւառի վարչական գործերին, ցաւ ի սիրտ պիտի խոստովանեմ, որ դրութիւնը մխիթարական չէ: Ճիշտ է, թէև գաւառական վարչութիւնը, ըստ երևոյթին ունի այն բոլոր ենթահիմնարկութիւնները – թէև երբեմն ոչ կատարեալ կազմով – ոստիկանութիւն, դատարան, տնտեսական խորհուրդ, քաղաքապետութիւն և զապթիա-մէմարիութիւն[183], որոնք անհրաժեշտ բաղկացուցիչ մասերն են կազմում, տաճկական գաւառապետութիւն՝ ասւած հիմնարկութեանը, բայց միայն ըստ երևոյթին: Ներքին պատկերը աննախանձելի է, որովհետև.-

1. Նրանցից և ոչ մէկի համար որոշ չէ իր պարտաւորութիւնների և իրաւասութեան սահմանը: Ոչ ոք չգիտէ, ինչ պէտք է անել և ինչ՝ ոչ: Նրանք չունեն որևէ հրահանգ ոչ պաշտօնի հրաւիրող գաւառապետի կողմից, ոչ էլ շրջանային վարչութեան: Բնագրն ու բոպէական տրամադրութիւնն են նրանց ղեկավարը:

2. Հաշվապահութիւնը և ծախսարարութիւնը տարւած են այսպէս, որ ամեն տեսակ գեղծումներ ու գաղտումներ[184] հնարաւոր են: Օրինակ, ցորեն է ստացւում, բայց մատեաններում մուտք չի գրւում, ցորեն են բաժանում, սակայն առանց բաշխւած ցորենի քանակի ճշտութիւնը վաւերացնելու, ծախսերը չունեն արդարացուցիչ փաստաթղթեր, ստացւած տուգանքների և այլ դրամների համար ստացական չի տրւում և այլն:

3. Գործավարութիւն ասած բանը գոյութիւն չունի, ոչ արձանագրութիւնների մատեան ունեն, ոչ ելեալ ու մտեալ թղթերի, ոչ շրջաբերական տոմար:

Արճէշի գաւառապետութեան մասին ունեցածս այդօրինակ դիտողութիւնները (16 կէտից բաղկացած) յունիս 24 գրութեամբ յայտնել եմ պ. գաւառապետին: Եվ որովհետև այդ գրութեանս վաւերացւած պատճէնը

ներկայացած է արգոյ վարչութեանդ, ուստի այստեղ նոյնը երկրորդելն աւելորդ եմ համարում:

Մասնաւորելով խօսքս գաւառապետ պ. Ժամագործեանի մասին, պէտք է ասեմ, որ նա - ինչպէս և նրան ենթակայ բոլոր մարմինները, բացի մասամբ տնտեսական խորհրդից – իր տեղում չէ: Ոչ նա, ոչ էլ իր պաշտօնեաները ժողովրդի մէջ հեղինակութիւն չեն վայելում: Նոյն իսկ ոստիկանները յաճախ չեն լսում գաւառապետին և նրա հրամանները թողնում են անկատար:

Այդ ցաւալի երևոյթի պատճառներն են.-

1. Գաւառապետը բնաւորութեամբ թոյլ և շատ երկայնամիտ անձնաւորութիւն լինելով, լսում և համակերպւում է, երբ այս կամ այն մարդը, այս կամ այն պաշտօնեան իրեն չի հնազանդում: Օրինակ, քաղաքը աղբի մէջ թաւալած էր, նա ուզում է տներն ու փողոցները մաքրել, բայց չի կարողանում, որովհետև ոչ ոք նրան չի լսում:

2. Նա գործի մէջ դանդաղ է և նախաձեռնութեան ոգուց զուրկ: Օր., տաճիկ կառավարութեան ցորենի, ալիւրի և աղի ամբարները փոխանակ իսկոյն մի այլ տեղ փոխադրելու և հասարակական դարձնելու, ձգձգում է այնքան, որ ռուս զօրքը գալիս և գրաւում է: Այսօր ժողովուրդը մնացել է առանց հացի, առանց ալիւրի և առանց աղի - այդ բառի բուն նշանակութեամբ:

3. Գաւառապետն անզօր է ռուս զինուորականների ոտնձգութիւնների առաջն առնելու, որով և վարկաբեկում է իրեն: Օր. գալիս գրաւում են մասնաւոր ցորենների ամբարները, զինուորները հանում-տանում են սրա-նրա տան դռները, լուսամուտների փայտերը, իսկ նա չի կարողանում դրանց առաջն առնել:

4. Պաշտօնի մէջ պահում և հովանաւորում է այնպիսի մարդկանց, որոնք ժողովրդի մէջ վայելում են թալանչիի համբաւ: Ամբողջ ոստիկանութիւնը այդպիսի արատաւորուած մարդկանցից է բաղկացած:

5. Իր գիտութեամբ և ներկայութեամբ մի խումբ մարդիկ բաժանել են մօտ 350 լիրայի թալան, մի բաժին նաև նրան հանելով:

6. Ժողովրդի մէջ յամառ կերպով խօսւում է, որ գաւառապետը ինչ որ ցորեններ և այլ իրեր է գաղել, որպիսի հանգամանքը քննելու իրաւունք չէր տրուած ինձ:

7.Նա անձնաւոր է գործավարութեան ծախսարարութեան և հաշուպահութեան ընդունուած ձևերին և ուրեմն անկարող է ուղղութիւն տալ իրեն ենթակայ մարմինների այդօրինակ գործունէութեանը:

8.Չգիտէ ռուսաց լեզուն, որ Արճէշի գաւառապետի համար առաջնակարգ կարևորութիւն ունի, որովհետև Արճէշը, գտնելով գլխաւոր ճանապարհի վրա, գաւառապետը ամեն րոպէ գործ պիտի ունենայ ռուսական զինուորական իշխանութեան հետ:

Այս բոլորից յետոյ, գաւառի վիճակի և վարչական գործերի ծանօթութիւնն ինձ իրաւունք է տալիս հետևեալ առաջարկութիւնն անելու.- Յանկալի գործունէութեան և ժողովրդի աչքում կառավարութեան վարկը բարձր պահելու տեսակէտից անհրաժեշտ է փոխել Արճէշի ամբողջ գաւառապետութիւնը, սկսած գաւառապետից մինչև վերջին ոստիկանը:

Յ. Տէր-Յակոբեանց

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թթ. 11-16, բնագիր, ձեռագիր:

N	Գիտ.	Տարեթ	Ասրմնեան			Գիտ.	Մեռած			Մնում են			Ձերբակ.	Պատճ. մէջ	Հիւանդ	Աշխատ. տրամ.
			տղամարդ	իգական	ընդամ.		տղամարդ	իգական	ընդամ.	տղամարդ	իգական	ընդամ.				
1.	Խոչիկեան, գոտ. հայ.	12	7	1	8	16	6	7	13	36	41	77	-	-	19	11
2.	Եռանեան, քրոջ ընտ.	73	105	3	108	8	15	7	22	152	295	447	11	2	64	40
3.	Պետրոս գոտ. հայ.	44	53	2	55	29	36	29	65	55	52	107	5	1	28	15
4.	Կասեանց, գոտ. հայ.	25	40	2	42	17	9	14	23	61	108	169	1	3	24	22
5.	Գիմնազիայի վանք. գ.հայ.	1	-	-	-	-	1	-	1	7	7	14	-	1	1	1
6.	Պիտեն, գոտ.հայ.	9	13	-	13	6	4	1	5	13	30	43	2	4	3	5
7.	Մոլէ. քրոջից.	7	17	-	17	13	-	-	-	34	43	77	-	-	4	2
8.	Ընտան. գ.հ.	52	129	3	132	36	40	52	2	168	358	26	2	23	67	7
9.	Հայիմեր, գոտ. հայ.	14	87	22	109	20	6	8	14	151	122	273	1	-	9	27
10.	Տեսիլեան, գոտ.հայ.	38	113	16	129	39	65	71	136	40	201	241	4	3	78	10
11.	Արծուիկ վանք, գոտ.հայ.	5	18	1	19	3	11	10	1	4	17	21	1	4	7	1
12.	Մատրակեաց գոտ.հայ.	9	14	-	14	1	5	2	7	8	41	50	3	-	11	-
13.	Ծործոռ, գոտ.հայ.	26	24	3	27	6	10	10	20	80	80	160	1	2	30	14
14.	Լուսիկոն, գոտ.հայ.	20	20	-	20	8	9	7	16	49	58	107	2	3	21	18
15.	Գաղութ քար. քրոջ.հայ.	28	37	2	39	2	5	5	10	46	95	141	5	-	16	11
16	Խորհրդ. քար. վարչ.	7	8	-	8	-	1	-	1	18	18	36	-	-	4	7
17.	Փոխադրվ. քար. վարչ.	4	12	2	14	12	-	-	-	4	4	8	1	-	-	1
18.	Սիմեոնի քար. վարչ	1	9	1	10	4	-	-	-	1	3	4	-	-	-	-
19.	Ամարաց քար. վարչ.	4	21	3	24	7	2	1	3	19	34	53	-	-	-	-
20.	Ընտան. քար. վարչ.	2	2	1	3	1	2	-	2	8	11	19	-	-	7	4

21.	Մանատո, բրդախառ	19	43	13	56	58	1	2	3	12	32	44	2	-	-	-
22.	Հասանփնդակ, խառն	20	49	6	55	18	8	9	17	27	72	97	1	2	37	3
23.	Ազրակ, բրդ. մաքուր.	7	14	2	16	3	6	2	8	15	19	34	-	-	3	-
24.	Գույկո, բրդ. մաքուր.	2	6	1	7	1	2	1	3	9	8	17	-	-	1	-
25.	Խարկէն բրդախառն	28	57	14	71	10	5	5	10	71	86	157	-	3	26	2
26.	Արփ, բրդախ. մաքուր.	2	6	1	7	5	-	1	1	5	9	14	-	-	4	2
27.	Իրիշատ, բրդախառն	28	73	25	98	3	10	17	27	100	144	244	-	2	11	14
28.	Յարութիւն, զուտ.հայ.	13	48	15	63	14	10	6	16	16	50	66	1	1	6	-
29.	Նէր.-Կօզ, բրդ.մաքուր.	6	16	4	20	32	-	3	3	6	5	11	-	-	2	-
30.	Վեր.-Կօզ, բրդ.մաքուր.	4	8	8	16	8	-	-	-	-	-	8		-	-	-
31.	Փայ, բրդախառն	5	19	3	22	9	1	-	1	3	7	10	-	-	-	2
32.	Չիպլուշէն, բրդ.մաքուր.	4	15	12	27	5	4	1	5	5	6	11	1	-	-	2
33.	Ինճասու, բրդ. մաքուր.	4	16	18	34	7	-	-	-	-	-	-	-	-	-	-
34.	Արծուաքեր փոքր, բրդ.	14	21	1	22	2	4	5	9	15	41	56	1	-	12	3
35.	Չախրքէհ, բրդախառ.	5	22	9	31	14	6	3	9	8	22	30	-	-	3	-
36.	Կրասզամ, զուտ.հայ.	30	59	-	59	19										
37.	Կօզեր, զուտ.հայ.	50	116	-	116	51										
38.	Մեծոքայ Կանք., զուտ.հայ.	39	61	12	73	21										
39.	Բլուրձուկ, բրդախառ.	71	151	12	163	22			30						110	
40.	Օրօրան, բրդախառ.	36	72	-	72	38										
41.	Խանձոն, զուտ.հայ.	22	23	2	25	2	18	19	37	74	100	174	3	-	4	15
42.	Ալաճա, խառն	202	413	-	413	5	354	113	467	469	885	1347	10	-	556	10
	Ընդամենը	1046	2031	220	2251	605	656	411	1067	1789	3104	5270	58	54	1180	251

N3120 *8 հուլիսի 1915 թ.*
Վան

Նորին Գերազանցութեան Վանի շրջանի պ. Նահանգապետին
Յայտարարութիւն

Համաձայն Ձերդ գերազանցութեան սոյն տարեայ յուլիսի 1-ի N1358 գրութեան, որով նշանակել էիք ինձ Վան քաղաքի քաղաքապետարանի, ոստիկանութեան և տնտեսական մարմնի վերահսկիչ, ստանձնեցի պաշտօնս: Յուլիսի 1-ից մինչև 8-ը վերահսկողութեան, քննութեան եմ ենթարկել յիշեալ մարմինները, մօտաւորապէս ծանօթացել եմ նրանց ցայսօր ունեցած գործունէութեան հետ, շրջել եմ մենակ և ոստիկանապետի օգնականի հետ քաղաքիս ոստիկանատները, շուկաները, սպանդանոցները երեք անգամ:

Կատարածս վերահսկողութեան արդիւնք դիտողութիւնները պարտք եմ համարում սոյն գրութեան հետ Ձերդ գերազանցութեան ներկայացնել:

Վերահսկիչ՝ Իսահակ Տէր-Հազարեան

1. Ընդհանուր դիտողություններ

Վերահսկողութեան ենթարկելիք մարմինների գործունէութեան հետ ծանօթանալուս ժամանակ ես այն դիտումով եմ առաջնորդել, որ Վանի շրջանային վարչութիւնը իւր ստորադաս-աջակից մարմիններով նոր է կազմակերպւում, որ այդ մարմինները ծնունդ են առել ու գործում են շատ բացառիկ պայմաններում, որ պատրաստուած, հմուտ պաշտօնեաների մեծ կարիք կայ, որ գործն օրէցօր մեծանում, բարդանում է, որ պատերազմի արհաւիրքներն այս երկրում կրկնապատիկ են և ժողովրդին օգնելու, նրան հանգստացնելու, կեանքին բնական ընթացք տալու պայմանները աւելի քան բացառիկ են:

Յիշեալ պայմանները ստիպելու են բոլոր հիմնարկութիւնների ծառայողներին հարկաւոր զգուշաւորութիւնը ներկայ կացութեան հանդէպ, ազնութիւն և բարեխղճութիւն, բացի այդ բացառիկ պայմանների առաջադրած պահանջներին նեպաստաւորութեան չափ բաւարարելու համար կրկնապատիկ աշխատասիրութիւն:

Իւրաքանչիւր նորակազմ մարմնի պատասխանատու պաշտօնեան պիտի լինի ստեղծագործող, ձեռներեց անձն, որ կարողանայ, դեռևս առանց որոշ հաստատուած օրէնքի, հրահանգի, աշխատող մարմնի թէ գործունէութեան սահմանները կանոնաւորել և թէ առաւել ևս բնմնաւոր դարձնել այդ մարմնի գործունէութիւնը: Այդ մարմինների նախագահների վրայ պիտի ծանրանայ ըստ իս նաև իրենց ենթակայ պաշտօնեաներին

տօնի համար, ներշնչել նրանց իրենց պաշտօնի և ներկայ բացառիկ դրութեան լրջութիւնը և նրանց ևս ընդհանուր կազմակերպչական գործին աջակից դարձնել:

Վերոյիշեալ նկատումներով առաջնորդուելով, վերահսկողութեան եմ ենթարկել յիշեալ մարմինները և ընդհանրապէս նկատել հետևեալ պակասները:

Նախ յիշեալ երեք մարմիններն էլ ծնունդ են առել և գործունէութեան կոչուել առանց իրենց գործունէութեան համար ունենալու որոշ և մշակուած օրէնագիծ և իմանալու, թէ ի՞նչ իրաւասութեան և պարտականութեան սահմաններ ունին: Մարմինների բոլոր պաշտօնեաներն այժմ էլ չգիտեն, թէ ամէն մէկը ի՞նչ իրաւասութեան տէր է, ի՞նչ գործեր, ի՞նչ չափերով իրեն ենթակայ է, իրեն կից և իրենից բարձր իշխանութեան հետ ի՞նչ յարաբերութիւն է ունենալու:

Երկրորդ.- Գործունէութեան համար որոշ օրինագիծ չլինելը պատճառ է դարձել, որ այդ մարմինները համաձայն իրենց նախագահների կամ միւս պաշտօնեաների անձնական հասկացողութեան այնպիսի գործեր վճռեն և քննութեան ենթարկեն, որ աւելի շատ այլ մարմինների իրաւասութեան տակ են, ուստի և գործերի խճողում է առաջացել:

Երրորդ.- այս խճողման հետևանքն եղել է այն, որ մարմիններից մէկը իր գործունէութիւնը չափազանց ընդլայնել է ի հաշիւ միւսի (Տնտեսական մարմինը), երկրորդը գրեթէ չէզոքացել է (Քաղաքապետարան), երրորդը դարձել է առաջին երկուսի և մնացեալ մարմինների գործակատար և իր բուն գործունէութիւնը գրեթէ թողել է (Ոստիկանութիւն):

Չորրորդ.- Թէև նահանգապետութիւնից հրահանգուած է եղել առայժմ վարուել օսմանեան օրէնքներով, որոշ յապաւումներով ու փոփոխութիւններով, բայց որովհետև այդ մարմինների պաշտօնեաներն իրենք յաճախ լաւ ծանօթ չեն եղել այդ օրէնքներին կամ տաճկական օրէնքը ներկայ դրութեան անհամապատասխան է եղել, ուստի այդ մարմինների կատարած գործողութիւնների մէջ առաւելապէս անձնական տրամադրութիւն-հասկացողութիւն է իշխել և առաջացել է քաօսային վիճակ:

Հինգերորդ.- Մարմիններում պաշտօնավարողները ընդհանրապէս (բացառութիւններ կան) աւելի շատ կարծես մարմնի մէջ որոշ ժամերում ներկայ գտնելու պարտականութեամբ և ռոճիկ ստանալու իրաւունքով ծանրաբեռնուած անձինք են: Այն սրտացաւութիւնն ու անձնազոհութիւնը, որ յատկապէս ներկայ բացառիկ պայմանները պահանջում են, պաշտօնեաներից շատերի մէջ չկան:

Վեցերորդ.- Մարմինների նախագահներն մեծ մասամբ հարկաւոր խստութեամբ աչալուրջ հսկողութիւն չեն ունեցել պաշտօնեաների գործունէութեան ճշտապահութեան վրայ: Մանաւանդ անկանոն է պահուել մարմնի դիւանը: Պաշտօնէի ուշ կամ շուտ գործի գալը, գործը ժամանակին կատարելը կամ ուշացնելը կանոնաւոր գնահատութեան չի արժա-

նացել: Եթէ պաշտօնեաները ցայսօր էլ չեն կարողացել որոշել իրենց աճելիքի սահմանները, դրա պատասխանատուն մասամբ մարմնի նախագահն է:

Եօթներորդ.- Գրեթէ բոլոր մարմիններում էլ իշխողը թղթեր գրել-ստանալն է, քան գրածները աշխատել իրագործելը: Առհասարակ մարմինները միջոցներ չեն ձեռք առնում յանուն ամենախիստ պատժի, տուգանքի, իրենց արած որոշումները իրագործելու, ուստի և հասարակութիւնը կարծես սովորել է լսել սպառնալիքի և չհաւատալ, որ այդ սպառնալիքը կկատարուի:

Կան և այլ երկրորդական պակասներ, որոնց համար առտեղ հարկաւոր նկատողութիւնն եմ արել և որոնք յատուկ են առանց բացառութեան եղող մէն մի մարմնի:

Ըստ երևոյթին այսպիսի բացառիկ ժամանակներում և պայմաններում գործող մարմինների առաջ այսպիսի պահանջներ դնելը տեղին չէ, սակայն ըստ իս հէնց այդ բացառիկ պայմաններն են, որ ստիպում են պահանջել՝ նոյն ծնուած հիմնարկութիւնը լաւ հիմքերի վրայ դնել հէնց սկզբից, ապագայ բարդութիւններին առաջն առնելու:

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ կարևոր եմ համարում առանձնապէս լուսաբանութեան համար յիշեալ մարմինների գործունէութիւնից մի քանի օրինակներ բերելու:

2. Քաղաքապետարան

Մանրամասն ծանօթանալ քաղաքապետարանի գործունէութեան հետ դժուար է, որովհետև քաղաքային վարչութիւնը իր ժողովների արձանագրութիւնների մատեան չի պահել, ունի միայն վարչական որոշումների տոմար, որից երևում է, թէ վարչութիւնը սակաւոյնից աւելի վաճառողներին տուգանքի է ենթարկել և գանձել, թէև ոչ բոլորը չհնազանդ խանութներից և տներից տուրքեր է ստացել, ունի իր ճարտարապետը, որը յատկապէս նոր շինուող տներից և խանութներից առնելիք տուրքն է որոշում: Գործունէութեան երկու ամսուայ պատկերը ցոյց է տալիս, որ քաղաքային վարչութիւնը գրեթէ առաւելապէս տուգանքների և քաղաքին պատկանող ծառերի վաճառումով է զբաղել, վերջերս միայն սկսել են ուշք դարձնել քաղաքի բարեզարդութեան վրայ՝ ճանապարհներ հարթել տալ, կամուրջներ շինել տալ և այլն: Վարչութիւնն ինքնիլ խոստովանում է, որ աճելիք այժմ քիչ ունի, որովհետև եկամուտները պակասել են, եղածներին էլ իրենց իշխանութիւնից հանել են, իսկ առանց դրամի ոչինչ անել չի կարելի:

Սոյն դրութեան կցում եմ քաղաքի կալուածների ցուցակը, կազմուած 4-ն յուլիսի 1915 թ. և տաճկական օրէնքով յօգուտ քաղաքի առնելիք տուրքերի ցուցակը, կազմուած 3-ն յուլիսի 1915 թ.: Այս ցուցակներից կերևում է, որ քաղաքապետարանի մուտքը բաւական մեծ կլինի, եթէ քէ տուրքերի գանձումը կանոնաւոր լինի և թէ եղած կալուածների շահագործումը վերսկսելու միջոցներ ձեռք առնուին:

Քաղաքապետարանը մայիսի 8-ից մինչև յունիսի վերջը մուտք ունեցել է 42,359 ղրշ., որպիսի գումարը գանձել է սպանդանոցների շէնքերի, խանութների տուրքերից, Քէշիշ Գեօլ, Մխկա և Տօնիա լճերի ջրերի վաճառումից, ծառերի վաճառումից, տուգանքներից և այլն: Ծախք նոյնքան ժամանակամիջոցում եղել է 6837 ղրշ.: Ծախքեր եղել են. 1. դիակներ վերցնող բանւորների, 2. դիւանական ծախքերի, 3. չքաւոր մարդկանց թաղելու պատանի, 4. ծառերը գնահատելու համար վարչութեան երկու անգամ այցելել են 390 ղրշ. (տե՛ս օրական գումար եւ մտից յունիսի 6, N 12), նոյնպիսի նպատակի 60 ղրշ. (տե՛ս յունիսի 9, N13), 5. փողոցները մաքրող բանւորների, 6. դիակներ թաղելու և անկարգ փողոցները նայելու, կառքի վարձ 132 ղրշ. (տե՛ս 26-ն յունիսի, N33): Քաղաքապետարանը իր գործունէութիւնը կանոնաւորելու համար այս տարուայ յունիսի 25-ին N 124 գրութեամբ նահանգային վարչութեան իր գործունէութեան մի կանոնագիր է ներկայացրել, բայց քաղաքապետարանի մինչև այժմ կատարածի և կանոնագրի արտագծածի մէջ մեծ տարբերութիւն կայ:

Ըստ իս քաղաքապետարանը ամբողջ քաղաքի բարեզարդութեան, կանոնաւորման պատասխանատու է, պիտի ունենայ Եւրոպական քաղաքի կազմակերպութիւն մօտաւորապէս, ուստի անհրաժեշտ է վերակազմել այդ մարմինը հիմնաւորապէս, յատկապէս քաղաքի ֆինանսները կանոնաւորել, մուտքի աղբիւրները աւելացնել, կազմել յատուկ յանձնախումբ այդ նպատակի համար, վարչութեան ենթակայ:

Քաղաքապետարանն ունի ճարտարապետ և երկրաչափ, ըստ իս վերջինս հնարաւորութիւն ունի կատարելու նաև առաջինի պաշտօնը, որովհետև այդ պաշտօնէի կատարածը քիչ բան է և պատասխանատու էլ չէ:

Քաղաքապետարանն ունի նա 5 գործակատարներ, որոնք ոստիկանների պաշտօն են կատարում, ըստ իս այսից էլ կարելի է կրճատել, որովհետև ոստիկանատունը կարող է տրամադրելի անել ոստիկաններ, մանաւանդ, եթէ այժմ մի քանի ոստիկաններ աւելացնեն, ընդհանրապէս պէտք է ուժեղացնել թէ պաշտօնեաների և թէ մանաւանդ էլ և մուտքի հսկողութիւնը:

3. Տնտեսական մարմին

Յայսօր տնտեսական մարմինը ժողովներ չի ունեցել: Նախագահը իր բարեհայեցողութեամբ վճռել է գործերը իր պատասխանատուութեամբ: Այս մարմինն նա չունի օրինագիծ և կառավարում է իր անդամների, առաւելապէս նախագահի հրահանգներով: Մարմինը 9-ն մայիսի այս տարի, նահանգային վարչութեան գրած մի թղթով յայտնում է, որ իր գործունէութիւնը պիտի լինի. 1. կեդրոնացնել Վանի շրջանի եկամուտները և նորեր ստեղծել, 2. կեդրոնացնել շրջանի արմտիքի և զանազան ուտելեղէնների եկամուտը:

Եկամուտները կազմում են. 1. բոլոր մարմիններին տրուղ պաշտօնական խնդրագրերի, կապալի, մուրհակի և պայմանագրութիւնների թղթերի եկամուտները, այդ թղթերի գներն են 8-80 կ., 2. լքուած արտերի, ծառերի, ատաղձի վաճառք, 3. տասանորդի եկամուտ 100-ին 12 ½: Առաջներում վաճառելի ծառերի գները որոշելու համար յատուկ պաշտօնեաներ են վարձել, ցուցակներ կազմել տուել, 8-10 օր աշխատել են, մօտ 1000 դրդ. վարձ ստացել, բայց այդ աշխատանքն ապարդիւն է անցել:

Գանձապահի մօտ գտնուղ դրամարկղի մատեանից հանում եմ հետևեալը նմուշի համար:

Մուտք.

N 45 պ. Արմենակ Եկարեանէ լքուած տան մը վարձ	-108 դրդ.
N 39 112 գերանի արժէք Հովնանեան եղբայրներէ	-540 դրդ.
N 50 37 բարդիներու	-1080 դրդ.
N 52 Խաչիկ Գասպարեանէն այգիի մը վարձք	- 60 ռ.
N 46 Աթծրուն Միրզախանեանին հերկելու արտօնագիր	- 20 ռ.

Ելք.

Մայիսի 14. 300 խնդրագրերի ծախող չէք	- 7ռ. 50կ
" պ. Տէր Յակոբեանի միջոցաւ գրական պիտոյք	-133 դրդ. 25
" երկուկէս էօզմէ[185] քուղք	-85 դրդ.
Մայիսի 23	
" պ. Տէր Յակովբեանին գրական պիտոյից արժէք	-139 դրդ. 25
" Ղևոնդ Շարճեանին նոյնպիսի բանի համար	-262 դրդ.
" " " "	- 70 դրդ.
Մայիսի 28	
" Արշաւիր Քանանեանին 12 օրավարձ հիւանդութեան	- 225 դրդ.
" Գաբրիէլ Թորգոմեանին 2 օրուայ վարձ քննչութեան	- 180 դրդ.

և այլն:

Թէ ելքի, թէ մուտքի մասերում չեն նշանակուած, թէ ի՞նչ պատշաճ ստացագրերով են տրուած թղթերը, համապատասխան թղթերը պահում են առանձին և այն էլ ոչ որոշ համարների տակ և ոչ կանոնաւոր:

Առհասարակ այս մարմնում ևս դիւանական մասն անկանոն է, մատեանները կանոնաւոր չեն, թղթերը ցրուած են զանազան պաշտօնեաների մօտ:

Այս մարմնի մէջ ամենադժուար հարցը ածուրդների վաճառքի հարցն է, թէև ածուրդները որոշելու համար կայ յատուկ մարմին, որի անդամներից են պ.պ. քաղաքապետը և երկրագործական մարմնի նախագահը, սակայն վերջիններս ածուրդների ժամերին հնարաւորութիւն չեն ունենում ներկայ լինելու: Իրենք իսկ՝ վարչութեան անդամներն ասում են, որ 1000 դարուշանոց ծառերը մի քանի հարիւրով են վաճառւում կամ եթէ վաճառւում են 20 ծառ, գնողը կտրում է 40-50, հնարաւորութիւն չկայ լաւ հսկելու:

Քանի որ տնտեսական մարմնում է կենդրոնացած Վանի շրջանային եկամուտների ամենամեծ մասը և քանի որ այդ եկամուտների կանոնա-

տրումից է կախուած միւս մարմինների և հասարակական հիմնարկութիւնների կանոնաւորումը, ուստի անհրաժեշտ է յատկապէս այս մարմնի հսկողութիւնն ուժեղացնել, շրջանի եկամուտների աղբիւրները կանոնաւորող յանձնախումբ կազմել և համոզուած եմ, որ եկամուտները կկրկնապատկին և հասարակական գումարները կանոնաւոր կգանձուին:

4. Ոստիկանութիւն.

Ոստիկանութիւնն ևս ցայսօր կառավարում է առանց օրինագծի և հրահանգների: Ոստիկանատներում ծառայում են տաճկական իշխանութեան ժամանակ ոստիկանութեան մէջ ծառայածներ, որոնք իրենց յիշողութեան և փորձառութեան հիման վրայ աշխատում են գործերին ընթացք տալ, իսկ իւրաքանչիւր պատասխանատու պաշտօնեայ գրեթէ իւրատեսակ է բացատրում խնդիրը: Որոշել ներկայ ոստիկանութեան գործունէութիւնը ճշտօրէն դժուար է, որովհետև ոստիկանութիւնն այժմ առաւելապէս այս ու այն հիմնարկութեան, երբեմն էլ պաշտօնէի յանձնարարութիւններ կատարող է, մի բան, որ ոստիկանապետարանն իսկ խոստովանում է:

Հարց ու փորձից այն եզրակացութեան նկայ, որ ոստիկանութեան կողմը ընդհանրապէս չգիտէ իր անելիքը. ոստիկաններից մեծագոյն մասը առանց հասկանալու ի՞նչ պարտականութիւն է ծանրանում ոստիկանի վրայ, այլ տեղ գործ չգտնելով, մտել են ոստիկան, իրենց հացը հայթայթելու: Ներկայ ոստիկանները անգիտակ են իրենց պաշտօնին, հարկաւոր են լաւ, պատրաստուած ու պահանջկոտ ոստիկանապետ ու շրջանապետներ, որ կարողանան հետզհետէ պատրաստել, կրթել ոստիկաններին, հասկացնել իրենց պարտականութիւնները:

Հսկողութեան և պատշաճ հրահանգների բացակայութեան պատճառով ոստիկանապետարանը և շրջանապետութիւնները տարբեր ձևով են վճռում հարցերը, տարբեր ձևով պահում դիւանը, մատեանները, հատկապէս տուգանքների խնդրում քաոս է իշխում շրջանապետութիւններում: Ոմանք տուգանք են առնում և տեղական ոստիկանական պահանջների համար գործադրում, ոմանք չեն առնում, ոմանք այս չափով, միւսները նոյն բանի համար այլ չափով են առնում, ոմանք իրենց իրաւասու են համարում այս ու այն հարցը վճռելու, միւսները դիմում են ոստիկանապետարանին:

Քաղաքի մաքրութեան կանոնաւոր հսկողութեան, կարգապահութեան խնդիրներում ցայսօր ոստիկանատներ շատ քիչ բան են կատարել, որովհետև մի կողմից այլ հարցերով են զբաղուած եղել, միւս կողմից հսկողութիւնը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար առանձին աշխատանք չեն թափել:

Քաղաքի ճաշարանները, փռերը, շուկաները, մանաւանդ սպանդանոցները, փողոցները մաքրութեան տեսակէտից շատ անբախանձելի վիճակի մէջ են, գարշահոտութիւնը, աղբը, ապտտութիւնները թափուած են

հրապարակներում և ոստիկանութիւնը խիստ միջոցներ ձեռք չի առել տուգանելու, պատժելու յանցատորներին:

Այս ամենի մեղաւորը միայն ոստիկանութիւնը չէ, որովհետև նրա վրայ նախ պակասում է խիստ հսկողութիւնը. երկրորդ, ոստիկանութիւնը ցայսօր չունի համազգեստ և զէնք, առանց որոնց թէ ժողովուրդը, թէ մանաւանդ ռուս զինւորները նրանց ոստիկան չեն համարում և չեն լսում: Ոստիկանների ռուսերէն չիմանալն ևս վերջին դէպքում բաւական նպաստում է ոստիկանի գործունէութեան թուլացմանը: Անհրաժեշտ է օր առաջ նրանց համազգեստ և զէնք տալ, որոշ տեղերում պահակներ նշանակել և հսկողութիւնն ուժեղացնել նրանց վրայ:

Ասածներիս պարզաբանութեան համար բերեմ մի քանի օրինակներ ոստիկանութեան գործունէութիւնից:

Ոստիկանապետը շրջանապետներից կազմել է ժողովներ, ուր քննութեան են առել ոստիկանութեան տարազը, զէնք ունենալու հարցը և այլ մանր հարցեր: Ոստիկանապետի գրութիւններից.-N3 գրութեամբ խիստ պատիժ է սպառնում անասունները և շարժական իրերը յափշտակողներին, N 4 գրութիւնից երևում է, որ գաղտնի ոստիկանութիւն է եղել, բայց յուլիսի 1-ից դադարել է գոյութիւն ունենալուց, N 42 գրութեամբ 50-ական փայտէ ծեծի է ենթարկում երկու հոգու, այլ ոստիկաններ ևս ծեծի գոյութիւն ունենալը հաստատում են, N 63 հիւրանոցներում արգելւում է գինի վաճառել, բացի սպաներից:

Ոստիկանապետարանը 1915 թ. մայիսի 8-ից յունիս ունեցել է մուտք և ելք.

Մուտք.

Տուգանք օրի ծախելու համար	- 10 ղրշ.
" գինի ծախելու համար	- 100 ղրշ.
" փայտ գողանալու	- 15 ղրշ.
" գողացած կենդանու	- 108 ղրշ.
և այլն, լնդամենը	-1382 ղրշ.20
Քաղաքապետարանի հաշուին գանձուած տուգանքներ	- 316 ղրշ.
Տնտեսական խորհրդի հաշուին ծախած փայտեղէններ	- 614 ղրշ.
Յունիսի 1-13 -ը ունեցել է	- 596 ղրշ.10:

Ելք. մայիսի 8-ից յունիսի 1-ը

Նուէր ոստիկանին աշալրջութեան համար	- 10 ղրշ.
բ. շրջանապետութեան մանր ծախքերի համար	- 40 ղրշ.
գ. շրջանապետութեան մանր ծախքերի համար	- 60 ղրշ.
Ոստիկանապետին կարքի դրամ մայիսի 8-26-ը	206ղրշ.:

Շրջանապետարաններից մի քանիսի մէջ տուգանքներ են առել, մի քանիսում ոչ:

ե. շրջանապետութեան մէջ քաղաքի մաքրութեան համար շրջանապետը իր բարեհայեցողութեամբ ժողովել է 600 ղրշ., 36 ղրշ.-ը ծախսել է, մնացածը դեռ մնում է շրջանապետի մօտ, իմ գնալուց յետոյ միայն

գրատոր յայտնել է ոստիկանապետին այդ մասին: Այստեղ տուգանքներ են առել 762 ½ ղրշ.: Ինչպէս լսեցի ե. շրջանի շրջանապետը Տնտեսական մարմնի կարգադրութեամբ փայտեղէններ, ծառեր է վաճառել, գումարը յանձնել մարմնին և դրա համար ստացել ծառայութեան վարձ: Այն սենեակները, ուր տեղաւորուած են ոստիկանատները, առաւելապէս կահաորութիւնից զուրկ են, մի երկուսը նոյնիսկ գրասեղաններ, աթոռներ չունին: Բոլոր ոստիկականատներում էլ դիւանները պահում են միօրինակ և անխնամ:

Ընդհանրապէս վերոյիշեալ մարմինների գործունէութեան արդիւնաւէտութեան և կանոնաւորման համար անհրաժեշտ է.՝ օրինագիծ, հրահանգ տալ նրանց, մարմինը կազմակերպելու վարչական ընդունակութիւն ունեցող կառավարիչներ նշանակել, սրտացաւ պաշտօնեաներ ունենալ և խիստ հսկողութիւն նշանակել մարմինների ամենատեսակ գործառնութիւնների, յատկապէս դրամական հաշիւների վրայ:

Վան քաղաքի՝ քաղքաղապետարանի, տնտեսական մարմնի և ոստիկանութեան վերահսկիչ՝

Իսահակ Տէր Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թթ. 183, 169-176, բնագիր, ձեռագիր:

N 218

ԽՈՇԱՊԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ի ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՔՐԴԵՐԻ՝ ՕՐԵՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԴԵՑ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 31 *8 հուլիսի 1915 թ.*

Ակրակ

Վսեմ Նահանգապետին

Նահանգապետութեանդ կողմէ ղրկուած N 364 յուլիս 2 թիւ պաշտօնական գրութիւնով կ՛յանձնարարէիք գաւառիս մէջ իրենց տուները վերադարձող քիւրդերը օրէնքի պաշտպանութեան տակ առնել:

Համաձայն այդ հրահանգին՝ ազդեր ցրուեցի բոլոր քրդաբնակ գիւղերը հետևեալ պատճէով.

N... ... գիւղի քիւրդ ժողովուրդին

Վսեմ. նահանգապետի հրամանաւ Խօշապի շրջանի բոլոր քիւրդերը օրէնքի պաշտպանութեան տալ առնուած են, կ՛յանձնարարենք, որ շուտով ձեր գիւղէն երեք ներկայացուցիչներ պաշտօնատունս ներկայանան և պէտք եղած հրահանգները ստանան:

Ասկէ ի զատ նոյն կողմեր շրջան ընող ոստ. զօրաց պահակախմբի կողմէ հայկ. տեսնուած ուղղութեամբ նոյնպէս հրահանգներ տրուեցան:

Միևնոյն ատեն շրջանիս հայ ժողովրդեան ուղղուեցաւ հետևեալ պատճէնով ազդեր.

N... Խօշապի շրջանի հայ ժողովրդեան

Նորին Վսեմութեանց գեներալ-մայոր Նիկոլաևի առաջարկին և պ. նահանգապետի յուլիս 2 թիւ պաշտօնական գրութեան համաձայն, Խօշապի շրջանին մէջ իրենց գիւղերը վերադարձող քիւրդերը ասկէ յետոյ օրէնքի պաշտպանութեան տակ են:

Հետևաբար օրէնքի առաջ ալ խտրութիւն չկայ ո՛չ հայի, ո՛չ քիւրդի, ո՛չ ասորիի և ո՛չ եզիտիի միջև:

Ասոնցմէ իւրաքանչիւրի ամենահասարակ իրաւունքները ոտնակոխ ընելուելու մինչև անգամ ծանր խօսք խօսուելը կ'ենթարկուին օրինաց տրամադրած ամենախիստ պատիժներուն:

Բոլոր ժողովուրդները պարտաւոր են, լաւ ապրել իրարու հետ և իրարու մարդկային և քաղաքացիական իրաւունքները յարգել և մինչև իսկ փոխադարձ օգնութեամբ իրարու ապրելու դիւրութիւններ տալ:

Կ՛արգելեմ առանց որոշ պատճառի և առանց մեր հրամանին զինուած պտտել շրջանիս մէջ թէ հայաբնակ և թէ քրդաբնակ կամ ասորաբնակ գիւղերը, անոնք որ հակառակ վարուին, իրենց գէնքերը կ'գրաւուին և իրենք ալ պատասխանատուութեան կ'ենթարկուին:

Առևտրականներն ալ չ'պէտք է չարաշահութիւն ընեն պէտքական բաներուն արժէքէն շատ աւելին պահանջելով, հակառակ վարուողները տուգանքի կ'ենթարկուին:

Գաւառապետ

Նման հրահանգներ տրուեցան նաև բերանացի թէ պաշտօնատուներ այցելողներուն և թէ բոլոր գիւղերու ժողովրդեան շրջան պահակախմբի միջոցաւ:

Յարգանքներով՝

Արմենակ Տէր-Պօղոսեան
Գաւառապետ Խօշապի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թ. 26-27. բնագիր, ձեռագիր:

N 219

ԽՈՇԱՊԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԱԾ Վ. ՊՈՂՈՍՅԱՆԻՑ ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 33 *8 հուլիսի 1915 թ.*
Ակրակ

Վսեմ նահանգապետին

Գերութիւնէ ազատուած Վարդիկի տեղեկագիրը

Մեր շրջիկ պահակախմբի կողմէ ամսոյ 6-ին քրդաբնակ Կրտաքան գիւղէն ազատուած Վարդիկը հետևեալ կերպով տուաւ իր քննութիւնը:

Քնիկ Քապապիկ գիւղէն է և կ'կոչուէր Վարդիկ Պօղոսեան, ապա ամուսնացած է Խաչան գիւղացի Մուրտիրոս Շաղօեանի հետ: Երբ հայրը,

էրիկը և միւս գիւղացիները կ՛սպանուին կամ կ՛կորսուին, ինք մի քանի գեղջկուհիներու հետ կ՛փորձէ փախչել, ճանապարհին կ՛առևանգւի մետկօլի քիւրդերէն Հաճիի որդի Սատրգի կողմէ: Ամբողջ կռուի ընթացքին զինք կ՛պահեն Պաշէտ լեռան շուրջ և երբ ռուսներու հետ բանակցութեան կ՛մտնեն քիւրդերը յանձնուելու համար, իր ըսածին նայելով ռուսները հայ գերիներ ու գերուհիներ կ՛պահանջեն քիւրդերէն: Վերջիններէն անոնց գոյութիւնը կ՛ուրանան, մինչդեռ զինք մինչև վերջ պահած էին քրդական բանակին քով, բլուրներու ետև:

Վերջին անծանօթ եղող քիւրդերու հետ մետկօլցիները կ՛վերադառնան դէպի իրենց տեղերը, ճանապարհին մի քանի օր կ՛մնան Կրտաքան քրդաբնակ գիւղը: Երբ քիւրդերը կ՛իմանան, որ հայ ոստիկաններ նոյն գիւղը մտած են, Վարդիկը կ՛դնեն խարարի մէջ և բերանը կապելով քրդուհիներու հսկողութեան կ՛յանձնեն: Շրջիկ պահակախումբը երբ կրկին նոյն գիւղը կ՛հանդիպի, Վարդիկը առիթէն օգտւելով կ՛փախչի և ոստիկաններու պաշտպանութիւնը կ՛խնդրէ և երբ կ՛պաշտպանւի, կ՛տեղեկացնէ, թէ իւր ունեցած տաւարներէն ու գոյքերէն մաս մը ցարդ կ՛գտնուի Սաղրզի քով, ատեն զօրաց տասնապետի փոխանորդ Խորէն Դաւթեան յանուն օրենքի ետ կ՛պահանջէ և քիւրդերը կամաւ կ՛յանձնեն երեք կթան կով, մէկ երինջ, զոյգ մը չւալ, մէկ ջուլ և մէկ թաղիք:

Վերջի պահուն յայտնեց, որ յիշեալ քիւրդին քով դեռ կ՛մնան զոյգ մը գոմեշներ և զոյգ մը եզներ:

Սոյն յայտնութիւնէ յետոյ կատարուած պրպտտումներէն երևան եկաւ, որ մեդկօլցիները արդէն քաշուած են դէպի իրենց սահմանները, որով մնացեալ գողօնները ետ առնելը անհնար դարձաւ:

Յարգանքներով՝

Արմենակ Տէր-Պօղոսեան
Գաւառապետ Խօշաբի

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, քք. 28-29, բնագիր, ձեռագիր:

N 220
ԱՐՇԱԿԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Շ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԺԱՆԴԱՐՄՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՒ ՔՐԴԵՐԻ ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N 55 *9 հուլիսի 1915 թ.*
Արճակ

Վանի նահանգապետ Վսեմ պ. Արամ.

Ստացանք Ձեր յուլիս 6 N 426 նամակը, բանակի համար հաւաքուելիք ցորենի մասին եզդիների գանգատ բղխած է այն հանգամանքից, որ տեղի ոստիկանապետ կամ պաշտօնեան մեր բաշխած և նշանակած ցուցակէն աւելին էր պահանջել և մեր կարգադրութիւն յօժարութեամբ ընդունեցին:

Մեզ ուղարկուած կոչնագիրներ և վճռագիրներ նոյնութեամբ ուղարկեցինք Շահապաղիի գաւառապետութեան կարգադրելու ըստ օրենի: Ինձ կը թուի, թէ Շահապաղիի շրջանին պատկանող այն կոչնագիրներ մեզ ուղարկուելը թիւրիմացութեան արդիւնք է:

Երեկ, Յուլիս 8-ին հետաձայնով Ձեզ հաղորդեցի մեր ոստիկանների անբաւարար թիւ և յայտնեցի, որ կարիք ունինք աւելի ոստիկանների: Կը կրկնեմ, որ նկատի ունենաք այս կէտը և կարգադրէք՝ մեզ 20-25 ժանտարմ ուղարկելով: Գալով ոստիկանապետին մինչև այժմ փոխանորդաբար ժամանակաւորապէս ժանդարմներէն մէկին յանձնուած էր: Բայց այժմ մենք մեր թարգման-օգնական պ. Օննիկին նկատելով իբրև յարմար և ձեռնհաս այդ պաշտօնին նշանակեցինք ոստիկանապետ և որ վստահ ենք մեզ գօհ պիտի թողու: Ապա ուրեմն քաղաքէն յատուկ այս պաշտօնին մարդ ուղարկել կարիք չը կայ առ այժմ: Հաճեցէք մեր այս կարգադրութիւն տեղեկացնել պատկանեալ պաշտօնատուն, եթէ կարիք կայ, ուղարկել տաք պ. Օննիկի ոստիկանապետութեան պաշտօնագիր:

Բանակի համար հացահատիկ հաւաքելու և կարգ մը կարևոր կարգադրութիւններ ընելու համար մեր Սարայ գիւղ գնալ անհրաժեշտութիւն է թէև, բայց վրայ հասնող գիւղերու տասանորդի վաճառում առ այժմ կարգելէ ինձ: Ամուրդի գործողութիւններ քիչ թեթևանալէն յետոյ պիտի գնամ: Ձեր նկատողութեան կը յանձնեմ, որ երբ մի կողմից Ձեր 24 յունիս 307 նամակով մեզ հաղորդած գեներալ մայոր Նիկօլաևի N 34 – 22 յունիսի հրամանագրով խստիւ կարգելուի լրած ցանքերին մօտենալ իբրև անճնատուր եղող քիւրդերու սեփականութիւն, միւս կողմէն յունիս 24 թուակիր օրինագծով Տնտեսական մարմին կը հրահանգէ աշարի՝ տասանորդի[186] հետ ծախել նաև լրած ցանքսերը: Մենք չուզելով աւելորդ խնդիրներ յարուցանել, կողմնակից ենք հետևելու գեներալի հրահանգին, բայց և այնպէս կ'սպասենք Ձեր վերջնական կարգադրութեան և որոշումին:

Իմացել ենք, որ Կովկասէն գիւղացիներու համար երկրագործական գործիքներ են ուղարկուած Վան՝ ցրուելու համար չունևորներին: Այդ գործիքներէն բաւականաչափ գերանդի կարգադրեցեք ուղարկելու մեր շրջանի համար: Շատերը գերանդի չունենալուն և ձեռք բերել չկարողանալուն պատճառաւ դեռևս մի խուրձ խոտ չեն կարողացել քաղել:

Քիւրդեր երբ մէկ կողմի կը խնդրեն կառավարութեան հովանաւորութիւն, միւս կողմից նոյն կառավարութեան դժգոհ թողուլ՝ իրենց աւազակաբարոյ ընթացքով կարծես իրենց պարտականութիւն լինի: Վերջերս (և միշտ) դարձեալ սկսել են զանազան չարագործութիւններ ընել և անխտիր թալանել իրենց շրջանի միջէն անցնող որևէ ճանապարհորդ, այնպէս որ Սարայի և Արճակի գլխաւոր ճամբան քրդերու ձեռք լինելով, երթևեկութիւն դադրած է:

Հոս մեր ունեցած կառավարապատկան ձիեր եթէ ծախենք ժանտարմներին, իմ կարծիքով լաւ կը լինի, որովհետև փորձ ցոյց կուտայ, որ

ամէն օր մի ժանտարմ մի ձի հեծնելով և իբրև ոչ իր սեփականութիւն անխնամ քողնելով, հետզհետէ փճացան ձիեր:

Արճակի գաւառապետ ***Շիրին***

Մակագրութիւն. *Ոստիկանապետ նշանակուած է պ. Օննիկ:*
Քրդապատկան կալուածներու արդիւնքը ծախե՞լ, թէ ոչ:
Գերանդիներ:
Յանձնուած քիւրդեր աւազակութիւն կրնեն:
Ձիեր ժանդարմներուն ծախել:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 37 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 221
ՍՊԱՐԿԵՐՏԻ ՎԵՐԻՆ ՀՅՈՒՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՍՈՎԱՄԱՀ ՉԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՀՆՉԵԼՈՒ ԱՐՏԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 հուլիսի 1915 թ.

Վսեմ կառավարչապետ

Վերջին կռիւներէն յետոյ մենք՝ գիւղացիներս եկանք Ոստան և ուրքէ ալ Արտամետ: Այժմ մեր գիւղացիներու մէկ մաս Գաւաշի Զըրկանց գիւղի միջև են, իսկ 150 հոգի ալ Արտամետ: Այս բազմութեան ապրեցնելու հնարաւորութիւն չունինք:

Խնդրագրովս կը դիմենք Ձեզ, որպէսզի մեզ 30 կտոր արտ շնորհէք, որպէսզի մենք՝ գաղթականներս հնձենք և արդիւնքով ապրենք, այլապէս չենք կարող ապրել:

Կրկին կը խնդրենք, որ որևէ շրջանի մէջէն 30-40 կտոր արտ մեր տրամադրութեան տակ դնէք, որպէսզի սովէն ազատուինք:

Յարգանօք

Սպարկերտի Վերին Հիւրիկ գիւղի գաղթականներու (Արտամետ բնակող) կողմէն

Օհան Պէճեան

Յ.Գ. Վերյիշուած Գաւաշի Զըրկանց գիւղի մէջ գտնուած մեր գիւղացիներն ալ պիտի գան Արտամետ (թուով 390 հոգի), կը խնդրեմ 540 անձի ապրուստի չափով արտ շնորհէք:

Յարգանօք՝ ***նոյն***

Մակագրութիւն 1. *Եղբայրական օգնութեան Յանձնաժողովին:*
Մակագրութիւն 2. *Կարգադրուած է:* ***Արամ***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 59, բնագիր, ձեռագիր:

N 222

ՉԱԽՄԱԽ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՐԵՎԱՆ ԵԶԴԻՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՀԵՏ ԱՊՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9 հուլիսի 1915 թ.

Վսեմ նահանգապետ

Ստորագրեալներիս գիւղացիները սպանուած լլալով, միայն ազատուած ենք մենք երկուքս. ներկայիս ոչ մի հնարաւորութիւն չունենալով գիւղի մէջ ապրելու իբրև օգնող մեզ մեր դրացի (Եարդմ Գահուն) ըսուած գիւղի եզդիները բերած ենք մեր գիւղ, յիշեալ եզդիքը իրենց գիւղին մէջ պէտք եղած նիւթերը ունին ապրելու համար, այդ իսկ պատճառաւ ուզեցինք բերել, բայց մեր շրջանի միւտիր[187] արգելք կըլլայ (չի թողուր եզդիք մեզ հետ ապրին): Ուստի Ձեզդ վսեմութեան դիմելով պէտք եղած կարգադրութիւնը կը խնդրենք:

15 տան ազատուած կիներ և երեխաները մենք երկուքս կը խնամենք, բացարձակապէս կը դժուարանանք պահել, ապրուստի միջոցներից բոլորովին զուրկ ենք:

Յարգանօք՝

Խնդրատուք Չախմախ գիւղից

*վասն անգրագիտութեան խնդրատուների. **Գասպար Մանուկեան***
Իսպայէլ Չաքարեան

Մակագրութիւն.** Ո՞ր շրջանի գաւառապետն է. համաձայն եմ գաւառապետի տեսակետի հետ: **Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 26, թ. 14, բնագիր, ձեռագիր:

N 223

ԱՐՏԱՄԵՏԻ ԳԱՎԱՌԱՊԵՏԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՇՐՋԱՆԻ ՄԱՀԱՑՄԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 հուլիսի 1915 թ.
Արտամետ

Պրն. Նահանգապետ,

Մեր շրջանի ամբողջ գիւղերու մէջ սոսկալի հիւանդութիւն կը տիրէ, և ամէն օր բաւական թուով մարդիկ, կիներ ու երեխաներ կը մեռնին: Վերջին 15 օրուայ մէջ հետևեալն է վիճակագրոյցը մեր շրջանի գիւղերու մեռածներուն ու հիւանդներուն:

	մեռած	*հիւանդ*
1. Արտամետ	*15*	*68*
2. Ծվստան	*12*	*52*
3. Բերդակ	*20*	*72*

4. Կենդանանց	*14*	*60*
5. Մաշտակ	*17*	*38*
6. Անգղ	*19*	*62*
7. Քէօշկ	*8*	*20*
8. Խորգոմ	*20*	*54*
9. Կեմ	*17*	*51*
10. Մևագրակ	*2*	*5*
11. Քարէվանց	*1*	*4*

Եթէ հիւանդութիւնը այսպէս շարունակէ ծաւալել, շատ չանցած մեր հրջանը պիտի զրկուի աշխատող ձեռքերէ:

Ուստի կը խնդրեմ նկատի ունենալ վերոյիշեալ վիճակագոյցը և բժիշկ մը տրամադրել՝ գոնէ մէկ երկու անգամ հրջելու գիւղերը և ճար մը՛ընելու:

*Արտամետի գաւառապետ՝ **Յովհաննէս***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 19, բնագիր, ձեռագիր:

N 224
ԵԶՂԻ ԽԱՆԱՅԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ ՋԱՆԳԻՐ ԱՂԱ ԽՏՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՏ ՄՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 հուլիսի 1915 թ.

Յարգելի նահանգապետ Վանի,

Եզղի Խանա գաւառի Չըպաւիզի գիւղը գիշերս քուրդ խուժան յարձակելով, կուզեր ամբողջ գիւղ կոտորածի և թալանի մատնէր, բայց բարէբախտաբար տեղրս հայ կամաւորներէն, որ Նիկօլ ընկեր պ. Յովհաննէս որպէս գարի հաւաքելու եկած էին, իսկ գաւառիս ոստիկաններ նոյնպէս գիւղն էին, որոնց դիմադրութեամբ և թէ մենք կրցանք ազատել գիւղ, իսկ մեր ոստիկանների հրացան[ների մասին] քանիցս անգամ գրած ենք, թէ կանոնաւոր հրացան չէ, թէ կարելի է քիչ շատ լաւ հրացաններ խրկել նրանց, որպէսզի ժամանակին անպատեհութիւններ տեղի ունեցած ժամանակին կարենան թէ ինքզինքնին պաշտպանել և ժողովուրդի գոյութիւն:

Յիշեալ դէպքերուն ներկայ էին Վանեցի պ. Ղազար Տէր Սիմոնեան և պ. Ռուբէն Շիզմէճեան:

Եզղի Խանայի գաւառապետ՝
Ճանկիր Խտօյեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 13, թ. 31, բնագիր, ձեռագիր:

N 225

ՄՈԿՍԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ Գ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԸՐՋԱՆԻ ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ, ՀԱՑԻ ՈՒ ՁԻՆՈՒԺԻ ՊԱԿԱՍԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՐՋԱՆԸ ԼՔԵԼՈՒ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

11 հուլիսի 1915 թ.
Մոկս

Վսեմաշուք պ. Արամ Մանուկյան
Նահանգապետ Վան Նահանգի
Ի Վան

Այսօր պաշտօնական հեռագիր ստացուեց պ. Դրօից, որ ամսոյս 15-ին բոլոր կամատրներ տեղէս քաշուին. ատոր համար մեր բերդապահ պ. Բենօն և ընկեր Թոչուն տեղդ եկան, որոցմէ կը լսէք մեր գաւառի բոլոր նեղ պարագաները ու կուտաք նրանց այն բոլոր բացատրութիւնը, ինչ որ պիտի տայիք մեզ:

Գաւառիս մէջ արդէն հիւանդութիւն խիստ շատացեր է և կը մնան անդեղ ու անդարման: Ժողովուրդ բոլորովին մերկ ու անապաստան են, երբէք հագնելիք ու պատսպարաններ չկան: Մեր Սպարկերտի ու Ոզմի և Մամրտանքի սահմաններուն վրայ դուշմանը[1xx] կերևի, երբ դիրքերում որևէ պաշտպանուելու համար երբէք ոյժ չունենք:

Որովհետև ցարդ զօրաշարժ է եղեր և մեր ժողովուրդ զբաղուած են միայն դիրքերումն և այլ կազմակերպական գործերով, չեն կարողացեր եղած նոր ցանքերին տիրապետել, այնպէս որ բոլոր չորացեր են:

Եթէ մեր այս բոլոր պահանջներին գոհացում չտրուի, կամաւորներ տեղէն քաշուելուն պէս, մենք ալ պիտի ստիպուինք քաշուել, որով տեղիս մէջ 1000-էն աւելի հիւանդներ գերի պիտի մնան դուշմանի ձեռքին և սահմանը կը լինի Շատախ և Գաւաշ:

Ուստի կը խնդրուի որ շնորհ ընէք մեր խնդիրքներին գոհացում տալ:

Յարգանօք Մոկսի կառավարիչ՝ Գրիգոր

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 61-62, բնագիր, ձեռագիր:

N 226

ԱՐՁԱԿԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Շ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ԿՆԻՔ ԵՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

N 3118 *11 հուլիսի 1915թ.*
Արճակ

Վսեմ Նահանգապետ պ. Արամ

Ստացանք Ձեր 453-467 N N նամակներ:

Տարօրինակ կը գտնենք, երբ ամբողջ գաւառապետութեանց, նոյնիսկ գաւառակներուն պաշտօնական կնիք ուղարկուած է, իսկ մեր գաւառապե-

տուբիւն դեռ չէք ուղարկած՝ հակառակ մեր այսքան պահանջելուն: Այս անգամով ուղարկեցէք խնդրենք:

Աւազակութիւն ընող քիւրդեր Սարայի ճամբայի վրայ առհասարակ մակորիցի աշիրաթին կը պատկանեն և գլխատրաբար Հավրսցիներին:

Դուք գրած էք, թէ մաս մը ձիաներ պահեցէք, իսկ մնացեալներ ուղարկեցէք: Մենք արդէն հոս ընդամէնը 5 ձի ունենք, նախապէս 8 ձի էր, նկուքը ո՞ւր լինել Ձեզ գրած է, իսկ մէկն ալ սատկաւ, մեր ցանկութիւն էր, որ մեզնից այլևս ձիու պահանջ չընէիք: Հոս մնացած 5 ձին ալ պիտի յատկացնենք մեր ժանդարմներին, և արժէք ի հաշիւ կառավարութեան այարբերաբար կը գանձենք:

Մեր պաշտօնէութեան և ժանդարմիայի ամսականերու համար Ձեր ուղարկած 575 ռուբլի 50 կոպէկ ստացանք կարնեցի մեր ժանդարմ Տիգրանէն: Հոս ամսավճարներ վճարելէն յետոյ, ըստ Ձեր հրահանգին, իրենց ստորագրութեամբ ցուցակ պիտի ուղարկի Ձեզ:

Պ. Օննիկի ոստիկանապետութեան վկայական անհրաժեշտ կը գտնենք, ուղարկեցէք:

Նաև մեզ ուղարկեցէք 2 հատ՝ մէկ պատճէներու տետրակ, մէկն ալ տոմար գրելու, թուղթ և ծրար շատ անհրաժեշտ է:

Արճակի գաւառապետ ***Շիրին***

Մակագրութիւն. *Կարգադրված է: 14 հուլիսի*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 63, բնագիր, ձեռագիր:

N 227
ԱՐՁԵՇԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն.ԺԱՍԱԳՈՐԾՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿՈՐՊՈՒՍԻ ԳԵՆԵՐԱԼԻ ԿՈՂՄԻՑ ԼՔՎԱԾ ԱՐՏԵՐԻ ՀՆՁՈՒՄՆ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 հուլիսի 1915 թ.
Արճեշ

Յարգելի Նահանգապետ պ. Արամ Մանուկեան
Վան

Տեղւոյդ Տնտ. մարմնի նախագահութեան կողմէն ղրկուած պ. Մ. Սէֆէրեանի N 111 յունիս 27 թուագրեալ պաշտօնագիր ստացայ:

Պ. Մ. Սէֆէրեանին յանձնած N 1464 և 1465 երկու կտոր վկայագիրներ վերցնելով, տեղս մնացող ճանապարհի գեներալին և կամենտանտին ցոյց տուի, բայց այս տեղի գեներալ[189] ոչ Ձեր կարգադրութիւնները և ոչ իսկ Նորին վսեմութիւն գեներալ Նիկոլաևի կարգադրութիւնները կը ճանչնայ, ինք կը ճանաչէ մի միայն կօրպուսնի գեներալի[190] հրամանը, հետևապէս պ. գեներալ Նիկոլաևի միջոցով դիմեցեք կորպուսնի գեներալին մեր իրաւունքներ ճանչցնել տալու համար, այլապէս որևէ լքուած ցանք կամ տասանորդ ծախել և գանձել բացարձակապէս և պաշտօնապէս կարգելի մեզ:

Օրս դարձեալ մասնաւոր դիմում կատարեցի՝ վերջնականապէս իմանալու համար, բայց մեզ պատասխանեցաւ, թէ ամէն ցորեն և խոտ բոլորովին կազօնի է և կառավարութեան կը պատկանի, մի միայն քաղաքներուն խոտի համար կը տուի փութիկ 5 կոպեկ կամ իբր օրավարձ 1ր. 20կ., իսկ ցորենի համար 1/3 միայն: Թէև մէկ կողմից արդէն սկսեր են անհաշիւ կերպով հայերու սեփական արտերէն քաղուած սեփական խոտեր վերցնել ու տանել: Այս մասին եթէ ժամ առաջ կարգադրութիւն չընէք, ժողովուրդ յուսահատած ձեռք չպիտի տայ ցանքերուն, որոնք արդեն հասած լինելով, պիտի փչանան բոլորովին: Ինչպէս հեռագրած եմ, եթէ պահանջուած ռուսագէտ թարգմանը անմիջապէս չուղարկէք, գործերու փչացման համար պատասխանատուութիւն չեմ կարող ստանձնել:

Որչափ որ քանիցս անգամ գրած եմ Գաւ[առական գործերի] դիւանին, մեր քովի կնիքի չափազանց անհրաժեշտութեան մասին, բայց նորէն կը պահանջուի, արդ առանց նորը նախապէս ղրկելու, այս մասին կը խնդրեմ անսայմանօրէն կարգադրեցէք, որ նորն ղրկելեն վերջ ճամբեմ մեր քովին, այլապէս առանց կնիքի ինձ կը դատապարտէք անգործութեան, որովհետև նոյնիսկ ցանքեր քաղելու համար, երբ պէտք կը լինի գիւղացիներ իրենց տեղեր ճամբել, պէտք կայ արտօնագիրներու, որոնք անպայման կնքուած պէտք է լինեն, ինչպէս եղել է մինչև այժմ:

Արճէշի գաւառապետ՝ Նշան

ՀԱԱԼ, ֆ. 242, ց. 1, գ. 27, թթ. 5-6, բնագիր, ձեռագիր:

N 228
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՄ ԿՈՂՄԻՑ ՆՎԻՐԱԾ ՈՉԽԱՐՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 28 *12 հուլիսի 1915 թ.*
Վան

Վանի շրջանային վարչութեան
Մեծայարգ պրն. նահանգապետին

Ի պատասխան քիւ 1551 և 1915 յուլիս 8 թուակիր Ձեր գրութեան,[191] կը յայտնենք, որ զինուորական վսեմ հրամանատարի ակնարկած ոչխարները, թուով 200 հատ, Ձեր կողմանէ նուիրուած էին Եղբ. օգնութեան յանձնաժողովիս, աղքատներուն բաշխելու համար:

Եւ որովհետև մեզ համար շատ դժուարին էր այդ ոչխարները քաղաք բերել և պահել, յարմար տեսանք ճամբուն ծախել զանոնք պրն. Ղևոնդ Մէրովբեանին, որմէ ոչխարներու գինն ստանալով՝ բաշխեցինք աղքատներին:

Նախագահ Վասպ. Եղբ. օգն. յանձնաժողովին՝

Սահակ Արքեպիսկոպոս Ադիտեան

Մակագրություն. Ստ պատասխանել, որ ոչխարները Անդրանիկի դրուժինայի բերած ոչխարներէն է, որոնց մի մասը իբրև կթաններ բաշխուած է գիւղացիներին, իսկ այս 200 «Եղբայրական օգնութեան կեմիտէին» է տրուած, որը, չկարողանալով պահել, ծախած է Ղևոնդին: Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 49, բնագիր, ձեռագիր:

N 229

ԱՐՇԱԿԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Շ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԱՎԱՌԻ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 61 *13 հուլիսի 1915 թ.*

Վսեմ նահանգապետ
պ. Արամ.

Ձեր ուղարկած Արշակի պաշտօնէութեան և ժանտարմների մայիսյունիսի ամսական ստանալով, վճարեցինք և որովհետև գործով շրջանի մէջ բացակայ եղողներ կան, հաշիւ ամբողջութեամբ մի քանի օրէն կուղարկենք ըստ հրահանգին ստորագրութիւն վերցնելով: Մենք անցեալ անգամ N 55 գրութեամբ ոստիկաններ էինք պահանջեր, այժմ կը յայտնենք, որ կարիք չկայ առ այժմ, մեր կարիքի չափ ժանդարմների թիւ լրացուցինք և Ձեզ կը ներկայացնենք անոնց ամբողջութեամբ կազմ, հետզհետէ նորեր ևս արձանագրելով:

Օննիկ Անիտեան	*ոստիկանապետ*
Տիգրան Գրիգորեան	*օգնական հեծեալ*
Սարգիս Պաղոսեան	*ոստիկան ”*
Մսրտիրոս Պաղտասարեան	*տասնապետ ”*
Հայրիկ Յակոբեան	*ոստիկան ”*
Ներսէս Նիկօեան	*” ”*
Մաթոս Խաչատուրեան	*” ”*
Մովսէս Մարգարեան	*” ”*
Անուշավան Ալօեան	*” ”*
Հովան Մարկոսեան	*” ”*
Ազիզ Թումասեան	*” ”*
Մելիքսեթ Կուլիճանեան	*” ”*
Ռուբէն Գրիգորեան	*ոստիկան հետևակ*
Աւետիս Մինասեան	*” ”*

Խաչատուր Մելքոնեան հեծեալ, արշակեցի, տարիք 26, յուլիս 10-էն պաշտօնի անցած

Սարգիս Գալուստեան հետևակ ” ” 24 ” 10 ” ”

Իսրաէլ Ռավօեան	"	"	"	28	10	"
Յովհաննէս Գրիգորեան	"	կեսարացի	"	25	" 10	" "
Յարութիւն Ներսիսեան	"	"	"	27	" 10	" "
Միհրան Գրիգորեան	"	"	"	25	" 10	" "
Մինաս Սահակեան	"	"	"	28	" 10	" "

Յուլիս 10-էն արձանագրուածներ անցուցէք տոմարների մէջ և իրրև մեր մնայուն ոստիկանութիւն՝ անհրաժեշտ է, որ շուտով ուղարկէք ժանդարմների վկայականներ, նաև տաս հատ նոր գէնքեր:

Արճակի գաւառապետ՝ **Շիրին**

Մակագրութիւն. *Կոչնագիրներ յանձնեցէք պատկանեալ պաշտօնատան: Վկայականներ տալ:* **Արամ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 1, թ. 40 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 230

ՖԱՌՈՒՂ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԵԿԱՆԻ ԴԵՉԵՐԸ ԲՌՆՈՒԹԵԱՄԲ ԿԱԼ ՄԵԼ. ՏԱԼՈՒ ԵՎ ԲԵՐՔԸ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

13 յուլիսի 1915 թ.

Վսեմ Նահանգապետ Վանի

Ինչպէս յայտնի է գարնանէ ի վեր մեր գիւղի բոլոր խառեր ռուսերու կողմէ որ քաղուեցաւ, որ կերցուեցաւ: Ամռնցմէ ձեռնթափ եղանք, այժմ մեր գիւղի կարգ մը անծինք, որ անցեալ տարի զօրք գացած են՝ ողջ թէ մեռեալ յայտնի չէ, սակայն այրիներուն քիչ մը տարեկան աշուն առանց ծեծելու մնաց, որ տեղ ըրած էին, հիմայ հայ կամանտէրներ բռնութեամբ այդ տարեկանի տեղերը տէրերուն կալ ընել կուտան, թէ հատն և թէ յարդն ալ կտանին: Մենք կ'խնդրենք, որ արգելք մը տրվի յիշեալներուն, որ մեր այդ այրի և անտէր անտիրական որբերու ապրուստ չ'տարուի, եթէ դրամով է, մենք չունինք ծախու, թէ ձրի է, ինչ իրաւունքով մեզ սովամահ ընել կուզեն: Այս մասին ձեր վսեմութեան դիմելով, հարկ եղած տեղէն այս մասին կտրուկ կարգադրութիւն մը ընելու հրաման ընելու շնորհ ընէք և այս երկու երեք օր է, որ սկսած է ծեծել և կալ ընել, կարելի է մինչև մէկ երկու օր կ'լմնցնէ: Թէ կարելի է, շուտով իրենց արգելք տրվի, ծեծելէն բերելէն յետոյ խեղճ այրիները ինչ ընելու են:

Յարգանօք՝

Ֆառուղ գիւղացի Կարապետ Սահակեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 122, բնագիր, ձեռագիր:

N 231

ԲԵՐԿՐԻ ՇՐՋԱՆԻ ՍՈՒՐԲ ԹԱԹՈՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ Ղ. ՇԱՀԻՆՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՍՈՎԱՄԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԱՄՈՒՆ ՏԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

13 հուլիսի 1915թ.

Վսեմ Նահանգապետ

Մեր գիւղի բնակչութիւնը (25 տուն) կոտորուած ըլլալով, միայն ազատուած ենք հինգ տղամարդ և մօտաւորապէս 100-ի չափ կին, աղջիկ և երեխաներ, որոնք ապրելու միջոցներից բոլորովին զուրկ են: Վերոյիշեալ ազատուած թշուառ գերի գիւղացիքը ներկայիս կը գտնուին Շուաքար ըսուած քիւրդի գիւղը, ամենքն ալ անօթի, ծարաւ ու թշուառ մեր հինգ հոգիներիս ձեռք կը նային և մենք ալ ոչ եզ ունինք, ոչ կով և ոչ ոչխար, որ կարողանանք ապրեցնել յիշեալ թշուառները: Ուստի Ձերդ վսեմութեան դիմելով կը խնդրենք, (եթէ հնարաւորութիւն կայ) պէտք եղածին չափ կենդանիներ տալու հրաման ընէք:

Յարգանօք՝ վասն անգրագիտութեան խնդրատուի՝

Ղազար Շահինեան

Մակագրութիւն 1. *Խնդրել, որ տեղի կառավարութիւնը կամ տեղական միջոցներով և կամ եթէ այդ անհնարին է, մեր միջոցներով, բոլոտութիւն ստանալէ վերջը, բան մը ընել: **Արամ***

Մակագրութիւն 2. *Բերկրի - Գործոթի գաւառապետութեան.*

*Սոյն Ս. Թաթոս գիւղացւոց խնդրանքին բաւարարութիւն տալու համար (ինչպէս ցոյց կուտայ պ. Նահանգապետի մակագրութիւնը), տեղական հնարաւոր միջոցները ձեռք առնելու էք: Կամ եթէ կը պակսին տեղական միջոցներ, Դուք ցոյց տուէք որևէ միջոց կամ առաջարկ, որու համար Կեդր. կառավարութիւն պատրաստ է Ձեզ աջակցելու: Գաւառ. գործոց վարիչ՝ **Արմենակ Փոխանեան***

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 2, թ. 28 և շրջ., բնագիր, ձեռագիր:

N 232

ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ն. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՆՈՐԴՈՒԶԻՑ ԳԱՂԹԱԾ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿՉՆԵՐԻ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 հուլիսի 1915թ.
Աստվածաշեն

Պ. Նահանգապետ

Ձեզ յայտնի է, որ Նորտուզի բնակչութեան մէկ մասը գետեղած ենք Վերի և Վարի Բժնկերտաներ, որոնք իրենց համար բաւական խոտի պատրաստութիւն տեսած և տեղւոյն ցանքսերն ալ խնամք ու աշխատանք

թափած են: Այժմ Նորտուզի գաւառապետ կը պահանջէ ու կստիպէ, որ այդ բնակչութիւն ծեռնքափ լինի յիշեալ գիւղերէն ու գնայ Նորտուզ իր տեղերը: Քանի որ ցանքսի ժամանակ է, կը խնդրուի, որ հրաման ընէք այդ բնակչութիւնը չը վերցուի գոնէ մինչև հունձքի վերնալը, որով թէ այդ մարդիկ իրենց աշխատանքից չեն զրկուեր և թէ հունձքը գետին չի մնայ:

Մեզ համար հոս՝ Աստուածաշէն նստելու տեղ չունինք, երկու հարմար տեղեր կային, ռուսներ այժմ կը նստին, մի հատ ալ կայ, ուր այժմ մենք կը նստինք, բայց իր նեղութեան համար թէ մեզ չի բաւեր և թէ տէրը չի ընդուներ ու կը պահանջէ, որ դուրս ելնենք, ուրեմն մենք չենք կարող հոս մնալ:

Եթէ կուզէք յերթանք Արատենց, հոն հարմար տեղ կայ, կսպասենք ձեր հրամանին:

Հայոց-Ձորոյ գաւառապետ՝ ***Նշան Նալբանդեան***

Մակագրութիւն. *Թող երթան Արատենց:*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 27, թ. 8, բնագիր, ձեռագիր:

N 233

ԳԱՎԱՇԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Լ.ՇԱՂՈՅԵԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԱՎԱՌԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՅՈՒՂԳՈՐԾԻՔՆԵՐԻ և ԱՆԱՍՆԱԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

13 յուլիսի 1915 թ.
Ոստան

Վանի նահանգապետ Արամ փաշային

Գաւաշի և Կարճկանի ու Կառկառի ժողովուրդը արդէն սկսած է որոշ չափով ապահովուել, և հակառակ հիւանդութիւններու աւերիչ սաստկութեան, ձեռնարկել երկրագործական աշխատանքներու: Եւ եթէ հնարաւորութիւն ձեռք բերուի երկրագործական գործիքներ և անասուններ ճարելու՝ առոյգ առվէ կ'ազատուի երկիրը:

Մեր գաւառի անմիջական պէտքերն են.

1. Եզ, 5-600 գլուխ, այդ կողմերէն կամ բանակի միջոցով, ապա թէ ոչ ցորենը դաշտը և անկալսել կը մնայ:

2. Երկրագործական ամեն տեսակի գործիքներ:

3. Քաղի մեքենայ, առնուազն երեք հատ, Վարի Հայոց Ձորի, Գաւաշի և Կարճկանի համար, իրենց ամբողջական մասերով, գործիքներով, խողով և այլն, որ յանկարծ չը կանգնեն և դադրեն:

4. Մանգաղ՝ 400 հատ:

5. Գութաններ, ինչ ձևի և մեծութեան որ կան:

Իսկ Ոստանի համար անհրաժեշտ են.

յարմար դատաւոր մը,

երկաթագործ մը,

սրճարանապետ մը
խոհարար,
արձանագրութեանց ամեն տեսակի տօմարներ,
Կասան՝ որ Չաւէնի տանը կը գտնուի կարծեմ:

Պաշտօնական կնիք, որ ռուսները ճանչնան մեր թղթերը: Երեք թօփ սատրինջ[192], երկու թօփ ամրկան բէզ[193], և ասոնց համապատասխան կարելու ամուր թել:

Բևեռ[194] 3 լիտր, խոշոր տեսակէն (գավաթա), կամուրջներ շինելու համար: Ասկէ առաջ դրկուածները բանի մը պէտք չ'եկան:

Լեւոն Շաղոյեան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թթ. 33-33 ա, բնագիր, ձեռագիր:

N 234

ԲԱՆՏԻ ՏԵՍՈՒՉ ԿԱՐԱՊԵՏ ՋԱՆՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝ԲԱՆՏԻՆ ԵՒ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 3114 *13 հուլիսի 1915 թ.*

Վանի վսեմ նահանգապետութեան

Բանտային տեսչութիւնը յարմար կը տեսնէ ձեր ուշադրութեան յանձնել հետևեալ կէտերը: Պատասխանատուութեան տակ չհիւնալու համար պէտք կը տեսնէ.

1. Բանտի դռներու համար երկու փականք.

2. Պատուհաններէն մեկի համար հինգ շիշեր.

3. Բանտարկեալները դատարան փոխադրելու և գիշերներ բանտի ապահովութեան հսկելու համար, պաշտօնի վրայ գտնուող 3 բանտապահներուն երեք հրացան ու հարկ եղած քանակութեամբ պատրոն:

Բանտային տեսչութեան կարևոր են՝

4. Երկու սեղան և երկու աթոռ (մէկը բանտապետի և միւս օգնական բանտապետ-քարտուղարի համար):

Բանտարկեալներու և բանտի համար կարևոր է՝

5. Վճիռ ընդունած, ինչպէս նաև անկարող բանտարկեալներուն օրական 3-ական հաց տրուելու իրաւունք: Նմանապէս բանտի մէջ գործածուելու համար նաւթ, լամպ և այլն պիտոյքներու համար, բանտային տեսչութեան որոշ պիւտճէ մը տրամադրելու կարգադրութիւն:

6. Բանտարկեալներին օրական երեք անգամ դուրս հանելու (իրենց կենսական պիտոյքների համար), ինչպէս նաև իրիկուան ատեն մեկ ժամ բակին մէջ պտտելու իրաւունք, ընդ հսկողութեամբ պահակներու:

7. Իրենց պարագաներու հետ տեսնելու համար ցորեկւայ ժամի 10-12-ը ընդունելութեան իրաւունք:

Վերոյիշեալ խնդիրներու մասին չուտափոյթ կարգադրութիւնդ կը խնդրուի:

Բանտի տեսուչ Կարապետ Ճանճոեան

Ճանճոր. Հիմակ ու հիմա բանտին մէջ ունենք 10 բանտարկեալներ:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թ. 187 և հրտ., բնագիր, ձեռագիր:

N 235
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՆԻԿՈԼԱԵՎԻՆ՝ ՇՐՋԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՄԱՀՐԱՃԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 1672 *14 հուլիսի 1915թ.*
Վան

Препровождая Вашему превосходительству приходо-расходный баланс Управления Ванским округом за время от 9 мая по 30 июня с.г., считаю необходимым приобщить к нему несколько пояснительных указаний и соображений.

Как Ваше превосходительство изволит усмотреть, главнейшие статьи прихода случайны и ненадежны, между тем, как расходные статьи имеют тенденции к возрастанию.

При существующем ненормальном положении, жизнь в Ване чрезвычайно вздорожала, назначенные же временно оклады, жалованные должностным лицам, крайне недостаточны и должны быть увеличены, так как необходимо привлечь и удержать на означенном поприще лиц, вполне надежных и способных по моральным и умственным качествам и деловой подготовленности.

Численность нынешнего личного состава, в особенности администрации в уездах и полицейской стражи пешей и конной, требует увеличения, притом значительного.

Количество семейств, пострадавших от бедствий войны и армяно-мусульманской войны до прихода русских войск велико, и положение их тяжелое. Пособия и вспомоществования, оказываемые Окружным управлением бедствующим армянам, курдам и туркам очень скромны, сравнительно с внушительностью предъявляемых запросов.

Хозяйство и хозяйственная жизнь крестьянской массы расстроены и разорены, для восстановления их и необходимых для того мероприятий требуются суммы более значительные, чем указанный в балансе расход по сельско-хозяйственному комитету.

Не мало потребуется средств на хотя бы минимальное оборудование дорожного и санитарного дела.

Расход по устройству судов на озере, по вознаграждению судоходцев пока тяготеет над кассой округа (из более чем 1000 рублей расхода по этой статье возмещено из сумм отряда, лишь 300р. по предписанию Вашего превосходительства).

Из источников дохода один - продажа деревьев, иссяк вследствие запрещения порубки деревьев.

Остаток, показанный к 30 июня в размере 1122р. 11к., является дефицитом, ибо многим из служащих не выдано жалованье за июнь, есть служащие недополучившие жалованья и за май.

Главная надежда на сбор с урожая (ашар), с баранты (ахнам) и с торговли и промыслов в городе.

Бюджет на все остающееся время текущего года составляется и по выяснению всех статей прихода и расхода будет представлен Вашему превосходительству.

Ванский губернатор
Секретарь ***Айрапетян***

Ֆ.242, ց.1, գ.14, թ.188-189 շրջ. թողոն, ձեռագիր:

N 236
ՄԻ ԽՈՒՄԲ ԱՐՑԱԿՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՔՐԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԻՐԵՆՑ ՀԱՐԱՁԱՏՆԵՐԻՆ ՓՆՏՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐՄԱՆՔՈՎ

14 հուլիսի 1915 թ.
Արճակ

Վսեմափայլ նահանգապետ Վանայ
Խնդիր

Մոյն 1915 թուականի ապրիլ 7-ի կուից յետոյ, երբ Արճակի, Խառակոնիսի և շրջանի գիւղերի ազգաբնակութեան մի ստուար մասը ազատելով թուրք խուժանի ձեռքից, ապաստան գտաւ Այգեստանում, մի մասն էլ ընդհանուր խուճապի սպանիչ ազդեցութիւնից սարսափահար ընկաւ դիտապաստ[195], իսկ նրանք, որոնք որևիցէ ձևով զերծ էին մնացել կոտորածից ու մնացել գիւղում, մատնուեցան գերութեան անարգ վիճակին:

Այդ՝ հաւաստի աղբիւրներից տեղեկանալով, որ մեր գերիվար որդիներն ու եղբայրները գտնւում են Ֆառաշենի զոգանում[196], ենթակայ անլուր չարչարանքների և դանդաղ, աստիճանական մահուան, ուստի գէթ նրանց սեսկաւիկ մնացորդը ազատելու նպատակով դիմելով Ձերդ վսեմափայլութեան, խոնարհաբար խնդրում ենք չխնայել բարոյական հնարաւոր աջակցութիւնը անվտանգ կացուցանելու համար մեր որոնումների ճանապարհը քրդական շրջաններում:

Խորին յարգանքներով՝ ***Սիմոն Կապարեան***
Սարգիս Յակոբեան

Ի փոխարէն ***Ալմաստ Սահակեանի, Կարապետ Կոմիկեանի, Գալուստ Նախոյեանի, Գրիգոր Եոյեանի, Ազիզի Չաքարեանի և Տիգրան Մելքոնեանի*** *ստորագրեցի՝*

Կ. Այվազեան

Մակագրութիւն. *Դիւրութիւն տալ: Արամ*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 27, թ. 9, բնագիր, ձեռագիր:

N 237
ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽՄՆՈՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՎՆԱՍՎԱԾ ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻՑ ՏՈՒՐՔԵՐ ՉԳԱՆՉԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

14 հուլիսի 1915 թ.
Վան

Վանի վսեմ Նահանգապետին

Անցեալ դէպքերու ատեն Լիմ Անապատի ունեցած վնասները մենք մեր աչքով տեսանք, երբ որ այս անգամ ճոյն կողին գացինք, դրսի տան ու էջմիածնի վանքի շէնքերը իսպառ վառուած ու քայքայուած ու վանքը՝ ժողովրդեան հօն խառնուելու պատճառով մեծամեծ վնասաց ենթարկուած է:

Յիշեալ վնասուց իբրև մի փոքր հատուցում կը խնդրենք, որ հաճէք հրամայել ի Լիմ Անապատի ու անոր յարակից եղող էջմիածնի վանքի տասնորդական տուրքը չը գանձուի, նաև վառուած ու քայքայուած շէնքերու համար ալ արտօնուեն Արճէշի ու Ալճաւազի ծովեզերեայ գաւառներէն բավական քանակութեամբ ծառեր կտրելու ու փոխադրելու վանքը ի պէտս ճոյն շինութեանց:

*Աղօթարար Առաջնորդ. փոխանորդ Վանայ՝ **Եզնիկ վարդապետ***

***Մակագրութիւն.** Արտօնութիւն. 300 հատ ծառ կտրել Արճէշի և Ալճաւազի ծովեզրեայ լքուած գիւղերէն: Յուլիս 14*

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 20, թ. 39, բնագիր, ձեռագիր:

N 238
ԱՐՏԱՄԵՏԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Հ.ԱՐՏԱՄԵՐՏՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ՌՈՒՍ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 հուլիսի 1915 թ.
Արտամետ

Պրն. Նահանգապետ,

Շրջանիս աղքատ հնձուրներուն ի նպաստ պատրաստել տուած եմ 150 մանգաղ ըստ Ձեր յանձնարարութեան: Գրաբէրս դրկեցի զանոնք վերցնելու, ուստի հաճեցէք գիները՝ 15 դուրուշէն վճարել, որ մանգաղները վերցնէ:

Ռուսները գրեթէ ամէն օր մեծ վնասներ կուտան մեզի, կը փճացնեն այգիները, կը հաւաքեն կը տանին իրենց ու հայ կամաւորներու ձիերու կոխկռտուքէն յետոյ հայերու քաղած ու չորցուցած խոտերը, երէկ տարան մօտաւորապէս 400 խուրջ խոտ:

Արտամետը ևս կարգ մը ուրիշ գիւղերու պէս զրկուեցաւ խոտէն և ծմեռը իր անասունները պահելու հնարաւորութենէն:

Արտամետի գաւառապետ՝ **Յովհաննէս**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 8, թ. 50, բնագիր, ձեռագիր:

N 239
ԲԵՐԿՐԻԻ ԿԱՅԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

16 հուլիսի 1915 թ.

Մեծապատիւ պ. Արամ

Չի լինում գաղթականներին պահել Բերկրիում: Մարդիկ չկան գործող, պ. գաւառապետը Աբաղայումն է, եթէ հնարաւոր է կարգադրութիւններ և օգնութիւններ կատարուեն շուտափոյթ, գաղթականներին բաժանում ենք Բերկրիի գիւղերի վրայ, սպասում ենք օգնութեան: Այստեղ ունեմ մեր բանակի համար 150 փութ պատրաստի ալիւր: Ստացէք Սիրակի համաձայնութիւնը, ես կարող եմ բաժանել գաղթականներին: Պատասխանէք հեռագրով:

Բերկրիի պունկտի կառ. **Նիկոլ**

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 7, թ. 54, բնագիր, ձեռագիր:

N 240
ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ՝ 17-45 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

N 306 *17 հուլիսի 1915 թ.*

Վան

Մեր երեկուան N 300 շրջաբերականին համաձայն՝ նահանգապետութեան անունէն կը յայտարարենք Վանի ժողովրդեան, որ իւրաքանչիւր քաղեցի 17-45 տարեկանները իրենց շրջանին պատկանեալ ոստիկանատուն երթալով, արձանագրուին: Ժամանակամիջոցը կը լրանայ Յուլիս 24-ին:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 129, պատճեն, ձեռագիր:

N 241
ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՉԸ՝ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՎԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

6 օգոստոսի 1915 թ.

Երևան

Վանը վերագրաւած ըլլալով, զինտրական իշխանութեան կողմանէ թոյլտրուած է միայն տղամարդկանց դառնալու:

Ես քանի մը օրէն կը մեկնիմ զէնքի ու աշխատանքի ընդունակ տարրերու հետ:

Յանկալի է, որ ընտանիքները տեղաւորելէ վերջ և մանաւանդ ընտանեկան հոգս չունեցողները շտապեն միանալու ինծ և կամ ինծմէ վերջ ուղղակի մեկնեն Վան:

Վկայական և այլ դիւրութիւններ կը տրուի Իգդիր:

Վանի նահանգապետ՝ Արամ

ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.39, թ.31, տպագիր օրինակ:

N 242

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[1915 թ. հուլիսից հետո]

Կառավարական գործունէութեան գլխաւոր գիծերը

1. Ինքնապաշտպանութեան հարցը.- կառավարութիւնը կազմակերպելու օրից իսկ ցցած էր այդ հարցը մեր առջև: Ամբողջ վիլայէթից քշած քրդերը հաւաքուած էին մեր նահանգի հարաւային սահմանները (Ոտրդուզ, Շատախ, Մոկս, Մամրտանք, Սպարկերտ, Խիզան) և ամէն օր սպառնում էին կամ ներս խուժել՝ բռնի ուժով կոտրելով և ոչնչացնելով հայկական գաւառները և կամ երեսանց[197] հպատակութիւն յայտնելով ռուսներուն՝ դառնալ ետ և հաստատուել նախկին իրենց դիրքին[198] մէջ: Իսկ մեր ազգային շահերը պահանջում էին, որ նրանք չը գան և յարձակման դէպքում յայտնուեն, և գէթ մինչև սեպտեմբերի վերջը նրանց պահել հարաւում, ուր նրանք ստից և հոգերից կը կտտուէին:

Իսկ այդ անելու համար, պէտք էր, որ տեղական ինքնապաշտպանութիւնը կազմակերպուէր: Երկար խորհրդակցութիւններէ վերջը եկանք այն եզրակացութեան, որ առնուազն 1000 հոգի զէնքի տակ մարդ ունենանք ամբողջ վիլայէթին մէջ:

Տեղական ուժերով անմիջապէս գործի դիմեցինք կազմակերպելով,

Շատախում ինք. խմբեր	*200 հոգի*
Գավաշում „ „	*150 „*
Կարճկանում „ „	*50 „*
Մոկս „ „	*100 „*
Նորտուզում „ „	*50 „*
Վերի Հայոց Ձոր „	*30 „*
Արտամետ „ „	*20 „*
Խօշաբ „ „	*30 „*
Արճակ և Չիպուխլի „	*50 „*

Թիմարներ	„	„	50 „
Բերկրի	„	„	50 „
Ալճաւազ Չպուխլի	„		30 „
Արճէղ	„	„	20 „
Վան	„	„	50 „

Այս գործի յաջողութեան համար երկու պայման անհրաժեշտ էր. նախ դրամ և ապա զէնք:

Դրամի համար յոյսերնիս դրած էինք Կովկասի օգնութեան վրայ, որուշում տալուց յետոյ, ընդարձակ մի տեղեկագրով դիմել ենք Ազգային բիւրօին խնդրելով, որ աջակցեն մեզ այդ գործին մէջ, տեղեկագիրը ժողովին Լ բնուած երկու ամիս վերջը նիստեր չը գումարելու պատճառով և այդքան ուշ միայն որոշուած է ամսական 20000 րուպլի և 10000 միանուագ գումար սկզբնական ծախսերի համար, իսկ այդ գումարը հասել է նահանջի օրը: Հետաքրքիր է և այն. որ Մոսկուայի կոմիտէն նոյն նպատակի համար 50000 է որոշել և ճամբել և իբր միջոց ընտրել է «Կարմիր խաչի» կոմիտէն. Նրանք էլ միջոցներ չունենալով դրամը ինձ հասցնել, երկու ամիս վերջ դրամը ետ են դարձրել և մոսկուացի ճէօչ-աղաներն էլ չեն վստահացել մեր ազգային մարմինների միջոցով դրամ փոխադրել մեզ և այդպիսով այդ դրամի յոյսերն էլ ի դերև է եղել:

Այս բոլոր պատմութիւնը արտում է նրա համար, որ մի աւելորդ անգամ էլ ապացուցի, որ նախ, հայերս անընդունակ ենք մի գործ ժամանակին կազմակերպել և երկրորդ՝ ցոյց տալ, որ եթէ այդ գործը ժամանակին կազմակերպուէր և ժողովուրդը ապահովուէր, դժուար թէ յուլիսին Վանի գործիչները համակերպէին այդ սոսկալի գաղթին:

Ուրեմն Կովկասն ու Մոսկուան էլ իրենց պատասխանատուութեան բաժինը պիտի վերցնէն պատմութեան առաջ Վանի նահանջի համար:

Ինչպէս ասացի, ինքնապաշտպանութեան երկրորդ պայմանը զէնքի պակասի լրացումն էր: Թէև մենք հազարից էլ աւելի զէնքեր ունէինք, բայց սիստեմի տարբերութեան պատճառով փամփուշտ չ'էինք կարող գտնել, ուրեմն անհրաժեշտ էր տաճկական կամ ռուսական տէսակի զէնքերով լեցնել պակասները: Այս գործին մէջ պէտք էր մեզ օգնէին նաև կամաւորներ, որոնց ձէռքը կ' ընկնէր մեծ քանակութեամբ ռազմամթերք և զէնք, բայց անոնք էլ մեծ մասը պահեցին իրենց տրամադրութեան տակ և մասնակի ու ընդհանուր մեծ նահանջի ժամանակ ծով թափէցին և կամ փչացուցին. միայն չնչին մի մաս թողին մեզ , այն էլ մեծ մասամբ փոխելով մեր տասնոց ատրճանակների հետ:

Իսկ երկրորդ, արտասահմանից ու Կովկասից մեզ պիտի զէնք հասնէր: Ինչպէս ամէն գործի մէջ, այս անգամ էլ առաքումը ուշացաւ և համաբեա զուգադիպեց նահանջին:

Բայց տեղական ուժերով նորէն հնարաւոր եղաւ քրդական հոսանքները պահել իրենց նախկին սահմանների վրայ, նախ կամաւորների հետ

ու ապա մենակ, իսկ միւս ամբողջ գաւառներում կարգ պահել և պատաս-
խանել յաջող քրդական մասնակի բոլոր յարձակումներին: Այսպէս տևեց
մինչև յուլիսի սկիզբը, երբ հարաւ քշուած քրդերը սկսեցին մեծ ալիքներով
շարժուել, նոյն ատիրաժշտա էր ատելի մեծ ու ուժեղ կազմակերպութիւն, նոյն
մենք սկսեցինք քաղաքի մէջ խումբեր կազմակերպել Շատախի և Մոկսի
համար և երբ յանկարծ պայթեց մեծ նահանջը և ամեն բան քշեց տարաւ
իր հետ:

Բայց և այնպէս այդ պահանջեց կառավարութիւնից մեծ աշխատանք
և զոհողութիւն, որը արտեց հնարաւորութեան չափ:

2. Գաղթած և տեղաւած գաւառների ժողովրդի պահպանման հարցը

1914 ի աշունից սկսած. Սարուխի և Բաշկալէի շրջանում ջարդ, կոտո-
րած լինելուց յետոյ, այդ վայրերի մնացորդ ժողովուրդը թափեց քաղաք,
հոսանք սոսկալի դարձաւ ապրիլեան շարժումների ժամանակ, երբ ամ-
բողջ գաւառները համարեա թափեցան քաղաքը և ապաւինեցին քաղաքի
օգնութեան:

Ռուսների Վան գալուց յետոյ թէև որոշ վայրերի գիւղացիները ետ
դարձան իրենց գիւղերը, բայց դրանց փոխարէն նորէն Վան թափեցան
Դիօի խմբի բերած Սպարկերտի, Մամրտանքի և Շէնի ձորի և Խիզանի
հայ ամբողջ ազգաբնակութիւնը ճոյնպէս և Քէռու ու Համազասպի խմ-
բերու ազատագրուած Կարճկանի և այլ գաւառների գիւղացիները:

Մօտ 20000 անտուն, անտիրական ժողովուրդ է թափուած շրջանը, ոևէ
ուրիշ աղբիւր չի մնացել նրանց օգնելու համար, բացի նորաստեղծ կառա-
վարութիւնից, անմիջապէս դիմում է տեղական միջոցներով օգնութիւն
կազմակերպելու գործին:

Դրանց մեծ մասամբ հաւաքում ենք Ոստանի և Ախթամարի շուրջը,
հաւաքում ենք ապահով շրջաններից ցորեն և ալիւր և ժամանակաւոր կեր-
պով տեղաւորում, իսկ միւս կողմից դիմում է Կովկասի բոլոր հիմնարկու-
թիւններին, որ նիւթական և բժշկական օգնութիւնը փութացնեն:

Այդ օգնութիւնը չ'ի ուշանում, գալիս է, եկող բոլոր խումբերին օգնողը,
դիւրութիւն տուողը, գործ կազմակերպողը եղել է կառավարութիւնը.

Ստեղծված են եղել

ա = բուժարան – հիւանդանոց - Վան
բ = սննդատուն կայարան - Արճէշ
գ = բուժարան „ - Ոստան
դ = „ „ - Ախթամար

3. Քրդական հարց

Ռուս կառավարութիւնը մեզ անյայտ պատճառով որոշում է ընդունել
հպատակութիւն յայտնող քրդերին, առանց խորհելու ապագային գալիք
չարիքների մասին: Երբ այդ մասին լսում ենք, անմիջապէս դիմում կատա-
րում ենք և որոշում որևէ ճնշով յանձն չէինք առնում այդ գործի կարգադր-

ման: Այս խնդրի մանրամասնութիւնը և տեղեկագիրը հրապարակի վրայ են արդէն:

Միւս կողմից էլ մեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներից օգտւում ենք, որ քրդերը իրենք չը գան և չը յանձնւեն:

Արդէն հայ կառավարութեան ստեղծելը և իմ նահանգապետ նշանակւելը նրանց մէջ այն համոզումն է կայացրել և երկիւղ տւել, որ չեն կարող հանգստութիւն ունենալ մեզ մօտ և չ'էին էլ համարձակում մեծ քանակութեամբ դիմումներ անելու:

4. Վերաշինութիւններ

Կառավարութեան գործերից մէկն էլ եղել է վերանորոգել քաղաքի և գաւառների ճանապարհները, շինել կամուրջներ (ի հարկէ թէթև):

Կովկասից եկած մի ինժեներ (Սամւէլեանը) և մի երկու կօնդուկտօր զբաղւում էին յատկապէս այդ գործով:

Վերաշինել տւինք և բազմաթիւ նաւեր ռազմական փոխադրութիւններ կատարելու համար:

5. Գիւղատնտես. օգնութիւն

Թիւրք կառավարութեան գիւղատնտեսական գործիքները կէղծոնացուցինք տեղ մը, բերել տւինք նոր գէրանդիներ և ձրի բաժանեցինք (1000 հատ) և 3000 ր. ուղարկէցինք հնձող և կալսող մեքենաներ բերելու, որոնք ուշացան և նահանջի պատճառով մնացին դուրս:

6. Խլամ ժողովուրդի լքած արտերի և գիւղատնտեսական ձեռնարկների կազմակերպումը

Թիւրքերի և քրդերի լքած արտերը կառավարութեան հաշւին շահագործելու համար, թէ քաղաքում և թէ գիւղերում, յատուկ կօմիսիօնի[199] միջոցով ծախէցինք և խնամել տւինք, որ բերքերից թէ ժողովուրդը և թէ բանակը օգտւի:

Այս ձեռնարկի մէջ, ի զուր տէղ մեծ դժւարութիւն է յարուցել կառավարութիւնը (ռուս), առարկելով, որ լքած հարստութիւնները կը պատկանէն ռուս կառավարութեան և բանակին (Այսպիսի դէպքերում մոռացում էր, որ Վանի կառավարութիւնն էլ «իրենցն» է):

Մենք ընդարձակ մի րապօրտով[200] ցուցուցինք, որ հենց բանակի շահի տեսակէտից պէտք է այդ յանձնել տեղական կառավարութեան, որովհետև բանակը ո՛չ մարդկային ուժ և ո՛չ էլ տեխնիքական դիւրութիւններ ունէր խնամելու, ջրելու, հաւաքելու արտերը, իսկ նրա դրանք անտէր մնան կամ անխնամ, թէ բնականից կ'ոչնչացիւին և թէ արհեստական կերպով կը փճանան, այդ բանակցութիւնները շաբաթներ տևեց, վերջապէս որոշւեց, որ этапный коменданта[201] շրջապատից 6 վերստ թողնենք իրենց, մնացածը մենք վերցնենք մեր խնամքի տակ:

Այս գործն էլ կազմակերպեցինք և լաւ շահագործելու վրայ էր, երբ հասաւ ընդհանուր նահանջը:

7. Իսլամ գերի կանանց խմանքը

Մեզ մօտ մնացած իսլամ կանանց և երեխաների ամբողջ սննդի գործը մնացած էր մեզ վրայ, հակառակ կոմատի Տօլստօյի յայտարարութիւններին, որ ինք օգնութիւն է կազմակերպել: Նրանց հացը մինչև վերջ մենք ենք տուել, ինչպէս և փոխադրութեան միջոցները և նրանց ապահով պահելու հոգը մեզ վրայ էր:

8. Ազգաբնակչութեան շահերի պաշտպանութիւնը բանակի հանդէպ

Կառավարութիւնը իր ժամանակի և աշխատանքի մեծ մասը տուել է այդ գործին: Շփումներ ազգաբնակչութեան և բանակի շահերի միջև անխուսափելի էին:

Բանակի դնկավարնելը նիմնելով այն օրէնքի վրայ, թէ պատերազմի ժամանակ ազգաբնակչութեան շահերի պաշտպանութիւնը երկրորդ աստիճանի վրայ է կանգնում, սկսեցին ամէն կարգի ապօրինութիւններ:

ա- Զրի վերցնել հաց, ուտելիք գիւղերից:

բ - տները քանդել և փայտերը վառել:

գ - Այգիները փչացնել:

դ - Արտերը արածեցնել և խոտերը հնձել:

Վերջինը մանաւանդ մեծ յուզում յառաջ բերաւ Վանի (քաղաքի) շրջանում:

Բոլոր այս խնդիրների համար բազմաթիւ դիմումներ է եղել այս և այլ չափով հազիւ յաջողուեց մեղմացնել, բայց ամենակարևորը, որ փճացրած արտերի երեսի արժէքը վճարել դաթճաւ մի ամբողջ պատմութիւն:

Մենք հիմնելով նոյն ժամանակի օրէնքի վրայ, խնդրէցինք, որ յատուկ մի կոմիսիօն որոշուի, որ արժէքները գնահատեն և վճարուի, երկար և բարակ ձգձգումներէ վերջ, կոմիսիօն[202] կ'որոշուի մեր և իրենց կողմից կը գնահատէն փճացրուածների արժէքը (մօտ 3000 ր. եղաւ ամբողջը), վերջին անգամ էլ Վարագի վանքի վնասները հենց իր գեներալ Նիկօլայէվի գիտութեամբ և հսկողութեամբ: Գնահատումներից անցաւ մի քանի շաբաթ և ոնէ վճարում չ'արին, առարկելով, որ պէտք է հրամայէ: Իսկ վերջ մի ընդարձակ պատճառաբանուած գրութեամբ գեներալ Նիկօլայէվը մերժեց վճարել, պատճառաբանելով, որ բանակի Վան մուտքից առաջ, հայէր և թխորքէր մի ամիս նոյն տեղը կուէ և արտերը փճացուցէր էին արդէն և ձեր կամաւորներն էլ նոյն տեղն են բանակ-դրել (տես կառավարութեան արխիւի մէջ այդ հետաքրքիր դօկումենտը):

Պէտք է նկատել, որ բոլորը ծանր ապաստութիւն էին թուլնում հասարակութեան վրայ, մանաւանդ տէղական կառավարութեան հեղինակութիւնը բոլորովին ընկնում էր ժողովրդի առաջ իր այդ կարգի անկարողութեան համար: Իսկ հասարակութիւնը սկսում է հիասթափուել ռուսական կարգերէն, այնքան երազած և ցանկացած «Քեռի»ն[203] յանկարծ դուրս է գալիս բոլշևիկեան ոէժիմի մօլութիւններով օժտուած, դեռ տելիմ արդարացիօրէն պնդողներ կային, որոնք կը հաստատէին, որ բոլշևիկեան մօպիլի-

զացիայի ժամանակ, երբ Վան էին հաւաքւած երկու դիվիզիա զինւոր և 10000-ական քիւրտ աշիրաթներէր, այդպիսի անկարգութիւններ չ'էին պատահած: Միայն մի դեպք եղաւ, քրդերը կոտրել էին մի ծառի ճիւղ միրգ գողանալու ժամանակ: Ճիւղերը հաւաքած կանայք խուժեցին վալիի տունը և կարգ պահանջեցին: Վալին իսկոյն քրդերին հեռացրեց քաղաքից: Այս փաստը ես յիշեցի գեներալ Նիկոլայէվին, որի քէֆին հեչ չ'եկաւ ի հարկէ և կապիտան Յովսեփեանին էլ առանձին յանդիմանեց, որ շատ է հայ դարձել . . .

9. Օժանդակութիւն բանակին

Կառավարութեան աշխատանքի մեծագոյն մասը գնացել է ռուս բանակի և կամաւորներին օժանդակելուն մէջ: Նրանց հացը, միսը և այդ կարգի բոլոր բոլոր կարիքները մենք ենք հոգացել: Բոլոր հիմնարկութիւնների համար ձրի տներ ենք պատրաստւած: Կուի գնացող բոլոր խմբերին առաջնորդ է տրւած և տեղական կոմիտներին էլ միացրւած է նրանց հետ:

Այս բոլորի հետ ռուսները դժգոհ են մնացել ժամանակաւոր կառավարութիւնից, կարծելով, որ նա շատ բան կարող է անել և չ'ի ուզում անել, մոռանալով, որ մի աւերած և մի տարուց աւելի ոչինչ չի մտած դռնից քաղաքի մէջ, անկարելի է մեծ բան ընել:

10. Հասարակական կարգ և ապահովութիւն

Ժամանակաւոր կառավարութիւնը իսկոյն կարողանում է կարգ հաստատել ոչ միայն քաղաքում, ուր բանակն էր, այլև հեռաւոր գաւառներում, ուր ռուսական բանակը ոտք չ'է կոխած: Հասարակութիւնը խրախուսւած այդ խաղաղութիւնից, սկսում է ամէն կարգի շինարարական աշխատանքի: Ամբողջ կառավարութեան տևողութեան ժամանակ որևէ ոճիր չ'է պատահած. ևոյնպէս և' որևէ գողութեան դէպք, բացի այն դէպքերէն, որ պատահել է զինւորների և կամաւորների ձեռքով և մասնակցութեամբ:

Բայց հակառակ բոլոր այս բարեպատեհ հանգամանքներին, կառավարութեան դէմ դժգոհութիւններ են սկսել թէ դրսէն և թէ մեր շարքերէն:

Դժգոհութիւնները այսպէս կարելի է ձևակերպել:

ա = պաշտօնեաները կուսակցականներ են մեծ մասամբ (հակառակորդների), սրան պէտք է պատասխանել, որ նախ ամէն կարգի մարդիկ, որոնք ձեռնհասութիւն ունէին, գործի մէջ էին, իսկ եթէ դաշնակցականները շատ էին, այդ պիտի բացատրել նրանով, որ առհասարակ նրանք շատ են և ձեռնհաս ուժերը այնտեղ են:

բ = որ կառավարութիւնը դէմօկրատիկական չէ (հակառակորդների և մերոնց մեղադրանք), որ ժողովրդի լայն մասնակցութիւն չը կայ: Այս արդէն անպատասխանելի մեղադրանք է, որովհետև դեռ կառավարութիւն չը կար իսկական մտքով, որոշելու համար, թէ նա դէմօկրատիկական է թէ ոչ, մանաւանդ նա՝ ստեղծւած էր որոշ պայմանների տակ և ընդհակառակը, հակառակ տեսակ պայմաններին, նա աւելի քան ժողովրդական հիմնարկութիւններ ունէր:

գ = որ պաշտօնէութեան մի մասը անձեռնհաս և գեղծարար է.- Անձեռնհասութիւնը հասկանալի է, որովհետև սկզբէն ցանկութիւն կար լաւ ու վատ բան մ'սկսել, ապա կանոնաւորել, երբ ձեռնհաս մարդիկ գտնւէին, իսկոյն անձեռնհասները փոխանակւում էին:

Չեղծումների խնդիրը անխուսափելի չարիք է, քրքական ռէժիմի տակ մեծացած մարդիկ և պաշտօնութիւնը անկարելի էր, որ այդ գեղծումներ չ'անէին:

դ = որ տրուած տուրքերը քրքական ռէժիմի տակ մեր մերժած ձևի տուրքերն են. մենք մեր մերժածը չենք կարող կիրարկել:

Սրա պատասխանը պարզ է, մի քանի ամսում չ'էր կարելի նոր տուրքի սիստեմը դնել և դրան վարժեցնել ժողովրդին, գոյութիւն պահելու համար անհրաժեշտ էր օգտւել եղած տրադիցիաներէն:

ե = որ ինք՝ նահանգապետը, անձեռնհաս է այդ գործի համար.- որ այդ այդպէս էր 'ի հարկէ, կասկած չ'ր կայ, որովհետև ո'չ նա պատրաստւած էր այդ գործի համար և ոչ էլ անհատական դիւրութիւններ ունէր: Բայց չը պիտի մոռանալ, որ այդպիսի ժամանակի կառավարիչը կարող էր լինել միմիայն մեղմնցից որևէ մէկը, որովհետև դրսէն եկած մի անփորձ մարդ չէր կարող ոչ շրջան ստեղծել և ոչ էլ գործ: Այդ երկու ամսւայ գործը պէտք է վերագրէլ ոչ թէ ստեղծուած կառավարութեան ուժին, այլ կուսակցութեան կազմակերպչական դրացիների[204] ստեղծած դիւրութիւններին և անհատական կապէրին:

Եւ այլն և այլն:

Խօսք ասել հայկական նախանձի, չը կամութեան, զգացմունքի չափ չունենալու մասին՝ աւելորդ է, որովհետև իրրև ազգային նկարագրի աւերող գծեր, ամէնքին յայտնի է և թէ այս դէպքում, որքան դեր կատարած կը լինի, այդ էլ անյայտ չ'է:

Այսպիսով փակւում է հայկական ինքնաւարութեան առաջին փորձը, պատմութեանն յանձնելով նրա գործիչներին և գործը:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ.39, թթ.32-41: բնագիր, ձեռագիր:

ԿՈՎԿԱՍՈՒՄ

N 243

ԱՐԱՍՏ, ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՎ ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԿՈՉԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻՆ՝ ԷՋՄԻԱՑՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1916 թ.
Թիֆլիս

Два года проходит с того дня, как часть турецких армян, в качестве беженцев нашла убежище на Кавказе, где Русское правительство и организации российских армян стали оказывать им помощь, размещая беженцев, снабжая их одеждой и предметами продовольствия, открывая приюты и школы и т.д.

Пострадавшая масса турецких армян не имела возможности принимать в делах, касающихся ее самой, подобающее ей участие, нередко по независящим от нее обстоятельствам, главным же образом, вследствие ее неорганизованности.

Подобная изолированность, естественно, должна была нежелательным образом повлиять на деятельность по обслуживанию нужд беженцев и по восстановлению разоренных местностей Армении и дать начало всякого рода дефектам, для устранения которых, со стороны интеллигенции турецких армян, хотя и были сделаны не раз замечания и предложения, однако они остались без последствий. Это объясняется тем, что до сих пор руководящие элементы турецких армян не смогли организовать центральный комитет по устройству беженцев, а потому организации российских армян были вынуждены нести на своих плечах всю тяжесть работы. Созданные же в беженских пунктах и взаимно-разъединенные организации турецких армян, имея чисто местный характер, не сумели проявить согласованную и систематическую деятельность.

В настоящее время, - после событий двух годов, - стало властно необходимым, чтобы турецкие армяне через посредство законных представителей своих взяли на себя главную часть ответственности в беженских делах:

1. Оказывая усиленное содействие организациям российских армян.

2. Внося в деятельность местных комитетов турецких армян гармонию и систему, посредством контролирования их работ.

3. Устанавливая тесную связь между организациями российских армян и организациями беженцев — турецких армян.

В скором будущем в Эчмиадзине состоится съезд всех армянских беженческих организаций с целью координирования их деятельности и создания одного центрального комитета, в котором сосредоточилось бы все дело обслуживания нужд беженцев. Необходимо, чтобы турецкие армяне имели на этом съезде своих представителей, выразителей своих

желаний и потребностей, главной осью которых является вопрос об учреждении центрального беженческого органа турецких армян. А чтобы эти представители имели авторитетное значение, как перед всеми беженцами – турецкими армянами, так и перед организациями российских армян, надо, чтобы они делегировались на съезд со стороны всех беженцев, без различия места, партии и т.п. С этой точки зрения желательно, чтобы как находящиеся на Кавказе, так и живущие в занятых областях турецкие армяне, взамен особых представителей, с каждой их половины избрали лишь одну общую делегацию и уполномочили ее быть выразительницей своих желаний на Эчмиадзинском съезде, после получения согласия которого надо иметь время и возможность приступить к избранию самого центрального комитета.

Мы уверены, что все турецкие армяне, как беженцы, так и живущие на родине, отзовутся на наше воззвание и окажут содействие делу избрания своих представителей, что является первым условием для лучшей постановки дела устройства беженцев и восстановления Армении.

Арам, Андраник, Артак Дарбинян

"Армянский вестник", N 2, 1917 г., лл.20-21.

N 244
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԿԱՐԾԻՔԸ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

27 դեկտեմբերի 1915 թ.
Թիֆլիս

Արամ.- Մեր խմբերը զինուրական կազմակերպութեան տեսակէտով երբէք այնպիսի կատարեալ կազմակերպութիւն չուներ, ինչպէս այժմ: Կարգ ու սարքը օրինակելի է: Քեռիի,[205] Դրօի, Իշխանի[206] խմբերը հրապարակական շնորհակալութեան են արժանացել կորպուսների զեներալներից: Մեր խմբապետները ընդունակ են մեծ ծրագիրներ և մեծ խմբերով կատարել: Չը մոռանաք, որ Անդրանիկին ենթարկւած էին կանոնաւոր զօրքեր և թնդանօթներ և [առաջադրված են եղել] կարևոր նպատակներ, որ [ի]աջողութեամբ կատարել [են]. ուրեմն կարողացել են ոչ թէ իրենց զօրամասերը, այլ աւելի մեծ խմբերը: Դատելի կուի բոլոր ծրագիրները տուել է Անդրանիկը, խորհրդի մէջ լռելեայն լսել են, բայց որոշ-են հանել [են] նրա բոլոր առաջարկները [և] որ հրամայել է գործադրել: Արդէն կարգապահութիւնը լաւացել է: Քեռու և Վարդանի բանակները լիք են հայ օֆիցերներով, միայն Համազասպի և Անդրանիկի բանակներից օֆիցերները մի քիչ փախչում են, բայց արդէն էլ մտադիր են միջոցներ ձեռք առնել: Քնական էվօլուցիայով գործը գնում էր: Երբ յանկարծ վերակազմութիւն է առաջարկում, ինչո՞ւ, երբ ազգային ծրագրի գիտակցութիւնը չը լի-

ճի, մեր խմբերի մէջ արդէն ոգևորութիւնը կը փախչէր: Պիտի հին կերպարանքը պահել: Մենք ինքներս ուզում էինք մի քանի բանակների գլուխ դնել հայ օֆիցերներին և այնպիսիներին, որ մեր ոգով ներշնչուած են: Պիտի մեր գոյնը պահի:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 13, պատճեն, մեքենագիր:

N 245
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՋԱՊԵԼ ՉԻՒԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՄ ԱՄՈՒՄՆՈՒ ԵՎ ԻՐ ՈՒՄՈՒՅԻՀ ԱՐՇԱԿ ՉԻՒԼԻՆԳԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

24 փետրվարի 1917 թ.
Թիֆլիս

Շատ սիրելի տիկին Զապէլ!

Սրտի խորունկ կսկիծով այսօր պատահաբար լսեցի սիրելի Արշակի անակնկալ և անժամանակ մահը: Խիստ ցաւում եմ, որ անձամբ անկարող եմ, իմ վերջին հրաժեշտի համբույրները տալու իմ սիրելի ուսուցչի աճիւնին...

Կ'ուզենայի ունէ մխիթարական խօսք գտնել Ձեզ համար, բայց այժմ անկարող եմ, որովհետև իրօք որ դա Ձեզ համար տոկալի մի հարուած եղաւ:

Դուք յանձին սիրելի Արշակին կորցրիք լաւ ընկեր-ամուսին, իսկ հայ ազգը՝ բարի, յաւէտ լաւատես, շիտակ և մանաւանդ անսպառ եռանդով աշխատող մի գործիչ:

Տիկին! Ինչքան էլ ապերախտ լինի հայ հասարակական գործունէութեան ասպարէզը, լաւ իմացէք, որ Արշակի ցանած լուսոյ, բարութեան, ազնուութեան և հայ ժողովրդի վերածննդի սերմերը իզուր չեն անցնի: Նրա բազմաթիւ աշակերտները, բարեկամները և ընկերները, միշտ թարմ ու անշէջ կը պահեն իրենց հոգու խորքում, Արշակի միշտ պայծառ յիշատակը...

Եւ պտուղները արդէն հրապարակի վրայ են, իմ դպրոցական ընկերների փայլուն գործունէութիւնը, իմ համեստ հասարակական գործունէութիւնը, եթէ ունէ ազգային արժէք ունի, մենք պարտական ենք մեր սիրելի ուսուցիչ Արշակին:

Միակ մխիթարութիւնը Ձեզ համար թող լինի Արշակի և Ձեր միակ որդին:

Ձեր կեանքի մնացորդը նուիրեցէք նրան և ներշնչեցէ՛ք հօր ազնութիւնը նրա մատաղ հոգու մէջ:

Համակուած ամենախորին վիշտով՝ մնում եմ Ձեզ միշտ բարեկամ՝

Արամ

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 69, թթ. 1-2, ինքնագիր:

N 246

«ԶԱՆԳԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՏԻՆԳԻ ԵՎ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

23 մարտի 1917թ.

Այսօր Մեծ-Ղարաքիլիսէն ալ տօնեց ռուսական մեծ յեղափոխութեան և ազատութեան յաղթանակը: Ցերեկուայ ժամը 10-ին կայացաւ միթինկ գիւղաքաղաքի փոքրիկ հրապարակին վրայ, խուռն բազմութեան մը ներկայութեան: Միթինկին իրենց մասնակցութիւնը բերեր էին բոլոր դպրոցները, որբանոցները, երկաթուղիի բանուորներու կազմակերպութիւնը, Հ. Յ. Դաշնակցութիւնը, քօօփերաթիւը ևն., իւրաքանչիւրը իր առանձին դրօշակներով: Փոխնիփոխ յեղափոխական երգեր կ'երգէին ծխական և պետական դպրոցներու խմբերը՝ հայերէն և ռուսերէն: Ցուցով եկաւ և զօրքը, որ ընդունուեցաւ խանդավառ ուռռաներով և ծափերով: Զօրքի առջևէն կը տանէին ազատութեան խորհրդանշան պատկերը՝ կին մը ձեռքին փշրուած շղթաներ: Պատկերի տակը գրուած էր. «շղթաները փշրուած են: Ռուսաստանը ազատ է»: Յետոյ կը տանէին դաշնակից պետութիւններու դրօշակները և բազմաթիւ կարմիր դրօշներ. «Կեցցե՛ն մեր քաջարի դաշնակիցները»: «Կեցցէ՛ հանրապետութիւնը», «Պատերազմը մինչև յաղթական վախճան», «Քաղաքացինե՛ր, թողեցէք դասալիքները և ուղարկեցէք բանակը» և այլն վերատառութիւններով:

Խօսեցաւ Տ. Խորէն քհ. Կռանզալեանը, որմէ ետք զօրքն ու հասարակութիւնը շարժուեցաւ դէպի գիւղէն դուրս՝ բաց դաշտը: Ճանապարհին կ'երգէր ծխական դպրոցի խումբը: Դաշտի մէջ հաւաքուած էր 2.000-ի հասնող բազմութիւն: Ճառեր խօսեցան, ռուսերէն լեզուով, քօօփերաթիւ ընկերութեան վարչութեան նախագահ և ժամանակաւոր կոմիտէի անդամ պ. Խ. Մխչեանը և ռուս զինուոր մը: Յետոյ բեմ բարձրացաւ պ. Արամ Մանուկեանը, որ խօսեցաւ հայերէն, կոչ ընելով բոլորին զարծ դնել ամէն ջանք, պահպանելու համար ներկայ կառավարութիւնը, միացնելով մեր ուժերը, գործելով միաբան և համերաշխ: Դեռ խօսքը չէր վերջացուցեր, երբ բեմ բարձրացաւ վրացի զինուորական մը-պօլկովնիկ, ու երբ պ. Արամ վերջացուց իր խօսքը, ան խօսք ուղղելով զօրքին ու ներկաներուն, ծանօթացուց անոնց պ. Արամի անձնաւորութիւնը, իբրև տաճկահայ ազատագրական դատի ռահվիրաներէն մէկը, որ կազմակերպեց Վանի ինքնապաշտպանութեան գործը՝ հանդէպ թուրք ուժերի զագանութիւններուն ու հասցուց իր փայլուն վախճանին, մեծապէս նպաստելով ռուսական բանակի դէպի Վան առաջխաղացման: Երկու խօսքով դրուատելով պ. Արամի գործը, որպէս ժողովրդական հերոսի, իբրև օրինակ յանձնարարեց զինքը զօրքին: Երբ վերջացուց, համբուրուեցան. իսկ զօրքը և հասարակութիւնը ողջունեց պ. Արամը, խանդավառ ուռռաներով և ծափերով: Տեսարանը չափազանց յուզիչ էր:

Ապա խօսեցաւ, ռուսերէն լեզուով, պօլկովնիկը և ծխ. դպրոցի ուսուցչուհիներէն օր. Մաքրուհին, որ Դաշնակցութեան անունէն ողջունելով ազատութիւնն ու զօրքը՝ խօսեցաւ կարճ, բայց ոգեշունչ և գեղեցիկ ճառ մը: Որովհետև ներկայ եղող բաւական թիւով վրացիներէն մեծ մասը չէր հասկնար հայերէն կամ ռուսերէն, այն ատեն երկրորդ անգամ բեմ բարձրացաւ պօլկովնիկը և իր մայրենի լեզուով կարճ ճառ մը խօսեցաւ՝ ուղղուած վրացի զինուորներուն և հաստարակութեան:

Ճառերէն ետք, զօրքը հաւատարմութեան երդում տուաւ: Միթինկը վերջացաւ ժամը 2-ին: Զօրքի և ժողովուրդի տրամադրութիւնը խիստ բարձր էր:

Յ. Յ.

«Աշխատանք», 25 մարտի 1917թ.

N 247
ԱՐԵՍՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՄԱՐՄՆԻ ԸՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ՝ ՀՐԱՎԻՐՎԵԼԻՔ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

15 ապրիլի 1917թ.

Առաջիկայ մայիս 1-ին Երևանի մէջ պիտի գումարուի թուրքահայ փախստականներու Համագումարը, որ տևելու է 3-5 օր:

Համագումարին մասնակցելու են.

Թիֆլիսէն	*3 պատգամաւոր*
Երևանէն	*5 "*
Ալէքսանդրապօլէն	*2 "*
Նոր Բայազիտէն	*1 "*
Իգդիրէն	*1 "*
Էջմիածնէն	*1 "*
Ղամարլուէն	*1 "*
Աշտարակէն	*1 "*
Գանձակէն	*1 "*
Բագուէն	*1 "*
Բաքումէն	*1 "*
Տրապիզոնէն	*1 "*
Էրզրումէն	*1 "*
Բասէնէն	*1 "*
Երզնկայէն	*1 "*
Բաբ[երդ]-Դերջանէն	*1 "*
Խնուսէն	*1 "*
Մուշէն	*1 "*
Ալաշկերտէն	*2(1)*

Հին-Բայազիտէն	*1*	*"*
Վանէն	*2*	*"*
Կարսէն	*1*	*"*
Մեծ Ղարաքիլիս.	*1*	*"*
Մուխամէն	*1*	*"*
Րօստովէն	*1*	*"*
Սալմաստէն	*1*	*"*

Քաղաք. կուսակցութիւններու կողմէ 2-ական պատգ., «Վան-Տոսպ» և «Աշխատանք» բերթերու կողմէ 1-ական պատգ[ամավոր]:

Չգտնելով, որ քուրքահայ Համագումարը ըստ կարելոյն ներկայացնէ ամբողջ քուրքահայութեան ձայնը, Համագումարի պատգամաւորներու ընտրութեանը պէտք է մասնակցին շրջանի մէջ գտնուող և փախստականական գործերով զբաղող հայրենակցական ու դասային մարմինները և ատկէ դուրս տեղւոյն վրայ գտնուող (եթէ կան) Թուրքիոյ այլ նահանգներէ փախստականներու ներկայացուցիչները, պայմանով որ վերջիններու թիւը մարմիններու կողմէ ընտրողներու միութեան 1/3 -էն չանցնի:

Մարմիններու կողմէ, շրջանի պատգամաւորի (կամ պատգամաւորներու) ընտրութեանը ձայն ունենալու համար, կը մասնակցին 3-ական ընտրող:

Այդ վայրերը, ուր միայն մէկ մարմին կայ, պատգամաւորի ընտրութեանը կը մասնակցի այդ մարմինը ամբողջ կազմով:

Այն վայրերը, ուր մարմին գոյութիւն չունի, պատգամաւորը կ'ընտրուի ուղղակի փախստականներու կողմէ, տեղի պայմաններուն յարմար եղանակով:

Պատգամաւորը, իր մեկնելէն առաջ, անհրաժեշտ է որ օրակարգի խնդիրներու մասին վերցնէ իր հետ շրջանի հաւաքական կարծիքը, ինչպէս նաև զեկուցումներ, փաստեր, վիճակագրութիւններ և այլն:

Յանկալի է, որ պատգամաւորները ընտրուին փախստականական գործերուն մօտէն ծանօթ և ժեռնհաս անձերէ:

Եթէ տեղւոյն վրայ չը գտնուին՝ շրջանները կարող են իրենց պատգամաւորը ընտրել նաև դուրսէն:

Պատգամաւորը իր հետը բերելու է զինք ընտրողներու կողմէ լիազօրութեան թուղթը:

Յանկալի է, որ պատգամաւորները Երևան հասնին Համագումարի բացումէն գոնէ 1 օր առաջ:

Յանկալի է, որ ընդունողները իրենց պատգամաւորելու ընտրութեանը մասին օր առաջ տեղեկագրեն (նամակով կամ հեռագրով) նախաժեռնող Մարմնին:

Պատգամաւորներու ճանապարհածախքը պէտք է հոգան զինք ընտրող շրջանները:

Համագումարի օրակարգն է.

1. Զեկուցումներ:

ա) Համագումարին մասնակցող միութեանց և մարմիններու գործունէութեանց մասին:
բ) Ընդհանուր փախստականներու օգնութեան գործի մասին:
գ) Օտար, արտասահմանեան, հայ և հայանպաստ մարմիններու հետ յարաբերելու մասին:

2. *Ներգաղթը և անոր հետ կապուած խնդիրներ:*
3. *Երկրի մէջ տեղ. ազգ. վարչութեանց կազմակերպում և իրաւաբանական օգնութիւն:*
4. *Չգրաւուած վայրերու հայ գերիներու ազատութեան և օգնութեան գործը:*
5. *Երկրի հայ ազգաբնակութեան ապահովութեան հարցը:*
6. *Թուրքահայ փախստականներու տնտեսութեանց վերականգնումը:*
   ա) Վարուցանքս (պետական և ազգ. միջոցներով):
   բ) Արհեստանոցներու փոխադարձ օգնութեան և կօօպերատիւներու կազմութիւն:
   գ) Փոխատուութեան խնդիրը:
   դ) Թուրքահայ վերաշինութեան ֆօնդի խնդիրը:
7. *Նպաստի և պարենաւորման գործը:*
8. *Փախստականներու մասնակցութիւնը Կովկասի հայոց գիտատնտեսական աշխատանքներուն:*
9. *Թուրքահայ գերիները Ռուսաստանի մէջ:*
10. *Փախստականներու առողջապահութեան գործը (հիւանդանոցներ, բժշկական օգնութիւն, և.ն.):*
11. *Որբանոցներ, որբեր և անոնց կրթութիւնը:*
12. *Դպրոցներ ու անոնց կազմակերպումը:*
13. *Աշխատանքի և տեղեկատու բիւրօներ ու փախստ. վիճակագրութիւնը:*
14. *Նոր առաջարկներ ապագայ գործունէութեան համար:*
15. *Թուրքահայ փախստականներու ներքին կազմակերպութիւն և կանոնադրութեան հաստատումը:*
16. *Թուրքահայ կեդրոնական վարչութեան ընտրութիւնը:*

Թուրքահայ Համագումար կազմակերպող մարմնի կողմէ՝
Անդրանիկ, Արամ, Ա. Դաշթենեան

«Աշխատանք», 15 ապրիլի 1917թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐ

N 248

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՋԻՆՎՈՀԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1917 թ.
Թիֆլիս

Ներկայ էին անդամներ Կարճիկեան, Արամ, Ռուբէն, Տէր Օհանեան, Բաբայեան և Ամիրեան:

Որոշուեց աշխատանքները բաժանել կոմիտէի անդամների մէջ հետեւեալ ձեւով.

Կարճիկեանին յանձնել – կառավարական հաստատութիւնների հետ կապ պահպանել:

Արամին և Տէր Օհանեանին յանձնել զինւորական միւթեան դասալիքների հաւաքման և զինակոչի խնդիրների վարումը:

Խ. Կարճիկեան
Վ. Բաբայեան
Իս. Ամիրեան

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թ.29, բնագիր, ձեռագիր:

N 249

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԱՄԻՆ 200.000Ռ. ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբերի 1917 Թ.
Թիֆլիս

Ներկայ էին. Կարճիկեան, Արամ, Ռուբէն, Տէր-Օհանեան, Բաբայեան, Ամիրեան:

Որոշուեց բաց թողնել աւանս Արամին 200.000 ռուբլի զինւորական միւթեան միջոցով դասալիքների հաւաքման գործը կազմակերպելու:

Կոմիտէն հաւանութիւն տւեց, որ Արամը դասալիքների գործով մեկնի Երևանի ճահանգը:

Խ. Կարճիկեան
Վ. Բաբայեան
Իս. Ամիրեան

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 , թ. 29, բնագիր, ձեռագիր:

N 250

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՎԵՐՋԻՆԻՄ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՄՆԴԱՄԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 108 *23 դեկտեմբերի 1917 թ.*

Թիֆլիս

Վկայական

Սույն վկայականը ներկայացնող Արամ Մանուկյանը անդամ է Ազգային խորհուրդին կից կազմված Յատուկ Կոմիտեի, որ հաստատում ենք ստորագրութեամբ և կնիքով:

Նախագահ խորհուրդի՝ Ա. Ահարոնեան

Անդամ քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 37, բնագիր, մեքենագիր:

N 251

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՋԻՆԱԿՈՉԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

դեկտեմբեր 1917 թ.

ՀՐԱՄԱՆ N 1

_____ Գաւառի _____ շրջանի _____ գիւղի 1886 թի յունուարի մէկից մինչև 1898 թի դեկտեմբերի երեսում և մէկը ծնուած և 1907-1919[207] թւականներին զինակոչի ենթարկուած բոլոր հայ զինուորները՝ իսկական ծառայութեան մէջ եղածները, կարմիր ու կապոյտ տոմսաւորները, սպիտակ տոմսաւորները (ստուգելու համար)՝ թէ նրանք, որոնք գործօն բանակումն են եղած ու ապա տուն դարձած, թէ բիկուցքի աշխատանքների (Оборона) մէջ գտնուղները, ժամանակաւորապէս արձակուրդ ստացածները, զանազան արտօնութիւններով ու պատրւակներով տանը նստածները_____ պարտաւոր են_____ ներկայանալ

Զինուորները պարտական են իրենց հետ բերել.

1. Իրենց զինուորական հագուստները,

2. _____ օրւայ հաց,

3. ծննդեան ու զինուորական ծառայութեան վերաբերալ թղթերը

Գիւղի կոմիսարը պարտաւոր է.

1. Այս հրամանն ստանալուն պէս հաւաքել ու ճամբել բոլոր զինուորներին

2. Ուղարկել ճամբած զինուորների մանրամասն անուանացուցակը

3. Անձամբ ու միլիցեայի օգնութեամբ ոտկնկել զինուորներին ու անվտանգ հասցնել որոշուած տեղը.

Գիտի, ուշաստղի ու գաւառի կոմիսսարները, ինչպէս և միլիցիայի պետերը պարտաւոր են իսկոյն ձերբակալել փախչող դասալիքներին և որոշուած տեղն ուղարկել, հակառակ դէպքում պատասխանութեան կենթարկուեն. պատասխանութեան կենթարկուեն և ցուցակների մէջ կեղծիք մտցնողները:

Երեւանի Հայոց Ազգային ու Զինուորական Խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, թ.1, տպագիր օրինակ:

N 252
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻՆ ՄՆԴԱՄԱԳՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 դեկտեմբերի 1917 թ.

ԿՈՉ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Հայրենակիցնե՛ր.

Հայոց Ազգային ու Զինուրական Խորհուրդները, յատուկ կարգադրութեամբ, հայ զինուրական ուժերը հաւաքելու և հայկական կորպուսը կազմակերպելու կոչ են արել: Ազգային Խորհուրդը կազմել է մի յատուկ կոմիտէ, որը, Հայ Զինուրական Միութեան Գործադիր Կոմիտէի հետ միահամուռ, հաւաքելու է զինուրներին ու կազմելու կորպուսը: Կովկասեան ճակատի գլխաւոր հրամանատարն արդէն իրաւունք ու ամեն կարգի լիազորութիւններ է տուել Հայ Զինուրական Միութեանը, որ նա հաւաքի հայկական բոլոր զինուրական ուժերը և ուղղակի տեղաւորի հայկական գործօն ու պահեստի գնդերի մէջ:

Հայրենակիցնե՛ր.

Հայրենիքը վտանգուած է: Այսօր սպառնալիքի ու ոչնչացման անդունդի ծայրին է կանգնած ոչ միայն մոխրակոյտներով զարդարուն Թուրքահայաստանը, այլ և կովկասահայ ժողովուրդը և ընդհանրապէս մեր գեղեցիկ Կովկասը: Արհաւիրքը ծաւալւում է շտապկոտ արագութեամբ, ուստի ժամանակը չի սպասում, օրը տարւայ չափ արժէք ունի: Ամեն ոք պիտի լցւի պարտականութեան գիտակցութեամբ և կանգնի իր դիրքի վրայ: Այս է պահանջում հայ ժողովրդի հաւաքական կամքը, այս է պահանջում պատմական ժամը: Ազգ. Խորհուրդը որոշել է կանգ չառնել ոչ նիւթական և ոչ էլ բարոյական զոհողութեան առաջ: Բոլոր հայաբնակ գաւառները հասարակական գործիչներ ու զինուրական լիազորներ են ճամբուած՝ հայ զինուրներին հաւաքելու համար:

Հայ Զինուրնե՛ր.

Մեզ յանձնարարուած է Երևանի վեց գաւառների՝ Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Նոր-Բայազիտի, Շարուր-Դարալագեազի ու Նախիջևանի, և Գանձակի նահանգի մի գաւառի՝ Զանգեզուրի հայ զինտրներին հատաքելը: Առաջին հերթին պարտական եմ ներկայանալ 1886 թի յունուարի մէկից մինչև 1898 թւականի դեկտեմբերի երեսուն և մէկին ծնուածները՝ այսինքն 1907-1919[208] թւականների զինակոչին ենթարկուած զինտրները, իսկական ծառայութեան ենթարկուածները, կապոյտ ու կարմիր տոմսաւորները, սպիտակ տոմսաւորները (ստուգելու համար), թէ նրանք, որոնք գործօն բանակումն են եղած ու ապա տուն վերադարձած և թէ թիկունքի աշխատանքների (оборона) մէջ գտնվողները, ժամակատարապէս արձակուրդ ստացածները, զանազան արտօնութիւններով ու պատուականներով տանը նստածները: Կառավարութեան ու ազգի կողմից հոգացելու է եկողների բոլոր անհրաժեշտ կարիքները՝ պարենաւորումը, զինումը և տեղաւորումը: Յատուկ ուշադրութիւն պիտի դարձի զինտրների ընտանիքի նիւթական ապահովութեան վրայ:

Ամեն ոք պարտական է այս կոչն ստանալու հետևեալ օրն առնել իր զինտրական համազգեստը, երեք օրուայ պաշար ու ճանապարհ ընկնել հետևեալ տեղերը:

Երևան քաղաքի, Երևանի գաւառի երկրորդ, երրորդ ու չորրորդ (Ախհամզալուի, Ղամարլուի ու Դաւալուի) ուչաստոկների, Նախիջևանի, Շարուր-Դարալագեազի ու Զանգեզուրի գաւառների զինտրները պիտի գան Երևան քաղաքը՝ հայկական պահեստի գունդը, 2) Երևանի գաւառի առաջին (Ղըռխ-Բուլաղի) ուչաստոկինն ու Նոր-Բայազիտի գաւառինը՝ Քանաքեռ, Ս. հայկական գունդը, 3) Էջմիածնի գաւառի Ա. Գ. և Դ. (Վաղարշապատի, Սարդապատի ու Թալինի) ուչաստոկներինն ու Սուրմալուի գաւառինը՝ Վաղարշապատ, չորրորդ հայկական գունդը, 4) Էջմիածնի գաւառի երկրորդ ու հինգերորդ (Աշտարակի ու Աբարանի) ուչաստոկներինը՝ Աշտարակ, վեցերորդ հայկական գունդը: Նշանակուած տեղերում զինտրներին կընդունեն այդ նպատակի համար կարգուած լիազօրները, իսկ բժշկական քննութիւնը լինելու է գնդերի մէջ:

Հայ զինտրնե՛ր.

Ռազմաճակատի դատարկելը, Կովկասի ու յատկապէս հայ ժողովրդի ծանր կացութիւնը, հակայեղափոխական մութ ուժերի գլուխ բարձրացնելու փորձերը մեզ հրամայում են՝ դիմել ամենակտրուկ ու ամենախիստ միջոցների: Բայց նախքան այդ ծայրայեղութեան դիմելը, վերջին անգամ կոչ ենք անում ձեզ և պահանջում, որ դուք ձեր քաղաքացիական խղճի պարտաղիր թելադրութեամբ շտապէք հայրենիքի փրկութեան գործին ձեր մասնակցութիւնը ինքնաբերաբար բերելու:

Քաղաքացինե՛ր.

Մեր առաջին կոչը ձեզ ենք ուղղում, դուք պարտական էք առաջին օրինակը տալ, որովհետև դուք աւելի գիտակից էք, քան գիւղական ժողո-

վուդը, դուք սարսափելիօրէն աւելի էք դասալիք եղել, դուք աւելի հանգիստ ու ապահով էք, քան հոգնած և ուժասպառ հայ զինուցիք:

Գինուցիներ.

Վերջին անգամ դիմում ենք ձեզ, ձեր ամուր հաւատքին, ձեր խորունկ հայրենասիրութեանը: Դուք աշխատանքի զաւակներ, դուք ձեր առողջ բնազդով աւելի սուր մրմնջոցով կը զգաք հայ ժողովրդի ցաւն ու զուլումը: Ազգն ու հայրենիքը վտանգի մէջ են: Եղէ՛ք, մեր քաջե՛ր, եկէ՛ք, ձեր կրծքերը դէմ տուէ՛ք ու դարձէ՛ք ամուր պատնէշ բշնամու հանդէպ, այն բշնամու, որ սպառնալիօրէն արշաւում է յեղափոխութեան դէմ. ձեր իրաւունքների, ձեր հողի ու ազատութեան դէմ:

Հայե՛ր.

Կոչն ամենքիդ ենք ուղղում: Ամենքը պիտի ոտքի ելնենք՝ զինուոր դառնալու կամ զինուորի դժուարին բեռը թեթևացնելու համար, ամենքն պիտի իրենց մասնակցութեան բաժինը երևան հանեն, ծերն ու երիտասարդը, հարուստն ու աղքատը, տղամարդն ու կինը, ամենքը, ամենքը...

Երևանի Հայոց Ազգային ու Զինուորական Խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ. 289, ց.1, գ.17, թ.1, մերենագիր օրինակ:

N 253
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶԻՆՎՈՐԱԳՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[դեկտեմբեր 1917 թ.]

Արդէն առաջին հերթին զէնքի են կանչուած 1886-1898 թւականների ծնուածները: Հայկական զնդերին հարկաւոր են շատ ինտելիգենտ անձնատրութիւններ ու փորձուած մարտիկ ուժեր: Անդրկովկասի կոմիսարիատի յատուկ դեկրետով ու Հայոց ազգային խորհրդի կարգադրութեամբ սահմանուած է կամաւոր զինագրում: Արդ, դիմում ենք հայ մտաւորականութեանը, փորձուած ռազմիկներին ու հայրենիքին ծառայելու զգացմունքով լցուած անձնատրութիւններին ու յորդորում կամաւոր գրուել: Կամաւորները առանձին զօրամասերով տեղաւորելու են հայկական գնդերը: Յանկացողները պիտի դիմեն մեր առաջին կոչում մատնանշած վայրերը:

Մենք համոզուած ենք, որ ճակատի քայքայումը, հայ ժողովրդի ու Կովկասի գլխին ծանրացած վտանգը և Ռուսաստանի ազատութեան վտանգիլը շատ մօտ են հայ գիտակից տարրերի սրտին, որ սրանք չեն կամենայ բշնամու երիվարների ոտքերի տակ նետել մեծ յեղափոխութեան փրկարար սկզբունքները, ուստի և վստահութեամբ կանչում ենք նրանց հայ ժողովրդի ազատութեան գործին մասնակցելու:

Ամենից առաջ ձեզ ենք դիմում, հայ ուսանողներ ու աշակերտներ, դուք դեռ կեանքի խճճուած պայմաններում չէք մեռցրել ձեր արիւնը, դուք դեռ ապրում էք վառվռուն գաղափարների աշխարհում: Ամենից առաջ ձեր սրտերում է արծագանք գտնելու ժողովրդի փրկութեան կոչը:

Դիմում ենք և ձեզ, հայ ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ ու այլ մասնագիտութեան մտաւորականներ: Դուք մինչև այսօր ձեր շնորհքները ծառայացրել էք ազգի խաղաղ կուլտուրական առաջդիմութեան: Այսօր, երբ ռազմի շեփորն է հնչում, պիտի դուրս գաք ձեր առանձնասենեակներից և դէպի պատերազմական սպահանջներ դիմէք:

Բաց ճակատով ենք դիմում ձեզ, փորձուած հայ մարտիկներ, դուք մեր ժողովրդի ամենաանձնուէր պահապաններն էք և միշտ պատրաստ էք եղել գտնել ձեզ: Այսօր կրկին ձեր դռներն է բախում հայ ժողովրդի բախտը:

Երևանի Հայոց Ազգային ու Քաղաքական խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 3, թ. 1, տպագիր օրինակ:

N 254
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ՝ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՈՒ ՍՊԱՆԵՐԻ ՔՈՐԱՍԱՍԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԱԼՈՒ ՄՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1917 թ.

ՀՐԱՄԱՆ N 4

ՏԱՆՏԵՐԸ ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆ ՀՄԿԵԼ,

որ 20-32 տարեկան հասակ ունեցող հայերը անպատճառ ներկայանան Դօկտորսկայայ N 66 ցուցակագրուելու և զօրքերի շարքերը մտնելու համար մինչև սոյն դեկտեմբեր ամսի 31-ը:

Եթէ զինակոչից ԽՈՒՍԱՓՈՂՆԵՐ ԿԼԻՆԵՆ, դրանց մասին տանտէրերը ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ յայտնել Յատուկ Կոմիտէին, հակառակ դիպուածում ենքա կենթարկուեն
ԱՄԵՆԱԽԻՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ:

ՀՐԱՄԱՆ N 5

Ոչ հայկական զօրամասերից ժամանակաւոր կերպով հիւանդութեան և այլ պատճառներով արձակուրդ ստացած (отпуск) ՋԻՆՈՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ Երեւանում հայոց ՊԱՀԵՍՏԻ ՔԱՍԼԻՕՆԸ (запасной батальон) 1918 թի յունուարի 10-ին:

ՀՐԱՄԱՆ N 6

Զանազան, ոչ հայկական, և տեղի հայկական զօրամասերից ժամանակաւոր կերպով արձակուրդ ստացած (отпуск) հայ սպաները ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ Երևանում հայոց պահեստի բատալիօն (запасной баталион) 1918թի յունուարի 10-ին:

ՀՐԱՄԱՆ N 11

Երեւանի Հայոց Ազգային և Քհնտրական Խորհուրդների Յատուկ Կոմիտէն հրամայում է բոլոր 1899 թի ծնւածներին ՆԵՐԿԱՅԱՆԱԼ Երևանի զաւառական քհնտրականատեսը Уездное воинское присутствие Аптечная ул. N 6

Երեւանի Հայոց Ազգային եւ Քհնտրական խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, թթ.2-4, 8, տպագիր օրինակ:

N 255
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՀԱՍՎՈՐ ՔԻՆՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունվարի 1918 թ.
Երևան

ՀՐԱՄԱՆ N 7

Ազգային Խորհուրդը վճռել է պետական ու ազգային միջոցներով հոգալ նոր մօբիլիզացիայի ենթակայ հքատր զինւորների ընտանիքների ապրուստը: Սակայն դրա համար պահանջւում է որոշ ժամանակ ու կազմակերպութիւն: Միւս կողմից՝ կարիքը շտապկոտութիւն է պահանջում, ուստի Երևանի Ազգային և Քհնտրական Խորհուրդների Յատուկ Կոմիտէն որոշել է, որ ամեն մի գիւղական համայնք պարտաւոր է օգնութեան հասնել իր գիւղի զինւորների նպաստի կարիք ունեցող տների քիւը, իւրաքանչիւր ընտանիքի անդամների քիւը և կարիքի չափը: Այս հրամանն ստանալուց յետոյ՝ տասը օրւայ ընթացքում պիտի նպաստի գործը կենտրոնացւի կազմակերպւի ու կայնքւսարների պատիւնն ապահովւի: Այդ օգնութիւնը տեղւում է երեք ամիս, իսկ այդ ժամանակի ընթացքում կը կազմակերպւի պետական և ազգային հաւայթի բաշխումը:

Հրամայում ենք բոլոր ուշատկանների ու հասարակութիւնների կոմիտներին ի կատար ածել այս վճիռը: Այն գիւղերն ու անհատները, որոնք այս հրամանը կատարելուց կը խուսափեն, պատասխանատւութեան կենթարկւեն և նրանցից կրկնակի չափով կառնւեն տուրքերը:

Երեւանի Հայոց Ազգային եւ Քիւնտրական Խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, բ.5, տպագիր օրինակ:

N 256
*ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՇԱՀԽԱԹՈՒՆՈՒՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՐԱՄԱՆ N 8

Երևանի Հայոց Ազգային և Քիւնտրական Խորհուրդների Յատուկ Կոմիտէն հրամայում է Երևան քաղաքի բաղային պահպանութեան գործը յանձնուած է կամենդանտ Շահխաթունուն, որին և պէտք է ենթարկել այսուհետև:

Երեւանի Հայոց Ազգային եւ Քիւնտրական խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, բ.6, տպագիր օրինակ:

N 257
*ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽԻՍՏ ՊԱՏԻԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՐԱՄԱՆ N 10

Հայրենիքի դաւաճաններ են յայտարարում՝

1. Այն անձինք, որոնք զինակոչից խոյս կտան և նշանակուած ժամանակին չեն ներկայանայ զօրքերի շարքերը մտնելու:

2. Այն զինուորները, որոնք զօրամասերից կփախչին:

3. Այն զինուորները, որոնք հրացան, փամփուշտ, պետական հագուստ և այլ իրեր կը պահեն և կամ կը ծախեն:

Վերոյիշեալ անձինք կը դատւին Քիւնտրական Յեղափոխական դատարանով և նրանց ամենախիստ կերպով պատժելու համար Յատուկ Կոմիտէն կանգ չի առնիլ ոչ մի միջոցի առաջ:

Երեւանի Հայոց Ազգային եւ Քիւնտրական խորհուրդների
Յատուկ Կոմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, բ.7, տպագիր օրինակ:

N 258

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՋՈՐԱՄԱՍԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 հունվարի 1918 թ.

Լսելով պ. Արամ Մանուկեանի պահանջը 200.000 ռ. (տե. հեռագիրը Երևանից ստացած 14/1).-

Որոշեց. փոխադրել այդ գումարը Երևան Արամին, որից 100.000 ռ. հայկական զորամասերին առձեռն վճարելու համար, իսկ մնացած 100.000 ռ. դասալիքներ հաւաքելու գործը կազմակերպելու համար.[209]

Խ. Կարճիկեան
Իս. Ամիրեան
Վ. Քարայեան

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 172, բնագիր, ձեռագիր:

N 259

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԿԱՅԱՐԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱԿԱԽՈՒՄՔ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

19 հունվարի 1918 թ.

1. Состав армянского полка с 5 часов семнадцатого, Ваши люди разбрелись. Остались 24 человека, Андраник дает своих 60, которые будут сопровождать до Александрополя. Телеграфируйте Хатисову, чтобы там приняли меры охраны на станции и дали дополнительную охрану взамен андраниковских.

2. Просим довести до нашего сведения: прошло ли по приказу формирование армянского пограничного полка.

3. Оружие 5-го и 6-го полков может быть передано заимообразно лишь официальной войсковой частью. Если приказ не последовал, быть может найдете возможным передать оружие партизанскому армянскому полку, формируемому Вами в Эривани, и уже утвержденному.

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թթ.439շրջ.-440, բողոք, ձեռագիր:

N 260

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ՝ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

20 հունվարի 1918 թ.
Թիֆլիս

1. Два дня не получаем от Вас сведений.

2. Через несколько дней выйдет гнацк аранцин дивизиян апранкнеров.[210]. Примите меры, чтобы использовать вагоны для перевозки наших войск. Ваxан приедет с автомобилями и бензином.

3. Вчера в краевом центре сообщили, что на станции Эчмиадзин было нападение на какой-то эшелон со стороны армян.

Просим сообщить насколько верно это сведение.

4. Сообщите подробности Джульфинского происшествия.

5. Самерцев паханджум е утхарюр мард.[211] До объявлении мобилизации мы не можем ничего сделать. Можете ли Вы помочь ему из Вашего излишка?

Джамалян

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թ.440 և շրջ., բողոն, ձեռագիր:

N 261
«ԱՇԽԱՏԱՆՔԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

22 հունվարի 1918 թ.

Յունվար 22-ին, երկուշաբթի երեկոյ, տեղի ունեցաւ Ամերիկեան Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութեան կողմէ Երևանի մէջ հիմնուած զինվորական ակումբի բացման հանդէսը:

Ակումբի շէնքը կը գտնուի Անգլիական պարտէզի մօտ՝ եղիազարեաններու նախկին առևտրական տան մէջ:

Ներկայ էին բազմաթիվ զինւորներ, սպաներ, Հայ Զինւորական Միութեան Վարչութեան անդամները, քանի մը գեներալներ, գնդապետներ, բժիշկներ, կամենդատը, քաղաքագլուխը, Ամերիկայի միսիօնարներ, ընկեր Արամը, Երևանի Ազգ. Խորհուրդի քանի մը անդամներ, տեղական թերթերու խմբագիրներ և այլն:

Հանդէսի բացումէն առաջ՝ Խաչ-Վանքեան քահանան գեղեցիկ և յուզուած ճառով մը բացատրեց ձեռնարկի նշանակութիւնը յորդորելով որ՝ «միշտ մեր աչքերը դէպի արևմուտքը դարձնենք, ուրկէ պիտի գայ լոյսը՝ աստիճանական տիրող այս քաճար խաւարը փարատելու»:

Օրհնութեան արարողութիւնէն յետոյ՝ Յովհ. Յակոբեանի նախագահութեամբ՝ յաջորդաբար խօսեցին Մստըր Եարօ, Արամ, քաղաքագլուխ Տօշեան, բժիշկներ Մելիքեան ու Տ. Միքայէլեան և հայազգի գեներալ Միլիկով (վերջինս ռուսերէն լեզուով):

Ընկեր Արամը իր ճառի ընթացքին երևան բերելով այն անձնուիրութիւնն ու մարդասիրական վերաբերմունքը զոր ամերիկացի միսիօնարները, ի մասնաւորի Ռէյնօլդս, Եարօ և վերջերս Ե. Ք. Ը.-ի երիտասարդ

ներկայացուցիչներու ի գործ դրած են ու կը դնեն հայ ազգի համար, յոր-դորեց հայ զինուորները որ իրենց նեղ անձնապաշտական ու ընտանեկան կեանքէն դուրս գալով՝ ընդհանուրի, ազգի և հայրենիքի մասին մտածել ու զոհաբերել զիրենք:

Ի վերջոյ, Ե. Ք. Ը.- ներկայացուցիչներէն ճօն Էլտօր՝ անգլերէն լեզուով սկսաւ բացատրել մէկիկ մէկիկ ակումբի ունենալիք գործունէութեան մասին՝ յայտնելով միանգամայն, որ շատ սիրով պիտի ընդունին ամէն կարգի թելադրութիւներն ու դիտողութիւնները:

Մէջընդմէջ կը նուագէր զիմնազիստներու նուագախումբը:

«Աշխատաւոր», 31 յունվարի 1918 թ.:

N 262
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿՈՄԻՍԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

25 հունվարի 1918 թ.

С назначением Арама комиссаром, местный совет будет очень доволен, по нашему тоже он единственный человек, который мог бы занять такой ответственный пост.

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թթ.442 շրջ., բնօրին. ձեռագիր:

N 263
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 հունվարի 1918թ.

Լսեցին. Арам-паша ни в коем случае на соглашается принять на себя место комиссара армянских частей, и он просит его освободить от этой должности и назначить кого-нибудь из военных.

Որոշեցին. յայտնել Ազգային Խորհրդին:

ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.24, թ.527 շրջ. բնօրն, ձեռագիր:

N 264
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆԸ՝ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ ԲԱՐԻ-ԴՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[փետրվար 1918 թ.]

ՀՐԱՄԱՆ N 12

Երևանի Հայոց Ազգային Խորհրդի գաւառական Մասնաճիւղերին, Յատուկ Կոմիտէի գաւառական և գիւղական լիազօրներին, գիւղական և գաւառական կօմիսարներին և բոլոր գիւղերի ու քաղաքների հայ հասարակութեան:

Երևանի Հայոց Ազգային և Զինւորական Խորհուրդների Յատուկ Կօմիտէն յայտարարում է ի գիտութիւն նահանգի բովանդակ հայութեան, որ ՈՒԼՈՒԽԱՆԼԻԻ, ՇԱՐՈՒՐԻ, ՇԱՀԹԱԽԹԻ, ՋՈՒԼՖԱՅԻ, ԻԳԴԻՐԻ և մի քանի այլ տեղերի ճանապարհներին տեղի ունեցող անկարգութիւնները արգելք հանդիսանալով ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութեան, զօրամասերի երթևեկութեան ու պարենաւորման մթերքների տեղափոխելու՝ զինւորական բարձր իշխանութիւնը ստիպած եղաւ զէնքի դիմելու՝ ճանապարհների հաղորդակցութիւնը կանոնաւորելու և զօրքերի տեղափոխութիւնը դիւրացնելու նպատակով:

Այդ իրաւունքը վերապահած լինելով՝ զինւորական բարձր իշխանութեան, սրանով Կօմիտէս հրամայում է Երևան նահանգի բովանդակ հայութեան՝ գիւղում թէ քաղաքում, դաշտում թէ ճանապարհին, տներում թէ շուկայում, ոչ մի հայ՝ խմբովին թէ անհատ, չլիամարծակի թիւրքերի վրայ յարձակելու, նրանց հետ կռւելու և այդպիսով բարի հարևանական յարաբերութիւնները խախտելու, կարգն ու խաղաղութիւնը խանգարելու:

Կտրականապէս յայտարարում ենք ամենքին, որ մեր այս հրամանը չլկատարողները կարգն ու խաղաղութիւնը խանգարողները, կռիւ ու անկարգութիւն ստեղծողները, աւազակային, թալանի հակումներ ունեցողները կրհամարւեն հայրենիքի դաւաճաններ, եղբայրասպան ոճրագործներ և կրդատւեն զինւորական դատարանով.

Երեւանի Հայոց Ազգային եւ Զինւորական խորհուրդների
Յատուկ Կօմիտէ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.18, թ.1, տպագիր օրինակ:

N 265
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՅԱՊՈՆԻՆ ՏՐՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՋՈԿԱՏ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N1681 *15 փետրվարի 1918 թ.*

Представитель сего Япон[212] уполномочен Особым комитетом на формирование Армянского партизанского батальона и назначен Командиром того же батальона.

Просим все революционные и общественные организации, всех должностных лиц армянского общества оказать всяческое содействие в исполнении возложенного на него поручения.

Уполномоченный Армянского Национального и Военного советов

Арам

Делопроизводитель С. Оганджанянц

Верно: за делопроизводителя Газарян

Ֆ.201, ց.1, գ.56, թ.4, վավերացված պատճեն, մեքենագիր:

N 266

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶՈՐԱԿՈՉՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 փետրվարի 1918 թ.

Շատերը հայ զինուրներից խուսափում են զօրակոչից՝ մտածելով, որ երբ իրենք հեռանան գիտից՝ իրենց ընտանիքները կը մնան անօգնական: Այս խառն օրերին, երբ մեր ժողովուրդին ամեն կողմից վտանգ է սպառնում, խուսափել զօրակոչից՝ նշանակում է դաւաճանել ազգին և հայրենիքին: Բայց ամեն զինուրացու թողնում է տանը կին, երեխա, ծնողներ և իրաւունք ունի մտահոգվելու նրանց վիճակի մասին: Քանի որ վերահաս վտանգը սպառնում է ամբողջ ազգին, ուստի ամբողջ ազգը պէտք է մտածէ իր պաշտպանութեան մասին. զինուրացուները – կուի դաշտում, իսկ մնացածները – հոգալով զինուրների թողած ընտանիքի մասին:

Կովկասի կառավարութիւնը որոշել է զինուորի ընտանիքի ամեն ամսին տալ ամսական 20 ռուբ.: Բայց այդ գումարը բաւարար օգնութիւն համարել չի կարելի: Պէտք է ժողովուրդն ինքն իր կողմից օգնութեան հասնի զինուրների ընտանիքներին:

Այս նպատակով կարգադրում ենք.

1. Բոլոր գիւղերը պարտաւոր են իրեն միջոցներով վարել զինուոր գնացողների հողերը: Այս պարտականութիւնը պէտք է հատասար և արդարապէս բաժանել գիւղի բոլոր տների վրայ՝ մէջը հաշուած և զինուորի ընտանիքը: Ոմանք պարտական են գութան տրամադրել, ոմանք եզներ ու ոմանք աշխատողներ: Ամեն տան անելիքը պետք է որոշէ գիւղի կոմիտէն, իսկ ուր կոմիտէ չկայ՝ պէտք է յատուկ այդ նպատակով ընտրել մի կոմիտէ: Սերմացուն պետք է փոխարինաբար առնել գիւղի ունևորներից առանց տոկոսի կամ պէտք է ծեռք բերել դրամով, որը նոյնպէս պէտք է փոխարինաբար առնել գիւղացիներից առանց տոկոսի: Փոխարինաբար վերցրած ցորենի քանակի և տեղական արժէքի, ինչպէս և փոխարինաբար առած դրամի քանակի մասին պէտք է տեղեկութիւն տալ գաւառական կենտրոնի կոմիտէին մանրամասն ցուցակով, թէ ո՛ր զինուորի ընտանիքի համար որքա՞ն ցորեն կամ դրամ է փոխ առնուած և ու՞մից:

2. Բոլոր գիւղերը պարտաւոր են հանձել զինւոր գնացածների արտերն ու խոտատեղերը, պարտաւոր են նաև աշնանը գիւղի հաշւին փոխադրել զինւոր գնացածների կալերը և օգնել կալսելու աշխատանքին: Աշխատանքը հաւասար և արդարացիլս պէտք է բաժանել գիւղի բոլոր տների վրայ՝ մէջը հաշւած և զինւորների ընտանիքը: Աշխատանքը պէտք է բաժանէ գիւղական կոմիտէն:

3. Իրենց համագիւղացի զինւորի ընտանիքին օգնել չկամեցող գիւղացիներին համոզել, որ ենթարկւեն գիւղի կոմիտէի որոշման. եթէ չհնազանդեն – նրանց անունները յայտնել գաւառական կենտրոնի կոմիտէին:

4. Զինւորի ընտանիքի դաշտային աշխատանքները գիւղացիք պարտաւոր են կատարել ամենից առաջ:

5. Գիւղացիք պարտաւոր են այնպէս անել, որ զինւորի ընտանիքի ամեն անդամի մէկ տարւան ապրուստի համար ապահովւի առնւազն 12 փ. հաց և ունեցած անասունների կերը, հաշւելով մէջը նրանց սեփական բերքը:

Հայրենակիցնե՛ր, զարնան ցանքի ժամանակը մօտենում է, պատրաստ եղէք օգնելու մեր հայրենասէր զինւորների ընտանիքներին: Օգնել զինւորի ընտանիքին – նշանակում է պաշտպանել Ազգն ու Հայրենիքը:

Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 6, թ. 1, տպագիր օրինակ:

N 267
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՎԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

6 մարտի 1918 թ.
Երևան

Վանի ընկերներին.

Սիրելի՛ք: Ձեզանից բազմաթիւ նամակներ եմ ստացել և ոչ մէկին կարծեմ հնարաւոր չեղաւ պատասխանել: Լրագիրներից կ՛իմանաք վերջին անցուդարձը: Ես ուզում եմ միայն ստեղծուած կացութեան մասին մի քանի գործնական թելադրութիւններ անել ձեզ:

1.- Լրագիրներից և նամակներից կը տեսնէք, որ Կովկասը ահաբեկուած և խուճապի է մատնուած. սրա պատճառը փնտռելու էք ոչ թէ թշնամու գերազանց ուժերի մէջ, այլ մեր ներքին կացութեան. զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու փսիխոզը հասել է ծայրայեղութեան. սրա դէմ վերջերս միջոցների դիմեցինք՝ կիրարկելով մահուան պատիժը, և աջ-ձախ սկսել ենք զարնել. առաջին տպաւորութիւնը լաւ է: Այս լքուածութիւնը մեծապէս ազդեց ճակատների վրայ. հրաման են տուել ետ քաշուել. երևի, նոյնը կ՛անեն և ձեզ:

Քաջ ծանօթ լինելով թուրքերի վիճակին՝ կարծում եմ , որ դուք այժմ ինձանից լաւ գիտէք այդ. պէտք է տեղի չտալ, զէք պաշտպանել Ալաշկերտ-Վան հողամասը թիկունքը լաւ ամրացնելու պայմանով:

Այժմ, մեղաւորներ որոնելու ետևից չընկնենք. այսքանը միայն իմացէք, որ այստեղ մի չնչին փոքրամասնութիւն դարձեալ հերետիկական ճիգեր է անում, որ ոևէ կերպով նոր ուժեր հասցնենք ճակատ: Ես անձամբ հաւատացած եմ, որ այդ մեզ կը յաջողի, միայն թէ դուք դիմացէք:

2.- Վանի պրիգադային ձեր հրահանգին համաձայն թոյլ չտուի, որ շատ մարդ վերցնի. մօտ 1500 զէնք և 4000 կոմպլէկտ հագուստ ունենք պատրաստ ձեզ համար: Ես կարող եմ հասցնել մինչև Իգդիր. աշխատեցէք այնտեղ բեռներով ոևէ կերպ ներս քաշել:

Ալաշկերտի Ղարաքիլիսէն փամփուշտ կայ մոսինի, աշխատեցէք այնտեղից էլ օգտուել: Այնտեղ մօտ մէկ միլիոն պատրաստի փամփուշտ կայ ձեզ համար:

Խիստ նկէք դասալիքների և դաւաճանների վերաբերմամբ:

Վանի պրիգադայի պետը մի լաւ մարդ և հրաշալի ու փորձառու պօլկովնիկ է, ներկայացուած է գօրավարութեան, կամ դէպքերի պատճառով չի ստացել. շատ պիտի սիրէք, հոգով հայ է և տղամարդ. ինքն էլ դարաբաղցի է իսկական տիպով[215]: Շուտով կը պատրաստենք և թնդանօթաձիգներ. արդէն հեռագիրներ ունենք, որ սպաներ են գալիս, այնպէս որ դրանց հետ ռուսահայեր կը դնենք և կ՝ուղարկենք անմիջապէս ձեզ:

3.- Իմ կարծիքով Ե. պոլկի աւելորդ զէնքեր և ինչքեր ձեզ թողնելով, վերցնելով և լաւ սպաներին՝ միւսներին պիտի թողնել, որ ուղ լինին. այդպէս էլ ես պիտի աշխատեմ այստեղ:

4.-Դրամի համար ամէն կերպ աշխատեցինք, որ մի գումար հասցնենք. այդտեղից փոլիցա քաշեցէք՝ հոս վճարենք ընտանիքներին:

5.-Շուտով ներկայացրէք ձեր զինուորների ընտանիքների անդամների թիւը զինուորների անուների հետ, որ ամսականներ կապենք. երևի գիտէք, որ տունը մնացող մարդագլուխ, մեծ ու փոքր, աղքատ կամ հարուստ ստանալու է ամսական 20 րուբլի:

6.-Սուրհանդակներ հանեցէք մինչև Երևան. ուրիշ կերպ լուր առնել կամ տալ անհնարին է:

7.- Կովկասը մեծ ճգնաժամ է ապրում. հայ-թուրքական ոչ թէ ընդհարում, այլ պատերազմ է սկսուել. Վրաստանը մեզ էլ, իրեն էլ խայտառակեց. սկզբից հակառակելով զինուորագրման՝ հիմա խուճապով սկսել են զինուոր հաւաքել:

Նահանգ նահանգի հետ կապ չունի. մի ամիս է Թիֆլիսից լրագիր կամ փոստա չենք ստանում:

Բագում և Շուշու կռիւները դլուխիւնը ծանր է. դեռ ընդհարումներ չկան, բայց օրէ օր սպասում են. մերոնք լաւ կազմակերպուած են:

Պոլկեր կան Շուշի, Գանձակ, Նուխի, Բագու ևն.:

Եւրոպական բեմից լուր չունենք: Անգլիացիք, ըստ երևոյթին, Երուսաղէմի կռիւները յաղթանակներ են տարել:

Գերմանացին, ըստ լուրերի, գրաւել է Օդէսա, Կիէվ, Խարկով, Մոսկուա, Պետրոգրադ և այլն:

Հիւսիսային Կովկասից հաց չենք ստանում. զօրքը պահում ենք ազգային միջոցներով: Երևան քաղաքը տուել է մէկ միլիոն րուբլի: Հացի գինը խալվարը (30 փութ) 1500 րուբլի է. սկսել են բրինձի և ցորենի խառն հաց թխել զօրքի և ժողովրդի համար:

Թալան, գողութիւն և սպանութիւններ աջ ու ձախ լեցուած են:

Եկողները աւելի լաւ են պատմում ձեր շրջանի մասին, այնպէս որ մենք նախանձում ենք ձեզ:

Լևոնին ասացէք, որ 500 րուբլին ուղարկել եմ

Շատ և շատ բարևներով

Արամ

Արամ, Մահուան յիսնամեակի առթիւ, 1969, էջ 392-394:

N 268

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՈՒՐՔԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՆ N 14

7 մարտի 1918 թ.

Երևանի հայոց Ազգային և Ջինւորական Խորհուրդների Յատուկ Կոմիտէն ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ է ի գիտութիւն հայ հասարակութեան հետևեալը.

1. Ի նկատի ունենալով մօմենտի լրջութիւնը և դրա հետևանք դրամի խիստ կարիքը, հրամայում է անմիջապէս վճարել Ազգային Խորհրդի որոշած տուրքը:

2. Այն անձինք, որոնք մինչև տոյն մարտի 10-ը չեն վճարել, մարտի 10-ից յետոյ պարտաւոր են յաւելեալ տուրք վճարել օրական 1% (մէկ տոկոս):

3. Մարտ 15-ից յետոյ չվճարողները համարուելու են անպարտաճանաչներ, որոնց նկատմամբ կը գործադրուին խիստ միջոցներ:

ՀՐԱՄԱՆ N 15

21 մարտի 1918 թ.

Երեւանի Նահանգական Հայոց Ազգային Խորհրդի գիտական եւ գավառական մասնաճիւղերին

Երևանի Նահանգական հայոց Ազգային Խորհուրդը հրահանգում է իր գաւառական և գիւղական մասնաճիւղերին, անմիջապէս սկսել ազգային տուրքերի գանձումը:

Ի նկատի ունենալով վայրկեանի լրջութիւնը և դրամի ստիպողական կարիքը, Խորհուրդս առաջարկում է առանց ուշացնելու գանձել ազգային տուրքը՝ կանգ չառնելով նոյն իսկ ամենախիստ միջոցների առաջ:

Գանձւած տուրքը անմիջապէս փոխադրել Կենդրոնական Խորհրդին, պահելով իւրաքանչիւր շրջանում անհրաժեշտ ծախքերի համար մի որոշ գումար:

Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.4, թթ.22, 23, տպագիր օրինակ:

N 269
«ԶԱՆԳԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՄԻՏԵՆ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 մարտի 1918 թ.

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդը իր մարտի 12-ի նիստում դաշնակցական ֆրակցիայի առաջարկով Ազգ. և Զինուորական Խորհրդների Յատուկ Կոմիտէն համարեց լուծուած. պատճառները երեք էին, նախ որ այդ Յատուկ Կոմիտէն ընտրուած էր միայն երկու ամիս ժամանակով և միայն այդ ժամանակամիջոցի համար է նրան տրուած եղել գործելու gartblanche (կարտ բլանշ)[214], ապա Յատուկ Կոմիտէում աշխատանքի բաժանում չը լինելու պատճառով. աշխատանքն ամբողջապէս ծանրացած է այդ կոմիտէի միայն մի քանի անդամների վրայ և վերջապէս այն Զինուորական Մասնաբիւրը, որից 2-2 ու կես ամիս առաջ երեք ներկայացուցիչ են հրաւիրուել Յատուկ Կոմիտէի մէջ, այսօր արդէն ապրելու իրաւունք չունի, որովհետև նա այսօր արդէն հայ զինուորութեան ներկայացուցիչը չէ: Այս բոլորը ի նկատի ունենալով և գլխաւորապէս աշխատանքի բաժանումը կատարելու համար միաձայն որոշուեց Յատուկ Կոմիտէի փոխարէն ունենալ Ազգ. Խորհրդի դիւան՝ կազմուած հետևեալ ձևով. - զինուորական, պարենաւորման ու ֆինանսական, ինքնապաշտպանութեան ու փոխյարաբերութեան, ներքին գործերի համար ունենալ առանձին կառավարիչներ: Զինուորական մասը յանձնուեց՝ Թիֆլիսի Ազգ. Խորհրդի լիազօր Արամին, պարենաւորմանն ու ֆինանսականը՝ Յովի. Մելիքեանին, ինքնապաշտպանութեան և փոխյարաբերութեանը՝ Արշ. Աստուածատրեանին, ներքին գործերը՝ սոց - յեղափոխականներին (թեկնածուն դեռ որոշուած չէ). Մկ. Մուսինեանն էլ մնում է նախագահ առանց պօրտֆէլի:

«Զանգ», 13 մարտի 1918 թ. N 20:

N 270
«ԶԱՆԳԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՄՊԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՄ ԵԼՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սպաների ժողով

Յերեկուայ[215] ժամը 4-ին ընյն տեղում կայացաւ սպաների ժողովը: Ներկայ է ժողովրդի հոծ բազմութիւն: Ոգևորութիւնը անսահման է, հայրենիքը սեփական արիւնով պաշտպանելու վառ ցանկութեամբ ժողովը միաձայն որոշեց արտակարգ լիազորութիւնները տալ Արամին, զինւորական իշխանութիւնների հրամանները անշեղ կերպով կատարել տալու և նահանգի անիշխանութեան դեմ կռւելու համար:

Արամ

Սպայութիւնը և ժողովրդի ստւար բազմութիւնը գնդապետ Փիրումեանի գլխաւորութեամբ դիմեց դէպի Արամի տունը: Տանից ներս էր դուրս գալիս նա. գնդապետ Փիրումեանը[216] յայտնեց նրան սպաների ու ժողովրդի ցանկութիւնն ու «կեցցէ՛» գոռաց: «Ուռաներ» բնւացրին օդը և Արամին ձեռքերի վրայ բարձրացրած բազմութիւնը դիմեց դեպի Ազգային խորհուրդ: Դուրս գալով պատշգամբը, Արամը դիմեց ժողովրդին հետևեալ խոսքերով,- «Ես մի քանի անգամ բաղտ և դըժբախտութիւն եմ ունեցել այսպիսի ճգնաժամային րոպէներին լինել իմ ժողովրդի մօտ, աշխատել եմ, որքան ներել են ուժերս և այժմ էլ խոսք եմ տալիս չխնայել ճիգ ու ջանք, անել այն, ինչ որ կարող եմ. բայց դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթե ժողովուրդը պատրաստակամութիւն ունի իր բոլոր միջոցներով աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ և ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի: Թող կեցցէ հայ ժողովուրդը, որը իր սեփական ջանքերով, իր անձնազոհութեամբ պիտի փրկէ իրեն»: Արամից յետոյ սրտառուչ ճառ արտասանեց Խաչւանքեան քահանան:

Զօրահանդես

Երեկոյան ժամը 7-ին Ազգային խորհրդի առաջ զինւորական կարգով շարուած էր պարտիզանական գունդը: Պատշգամբում երևաց Արամը, գունդը զինւորական պատիւ տւեց: Նա դիմեց գնդին ու ոգևորիչ ճառով կոչ արեց միշտ բարձր պահել հայ զինւորականի պատիւը: Ճառը վերջանալուց յետոյ գունդը երաժշտախմբի նւագակցութեամբ զինւորական երթով անցաւ զօրանոց: Մարտի 26-ին, առաւօտեան տեղի ունեցաւ հայկական 2-րդ ծիաւոր գնդի զօրատես:

Ազգային Խորհուրդ

24-ի երեկոյեան, ժամը 8-ին կայացաւ Ազգային խորհրդի նիստը, նախագահը զեկուցելով այդ օրը կատարուած անցքերի մասին, առաջարկեց Խորհրդին ընդառաջ գնալով զինւորութեան և ժողովրդի ցանկութեանը, արտակարգ լիազօրութիւններ յանձնել Արամին: Խորհուրդը տւեց

իր համաձայնութիւնը: Արամը շնորհակալութիւն յայտնելով ասաց, որ ինքը չի կարող յանձնել առնել բացարձակ լիազօրի պարտականութիւններ և որ այսուհետև էլ կը գործէ համախորհուրդ Ազգային Խորհրդին ու առաջարկեց հեռագրով յայտնել կենտրոնական Ազգ. խորհրդին, գեն. Նազարբեկեանին և գեն. Միլիկովին, որ նրանց բոլոր կարգադրութիւններն ու հրամանները կը կատարուին անշեղ կերպով: Այս առաջարկութիւնը ընդունելուց յետոյ ժողովը անցաւ իր հերթական խնդիրների քննութեան:

«Ձանգ» 27 մարտի 1918թ.

N 271
«ՀՈՐԻԶՈՆԻ» ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ Ա. ՄՆՈՒԿՅԱՆԻՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԱՅՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

26 մարտի 1918թ.

Երևանից

(Անմիջական հեռագրաթելով մարտի 26-ին)

Մարիղամիշի առման լուրը սաստիկ ճնշող տպաւորութիւն թողեց ազգաբնակութեան վրայ. նա վերջապէս հասկացաւ ռուսէի լրջութիւնը: Միւս կողմից, այդ վտանգը բարձրացրեց ազգաբնակութեան ոգին և այժմ քաղաքում մեծ ոգևորութիւն է տիրում, և ամենքը խոյանում են դէպի կռիւ, նոյնիսկ նրանք, որոնք սկզբում աշխատում էին թիկունքում մի տաքուկ պաշտօն ձեռք բերել: Ամբողջ ինտելիգենցիան, ամբողջ ուսանողութիւնը, բոլոր ուսուցիչները մի մարդու պէս ցանկութիւն յայտնեցին անմիջապէս ֆրոնտ գնալ: Այդ անցքերի տպաւորութեան տակ, ազգաբնակութիւնը պահանջեց, որ Արամ փաշան չմեկնի Երևանից և ամենալայն լիազօրութիւնները տուեց նրան՝ կազմակերպելու զինուորական գործն ու այդ գործին խանգարողներին հետապնդելու: Երեկ երեկոյ զորքերը ներկայացան Արամ փաշային: Այսօր ներկայացաւ գնդապետ Չալխուշովի 2-րդ ծիավոր գունդը: Խիստ հաճելի էր դիտել այդ կտրիճներին, մենք ամենքս զարմացանք, թէ ինչպէս Չալխուշովն այս երեք ամսուայ ընթացքում ստեղծել է այդ վերին աստիճանի դիսցիպլինով, հոծ և շքեղ գունդը: Արամ փաշան իր ճառերում ընդգծեց, որ նա ամեն ինչ պիտի անի՝ զինուորական իշխանութեան, Ազգային խորհրդի և բարձագոյն իշխանութիւնների համաձայնութեամբ...

«Հորիզոն» 28 մարտի /10 ապրիլի 1918թ.:

N 272

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՉԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ԹԵՆԱՄՈՒ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒԺԵՐԸ ՄՈԲԻԼԻԶԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մարտի 1918թ.
Երևան

Պատերազմական գործողությունների դժբախտ ընթացքը ցնցեց ամբողջ հայությունը, նամանաւանդ՝ հայութեան սիրտը կազմող Երևանը: Ստեղծած կացութեան տպաւորութիւնների տակ՝ Երևանի հայ ժողովուրդը, զինուորականութիւնը, հրամանատարութիւնն ու սպայութիւնը հարկ համարեց արտակարգ լիազօրութիւններ տալ ինձ ճակատն ուժեղացնելու, ներքին անիշխանութիւնները սանձելու և առհասարակ մեր ներքին ու արտաքին կռիւներին, վճռական ու կտրուկ միջոցներով, արագ ընթացք տալու:

Ստանձնելով այդ պատասխանատու պարտականութիւնը ճգնաժամային այս ծանր օրերին, ես հրապարակով յայտարարում եմ բարձրաձայն, որ գոյութիւն ունեցող բոլոր մարմինները - Ազգային Խորհուրդը, ճակատի բարձրագոյն հրամանատարութիւն, պետական հիմնարկութիւններ – կան ու մնալու են իրենց դերի ու դիրքի մէջ:

Իմ անելիքը պէտք է լինի մի կողմից արագացնել աշխատանքը և միւս կողմից ամեն մի մարմնի և գործող ոյժերի դնել իր վայելուչ դերի մէջ և հաստատել զինուորական օրինակելի կարգապահութիւն:

Այդ մտահոգութեամբ ստանձնելով իմ նոր պաշտօնը՝ հրահանգում եմ հետևեալը.

1. Բոլոր գոյութիւն ունեցող մարմինները - զինուորական թէ քաղաքացիական,- պէտք է շարունակեն իրենց նախկին աշխատանքները աւելի եռանդով և մեծ զոհողութիւններով:

2. Թիկունքում գործող մարմինների մէջ գտնուող զինուորական ոյժերի ճակատ մեկնելը պէտք է կատարուի որոշ կարգով և որոշ ժամանակամիջոցում՝ որպէսզի մի նոր գործ չինելու ժամանակ, միւսը հինը՝ չըքաւնուի:

3. Հայ ժողովրդի բոլոր սրտացաւ ու գիտակից տարրերին հրահանգում եմ ընդառաջ գնալ թիկունքի և նամանաւանդ ճակատի կարևոր աշխատանքներին, որպէսզի այդ աշխատանքները կատարուեն արագ ու կանոնաւոր:

4. Միանգամ վստահելով ինձ և գործի ղեկավար ոյժերին՝ հասարակութիւնը և անհատները պէտք է խորին հաւատ ընծայեն մեզ, որպէսզի մենք մեր դժուարին աշխատանքները ազատ կատարենք:

5. Պէտք է վերջ տալ աննպատակ քննադատութիւններին, որոշ մարդկանց չուրջը կատարուող աւէ-կոսէներին:

6. Հասարակութեան իւրաքանչիւր անհատ անկեղծօրէն պէտք է լայն անձնուիրութիւն ցոյց տայ դասալիքներին ձերբակալելու և պատժելու գործին:

7. Կտրականապէս հրահանգում եմ խուսափել ազգամիջեան անմիտ ընդհարումներից: Իւրաքանչիւր մարդ ամեն կերպ պէտք է նպաստի բարի հարևանական յարաբերութիւնները անխախտ պահելուն:

8. Չը միջամտել ոչ զինուորական և ոչ էլ կառավարական գործերին:

9. Ինձ և իմ գործակիցներին չզբաղեցնել մանր-մունր խնդիրներով:

10. Ուժեղացնել քաղաքի թաղային պահպանութիւնը:

11. Վերջ տալ զանազան ֆանտաստիկ ծրագրներին:

12. Հսկել հասարակական ընդհանուր կարգապահութեան ու ապահովութեան վրա, չհաւատալ զանազան սուտ ու սխալ լուրերի, որոնք առասպելական գունաւորումներով տարածւում են հասարակական լայն խաւերում ու լքում առաջ բերում: Վստահեցէք Ազգային Խորհրդի հաղորդած լուրերին, որոնք ստացւում են ճիշտ աղբիւրից:

Հայրենակիցներ!

Հասարակական շարժման յաջողութիւնը գերազանցապէս կախուած է զոհաբերութիւնից և կարգապահութիւնից: Զոհեցէք ձեր անհատականը, ձեր ուժերի և ստացւածքի մաքսիմումը, քանի դեռ հնարաւորութիւն կայ փրկելու ընդհանուրը, այլապէս դուք և ձեր կարողութիւնը, ձեր կայքերն ու դրամը, ձեր կանայք ու երեխաները կոտորւեն ներս խուժող թշնամու ձիերի սմբակների տակ:

Զոհաբերութիւն և կարգապահութիւն,- սրանք կարդինալ հարցեր են, որոնցից կախուած է մեր ժողովրդի փրկութիւնը: Խորին հաւատ, անվերապահ վստահութիւն և ղեկավարների կարգադրութիւնները կատարելու պատրաստակամութիւն՝ ահա թէ ինչ պէտք է լինի հայ ժողովրդին ղեկավարող սկզբունքը: Այլապէս մեզանում էլ տեղի կունենայ այն, ինչ որ տեղի ունեցաւ ու հիմնովին քայքայեց մեծ Ռուսաստանը:

Հայ զինուորներ, նամանաւանդ հայ սպաներ, վերջին խօսքս ձեզ եմ ուղղում. տոգորուեցէք վայրկեանի գերագոյն ոգով: Հայրենիքի փրկութիւնը ձեր ձեռքին է: Դուք, սպաներ ու զինուորներ, կամ պէտք է մեր սիրուն հայրենիքի փրկիչները լինէք, կամ նրա գերեզմանափորները: Գործի դիմենք, վերջ տանք սին խօսքին ու ժողովներին: Թշնամին՝ հրէշային ախորժակներով, առաջանում է. հուժկու գրոհով պէտք է քշենք նրան հայրենի սահմաններից:

Դէպի շինարար գործ.- խօսքը, քննադատութիւնը, գնահատումները թողէք ապագայ ազատ ու խաղաղ օրերին, իսկ այժմ միմիայն գործ:

Հայ ժողովուրդը վճռել է ապրել, ապացոյց՝ որ նա այժմ հերոսական ճիգեր է գործ դնում ֆրոնտն ուժեղացնելու, թշնամու ընթացքը դանդաղեցնելու համար:

Ներքին սև ուժերին նա պատասխանատուութեան է կանչում և անարգական սիւնին գամում:

Քաղաքացիներ!

Վստահ եմ ձեր վստահությամբ և օժանդակությամբ գործի եմ անցնում:

Անխնայ պատժի ու պատասխանատվության պիտի ենթարկվեն բոլոր դասալիքները, բոլոր պրովոկատորները, ժողովրդի բոլոր թշնամիները:

Ցույց տանք աշխարհին, որ Հայը ազատ անկախ ապրելու իրավունք ունի:

Այժմ կամ երբէք:

Յատուկ-լիազօր Արամ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1, տպագիր օրինակ:

N 273

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԱՅԱՆՆԵՐԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՊԱՐԿՈՒՃՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

5 ապրիլի 1918թ.

Կ Ո Չ

Երևանի Նահանգի Ազգային Խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն գաւառների և քաղաքի հայ հասարակութեան, որ ռուսական երեք գծանի (մօսինի) հրացանի կրակած փամփուշտների դատարկ ԳԻԼԶԻՆԵՐՆ ՈՒ ԱԲՈՅՄԱՆԵՐԸ պէտք է անպատճառ հաւաքել և ներկայացնել Խորհրդին, որի համար կըտրուի որոշ վարձատրութիւն (հատը 2 կոպէկ):

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց.1. գ. 8, թ 3, տպագիր օրինակ:

N 274

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ՝ ՀԱՑՏԱՐԱՐՎԱԾ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԶԳՈՆ ԼԻՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 ապրիլի 1918 թ.
Երևան

ՀԱՅԵՐ!

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԵՎ ԳԻՒՂԱՅԻՆԵՐ!

Անշուշտ լսած կըլինէք, որ զինադադար է յայտարարուած հաշտութեան բանակցութիւններ վարելու համար.[217]

Լաւ իմացէք, որ զինադադարը դեռ չի նշանակում որ հաշտութիւն կնքելը ապահովուած է:

Զինադադարներ շատ են տեղի ունեցել և մենք շատ անգամ ենք ականատես եղել ՆՐԱՆՑ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻՆ:

ԹՇՆԱՄԻՆ ԽՈՐԱՄԱՆԿ Է ԵԻ ԱՐԹՈՒՆ: Նա անպայման կր չահագործի զինադադարի ժամանակամիջոցը, իր զօրամասերր զօրեղացնելու և իր դիրքերը ամրացնելու, որից յետոյ նա մեզ այնպիսի հաշտութեան պայմաններ կառաջարկի, որ մենք ոչ մի կերպ ընդունել չենք կարող:

ՋԳՈՅԸ ԵՂԷՔ-ԵԻ ՄԻ ԽԱԲԻԷՔ:

Թշնամին զինադադարի հրապոյրով ձեզ կարող է քնեցնել և թուլացնել մեր ոյժերը, իսկ միաժամանակ գաղտագողի կերպով կուժեղացնի իր դիրքը:

Լաւ իմացէք, որ մենք կարող ենք ձգտել միմիայն ՊԱՏԻՒԱՒՈՐ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԿՆՔԵԼՈՒ և երբէք չենք համաձայնի ստորացնող պայմաններ ընդունել:

Բայց ով ցանկանում է պատուաւոր հաշտութեան պայմաններ ձեռք բերել, նա պէտք է ընդունակ և ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՄԵՐԺԵԼ ԹՇՆԱՄՈՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

*ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՈՒՆԸ ՔԱՆԴԵՑ ԱՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ, ՈՐ ՆԱ ՋԻՆԱԴԱԴԱՐ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ, զօրամասերին չը կարողացաւ պահել իր դիրքերում և նրանք բոլորը խառնիճաղանչ խուժանի նման, **մոռանալով ամեն տրտութիւն, իրենց հայրենիքը մատնեցին չը տեսնուած խայտառակութեան:***

Մի մոռանաք, որ Ռուսաստանը գործ ունի կուլտուրական ազգերի հետ, իսկ մենք գործ ունենք տաճիկի հետ, որը եթէ մեզ յաղթի, մենք ոտից գլուխ, ամբողջ ազգով՝ կորած ենք: Նա մեզ չի խնայելու:

Ահա՛ այդ բոլորից յետոյ, դիմում ենք ձեզ և ամենակտրուկ կերպով յայտարարում ենք՝ որ հէնց այժմ, յատկապէս զինադադարի ժամանակամիջոցին, մենք պիտի լարենք մեր բոլոր ուժերը, մենք պիտի կրկնապատկենք և եռապատկենք մեր գործունէութիւնը, մենք պիտի ամենաուժեղ կերպով ամրացնենք մեր դիրքերը, որպէս զի հարկ եղած րոպէին մենք պաշտպանենք մեր սահմանները և յաջող դիմադրութիւն ցոյց տանք մեր ոխերիմ թշնամուն:

Այդ նպատակին հասնելու համար, մենք չը պիտի կանգ առնենք ոչ մի զոհաբերութեան առաջ:

ՀԱՅԵՐ!

Ամեն ջանք գործ դրէք ձեր հայրենիքի պատիւը և նրա սրբազան չաւերը պաշտպանելու համար, որից և կախուած է ձեր ֆիզիքական գոյութիւնը:

Ո՞վ այդպէս չի վարուիլ, նա հայրենիքի անարգ դաւաճան կը լինի և հայ ազգի անէծքին արժանի:

Երևանի Նահանգական Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց.1, գ.23, թ.1, տպագիր օրինակ:

N 275

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՎԵՏԻՍ ԹԵՐՋԻԲԱՇՅԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

24 ապրիլի / 7 մայիսի 1918 թ.

(Ուղիղ հեռագրալարով)

Թիֆլիս-Երևան

7 (24) մայիս, երեկոյեան

Կը խօսին Արամ և Աւ. Թէրզիպաշեան:

Արամ *– Հոս փախստականութեան մէջ մեծ գրգռում յառաջացեր է. պրովակացիոն լուրեր տարածուեր են, որ իբր թէ փախստականութիւնը պիտի ղրկուի Հիւս. Կովկաս և Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդն այս մասին սկզբունքով համաձայն է: Թիֆլիսէն ստացուած նամակներով կը յայտնեն, որ Թիֆլիսի փախստականութեան մեծամասնութիւնն, անցեր է Հիւս. Կովկաս և կառաջարկեն Երևանի փախստականութեանն ևս շտապ փոխադրուիլ, այլապէս կուշացուի: Կըսեն, որ Արտակ Դարբինեանը իր ընտանիքով՝ Հիւս. Կովկասն անցեր է բանակցութիւններու և այդ գործի կազմակերպման համար: Խիստ գրգռուած են Հայաս[տանի] Ապահով[ութեան] և Ազգ[այինի] Խորհուրդներու դէմ, նկատի ունենալով զանոնք իբր դաւաճաններ և իբր ժողովրդական դատը վաճառողներ: Կըսեն, որ Կեդր[ոնական] Խորհրդի Անդամներ արդէն իրենց ընտանիքները փոխադրած են:*

Հազարաւոր ժողովուրդ կը դիմէ և կը պահանջէ անցագիր. անոնք կը վաճառեն իրենց գոյքը: Այդ երևոյթի առաջն առնել դժուարին է: Ինչ կը պատասխանենք. կառաջարկեմ Խորհուրդին հևալինակաւոր մէկ անդամը իսկոյն ղրկել հոս. կրսպասեմ պատասխանի:

Աւ. Թէրզիպաշեան. *- Քանի պարզուած չեն Բաթումի հաշտութեան բանակցութիւնները՝ Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդը ի վիճակի չէ փախստականութիւնը Հիւս. Կովկաս փոխադրելու մասին որոշում կայացնելու, այդ առթիւ ոչ մէկ որոշում տուած է Խորհուրդը:*

Արտակ Դարբինեանը Հիւս. Կովկաս գնաց՝ դժբախտութեան պարագային միայն որբերը այնտեղ փոխադրելու մասին բանակցելու համար: Անոր մեկնումը ոչ մէկ կապ ունի ընդհանուր տեղափոխութեան հետ, որու մասին առայժմ ոչինչ կայ, իսկ հիմա Թիֆլիսէն մեկնողներու հոսանքը դադրած է: Խորհուրդի հևղինակաւոր մէկ անդամը Երևան ղրկելու մասին կը խորհինք և ձեզ կը տեղեկացնենք:

Ինչու Հայաս[տանի] Ապահով[ութեան] և Ազգ[այինի] Խորհուրդները դաւաճաններ կը համարուին, և ինչու անոնց դէմ գրգռուած են, անհասկանալի է: Ինչ Կեդր[ոնական] Խորհուրդի մասին կը խօսիք հիմա: Մինչև այժմ Ազգ[այինի] և Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդները այն

կարծիք ունին, որ պէտք չէ տեղափոխուիլ: Ազգ[ային] Խորհ[ուրդը] նոյնիսկ արգիլած է այդ, իսկ Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդը չուզեր խոչընդոտ հանդիսանալ:

***Արամ**- Խօսքը Թիֆլիսի Խորհուրդներու մասին է: Նամակներ կան, թէև մասնատոր, որով կը յայտնեն թէ Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդը սկզբունքով համաձայն է տեղափոխութեան և Խորհրդակցութիւնը հրաւիրուած է այդ ծրագրին սանկցիա տալու նպատակով և որ Հայաս[տանի] Ապահով[ութեան] Խորհուրդի անդամները տեղափոխութեան և շտապելու մասին հրապարակով յայտարարելէ չեն քաշուիր:*

Հետաքրքիր է, Խորհրդակցութեան օրակարգելու մէջ անցուած է այդ հարցը: Յայտնեցէք այսօրուայ նորութիւններու մասին: Երևանի պատգամաւորները հասա՞ն թէ՛ ոչ: Երկրի գինւորներու ընտանիքներուն ե՞րբ պիտի դրամ դրկէք:

***Ա. Թէրզիպաշեան**.- Խորհրդակցութեան օրակարգերն են՝ 1) հաշտութեան հարցն ու թուրքահայերու վերաբերմունքը, 2) Մեր զօրամասերու վերակազմութեան խնդիրը, 3) Թուրքահայութեան ֆիզիքական գոյութեան հարցը:*

Երևանի պատգամաւորութիւնը հասեր է հոս: Այս րոպէին Խորհրդակցութիւնն նիստ ունի՝ 54 պատգամաւորներու մասնակցութեամբ: Վաղը դրամ կը դրկենք զինւորներու ընտանիքներու համար:

Դուք գիտէք, թէ ինչ նշանակութիւն և արժէք ունին մասնատորներէն ստացուած նամակները:

Հաշտարար պատգամաւորութիւնը արդէն հասած է Բաքու. սակայն առայժմ այնտեղէն տեղեկութիւններ չկան, ստանալուս՝ պարբերաբար կը հաղորդենք: Գերմանացիները գրաւած են Նովորոսիյսկը: Այսօր հոս լուր տարածուած է, որ անգլիական զօրքը հասած է Պարսկաստան, դուք ոչինչ գիտէք այդ մասին:

***Արամ**.- Պարսկաստանի հետ կապը կտրուած է Լ. Մուշեղեանի սպանութիւնէն ետք: Առայժմ ցտեսութիւն:*

***Ա. Թէրզիպաշեան**.- Երեք ամիս է, որ ես կուզէի ընտանիքս փոխադրել հոս. երկու անգամ խնդրեր եմ ձեր աջակցութիւնը, այժմ ալ կը խնդրեմ, բայց այդ պարագան Հիւս. Կովկասը փոխադրելու հետ կապուած չէ: Երբեք այդ մասին չեմ մտածեր: Ես միայն կը ցանկանայի այս օրերուն ընտանիքիս հետն ըլլալ: Կը խնդրեմ հաղորդել եղբօրս և կարգադրել, որ անոնք հոս փոխադրուին:*

***Արամ**.- Կաշխատեմ, առ այժմ ցտեսութիւն:*

***Ա. Թէրզիպաշեան**.- Հաղորդեցէք Լ. Մուշեղեանի սպանութեան մանրամասնութիւնները և Երևանի ու նահանգի մասին տեղեկութիւններ:*

***Արամ**.- Մանրամասնութիւններ չկան առայժմ: Երևանը հանգիստ է:*

«Աշխատանք», 8 մայիս (25) 1918 թ.:

N 276
Ա.ՄՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ Դ.ԿԱՆԱՅԱՆԻ ՈՒՂԻՂ ՀԵՌԱԳՐԱԹԵԼՈՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ս.ՎՐԱՑՅԱՆԻ ԵՎ Կ. ՂԱԶԱՉՅԱՆԻ ՀԵՏ ԲԱԹՈՒՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

15 մայիս 1918թ., կէսօրւայ ժամը 2

Ապարատի մօտ սպասում են Արամն ու Դրօն:

Երևան. - *Այդտեղ ո՞վ կայ:*

Թիֆլիս. - *Այստեղ ապարատի մօտ են Վրացեանն ու Կորիւնը:*

Երևան. - *Մանրամասն պատմէք թէ ինչ է կատարւում այդտեղ:*

Թիֆլիս. - *Ես երէկ վերադարձայ Բաթումից, այնտեղ դրութիւնը պատկերանում է հետևեալ ձևով: Եկել են գերմանական և տաճկական պատգամաւորութիւնները - Բոլգարականն ու Աւստրիականը դեռ չկան: Մասնակցում է նաև Դաղստանի պատգամաւորութիւնը, որը յայտարարեց իրենց անկախութիւնը՝ Հիւսիսային Կովկասի, Դաղստանի, Չաքաթալայի և Սուխումի շրջանների սահմաններում:*

Տաճկական պատգամաւորութեան հետ եկել է ծովային մինիստր Ջամալ-փաշան, որը մեզ հետ երկար խօսակցութիւն ունեցաւ և այդ խօսակցութեան ընթացքում, ի միջի այլոց յայտնեց, որ տաճկահայերը նորէն իրենց հայրենիքը վերադառնալ չեն կարող:

Խաղաղարար պատգամաւորութեան առաջին պաշտօնական նիստը տեղի ունեցաւ մայիս 11-ին: Մենք պնդում էինք, որ բանակցութիւնների ժամանակ պիտի չեներ միայն և միմիայն Բրեստի պայմանագրի վրայ: Տաճիկները խստիւ բողոքեցին դրա դէմ և նոր պահանջներ դրեցին, որոնք հասնում են համարեա ձեր սահմաններին – (այսինքն Երևանի սահմաններին):

Ալէքսանդրապոլից հէնց նոր հեռագիր ստացանք գեներալ Արէշկից, որ տաճիկները նախայարձակի դիմեցին, և ոմբակոծում են Ալէքսանդրապոլը և որ մեր զօրամասերը դիմադրութիւն են ցոյց տալիս: Հէնց նոր Ազգային Խորհրդից խնդրում են յայտնել ձեզ, որ ընդհանուր հրամանատարը հրամայել է դիմադրել: Տաճկական հրամանատարը ուլտիմատումի ձևով պահանջել է տաճկական շտաբի տրամադրութեան տակ դնել Ալէքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագիծը, որպէսզի իրանց զօրամասերը տեղափոխեն Ջուլֆա, անգլիացիների դէմ, որովհետև անգլիացիները ճնշում են գործ դնում Ջուլֆայի վրայ: Պահանջել են նաև յետ քաշել մեր զօրքերը երկաթուղու գծից 20 վերստ հեռու դէպի մեր սահմանը: Խաղալ բնակչութեանը խնդրում են մնալ իր տեղում: Պատերազմից յետոյ, սահմանը կը լինի Արփաչայը:

Ինչի՞ վրայ է հիմնուած անգլիացիների Ջուլֆայի վրայ ճնշում գործ դնելու տեղեկութիւնը:

Երևան. - *Այդ տեղեկութիւնը ոչ մի հիմք չունի:*

Թիֆլիս. - Մենք էլ անգլիացիների մասին ոչ մի տեղեկութիւն չունենք. Ջուլֆայից մեզ հաղորդում են, որ Ջուլֆայի մօտիկ շրջանում անգլիացիներ չը կան: Նրանց մասին խօսում են միայն տաճիկները:

Երևան. - Ի՞նչ է կատարւում Բաքուի ճակատում, խաղաղարար բանակցութիւնները խզա՞ծ են արդեօք. ի՞նչ է մտածում դիպլոմատիան:

Թիֆլիս. - Խաղաղարար բանակցութիւնները շարունակւում են. Բաքուի ուղղութեամբ կատարեալ հանգստութիւն է: Արեշովից ստացած հեռագիրը անմիջապէս յայտնեցինք Չխենկելիին, համապատասխան քայլեր ձեռնարկելու: Բաքուից առայժմ պատասխան չունենք:

Երևան. - Բաքուում գերմանական զօրքեր կա՞ն թէ ոչ և եթէ կան ի՞նչպիսի վերաբերմունք են ցոյց տալիս Անդրկովկասի նկատմամբ:

Թիֆլիս. - Գերմանական զօրքեր չկան. գերմանական պատգամաւորները յայտնեցին, որ ներքա կտրմնակից են անկախ Անդրկովկասին – կազմւած երեք շտատներից՝ Վրաստան, Հայաստան և Ատրպատական: Բաքուում, ինչպէս թուրքերը,նոյնպէս և գերմանացիները հետաքրքրւում էին յատկապէս հայ-թրքական յարաբերութիւններով Երևանեան նահանգում: Նոքա պահանջում էին վերջ տալ ճնշումներին, որոնք գործ են դրւում թուրք ազգաբնակութեան վրայ. հակառակ դէպքում տաճկական զօրքերը ստիպւած կը լինեն դարս գալ պաշտպանելու իրենց հաւատակիցներին:

Երևան. - Մեր տեսակէտը հետևեալն է - Գերմանացիների բոլոր պահանջներին պէտք է ընդառաջ գնալ անկեղծօրէն:

Թիֆլիս. - Գերմանացիների մասին մենք էլ նոյն կարծիքին ենք և այդ ուղղութեամբ աշխատում ենք Բաքուում, մենք նրանց ասել ենք, որ կը-դաւնենք ամեն մի պայման, միայն թէ ապահովեն մեր ֆիզիքական գոյութիւնը: Նոքա ասացին, որ Գերմանիան երբէք թոյլ չի տայ, որ տաճիկները հայերի վերաբերմամբ իրագործեն իրենց ծրագիրը: Միայն թէ հայերը անկեղծօրէն ընդունեն գերմանական օրիենտացիան: Նրանք պաշտպանում են Բրեստի պայմանագիրը:

«Ձանգ», 17 (4) մայիսի 1918, N 34:

N 277
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ ՀԱՅ ՍՊԱՆԵՐԻՆ՝ ԹԸՆԱՄՈՒՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 մայիսի 1918 թ.
Երևան

ԿՈՉ

Երևանի ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել:

Դիմում ենք բոլոր հայ սպաներին, որպէս զի նրանք գան և կամաւորական խմբերի գլուխ անցած ընդառաջեն թշնամուն:

Ովքեր ցանկանում են ղեկավարի, առաջնորդի դեր ստանձնել, թող դիմեն Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ հէնց այսօրւանից:

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.8, թ.4, տպագիր օրինակ:

N 278
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ՝ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 մայիսի 1918 թ.
Երևան

Տաճիկները գրավել են Ղարաքիլիսեն: Կորպուսի շտաբը փոխադրվել է Դիլիջան: Նույն իսկ Դիլիջանից ահագին գաղթականություն է սկսվել դեպի Նոր-Բայազեդի գավառը:

Ախտայից հայտնում են, որ այդ շրջանում կուտակվել է հարյուր հազարանոց գաղթականություն, որը խելակորույս, տված, ծարավ թափառում է սարերում: Նրանց դրությունը սոսկալի է: Նույնիսկ շատ տեղեր գաղթականների մեջ արյունահեղ դեպքեր են տեղի ունենում: Հենց այս րոպեիս մեծ հացի պակաս է զգացվում:

Պարզ է որ գաղթելու տեղ չկա և գաղթը միանգամայն կորստաբեր է:

Իմացեք և հետևյալը: Երբ որ տաճիկները մի որևէ տեղ տիրապետում են, այն տեղից փախած ժողովրդին նրանք այլ ևս թույլ չեն տալիս վերադառնալ իրանց նախկին բնակավայրերը:

Ուրեմն երկու չարիքից ամենափոքրագույնը այն է, որ ժողովուրդը չգաղթի և մնա իր տեղերում:

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ.10, թ.1, տպագիր օրինակ:

N 279
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԴԵՊԻ ՌԱԶՄԱԴԱՇՏ ԿՈՉԸ

25 մայիսի 1918 թ.
Երևան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրաւորական տմարդութիւնը վերջապէս ազդեց հայ ժողովրդի հոգու վրայ: Այժմ, գոնէ, պարզւում է, որ մենք մեր յոյսը պիտի կապենք մեր խիզախութեան հետ: Ամեն տեղ ոգևորութիւն է տիրում: Սարդարաբադի շրջանում հայ զինւորներն ու

նրանց եզիդի դաշնակիցները զովելի արիութեամբ յետ են վանում թշնամուն՝ թուրք ասկեարներին և թուրք ու քիւրդ խուժանին: Էջմիածնի գաւառի բոլոր գիւղերից օգնութեան են գնում քաջերին: Աւելի սրտապնդիչ թռիչքներ են կատարւում Դիլիջանի շրջանում:

Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարաւոր զաւակներին մղում է դէպի ռազմի դաշտ: Հայ գիւղացիները տալիս են իրենց ամբողջ ունեցածը՝ հրացան, փամփուշտ ու հաց: Հայ ժողովուրդը հարիւրաւոր դարեր քաջութեամբ է պաշտպանել իր հայրենի օջախը, իր տունն ու ընտանիքը. նրան յաղթել են, բայց նրա հոգին ընկճել չեն կարողացել: Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիւանդութիւնը բուժւում է, հին խիզախութիւնը վերածնւում է, և այդ փրկութեան միակ իրական ելքն է մեր դժուարին պայմաններում ու ժամանակում: Ի զէն, մեր քաջեր, դէպի ռազմադաշտ:

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ.6, տպագիր օրինակ:

N 280
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ՝ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

մայիս 1918 թ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն ճակատում գտնուող զինուորների ընտանիքների – ծնողներ, բարեկամներ և այլն – որ Երևանում հիմնւել է փոստ նամակները կռւի դաշտ ուղարկելու համար: Այն մարդիկ, որոնք ուզում են իրանց զինւոր-զաւակներին կամ բարեկամներին նամակներ ուղարկել, կարող են նամակները բերել Ազգային Խորհուրդ (Քաղաքային Կլուբ) ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը:

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 20, թ. 3, տպագիր օրինակ:

N 281
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2 յունիսի 1918 թ., ժամը 11 ½ ցերեկ

Երևան Ազգային Խորհրդին

Ներփակ հեռագիրը Ձեզ գաղափար կտայ պատւիրակութեան ձեռք բերած արդիւնքի մասին։[218]

Ազգային Խորհուրդը ստիպւած եղաւ ընդունել ուլտիմատում[219], մի կողմից փրկութեան յոյս չունենալով, չցանկանալով հայ ժողովրդին վերջին մնացորդներն անհաւասար կռւի, գաղթի, հիվանդութեան և սովի զոհ դարձնել։ Ինչպէս անցեալ անգամ գրեցինք, մենք յոյս չունինք, թէ այս հաշտութիւնը տևական կլինի, բայց ուրիշ ելք չէր մնում Ազգային Խորհրդին, քան անել այս քայլը։ Ինչպէս տեսնում էք, մեր պատւիրակութեան յաջողւել է մի փոքր ինչ լայնացնել մեր բանտի դռները և շահել մօտ 1300 քառ. վերստ տարածութիւն և մի քանի ուրիշ նպաստաւոր պայմաններ, դեռ յոյս կայ Կ. Պոլսում յետ ստանալու Ախալքալաքն ու Ալէքսանդրոպօլը և մինչև իսկ Կարսի Շիրակը մինչև Կաղզւան։

Այս վայրկեանին մենք զբաղւած ենք մնացորդ հողերը բաժանելով մեր ու տեղական թուրքերի մէջ։ Պայման է դրւած, որ հաշտութեան դաշնագրին կցւի և արձանագրութիւն մեր սահմանաբաժանման մասին։ Այսօր, վաղը կ՚կազմւի այդ համաձայնութեան գործը և արձանագրութիւնը կուղարկւի Բաթում։

Մեզ մնալու է Բորչալուի հայ մասը։ Մենք աշխատելու ենք Խրամ գետը սահման դարձնել։ Այնուհետև Ղազախի լեռնային մասը, աշխատելու ենք Գանձակի գաւառից նրան

կցել մի նեղ շերտ, ուր երկու դատարկ ռուս գիւղեր կան։ Նոր-Բայազետի ամբողջ գաւառը։ Դարալագեազը, որի մասին վէճ կայ, մենք պահանջում ենք։ Այնուհետև Երևան քաղաքը և յոթ-ութ վերստ նրա երկաթուղուց, Էջմիածինը, Մև ջուրը ունենալով սահման, ամբողջ Աբարանը, սահման ունենալով Արագածի գագաթը և ուղիղ գծով մինչև Փամբակի Աղ-Բուլաղը և ուղիղ գծով մինչև Ախալքալաքի գաւառի սահմանագիծը։

Տեղական թուրքերը կարծում են, որ ի վերջոյ տաճիկները մեզ կ՚թողնեն ամբողջ Սուրմալուն, որի վրայ նրանք աչք չունեն և վերը յիշած Ախալքալաքի գաւառն ու Ալէքսանդրոպօլի գաւառի մնացորդը, նաև Էջմիածնի գաւառից կտրածը։

Գանձակը, Շուշին, Ջիվանշիրը և Ջանգեզուրը մնալու են Ադրբէջանի մէջ և հաւանօրէն կկազմեն յատուկ կանտոն։ Պէտք է ամէն ճիգ գործ դնէք, որ գրավւած գաւառների հայութիւնը չգաղթէ, միաժամանակ չպէտք է որևէ առիթ տալ թուրքերին[220], որ ուլտիմատումի այս կամ այն կետը խախտած նկատեն։

Դաշնագրի բնագիրը կամ պատճէնը ստացած չենք, մեր պատւիրակները հաւանօրէն այս երկու օրս կ՚գան և կ՚բերեն հետները, այն ժամանակ պատճէն հանելով կուղարկենք, գուցէ ճանապարհները բացւեն և ինքներս գանք։ Ազգային Խորհուրդը այս երկու օրը յայտարարելու է Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը։ Դա մի պահանջ է, որին պիտի գոհացում տանք մեր ստորագրւած պաշտօնագրին քաղաքական արժէք տալու համար։ Յայտնել ենք վրաց կառավարութեան, որ

Հայոց կառավարութիւնը կազմելուց Ազգային Խորհուրդը մեկնելու է Երևան: Վրացիները պահանջ դրին անմիջապէս պալատից հեռանալ, մենք հեռացանք, նախքան մեզանից պահանջէին, թուրքերը յամառեցին, բայց այսօր նրանց վռնդել են պարզապէս: Հայ և թուրք ազգային խորհուրդները մի-մի պատիրակ են տալ միևիստրութիւնների մէջ պետական գոյքը բաժանելու համար, ինչպէս և նոր կտրուող դրամը: Հայ և թուրք պատիրակները միասին ժողովներ են ունենում մի ընդհանուր վարմունքի գիծ ունենալու այս խնդրում, քանի որ երկուսի շահերն էլ ընդհանուր են: Ռուսաստանի հեռանալով և Վրաստանի անջատուելով՝ հայերն ու թուրքերը, կարծէս մենակ մնալով, մօտենալ են փորձում իրար:

Գուցէ այս ճանապարհը մեզ աւելի նպաստաւոր լինի, և թուրքերի շնորհիվ յաջողուի մեզ հետ տաճիկների վայրագութիւնը մեղմել և ապահովել հայ տարրի ֆիզիքական գոյութիւնը:

Շատերս կարծում ենք, որ մեր հարևան մահմեդականների հետ բարեկամական յարաբերութիւն մշակելով անկեղծօրեն աւելի հաւատարիմ դաշնակիցներ գուցէ կունենանք, քան եղան վրացիները: Յամենայն դէպս կրքերը պետք է մեղմել և ժողովրդին հանգիստ տալու համար մտածել՝ առանց մեր ռազմական ոյժը թուլացնելու բոլոր անակնկալների դէմ պատրաստ լինելու համար: Եթե հաշտութիւնը տևական լինի, գուցէ ծար ունենանք ստեղծագործական աշխատանքի դիմելու, թողնելով պատերազմը տաճիկներին, թուրքերին, ռուսներին և անգլիացիներին: Վրաստանը նոյնպէս ընդունել է ուլտիմատումը՝ կորցնելով Բաթումը և Ախալցխան՝ իրենց շրջաններով: Նրանք վայելում են գերմանական հովանաւորութիւնը և դրանով ապահով են զգում իրենց քրքական գրաւումներից և լծից: Խնդրում ենք այս նամակն ընդօրինակելով՝ ուղարկէք կորպուսի շտաբը:

Ձեր կոիւների մասին իմացանք Վէհիք փաշայի հաղորդածներից: Չգիտենք որքան ճշմարիտ են, յամենայն դէպս՝ մի բէև փոքրիկ ու աղքատ, բայց անկախ Հայաստանի ստեղծումը պարտական ենք մեր զօրքի անձնուիրութեան: Որքան մեզ յայտնի է, գերմանացիք և տաճիկները Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի՝ հայերին ապահելով սոսկ ֆիզիքական գոյութիւնը: Պետք կարծել, որ մեր զօրքի դիմադրութիւնը ստիպեց ճանաչել մի Հայաստան:

*Նախագահ Ազգ. Խորհրդի՝ **Ա. Ահարոնեան***
*Քարտուղար՝ **Ն.Ադրաքեան***

ՀԱԱ, ֆ.289, ց.1, գ. 11, թ.1 և շրջ., պատճեն, ձեռագիր:

N 282

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԹՈՒՄԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՄԱՅՑԸ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ՝ ՉԳԱՂԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հունիսի 1918 թ.
Երևան

Ա Զ Դ

Բաթումի դաշնագրութեամբ Օսմանեան պետութեանն անցնող գաւառների հայ ազգաբնակչութիւնը, Կենտրոնական Ազգային Խորհրդի և օսմանեան պետութեան միջև կայացած համաձայնութեան հետևանքով՝ որոշուած է թողնել իրենց տեղը: Օսմանեան պետութիւնը խոստացել է ապահովել այդ ժողովրդի ինչքը և պատիւը, որի մասին Վեհիք փաշան հետագրով հաղորդել է և Վեհափառ Կաթողիկոսին: Երևանի Ազգային Խորհուրդը գտնելով գաղթը կորստաբեր, իր կողմից ևս կարգադրում է մնալ մայրենի երկրի վրայ և զբաղուել իր խաղաղ աշխատանքով:

Միջոցների է դիմում, այդ գաւառակներում թուրքական զօրք դնել, ժողովրդի պաշտպանութեան համար

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 7, տպագիր օրինակ:

N 283

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ՝ ՃԱԿԱՏՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3 հունիսի 1918 թ.
Երևան

Ամսի 19-ին (հին տոմար) թուրք. երկու զօրամասերից,- որոնք կանգնած են Ապարանի և Դիլիջանի ուղղութեամբ, ստացել է երկու նամակ ուղղած մեր նոյն տեղի զօրամասերի հրամանատարներին: Այդ նամակներից մէկում յայտնում են, որ Բաթումում կայացել է հաշտութիւն հայկական և թուրք. ներկայացուցիչների միջև, որի շնորհիւ թուրքաց զօրքերին հրամայուած է դադարեցնել զինուորական գործողութիւնները: Մեզ առաջարկում է նոյնպէս դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Հայկական կորպուսի հրամանատարը պատիրել է զօրքերին պահպանել բոլոր բռնած դիրքերը, դադարեցնել գործողութիւնները մինչև մեր հայկ. պատիրակութիւնից կամ Կենտր. Ազգային Խորհրդից ստոյգ տեղեկութիւն ստանալը: Քանի որ տեղեկութիւնը ստացել է միայն հակառակորդի կողմից և դեռ սեփական տեղեկութիւններ չունենք, մեր ամբողջ ուշադրութիւնը պէտք է կենտրոնացնենք ճակատի ուժեղացման և ամրացման վրայ, որպէսզի մի անակնկալի չհանդիպենք: Թիկունքում էլ, ճակատում

էլ բոլորս պէտք է ընդունենք մի ճշմարտութիւն – որ վերջնական հաշտութեան պայմանները կախուած են մեր զինուորական ուժից, որքան անձնազոհութեամբ ծառայենք թէ ճակատում և թէ թիկունքում, այնքան աւելի նպաստաւոր պայմաններով կը կապուի վերջնական հաշտութիւնը:

Ահա թէ ինչու զինուորական հրամանատարութիւնը և Երևանի Հայոց ազգային խորհուրդը եռանդուն կոչ են անում բոլորին՝ լարել իրենց ուժերը այս պատասխանատու վայրկեանին, ճակատը ամրացնելու և ներքին կարգապահութիւնը չխանգարելու համար:

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 8, տպագիր օրինակ:

N 284

«ՋԱՆԳԻ» ԵՎ «ԱՇԽԱՏԱՆՔԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԲԱԹՈՒՄԻ ԿՆՔՎԱԾ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԹԻՎ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՎԻՐԱԾ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

5 հունիսի 1918 թ.
Երևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Ամառս 5-ին Քաղաքային Ինքնավարութեան Դահլիճում տեղի ունեցաւ խառն բազմութեան մասնակցութեամբ մի ժողով, որ հրաւիրել էր Երևանի Հայոց Ազգային Խորհուրդը:

Ժողովը բաց է անում ընկեր Արամը Ազգ. Խորհուրդի կողմից: Նա համառօտակի ծանօթացնում է ժողովականներին այս խնդրի հետ, որով պիտի զբաղի հասարակական հաստատութիւններից հրաւիրուած այս բազմամարդ խորհուրդը:

Երևանի Հայոց Ազգ. Խորհուրդը ստացել է Տփխիսից մի պաշտօնական գրութիւն, ըստ որի Անդրկովկասում ստեղծուած կացութեան պատճառով Տփխիսի կենտրոնական Ազգ. Խորհուրդը հարկադրուած էր իրեն յայտարարել հայութեան բախտը տնօրինող գերագոյն իրաւական մարմին ու անջատ բանակցութիւններ սկսել Թուրքիայի հետ: Բանակցութեան հետևանքը լինում է այն, որ թուրք կառավարութեան և Ազգ. Խորհրդի մէջ ստորագրւում է հաշտութեան պայմանները, որի էութիւնը «Զանգ»-ը կտայ առանձին:

Ընկեր Արամը այնուհետև կարդում է Ազգ. Խորհրդի հրատարակած երկու կարևոր թղթակցութիւնները նոյն խնդրին վերաբերող: Ազգ. Խորհրդի պաշտօնական գրութիւնը և գեներալ Կարգանովի հեռագիրը ուղղուած Կարսից գեներալ Նազարբէկեանին[22], ապա կարդացւում է Խատիսեանի և Պապաջանեանի հետ տեղի ունեցած խօսակցութիւնը հաշտութեան մա-

սին, որից յետոյ Արամը տալիս է ֆրոնտների[222], պարենաւորման, ռազմու-նակութեան ընդհանուր պատկերը:

Արամի զեկուցումից յետոյ ժողովականները ունեցան մտքերի փոխա-նակութիւն առաջադրած հարցի շուրջը: Ժողովականներից մեծագոյն մասի տրամադրութիւնն է՝ ընտրել չարիքներից փոքրագոյնը, ընդառաջել Ազգ. Խորհրդի որոշումներին և սկսել շինարարական մի գործ մեր ներքին ֆրոնտում: Եղան և հակառակ կարծիքներ, որոնք պնդում էին՝ ոչ մի զարանտիա չկայ, թէ թուրքերը նոր առաջխաղացութիւն չեն անիլ, ուստի և անհրաժեշտաբար պատերազմը դառնալու է անխուսափելի: Մի քանի առաջարկած բանաձևներից անցնում են երկուսը, որոնք յրացնում են իրար. և ժողովը ցրւում է.

ԲԱՆԱՁԵՎԵՐ

Երևանի հասարակական մարմինների ներկայացուցիչների ժողովը՝ լսելով իրերի դրութիւնը իրազեկ հաստատութիւնների տեղեկութիւններից մեր ռազմական պատրաստութեան մասին և այդ տեղեկութիւնների իրականութիւնը համապատասխան լինելու խնդրի ստուգութիւնը ապա-գայ պատմութեանը վերապահելով՝ ընդունում է հաշտութեան պայման-ները և յանձնարարում Տփխիսի Ազգ. Խորհրդին վերադառնալ մայր երկի-րը և անմիջապէս՝ մինչև նոր կառավարութեան կազմակերպումն ձեռ-նարկել ժողովրդի ռազմական ուժերի կազմակերպման ապագայ անակն-կալների դէմ, ինչպէս և ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները, որոնք անհրաժեշտ են մեզ սպառնացող ներքին անարխիային ըստ կարելոյն առանց ծանր ցնցումների վերջ դնելու համար:

«Զանգ», 7 հունիսի (25 մայիսի) 1918, N 40:

Յունիս 5-ին, Քաղ. Ինքնավարութեան շէնքին մէջ տեղի ունեցաւ Երևանի Հայոց Ազգային խորհուրդի կողմէ հրաւիրուած ժողով մը, բաղ-կացած կուսակցութիւններու, ընկերութիւններու, խմբակցութիւններու, միութիւններու, հաստատութիւններու և մարմիններու ներկայացուցիչնե-րէն: Ժողովը հաշտութեան մասին զեկուցում լսելէ և թեր ու դէմ վիճա-բանութիւններ կատարելէ ետք ընդունած է հետևյալ բանաձևը.-

Երևանի հասարակական մարմինների ներկայացուցիչների ժողովը՝ լսելով իրերի դրութիւնը իրազեկ հաստատութիւնների տեղեկութիւններից մեր ռազմական պատրաստութեան մասին և այդ տեղեկութիւնների իրա-կանութիւնը համապատասխան լինելու խնդրի ստուգութիւնը ապագայ պատմութեանը վերապահելով՝ ընդունում է հաշտութեան պայմանները և յանձնարարում Տփխիսի Ազգ. Խորհրդին վերադառնալ մայր երկիրը և անմիջապէս՝ մինչև նոր կառավարութեան կազմակերպումն ձեռնարկել ժողովրդի ռազմական ուժերի կազմակերպման ապագայ անակնկալների դէմ, ինչպէս և ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները, որոնք անհրա-



Շուշիի համայնապատկերները 19-րդ դարի վերջին





Իսաջան Առաքելյան



Թորգոմ
(Թուման Թումյանց)



Սալման
(Համազասպ Բաղեշցյան)



Մենակ
(Եգոր Առստամյան)



Կոմս
(Վահան Փափազյան)



Ռուբեն
(Մինաս Տեր-Մինասյան)



Վանայ Իշխան
(Նիկոլ Պողոսյան)



Վարդան- Շահբազ
(Մինաս Տոնիկյան)



Վանա Սարգիս
(Սարգիս Օդաբաշյան)



Մալխաս
(Արտաշես Հովսեփյան)



Մելո
(Ղևոնդ Մելոյան)



Արմենակ Շալջյան



Տիգրան
(Կողբեցի Հարություն)



Ընծայր
(Գևորգ վրդ. Նալբանդյան)



Ալես Պարսամյան



Թեոս Տեղտրիկյան



Իշխան և Արամ



Վանի բերդ



Արամ և Մալխաս



Բուլղարացի Գրիգոր
(Գրիգոր Գեոգեյան)



Իշխան, Վարդան- Շահբազ, Արամ



Ձախից աջ՝ Տիգրան, Իշխան, Արամ, Մալխաս, Սալման
Կենտրոնում՝ Սարգիս



Վերևի շարքում՝ Վարդան-Շահբազ (աջից)
Ներքևի շարքում՝ Մալխաս (3), Կոմս(4),Նիկոլ Դաբաշյան(5)



Նստած՝ ձախից աջ Ալես,Արմենակ Շալջյան, Հարություն Միրաքյան, Կովկասցի Վազգեն, Թեոս,Դավո (հետո դավաճան), կանգնած՝ Գարեգին Մեղրոյան, Շահպաղեցի Ղազար, գինագործ Վազգեն, Նիկոլ Օդաբաշյան, Բույդարացի Գրիգոր, Արմենակ



Նստած՝ Հարություն Միրաքյան (3), Արամ Մանուկյան (4), Մալխաս(5)



Ձախից աջ՝ Տիգրան, Իշխան, Սալմաև, Արամ,
Սարգիս, Մալխաս



Փիլոս, Թեոս, Բուլղարացի Գրիգոր,,
հատակին՝ Վ.Իսկանդարյան



Փայլակ և Մալխաս



Հարություն, Արամ, Իշխան, Սողո



Վանի Այգեստան թաղամասի համայնապատկերը



Արաքս Վանում 1915թ.



Արամ, Փանոս Թերլեմեզյան, Սեմերջյան,
Հրանտ Դալիկյան, Վան, 1915թ.



Արմենակ Եկարյան



Փանոս Թերլեմեզյան



Վանի պաշտպանները թուրքերից գրավված
թնդանոթների մոտ



Վան քաղաքամեջի զինվորական խորհուրդը



Վանի պաշտպանների նվագախումբը



Քեռի, Վարդան, Համազասպ



Դաշնակցական Խեչո,
Վան, 1915թ.



Կամավորների մուտքը Վան 75-ամյա դարալագյազցի
Տեր-Գրիգորի գլխավորությամբ



Հայ կամավորների երթը դեպի Վան



Բայազետյան զորաճոկատի
հրամանատար
Ա. Մ. Նիկոլան



Ֆ. Ի.Ելիսեևը (կենտրոնում)
համագնդեցիների հետ,
Վան, 1915թ.



4-րդ Կովկասյան բանակային
կորպուսի հրամատար
Պ. Ի. Օգանովսկի



Կովկասյան հեծյալ
դիվիզիայի պետ
Շարպանտե Կ. Ռ.



Նստած՝ Դրո (1) , Արամ (4) , Նիկոլաև (5) , Վարդան (6)
Կանգնած՝ Խեչո (6) , Կոստի Համբարձումյան (7)
Վան, 1915թ.



Կանգնած՝ Ս. Վրացյան, Արմեն Դարո, Վարդան, Մալխաս, Կոստի Համբարձումյան, նստած՝ Գերասիմ Բալայան, Տեր-Մկրտչյան, Քնռի, Հ. Արղության, Մ. Վարանդյան, հատակին՝ Համազասպ, Արամ , Միշա Արզումանյան



Հակոբ Տեր-Հակոբյան



Պարույր Լևոնյան

Приказъ
Баязетскому Отряду.

№ 24, 1915 г. 18 Мая.

— Командующій Кавказской Арміей утвердилъ назначеніе Арама Ваносовича временнымъ Губернаторомъ съ тѣмъ, чтобы онъ подчинялся военной власти, а именно Начальнику гарнизона и что впередъ Арама передавались всѣ распоряженія отъ военной власти.

(подпись) Начальникъ Отряда
Генералъ Маіоръ Николаевъ

Արամին Վանի ռահանգապետ նշանակելու մասին հրամանը



Արամի մակագրությունը Վանի շրջանային վարչության
հղած խնդրագրի վրա



Վասպուրականցիների գաղթը դեպի Անդրկովկաս, 1915թ.



Վասպուրականցի գաղթականների հանգիստը
Ճանապարհին



Ճանապարհին թողած երեխաների հավաքումը
Վասպուրականի նահանջի ժամանակ



Վասպուրականցի գաղթականները Էջմիածնում



Թովմաս Նազարբեկյան



Մովսես Սիլիկյան



Դանիել Բեկ Փիրումյան



Պողոս Բեկ Փիրումյան



Արամ, 1917թ.



Ավետիս Ահարոնյան



Դրո



Մկրտիչ Մուսինյան



Երևանի Ազգային Խորհրդի ժամանակավոր վարչության նախագահ Արամի գրությունը



ՀՀ ներքին գործոց նախարար Արամի առաջին
գրություններից մեկը



ՀՀ վարչապետ
Հ. Քաջազնունի



ՀՀ Խորհրդի նախագահ
Ա. Սահակյան



ՀՀ ներքին գործոց նախա-
րար Ա. Մանուկյան



ՀՀ արտաքին գործոց
նախարար Ա. Խատիսյան



ՀՀ զինվորական նախարար
նախարար Հ. Հախվերդյան



ՀՀ ֆինանսների
Խ. Կարճիկյան



ՀՀ արտաքին գործոց
նախարար Ս. Տիգրանյան



ՀՀ լուսավորության
նախարար Մ. Աբաբեկյան



ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Էնֆիաճյան



ՀՀ արդարադատության
նախարար Ս. Հարությունյան



Երևանի փոխքաղաքագլուխ
Ա. Աստվածատուրյան



Երևանի պարետ
Ա. Շահխաթունի



Յապոն (Հ. Պարոնյան)



Ջահանգիր աղա



Սարգիս Օհանջանյան



Սահակ Թորոսյան



ժեչտ են մեզ սպառնացող ներքին անարխիային, ըստ կարելոյն առանց ծանր ցնցումների վերջ դնելու համար:

Երևանի հասարակական հաստատությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների ժողովը՝ լսելով Երևանի Հայոց Ազգային Խորհրդի զեկուցումն՝ պատերազմի և հաշտութեան հանգամանքների և պայմանների մասին, և քննելով այդ զեկուցման յուրացման խնդիրները - գտնում է, հաշտութիւնը հետևանք է այն ռազմական ու քաղաքական պայմանների, որոնց մէջ գտնւում է հայ ժողովուրդը, ուստի ընդունում է այն և հրահանգում Երևանի Ազգ. Խորհրդին իր քայլերը համապատասխանեցնել հաշտութեան պայմաններից բղխող եզրակացութիւններին:

Ժողովը միևնոյն ժամանակ վեր է հանում Բ. դիւիզիայի դիմադրութիւնն ու դիմացկունութիւնը և գովելով զինվորների արիութիւնը, յույս է յայտնում, որ նրանք պատրաստ կը լինեն պաշտպանելու ժողովրդին ապագայ անակնկալների դէմ:

«Աշխատանք», 8 հունիսի (26մայիսի) 1918 թ.:

N 285
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ՝ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ ՄԵԿՆԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՎԵՐԱՀԱՎԱՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 հունիսի 1918թ.

Երևանի Հայ. Ազգային Խորհուրդը հետևեալ կոչն է հրատարակել.

Մեր զինւորները կուրծք դէմ տւած թշնամուն՝ հերոսաբար կռւում են պատերազմի դաշտում:

Ձեր սրբազան պարտքն է ամեն կերպ խրախուսել մեր քաջերին: Թող նրանք հաւատան, որ մենք թիկունքում մնացածներս - երբէք չենք մոռանում նրանց և շարունակ մտահոգւած ենք նրանցով: Թող նրանք լաւ իմանան, որ մենք շարունակ յիշում և մտածում ենք նրանց մասին:

Ազգային Խորհուրդը որոշել է նւէրների օր կազմակերպել ճակատում կռւող հայ քաջերի համար և գործի նախաձեռնութիւնը յանձնարարել է Երևանի Հայունեաց Միութեան Բիւրոյին և տեղական այլ հաստատութիւնների վարչութիւններին:

Մի խնայէք ձեր նւէրները, ձեր իսկ հարազատներին, եղէք առատաձեռն և կատարեցէք ձեր քաղաքիական պարտքը դէպի մեր հերոս կռւողները:

«Զանգ», 7 հունիսի (25 մայիսի) 1918, N 40:

N 286

«ԱՇԽԱՏԱՆՔԻ» ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԻՆԱԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԻ ՄԱՍԻՆ

7 հունիսի 1918 թ.
Երևան

Երևանի հայոց Ազգ. Խորհուրդը երեկ հետևեալ հայտարարութիւնը ըրաւ.-

Ամենքիդ յայտնի են հաշտութեան դաշնագրի հիմքերը: Սակայն իմացէք, որ այդ հիմքերը դեռ պիտի վերաքննուեն ու հաստատուեն Կ. Պոլսում, որտեղ պիտի ճիգ թափենք,ամէն կերպ աշխատենք, որ մեր հայրենիքի Թուրքիային անցած մասերը փրկենք բշնամուց: Մեր գործը դեռ վերջացած չէ և հայ ժողովրդի զինական ուժն ու ռազմական պատրաստութիւնն ամենամեծ գրաւականն են, մեր ապագայ յաջողութիւնների:

Մենք պիտի ամուր պահպանենք մեր ճակատները և պատրաստ լինենք ամէն մի անակնկալի առաջ: Ամենից շատ կարիք է զգացւում ուժեղացնելու Դիլիջանի ֆրօնտը:

Բոլոր զէնքի ընդունակները, որոնք ցանկութիւն ունեն բառն եռանդով դիմադրելու բշնամուն՝ քող այսօրվանից ներկայանան իրենց հրացաններով, փամփուշտներով, հագուստով և 5-10 օրուայ հացի պաշարով՝ Կարմիր Գւարդիայի գրասենեակ (Աստաֆեան փողոց, Դաշնակցութեան տուն) ցուցակագրելու և անմիջապէս դէպի Դիլիջանի ճակատամարտը մեկնելու:

Յուցակագրութիւնը սկսւում է այսօր, յունիս 7-ին, առաւօտեան ժամը 12-ին:

Յունիս 5-ին քաղաքիս և Քանաքեռի մէջ տեղի ունեցաւ ճակատի զինուորներու օգտին «Նուէրներու օր», որ կազմակերպած էին զանազան ընկերութիւններու և միութիւններու վարչութիւնները: Առջի օր, հաւաքուած նուէրները տարուեցան և բաժանուեցան ճակատի զինուորներուն:

«Աշխատանք», 8 հունիսի (26 մայիսի) 1918 թ.:

N 287

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՇՏԱՊ ԿԱՐԳՈՎ ԵՐԵՎԱՆ ԳԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 հունիսի 1918 թ.
Երևան

Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդին

Հակառակ մեր թափած բոլոր ջանքերին, մենք չկարողացանք կապ հաստատել ձեզ հետ և ձեզնից հրահանգ ստանալ այս կամ այն հարցի առթիւ:

Կեանքը հոսում է և օրը օրին բարդ խնդիրներ է առաջադրում, հրամայաբար լուծում պահանջում: Իսկ մենք այդ չենք կարողանում անել:

Ա. Ամենքը զարմանում են ձեր անտարբերութեան վրա. ամբողջ ամիս է խաղաղութեան դաշինք էք ստորագրել այս երկրի համար, սակայն այս դժբախտ երկիրը այդ դաշնագրի իսկական պատճէնը մինչև օրս չունի: Տաճիկները սիստեմատիկ կերպով պահանջում են դաշնագրի այս կամ այն պայմանների իրագործում. իսկ եթէ մենք ենք պահանջում նոյնը մեր երկրի կամ ժողովրդի համար, ասում են, որ դաշնագրում այդպիսի կէտեր չկան.-օրինակ փախստականների յետ դառնալու մասին: Ձեր բոլոր նամակներով՝ այդ յայտնուած էր մեզ: Այէքսանդրապօլում եղած թիւրքերէն դաշնագրի մէջ, ասել են, այդ կէտը չկայ: Յետոյ ինչպէս պէտք է վարուել մեր կայարաններում եղած երկաթուղու շարժուն սաստուի մասին. նրանք պահանջում են իրանց թողնել և վարպետօրէն ամեն բան տարան. մենք պնդում էինք ընդհանուրից օգտվելու իրաւունքի վրայ: Արդէն գիտէք, որ Ղարաքիլիսայի գիծը մինչև օրս չեն դատարկել, երևի գիտէք նաև նրանց առարկութիւնը-մինչև հայերի և վրացիների մէջ, սահմանների նկատմամբ (հաշտութիւն) համաձայնութիւն կայանալը, իրանք հայերի օգտի տեսակէտից այդ գիծը պահում են իրանց մօտ: Ի՞նչ դիրք բռնել, ինչ պատասխան տալ: Դաշն դուք էք կնքել, պահանջում են, որ մենք իրագործենք, առանց իսկական պայմաններն իմանալու: Հասկանալի է, որ դուք դրել եք մեզ սոսկալի դրութեան մէջ: Թեև ամեն կերպ կարող էք յաջողեցնել դաշնագրի իսկականը և ձեր հրահանգները մեզ ճամփելու, որ սակայն, չէք անում: Մենք ձեզ թուրք սուրհանդակ էինք ուղարկել, որին դուք չգիտենք ինչու, դատարկ յետ էք ուղարկել: Թւում է թէ դուք էլ հեշտութեամբ կարող էիք այդտեղից մեզ սուրհանդակ ճամփել:

Բ.- Երկրորդ կարևոր հարցը Ֆինանսների խնդիրն է. այս աղքատ ու դժբախտ երկիրը 4 ամիս է կերակրում է քառասուն հազարանոց բանակ. ամսից աւելի է, որ 1-ին դիւիզիայի մասերը և կօմկօրը[223] մեր վզին են: Ժողովրդին թալանելով, կողոպտելով հազիւ ենք հասցրել այստեղ. այլևս անկարելի է շարունակել, բոլոր հասարակութեան դրամները գրավել ենք, բոլոր ձեռքի տակ եղած դրամները սպառել ենք, իսկ իւրաքանչիւր օր ավելի քան 100.000 ռուբլի ծախք ունինք- եկամուտ՝ ոչ մի կօպէկ: Սպայութիւնը ամիսներով ռոճիկ չի ստացել, խեղճերը մաս են գալիս կամ չարուխնեներով կամ՝ ոտաբոբիկ ու գրեթէ մերկ. սոսկալի, չտեսնուած թանկութիւն է, ապրել չի լինում. աշխատէք դրամ հասցնել, այլապէս զօրքը կարող է մի օրում ցրել և մենք կխայտառակվենք:

Գ.-Ներքին անարխիան սոսկալի չափեր է ընդունել. հարկաւոր է շուտափոյթ իշխանութիւն կազմակերպել և գործի անցնել. մինչև հիմա այդ չենք արել, չարունակ սպասել ենք ձեզ, իսկ դուք չկաք ու չկաք, դրամ է պէտք աղմինիստրացիա և միլիցիա կազմակերպելու, դրամ չկայ: Մեր ֆինանսների դրութիւնը վերևում պարզեցի ձեր առաջ:

Դ.-Պարենատրման գործը ամենադժուարը և անելանելի է. մօտ մէկ միլիօն ժողովուրդ կայ այս մի քիչ երկրի վրա, իսկ գիտէք քէ որքան հաց կայ մեզանում. գաղթականութիւնը սկսել է ցորենի արտերը անխնայ արածացնել և փչացնել. անհրաժեշտ է շուտով կազմակերպել բերքի պաշտպանութիւնը, այս տարի նմանը չտեսնուած առատ բերք կայ: Որոշել ենք հացը պետականացնել, պետական մենաւաճառութիւն յայտարարել ու հաւաքել: Այս բոլորը մեր ունեցած ոյժերով անել անկարող ենք: Նամանաւանդ, դա անկարելի է ֆինանսական սնանկութեան պատճառով. անհրաժեշտ է դրամ ունենալ և սկզբից վճարել ցորեն գնելիս, այլապէս գիտացիք կարող են պատերազմ սկսել մեր դէմ:

Ե.-Քարդ խնդիր է հայ-թրքական յարաբերութեան խնդիրը. տեղացի թուրքերը իրանց համարում են արտօնեալներ. ոչ մի պարտականութիւն չեն վերցնում իրանց վրա. մենք էլ դրութեան անորոշութեան պատճառով, ի նկատի ունենալով նաև մօմենտի փափկանկատութիւնը, չենք կարողանում որոշ դիրք բռնել նրանց վերաբերմամբ:

Զ.-Ձեզ քաջ յայտնի է գաղթականութեան սոսկալի վիճակը. պէտք է նրանց կազմակերպել, որոնք անդէմ ու անգլուխ թափառում են. այս վերջին օրերն էլ նրանք ոչխարի նման հետևել են Անդրանիկին ու նրա հետ գլուխ առել, գնացել Պարսկաստան, որը այդ քայլը արել է մեր կամքին հակառակ: Անդրանիկը, զինուած ու անգէն գաղթականութիւնն, ասում են, մօտ 10-15 հազար, Նոր-Բայազետի, Դարալագեազի և Նախիջևանի վրայով անցել է արդէն Ջուլֆա, ուղղակի աւեր մատնելով իր անցած տեղերը Նոր-Բայազետի ու Դարալագեազի այս երկու աղքատիկ գաւառներում՝ այժմ հաւաքուած է աւելի քան 200,000 գաղթականութիւն, որոնք բառիս բուն մտքով, ապրում են տեղացիների ունեցած աղքատիկ հացի հաշիւն՝ կողոպտելով, թալանելով և աւերելով ամեն ինչ:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով՝ տեղիս Ազգային խորհուրդը որոշեց կազմել ժամանակաւոր կառավարութիւն, առանց յայտարարելու այս մասին ժողովրդին և ձեռնարկել գործի եւ իբրև վերջին յուսահատական փորձ, որոշեցինք այստեղից ձեզ մօտ ուղարկել մի պատգամաւոր, որը կյայտնի ձեզ հետևեալ պայմանները: Որ եթէ այս նամակը ձեր ձեռքը հասնելու օրից հաշուելով երկու շաբաթայ ընթացքում դուք Երևան չհասնեք, յայտարարել Թիֆլիսի և ուրիշ տեղերի թերթում, որ դուք այս երկրի ներկայացուցիչները չէք:

Որ ձեզանից յուսահատուած՝ անմիջապէս կազմակերպուելու է սահմանադիր ժողով, ժողովրդի կամքով որոշելու երկրի բախտը-ճակատագիրը: Որ սահմանադիր ժողովի և նրանից բղխած ու հաստատուած կառավարութեան առաջ դնել ձեր պատասխանատուութեան հարցը այս երկրի ճակատագիրը այսպէս անտարբեր և անպատասխանատու ձևով վարելու համար: Իմացէք, որ յուսահատուածները կարող են աւելի սոսկալի միջոցների դիմելու: Այս բոլորը յայտնում եմ ձեզ ի գիտութիւն և ի

տնօրինութիւն: Խնդրում ենք մեր ուղարկած պատգամաւորին իսկոյն վերադարձնել, ուղարկելով նրա հետ ձեր գրաւոր պատասխանը:

Յարգանօք՝ ի դիմաց Երևանի Հայոց Ազգային Խորհրդի՝ **Արամ**

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.658, թթ. 149-150շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 288
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻՆ՝ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՆՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐ ՀԱՎԱՔԱԳՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

9 հուլիսի 1918 թ.

Вчера 8 июля Командир турецкой дивизии на Сардарабатском фронте в форме ультиматума потребовал очищение деревень 1) Зейва, 2) Керпалу, 3) Хатунарх и, не выждав ответа с нашей стороны, начал военные действия против нас. С нашей стороны есть достаточное число раненых и убитых.

Повторяется история с Александрополем. По обыкновению турки нарушают недавно подписанные ими условия мира. Народ, чувствуя себя обеспеченным, принялся было за свои обыденные работы. Многие оставили ряды войск самочинно, а многие были отпущены на полевые работы.

По поводу возобновления военных действий примите энергичные меры, чтобы все находящиеся дома солдаты вернулись немедленно в свои части.

Организуйте добровольческие отряды, которые со своим оружием, хлебом и обмундированием поспешили пополнить запасные полки. Приступите к сбору хлеба и боевых припасов. При допущении турок к Эривани мы окончательно должны будем отдаваться рабству.

Поспешите на помощь. Каждый район должен направить пополнение на усиление ближайшего фронта, а районы близ города должны направить в пополнение сперва в город, оттуда на фронт.

Эриванский Армянский Национальный Совет.

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թ.372, թողոն, մեքենագիր:

N 289
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԱՀԱՆՋԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11 հուլիսի 1918 թ.

Армянский Национальный совет, обсудив 9 июля Ваше решение отойти от Тазакенда и Агбаши и узнав, что это Ваше решение исходило не из стратегических соображений, а было лишь политическим шагом, дабы спасти Вами неполученное письменное обещание, данное Александропольской комиссией, что Ваше решение противоречит тому постановлению Национального Совета от 8 июля (на заседании присутствовали и Вы), которым было решено защитить очерченные границы, не позволяя никаких покушений на них, единогласно постановил: выразить свое сожаление по поводу отступления наших войск от установленной границы под напором турецких войск, что есть нарушение мирного договора, довести до Вашего сведения, что больше такие действия не могут быть одобрены Национальным советом и что новые покушения турок перейти установленные границы должны получить самый сильный отпор с Вашей стороны, не принимая ввиду никакие соображения. Национальный совет просил Вас принять все меры, чтобы держать войска в полной боевой готовности, укрепить мощь и оказать содействие для урегулирования продовольствия войск.

Со своей стороны Национальный совет приложит все усилия для оказания Вам содействия иметь вполне боеспособную дисциплинированную армию.

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թ.373, բողոն, մերեւնագիր:

N 290

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՅԱՊՈՆԻՆ ՀԵՌԱԳԻՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հուլիսի 1918 թ.

Прошу срочно, нарочным отправить в Даралагяз Япону следующую телеграмму: "Для исполнения препровождаю телеграмму Александропольской армяно-турецкой комиссии о демаркационной линии. На карте 5 верстах принято решение о демаркационной линии на Сардарабадском направлении на основании всех данных по этому вопросу. Армянские войска должны с получением сего отойти, впредь не переходить линии, проходящей юго-западнее сел Байрамали, Хизнауз, Кюракалу, Керпалу, Алибеклю, Калара, Норакавит, Джанадлу, Чатма, Дахназ, Еранос, Армык, Гортун и Ельпин. А турецкие войска не могут переходить ту же линию, имея в своем распоряжении сел Кайтул, Зейва, Айналу, Каракишлаг, Хачапарах, Енгиджа, Тазакенд, Агбаш, Двин, Шуталкенд, Агдамляр, Ташлу, Карабагляр, Нижний Шагаблу, Карахач, Ардалаз и Алмаку, Чива. На Башабаранском, Караклисском направлениях временно остается прежняя и вопрос будет разрешаться в связи с установлением внутренних границ с Грузией и Азербайджаном.

Сообщите сасунцам, что Каро Сасуни приехал в Эривань и требует всех сасунцев возвратиться в Эривань".

Председатель правления

ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.24, թ.376, բողոք, մերենագիր:

N 291

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ՝ ԻՆԺԵՆԵՐ-ԻԴՐԱՎԼԻԿԻ ՊԱՇՏՕՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 հուլիսի 1918 թ.
Երևան

Պողպարուչիկ Կարապետեանցը նշանակւում է Երևանի գաւառի II մասի կոմիսարի օգնական, միևնոյն ժամանակ դնելով նրան I մասի կոմիսարի տրամադրութեան տակ:

N 45 *12 օգոստոսի 1918 թ.*

Համաձայն իր խնդրի արձակւում է պաշտօնից և իսպառ ծառայու-թիւնից, Երևանի արական Գիմնազիայի վերատեսուչ Զօգօշվիլին:

N 46 *12 օգոստոսի 1918 թ.*

Համաձայն իրենց խնդրի արձակւում է պաշտօնից և իսպառ ծառա-յութիւնից, Երևանի 2-րդ իգական Գիմնազիայի ուսուցչուհիներ Վալեն-տինա Կալեսնիկովան և Աննա Ժելտովան:

N 47 *12 օգոստոսի 1918 թ.*

Երևանի արական Գիմնազիան աւարտած Ա. Մ. Գիգինսկին ժամա-նակաւորապէս նշանակւում է ներքին գործոց վարչութեան մեջ դիւանա-տան ծառայող, կառավարելու Երևանի նախկին նահանգական վարչու-թեան արխիւը. նշանակելով նրան ամսական 300 ռ. ռոճիկ:

N 48 *14 օգոստոսի 1918 թ.*

Ի փոփոխութիւն Յունիսի 17-ի N 7 հրամանի Երևանի նահանգական վարչութեան կից գտնւող և վերացուած անասնաբուժական մասը, ժողո-վրդական առողջապահական մինիստրութիւնից անցնում է ֆինանսների մինիստրութեան հսկողութեան:

N 49 *15 օգոստոսի 1918 թ.*

Օգոստոսի 16-ից նշանակւում են Երևանի գաւառական կոմիսա-րիատի մատենավարի և գործավարի պաշտոնում Համայակ Յովակի-մեան Ստեփանեանցը և Վարդան Իւան. Նիկիտինան՝ նոյն կոմիսա-րիատի գրասենեակի ծառայողի պաշտօնում:

N 50 *15 օգոստոսի 1918 թ.*

Օգոստոսի 1-ից Գրիգոր Հայրապ. Մելքոնեանցը նշանակւում է գործավար Երևանի գաւառի II մասի կոմիսարի գրասենեակում:

N 51 *15 օգոստոսի 1918 թ.*

Երևանի նահանգական բանտի ծառայողների շտատը կրճատելու պատճառով օգոստոսի 16-ից պաշտօնից արձակւած է համարւում բանտապետի աւագ օգնական Կուզմա Նագաչայնը:

N 52[308] *15 օգոստոսի 1918 թ.*

Օգոստոսի 16-ից Ղազար Մեղրակեան Մելիք- Վարդանեանը նշանակւում է Երևանի բանտի բանտապետ և Գրիգոր Տէր-Սահակեանը՝ նոյն բանտապետի օգնական:

N 54 *17 օգոստոսի 1918 թ.*

Նոյն թի հուլիսի 10-ի N14 կազաղրութիւնը փոփոխւում է և նահանգական գիւղացիական գործերի ատեանի (поселянского присутствие) անդամ Քալանթարեանը, քարտուղար Չալէսսկին և գրասենեակային պաշտօնեա Սննա Մուսաբէկեանը մնում են իրենց պաշտօններում գործերի լիկւիդացիայի համար մինչև ս.թ. սեպտեմբերի 1-ը, որից յետոյ ընդհանուր հիմունքների համաձայն համարելու են շտատից դուրս մնացած:

N 55 *20 օգոստոսի 1918 թ.*

Ի նկատի ունենալով, որ Երևանի Նահանգական մէջլիսի գործավար Քեարիմ Ախունդովը, իր հիւանդութեան պատճառով, որը հաստատուած է բժշկական վկայագրով, չէր յաճախում ծառայութեան և ս.թ. յուլիսի 31-ի N 30 իմ հրամանով, ծառայութիւնից արձակուած էր բոլորովին, այժմ վերոյիշեալ հրամանը վերացւում է և Ախունդովը նորէն մնում է իր նախկին պաշտօնում:

N 56 *20 օգոստոսի 1918 թ.*

Ներքին գործոց մինիստրի գրասենեակի կառավարչի օգնական Միսակ Ստեփանեան Մելիք-Իսրայէլեանը հեռացւում է պաշտօնից. նրա փոխարէն կառավարչի օգնական նշանակւում է իմ քարտուղար Կարապետ Պողոսեան Յովհաննիսեանը:

N 57 *20 օգոստոսի 1918 թ.*

Նոյն թի օգոստոսի 7-ի N 10 կարգադրութիւնս փոփոխւում է այս ձևով 1.Սարգիս Օհանջանեանը նշանակւում է յանձնարարութիւնների կոմիսար ներքին գործոց մինիստրի մոտ և 2. Ալէքսանդր Սոկոլովսկին գրասենեակային պաշտօնեայ իմ գրասենեակում:

N 61 21 օգոստոսի 1918 թ.

Պաշտօնեաների շտատի կրճատման պատճառով ընդհանուր հիմունքների համաձայն շտատից դուրս են մնում սոյն թւի յուլիսի 1-ից գաւառական զինուորական ատեանների գրասենեակային պաշտօնեաներ 1. Երևանի գաւառի՝ Սերգէյ Իոսիֆով, Լէօնիդ Կարպինսկիյ, Կէօն Ջաատումպիօ և 2. Էջմիածնի գաւառի՝ Յակոբ Գրիգորեան, Ռուբէն Ասաթեան, Դ-առնիկ Պօտեան և դռնապահ Հայկազուն Խաչատրեան:

N 62 22 օգոստոսի 1918 թ.

Բեռնային շէնքերի վերացման պատճառով ընդհանուր հիմունքների համաձայն սոյն թւի յուլիսի 1-ից շտատից դուրս են մնում սոյն շէնքերի վերակացուներ և դռնապաններ 1. Նոր-Բայազէդի՝ վերակացու Մանուկ Բաղիկեանը և դռնապան Գէորգ Վանեցեանը և 2. Բասարգեչարի-վերակացու Հայկ Մնացականեանը և դռնապան Աղամ Ստեփանեանը:

N 63 22 օգոստոսի 1918 թ.

Երևանի բանտի հսկողութեան շտատի կրճատման պատճառով շտատից դուրս են մնում ընդհանուր հիմունքների համաձայն սոյն բանտի կրտսեր վերակացու Լևոն Մինասեանը:

N 67 23 օգոստոսի 1918 թ.

Նախկին նահանգական պրավլենիայի քարտուղար Աղաբէկ Տէր-Դունըբէկովին, որը նշանակւած էր ներքին գործոց վարչութեան գործավար, ընդհանուր հիմունքների համաձայն համարել շտատից դուրս մնացած:

N 68 26 օգոստոսի 1918 թ.

Սոյն թվի օգոստոսի 28-ից Արշալոյս Աստւածատրեանը նշանակւում է ներքին գործոց մինիստրութեանը կից գտնւող լուսաւորութեան բաժանմունքի ժամանակաւոր կառավարիչ:

N 69 26 օգոստոսի 1918 թ.

Ի նկատի ունենալով այն, որ ներքին գործերի բաժանմունքի կառավարչի ադմինիստրացիայի և միլիցիայի մասի օգնականի պաշտօնը վերացւում է և նրա փոխարէն հիմնւում է սոյն թւի օգոստոսի 1-ից Հայաստանի տերիտորիայի ադմինիստրացիայի և միլիցիայի կոմիսարի պաշտօն. առաջին գրասենեակը սոյն օգոստոսի 1-ից կոչւելու է վերջինիս անունով:

N 70 27 օգոստոսի 1918 թ.

Նշանակւում են 1) Զահանգիր աղա Խոսղիր Ազանը կառավարիչ Հայաստանի սահմաններում գտնւած փախստական եզդիների գործերի,

տեղական գաւառական կոմիսարների հսկողութեան տակ, 2) Ներին Եղիազարեանը նրան օգնական:

N 71 *27 օգոստոսի 1918 թ.*

Նորագաւիթի պօստի միլիցիայի վերակացու նշանակւում է Պետրոս Հասեանը, 400 ռուբ. ռոճիկով:

N 72 *29 օգոստոսի 1918 թ.*

Օգոստոսի 10-ից Ալէքսանդր Անդրէևիչ Միյգուրը նշանակւում է գլխաւոր բժշկա-սանիտարական վարչութեան:

N 73 *30 օգոստոսի 1918 թ.*

Հայաստանի սահմաններում գտնւած եզդիի փախստականների կառավարչին և նրա օգնականին նշանակւած է օրապահիկ քսանական ռուբլի, կամ 600 ռուբլի ամսական, հաշւած ամիսը 30 օրից:

N 74 *30 օգոստոսի 1918 թ.*

Ալէքսանդ Շարաֆեանը նշանակւում է ներքին գործոց մինիստրութեան պարենաւորման բաժնի կառավարիչ:

N 75 *2 սեպտեմբերի 1918 թ.*

Երևանի քաղաքային հաշտարար բաժնի քարտուղարի օգնական Սարգիս Մելիքսէդէկեան Տէր Ալէքսանդրեանցը սոյն թւի սեպտեմբերի 1-ից նշանակւում է Հայաստանի տերրիտորիայի ադմինիստրացիայի և միլիցիայի կոմիսարի գրասենեակի քարտուղար:

N 78 *4 սեպտեմբերի 1918 թ.*

Ն.Գ. մինիստրութեան 2-րդ բաժնի գրասենեակային պաշտօնեայ Ստեփան Յարութիւնեան Բադալեանը նշանակւում է նոյն բաժնի գործավար սոյն թւի սեպտեմբերի 1-ից. նրա փոխարէն գրասենեակային պաշտօնեայ է նշանակւում Շալուանիկ Պետրոսեան Սարգսեանը:

N 79 *5 սեպտեմբերի 1918 թ.*

Նշանակւում է Վահագն Քրմոյեանը ներքին գործոց մինիստրութեան գաղթականական բաժնի տեղաւորման բաժանմունքի կառավարիչ:

N 80 *5 սեպտեմբերի 1918 թ.*

Եղիշե Օհանէսեան Ջաղացպանեանը նշանակւում է ներքին գործոց մինիստրի քարտուղար սոյն սեպտեմբերի 4-ից:

N 81 *10 սեպտեմբերի 1918 թ.*

Երդւեալ հաւատարմատար Ալէքսանդր Բագրատեան Հասան Ջալալեանը, նշանակւում իրիստակօնսուլտ Ներքին գործոց մինիստրութեան:

N 82 *12 սեպտեմբերի 1918 թ.*

Նորագաւիթի պօստի միլիցիայի վերակացուի պաշտօնը, որը իմ օգոստոսի 17-ի N 71 հրամանի համաձայն վարում էր Պետրոս Կօսեանը ամսական 400ռ. ռոճիկով յանձնւում են ֆինանսների մինիստրութեան վարչութեանը:

N 83 *12 սեպտեմբերի 1918 թ.*

Մասնաւոր հաւատարմատար Սահակ Գ.Բարոյեանը ս.թ. սեպտեմբերի 11-ից նշանակւում է ներքին գործոց մինիստրութեան II բաժանմունքի գրասենեակային պաշտօնեայ:

N 86 *13 սեպտեմբերի 1918 թ.*

Նոր-Բայազէտի գաւառական կոմիսար պորուչիկ Միսակ Խաչատրեան Թասալեանը հեռացւում է պաշտօնից:

N 87 *13 սեպտեմբերի 1918 թ.*

Հայոց զօրաժողովատեղիին (сборный пункт) կից գտնւող ընդունող յանձնաժողովի նախկին նախագահ Պարոյր Յակոբեան Շահինեանը նշանակել է Դարալագազի գաւառի կոմիսար, ուղարկւում է ստանձնելու Նոր-Բայազէտի գաւառական կոմիսարի թափուր պաշտօնը:

N 88 *13 սեպտեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից Վաղարշապատի գաւառի կոմիսար Արիստակէս Մարգարեան Աւագեանը, նրա պարտականութիւնները դրւում է գաւառական կոմիսարի օգնական Խաչատուր Իւանովիչ Բաբասեանի վրայ:

N 92 *16 սեպտեմբերի 1918 թ.*

Չանգեզուրի նախկին գաւառական կոմիսար Մեսրոպ-բէկ Սարատհիկեանը նշանակւում է Դիլիջանի գաւառական կոմիսար սեպտեմբերի 10-ից:

N 94 *20 սեպտեմբերի 1918 թ.*

Սոյն թւի օգոստոսի 15-ից Մանուկ Յակովբեան Մոջոռեանը նշանակւում է պաշտօնեայ Ներքին Գործոց Մինիստրութեան գրասենյակում:

N 95 *21 սեպտեմբերի 1918 թ.*

Սոյն թւի սեպտեմբերի 19-ից Դանիէլ վարդապետ Ջաղոյեանը նշանակւում է Էջմիածնի գաւառականական գործերի լիազօր:

N 96 *21 սեպտեմբերի 1918 թ.*

Սոյն թւի սեպտեմբերի 23-ից Զաբէլ Չիլինգարեանը նշանակւում է պաշտօնեայ Ներքին Գործոց Մինիստրութեան գրասենեակում:

N 98 *21 սեպտեմբերի 1918 թ.*

Առաջարկում եմ ս. թ. հոկտեմբերի 1-ից բոլոր պետական դպրոցներում սկսել պարապմունքները. ընդա, ում որ վերաբերում է այս կարգադրութիւնը, պէտք է հետևեն նրա անշեղ և անթերի իրագործմանը:

N 99 *27 սեպտեմբերի 1918 թ.*

Նշանակւում են՝ 1) պօրուչիկ Տիգրան Բաղդասարեան Ջանիկեանը միլիցիոներների պահեստի պետ, 2) Սիմիէօն Մարգսեան Բոզոյեանը նոյն պահեստի 2-րդ հարիւրեակի պետ, 3) Ասլան Ստեփանեան Փաշոյեանը նոյն պահեստի վարչապետ և 4) Դարալագեազի միլիցիայի պետ պրապօրշչիկ Անանեայ Տէր-Գրիգորեանը յիշեալ վարչապետի օգնական: Պահեստի 1-ին հարիւրակի պետ Մարտիրոս Աբրահամեանցը մնում է իր պաշտօնում:

N 101 *30 սեպտեմբերի 1918 թ.*

Հայաստանի տերիտորիայի միլիցիայի և ադմինիստրացիայի կոմիսարի գրասենեակի պաշտօնեայ Լուսիկ Ղազարեան Բագալեանցը սոյն թւի հոկտեմբերի 1-ից նշանակւում է նոյն գրասենեակի մատենավոր, ամսական 450 ր. ռոճիկով, մինչև պարլամենտի կողմից նախահաշւի հաստատումը: Նրա տեղը նշանակւում է Մարիամ Բաբայեանը նոյն հոկտեմբերի 1-ից:

N 104 *1 հոկտեմբերի 1918 թ.*

Սոյն թւի սեպտեմբերի 11-ից Գուրգէն Տէր-Ղազարեանը նշանակւում է Ն. Գ. Մինիստրութեան գրասենեակում պաշտօնեայ:

N 105 *2 հոկտեմբերի 1918 թ.*

Գաւառական զինւորական ատեանների շտատների կրճատման պատճառով, Երևանի գաւառական զինւորական ատեանի քարտուղար Միխայիլ Եակովլևիչ Մետլինսկին քողնւում է շտատից դուրս ընդհանուր հիմունքների վրայ, չազատելով նրան ծառայութիւնից մինչև զինւորական-չութեան ենթարկւած զինւորների ընտանիքներին նպաստ տալու գործի լիկվիդացիան:

N 106 *2 հոկտեմբերի 1918 թ.*

Ն. Գ. Մինիստրութեան 2-րդ բաժնի գրասենյակային պաշտօնեայ Սահակ Գէորգեան Բարոյեանը, սույն թւի սեպտեմբերի 11-ից հեռացւում է պաշտօնից, ծառայութեան բոլորովին չգալու պատճառով:

N 107 *4 հոկտեմբերի 1918 թ.*

Երևանեան բանտի վերակացուների թիւը, մինչև շտատների հաստատումը պարլամենտի կողմից, աւելացւում է մինչև 25 և բացի դրանից սոյն բանտին կից հիմնւում է ֆելդշերի պաշտօն:

N 111 *9 հոկտեմբերի 1918 թ.*

Ս. թ. Հոկտեմբերի 15-ից հեռացւում են պաշտօնից և իսպառ ծառայութիւնից Երևանի նահանգական մէջլիսի մուսուլման հոգևորականութեան շիիտ դաւանութեան ներկայացուցիչներ՝ Մոլլա Իսմայիլ Ալի Զադէն և Մոլլա Ալի Հաջի Մոլլա Բաբա Զադէն, անվերադարձ կերպով Թուրքիայ գնալու պատճառով:

N 113 *12 հոկտեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից Ներքին Գործոց Մինիստրութեան ծախսարար Հայկ Սմբատեան Տէր Ղազարեանը ս. թ. հոկտ. 1-ից:

N 114 *17 հոկտեմբերի 1918 թ.*

Սեներիմ Տէր-Յակոբեանը նշանակւում է Քանաքեռ գիւղի որբանոցի կառավարիչ:

N 116 *14 հոկտեմբերի 1918 թ.*

Աղէքսանդր Տէր-Յակոբեանը նշանակւում է Ներքին Գործոց Մինիստրի օգնական գաղթականական բաժինը վարելու համար:

N 117 *18 հոկտեմբերի 1918 թ.*

Էջմիածնի գաւառական կոմիսարի պաշտօնակատար Խաչատուր Յովհաննէսեան Բաբասեանը հաստատւում է վերադիրեալ կոմիսարի պաշտօնում:

N 118 *18 հոկտեմբերի 1918 թ.*

Լիւդմիլա Եւգենիևնա Գվատուան նշանակւում է Ներքին Գործոց Մինիստրութեան ծախսարարի պաշտօնակատար:

N 119 *18 հոկտեմբերի 1918 թ.*

Երկրորդ գնդի շտաբս-կապիտան Տէր-Սարգսեանը նշանակւում է Ղարաքիլիսայի գաւառի միլիցիայի պէտ:

N 120 *18 հոկտեմբերի 1918 թ.*

Ներքին Գործոց Մինիստրութեան 2-րդ բաժանմունքում ծառայութեան է ընդունւում շտատից դուրս իբրև գրասենեակային պաշտօնեայ ամսական 400 ր. ռոճիկով Վացլաւ Ալէքսանդրովիչ Տուրսկին:

N 121 *22 հոկտեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից նախկին երևանեան գիւղացիական գործերի ատեանի անդամ Նիկոլայ Իվ. Սիրինը ս. թ. մարտի 7-ից ծառայութեան չյաճախելու պատճառով:

N 122 *22 հոկտեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից ս. թ. ապրիլի 10-ից Նախիջևանի գաւառի 4-րդ բաժնի հաշտարար միջնորդ Ալէքսանդր Իվ. Չեմբարովը ծառայութեան չյաճախելու պատճառով:

N 123 *22 հոկտեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից ս. թ. յունւարի 10-ից Շարուր-դարալագեազի գաւառի 2-րդ բաժնի հաշտարար միջնորդ պռոպոլկովնիկ Կոնսատնտին Դաւ. Չխէիձէ ծառայութեան չյաճախելու պատճառով:

N 128 *28 հոկտեմբերի 1918 թ.*

Դարալագեազի գաւառական կոմիսսար Պարոյր Յակոբեան Շահինեանը ս. թ. նոյեմբերի 1-ից նշանակւում է Նոր-Բայազէտի գաւառական կոմիսսար, իսկ նրա տեղը Դարալագեազի գաւառական կոմիսսար է նշանակւում նոյն թւից Նորայր Ներսիսեան Յակոբեանը:

N 138 *4 նոյեմբերի 1918 թ.*

Սկրտիչ Մ. Մուրադեանը ընդունւում է Ներքին Գործոց Մինիստրի գրասենեակում ծառայութեան իբրև շտատից դուրս գտնւող գրասենեկային պաշտօնեայ ամսական 350 րուբ. ռոճիկով:

N 140 *4 նոյեմբերի 1918 թ.*

Լուծած երկրորդ Կովկասեան ռուսական պահեստի գնդի պրոպորշչիկ Նիկոլայ Միխայլովիչ Կիրիլլովիչը նշանակւում է Նոր Բայազէդի գաւառական կոմիսսարի օգնական ուղարկելով Էջմիածնի գաւառական կոմիսսարի տրամադրութեան տակ:

N 145 *16 նոյեմբերի 1918 թ.*

Լուսաւորութեան բաժնի ժամանակաւոր վարիչ Արշալույս Ասատուրեանը ազատւում է յիշեալ բաժինը վարելու պարտականութիւն-

ներից. այդ պարտականութիւնները ժամանակավորապէս դրւում են Լուսաւորութեան Մինիստրի պաշտօնակատար Ս. Ս. Յարութիւնեանի վրայ:

N 146 *16 նոյեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից Ներքին Գործոց Մինիստրի քարտուղար Եղիշէ Յովհաննիսեան Ջաղացպանեանը ս. թ. նոյեմ. 11-ից:

N 147 *16 նոյեմբերի 1918 թ.*

Հեռացւում է պաշտօնից Ներքին Գործոց Մինիստրի դիւանի գրասենեակային պաշտօնեայ Զաբել Չիլինգարեանը ս. թ. նոյ. 11-ից:

N 148 *16 նոյեմբերի 1918 թ.*

Ներքին Գործոց Մինիստրի դիւանում ծառայութեան է ընդունւում իբր գրասենեակային պաշտօնեայ Նեկտարիոէ Յարութիւնեան Դանիէլեանը ս. թ. նոյեմ. 16-ից:

N 149 *16 նոյեմբերի 1918 թ.*

Ներքին Գործոց Մինիստրի դիւանի գրասենեակային պաշտօնեայ Մանուկ Յակոբեան Մոջուրեանը հեռացւում է պաշտօնից ս. թ. նոյեմ. 2-ից:

N 156 *30 նոյեմբերի 1918 թ.*

Ի նկատի ունենալով այն, որ մօտերս Թիւրքիայի կողմից դատարկւելու են որոշ հողմասեր, որոնք նրա կողմից գրաւած էին պատերազմի իրաւունքով և այն, որ այդ հողմասերը կցւելու են Հայաստանի Հանրապետութեան տերիտորիային, նոցա վարչական կառավարութեան համար նշանակւում են՝

1. Երևանի գաւառում՝ գաւառային կոմիսսարի օգնական պորուչիկ Խիկար Կարապետեանը՝ 2-րդ գաւառակի՝ այն է Ազիսմալուի կոմիսսար, 1-րդ գաւառակի՝ այն է Քաշգեառնի կոմիսսար Միսակ Մանուկեանը՝ գաւառական կոմիսսարիատի քարտուղար. Պանիսօ Գեօրգիևիչ Եալամովը՝ 3-րդ գաւառակի՝ այն է Ղամալուի կոմիսսար. Երևան քաղաքի 2-րդ քաղաքամասի կոմիսարի գործավար-գրագիր Գրիգոր Եփ. Տէր-Վարդանեանը՝ 4-րդ գաւառակի՝ այն է Դավալուի կոմիսար.

2. Էջմիածնի գաւառում՝ Ալեքսանդր Ներ. Արղութեանը՝ 3-րդ գաւառակի՝ այն է Մարդարապատի կոմիսսար, Հաջիխալիլի գաւառի կոմիսսար Սրապիոն Յով. Տէր-Մկրտչեանը՝ 4-րդ գաւառակի՝ այն է Թալինի կոմիսսար, կոմիսսար Սիմիէօն Գէորգեան Մելիք-Բաբախանեանը՝ 5-րդ գաւառակի՝ այն է Աբարանի կոմիսսար, հաշտարար միջնորդի նախկին թարգման Հերակլ Առաքէլեանը՝ գաւառական կոմիսսարիատի քարտուղար:

3. Նոր-Բայազէտի գաւառում՝ Երևանի քաղաքային միլիցիայի պետի օգնական չտաբս-կապիտան Եղիշէ Բար. Կարապետեանը՝ գաւառական կոմիսարի օգնական:

4. Դարալագեազի գաւառում՝ պրապորշչիկ Խաչատուր Մարգսեանը՝ գաւառական միլիցիայի պետ:

5. Նախիջևանի գաւառում՝ պորուչիկ Գարեգին Տէր-Յարութիւնեանը՝ գաւառական կոմիսար, կապիտան Վահուս Գալստեանը վերջինիս օգնական, Գէորգ Յակ. Շահինեանը՝ 1-ին գաւառակի կոմիսար, պոդպորուչիկ Բարդուղիմէոս Տօշեանը 2-րդ գաւառակի կոմիսար, պոդպորուչիկ Վասիլ Կախեանը՝ 3-րդ գաւառակի կոմիսար:

6. Սուրմալուի գաւառում՝ Նոր-Բայազէտի գաւառական կոմիսարի օգնական պահեստի պրապորշչիկ Նիկոլայ Միխ. Կիրիլլովիչը՝ գաւառական կոմիսարի օգնական, պորուչիկ Ստեփան Յով. Գրիգորեանը՝ գաւառական միլիցիայի պետ, պոդպորուչիկ Աբգար Յով. Տէր-Յակոբեանը՝ 1-ին գաւառամասի կոմիսար, Էջմիածնի գաւառական կոմիսարիատի քարտուղար Յոլակ Եղ. Բարոյեանը՝ 2-րդ գաւառակի կոմիսար, Երևանի քաղաքային միլիցիայի վարչութեան կից եղած կոմիսար Սահակ Յովսէփեանը 3-րդ գաւառակի կոմիսար, Երևանի գաւառական կոմիսարիատի քարտուղար Նազար Սուխուդեանը՝ գաւառական կոմիսարիատի քարտուղար, Ն. Գ. Մ. գրասենեակային պաշտօնեայ Տիգրան Տէր-Յովհաննիսեանը և Ղազիղշլար գիւղի բնակիչ Տիգրան Յով. Մանուկեանը՝ նոյն կոմիսարիատի գործավարներ, Իգդիր գիւղի բնակիչ Յովհաննէս Մաթ. Յովհաննիսեանը՝ ծախսարար, Էջմիածնի գաւառական կոմիսարիատի գործավար Անդրէյ Գորգոյան՝ Իգդիրի բերդապետ:

7. Ալէքսանդրապօլի գաւառում՝ նոյն գաւառի կոմիսարի նախկին օգնական Գեղամ Մես. Թալանեանը՝ գաւառական կոմիսարի օգնական, չտաբս-կապիտան Արամ Արշ. Նորհադեանը՝ գաւառական միլիցիայի պետ, Էջմիածնի գաւառի գաւառակային կոմիսար Բագրատ Աս. Մանուկեանը՝ 1-ին գաւառակի կոմիսար, պրապորշչիկ Գաբրիէլ Կիրակոսեանը՝ 2-րդ գաւառակի կոմիսար, Երևանի միլիցիապետի օգնական պորուչիկ Բրուտեանը՝ 3-րդ գաւառակի կոմիսար և Երևանի 1-ին քաղաքամասի կոմիսար Գեղամ Մ. Մսայիլեանը՝ 4-րդ գաւառակի կոմիսար, Էջմիածնի գաւառական կոմիսարիատի գործավար Սիմէօն Յով. Բոցինեանը՝ քարտուղար, Արտաքին Գործերի Մինիստրության գրասենեակի նախկին քարտուղար Իսահակ Աբր. Չաքարեանը՝ գործավար:

N 159 *30 նոյեմբերի 1918 թ.*

Հետացում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից Դարալագեազի գաւառական կոմիսար Նորայր Ներսէսեան Յակոբեանը ս. թ. նոյեմբերի 1-ից այսինքն յիշեալ պաշտօնում նշանակելու օրուանից առանց յարգելի պատճառների իր պաշտօնատեղին չներկայանալու պատճառով:

N 160 *30 նոյեմբերի 1918 թ.*

Հայաստանի կառավարութեան Ալէքսանդրապօլի դիւանագիտական գործակալ Գէորգ Խոյեցեանը նշանակւում է Ալէքսանդրապօլի գաւառի ժամանակաւոր կառավարիչ:

N 175 *13 դեկտեմբերի 1918 թ.*

Մինչև Նախիջևանում քաղաքային ինքնավարութիւն մտցնելը Ղազար Ղազարեանը նշանակւում է յիշեալ քաղաքի միլիցիապետի օգնական:

N 184 *16 դեկտեմբերի 1918 թ.*

Ընդունւում է ծառայութեան Ն. Գ. Մ. դիւանում իբրև դիւանական պաշտօնեայ նոյն դիւանի շտատից դուրս համարւող պաշտօնեայ Սկրտիչ Մ. Մուրադեանը:

N 185 *16 դեկտեմբերի 1918 թ.*

Շտատից դուրս գտնւող Ն.Գ.Մ. 2-րդ բաժանմունքի դիւանական պաշտօնեայ Վացլաւ Տուրսկին կարգւում է ս. թ. դեկտ. 11-ից նոյն բաժանմունքի հաշւապահ:

N 187 *18 դեկտեմբերի 1918 թ.*

Ս.թ. դեկտ. 1-ից Դիլիջանի գաւառական կոմիսսարիատի գործավար Յովսէփ Տէր-Սահակեանը նշանակւում է Դիլիջանի գաւառական զինուորական ատեանի գործավար:

N 188 *19 դեկտեմբերի 1918 թ.*

Միլիցիայի ինսպեկտոր պոդպորուչիկ Գասպարեանը եօթ օրով արձակուրդ է ստանում:

N 192 *26 դեկտեմբերի 1918 թ.*

Էյտենանտ Արտաշէս Պետր. Ստեփանեանցը նշանակւում է Սուրմալուի գաւառական կոմիսսար:

Ներքին գործոց մինիստր **Արամ**

«Կառավարութեան լրաբեր», 1 սեպտեմբերի 1918թ.- 10 հունվարի 1919թ.:

N 444
ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ

N 11 *12 августа 1918г.*

Увольняются за штат на общем основании служащие бывшего Эриванского отделения Кавказского округа путей сообщения.

от 15 августа 1918г.

1. *Начальник работ бывшего Эриванскохо отделсния Кавказского округа путей сообщения, Иван Францевич Слюжинский.*
   от 1 августа 1918г.
2. *Начальник 4-ой дистанции инженер Маркосов*
3. *старший техник 4-ой дистанции инженер Ионнисян*
4. *механик Кулаков*
5. *практикант Каухов*
6. *техник Соколов*
7. *счетовод Гурчин*
8. *техник Пчелин*
9. *Писцы: Юрченко*
10. *Разгильдев*
11. *заведующий складом Оганесов*

Помощники шоферов:

12. *Мануков*
13. *Мгерянц*
14. *чертежник Азизянц*
15. *сторож Гелашвили*
16. *счет[овод] Бадалянц*

Предлагаю названных выше лиц удовлетворить заштатным содержанием, согласно постановлению Совета Министров от 27 июля сего года

N 12 *18 августа 1918г.*

Увольняются за штат на общем основании служащие бывшего строительнего отделения с 15 августа сего года.

Сверхштатный техник Лещинский, чертежник Московченко, машинистка Гончаренко, кондуктор А. Касперович.

Предлагаю удовлетворить названных выше лиц заштатным содержанием по следующему расчету: Лешинского и Московченко, как увольняемых со службы за штат в виду сокращения штатов, согласно постановлению Совета Министров от 27 июля сего года, годовым окладом содержания, а машинистку Гончаренко и кондуктора Касперовича, как уходящих добровольно, полугодовым окладом.

N 16 *18 августа 1918г.*

Увольняются за штат с 1 июля 1918г. на общем основании писцы канцелярии бывшего начальника работ Эриванского отделения Кавказского округа путей сообщения: Кафаров, Саркисов, и Петрова.

Предлагаю названных выше лиц удовлетворить заштатным содержанием согласно постановлению Совета Министров от 27 сего июля 1918г.

N 17 *18 августа 1918г.*

Увольняются за штат согласно изъявленного добровольного желания служащие Эриванской почтово-телеграфной конторы с 20 августа сего года: Василий Степанов, Георгий Бабаев, Владимир Волошинский, Клавдия Брянцова и Анна Пхакадзе.

N 18 *19 августа 1918г.*

Увольняются за штат согласно изявленнего добровольного желания, служащие Эриванской почтово-телеграфной конторы с 20 августа сего года: младший механик Мастыкин, чиновник третьего разряда Аведеев и женщина чиновник третьего разряда Закржевская и женщина поч[тово] тел[елеграфный] чиновник Анаида Карачева и мастер телеф[онной] сети Радченко.

Предлагаю удовлетворить названных выше лиц заштатным содержанием, согласно постановления Совета Министров от 7 августа 1918г. за N 9 шестимесячным окладом содержания и содержанием за август месяц по 20 августа.

N 19 *21 августа 1918г.*

Назначается почтово-телеграфный чиновник II разряда Арсен Михайлович Шахназаров начальником Делижанской почтово –телеграфной конторы.

Перемещаются для пользы службы в Эриванскую почтово-телеграфную контору:

1)помощник начальника Делижанской почтово-телеграфной конторы Хуциев служащим III разряда.

2) Начальник Каравансарайского почтово-телеграфного отделения Годеридзе служащим IV разряда.

3) Служащий того же отделения V разряда Микеладзе служащим VI разряда.

Переводится начальник Михайловского почтового отделения Тер-Сааков начальником Каравансарайского почтово-телеграфного отделения.

N 22 *27 августа 1918г.*

Увольняется за штат 19 сего августа почтово-телеграфный служащий 3 разряда Эриванской почтово-телеграфной конторы Никанор Корнеевич Колесников.

Предлагаю удовлетворить Колесникова заштатным содержанием, согласно постановления Совета Министров от 7 августа за N9.

СПРАВКА: Колесников об уволнении заштат возбудил ходатайство 1 августа 1918г.

N 23 *28 августа 1918г.*

Назначается начальником Михайловского отделения бывший почтово-телеграфный чиновник IV разряда Делижанской почтово-телеграфной конторы Левон Газарянц, с 27 сего августа.

Предлагаю сделать распоряжение о скорейшем открытии действий названного почтового отделения.

N 25 *18 сентября 1918г.*

Назначаются почтальонами в Новобаязетскую почтово-телеграфную контору Айдинов и Осипов, с откомандированием их для занятий в Делижанскую почтово-телеграфную контору.

N 28 *17 сентября 1918г.*

В виду сокращения штата служащих Делижанской почтово-телеграфной конторы, оставляютсян за штатом следующие служащие названной выше конторы:

1) Служащий V разряда Кождая

2) Служащий VI разряда Гвелесиани и почтальоны: Самодурова, Вартазар Осипов и Будагян.

Предлагаю удовлетворить названных выше лиц заштатным содержанием согласно постановления Совета Министров от 27 июля и 7 августа 1918г. за N 9.

N 29 *17 сентября 1918г.*

Назначается бывший служащий VI разряда Караклисской почтово-телеграфной конторы Ваган Балагезян служащим V разряда Делижанской почтово-телеграфной конторы с 31 августа сего года.

N 30 *17 августа 1918г.*

Согласно прошения от 17 августа с.г. увольняется от службы за штат начальник службы движения и телеграфа железных дорог Республики Армении Турецкий, с 18 августа 1918г.

Предлагаю удовлетворить Турецкого заштатным содержанием в размере полугодичного оклада содержания, согласно постановления Совета Министров Республики Армении от 7 августа 1918г. N9

N 32 *30 сентября 1918г.*

Назначается старшая дежурная Эриванской телефонной сети женщина почтово-телеграфный чиновник VI разряда Тиграпуи Искандарянц служащей V разряда с 1 октября 1918г.

N 33 *18 сентября 1918г.*

Увольняются от службы в отставку по прошению почтово-телеграфные чиновники Эриванской почтово-телеграфной конторы Асадула Бабаев и Мамед Шарифов с 1 сего октября 1918г.

N 34 *25 сентября 1918г.*

Увольняется в отставку с 1 октября 1918г. женщина чиновник VI разряда Эриванской почтово-телеграфной конторы Сатеник Вартанова по домашним обстоятельствам.

N 35 *26 сентября 1918г.*

Приказом министра внутренних дел 23 сентября за N 5063

1) На Инженерное управление возложено управление делами железной дороги Республики Армении.

2) Бывший начальник железной дороги инженер Малхасов назначается уполномоченным Правительства Республики Армении по сношениям с Грузинским, Азербейджанским и Оттоманским Правительствами по делам железной дороги. Одновременно на инженера Малхасова возлагается обязанность по отправке и сопровождению поездов в пути следования.

3) Предложено Инженерному управлению, принять от инженера Малхасова в свое ведение управление все имущество и денежные суммы железной дороги.

Приняв на себя управление делами железной дороги, Инженерное управление на должность вр. начальника железной дороги назначает помощника начальника Инженерного управления, гражданского инженера Мирзоева, с освобождением от последней должности.

Предлагается гражданскому инженеру Мирзоеву немедленно вступить в исправление обязанностей, принять от инженера Малхасова все имущество и денежные суммы железной дороги и об исполнении донести Инженерному управлению.

N 38 *30 сентября 1918г.*

Назначается начальник Эриванской почтово-телеграфной конторы Буйновский начальником почтово-телеграфного отдела Инженерного управления Министерства внутренних дел Республики Армении, с оставлением временно в занимаемой должности. В заседаниях Совета Инженерного управления по делам касающимся почты и телеграфа Буйновскому участвовать с правом решающего голоса.

N 40 *7 октября 1918г.*

В виду окончания всех подготовительных работ и приведения в исполнение всех распоряжений, касающихся открытия в сел. Карадаш Делижанского уезда почтово-телеграфного отделения, предлагаю немедленно открыть действие Карадашского почтово-телеграфного отделения и представить мне на утверждение штат служащих этого отделения.

N 41 *7 октября 1918г.*

Назначается служащий V разряда Делижанской почтово-телеграфной конторы Егише Караманович Осипов начальником Карадашского почтово-телеграфного отделения с 1 сего октября.

N 48 *19 октября 1918г.*

Увольняется со службы в отставку, согласно прошения, с 12 сего октября почтальон Эриванской почтово-телеграфной конторы Месроп Саркисян, он же Габрелян.

N 49 *21 октября 1918г.*

Назначается почтово-телеграфный чиновник IV разряда Елизаветпольской почтово-телеграной конторы Аракелян, начальником почтово-телеграфной конторы в селение Джалал-оглы.

N 49 *25 октября 1918г.*

Увольняется со службы с 16 сего октября сего года женщина чиновник IV разряда Эривананской почтово-телеграфной конторы Анна Харченко согласно прошения.

N 50 *23 октября 1918г.*

Увольняются со службы с 1-го наступающего ноября сего года почтальоны Эриванской почтово-телеграфной конторы Лазар Киракосов и Хачатур Мусабеков согласно просьбам.

N 51 *23 ноября 1918г.*

Назначается почтальоном в Эриванскую почтово-телеграфную контору с 16 сего октября заштатный почтальон Александрапольской почтово-телеграфной конторы, Месроп Саркисянц.

N 52 *25 октября 1918г.*

Назначается выдержавший экзамен на должность надсмотрщика Штек, надсмотрщиком низшего оклада в Эриванксую почтово-телеграфную контору с 7 сего октября.

N 53 *25 октября 1918г.*

Назначаются в Шагалинск почтово-телеграфное отделение с 23 сего октября заштатный служащий V разряда Кульпинского почтово-телеграфного отделения Ашот Тер-Аракелянц начальником отделения, заштатный служаший IV разряда Кагызманской почтово-телеграфной конторы Арам Манучарянц (он же Агаронянц) служащим VI разряда и заштатный почтальион Кульпинского почтово-телеграфного отделения Ерванд Сефилянц почтальоном.

N 54 *23 сентября 1918г.*

Назначается проживающий в гор. Эривани Иван Авдеев почтальоном во вновь открываемую Джалал -Оглинскую почтово-телеграфную контору с 23 сего октября.

N 55 *25 октября 1918г.*

По приказанию министра внутренних дел открывает действия с 20 сего октября почтово-телеграфная контора с сел. Джалал-Оглы.

N 56 *26 октября 1918г.*

Назначаются почтальонами в Эриванскую почтово-телеграфную контору с 1 наступающего ноября заштатный почтальон Курдукулинского почтового отделения Еремия Гарибян и жит [ель] сел. Аяслу Эриванского уезда Арменак Тер Сааков.

N 56 *4 ноября 1918г.*

Назначается заштатный служащий V разряда 1-го отдельного Армянского телеграфного отделения Василий Белослюдов служащим V разряда в штат Джалал-Оглинской почтово-телеграфной конторы с 1-го сего сентября.

N 58 *8 ноября 1918г.*

Назначается в Эриванскую почтово-телеграфную контору с 1 ноября сего года почтальоном заштатный почтальон Нахичеванской почтово-телеграфной конторы Арсен Тамирян.

Переводится в Джалал-Оглинскую почтово-телеграфную контору почтальон Эриванской почтово-телеграфной конторы почтальон Эриванксой почтово-телеграфной конторы Арменак Азарянц с 1-го же сего ноября.

N 59 *15 ноября 1918г.*

Назначается Вартан Геворкянц служащим 6 разряда с 1 ноября сего года в Эриванскую почтово-телеграфную контору.

N60 *17 ноября 1918г.*

Назначается заштатный почтальон Тер-Степанянц почтальоном Караклисской почтово-телеграфной конторы с 1-го сего ноября.

Министр Внутренних дел ***АРАМ***
Начальник Инженерного управлеия инженер ***СИМОНСОН***

N 62 *15 նոյեմբերի 1918 թ.*

Ջինւորական պաշտօնեայ, տեխնիկ Աշոտ Սմ. Մատինեանը նշանակւում է կոնդուկտոր ճարտարապետական վարչութեան ճանապարհների 5-րդ դիստանցիայի ս. թ. նոյեմբ. 7-ից:

N 63 *20 նոյեմբերի 1918 թ.*

Ինժիներ-մեխանիկ Խորէն Միսկարեանը նշանակւում է ճարտարապետական վարչութեան ճանապարհների 5-րդ դիստանցիայի կառավարչի պաշտօնակատար:

N 64 *20 նոյեմբերի 1918 թ.*

Ճանապարհների հաղորդակցութեան ճարտարապետ Բոգդան Փիրումեանը նշանակւում է հայկական երկաթուղու ճանապարհի ծառայութեան պետ ս.թ. նոյեմբերի 15-ից:

N 65 *21 նոյեմբերի 1918 թ.*

Էջմիածնի պոստ-հեռագրատան գրասենեակի ցրիչ Արտաշէս Բալագեօզեանը նոյն պաշտօնով փոխադրւում է Նոր-Բայազէտի պոստ-հեռագրատան գրասենեակը ս.թ. դեկտեմբերի 1-ից:

N 66 *21 նոյեմբերի 1918 թ.*

Ղարաքիլիսէի պոստ-հեռագրատան գրասենեակի նախկին ցրիչ Մուշեղ Տէր Ստեփանեանը նշանակւում է Ջալալ-Օղլիի պոստ-հեռագրատան գեասենեակը ս. թ. նոյեմբերի 11-ից:

N 67 *30 նոյեմբերի 1918 թ.*

Հիւանդութեան պատճառով միամսեայ արձակուրդ է ստանում Երևանի հեռախօսային ցանցի կառավարիչ Տէր-Սիմէօնեանը. արձակուրդը սկսւում է պաշտօնը յանձնելու օրւանից:

N 68 *22 նոյեմբերի 1918 թ.*

Նոր-Բայազէտի պոստ-հեռագրատան գրասենեակի ցրիչ Տիգրան Այդինեանի անունը հանւում է ծառայողների ցուցակից վերջինիս մահուան պատճառով, որը տեղի ունեցաւ ս.թ. նոյեմբերի 6-ին:

N 69 *30 նոյեմբերի 1918 թ.*

Պողպորուչիկ Արմենակ Տէր Մկրտչեանը նշանակւում է Երեւանի հեռախօսային ցանցի կրտսեր մեխանիկ ս.թ. դեկտեմբերի 1-ից, նրա վրայ դրւում է նաև հեռախօսային ցանցի կառավարչի պարտականութիւնների կատարումը այդ ցանցի կառավարիչ Տէր Սիմէօնեանի արձակուրդի միջոցին:

N 70 *7 դեկտեմբերի 1918 թ.*

Սաթենիկ Աղեք. Վարդանեանը նշանակւում է VI կարգի պաշտօնեայ Երևանի պոստ-հեռագրատան գրասենեակում ս.թ. դեկտեմբերի 1-ից:

N 71 *11 դեկտեմբերի 1918 թ.*

Հայաստանի հանրապետութեան երկաթուղու ճանապարհի ծառայութեան պետ ճարտարապետ Փիրումեանի վրայ ժամանակատրապէս դրւում են յիշեալ ճանապարհի կառավարչի պաշտօնը:

N 72 *11 դեկտեմբերի 1918 թ.*

Երևանի փոստ-հեռագրատան գրասենյակի կառավարչի օգնական Թ. Ս. Պետրոսեանը ս.թ. նոյեմբերի 15-ից նշանակւում է յիշեալ գրասենյակի կառավարիչ:

N 71ա 13 դեկտեմբերի 1918 թ.

Երևանի հեռախօսային ցանցի VI կարգի պոստ-հեռագրական պաշտօնեայ Նատալիա Տերնօն նշանակւում է նոյն ցանցի V կարգի պաշտօնեայ ս.թ. դեկտեմբերի 1-ից:

N 72 16 դեկտեմբերի 1918 թ.

Երևանի հեռախօսային ցանցի բարձր ռոճիկատր վարպետ Յարութիւն Բաղալեանը նշանակւում է նոյն ցանցի վերահսկիչ ս. թ. դեկտեմբերի 1-ից:

N 72 23 դեկտեմբերի 1918 թ.

Կոստանտին Մելիք-Նուբարեանը նշանակւում է գլխաւոր մեխանիկ Երևանի փոստ-հեռագրատան գրասենեակում 15 դեկտեմբերի 1918թ.:

N 73 23 դեկտեմբերի 1918 թ.

Ալէքսանդրապօլի փոստ-հեռագրատան նախկին վերակացու (Զօր-Քաշ S оклада) նշանակւում նոյն պաշտօնում Ալէքսանդրապօլի փոստ-հեռագրատնի դեկտ. 21-ից 1918 թ.:

N 74 20 դեկտեմբերի 1918 թ.

Գուրգէն Վարդանեանը նշանակւում է 5-րդ կարգի ծառայող Երևանի փոստ-հեռագրատնում դեկտեմբերի 1-ից 1918թ.:

Ներքին գործերի մինիստր **Արամ**
Ճարտ. վարչ. կառավարիչ **Սիմոնեան**

«Կառավարութեան լրաբեր», 29 նոյեմբերի 1918թ.-10 հունվարի 1919թ.

N 445
ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԺՇԿԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ

N 9 20 օգոստոսի 1918 թ.

Նոր-Բայազէդի գաւառի 1-ին գաւառամասի Ելենովկայի ֆէլչէր Մակարիյ Տօնկօվինին իր խնդրի համաձայն հեռացնել պաշտօնից և բոլորովին ծառայութիւնից ս. թ. օգոստ. 16-ից:

N 10 21 օգոստոսի 1918 թ.

Նոր-Բայազէդի գաւառի 2-րդ գավառամասի Բասարգէչարի գիւղական հիւանդանոցի աւագ բժշկական Ֆէլդշէր Անդրէյ Շչիտլիկին իր խնդրի համաձայն հեռացնել պաշտօնից և բոլորովին ծառայութիւնից սոյն թի օգոստ. 20-ից:

N 11 *22 օգոստոսի 1918 թ.*

Երևանի գաւառի Քանաքեռի գիւղական հիւանդանոցի աւագ բժշկական Ֆէլդշէր Ալէքսանդր Սիյգուրային, իր խնդրի համաձայն, հեռացնել պաշտօնից և բոլորովին ծառայութիւնից ս. թ. օգոստ. 9-ից:

N 12 *11 սեպտեմբերի 1918 թ.*

Ս. թ. սեպտեմբերի 11-ից բժշկա-սանիտարական վարչութիւնը ծառայութեան ուղարկուած բժշկական Ֆէլդշէր Գէորգ Խաչատրեանը, իր խնդրի համաձայն, հեռացնում է պաշտօնից և իսպառ ծառայութիւնից ս. թ. սեպտ. 10-ից:

N 13 *13 սեպտեմբերի 1918 թ.*

Դիլիջան-Քարուանսարայ բայօնի գաղթականական գործերի լիազօր բժիշկ Սարգիս Իսրայէլեան Փիրումեանը նշանաւում է Դիլիջանի հիւանդանոցի կառավարիչ սեպտեմբերի 16-ից 1918 թ.:

N 14 *25 սեպտեմբերի 1918 թ.*

Երևանի նահանգական կոմիտեարի 1918 թ. սեպտեմբերի 6-ին N10 կարգադրութեամբ, Աշտարակի գիւղական հիւանդանոցում տատմայրի պաշտօն ստացած Օլգա Եխտաթեանցին, ծառայութեան չյաճախելու պատճառով, հեռացնել պաշտօնից սոյն թի սեպտեմբերի 10-ից:

N 16 *30 սեպտեմբերի 1918 թ.*

1. Հայոց Ազգային խորհրդի ժողովրդական առողջապահութեան բաժանմունքի 1918 թ. յուլիսի 11 N2 կարգադրութեամբ ժամանակաւորապէս բժշկա-սանիտարական վարչութեան տրամադրութեան տակ դրուած գիւղական բժիշկներից՝ 1) Նախիջևանի 1 գաւառամասի բժիշկ Կարլ Բելներին և 2) Էջմիածնի 2 գաւառամասի բժիշկ Յարութիւն Պօղոսեանին համարել ազատ բժշկա-սանիտարական վարչութեան տրամադրութեան տակ լինելուց. առաջինը նշանակում է Նոր Բայազէդի գաղթականական հիւանդանոցի կառավարիչ, իսկ երկրորդը 1-ին հայկական դիւիզիայի 1-ին հիւանդանոցի աւագ բժիշկ: Երկուսն էլ հեռացում են քաղաքացիական ծառայութիւնից. առաջինը սեպտեմբերի 1-ից 1918 թ., իսկ երկրորդը յուլիսի 1-ից 1918 թ.:

2. Նոր Բայազէդի երկրորդ գաւառամասի բժիշկ Վարդան Պօղոսեանին և Դարալագեազի գաւառական բժիշկ Լևոն Տէր-Ամբակումեա-

ձին համարել ազատ իրենց պաշտօններից և բոլորովին ծառայութիւնից բժշկա-սանիտարական վարչութեան մէջ այն պատճառով, որ առաջինը նշանակուած է էտապնի բատալիօնի բժիշկ, իսկ երկրորդը հայկական դիւիզիայի վիրակապութեան զօրախմբի աւագ բժիշկ: Երկուսն էլ բժ. սանիտ. վարչութեան մէջ ունեցած իրենց պաշտօններից հեռացւում են սոյն թի հոկտեմբերի 1-ից, մինչև այդ ժամանակ իրենց ռոճիկները լրիւ ստանալու իրաւունքով:

3. Համաձայն բժշկա-սանիտարական վարչութեան նոր շտատների և Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդի սոյն թի օգոստոսի 12-ի N 137 և սեպտեմբերի 3-ի N 28 որոշումների նահանգական բժշկի պաշտօնը համարել վերացած. այդ պաշտօնում գտնւող բժիշկ Բրօնիսլաւ Իւանովիչ Ռուսսօին թողնել շտատից դուրս սոյն թի հոկտեմբերի 1-ից ընդհանուր հիմունքների վրայ:

4. Համաձայն բժշկա-սանիտարական վարչութեան նոր շտատների և Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդի սոյն թի օգոստոսի 12-ի N 137 և սեպտեմբերի 3-ի N 28 որոշումների վերացւում են բոլոր գաւառական բժիշկների, գաւառական ֆէլդշէրների և տատմայրերի պաշտօնները, բացի Երևանի գաւառի տատմօր պաշտօնից. այդ հիման վրայ Երևանի գաւառական բժիշկ Զաքարեանին, Էջմիածնի գաւառական բժիշկ Տէր-Մինասեանին, Նոր-Բայազէդի գաւառական բժիշկ Մնացականեանին, Երևանի գաւառական ֆէլդշէր Տէր-Մանուէլեանին, Նոր Բայազէդի գաւառական ֆէլդշէրներ՝ Մանուկեանին և Պետրոսեանցին թողնել շտատից դուրս սոյն թի յուլիսի 1-ից ընդհանուր հիմունքների վրայ:

5. Բժիշկ Զ. Յ. Զաքարեանին նշանակել Էջմիածնի և Երևանի գաւառների դատաստանական բժիշկ յուլիսի 1-ից 1918 թ.

6. Բժիշկ Մնացականեանին նշանակել Ն. Բայազէդի գաւառի դատաստանական բժիշկ սոյն թի յուլիսի 1-ից:

7. Համաձայն բժշկա-սանիտարական վարչութեան նոր շտատների և Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդի սոյն թի օգոստոսի 12-ի N 137 և սեպտեմբերի 3-ի N 28 որոշումների վերացւում է բժշկա-սանիտարական վարչութեան գրագրի պաշտօնը, նոր շտատներով սահմանուած գործավարի և նրա օգնականի պաշտօններում նշանակւում են՝ Ալէքսանդր Անդրէևիչ Միյգուրը սոյն թի օգոստոսի 10-ից և Արամ Թևոսեան Ունանեանը սոյն թի օգոստոսի 29-ից:

8. Համաձայն բժշկա-սանիտարական վարչութեանը նոր շտատների և Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդի սոյն թի օգոստոսի 12-ի և սեպտեմբերի 3-ի N 137 և 28 որոշումների Երևանի նահանգական բժշկի գիւղական մասի օգնական Մախիժենկօն վերակոչւում է բժշկա-սանիտարական վարչութեան կառավարչի օգնական սոյն թի յուլիսի 1-ից:

9. Համաձայն բժշկա-սանիտարական վարչութեան նոր շտատների և Հայաստանի Հանրապետութեան Մինիստրների Խորհրդի սոյն թի օգոստոսի 12-ի և սեպտեմբերի 3-ի NN 137 և 28 որոշումների ծաղիկ պատուաստողների ինստիտուտը վերացւում է սոյն թի յուլիսի 1-ից, նրանց պարտականութիւնները դրւում են նոյն օրից գիւղակ. բժշկական պերսոնալի վրայ:

N 1 *30 սեպտեմբերի 1918 թ.*

Դարալագեազի գաւառի Քեշիշքեանդի գիւղական հիւանդանոցի կրտսեր ֆելդշէր Սամուիլ Պերկաչին հեռացնել պաշտօնից և իսպառ ծառայութիւնից սոյն թի մայիսի 1-ից ինքնակամ կերպով ծառայութիւնից հեռանալու պատճառով:

N 2 *30 սեպտեմբերի 1918 թ.*

Մեծ Ղարաքիլիսայի գիւղական հիւանդանոցի տատմայր Սոֆիա Ասովսկուն հեռացնել պաշտօնից և իսպառ ծառայութիւնից սոյն թի յուլիսի 1-ից, ինքնակամ կերպով ծառայութիւնից հեռանալու պատճառով:

N 3 *5 հոկտեմբերի 1918 թ.*

Երևանի գաւառի Քանաքեռի գիւղական հիւանդանոցի տատմայր Էմիլիա Չեռնոկովային, իր խնդրի համաձայն, հեռացնել պաշտօնից և իսպառ ծառայութիւնից սոյն թի հոկտեմբերի 1-ից:

N 4 *5 հոկտեմբերի 1918 թ.*

Ֆելդշէր Ռուբէն Պետրոսեանը սոյն թի հոկտեմբերի 1-ից նշանակւում է ֆելդշէրի պաշտօնում Նոր-Բայազէդի դատաստանական բժշկի մօտ:

N 5 *5 հոկտեմբերի 1918 թ.*

Երևանի գաւառական ֆելդշէրի նախկին պաշտօնակատար Մարտիրոս Տէր-Մանուէլեանը նշանակւում է Երևանի և Էջմիածնի գաւառների դատաստանական բժիշկի ֆելդշէրի պաշտօնակատար:

[31 հոկտեմբերի] 1918 թ.

Ս. թ. նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրայ խոլերայի համաճարակը վերջացնելու պատճառով խոլերայի դէմ կռւող բոլոր կազմակերպութիւնները, ի թիւս սոցա և գլխաւոր կոմիտէն, համարել լուծած:

N 10 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Բժշկա-սանիտարական վարչութեան մօտ ծառայութեան ուղարկւած Բաշգեղի ֆելդշէրական կայանի կառավարիչ Ս. Միանսարեանին նշանա-

կել ֆէլդշէրիցա-վերակացուհու պաշտօնում Երևանի հոգեկան հիւանդների խնամատարութեան տանը ս. թ. նոյեմ. 1-ից:

N 11 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Բժշկական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Վաղարշակ Մնացականեանին, իր խնդրի համաձայն, նշանակել Նոր-Բայազէդի դատաստանական բժշկի մօտ դատաստանական ֆէլդշէրի ժամանակատար պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 1-ից, տալով նրան այդ պաշտօնի համար նախատեսուած ռոճիկը ամբողջութեամբ:

N 12 *4 նոյեմբերի 1918 թ.*

Բժշկական ֆէլդշէր Գեղամ Խիմոյեանին նշանակել Մեծ Ղարաքիլիսայի գիւղական հիւանդանոցի ֆէլդշէր ս. թ. նոյեմ. 1-ից:

N 17 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Երևանի հոգեկան հիւանդների խնամատարութեան տան կառավարիչ բժ. Գրիգոր Համբարձումեան Տէր-Յակոբեանը, Հայաստանի Խորհրդի ընդունած այն օրէնքի պատճառով, որով արգելւում է պաշտօնների միացումը, հեռացւում է, իր խնդրի համաձայն, պաշտօնից և իսպառ ծառայութիւնից ս. թ. նոյեմբերի 1-ից:

N 18 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Բժ. Էդուարդ Տէր-Ստեփանեանին, իր խնդրի համաձայն, նշանակել Մեծ-Ղարաքիլիսայի գիւղական հիւանդանոցի կրտսեր բժշկի պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 1-ից:

N 19 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Չաուրեագ-բժիշկ Սիմէօն Գէորգեան Յարութիւնեանին նշանակել Նոր-Բայազէդի գաւառի Բասարագեչար գիւղի գիւղական հիւանդանոցի բժշկի ժամանակատար պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 1-ից տալով նրան այդ պաշտօնի համար նախատեսուած ռոճիկը ամբողջութեամբ:

N 20 *31 հոկտեմբերի 1918 թ.*

Չաուրեագ-բժիշկ Արա Խաչատրեան Տէր-Յակոբեանին նշանակել Դարալագեազի գաւառի Քեշիշքեանդ գիւղի գիւղական հիւանդանոցի բժշկի պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 1-ից, տալով նրան այդ պաշտօնի համար նախատեսուած ռոճիկը ամբողջութեամբ:

N 21 *4 նոյեմբերի 1918 թ.*

Բժշկա-սանիտարական վարչութեան մօտ ծառայութեան ուղարկուած բժ. Ադիբէկեանին նշանակել բժշկա-սանիտարական վարչութեան սանիտարական բժշկի ժամանակատար պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 1-ից:

N 22 *9 նոյեմբերի 1918 թ.*

Իմ տոյն թի սեպտ. 18-ի N 13 կարգադրութեամբ նոյն թ. սեպ. 16-ից Քարւանսարայի հիւանդանոցի կառավարիչ նշանակւած բժիշկ Սարգիս Իսրայէլեան Փիրումեանը Դիլիջանի զեմսկի հիւանդանոցի գլխաւոր բժիշկ նշանակելու պատճառով հանւում է բժշկա սանիտարական վարչութեան ծառայողների ցուցակից ս. թ. սեպտ. 16 –ից:

N 23 *16 նոյեմբերի 1918 թ.*

Բժիշկ Սարգիս Գալստեան Յովսէփեանին նշանակել Դիլիջանի գաւառի Քարւանսարայ գիւղի գիւղական հիւանդանոցի կրտսեր բժշկի պաշտօնակատար ս. թ. հոկտ. 1-ից:

N 24 *16 նոյեմբերի 1918 թ.*

Բժշիշկ Ս. Շահբազեանին ս. թ. նոյեմ. 1-ից նշանակել Հայաստանի տերիտորիայի առողջապահական բժիշկ բնակատեղն նշանակելով նրա համար Երևան քաղաքը:

N 25 *16 նոյեմբերի 1918 թ.*

Բժիշկ Բ. Իւ. Ռուսսոին ս. թ. նոյեմ. 1-ից նշանակել Երևանի հոգեկան հիւանդների խնամատարութեան տան կառավարիչ-բժշկի ժամանակաւոր պաշտօնակատար, տալով նրան յատուկ վարձատրութիւն ի հաշիւ այդ պաշտօնի համար սահմանւած ռոճիկի:

N 26 *23 նոյեմբերի 1918 թ.*

Զաուրեագ բժ. Ազիզեանցին նշանակել Ջալալ-օղլու գիւղական հիւանդանոցի կրտսեր բժշկի պաշտօնակատար ս. թ. նոյեմ. 24-ից:

N 27 *29 նոյեմբերի 1918 թ.*

Կին-բժիշկ Ագէլ Յովհաննիսեան Աղաջանեանին նշանակել Քանաքեռի գիւղական հիւանդանոցի կառավարչուհի ս. թ. նոյ. 1-ից:

N 28 *30 նոյեմբերի 1918 թ.*

Բժիշկ Սարգսեանին նշանակել Դիլիջանի գաւառի դատաստանական բժիշկ ս. թ. դեկտ. 1-ից:

N 29 *12 դեկտեմբերի 1918 թ.*

Ն.-Ախտայի գիւղական հիւանդանոցի կառավարիչ բժ. Թովմաս Ասլանեանին, իր խնդրի համաձայն, հեռացնել պաշտօնից և իսպառ ծառայութիւնից, իսկ նրա փոխարէն նշանակել Ելենովկայի բժշկական կայանի կառավարիչ՝ բժ. Արամ Ջանիբէկեանին:

N 30 *25 դեկտեմբերի 1918 թ.*

Դեկտեմբերի 3-ին մահացած բժիշկ Զ. Զաքարեանցին հանել բժշկա-սանիտարական վարչութեան ծառայողների ցուցակից սոյն դեկտեմբերի 3-ին 1918 թ.:

N 31 *25 դեկտեմբերի 1918 թ.*

Դեկտեմբեր 21-ին վախճանուած Հայաստանի տերիտորիայի սանիտարական բժիշկ Ս. Շահբազեանին հանել բժիշկ-սանիտարական վարչութեան ծառայողների ցուցակից 21-ին դեկտ. 1918 թ.:

N 32 *25 դեկտեմբերի 1918 թ.*

Դեկտեմբերի 23-ին վախճանուած Երևանի քաղաքային բժիշկ Ս. Նիկոլաևին հանել բժշկա-սանիտարական վարչութեան ծառայողների ցուցակից 23 դեկտ. 1918 թ.:

N 33 *25 դեկտեմբերի 1918 թ.*

Երևանի հոգեկան բուժարանի բժշկի պարտականութիւնները ժամ. կատարող բժ. Բ. Խ. Ռուսսօյի վրայ դնել և Երևանի քաղաքային բժշկի պարտականութիւնների ժամ. կատարումը դեկտ. 25-ից 1918 թ.:

Ներքին գործերի մինիստր ***Արամ***

«Կառավարութեան լրաբեր», 6 սեպտեմբերի 1918թ.-10 հունվարի 1919թ.

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱՐԱՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1917-ին Արարատեան Դաշտը (Երևանը յարակից գաւառներով) ծանր ու անորոշ վիճակ էր ապրում: Ռուսական զօրամասերը մեծ մասամբ հեռացել էին: Մեռնող ցարական կարգերից ժառանգութիւն մնացած հիմնարկութիւնները զրեթէ ի սպառ կորցրել էին իրենց նշանակութիւնը ժողովրդի աչքում: Եւ այդ՝ նոյնիսկ այն դէպքում, երբ հիմնարկութեան գլուխ կանգնած էր նոր, յեղափոխական մարդ:

Ժողովուրդը, մնալով ինքն իր գլխին, առողջ բնազդով քեքւում էր դէպի հարազատ հաստատութիւնները՝ դէպի Ազգային Խորհուրդները և յեղափոխական կոմիտէները: Վերջինները աշխատում էին ուժ տալ Ազգային Խորհուրդներին, իբրև ժողովրդի հաւաքական կեանքի ու կամքի արտայայտութեան և նրանց միջոցով էին գործ կատարում:

Երևանի Ազգային Խորհուրդը իրեն համարում էր շրջանի գերագոյն մարմինը, բայց ստեղծուած պայմաններում իր անելիքների մասին որոշ, յստակ գաղափար չուներ՝ քաղաքական հեռանկարների իմաստով:

Կար այն գիտակցութիւնը, որ ժամանակը բախտորոշ է, հայ ժողովրդի քաղաքական կեանքը ճակատագրական շրջան է անցնում, որ ապագան յղի է ամէն տեսակ անակնկալներով, որ ռուսը լքելով ճակատը, զարհուրելի վտանգի դուռ է բաց անում սահմանի այն կողմ ննստած հայութեան համար:

Ունենալով հանդերձ այդ գիտակցութիւնը՝ Երևանի Ազգ. Խորհուրդը համապատասխան գործունէութիւն ցոյց չէր տալիս, որովհետև գաղափար չունէր, թէ ի՛նչ ուղղութեամբ պիտի ընթանայ այդ գործունէութիւնը՝ միշտ ապագայի քաղաքական հեռանկարների տեսակէտով: Կային մարդիկ, կար գործ կատարելու տրամադրութիւն, բայց անորոշութիւնը մարդկանց կաշկանդում էր: Երևանը նայում էր Թիֆլիսին, իբրև կենտրոնի, ու այնտեղից սպասում տեղեկութիւններ և ուղղութիւն: Մինչդեռ Երևանը զրեթէ կտրուած էր աշխարհից և չգիտէր թէ ի՞նչ է կատարւում դուրսը:

Երևանը բնականաբար անորոշութեան մէջ ջղայնանում էր: Ծա՜նր օրեր էին...

Երբեմն, պատահականօրէն, Թիֆլիսից գալիս էին մարդիկ և զեկուցում ու տեղեկութիւններ տալիս Ազգային Խորհուրդում: Եկաւ նաև Դրօն: Սակայն, նրանց տեղեկութիւնները չափազանց անբաւարար էին և չէին կարող գծել Երևանի Ազգային Խորհուրդի անելիքների ուղին:

Դրօյից իմացանք, որ յատուկ լիազօրութիւններով Թիֆլիսից Երևան է գալու Արամը: Անհամբեր սպասում էինք նրան:

Արամի հետ ծանօթացել էի ոչ սովորական պայմաններում: Մի քանի խօսք այդ մասին:

1917-ին, գարնան ու ամառուան ամիսներին, ռուսական բանակին արհեստական ներարկումներ էին անում՝ նրա ռազմական ոգին բարձրացնելու ու յարձակման ընդունակ դարձնելու համար:

Ա. Կերենսկին անդադար պատյտներ էր գործում արևմտեան ճակատում ու ճիգ քափում խօսքի միջոցով համոզելու զօրքը, որ անհրաժեշտ է շարունակել պատերազմը և ապահովել յաղթանակը:

Նրա օրինակին հետևում էին և՛ Անդրկովկասի բանակում աշխատող քաղաքական գործիչները: Նոյնը կատարում էր և մեզ մօտ՝ Երևանում, ուր այն ժամանակ կանգնած էր մօտ քսան հազարանոց մի զօրամաս:

Թիֆլիսից Երևան էր ուղարկուած Երկրային Կոմիտէի անդամ, այժմ հանգուցեալ բժիշկ Յովսէփ Բէգզադեանը, յայտնի ազգայնական դեմոկրատ, որ հաւաքէ Երևանի շրջանի դասալիքներին, բարձրացնի արդէն իսկ քայքայման չէմքին հասած զօրամասերի ոգին, նրանց կազմակերպի՝ ռազմաճակատ ճամբելու նպատակով:

Այն օրերին Արամն էլ Երևանումն էր: Բէգզադեանը, կամենալով օգտագործել Արամի անունն ու հեղինակութիւնը իր նպատակի համար, հրաւիրեց նրան ներկայ լինել իր նշանակած միտինգին և խրախուսանքի խօսք ասել հայ զինուորներին:

Ինձ, իբրև Երևանի Զինուորական Խորհրդի Գործադիր կոմիտէի անդամի, յանձնարարուած էր աջակցել Բէգզադեանին:

Նշանակուած օրը, ճաշից յետոյ, զօրանոցներից մէկի ընդարձակ բակում տեսայ Արամին և Բէգզադեանին: Վերջինս ծանօթացրեց ինձ Արամի հետ: Առաջին անգամ էի լսում նրա ճառը: Հռետոր չէր, իր արտասանութիւնը ունէր ինչ որ թերութիւն, որ վնասում էր նրա խօսքի արտաքին տպաւորութիւնը, մանաւանդ անտովոր ականջի համար: Չունէր նաև յստակ սահուն ոճ, որի ազատ կարկաչիւնը այնքան անհրաժեշտ է միտինգային հռետորի համար: Այնուհետև լսեցի Արամին բազմաթիւ տեղերում, զանազան առիթներով խօսելիս:

Առաջին տպաւորութիւնս մնաց, հռետոր չէր: Թէև զուրկ հռետորական շնորհքից, բայց ունէր զարմանալի բովանդակալից ու հարուստ միտք, և երբ ականջդ սովորում էր նրա լեզուին ու խօսքին, մի՛շտ հաճոյքով էիր ունկնդրում նրան: Ճկուն ու հնարամիտ էր նրա միտքը:

Չեմ հիշում մի դէպք, երբ իրար յաջորդող ժողովներում, նիստերում, խորհրդակցութիւններում ստեղծուած լինէր ծանր, անել կացութիւն, և Արամը չփրկէր կացութիւնը:

Այնուհետև, նոյն թուի ամառը ես յաճախ պատահում էի Արամին Ղուրդուղուի (Սարդարապատի շրջանի հարուստ ու շէն գիւղերից մէկը), ուր գնում էի արձակուրդով ընտանիքիս մօտ: Արամը Ղուրդուղուի հիւր էր գալիս Մոսկուայի կոմիտէի աւագ բժշկուհի օր. Չալեանի մօտ, որի հետ մի երկու ամիս յետոյ ամուսնացաւ:

Ես, թէև հեռուից հեռու, բայց գիտէի, թէ ո՞վ էր Արամը, Հ. Յ. Դաշնակցութեան նշանաւոր դէմքերից մէկը և Վանի հերոսը: Բայց, եթէ այդ բանը

չիմանայի և չլիներ շրջապատի ակնածանքով ու յարգանքով լի վերաբերմունքը դէպի նա, բնաւ չէի մտածի, որ Արամը մեր իրականութեան ամենամեծ ու ամենաազդեցիկ քաղաքական կուսակցութեան ղեկավարներից էր ու ժողովրդական հերոս: Արտաքին կեցուածքով ու ճնով տվորականից տվորական մահկանացու էր: Պարզ ու մտերիմ զրուցակից: Եւ միշտ՝ այդ միևնոյն տպաւորութիւնը ւտօրեայ կեանքում:

Իմ այդ տպաւորութիւնը մնաց մինչև վերջը: Հանգամանքների բերումով հետագայում Արամի հետ ես բաւականին մօտեցայ, մտերմացայ: Ամիսներ շարունակ, գրեթէ օրն ի բուն մենք միասին էինք լինում: Այդ այն ժամանակ էր, երբ դէպքերն ու հանգամանքները փոխւում էին գահավէժ, գիխապտոյտ արագութեամբ և ճակատագրական արժէք ստանում հայ ժողովրդի համար: Երևանում գտնուղների միտքն ու զգացումները լարուած էի անչափ: Նրանց ապրումները խորունկ էին, ջղային ու միշտ յուսահատական: Օրերը շատ երկար էին, ամիսներն անվերջ...

Այդ օրերին Արամը քաղաքական ու բարոյական դէմք էր, որ իշխում էր շրջապատի վրայ ու ընթացք և ուղղութիւն տալիս նրա կեանքին: Այդ զգում ու գիտակցում էին ամէնքը, առանց դաւանանքի խտրութեան: Եւ այդ քաղաքական ու բարոյական մեծութիւնը նոյն տվորական մարդն էր, որին հանդիպում էի Ղարդաղուլիում առօրեայ պայմաններում,- մատչելի ամէնքին, գրեթէ ծգնաւորի իր կեանքի եղանակով, ո՛չ մի քայլ իր դիրքը ընդգծելու, ուշադրութիւն գրաւելու, իրեն ցուցադրելու: Իր անձը գոյութիւն չունէր: Իր անձնական կեանքը զրկանքների անվերջ շարան կը լինէր, եթէ շրջապատողները հոգ չտանէին նրա մասին:

Արամին մօտից ճանաչելուց յետոյ, մարդ տարակուսում է, թէ ո՞վ է նրան փաշա տիտղոսը տուել: Մի կատարեալ քիւրիմացութիւն է գոնէ արևելահայերիս հասկացողութեամբ, որովհետև նրա բնաւորութեան մէջ փաշայական ոչինչ չկար: Եւ ինքը ինչպէս էր խորշում այդ տիտղոսից:

Յիշում եմ երկու այսպիսի դէպք:

Մի օր, նրան դիկտատոր ընտրելու (որի մասին խօսք կը լինի քիչ յետոյ) յաջորդ օրը, տուն վերադառնալով, մուտքի երկու կողմը պահակ-զինուորներ է տեսնում, իսկ բնակարանի մուտքին փակցրած՝ «Արամ փաշա»[310]: Անմիջապէս զրպանից հանում է գրչահատը ու քերում փաշա բառը, իսկ մի երկու օրից յետոյ վերացան և՝ զինուորները:

Մի այլ դէպք: Մակուի խանութներից ներկայացուցիչներ էին եկել Արամի մօտ: Քարևներ էին բերել խանից ու խնդրանք՝ օգնելու իրենց պարենով: Երբ ներկայացուցիչները վերադառնում էին, Արամի անունից մի նամակ գրուեց խանին: Ո՛չ մի կերպ չէր համաձայնում նամակի տակ ստորագրել Արամ փաշա, այլ ստորագրեց միայն Արամ: Մեծ դժուարութեամբ համաձայնեց, որ այդ ստորագրուած անունին կցի նաև «փաշա» բառը:

1917-ի ամառը Արամը եկել էր Ղարդաղուլի հանգստանալու, միաժամանակ կարգադրութիւններ էր անում իր պաշտօնի վերաբերեալ: Նրա

միջոցով, ի միջի այլոց, երկրագործական գործիքներ և լծկաններ, գլխաւորապէս գոմէշներ էին ուղարկւում Տաճկահայաստանի գրաւուած վայրերի համար: Իր պաշտօնի վրայ նայում էր կէս հեգնանքով և իրեն «գոմէշների վերակացու» էր անուանում:

Արամը Ղուրդուրուլիում երկար չմնաց: Նրան կանչեցին Թիֆլիս:

Այնուհետև նրան չտեսայ մինչև 1917-ի Դեկտեմբեր, երբ նա, իբրև Արևելահայ Հայոց Ազգային Խորհուրդի և Արևմտահայ Ապահովութեան Խորհրդի լիազօր ներկայացուցիչ, եկաւ Երևան: Այդպիսով, Արամը թերևս այն միակ մարդն էր, որ հաւասարապէս որպէս հեղինակութիւն էր ճանաչւում այդ երկու հաստատածների կողմից:

* * *

Արամը եկաւ Երևան 1917-ի Դեկտեմբեր 24-ին թէ 27-ին. լաւ չեմ յիշում: Նոյն օրն իսկ գնացի նրա մօտ: Ես արդէն զինուորական հագուստս փոխել էի: Արամի առաջին խօսքը դրան էր վերաբերում:

-Ուշացել ես, - ասաց նա՝ ձեռքս սեղմելով և ժպիտը դէմքին՝ ցոյց տալով զգեստս, - խնդրեմ վաղուանից նորից հագնես զինուորական հալաֆ:

Ակնարկում էր, որ գործ կար անելու:

Մի երկու ժամ յետոյ, միասին գնացինք Ազգային Խորհուրդ, որ այդ օրը հաւաքուել էր Գայանեան դպրոցի շէնքում՝ յատկապէս Արամին լսելու համար:

Արամը տուեց մեզ հետաքրքրող ու գրեթէ բոլոր հարցերը սպառող մի ընդարձակ զեկուցում, - Ռուսաստանի վիճակը, քաղաքական կացութիւնը: Անդրկովկասում, հայ-վրացական-ատրբէջանական յարաբերութիւնները, տաճիկների տրամադրութիւնները և այլն և, ի վերջոյ, մեր անելիքը: Խօսքը ամփոփեց մօտաւորապէս այսպէս.

«Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապաւինենք միա՛յն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»:

Առաջին անգամ էի լսում Արամին զեկուցում տալիս (ճառերը լսել էի): Շատ շնորհալի զեկուցանող էր: Նրա զեկուցումների մէջ չկար ոչինչ աւելորդ: Խնդիրները գնում էր իրենց մերկութեամբ, լուսաբանում էր կարճ ու պարզ, երբեմն, կարիք եղած դէպքում, զեկուցումը ամփոփում էր երկու խօսքով և ապա տալիս եզրակացութիւններ: Ախտաճանաչութեան զարմանալի ընդունակութիւն ուներ: Դէպքերը արժէքաւորում էր ճշդութեամբ և այնուհետև գալիքը նախատեսում յատուկ կերպով:

Ազգային Խորհուրդը լարուած ուշադրութեամբ լսեց Արամին և միաձայնութեամբ[111] հաւանութիւն տուեց նրա առաջարկին՝ Ազգային Խորհուրդի անելիքների մասին: Ամէնքը զգում և հասկանում էին, որ պէտք էր պատրաստուել օրհասական պայքարի, որ այդ պայքարի ժամը մօտ էր, որ խօսքի ու վէճի ժամանակ չէր, ժամանակ էր գործելու՝ արագ ու վճռական, հէնց վաղուանից:

Ամէնքը ունէին այդ գիտակցութիւնը՝ թէ՛ Դաշնակցականը, թէ՛ Ժողովրդականը, թէ՛ Էս-էրը և թէ Բոլշևիկը:

Բայց տարօրինակ բան: Արամի առաջարկութեամբ պիտի ընտրուէր մի փոքրաթիւ կազմ ունեցող, արագաշարժ մարմին՝ Յատուկ Կոմիտէ. որին Ազգային Խորհուրդը ժամանակավորապէս պիտի փոխանցէր իր բոլոր իրաւունքները: Եւ ահա, երբ հերթը եկաւ այդ մարմնի կազմութեան, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները հրաժարուեցին նրա մէջ մտնելու: Ամենայն պատրաստակամութեամբ համաձայնում են, անգամ պնդում, որ Յատուկ Կոմիտէին կազմուի միայն դաշնակցականներից, բայց իրենք խուսափում են՝ խոտանալով միայն ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ դրսից: Անհնար եղաւ համոզել, որ այդ մարմինը լինի նոյն Ազգային Խորհուրդը, միայն փոքր կազմով, այսինքն՝ բոլոր հոսանքների մասնակցութեամբ:

Այդ վերաբերմունքը գուցէ հասկանալի լիներ, եթէ գոյութիւն ունենային սկզբունքային կամ այլ կարգի տարաձայնութիւններ: Բայց որևէ աննշանաձայնութիւն չկար: Ամէնքը համաձայն էին Արամի պարզած գործնականին, բայց գործնական պատասխանատուութիւն խուսափում էին ստանձնել: Եւ գործը, հակառակ դաշնակցականների կամքին, մնաց նրանց ձեռքը:

Առանց անհամեստ լինելու, միայն փաստը արձանագրած լինելու համար, պէտք է ասեմ, որ Դաշնակցութիւն էր, որ գիտակից վայրկեանի լրջութեան՝ չուտատանուեց պատասխանատուութեան տակ մտնելուց և իր բովանդակ ուժերով նետուեց առաջդէզ:

Եւ Յատուկ Կոմիտէն կազմուեց գրեթէ բացառաբար դաշնակցականներից: Ասում եմ «գրեթէ», որովհետև կազմի մէջ մտաւ նաև մի չեզոք անձնաւորութիւն, որը իր աշխարհայեցողութեամբ այնքան մօտ էր մեզ, որ հետագայում պաշտօնապէս մտաւ Դաշնակցութեան մէջ:

Յատուկ Կոմիտէի կորիզը կազմում էին երեք հոգի, - Արամը, իբրև Թիֆլիսի Հայոց Խորհրդի անդամ-լիազոր, Երևանի Ազգային Խորհրդի կողմից քաղաքում մեծ յարգանք ու համակրանք վայելող՝ շատ գործունեայ հասարակական գործիչ Մ. Մուսինեանը և այս տողերը գրողը:

Բացի այդ, Ազգային Խորհրդի ցանկութեամբ Յատուկ Կոմիտէի աշխատանքներին ձայնի իրաւունքով պիտի մասնակցէին նահանգական կոմիտաթը (այն ժամանակ մեր ընկեր Սահակ Թորոսեանը) և Հայ գիտուրական Միութեան նախագահը (որ թժ. Յ.Մելիքեանն էր, նոյնպէս դաշնակցական):

Քարտուղարի պաշտօնով հրաւիրուեց Ս. Օհանջանեանը:

* * *

Յատուկ Կոմիտէն դարձաւ երկրի՝ Արարատեան Դաշտի ու յարակից գաւառների՝ փաստական իշխանութիւնը և գործի անցաւ Արամի Երևան գոլու հետևեալ օրը:

Չկար այլևս անորոշութիւն, տարտամութիւն և սպառողական վիճակ: Պարզ էր, թէ ի՞նչ պիտի արուէր,- օգնութիւն ռազմաճակատին նոր զօրակոչի միջոցով, Երևանի շրջանի, այսինքն՝ թիկունքի ինքնապաշտպանութեան կազմակերպում տեղական թուրքերի թշնամական շարժումների դէմ, կարգ ու օրինականութեան վերականգնում գաւառներում, ուր անիշխանութիւնը գնալով ծաւալւում էր, և դրանցից բխող պարենավորման, դրամական, հաղորդակցական և այլ խնդիրներ, որոնք բոլորն էլ պահանջում էին լարուած աշխատանք: Ամէն ինչ պիտի կատարուէր արագ. ժամանակը քիչ էր, անելիք՝ շատ:

Յունուարին Թիֆլիսից Երևան եկաւ զօրավար Միլիկեանը իր սպայակոյտով: Նա նշանակուած էր Երևանի շրջանի զինական ուժերի հրամանատար (դիվիզիայի պետ), իսկ Դրօն զինուորական կոմիսար:

Յատուկ Կոմիտէի առաջին ու գլխաւոր մտահոգութիւնն էր ռազմաճակատի ամրացումը և սրա կապակցութեամբ՝ թիկունքի ապահովութիւնը: Այդ նպատակով Յատուկ Կոմիտէի առաջին քայլը եղաւ զինակոչ յայտարարել: Այդ յայտարարութեան համաձայն՝ զէնքի տակ էին կանչւում մինչև 28 տարեկանները:

Յատուկ Կոմիտէն այդ առթիւ մի կոչով դիմեց ժողովրդին, որով բացատրում էր կացութեան լրջութիւնը, զինակոչի անհրաժեշտութիւնը և, յանուն Ազգային Խորհրդի, հրաւէր ուղղում զինապարտներին՝ երեք օրուայ պաշարով ներկայանալու տեղական զինուորական կենտրոնները:

Երևանի շրջանի հայութիւնը արտակարգ վստահութեամբ արձագանք տուեց իրեն ուղղուած կոչին և, հակառակ Ծննդեան տօներին, ամէնքը շտապեցին ներկայանալ պատշաճ իշխանութեան:

1918-ի Յունուար 5-ին, ճաշից յետոյ, Արամի հետ Երևանից ինքնաշարժով դուրս եկանք դէպի Ղուրդուլուի՝ Ծննդեան երեկոն այնտեղ անցկացնելու համար: Ճանապարհին պատահում էին խումբ-խումբ երիտասարդներ, որոնք երեք օրուայ պաշարը մէջքերնին՝ շտապում էին դէպի Վաղարշապատ՝ արձանագրուելու զինուորական շրջանի կենտրոնում:

Յատուկ Կոմիտէի կոչը նոր էր հասել տեղ և ահա մարդիկ շտապում էին իրենց պարտքը կատարելու՝ Ծննդեան օրն իսկ բաժանուելով հարազատներից: Արամը ազդուեց:

-Այսպիսի պայմաններում,- ասաց նա,- մեր ժողովուրդը հրաշքներ կարող է գործել: Շատ անգամ առիթներ եմ ունեցել նկատելու, որ մեր գիտացու պարտականութեան զգացումը հարազատ է: Գիտակցութեան նշան է այդ: Ազգային Խորհրդի մի կոչը բաւական է, որ նա իր համար այս

ազիզ օրին քաղնի տուն ու տեղ և չտապի զէնքի տակ, երբ ստիպողական, հարկադրական ոչինչ չկայ: Մինչդեռ ռուս կառավարութեան գօրակոչը գլուխ էր գալիս ահ ու սարսափի ազդեցութեան տակ: Այսօր Օշականից ինձ մի այսպիսի դէպք պատմեցին: Երբ Ազգային Խորհրդի կոչը հասնում է գիւղ, զինակոչի ենթակայ երիտասարդները պատրաստութիւններ են տեսնում Վաղարշապատ գալու՝ արձանագրուելու համար: Գիւղի ուսնորներից մէկը, որ ամբողջ պատերազմի ընթացքում իր որդուն գանագան ապօրինի միջոցներով ազատել էր զինակոչից, Ազգային Խորհրդի կոչը կարդալով, կանչում է որդուն և ասում. «Քալա, էլ Աստուած իսկ դաբուլ չի անի, որ պահուես: Պատրաստուիր և Աստուած հետդ, բարի ճանապարհ, ո՛չ ոքից յետ չմնաս»:

-«Ես մի բանից եմ վախենում.- շարունակեց Արամը,- վախենում եմ՝ մենք սներես դուրս գանք մեր ժողովրդի առջև, չկարողանանք կազմակերպել գործը և կորցնենք նրա հաւատն ու վստահութիւնը...»:

Արամը, հարկաւ, գիտէր, որ բացառիկ ծանր պայմաններում էր ապրում հայ ժողովուրդը, որ թէ՛ արտաքին և թէ՛ ներքին պայմանները արտակարգօրէն անյարմար էին: Իր խօսքի մէջ նա յիշեց Վարդանանց օրերը, համեմատեց հեռաւոր անցեալը ներկայի հետ և գտաւ, որ մեր պայմանները անհամեմատօրէն աւելի ծանրակշիռ էին՝ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին տեսակէտով:

* * *

Յիշեցի արդէն, որ Արարատեան Դաշտի հայութիւնը հոգեկան տագնապալի վիճակ էր ապրում: Նրա աչքերի առջև քայքայւում էր Անդրկովկասեան ռուսական ռազմաճակատը:

Այդ ճակատի առաջին գիծը սկսւում էր Սև ծովից ու շարունակւում մինչև Պարսկաստանի ներսը՝ իր թիկունքում տեղ-տեղ բաւական խոր, բողնելով Տրապիզոնը, Երզնկան, Մուշը, Բիթլիսը ու Պարսկական Ուրմիան:

Այդ հսկայական տարածութեան վրայ 1917-ի վերջերին կանգնած էր աւելի քան երկու հարիւր հազարանոց ռուսական բանակ՝ իր բոլոր մասերով: Ռուսական յեղափոխութիւնը, ընդհանրապէս և յատկապէս բոլշևիկեան յեղաշրջումը ցնցեց և ալեկոծեց այդ հարիւրաւոր հազարանոց բանակը՝ հիմնովին քայքայելով, բարոյալքելով ու խարտակելով այնս թշնամուն դիմադրելու նրա կամքը: Եւ բանակը վերածուեց հօտի, որի համար բոլոր հարցերը չքացել էին, բացի մէկից՝ ծգել ամէն ինչ ու վերադառնալ տուն:

Տարերային ուժի, հեղեղի պէս տեղի ունեցաւ այդ տեղատուութիւնը՝ ճակատից դէպի Ռուսաստան: Ռազմաճակատում ու նրա անմիջական թիկունքում ամբարուած անհաշիւ ռազմամթերքն ու պարենաւորման պաշարը մնացին անտէր ու յետագային թուրքին բաժին ընկան՝ նպաստելով նրա զինական յաջողութիւններին:

Դէպի տուն շտապող ռուսական զօրամասերը իրենց ճամբին խորտակում էին ամէն ինչ: Խորթ չէր նրանց նաև թալանն ու կրակը: Երևանում խանութները կողոպտելու նպատակով հրդեհ առաջ բերին խանութների շրջանում, որպէս զի քաղաքացիներին շփոթի մատնեն ու լաւագոյն հասնին իրենց սև նպատակին:

Հայ ժողովուրդը, յատկապէս Արարատեան Դաշտի ու նրան կից տաճկական սահմանի երկայնքին ընկած շրջանների հայութիւնը ակնատես էր ճակատի այդ փլուզումին ու գիտակից, որ նրա հետևանքը՝ յղի սարսափներով՝ իր համար կարող է ալէբերգական լինել: Մերկանում էր ամբողջ ռազմաճակատը հայ ժողովրդի արեան ծարաւի թուրքի առջև:

Ո՞վ պիտի փոխարինէր տուն շտապող ռուս ուժերը ու պաշտպանէր մեր հողը, մեր ժողովուրդը: Ո՛չ ոք, բայց եթէ հակական փոքրաթիւ, վտիտ զօրամասերը:

Ինչպէս արդէն յիշուեց, այդ առաջին և ամենակարևոր հարցն էր, որ գրաւած էր Յատուկ Կոմիտէի առջև, և դրանով յատկապէս մտահոգուած էր Արամը: Նրա գլխաւորութեամբ զինուորական իշխանութիւնները զօր. Միլիկեանի ղեկավարութեամբ և Դրոյի աջակցութեամբ կազմակերպեցին ու կարգաւորեցին հայկական զօրամասերը, որոնք պիտի պաշտպանէին հայրենի հողը ռուսների ետևից չարախնդութեամբ առաջ խաղացող թշնամուց: Այդ թշնամու ճեղքերը շա՛տ երկար էին: Նա իր անեծալի գործակալների միջոցով ուղղակի տակն ու վրայ էր անում Անդրկովկասի կեանքը՝ յենարան ունենալով Կովկասի մահմետականներին ու որպէս զենք ծառայեցնելով նրանց իր նուաճողական քաղաքականութեան համար:

Թուրք գործակալները յատուկ եռանդ էին ցուցահանում Երևանի նահանգում, յատկապէս Արարատեան Դաշտում: Նրանք գրգռում ու ոտքի էին հանում տեղական մահմետականներին իշխանութեան դէմ, ամէն տեղ խռովութիւններ էին առաջ բերում, փճացնում էին հաղորդակցութեան միջոցները, կտրում էին ռազմագիտական գծերը ու ամէն կերպ դժուարացնում-խանգարում զօրամասերի շարժումները:

Թուրք բանակի հմուտ ղեկավարները նման միջոցներով ձգտում էին շփոթ վիճակ ստեղծել նոր կազմակերպուող հայոց իշխանութեան համար ու այդպիսով դիւրացնել իրենց յաղթանակը: Ու նրանք իրենց սև գործերում մեծապէս յաջողում էին, որովհետև տեղական մահմետական բնակչութեան համակրանքը ամբողջովին նրանց կողմն էր, իսկ մահմետականները Երևանի նահանգում պատկառելի թիւ էին կազմում: Այն ժամանակ Երևանի նահանգի 1.120.242 բնակիչներից 660.871 հայեր էին, իսկ 373.582 թուրքեր, մնացածը՝ քրդեր, եզիդիներ, ռուսներ:

Այդպիսով Երևանի նահանգը, գլխաւորապէս Արարատեան Դաշտը, մատնուել էր անիշխանութեան, քաոսային վիճակի:

Պէ՛տք էր պայքարել այդ ամէնի դէմ. յաղթահարել ու կարգ հաստատել երկրում: Այդ ամէնի համար անհրաժեշտ էր կազմակերպական մեծ շնորհք, վճռականութիւն, կամք և քաղաքական հեռատեսութիւն:

Բնութիւնը լիառատ ձեռքով այդ բոլոր յատկութիւններով օժտել էր Արամին: Այլապէս անհնարին է բացատրել Յատուկ Կոմիտէի ու նրան յաջորդող վարիչների Մարմնի յաջող գործունէութիւնը, այն օրերի ծայր աստիճան ծանր պայմաններում: Այդ գործունէութիւն իր բովանդակ ծաւալով ընթացաւ Արամի տիրական ղեկավարութեան տակ:

* * *

Քսան իր անմիջական պարտականութիւններից, Արամը հասնում էր ամէն տեղ: Եւ ամէնքը ենթարկւում էին նրան՝ առանց դժգոհութեան, քրթմնջալու ու բողոքի: Ենթարկւում էին կատարելապէս յօժար կամքով ու մեծով ազատ: Ո՛չ մի գործիչ ճշման ամենահեռատը զգացումը չունէր Արամի բևերի տակ:

Զարմանալի ու բացառիկ էր Արամի բնաւորութիւնը նաև ա՛յդ տեսակէտից: Նրա խորհրդին դիմելը, նրան լսելը, ենթարկուելը՝ բնական էր համարում ճիշդ այնպէս, ինչպէս բնական է համարում երբ մարդ շարժւում է համաձայն իր բանականութեան ու զգացումների թելադրութեան: Հարկադրանքի հեռաւոր ակնարկ իսկ չկար:

Անշուշտ, ժամանակն էլ իր դերն ունէր: Անառոր օրեր էին. լինել-չլինելու հարց էր դրուած ամէնքի առջև, առանց քողի: Այդպիսի ժամանակ կիրքերը մարում են, մոլորութիւնները թուլանում: Այս տեսանկիւնից, Արամի անձնատրութիւնը փրկարար դեր էր կատարում: Եւ այս ասելով՝ ես ի նկատի չունեմ Արամի հասարակական-քաղաքական արժէքն ու դերը, որ շա՛տ բարձր էին, այլ նրա բնաւորութեան այն գծերը, որոնք ընդհանրապէս կապ չունին բարձր շնորհքի, տաղանդի հետ, բայց կազմում են զարդը ամէն մի տաղանդի և արտակարգ դեր ու հմայք տալիս մանաւանդ հասարակական ջիղ ունեցողին՝ գերազանցապէս համակրելի ու սիրելի դարձնելով նրան:

Խօսքս վերաբերում է Արամի վարուեցողութեան: Արամը գիտէր մարդկանց մօտենալ, նրանց դամարը բռնել ու համապատասխան գործի մղել: Մի գաղտնիք, որ ամէն մի հասարակական գործչի յաջողութեան առաջին և ամենամեծ գլուխկանն է կազմում: Այդ գաղտնիքին իր բոլոր ճևերով ու արտայայտութիւններով տիրապետում էր Արամը: Նրան յարգանքով ու սիրով լսում ու ենթարկւում էր և՛ դաշնակցականը, և՛ էսէրը, և՛ ժողովրդականը և՛ իր. Արամի ձեռքով անվտանգ դարձած և գործի լծուած բալշևիկը:

Բացառութիւններ, հարկաւ, միշտ և ամէն տեղ լինում են: Բայց Երևանում այն օրերին բացառութիւններն էլ բացառութիւն էին և չէին խանգարում ընդհանուր գործին: Հասկանալի է, որ խօսքս վերաբերում է ազգային-հասարակական ցաւերով ապրողներին:

Այսպիսով, Արամը, Երևան գալով, անհատատուպի կարճ ժամանակում քաղաքում ստեղծեց մի մթնոլորտ, որը, եթէ կարելի է այսպէս ասել, յագեցած էր աշխատանքով:

Արամը արտակարգ շնորհք ուներ մարդկանց դնելու այնպիսի վիճակի մէջ, որ նրանք դրսևորէին իրենց հասարակական արժէքի առաւելագոյնը: Թէև Յատուկ Կոմիտէի կազմը դաշնակցական էր, բայց նրա աշխատանքներին ամենաեռանդուն կերպով մասնակցում էին ամէնքը: Եթէ մի կողմ թողնենք Արամին, պէտք է ասել ու խոստովանել, որ դաշնակցականներին հաւասար, յաճախ աւելի և ոչ պակաս, գործ էին կատարում ժողովրդականները: Մասնաւորապէս պարենաւորման և ելևմտական խնդիրները մեծ մասամբ ծանրացած էին վերջիններիի վրայ ու մարդիկ աշխատում էին մեծ եռանդով մինչև վերջին հնարաւորութիւն:

Յատուկ Կոմիտէի հոգը ստեղծուել էր մի մթնոլորտ, ուր տենդոտ գործ էր կատարւում օրն ի բուն: Աշխատում էին սիրով, համերաշխութեամբ՝ առանց նիւթական վարձատրութեան (խօսքս սովորական պաշտօնեաների մասին չէ): Եւ առանց վերապահութեան պէտք է ասեմ, որ այդ մթնոլորտը ստեղծել էր Արամի ներկայութիւնը: Բոլոր աշխատողները, պատասխանատու թէ երկրորդական, մի տարօրինակ՝ չտեսնուած վերաբերմունք ունէին նրա հանդէպ: Ստեղծուել էր մեծ ընտանիքի պէս մի բան, որի անդամները ժրաջան մեղուի պէս աշխատում էին օրն ի բուն: Այդ ընտանիքի մեծ հայրը Արամն էր, որը ամէն տեղ էր՝ իր խորհուրդներով, ցուցմունքներով, հրահանգներով ու հրամանով:

* * *

Մի քանի խօսք էլ Արամի ապրուստի մասին: Յիշեցի արդէն, որ նրա անձնական կեանքը շատ ողորմելի կը լինէր, եթէ նրա մասին հոգ տանող չլինէր: Եւ, իրօք, այդ մարդը իր մասին մտածել չգիտէր: Որտե՞ղ ապրել, ի՞նչ ուտել, ի՞նչ հագնել,- հարցեր էին, որոնք քիչ էին զբաղեցնում նրան: «Մի կերպ կ'ապրենք, չենք մեռնի»,- այս էր նրա սովորական խօսքը:

Յատուկ Կոմիտէի անդամներս միաժամանակ պաշտօնով կապուած էինք որևէ հիմնարկութեան հետ: Այնպէս որ, թէև Յատուկ Կոմիտէից ռոճիկ չէինք ստանում, բայց ստանում էինք այլ տեղից, որով և պահում էինք մեր գոյութիւնը: Արամը որևէ տեղից ռոճիկ չէր ստանում և ապրում էր զրկանքներով: Այդ մասին խօսեցի հետը:

«Թիֆլիսում, կարծեմ, մի բան նշանակել եմ, կ'ուղարկեն. դատարկ բաներով մի մտահոգուիր», եղաւ պատասխանը:

Խօսեցի Յատուկ Կոմիտէի նախագահ Մ. Մուսինեանի հետ, որը վերին աստիճան գործունեայ, եռանդուն, ընդունակ ու շիտակ բնաւորութեան տէր մարդ էր՝ յարգուած ու սիրուած Երևանի հասարակութիւնից: Նա իր ամբողջ ժամանակը նուիրել էր Ազգային Խորհրդին: Անկուսակցական էր, բայց շատ էր յարգում ու գնահատում Արամին, սակայն նրա ներքին կենաքին, նիստ ու կացին տեղեակ չէր: Խիստ զարմացաւ:

Թիֆլիսի հետ մեր յարաբերութիւնները հաղորդակցութեան տեսակէտից այնպէս էին, որ այնտեղից «ամսական» ստանալու մասին մտածելը միամտութիւն էր: Ես առաջարկեցի, որ Յատուկ Կոմիտէն մի որոշ գումար

տրամադրէ Արամին՝ նրա ապրուստի համար: Մուսինեանը այդ առաջարկին պատասխանեց, որ Յատուկ Կոմիտէի դրամարկղը բաց պէտք է համարել Արամի առջև: Նա կարող է առնել, որքան որ հարկաւոր է:

Այդ միտքը կարգասէր ու խիստ հաշուապահ, դրամական խնդիրներում այնքան բծախնդիր Մուսինեանի բերնում ինձ տարօրինակ չթուաց: Արամը նրա աչքին սովորական աշխատող չէր:

Սակայն, մեր ցանկութիւնները լոկ ցանկութիւններ էլ մնացին: Արամը կտրուկ կերպով հրաժարուեց որևէ ձևով որևէ դրամ առնելուց: Մինչև իր ընտանիքի Երևան տեղափոխուելը՝ նա ապրում էր Աբովեան և Դոկտորսկայա փողոցների անկիւնում մի հասարակ տան մէջ: Սենեակը իր երկու լուսամուտներով նայում էր Դոկտորսկայա փողոցի վրայ: Յարմարութիւնների տեսակէտից սենեակը ողորմելի էր: Մի անշուք մահճակալ, երկու հասարակ սեղան և մի երեք-չորս նոյնպէս հասարակ աթոռ,- ահա սենեակի կահաւորութիւնը: Մի անկիւնում հին արկղի վրայ յարմարեցուած էր թիթեղեայ վառարան, որը վառարան լինելուց աւելի մի պատիժ էր Արամի համար: Վստելիս՝ խողովակները յաճախ դուրս էին ընկնում իրար միջից, և սենեակը լցւում էր անտանելի ծխով: Եւ որովհետև Արամի աչքերը վատառողջ էին, ծուխը նրա համար կրկնակի տանջանք էր: Լուսամուտներն ու դուռը բաց էր անում ու նստում ցրտում:

Նոյն Դոկտորսկայա փողոցում ապրում էի ե՛ս ևս: Շատ յաճախ Արամի հետ աշխատանքից միասին էինք վերադառնում տուն: Եւ գրեթէ ամէն անգամ նա ինձ հրաւիրում էր ճաշի.-

«Գիտեմ եթէ ես (ընտանիքս Երևանում չէր), գնանք միասին ճաշենք»:

Երբեմն գնում էի, ո՛չ ճաշի համար, այլ պարզապէս միասին լինելու: Նրա ճաշը հո ճաշ չէր:

Նոյն տան մէջ ապրում էր վանեցի ընտանիք, որ և՛ պատրաստում էր կերակուր: Ժամանակին չեմ հետաքրքրուել, բայց կարծում եմ, որ Արամի վանեցի բարեկամներն էին հոգում նրա ապրուստը: Եւ որովհետև ինքն էլ՝ գաղթական ու տնաւէր՝ զրկանքներով էին ապրում, Արամին էլ լաւ պահել չէին կարող: Պատահեցին դէպքեր, երբ եկանք ճաշի և տանը հաց չգտանք, այլ միայն ապուր: Ուղարկում էինք դէս ու դէն հացի:

Երբ վանեցի քոյրիկը ճշտելով ու ամաչելով յայտնում էր, որ տանը հաց չկայ, Արամը, բարի ժպիտը դէմքին, հանդարտեցնում էր.

«Արշալոյսը օտար չէ, վնաս չունի»:

Միայն ընտանիքը Երևան տեղափոխուելուց յետոյ, Արամը սկսեց քիչ-շատ մարդավայել ապրել: Ունէր լաւ բնակարան և բաւարար սնունդ: Այդ բարեփոխութեան համար նա պարտական էր իր բժշկուհի կնոջ:

Եւ այդ մարդը, որ այնքան անուշադիր էր դէպի ինքը, որքան ուշադիր էր ուրիշների հանդէպ: Արամը հաստատութեան դրամարկղը չէր խնայում՝ աշխատողներին վարձատրելու և օգնելու համար: Քանիսներին էլ

օգնում էր այս կամ այն ձևով մեկի կամ միսի միջոցով և յաճախ այնպէս, որ օգտուողը չէր իմանում թէ Արամի ուշադրութեանն էր պարտական:

Երբ Ազգային Խորհուրդի գործունէութիւնը վերջացաւ, ընտրուեց հաշուեյարդար մարմին, որ պիտի քննէր, կարգի բերէր ու փակէր Ազգ. Խորհուրդի և նրա գործադիր մարմինների (Յատուկ Կոմիտէի և Վարիչների Մարմնի) բոլոր հաշիւները: Այդ մարմինը իր տրամադրութեան տակ ուներ խոշոր գումար: Անդամներն էին՝ Յ. Մելիքեան, Մ. Մուսինեան և Ա.Աստուածատրեան: Յաճախ Արամից գրութիւններ էինք ստանում, որոնցից իմանում էինք, թէ այս կամ այն անձը ստանալիք ունի: Այդ մի ճև էր, որով Արամը օգնութեան էր հասնում նիւթական զրկանքներից տառապող ու տանջուող մարդկանց, որոնք ամէն ինչ կորցնելով՝ պահել էին իրենց պատուարժանութեան զգացմունքները հանդէպ հայրենիքի: Մենք հասկանում էինք Արամին ու հոգով նրա հետ էինք՝ գիտակցելով հանդերձ, որ նրա արածը մեր կարողութիւններից վեր էր: Երբ նա անհրաժեշտ էր համարում, արհամարհում էր սովորական կարգն ու ճևը և անում, ինչ որ նպատակայարմար էր համարում:

«Տաղերային ուժ էր, որ ոտնահարում էր ամէն մի օրէնք՝ միշտ աչքի առաջ ունենալով մարդկային շահերը,- ինչ որ նրա մասին հետագայում Գ. Պետրոսեանը կ'ասէր, երբ այդարութեան նախարար էր Քաջազնունու դահլիճում:

* * *

Յատուկ Կոմիտէն Արամի գլխաւորութեամբ գերբնական ջանքեր էր թափում՝ Երևանի շրջանը խաղաղեցնելու և ռազմաճակատի օգնութիւն հասցնելու համար:

Սակայն, շրջանում բոյն դրած դաւադիր ուժերը ամէն կերպ աշխատում էին ի դերև հանել այդ ջանքերը: Թուրք հակապետական շարժումները գնալով սաստկանում էին ու այլևս ո՛չ մի միջոցի դէմ կանգ չէին առնում՝ ջլատելու համար հանրային կեանքը:

Հայերի գլուխը թուրքերը խառնում էին ոչ միայն այնտեղ, որտեղ աչքի ընկնող թիւ էին կազմում, այլևս այնտեղ, որտեղ թով համեմատաբար ոչինչ բան էին, ինչպէս օրինակ՝ Նոր Բայազիտի գաւառում: Նրանց յանդգնութիւնը անցնում էր ամէն չափ ու սահման:

Արամի և Յատուկ Կոմիտէի դժբախտութիւնը նրանում էր, որ անկախ ու ազատ չէին իրենց շարժուձևերի մէջ: Արամը գլխաւորում էր Յատուկ Կոմիտէն իբրև Թիֆլիսի ներկայացուցիչ: Նա պետական մարդ էր և իր գործերի մէջ պատասխանատու կենտրոնական իշխանութեան առջև՝ Հայոց Ազգային Խորհուրդի խողովակով,- մի հանգամանք, որ նրան կաշկանդում էր և հարկադրում լինել վերին աստիճանի շրջահայեաց, փափկանկատ անգամ այնտեղ, որտեղ մի հարուածով կարող էր լուծել կնճիռը, ինչպէս, օրինակ, Նոր Բայազիտի գաւառում և Երևանում:

Բերենք մի քանի օրինակներ՝ ցոյց տալու համար, որ սկսած 1918-ի Յունուարի սկզբներից՝ Արարատեան Դաշտը դարձել էր թուրք և քիւրդ հակապետական շարժումների թատերաբեմ:

«Յունուար 14-ին Իգդիրից հեռագրում են, որ քրդերը յարձակուել են ռազմաճակատ գնացող պետական պարենաւորման խմբի վրայ՝ Կարա-Օրգով ճանապարհին, տարել են մեծ քանակութեամբ հացի պաշար՝ բարձած ուղտերով: Սպանուել են շատ զինուորներ: Բայազէտ-Մուսուն-Էջմիածին ճանապարհները փակուած են, ամէն օր տեղի են ունենում յարձակումներ, սպանութիւն, կողոպուտ: Ալի-Կըզըլ (հայկական) գիւղը տեղափոխւում է Ղամարլու՝ ազատուելու համար թրքական և քրդական հրոսակախմբերից»:

Յունիսի 20-ին Ջուլֆայից հեռագրում են Անդրկովկասի կոմիսարիատին.

«Դրութիւնը Ջուլֆայում սպառնական է: Աւերի ու արիւնի են ենթակայ ամէնքը: Երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքների կեանքը: Ամէն օր հրացանաձգութիւն է տեղի ունենում: Կան սպանուածներ ու վիրաւորներ: Ազգային թշնամութիւնը սուր բնոյթ է ստացել: Ամէնքը ենթակայ են վտանգի: Ռուս զինուոր համարեայ չկայ: Բոլորը գնացել են: Շուտափոյթ կարգադրութիւն պէտք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս տեղափոխելու համար, հակառակ դէպքում բոլոր ծառայողները կը փախչեն»:

Փետրուարի 15-ին Ալեքսանդրապոլի մօտ Մոլլա-Մուսա (թուրք) գիւղի բնակիչները յարձակուեցին իրենց մօտ եկող պատգամաւորութեան վրայ, սպաննեցին զինուորական խորհրդի ներկայացուցիչ՝ համակրելի հասարակական գործիչ Սարիբէկեանին (սոց. դեմոկրատ) և ուրիշ վեց հոգու ու վիրաւորեցին վեց հոգու:

Այս դէպքը ահագին յուզում առաջ բերեց: Մոլլա-Մուսա գիւղը ենթարկուեց թնդանօթաձգութեան: Կայարանում գտնուող վագոնում թուրքերը տարուեցին քաղաքից դուրս ու կոտորուեցին: Թրքական թաղը (քաղաքում) պաշարուեց զրգռուած ամբոխի կողմից և փրկուեց միայն դաշնակցականների ջանքերով:

Փետրուարի 19-ին Երևանի նահանգական կոմիսար Ս. Թորոսեանը ուղիղ հեռախօսաթելով տեղեկացնում էր Թիֆլիս.

«Փետրուար 16-ին քրդերը Սուրմալուի գաւառի ջալալցիների և տեղական թուրքերի հետ յարձակուեցին Ղամարլուի վրայ, որտեղ կանգնած են հայկական զօրամասեր: Փետրուար 17-ին այստեղ տեղի ունեցաւ ընդհարում: Ազդեցիկ թուրքերից կազմակերպեցի հաշտարար պատուիրակութիւն: Նրանք մեկնեցին Ղամարլու: Բայց 17-ի գիշերը գաւառամասի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի և հայ զինուորների միջև տեղի է ունենում հրացանաձգութիւն: Երկու կողմից էլ շատ զոհեր կան: Նոյն գիշեր Դաւալուից ստացուեցին հեռագիրներ, որոնք յայտնում են, որ Ռեհանլու[312] գիւղը շրջապատուած է թուրքերով: Պատգամաւորները տեղ չհա-

սան, որովհետև Աղհամզալուի մօտ զինուած թուրքերը կտրել են ճանապարհը և թոյլ չեն տուել առաջ գնալ: Աղհամզալուի մօտ կանգ էին առել նաև զօրամասերը, որոնք առաջ են շարժւում շտաբի հրամանով: Երէկ Երևանից Ղամարլուի ուղղութեամբ մեկնեցին զօրամասեր: Աղհամզալուի մօտ նրանց կանգնեցրել էին խճուղուց քիչ հեռու խրամատներ մտած թուրքերը: Այստեղ զօրամասերը բռնուեցին կռուի: Թուրքերը Ուլուխանլուից օգնութիւն ստացան: Զօրամասը շարժուեց առաջ և փախցրեց նրանց ու ստիպուած եղաւ իր գործողութիւնները ուղղել Ուլուխանլուի դէմ»:

Այս օրինակների թիւը կարելի է երկարել: Բազմաթիւ էին նման դէպքերը:

«Թուրք հակապետական ու հակահայկական շարժումները ստացել էին տարերային բնոյթ: Ամէն տեղ կռիւ կար: Յարձակւում էին թուրքերն ու քրդերը, պաշտպանւում է հայ զօրամասերն ու ինքնապաշտպանութեան խմբերը»:

Այս վերջիններն կազմակերպուել էին Դրոյի նախաձեռնութեամբ՝ յատկապէս ժողովրդի ինքնապաշտպանութեան համար՝ հնարաւորութեան սահմաններում չեզոքացնելու նպատակով զօրքի միջամտութիւնը, զօրքի, որի միակ նպատակը ռազմածակատ մեկնելն էր:

Թուրք խռովարարների սանձարձակութիւնները գնալով ընդարձակ չափեր էին առնում և գաւառից աստիճանաբար մօտենում էին քաղաքին՝ Երևանին: Ընբռստութեան դրօշակ էր պարզում Չանգիբասարը, որը գտնւում էր Երևանի քթի տակ, մի քանի կիլոմետր քաղաքից: Ուլուխանլու երկաթուղու կայարանը գերեզմանատուն էր դարձել հայերի համար. վագոններից հանում և անխնայ կոտորում էին: Բանը հասաւ այնտեղ, որ թուրքերը գլուխ բարձրացրին անգամ Երևանում:

Արամի համար ոչ մի դժուարութիւն չէր ներկայացնում այդ շարժումը խեղդել բնի մէջ՝ չարաչարօրէն պատժելով Երևանի թուրքերին: Բայց վերոյիշեալ պատճառաբանութեամբ նրա գլխով անգամ չանցաւ այդ բանը: Արամը տարուած էր միայն մի կամքով՝ ամէն գնով վերահաստատել քաղաքում խաղաղութիւնը, վերականգնել կարգը: Ու այդ նպատակով միւսների հետ միասին ինքն էլ իջաւ վագոց, մտաւ կրպակի մէջ և. կեանքը ստոյգ մահի ենթարկելով՝ իր կամքը պարտադրեց շրջապատին ու փրկեց քաղաքը վտանգից:

Այստեղ տեղին է յիշատակել մի պարագայ, որը անհերքելի վկայութիւն է այն մասին, որ մահմետականների հակահայկական շարժումները վարում էին թուրք բանակի գործակալները:

Քաղաքում կարգը վերականգնելուց անմիջապէս յետոյ, գումարուեց հայերի և թուրքերի ներկայացուցիչներից մի ժողով, որը զբաղուեց նահանգում ստեղծուած ծանր կացութեան հարցով ու հանեց մի շարք որոշումներ,- քաղաքը յայտարարել պատերազմական դրութեան մէջ, կազմել ռազմա-յեղափոխական դատարան, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զօրամասերի մեկնումը ռազմածակատ և այլն:

Արամը մի քովանդակալի խօսքով դիմեց ներկայացուցիչներին, յատկապէս մահմետականներին՝ կոչ անելով նրանց չխնայել իրենցից կախուածը, վերջ տալու համար նահանգում տիրող անիշխանութեան ու սարսափներին:

Ահա այս ժողովում Մահմետական Ազգային Խորհուրդի ներկայացուցիչները յայտարարեցին, որ իրենք անկարող են զսպել թուրքերին և խնդրում են հայ զինուորական մարմնի աջակցութիւնը: Այդպիսով, թուրք բնակչութիւնը չէր ենթարկուած իր Ազգային Խորհրդին: Իսկ ո՞ւմ էր նա ենթարկւում, որի՞ համար հակապետական ու հակահայկական շարժումները, որոնք ձեռնտու էին միայն տաճիկ հրամանատարութեան նպատակներին: Պատասխանը պարզ է:

Այդպիսով, Երևանի նահանգում ստեղծուել էր մի անբնական, անհանդուրժելի դրութիւն: Շրջանի թուրքերը ո՛չ ոքի չէին ուզում ենթարկուել՝ ոչ տեղական իշխանութեան, ոչ իրենց ազգային իշխանութեան, և սանձարձակօրէն ջլատում էին երկրի կեանքը:

Եւ գնալով թուրքերն աւելի ու աւելի յանդուգն էին դառնում՝ առ ոչինչ համարելով ոչ միայն տեղական իշխանութեան յորդորներն ու սպառնալիքները, ոչ միայն Թուրք Ազգային Խորհրդի իրենց ուղղած յաղագս հայկական կոչերը, այլև Թիֆլիսից ուղարկած Անդրկովկասեան Կոմիսարիատի յատուկ պատուիրակութեան պահանջները՝ վերջ տալու շահարկութիւններին ու հնազանդուելու իշխանութեան:

Այժմ բոլորի համար պարզ էր, որ ստեղծուած վիճակը անտանելի էր: Եթէ նրան վերջ չտրուէր, ոչ ռազմաճակատին կարելի էր օգնութեան հասնել, ոչ էլ թիկունքում կարգ հաստատել,- մի բան, որին ձգտում էր բշնամին:

Եւ որովհետև բոլոր միջոցները սպառուած էին, ուստի Արամը, խորհրդակցելով զօրավար Սիլիկեանի և Դրոյի հետ, ապա խօսելով սրանց տրամայրութիւնների մասին Յատուկ Կոմիտէում, որոշեց դիմել կտրուկ միջոցների: (Այդ ժամանակ Արամն արդէն դիկտատոր էր ընտրուած, այդ մասին խօսք կը լինի վարը): Նախ՝ նա որոշեց պատժել Ուլուխանլու բռքական մեծ գիւղը, և պատժել այնպէս, որ այդ դասը նաև խրատ լինի բոլոր թուրքերի համար:

1918 Փետրուարի վերջերին Դրօն իր ուժերով պաշարեց Ուլուխանլուն: Նախքան զինուորական գործողութիւնների սկսելը, Արամի թելադրանքով առաջարկուեց թուրքերին վար դնել զէնքերն ու ենթարկուել իշխանութեան: Ի զուր: Այն ժամանակ Դրօն անցաւ գործի, խորտակեց թուրքերի դիմադրութիւնը և գիւղը մատնեց կրակի:

Ուլուխանլուցիների համար դա անսպասելի էր: Չարաչարօրէն պատժուելով՝ նրանք խելքի եկան, յայտնեցին հնազանդութիւն ու այնուհետև մինչև վերջ մնացին հաւատարիմ իշխանութեան: Այդպիսով բացուեց երկաթուղային հաղորդակցութիւնը Ալեքսանդրապոլի հետ. բացուեց և՛ Ղամարլուի ճանապարհը:

Այնուհետև պատժուեցին և զսպուեցին Կաղզի, Սուրմալուի, Ղամարլուի և Նոր Բայազիտի թուրքերը: Սակայն, Վեդիի, Շարուրի, Նախիջևանի թուրքերը շարունակեցին իրենց թշնամութիւնները՝ նպաստելով թրքական ռազմական ծրագիրներին:

* * *

Միանգամայն բնական էր, որ Երևանի նահանգում կատարուող դէպքերի մասին պաշտօնական մարմինների (զինուորական և ոչ զինուորական) կողմից ամէն անգամ էլ տեղեկացուում էր կենտրոն՝ Թիֆլիս, մանրամասն զեկուցումներով, խնդրելով միաժամանակ նրա միջամտութիւնը՝ անկարգութիւնների վերջ տալու համար:

Այդ տեղեկութիւնները Թիֆլիսում առաջ էին բերում ահագին իրարանցում թուրքերի և հայերի միջև փուխադարձ մեղադրանքներով: Հայրերքական ընդհարումների պատճառները քննելու և պարզելու նպատակով, Անդրկովկասի Կոմիսարիատը մի պատուիրակութիւն ուղարկեց Երևան: Պատուիրակութիւնը Թիֆլիս վերադառնալով իր անդամների՝ Կարճիկեանի և Ջաֆարովի բերնով, ընդհանրապէս խոստովանած էր իր անկարողութիւնը՝ Երևանի նահանգում կարգ հաստատելու համար:

Դրանց զեկուցումների հիման վրայ, «մահմետական պատգամաւորները (Մէյմի) մեղադրում էին հայերին, թէ նրանք մաքրում են Երևանի նահանգը թուրք բնակչութիւնից՝ հայկական հող պատրաստելու նպատակով: Հայերը, ընդհակառակը, ընդհարումների պատճառ էին ցոյց տալիս թուրքերին, որոնք արգելք էին յարուցանում ռազմաճակատ մեկնող զօրամասերի առջև» (Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն» Բ. տպ., էջ 130):

Դէպքերի կապակցութեամբ Խ. Կարճիկեանը Մէյմում արտասանում է մի ուշագրաւ և բնորոշ ճառ, որի մասին գաղափար տալու համար բերենք մի երկու մէջբերումներ:

Ուլուխանլուում պատուիրակութեան առջև պատկերանում է հետևեալը.- «Ուլուխանլուն ներկայացնում է պատերազմական վիճակ: Նախ՝ պատուիրակութեան դիմատրեց այդ կայարանի զինուած պահակախումբը՝ մի քանի հարիւր զինուած գիւղացիներ, մի քանի հարիւր ձիատրներ, ամէնքը զինուած: Այս հանգոյցային կայարանը բոլորովին այրուած է, այնպէս որ հեռագրաթելը վերականգնելու նպատակով Էչմիածնի կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար տեղաւորելու: Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղերից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետև կայարանի վրայ յարձակուել էին քրդերը. այրել, քար ու քանդ արել և կողոպտել ամէն ինչ՝ կրակի մատնելով կայարանի բոլոր շէնքերը:

Թուրքերի ներկայացուցիչները յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ, որ պատերազմից մնացած պետական ստացուածքը բաժին հասնի բացառապէս հայերին կամ վրացիներին: Նրանք պահանջում էին, որ այդ

ստացուածքը հաւասարապէս բաժնուի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջև: Մասնաւորապէս պահանջում էին, որ մահմեդականներին տրուի այն քանակութեամբ զէնք, ինչ քանակութեամբ որ համապատասխան է իրենց բնակչութեան թւին: Յետոյ թուրքերը յայտնեցին, որ իրենք թոյլ չեն տայ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը, մինչև որ իրենց հիմնական պահանջը չգոհացուի: Եթէ հայերը կամենում են խաղաղութեամբ կարգադրել այս բախումը, նրանք պարտաւոր են անյապաղ լուծել իրենց զօրամասերը և զէնքերը յանձնել թուրքերին, այլապէս իրեն թոյլ չեն տայ կարգի վերականգնումը»:

Թուրքերի պահանջը զէնքի և ընդհանրապէս ռազմամթերքի նկատմամբ շատ բնորոշ էր: Պէտք է իմանալ, որ պատերազմի ամբողջ ընթացքում նրանք ոչ մի զինուոր էին տուել և ընդհանրապէս որևէ մասնակցութիւն չէին ունեցել: Իսկ այժմ պահանջում էին, որ նախ՝ ռուսների թողած ռազմամթերքից համապատասխան բաժին հանուի իրենց և ապա՝ հայերը լուծեն իրենց զօրամասերը ու զէնքերը յանձնեն թուրքերին: Հարց է ծագում, ինչո՞ւ էին թուրքերը պահանջներ անում: Իրե՞նց պաշտպանելու: Բայց ո՞վ էր նրանց վրայ յարձակւում: Ամբողջ ժամանակ և ամէն տեղ, որտեղ նրանք նոյնիսկ չնչին ուժ էին կազմում, յարձակողը, թալանողը, այրողն ու սպանող-մորթողը իրենք էին. հայերը միայն պաշտպանւում էին:

Թուրքերը իրենց պահանջով ցանկանում էին զրկել հայերին ինքնապաշտպանութեան հնարաւորութիւնից, որպէսզի անարգել կոտորէին, թալանէին և այրէին: Յետոյ ռուսական ուժերի քաշուելուց յետոյ, Անդրկովկասի ճակատը մերկանում էր տաճիկ բանակի առաջ և միակ ուժը, որ պիտի կանգնէր առաջխաղացող թշնամուն, հայկական զօրամասերն էին: Մահմեդականները, այդ զօրամասերի զինաթափումը պահանջելով, պարզապէս անարգել ճանապարհ էին ուզում հարթել տաճիկ բանակի առաջխաղացման:

Պարզ չէ՞, որ նման առաջարկի բուն հեղինակները թրքական բանակի ծպտեալ գործակալներն էին:

Երևանում Անդրկովկասեան Կոմիսարիատի պատուիրակութիւնը լսում է հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, որոնք յայտնում են հետևեալը.-

«Ամէն բան, որ կատարւում է այժմ Անդրկովկասում, յանգում է մի որոշ մտքի: Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրայ, ուր ապրում են թուրքերը, համարեա միաժամանակ տեսնում ենք որոշ բնոյթ կրող յուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցութեան խանգարումով:

Մատնանշում են Սանղար-Սաղախլու երկաթուղագիծը, Ուլուխանլուի գիծը: Յետոյ յայտնում են որ խռովութիւնները տեղի են ունենում երկաթուղու մօտ երկաթուղային հաղորդակցութեան շուրջ: Վերջապէս յայտնում են, որ այս ամէնը պատահական բան չէ, որ կան ինչ որ մութ

տարրեր, որոնք առաջ են բերում այդ ամենը և գործում որոշ նպատակով, որպէսզի խանգարեն հաղորդակցութեան միջոցները, արգելք հանդիսանան ռազմաճակատի պաշտպանութեան և որ այս բանում թէ՛ մահմետական ու հայ և թէ՛ ամբողջ Անդրկովկասի ազգաբնակչութիւնը այդ մութ ուժերի խաղերի զոհն է: Երևանի նահանգի արևելեան մասը, ուր ազգաբնակչութիւնը խառն է, այդէն համարեա մի անծանօթ երկիր է. յայտնի չէ, թէ ի՛նչ է կատարւում այնտեղ, ոչ ոք մի լուր չի ստանում և այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնարին է:

Միւս կողմից՝ հայ հասարակութեան վիճակը ծանր է այնտեղ: Նախ, ինչպէս ձեզ յայտնի է, այնտեղ կազմակերպւում են հայկական զօրամասեր, որոնք պէտք է ուղարկուէին ռազմաճակատ: Այդ զօրամասերը մի ամբողջ շաբաթ սպասեցին ուղարկուելու օրին: Որոշ մասեր առաջ շարժուեցին՝ երկաթուղագծի վրայ գիծն ու պահեստները պահպանելու համար: Եւ ահա ստեղծուեց այնպիսի դրութիւն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահթախտում, Դաւալուում և Նախիջևանում կանգնած զօրամասերին օգնութեան հասնել: Նրանք կտրուեցին իրարից և ոչ մի հնար չկար նրանց միջև կապ հաստատելու: Հայ զօրամասերը չէին կարող հանդուրժել, որ շաբաթներով մնան նստած ու չկարողանան մեկնել ռազմաճակատ»:

Այդպիսով, «մութ ուժերը» Արարատեան Դաշտում ստեղծեցին մի դրութիւն, որով թուրքերը որևէ իշխանութիւն չէին ճանաչում, ոչ տեղական ոչ էլ կենտրոնական: Այդ «մութ ուժերի» ծեռքին կոյր գործիք էին ոչ միայն գաւառի թուրք ժողովրդի առաջնորդները, այլև՛ կենտրոնում՝ Թիֆլիսում՝ Կոմիսարիատում և Սէյմում նստած այդ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք իրենց աղմկարար ելոյթներով մեղադրում էին հայերին՝ աչք գոցելով թուրք տարրերի աղաղակող հակապետական ու աւազակային ելոյթների վրայ:

Չմոռանանք, որ Երևանի Մահմետական Ազգային Խորհուրդը, որ շատ աւելի լաւ տեղեակ էր գաւառի անցուդարձին և որի մէջ նստած էին աւելի արդարամիտ մարդիկ, խոստովանում էր իր անզօրութիւնը՝ իր ցեղակիցների հակապետական ու աւազակային շարժումները զսպելու մէջ:

«Ես մտնում եմ հայ և մահմետական տեղական գործիչների դրութեան մէջ: Այնտեղ հրդեհն արդէն սկսուած է, իսկ մենք չենք տալիս ոչ մի օգնութիւն և ոչ մի միջոց՝ հանգցնելու համար այդ հրդեհը: Բայց, պատգամատորներ Անդրկովկասի Սէյմի, մի՛ խանգարէք նրանց, թոյլ տուէք, որ նրանք իրենց հանգցնեն հրդեհը. մենք նրանց օգնել չենք կարող այժմ: Մենք չպետք է կորցնենք մեր պատասխանատուութիւնը: Քաղաքական դեկավար մարմինը այսպիսի ահաւոր վայրկեանում, երբ ամենքս կանգնած ենք անդունդի եզրին, իրաւունք չունի կորցնելու հաւասարակշռութիւնը, իրաւունք չունի զբաղուելու միմիանց դէմ ամբաստանագրեր պատրաստելով: Մեզնից ամէն մէկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլև

հայերի, մահմետականների ու վրացիների: Մենք պատասխանատու ենք ամբողջ ազգաբնակչութեան համար: Մենք չպէտք է դառս գանք իրրև միմիանց մեղադրողներ: Մենք հանդէս պէտք է գանք, որպէս գաղափարական քաղաքական մի մարմին, որը այս յուզումնալից վայրկեանին կոչուած է փրկելու երկիրը: Ես կոչ եմ անում պաղարիւնութեան և սեփական պարտականութեան գիտակցութեան»:

* * *

Սէյմը, ըստ երևոյթին, անբաւարար համարելով Անդրկովկասի Կոմիսարիատի պատուիրակութեան կատարած քննութիւնը Արարատեան Դաշտում, իր կողմից մի նոր պատուիրակութիւն է ուղարկում դէպքերի վայրը: Պատուիրակութեան նախագահն էր վրացի Գէորգաձէն, անդամները՝ հայերի կողմից Ս. Տէր Խաչատրեանը (դաշնակցական), իսկ թուրքերի կողմից Սաֆի-Քուրտսկին (Էս-էր): Դրանց երևանում միանում են հայերի և թուրքերի ներկայացուցիչները, և բոլորը միասին անցնում են հրջանը՝ տեղն ու տեղը ծանօթանալու, քննելու համար հայ-թրքական յարաբերութիւնների լարման պատճառը:

Պատգամաւորութիւնը հասնում է մինչև Գայլի-Դրունք (Շարուրի նախադուռը), որից յետոյ թուրքերի կողմից գիծը փճացուած լինելու պատճառով, նրանք չեն կարողանում շարունակել ճանապարհը և վերադառնում են:

Երբ այդ պատուիրակութիւնը վերադառնում է Թիֆլիս, նրա նախագահը Սէյմի Մարտի 7-ի (1918) նիստում ներկայացնում է մանրամասն զեկուցում:

Ի վերջոյ, Սէյմը ընդունեց մի բանաձև, որի հիմնական միտքը այն էր, թէ անմիջապէս պէտք է ձեռք առնել վճռական միջոցներ, որպէս զի զօրամասերը կարողանան առանց արգելքի անցնել դէպի սահմանագլուխ: Սակայն Անդրկովկասի իշխանութիւնը զուրկ էր ամենատարրական գործադիր միջոցներից: Ուրիշ անդամների պէս այս բանաձևն էլ մնաց մեռած տառ:

Այս նշանակում էր, որ Արարատեան Դաշտի իշխանութիւնը ինքը պէտք է տնօրինէր իր ճակատագիրը. կենտրոնի կողմից նա փաստօրէն ձգուած էր իր բախտին:

Արդարանում էր Արամի նախատեսութիւնը, որ նա արտայայտեց Երևան գալու առաջին օրը Ազգային Խորհուրդում տուած իր զեկուցման մէջ:

Երևանում թէ՛ Յատուկ Կոմիտէն Արամի գլխաւորութեամբ և թէ՛ զինուորական իշխանութիւնը գօրավար Սիլիկեանի և Դրոյի աջակցութեամբ ամէն ջանք թափում էին՝ խուսափելու մահմետականների հետ ընդհարում ունենալուց: Երևանից մի շարք խառն (թուրք-հայ) հաշտարար պատուիրակութիւններ ուղարկուեցին հակապետական շարժումներ ա-

ռաջ բնյալ թյլքական շրջաններ, այդ շրջաններում հաշտարար պատուիրակութիւնը ընդունում էին լկտի յանդգնութեամբ և թշնամաբար:

Բերենք այդ կարգի մի երկու օրինակ:

Պէտք է խոստովանել, որ Երևանի թուրք Ազգային Խորհուրդը նոյնպէս ցանկալի չէր համարում գաւառի իր ցեղակիցների ու կրօնակիցների աւազակաբարոյ ելոյթները և միշտ էլ ընդառաջում կրօնակիցների աւազակաբարոյ ելոյթները և միշտ էլ ընդառաջում էր Հայոց Ազգային Խորհրդի առաջարկներին՝ խառն պատուիրակութիւն ուղարկել մահմեդական ապստամբ շրջանները՝ խռովարարներին խաղաղեցնելու, ի կարգ հրաւիրելու նպատակով: Այդպիսի մի խառն պատուիրակութիւն ուղարկուեց Վեդի Բասարի շրջանը, որքան յիշում եմ, Ուլուխանլուի դէպքից առաջ: Այդ շրջանը ամենաատահանգիստ շրջաններից մէկն էր, թերևս ամենաանհանգիստը: Հայոց Ազգային Խորհրդից պատուիրակութեան անդամներ ընտրուեցին Յովհաննէս Մելիքեանը, որ Ազգային Խորհրդի ազդեցիկ անդամներից էր, և Սահակ Թորոսեանը, որ նահանգական կոմիսար էր, իսկ թուրքերի կողմից՝ ճարտարապետ Խալիլ բէյը և իրաւաբան Աղաբաբէն: Առաջինը Երևանի թուրքերի մէջ աչքի ընկնող հասարակական դէմք էր, խօսքի վարպետ և դէպքերին արդարութեան զգացումով մօտեցող:

Երբ պատգամաւորութիւնը՝ սպիտակ դրօշակ պարզած՝ մօտենում է ապստամբ թրքական գիւղերին, թուրքերը, հասկանալով թէ բանն ինչումն է, շրջապատում են եկողներին և տանում իրենց հրամանատարի մօտ:

Երբ պատգամաւորութիւնը վերադարձաւ Երևան, մանրամասնօրէն զեկուցում տուեց Ազգային Խորհրդում, իսկ Սահակ Թորոսեանը նաև Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէում: Այս վերջինը զարմանքով պնդում էր այն «ընդունելութեան» մասին, որ թուրքերի հրամանատարը ցոյց էր տուել դէպի յատկապէս թուրք պատգամաւորները, մասնաւորապէս անողորմ էր եղել Խալիլ բէյի նկատմամբ:

Այս վերջինը, թուրքերին համարելով իր մաղիկը, ինչպէս նաև իրեն նրանց մարդը, մտերմական խօսքերով դիմում է նրանց, բացատրելով յեղափոխութեան նշանակութիւնը, նրա բերած բարիքները և բոլորի պարտականութիւնը դէպի երկրի նոր իշխանութիւնը և յեղափոխութեան ստեղծած կարգերը և այլն: Թուրքերը նրա ճառը լսում են անտարբեր, մինչև իսկ արհամարհական ձևով: Խալիլ բէյը վերջացնում է իր խօսքը. առաջ է գալիս թուրք հրամանատարը և պատասխանում նրան: Այդ խօսքը, ուղղուած յատկապէս Խալիլ բէյին, սկսւում է նախատինքով ու նախատինքով էլ վերջանում: Խալիլ բէյին մեղադրում է, որ նա ուրացել է իր հաւատը, ծախուած-կաշառուած մարդ է, դաւաճան է և նրա խօսքը ոչ մի արժէք չունի, որ իրենք նրա հասարակական հանգամանքը ոչ մի բանի տեղ չեն դնում, նրան ոչ մի արժէք չեն տալիս: Խօսքը վերջանում է «նալլաթ»-ով ու թքով:

«Հրամանատար»ի խօսքից յետոյ, թուրք «զինուորները», հետևելով իրենց «հրամանատար»ի օրինակին՝ թքում ու «նալլաթ» են ասում...

Հայ պատգամատուրների հանդէպ «հրամանատարը» իրեն մարդապարի է պահում և նրանց պահանջին՝ բաց անել ճանապարհները, վերջ տալ քշնամական գործողութիւններին և ազատ արձակել գերուած հայ զինուորներին ու վերադարձնել նրանց զէնքերը,- խոստանում է երեք օրից յետոյ պատասխանել: Այդ պատասխանը, սակայն, երբէք էլ չստացուեց, իսկ գերիներն էլ սպանուեցին:

Նոյն նպատակով մի խառն հաշտարար պատուիրակութիւն էլ ուղարկուեց Շարուրի բուրքերի մօտ, որը ողբերգական վախճան ունեցաւ պատուիրակութեան հայ անդամ իրաւաբան Լևոն Մելիքեանի համար: Տարաբախտ հասարակական գործիչը անճնաստան է լինում՝ քշնամաբար տրամադրուած-գազանացած, հաւանօրէն նախապատրաստուած, ամբոխի խղճահարմունքից ազատուելու մտահոգութեամբ: Հետագայում նրա դիակը բերուեց Երևան ու յանձնուեց ծնողներին:

* * *

Բաւական համարենք այդ վկայութիւնները, որոնք ցոյց են տալիս, թէ որպիսի պայմաններում էր ապրում Արարատեան Դաշտի հայութիւնը այն օրերին:

Այդ ամէնքին միանում էր և՝ պարենաւորման տագնապը, որ սաստիկ անհանգստանում, ջղայնացնում էր Երևանի բնակիչներին: Սկսուել էր ծայր տալ մի անտեսր երևոյթ. փուռերի, խանութների առջև կազմւում էին «պռչեր», հերթի սպասողներ: Հացի, մսի, շաքարի, նաւթի և այլ մթերքների պակասը գնալով նեղում էր մարդկանց ու յուսահատութեան մատնում, որովհետև ապագայի հեռանկարներն էլ ոչինչ չէին խոստանում առօրեայ հոգսերով ապրող քաղաքացուն:

Ահա այդ օրերին էր, որ Արամին Երևանում ընտրեցին դիկտատոր:

Այդ ընտրութեան պատմութիւնը ուշագրաւ է նրանով, որ բոլորովին նման չէր դիկտատորների ընտրութեան պատմութեան: Արամը ընտրուեց դիկտատոր ոչ միայն իր կամքից ու ցանկութիւնից անկախ, այլ նա հեռատար տեղեկութիւն իսկ չունէր այդ ընտրութեան մասին: Աւելին. տեղեկութիւն չունէին ոչ միայն ինքը՝ Արամը, այլև՝ նրա կուսակցական մօտ ընկերները, ինչպէս նաև Հ. Յ. Դաշնակցութեան մարմինները:

Այդ ընտրութիւնը պէտք է բացատրել նրանով, որ նախապատրաստական որևէ աշխատանք ոևէ կողմից տեղի չէր ունեցել, ոևէ դաւադրութիւն Ազգային Խորհրդի կամ Յատուկ Կոմիտէի դէմ եղած չէր: Ընտրութիւնը կատարուել էր յանկարծակի, անսպասելի անդամ ընտրողների համար:

Մի բազմամարդ հասարակական ժողովում, ուր ներկայ են լինում մարդիկ հասարակութեան բոլոր խաւերից և որը քննութեան է առնում Երևանի և ընդհանրապէս Արարատեան Դաշտի ու յարակից գաւառների համար ստեղծուած արտակարգօրէն ծանր կացութիւնը, արտասանւում են ճառեր զինուորականների ու ոչ զինուորականների կողմից, և

մարդկանց մտքերն ու զգացմունքները լարում են ծայր աստիճան: Դրությունը թում է այնքան յուսահատական, որ ներկաների համար փրկություն մի ելք է մնում, այն է՝ ամբողջ իշխանությունը կենտրոնացնել մի մարդու ձեռքը՝ տալով նրան արտակարգ լիազորություններ և ամբողջովին ենթարկվել նրան:

Այդ մարդը երևանում, ի հարկէ, Արամն էր:

Առանձնապես աչքի ընկնող դեր է կատարում քաղաքի պարետ Ա. Շահխաթունեանը (գինուորական):

Արամին դիկտատոր հռչակելու որոշումը հաստելով՝ ժողովականները Շահխաթունեանի և միւսների առաջնորդութեամբ շարժում են դէպի Արամի բնակարանը՝ յայտնելու համար նրան ժողովրդի կամքը: Երբ այդ բազմութիւնը մօտենում է Յարսկայա փողոցին[313], ուր ապրում էր Արամը, վերջինը իր բնակարանից դուրս գալով, գնում է Ազգային Խորհուրդ: Հեռուից նկատելով ամբոխը և նրա բորբոքուած տրամադրութիւնը՝ Արամը, իր պատմելով, վատ ենթադրութիւն է անում: Մի քանի օր առաջ նրա կարգադրութեամբ խփտել էր Չոլախ Գէորգը, սաստիկ հալածում էին նրա աւազակային հակումներ ունեցող տղաները և ուրիշները, ինչպէս նաև այն բոլոր տարրերը, որոնք տրամադիր չէին ենթարկուելու Ազգային Խորհրդի անունից եկած կարգադրութիւններին: Արամը բնազդօրէն ստուգում է՝ թէ տե՞ղն է արդեօք իր ատրճանակը: Բայց կասկածը ցրում է, երբ տեսնում է Շահխաթունեանին և միւսներին: Սակայն, շարունակում է տարակուսել, թէ ի՞նչ են ուզում այդ մարդիկ, ի՞նչ է պատահել քաղաքում, որ իրեն յայտնի չէր:

Բազմութիւնը երբ մօտենում է, նրա ներկայացուցիչները յայտնում են Արամին իրենց որոշումը և, «կեցցէ»ներով բարձրացնելով նրան ձեռքերի վրայ, տանում են Ազգային Խորհուրդ:

Ճաշից յետոյ, սովորական ժամին, գնացի Ազգային Խորհուրդ: Այն ժամանակ Ազգային Խորհուրդը և Յատուկ Կոմիտէն աշխատում էին Արովեան փողոցի վրայ, Նազարեան և Բէյբութեան փողոցների միջև գտնուող միակ մեծ երկյարկանի տանը: Դեռ հեռուից զարմանքով նկատեցի Ազգային Խորհրդի շէնքի առջև խռնուած բազմութիւնը:

Մօտեցայ: Լսեցի, որ Արամը դիկտատոր է յայտարարուած և որ հէնց նոր են նրան ցոյցերով ներս տարել:

Ներս մտայ: Շրջապատուած մի խումբ մօտիկ և ոչ մօտիկ մարդկանցով՝ Արամը դուրս էր գալիս պատշգամբը, որտեղից իւօսք ուղղեց փողոցում խռնուած հասարակութեան:

Նոյն օրը երեկոյեան հրաւիրուեց Ազգային Խորհրդի արտակարգ նիստ: Արամը մի քանի խօսքով պատմեց օրուայ անցուդարձի մասին: Յիշում եմ, որ նրա խօսքը ցաւի ու վշտի շեշտ ունէր: Օրուայ դէպքը նա բացատրում էր իբրև յուսալքուած, վհատուած հոգիների ապրումների տխուր արտայայտութիւն: Վատ նշան էր համարում, երբ մարդիկ այդ ձևով իրենց անճարութիւնն են խոստովանում և իրենց իրաւունքները

յանձնում են մէկին՝ կապելով նրա հետ երկրի փրկութեան գործը: Ազգային Խորհուրդը պէտք չէ գնայ այդ ճանապարհով և ինքը, թէև դուսի աչքում «դիկտատոր», բայց ոչ մի փոփոխութիւն չի մտցնելու գործող հաստատութիւնների մէջ, ամեն ինչ գնալու է նոյն ճամբով, երկրի տէրը մնալու է Ազգային Խորհուրդը:

Հետևեալ օրը, երեկոյեան, Հ. Յ. Դաշնակութեան Երևանի Կ. Կոմիտէի նիստում էլ խօսք եղաւ նոյն խնդրի մասին: Արամը այստեղ ևս արտայայտուեց նոյն իմաստով:

«Առանց Կ. Կոմիտէի խորհրդի ու տրամադրութեան, առանց Ազգային Խորհրդի գիտութեան ու հաւանութեան՝ ոչինչ չի կատարուի»,- ասաց նա:

Բնածին դեմոկրատ էր:

* * *

Յատուկ Կոմիտէի գործին անցնելու հենց առաջին օրից Արամը հասարակական կարգերը ուռնահայրուղների նկատմամբ շատ որոշ դիրք բռնեց:

1918-ի սկիզբներն էին: Ռուսական մեծ յեղափոխութեան մեղրամիսն արդէն անցել էր. հին օրէնքներն ու իշխանութիւնը վերջացել էին, իսկ նորերը դեռ սահմանուած ու կազմակերպուած չէին: Այդ անցողական ու որոնումների, միաժամանակ լքումների ու յուսահատութեան շրջանում շատ շատերի համար այլևս հեղինակութիւն չէր մնացել: Թուլացել էին բարոյական զսպանակները, և մոլի կրքերն ու ստոր բնազդներն էին արտայայտում՝ յենարան ունենալով բիրտ ուժը ու լկտի յանդգնութիւնը:

Արարատեան Դաշտի քաղաքական այս անստոյգ, խառնաշփոթ վիճակը նպաստաւոր պարագայ էր չարագործների ու սրիկաների համար: Արամը անխնայ ու անողորմ էր հասարակական նման տականքների հանդէպ: Չոլախ Գէորգի պարագան ցոյց տուեց, որ Արամը չպիտի խնայէր անդամ դաշնակցական երբեմն աչքի ընկած մարտիկներին, եթէ ի չարն գործ դնէին իրենց դիրքը:

Չոլախ Գէորգ: Իր յանդգնութիւնը չափ ու սահման չունէր: Նրա անունը սարսափ էր ազդում շատերին: Անգամ իր նախկին խմբապետը՝ յայտնի մարտիկ Դալի Ղազարը քաշւում էր նրանից: Միակ մարդը, որի հեղինակութիւնը ան անվերապահօրէն ընդունում էր՝ Արամն էր: Գայլի մազ ունեցող Գէորգը գառ էր դառնում, երբ մօտենում էր Արամին և հետը խօսում: Ո՛վ գիտէ, գուցէ բնազդով զգում էր, որ Արամը միակ մարդն էր, որի ձեռքը կարող էր պատուհասել իրեն:

Նրա ալաճ-քալաճի ու սրիկայութիւնների մասին Արամը, ի հարկէ, գիտէր: Ոչ թէ երես չէր տալիս, այլ սաստ ու չոր լեզու ուներ նրա հանդէպ: Յիշում եմ, թէ ինչպես էր Գէորգը խնդրում ինձ տեսակցութիւն յաջողցնել Արամի հետ՝ իրեն արդարացնելու համար:

Միայն մի անգամ համաձայնեց Արամը ընդունել նրան իր բնակարանում: Գէորգը խնդրում էր չհաւատալ իր մասին տարածուած չարամիտ լուրերն և, երեսը պարզ անելու համար, տալ իրեն որևէ ծանր ու պատաս-

խանատու գործ (օրինակ՝ Շարապխանէ գնալ և ռազմամթերք բերել այնտեղ մնացած ռուսական հարուստ զինապահեստներից): Արամը մերժեց՝ ասելով թէ գոհ կը լինի, եթէ հասարակութիւնից այլևս գանգատ չլսի նրա մասին:

Այնուամենայնիւ, յետագայում Արամը մի յանձնարարութիւն տուեց Գէորգին: Եւ ահա թէ ինչպէս:

Այն օրերին ոտքի էին կանգնել նաև Ղարաբաղի և Զանգեզուրի թուրքերը, որոնց հետ շարունակական պայքարի մէջ էին տեղական հայերը: Այնտեղից պատգամաւորութիւն էր եկել Երևան: Այդ պատգամաւորութեան՝ Ազգ. Խորհուրդում տուած զեկուցումից պարզուեց, որ տեղական թուրքերը Ատրբէջանի և Թուրքիայի գործակալների դրդումով յարձակւում են հայ գիւղերի վրայ և ահաբեկում շրջանը: Շրջանի անցուդարձի մասին տեղեկութիւն տալով՝ պատգամաւորները խնդրում էին նաև օգնութիւն ռազմամթերքով:

Որոշուեց առաջին հերթին Զանգեզուր ուղարկել երեք հարիւր հրացան ու կէս միլիոն փամփուշտ: Եւ որովհետև օգնութիւնը շտապողական էր, ուստի այդ ռազմամթերքն ուղարկուեց ոչ թէ աւելի ապահով, բայց երկար ճանապարհով՝ Նոր Բայազիտ-Վայոց Ձոր (Դարալագեազ) գծով, այլ աւելի կարճ երկաթուղով, որն անցնում էր Շարուրով՝ բոլշևիկեան վտանգաւոր շրջանով:

Ահա այստեղ էր, որ Արամը յանձնարարեց Ձոլախ Գէորգին՝ իր խմբով ուղեկցել Զանգեզուրի համար Նախիջևանի գծով ռազմամթերք տանող գնացքին: Գէորգը յանձն առաւ, բայց ինքը անձամբ չգնաց խմբի հետ՝ ծածկելով այդ բանը Արամից:

Ռազմամթերք տանող գնացքը Շարուրում ենթարկուեց խորտակման ու կողոպտուեց թուրքերի ձեռքով:

Լուրը հասաւ Երևան, և բացուեց Գէորգի խաբեբայութիւնը:

Այդ դժբախտ լուրը Երևան հասնելու յաջորդ օրը, վաղ առաւօտեան, երբ ըստ սովորականի մտնում ի Ազգային խորհրդի ընդհանուր գրասենեակը, լսեցի Արամի ջղայնոտ, բարձր ձայնը հարևան Յատուկ Կոմիտէի նախագահութեան սենեակից: Գրասենեակի պաշտօնեաներից դեռ ոչ ոք չէր եկել: Արամի ձայնի վրայ, արագութեամբ ներս մտայ ու զարմացած կանգ առի: Առաջին անգամն էի տեսնում Արամին այդ աստիճան վրդովուած, գայրացած վիճակում: Ջղայնացած անց ու դարձ էր անում փոքրիկ սենեակում ականկիւնից անկիւն և ձեռքը թափահարելով յանդիմանում ու նախատում էր կահափայտի վրայ յենուած ու բոլորովին գունատուած Ձոլախ Գէորգին:

Սենեակում, պատի մօտ, գլխակոր, լուռ կանգնած էին երկու-երեք այլ իմբասպետներ: Արամի վրդովմունքը անզուսպ էր: Նա ուղղակի թոյն էր թափում Գէորգի գլխին նրա «անճամուս» վարմունքին համար: Սենեակի մթնոլորտը ծանր եկաւ ինձ: Դուրս եկայ ու նստեցի հարևան սենեակում: պարզ յիշում եմ Արամի վերջին խօսքերը.

«Ես կ'անիծեմ այն ժողովրդի հէրը, որ շան սատակ չի անի քեզ պէս դաւաճաններին»:

Եւ դուրս եկաւ՝ աղմուկով ծածկելով դուռը մնացածների երեսին:

Քիչ յետոյ ներս մտայ: Այդ սենեակում աշխատում էինք ես և Մուսինեանը: Սենեակում մնացածները կանգնած էին նոյն սառած վիճակում: Լռութիւնը խզեց Եապանը.

«Չոլախ, շան որդի, բոլորը քո... է. ես քուրքը տանել կը լինի՞...»:

Դրանից յետոյ Չոլախ Գէորգը չուտրուեց: Նա շարունակում էր իր աւազակութիւններն ու չահատակութիւնները Երևանի շրջանում: Իր վերջը եղաւ ողբերգական. նա գնդակահարուեց Արամի հրամանով: Այդ մասին Արամը յայտնեց իրեն դիկտատոր ընտրողներին ուղղած ճառում, երբ հասարակութեան միջից բողոքի ձևով Գէորգի տղաներից մէկը հարց տուեց թէ՝ կարելի՞ բան է օրը ցերեկով քաղաքի փողոցում մարդ խփել: Արամը պատասխանեց այն մտքով թէ՝ ով որ ներկայ բացառիկ ծանր պայմաններում չի ենթարկուի երկրի իշխանութեան ու կը հետևի Գէորգի օրինակին, նոյնպէս կը գնդակահարուի:

Գէորգի օրինակը, ինչպէս յիշեցի, ցոյց տուեց, որ Արամը չէր խնայում ու չպիտի խնայէր անդամ դաշնակցական անուանի գիմուտրներին ու խմբապետների, երբ նրանք մոռանում էին իրենց պարտականութիւնները հասարակութեան հանդէպ ու չարիք էին դառնում նրա գլխին: Ու հասարակութիւնը ջերմօրէն աղջունում էր Արամի նման քայլերը:

Արամի դիկտատոր ընտրուելու առիթով կայացած Ազգ. Խորհուրդի արտակարգ նիստում, երբ խօսք բացուեց նաև Գէորգի գնդակահարութեան մասին, Խորհրդի նախագահը (Գ. Տէր Խաչատրեան), որ ժողովրդական կուսակցութեան անդամ էր, Ազգ. Խորհրդի անունից հաւանութիւն յայտնեց Արամի նման վարմունքին այն բոլոր տարրերի հանդէպ, որոնք հակաօրինական վարք ու բարքով այս ծանր օրերին դժուարացնում են իշխանութեան գործը և այդպիսով նպաստում թշնամու դաւերին:

Արամը պատժում էր ոչ միայն անհատները, երբ նրանք լրբանում էին ու չահատակութիւններ անում: Ոչ պակաս վճռականութեամբ նա պատժում էր և ամբոյջ գիւղեր, երբ նրանք հրաժարւում էին իրենց պարտականութիւնը կատարել Հայրենիքի հանդէպ այն օրերին, երբ Հայրենիքն անաւոր վտանգի առջև էր կանգնած: Զօրքի պարենաւորումը դժուարին հարցերից մէկն էր: Հացը պակաս էր ու դժուարութեամբ էր ճարւում: Հայ գիւղը անտրտունջ ու գիտակցաբար տալիս էր, ինչ որ նրանից պահանջւում էր: Բայց Եղուարդ գիւղը, որ շրջանի հնձառատ գիւղն էր համարւում, մերժեց տալ իր բաժին հացը բանակի համար:

Արամը հրամայեց Ազգ. Խորհրդի գաւարտիայի պետ Աբարանցի Մաթէոսին պաշարել այդ գիւղը և ոմբակոծել: Երբ թնդանօթները գոռացին, Եղուարդը խելքի եկաւ ու տուեց՝ ինչ որ իր պարտքն էր և ինչ որ պահանջւում էր զօրքի համար:

* * *

Ես լսել էի, որ Արամը առաջ դիւրաբորբոք ու ջղային մարդ էր եղել: Բայց Երևանում, թէև մթնոլորտը չափազանց ջղայնացնող էր և ժողովուրդը արտակարգօրէն լարուած վիճակ էր ապրում, այնուամենայնիւ Արամը իր առօրեայ հասարակական աշխատանքների մէջ միշտ հանգիստ էր և զուսպ: Նա զբաղուած էր առաւօտուանից մինչև երեկոյ, սաստիկ յոգնում էր, բայց ոչ ոք նրա բարկացկոտ ձայնը չէր լսում, ոչ ոք չէր զանգատում նրա վերաբերմունքից, որ ոք չէր տեսել նրա կոպտութիւնը ընդհանրապէս: Երևանի Ազգ. Խորհրդի իշխանութեան շրջանում ես յիշում եմ երեք դէպք, երբ Արամը իր սովորական պաղարիւնը կորցրեց: Մէկի՝ Չոլախ Գէորգի դէպքի մասին պատմեցի:

Երկրորդի պատմութիւնը այս է: Երևանում կային բաւականաչափ գինուորներ, որոնք այս կամ այն պատճառով հեռացել էին ճակատի զօրամասերից: Յատուկ Կոմիտէի կարգադրութեամբ դրանք բոլորը հաւաքւում և տեղաւորւում էին կազմակերպուող զօրամասերում, որոնք աստիճանաբար նորից ճակատ պիտի ուղարկուէին: Զինուորներից ոմանք գոհ չէին այդ բանից, տրամադիր չէին նորից ճակատ դառնալու և իրենց այդ տրամադրութեամբ դիտաւորեալ կերպով վարակում էին միւսներին: Կատարւում էր ինչ որ բոլշևիկեան խմորում:

Արամի կարգադրութեամբ այդ շարժումը խեղդուեց, պատասխանատուները պատժուեցին: Խստութիւնները այդ դասալիքների մէջ դժգոհութիւն առաջ բերին: Նրանք միացան քաղաքի մութ տարրերը: Եվ ահա մի երեկոյ այդ դժգոհ տարրերը ահագին աղմուկով հաւաքուեցին Ազգային Խորհրդի շենքի (հետագայում պարլամենտի) դիմաց այն ժամանակ, երբ Ազգ. Խորհուրդը նիստ ունէր, և, «պահանջներ» արին՝ սպառնալիքներ կարդալով:

Արամը, կռահելով թէ բանն ինչումն էր, սաստիկ զայրացաւ, թռաւ տեղից ու դուրս գնաց սենեակից դէպի ցած՝ բարձրաձայն պարսաւելով խռովարարներին: Մեծ դժուարութեամբ յաջողուեց նրան ուժով յետ բերել և թոյլ չտալ ցած իջնել: Իսկ ցուցարարներին ցրեց Ազգ. Խորհրդի պահակախումբը: Իր տեսակի մէջ այդ դէպքը առաջինն ու վերջինն էր:

Երրորդ դէպքը շատ աւելի լուրջ էր և Երևանի համար ծանր հետևանքներ կարող էր ունենալ, եթէ Արամը չլինէր: Տանք նաև այդ դէպքի պատմութիւնը:

Յատուկ Կոմիտէի նախագահութեան սենեակում նստած աշխատում էի, երբ սաստիկ յուզուած ներս ընկաւ Խաչիկը (Ստեփանեան Խաչիկ, Յ. Կոմիտէի գնահատելի աշխատողներից): Նրա տեսքն ինձ անհանգստացրեց: Մտածեցի, որ ինչ որ անախորժ դէպք էր պատահել:

-Ինչ է պատահել, Խաչիկ,- հարցրի զարմացած:

-Ծա՛ռ վատ բան,- ասաց Խաչիկը, անկարող զսպել յուզումը ու շարունակել խօսքը:

-Նստիր, հանգստացիր,- առաջարկեցի մեղմ ու հանգիստ ձայնով, քէև կասկած չունէի, որ իրօք անախորժ բան էր պատահել, այլապէս Խաչիկն այդ աստիճան չէր յուզուի:

Երբ նա քիչ հանգստացաւ, ասաց.

-Խօսք տուր, որ ինչ որ ինձանից լսես, կը մնայ մեր մէջ: Փաշան (Արամը) պատուիրեց, որ պատահածի մասին ոչ ոքի չպատմեմ, բայց կը պայքիմ, եթէ ձեզ չպատմեմ: Շատ անհանգիստ եմ:

Բնական է, որ խօսք տուի:

«Այսօր Դրօն եկաւ գարաժ և ինքնաշարժ պահանջեց մի գործի համար, որը կապ չունէր Յատուկ Կոմիտէի հետ: Պատասխանեցի, որ առանց Յատուկ Կոմիտէի գրասենեակի կարգադրութեան՝ մասնաւոր պէտքերի համար իրաւունք չունեմ ինքնաշարժ տալու:

-Գիտես, որ Յատուկ կոմիտէն ինձ չի մերժի,- ջղայնացաւ նա:

Պատասխանեցի, որ դա Յ. Կոմիտէի գործն է, իսկ ես պարտաւոր եմ ենթարկուելու իմ ստացած հրահանգներին: Չայրացաւ, ապա խօսք խօսքի հասաւ. սաստիկ անպատուեց ինձ ու մի երկու քաքալուչ (ապտակ) հասցրեց: Հազիւ զսպելով ինձ՝ ձգեցի գարաժը ու շտապեցի Փաշայի (Արամի) մօտ ու վրդոված՝ բողոքով պատմեցի ամէն բան: Նոր էի վերջացրել խօսքս, երբ ներս մտաւ Դրօն և Փաշայի ներկայութեամբ սկսեց լաւ քափել գլխիս, որ չեմ կատարել իր պահանջը և մերժել եմ ինքնաշարժ տալ: Եւ դա նա արեց այն համոզմամբ, որ Փաշան կը համաձայնի իր հետ և կը յանդիմանի ինձ: Բայց դուրս եկաւ հակառակը: Փաշան նրան ընդհատեց և հանդարտ ձևով սկսեց արդարացնել ինձ, իմ վարմունքը, բացատրելով որ նա՝ Դրօն սխէտ է դիմէր Յ. Կոմիտէին, որը հնարաւորութեան դէպքում, ի հարկէ, չէր մերժի, որ նա՝ Դրօն որևէ պաշտօնեայի անպատուելու, առաել ևս քակելու իրաւունք չունի՝ իր պահանջը չկատարելու համար, էլ ուր մնաց, երբ այդ պահանջը իրաւացի չէ և պաշտօնեան՝ Խաչիկը ոչ մի մեղք չունի:

Այստեղ Դրօն ընդհատեց փաշային ու գլուխը կորցրածի պէս անպատշաճ լեզուով յարձակուեց նրա վրայ... Ես ամօթից գետինն էի մտնում... Փաշան՝ խոժռուած դէմքով՝ լուռ լսում էր: Բայց երբ Դրօն սկսեց հեգնել նրա կատարած գործերը, ժողովուրդ կառավարելը և նման բաներ, Փաշան ջղայնոտ շարժումով վեր կացաւ տեղից ու ընդհատելով նրան՝ ասաց.

-Ահա քէ ինչ... Շատ բարի, ես կը գնամ, դու մնա՛ ու կառավարիր այս ժողովուրդը...

Եւ դուրս գնաց: Դառնութեամբ նայեցի Դրօյին և դուրս շտապեցի Փաշայի ետևից: Աստիճանների վրայ հասայ նրան: Ինձ նկատելով, մի պահ կանգ առաւ, նայեց ինձ ու ասաց.

-Գնա, գնա պաշտօնիդ, պատահածի մասին ոչ ոքի չասես:

Նա գնաց, ես եկայ քեզ մօտ»,- վերջացրեց խօսքը Խաչիկը կոտրուած սրտով:

Կոտրուեց նաև իմ սիրտը: Անգամ սովորական, բնականոն պայմաններում նման դէպքերը անախորժ են: Բայց այն ժամանակ (1918-ի սկիզբը) առաւել ևս, երբ մենք բառի մերկ իմաստով ճակատագրական օրեր էինք ապրում ժողովրդի բոլոր խաւերի բացարձակ համերաշխութիւնը անհրաժեշտ պայման էր, Սարգիս Օհանջանեանին խօսքը կրկնած՝ «խորվիրապից» դուրս գալու համար: Եւ այդ համերաշխութիւնը Արամը ստեղծել էր՝ ժողովրդի պատասխանատու և աշխատունակ տարրերը կապելով ընդհանուր գործին՝ ժողովրդի փրկութեան գործին: Եւ ահա Դրոյի այդ վարմունքը, որ շատ ծանր հետևանքներ կարող էր ունենալ:

Ամէն բան կախուած էր Արամից: Իմ միտքը հրաժարւում էր Արամի գործից քաշուելու հանգամանքի հետ հաշտուել, որովհետև այն օրերին ոչ ոք կարող էր փոխարինել նրան...

Վրաս բռնեցի Խաչիկի մտահոգ հայեացքը:

-Ինձ մնում է կրկնել Արամի ասածը: Ինձ ասացիր, բայց ոչ ոքի այլևս չասես:

Խաչիկը գնաց իր գործին: Անդիմադրելի ցանկութիւն ունեցայ տեսնել Սարգիս Օհանջանեանին, որը Յատուկ Կոմիտէի գործուվարն էր ու մեր հին ու հաւատարիմ ընկերներից: Ընդհանուր գրասենեակում չէր: Անցայ Արամի առանձնասենեակը, ուր քիչ առաջ տեղի էր ունեցել Խաչիկի պատմածը: Նստեցի ու սկսեցի նորից մտածել քիչ առաջ այդ սենեակում անցած դարձածի մասին: Ու նորից ինձ անհնարին թուաց, որ Արամը պիտի իրագործէր իր սպառնալիքը և ձգէր Երևանը: Բոլորիս հետ միասին Արամը չէր կարող չունենալ այն գիտակցութիւնը, որ իրեն Երևանում փոխարինող չկար, և որ Երևանը թողնելով՝ նա ոչ թէ Դրոյին պատժած կը լինէր, այլ դաւաճանած կը լինէր ազգային գործին: Ո՛չ, Արամն անընդունակ էր նման բանի: Բայց, այնուամենայնիւ պատահածը և սրա կապակցութեամբ գալիքը չարչարում էին միտքս...

* * *

Կէսօրից յետոյ, ըստ սովորականի, գնացի Ազգ. Խորհուրդ: Յատուկ Կոմիտէի պատասխանատու պաշտօնեաները աշխատում էին նաև կէսօրից յետոյ: Գրասենեակում կային երկու-երեք հոգի: Բարևեցի և անցայ նախագահութեան առանձնասենեակը: Իմ ետևից ներս մտաւ գրասենեակի աշխատողներից մէկը և շատ խորհրդաւոր կերպով յայտնեց, որ լուր է տարածուել թէ Արամը թողնելու է քաղաքը և հեռանալու է:

-Դատարկ բան է,- պատասխանեցի հանգիստ ձևով ու զսպեցի մտահոգութեանս ճնշումը:

-Այսօր գրեթէ ամբողջ օրը չի երևացել Ազգ. Խորհրդի շէնքում և պատմում են, որ տանը ոչ ոքի չի ընդունում:

-Շատ հասկանալի է, թերևս վատ է զգում իրեն: Յամենայն դէպս, քաղաքը ձգելու լուրը հիմք չունի,- հանգստացրի պաշտօնեային:

Ինճ զարմացրեց այն հանգամանքը, թէ որտեղի՞ց էր տեղեկ այդ լուրը։ Միակ մարդը, որ դէպքի մասին գիտէր, Խաչիկն էր, որն ինձ յանդրել էր ոչ ոքի չասել։ Ուրեմն, ո՞վ կարող էր լինել այդ չարաբաստիկ լուրի հեղինակը։ Շատ ուշ, միայն արտատպմանում իմացայ, որ այդ լուրը տարածողը եղել էր հէնց ինքը՝ Խաչիկը։

Պաշտօնեան հետացաւ։ Ներս մտաւ Յատուկ Կոմիտէի նախագահ Մ. Մուսինեանը։ Նոյն լուրի մասին նա ևս խօսեց, բայց շատ հանգիստ ձայնակով՝ համաձայնելով այն անգործ մարդկանց երևակայութեան արդիւնք։

Եւ ո՞վ կարող էր հաւատալ այդ լուրին, այսինքն՝ Արամի քաղաքը քաղցելու հաւանականութեան։ Ո՛չ ոք, ով ծանօթ էր Արաբատեան Դաշտի հայութեան մղձաւանջային վիճակին այդ ծանր օրերին և գիտէր թէ ի՞նչ էր Արամը այդ հայութեան համար։

Չեմ կարող այստեղ չյիշել այն դէպքը, որը ցոյց էր տալիս, թէ ի՛նչ յոյսեր էր կապում ժողովուրդը Արամի հետ։ Այդ՝ Արամին դիկտատոր ընտրելու պարագան է։ Նա միակ մարդն էր, որի հետ ժողովուրդը կապում էր իր փրկութեան յոյսը։ Ինչպէ՞ս, ուրեմն, նա կարող է ձգել այդ ժողովուրդը և հեռանալ։

Մտածեցի հեռախօսով կապուել Արամի հետ և իմանալ Ազգ. Խորհուրդում, գրասենեակում նրա չերևալու պատճառը։ Երբ զանգահարեցի, պատասխանեց Արամի կինը։ Իմ հարցին, թէ ինչո՞ւ Արամը չի երևում, վշտացած պատասխանեց թէ ինքն էլ չի իմանում, թէ ի՞նչ է պատահել, ոչ ոքի չի ուզում տեսնել։ Ծանրապէս ազդուեցի։

Մտածում էի հեռախօսելուց յետոյ գնալ Արամի մօտ։ Բայց տիկնոջ հետ խօսելուց յետոյ հրաժարուեցի այդ մտքից։ Յաջորդ օրը ևս Արամը չերևաց Ազգ. Խորհրդի շէնքում։ Մղձէն շատերի համար պարզ էր, որ մի բան էր պատահել։ Բնորոշ է, որ մարդկանց հետաքրքրում էր ոչ այնքան այն, թէ ի՞նչ էր պատահել, որքան այն միւս հարցը, թէ ի՞նչ էր լինելու քաղաքի և շրջանի վիճակը Արամը հեռանալու դէպքում։ Մ՛յդ էր մտահոգում, անհանգստացնում մարդկանց։ Բայց քանի Արամը քաղաքում էր, դեռ չէր հեռացել, կասկածամիտները յոյսերը չէին կորցնում։

Այդ երեկոյեան Երևանի Կ. Կոմիտէի նիստում կենսականական հարցը՝ Արամի հարցն էր։ Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ Արամը չէր երևում հրապարակում և փակուել էր իր բնակարանում ու որտեղի՞ց էր սնունդ առել Արամի քաղաքը քաղցելու լուրը։ Ժողովրդին ներկայ էր և՛ Դրօն, որը թէև Կ. Կոմիտէի անդամ չէր, բայց գրեթէ միշտ ներկայ էր լինում Կ. Կոմիտէի նիստերին։ Ոչ ոք կարողացաւ պատասխանել այդ հարցին, ոչ ոք ոչինչ չգիտէր կամ այդպէս էին ձևանում, ինչպէս Դրօն և ես։

Կ. Կոմիտէի ցանկութիւնն էր իմանալ այդ հարցերի պատասխանը՝ վերաբերմունք ցոյց տալու և անհրաժեշտ քայլեր առնելու համար։

Սակայն, քանի որ տրուած հարցերին պատասխանը չեղաւ, մնում էր նրանց պատասխանը լսել Արամից։ Արամն էլ, սովորաբար, մասնակցում էր Կ. Կոմիտէի նիստերին, եթէ այդ ժամերին ազատ էր։ Բոլորս էլ

գիտէինք, որ ևս այժմ տանից դուրս չէր գալիս: Որոշուեց Կ. Կոմիտէի կողմից մարդ ուղարկել նրա մօտ, և լսել նրան:

Ես առաջարկեցի, որ Կ. Կոմիտէի կողմից գնացողը լինի Դրօն, որի կեցուածքը ժողովում՝ Արամի հարցի կապակցութեամբ՝ մտահոգիչ էր: Իմ առաջարկի նպատակն էր՝ պարզել Դրոյի դիրքը: Եթէ համաձայներ և գնար, լաւ. հակառակ պարագայում՝ պէտք է բացատրէր չգնալու պատճառը: Ի մեծ զարմանս ևս ուրախութիւնս, Դրօն անվարան յանձն առաւ այդ պարտականութիւնը և անմիջապէս գնաց:

Կ. Կոմիտէն, մինչև Դրոյի վերադարձը, անցաւ օրակարգի միւս հարցերին: Իսկ ես մտածում էի Դրոյի վարմունքի մասին և մեծ յոյսեր էի կապում նրա առաքելութեան հետ: «Քանի որ նա այդպիսի պատրաստակամութեամբ յանձն առաւ գնալ Արամի մօտ, կը նշանակի թէ գիտակցում է իր մեղքը և դրա հետևանքով ստեղծուած կացութիւնը, այդ իմաստով էլ խօսելու է Արամի հետ,- խնդիրը հարթելու միակ ճանապարհը», յաւատեսութեամբ մտածում էի ես:

Կարճ ժամանակից յետոյ, վերադարձաւ Դրօն և, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, յայտնեց, որ իր առաքելութիւնը անյաջող էր անցել: Մի հանգամանք, որ բոլորիս էլ զարմացրեց ու մտահոգեց: Կը նշանակէ թէ խնդիրը շատ աւելի լուրջ էր, քան ենթադրւում էր: Օրակարգի բոլոր հարցերը մոռացուեցին, մնաց միայն Արամի հարցը, որը թէև չլուծուեց, ամբողջ ժամանակ իր մասին խօսեցնել տուեց:

Ես չէի մասնակցում, քանի որ ինձ համար հարցը անծանօթ չէր: Ասացի, որ լռում էի, որովհետև խօսք էի տուել այդ մասին ոչ ոքի չասել: Գիտէր, որ այդ Արամի ցանկութիւնն էլ էր: Այնուամենայնիւ, մինչև Դրոյի Արամի մօտ գնալը, անյարմար էի զգում ինձ, պայքարի մէջ էի խղճիս հետ: Բայց Դրոյի անյաջողութիւնից յետոյ, ինձ համար պարզ էր, որ գիտեցածս յայտնելու դէպքում էլ խնդիրը չէր լուծուի, միայն աւելի ևս խճճուելու և վատանալու էին Դրոյի ու միւս ընկերների յարաբերութիւնները, ինչ որ այն պայմաններում անբաղձալի էր կատարելապէս: Բացի այդ, տեսնում էի, որ Դրօն էլ մտահոգուած է ստեղծուած կացութեամբ և անկեղծօրէն ցանկանում էր Արամի վերադարձը, որ ասել է հոգու խորքում զղջում էր և ցաւ էր զգում իր արածի համար: Եւ յետոյ, մտածում էի միւս օրը գնալ Արամի մօտ:

Ժողովը ցրուեց՝ առանց որոշ եզրակացութեան գալու:

* * *

Արամի տանը փակուելու և հրապարակում չերևալու երրորդ օրը նրա քաղաքից հեռանալու լուրը շատերի սեփականութիւնն էր դարձել և ընդհանուր իրարանցում առաջ բերել: Հասկանալի է, որ ամենից շատ մտահոգուած էին պատասխանատու մարմինները՝ Ազգ. Խորհուրդը, Յատուկ Կոմիտէն և քաղաքական կուսակցութիւնները: Բանը հասաւ այնտեղ, որ Ժողովրդական կուսակցութեան Կ. Կոմիտէում խօսք էր եղել

յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Արամի մօտ՝ խնդրելով, որ նա քաղաքը չթողնի և շարունակի իր գործը:

Սակայն, Արամը, մինչ այդ, «պիէշի քարը թափելով», վերադարձաւ գործի: Եւ երբ նա երկու-երեք օր բացակայութիւնից յետոյ, երևաց Ազգային Խորհուրդի շէնքում, ինձ այնպէս թուաց, որ Արամի ներս մտնելով մի տեսակ արև ծագեց ու չքացան բոլոր ստուերները, որոնք շատ մութ էին: Կասկած չունիմ, որ Երևանի բոլոր գործիչներն էլ այս կամ այն չափով նոյն տպաւորութիւնն ու մտածումն ունեցան. բոլորն էլ ազատ շունչ քաշեցին:

Տարօրինակ բան. այնուհետև մինչև վերջ այդ դէպքի մասին՝ ոչ մի խօսք եղաւ ո՛չ որի կողմից: Կարծես թէ այդ դէպքը, որ կաշմարի ծանրութեամբ ճնշում էր մեզ, տեղի չէր ունեցել: Գլխաւորն այն էր, որ Արամը մեզ հետ էր, մնացածի մասին հարկ չկար մտածելու: Հաւանօրէն դեր էր կատարում Արամի կեցուածքը, որ թելադրում էր շրջապատին չխօսել այդ դէպքի մասին:

Արամի այդ կեցուածքով էլ պայմանաւորւում էր նրա վերաբերմունքը այնուհետև դէպի Դրօն: Այդպէս էր, ըստ երևոյթին նրանց համար, որոնք տեղեակ չէին նրանց միջև պատահած տխուր դէպքի պատմութեան:

Ինձ համար պարզ էր, որ նրանց յարաբերութիւնները այլևս այն չէին, ինչպէս որ էին մինչև այդ:

Դրօն, որ մինչ այդ յաճախ երևում էր Ազգային Խորհրդի շէնքում, ոտքը գրեթէ կտրեց. գալիս էր միայն Ազգային Խորհրդի նիստերին մասնակցելու, որոնք տեղի էին ունենում, սովորաբար, երեկոներ և ոչ յաճախ: Արամը քայլ տուեց մի բան էլ, որ անտեղեակ ընկերներին զարմանք պատճառեց: Երբ ստեղծուեց Վարիչների Մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինելու էր Յատուկ Կոմիտէին և որի նախագահը և զինուորական վարիչը Արամն էր, նա ինքնապաշտպանութեան վարիչի պաշտօնը յանձնեց ոչ թէ Դրօյին, որ ամենայարմար թեկնածուն էր, այլ մի ուրիշի՝ ինձ:

Ես յանձն առայ այդ ինձ համար խորթ պաշտօնը, որովհետև դա Արամի ցանկութիւնն էր («մի՛ մտահոգուիր, օգնող կ'ունենաս» հանգստացնում, համոզում էր նա ինձ) և ապա՝ և գիտէի Արամի այդ քայլի պատճառը և իմ հոգու խորքում արդարացնում էի նրան: Եթէ Դրօն այդ մարմնի (որ օրուայ կառավարութիւնն էր) անդամ լինէր, ի՞նչ երաշխաւորութիւն կար որ նրա նիստերից մէկն ու մէկում որևէ պատճառաւ կրկին չէր կորցնի գլուխը և նորից չէր ստեղծի ծանր կացութիւն: Դրոյի ծանօթ վարմունքից յետոյ, Արամի վերաբերմունքը այս դէպքում պայմանաւորւում էր այդ մտահոգութեան թելադրանքով:

* * *

Ոչ-դաշնակցական Երևանը Արամին չէր ճանաչում: Նրա մասին, ի հարկէ, լսել էր, բայց միայն այդքան. անձնական փորձով նրա հետ գործ

չէր ունեցել: Եւ ահա՝ նրա Երեւան գալուց ու գործի անցնելուց յետոյ, անհաւատալիօրէն կարճ ժամանակի միջոցում նա ուղղակի նուաճեց ազգային-հասարակական կեանքին լծուած բոլոր հոգիները: Նրա հեղինակութիւնը, ազդեցութիւնը աճում էր օրից օր: Նրա հմայքի առջեւ խոնարհւում էին ամէնքը:

Բնական է, որ դաշնակցականները գաղափարակից տաղանդաւոր գործիչի մասին հիացումով խօսէին: Բայց Արամի մեծութիւնը, ի միջի այլոց, վկայում է և՛ այն հանգամանքը, որ նրա հետ աշխատող ոչ-դաշնակցականներն էլ անպայման ենթարկւում էին նրան ու, պատեհ առիթի, միայն գովասանքի ու հիացմունքի խօսք անում նրա մասին:

Միայն մի երկու օրինակ:

Արամը մեռաւ 1919-ի Յունուար 29-ին: Մահուան տարեդարձին Երեւանում հրատարակուող «Յառաջ»ի խմբագրութիւնը թերթի մի յատուկ համար պիտի նուիրէր նրա յիշատակին: Ինձ եւ առաջարկուեց մի բան գրել: Ես այն ժամանակ անկարող էի Արամի մասին մի տող անգամ գրի առնել: Բայց, նախապէս խօսելով խմբագրի հետ, խնդրեցի Գ. Պետրոսեանին «Յառաջ»-ի այդ համարի համար գրել մի յօդուած:

Գ. Պետրոսեանը Երեւանում աշխատում էր ժողովրդականների հետ: Յեղափոխութեան սկզբնական շրջանում, ռուս տիրապետութեան ժամանակ նախանգական գործադիր կոմիտէի աչքի ընկնող անդամներից էր: Նոյն ժամանակները Ժողովրդական կուսակցութիւնը Երեւանում հրատարակում էր ռուսերէն մի թերթ, որի փաստական խմբագիրն էր: Հետագային, Հայաստանի անկախութեան օրոք, նա մտաւ Քաջազնունու դահլիճին մէջ, իբրեւ արդարադատութեան նախարար:

Իմ դիմումը նա յարգեց և մի երկու օր յետոյ բերեց ռուսերէն լեզուով գրած (հայերէնին լաւ չէր տիրապետում) մի ընդարձակ յօդուած, որ կատարեալ ներբող էր հանգուցեալի յիշատակին:

Ինձ համար այդ անսպասելի էր: Պետրոսեանը ճանաչուած էր իբրեւ շատ շիտակ ու անաչառ մարդ: Ես գիտէի, որ անցեալում, դեռ Ազգային Խորհրդի իշխանութեան օրով, նա առիթ էր ունեցել բողոքելու Արամի դէմ և կամովին հեռանալու մի ժողովից, ուր ներկայ էր գտնուել Արամի հետ և խիստ դժգոհ մնացել վերջինիս մի վարմունքից այդ ժողովում: Ես կարծում էի, որ Պետրոսեանը, իբրեւ անկեղծ մարդ, գնահատելով հանդերձ Արամի արժանիքները, պիտի խօսէր նրա մասին զուսպ ու պաղարիւն ձեւով, ցոյց տալով նաեւ նրա գործունէութեան վրիպումները, պակասաւոր կողմերը: Եւ Պետրոսեանից ես չծածկեցի այդ ամէնը և ստացայ մօտաւորապէս այս պատասխանը.-

«Ես բնաւ չեմ առաջնորդուել այն մտքով, թէ նման դէպքերում միա՛յն լաւը պէտք է գրել: Ոչ: Գրել եմ այն, ինչ որ թելադրել են ինձ Արամի մասին ունեցած տպաւորութիւններս: Դուք ակնարկում էք Ազգային Խորհրդում տեղի ունեցած դէպքին, երբ ես բողոքեցի Արամի վարմունքի դէմ և զայրացած հեռացայ ժողովից: Այո՛, այն ժամանակ Արամի վարմունքը

Ջուբեանի (Երևանում աշխատող յայտնի էս-էր) նկատմամբ կոպիտ և վիրաւորական քուաց ինձ: Բայց ես Արամի այդ վարմունքը հասկցայ, երբ սկսեցի աշխատել նրա հետ միասին: Ես այժմ ոչ մի կասկած չունեմ, որ ինչ որ Արամն անում էր՝ անում էր հասարակական շահերի թելադրանքով: Անձնական միտումներից զուրկ էին նրա վարմունքներն ու վերաբերմունքները և այդ պատճառով ընդանալ, վիրաւորուել նրանից անվայել էր հասարակական գործիչի համար: Ես Արամին պատկերացնում եմ իբրև մի ոչ սովորական տարերային ուժ, որ հաստատուն քայլերով առաջ էր գնում՝ քաշելով իր յետևից իր շրջապատը: Ազգային Խորհրդի օրով նա յաճախ իր զարմանալի առողջ բնազդով սրհամարհում էր մեր օրէնքներն ու կարգերը՝ յանուն մեր ժողովրդի շահերին: Սովորական մարդը այդպիսի բան չի կարող անել: Արամի այդ ուժը ես ամբողջ ժամանակ զգում էի, երբ նրա հետ աշխատում էի Քաջազնունու կառավարութեան մէջ: Քանի անգամ կառավարութեան նիստերում դիտելով ու լսելով Արամին՝ հիացած մտածում էի. «Այս մարդը բնական դպրոց է աւարտել ու Տաճկաստանի խորքերում անցկացրել իր կեանքը»: Կառավարութեան անդամները բոլորն էլ կրթութեամբ Արամից բարձր էին, սակայն, նիստերում յաճախ իշխում էին նրա մտքերը: Արամը իր բնական խելքով մեր բոլորից էլ շատ շատ բարձր էր: Քաջազնունու կառավարութեան մէջ աչքի էր ընկնում և՛ Կարճիկեանը, բայց ոչ Արամի հետ համեմատած: Կարճիկեանի անունը յիշեցի, որովհետև Արամին ամենից լաւ նա էր հասկանում և յաճախ Արամի մտքերը նրա բանաձևով էին անցնում»:

Գ. Պետրոսեանի յօդուածը յանձնեցի «Յառաջ»-ի խմբագրին: Չգիտեմ ինչո՛ւ, «Յառաջ»-ի խմբագրութիւնը իր մտադրութիւնը չիրագործեց, և Արամի յիշատակին խոստացած համարը լոյս չտեսաւ:

* * *

Մինչև Քաջազնունու Թիֆլիսում կազմած կառավարութեան Երևան գալը, Երևանում գործում էր Արամի նախագահութեամբ ու գլխաւորութեամբ կազմուած կառավարութիւնը՝ Վարիչների Մարմինը, որ ուժեղացրած կազմով փոխարինել էր Յատուկ Կոմիտէին: Նախագահը և գինուորական վարիչը Արամն էր: Նախ քան վերջին սլաշտօնր յանձն առնելը, նա ցանկութիւն յայտնեց, որ այդ պաշտօնը տրուի մի հեղինակաւոր գինուորականի: Այդ ցանկութիւնը Արամը յայտնում էր նախ՝ որովհետև շատ էր ծանրաբեռնուած ու ֆիզիքապէս հնարաւոր չէր. ամէն տեղ հասնել, և ապա՝ նախատեսում էր, որ գինուորական շրջանում (յատկապէս՝ սպայութեան վերին խաւերի մէջ) խօսք ու զրոյց էր լինելու և ոչ ցանկալի տրամադրութիւններ էին ստեղծուելու:

Արամին ընտրողները չյարգեցին նրա այդ առաջարկը՝ քաջ գիտակցելով, որ այն պայմաններում ոչ ոք կարող էր փոխարինել նրան ու կատարել նրա գործը:

Սակայն, Արամի նախատեսութիւնը արդարացաւ: Կարճ ժամանակ անցած, սպայական շրջաններից սկսեցին դժգոհութեան ձայներ լսուել թէ՝ որքան էլ յարգելիս ու գնահատելիս լինէին Արամին, այնուամենայնիւ, զինուորական վարիչը զինուորական մասնագէտ պէտք է լինէր:

Արամը Հ. Յ. Դ. Երևանի Կ. Կոմիտէում ևորից բարձրացրեց Զինուորական վարիչի պաշտօնը զինուորականի յանձնելու հարցը և այս անգամ կտրուկ և անառարկելի ձևով:

Կ. Կոմիտէի հէնց նոյն նիստում որոշուեց դիմել զօրավար Սիլիկեանին՝ նրա տրամադրութիւնը իմանալու համար և՝ համաձայնութեան դէպքում՝ Ազգային Խորհուրդի անունից նրան առաջարկելու զինուորական վարիչի պաշտօնը:

Կ. Կոմիտէի յանձնարարութեամբ ես այդ առթիւ եղայ զօրավար Սիլիկեանի մօտ: Ահա մեր խօսակցութիւնը էական գծերով.-

-Ինչո՞ւ է Արամը հրաժարւում,- հետաքրքրուեց զօր. Սիլիկեանը, նախապէս հրաժարուելով իրեն առաջարկած պաշտօնից:

Երբ պատճառն իմացաւ, ասաց, որ լսել էր այդ դժգոհութիւնները, բայց ոչ մի արժէք չէր տուել նրանց:

-Դա ժամանակաւոր բան է: Դժգոհները չեն ճանաչում Արամին: Երբ ճանաչեն, կը համոզուեն, որ ներկայումս նա միակ կարող մարդն է այդ պաշտօնի համար: Ես ինչո՞ւ եմ հրաժարւում. որովհետև մէկ է՝ ես ինքս առանց Արամի ոչինչ չեմ անելու: Ես այժմ էլ առանց Արամի հետ խորհրդակցելու՝ ոչ մի կարևոր քայլ չեմ առնում, իսկ վարիչի պաշտօնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մօտ: Ո՛չ մի զինուորական վերարկու ոչ ոքի չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի: Ես ինքս անձամբ կը խնդրեմ, որ նա չքողնի այդ պաշտօնը:

Եւ Արամը մնաց իր պաշտօնում: Նրան փոխարինող չգտնուեց:

Շատ բնորոշ է նաև Յովհաննէս Մելիքեանի վերաբերմունքը դէպի Արամը:

Յ. Մելիքեանը Ժողովրդական կուսակցութեան ականատր դէմքերից էր Ազգային Խորհրդի օրով սկզբից մինչև վերջ ամենագործունեայ աշխատողներից՝ վարելով միշտ պատասխանատու ու ծանր պաշտօններ: Պարենաւորման ու ելևմտական հարցերում Մ. Մուսինեանի հետ անփոխարինելի գործիչներ էին: Առիթներ եմ ունեցել լսելու նրա կարծիքը այս կամ այն պարագայում՝ Արամի մասին: Բնաւ չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ Ժողովրդական կուսակցութեան այդ ներկայացուցիչը՝ Յ. Մելիքեանը աւելի շատ էր գնահատում Արամին, քան մենք՝ դաշնակցականներս: Անսահման հաւատ ու վստահութիւն ունէր դէպի Արամի կարողութիւնները և տեղը եկած դէպքում՝ անխառն հիացմունքով էր խոսում նրա մասին:

Բերենք նաև Դաշնակցութեան հին՝ առաջին սերնդին պատկանող կուսակցական ընկերներից Սարգիս Օհանջանեանի կարծիքը Արամի մասին:

Օհանջանեանը զարմանալիօրէն կապուած էր Արամի հետ և միշտ էլ առանձին սիրով, երբեմն ոգևորութեամբ էր խօսում նրա մասին: Մի որոշ չափով Արամին իր աշակերտն էր համարում: Բացւում եղած ժամանակ, տակաւին բոլորովին երիտասարդ, Արամը կարճ ժամանակով կուսակցական գործերով աշխատել էր Օհանջանեանի ծեռքի տակ:

-Մեր կուսակցութեան մէջ ո՛չ ոք Արամի աստղը չունի: Եւ ինչպե՛ս հոյակապ փայլում է այդ աստղը: Լ՛սու լսիր, թէ ինչ եմ ասում քեզ: Հեռուից թէ մօտից ուշադիր հետևել եմ ու հետևում եմ իր գործերին: Մեծ մարդկանց յատուկ քայլերով, թռիչքներով է առաջանում: Արդէն Վանի հերոսամարտը կազմակերպելով ու վարելով՝ Արամը դուրս եկաւ մեր կուսակցութեան սահմաններից ու դարձաւ ազգային դէմք՝ Վասպուրականի հերոսը: Իսկ այժմ մեր այս անհնարին ծանր պայմաններում, մեր աչքերի առջև տես ինչե՛ր է անում: Քեզ բան եմ ասում, մարդ չէ, հրաշք է; Ինչ Ազգային Խորհուրդ, ինչ Կենտրոնական ու Յատուկ Կոմիտէ: Այս ամէնը կան, որովհետև կայ Արամը: Կարո՞ղ ես երևակայել այդ մարմինների գոյութիւնը՝ առանց Արամի: Խաւա՛ր: Լաւ հասկացիր, բան եմ ասում.- Արամն է, որ լուսատրում է բոլորիս ճամբան, և քանի նա կայ, կասկած չունեմ, որ յաջողելու ենք և լոյս աշխարհք ենք դուրս գալու այս... խոր վիրապից: Լա՛ւ լսիր, Արամն էլ միայն մերը չէ, միայն Դաշնակցութեան չէ, նա բոլորինն է: Մի տես, թէ ինչպէս գերել, իր ու գործին հետ կապել ժողովրդականներին, այն ժողովրդականներին, որ Դաշնակցութեան համար լաւ խօսք չունէին պահած: Մազերս ճերմակել էին Դաշնակցութեան մէջ, բայց նման բան լսած ու տեսած չկամ: Արամի աստղին հաւատում ենք ոչ միայն մենք՝ դաշնակցականներս, այլև նրանք՝ ժողովրդականները ու բոլորը: Լսի՛ր, լաւ խմոր ունես, բայց ջահել ես ու անփորձ: Բախտաւոր էր դուք և քեզպէսները, որ Արամը ձեր կողմին է: Պինդ բռնի նրա փեշը ու նրա հուաքիցը դուրս չգաս...

Գրեթէ ամէն անգամ, երբ Սարգիսը խօսում էր Արամի մասին, խօսում էր այդ նոյն ոգով: Երբեմն զգացւում էր այն աստիճան, որ, անկարող լինելով ծածկել յուզումը, թաշկինակը հանում էր ու տանում աչքերին՝ այդ կոշտ ու կռպիտ, կոճղի տպատրութիւն ձգող մարդը:

* * *

Յատուկ Կոմիտէն որոշ իմաստով հայոց առաջին ազգային կառավարութիւնն էր, որ ծնունդ առաւ Երևանի Հայոց Ազգային Խորհրդից, որ Արաբատեան Դաշտի և յարակից գաւառների գերագոյն մարմինն էր, մի տեսակ պարլամենտ:

Յատուկ Կոմիտէի աշխատանքները տևեցին երեք-չորս ամիս: Վերը տեսանք, թէ ի՞նչ պայմաններում և ի՞նչ նպատակով ստեղծուեց այդ

կոմիտէն: Երեք-չորս ամսուայ ընթացքում Յ. Կոմիտէն կատարեց իր վրայ դրուած պարտականութիւնները, որքան որ թոյլ էին տալիս ժամանակի պայմանները: Նրա միջոցով՝ Արամի գլխաւորութեամբ՝ դրուեց մեր ազգային պետական կեանքի առաջին հիմնաքարը:

Յատուկ Կոմիտէն փոքրաթիւ մարմին էր, որ ներկայացնում էր ժամանակի պահանջը: Նրա կորիզը, ինչպէս յիշուեց, կազմում էին երեք հոգի: Հայ Յեղափոխական Մարմնի ներկայացուցիչը և նահանգական կոմիսարը, որոնք իրենց պաշտօնի բերումով, Ազգային Խորհրդի որոշումով, ներկայացնում էին Յատուկ Կոմիտէի անդամներ էին, Յատուկ Կոմիտէի նիստերին, որ տեղի էին ունենում գրեթէ ամէն երեկոյ, կանոնաւոր կերպով մասնակցում էին սկզբնական շրջանում: Կարճ ժամանակից յետոյ նրանք ամբողջովին զբաղուած լինելով իրենց էստաֆետութիւնների գործերով՝ դադարեցին մասնակցել Յատուկ Կոմիտէին նիստերին, իսկ նրա առօրեայ աշխատանքներին երբէք չէին մասնակցում: Մնացած երեք հոգին այլևս ֆիզիքական հնարաւորութիւն չունէին ընդառաջելու ոչ սովորական արագութեամբ զարգացող երկրի պահանջներին:

Կենսական պահանջ էր Յատուկ Կոմիտէի վերակազմութիւնը: Այդ հարցը Արամը դրեց նախ Յատուկ Կոմիտէի և ապա Ազգային Խորհրդի առջև: Որոշուեց Յատուկ Կոմիտէի տեղ կեանքի կոչել ժամանակի ու երկրի պահանջներին համապատասխանող մի նոր մարմին: Այդ գործը, բնականօրէն, յանձնուեց Արամին, որ և Ազգային Խորհրդի հաւանութեամբ՝ կազմեց այդ նոր մարմնի անդամների ցանկը: Այդ մարմինը կոչուեց Վսեմիչների Մարմին:

Անդամներին էին՝ Նախագահ և գիւտարական գործերի վարիչը՝ Արամ, ներքին գործերի վարիչը՝ Սահակ Թորոսեան, պարենաւորման վարիչը՝ Մկրտիչ Մուսինեան, ելևմտական վարիչը՝ Յովհաննէս Մելիքեան, ինքնապաշտպանութեան վարիչը՝ Արշալոյս Աստուածատրեան. ապա քիչ յետոյ Մարմնի կազմի մէջ մտան Բժ. Յ. Տէր Միքայէլեան (Օվի) և Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) նախկին քաղաքագլուխ Կամսարականը:

Վարիչների Մարմինը, փոխարինելով Յատուկ Կոմիտէին, մնաց իշխանութեան գլուխ մինչև Թիֆլիսում կազմուած Հայաստանի Ազգային Խորհրդի և կառավարութեան Երևան գալը:

* * *

Այն օրերին, երբ Վրաստանի և Ատրբէյջանի քաղաքական գործիչները պատրաստւում էին իրենց երկիրը անկախ հռչակել՝ այլևս աննպատակայարմար համարելով իրենց համար Անդրկովկասի Միութիւնը (Մէյմը), այն օրերին, երբ Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհուրդը. լքուած հարևաններից, շուար ու յուսահատ վիճակ էր ապրում, ալևոր Մասիսի աչքի առջև, Արարատեան Դաշտում, Սարդարապատի տակ ու նրա շուրջը զարմանալի անցքեր էին տեղի ունենում:

Երևանի ու նրա շուրջը խմբուած հայութիւնը մաեու ու կենաց պայքարի էր ելել իր դարաւոր ու նամարդ թշնամու դէմ, որը եկել ու բախում էր Վաղարշապատի դռները:

Ժողովուրդների կեանքում լինում են վայրկեաններ, որոնք խոլքից ազատում են նրանց հոգին ու անջնջելի կերպով տպաւորում հետագայ սերունդների յիշողութեան մէջ: Վայրկեաններ, երբ ժողովուրդը հանդէս է բերում բարոյական հոյակապ կորով, երկաթէ կամք, բազուկի անյաղթելի ոյժ:

Ամէն ժողովուրդ իր պատմութեան ընթացքում ունեցել է հերոսական դրուագներ, բայց կան հերոսութիւններ, որոնք հաւասար են հրաշքի:

Ըստ ամենայնի՝ բնական պէտք է համարուէր, եթէ Երևանի, Արարատեան Դաշտի հայութիւնը պարտուէր Սարդարապատի տակ. և ոչ մէկ լեզու հնարաւոր պիտի համարէր դատապարտութեան խօսք ասելու նրա մասին, որովհետև բոլոր պայմանները դասաւորուել էին յօգուտ տաճիկների և ի վնաս հայերի: Անգամ այսօր, տասնեակ տարիներ յետոյ, մարդ առանց ներքին դողի անկարող է յիշել նոյն օրերի յուսահատական պայմանները: Աշխարհից կտրուած, շրջապատուած անտուն ու անտեղ հարազատներով - գաղթականներով, պարենաւորման անմխիթար կացութիւն, հաղորդակցութեան ողբալի միջոցներ. ո՛չ մի տեղից ոչ մի մխիթարական, յուսատու ձայն, և դրա փոխարէն՝ զրկանքներ, հառաչանքներ, արտասուքներ, անվերջ վիշտ...

Հնարաւո՞ր էր մտածել յաղթութեան մասին: Երևանում ոչ ոք այդ մասին չէր մտածում: Անգամ լաւատեսների յոյսը ինքնապաշտպանութեան սահմաններից այն կողմ չէր անցնում: Շատերը այն օրերին պատրաստ էին մինչև մահ ճակատել թուրքի հետ ոչ այն յոյսով, որ արեան գնով հայրենիքը փրկուելու է, այլ այ գիտակցութեամբ, որ յաւ է մեռնել պայքարի մէջ յանուն ազատութեան, քան թէ ապրել թուրքի կրունկներին տակ: Իսկ ընդհանուր մտահոգութիւնը ինքնապաշտպանութիւնն էր՝ թոյլ չտալ, որ տաճիկը աւելի առաջանայ, մտնի Երևան ու ազատ մնացած հայկական շրջանները:

Զարմանալի էր Արամը այդ օրերին: Համատարած յուսալքումի այդ շրջանում նա մնաց միշտ յուսադրող, ոգևորող, հաւատ ու եռանդ ներշնչող: Ահաւոր տագնապի նախօրեակին Արարատեան Դաշտի ու յարակից գաւառների հայութիւնը չունէր իր մէջ բագնուած ուժերի գիտակցութիւնը: Սակայն հերոսութեան հուժկու ալիքը համակեց նրան, երբ սկսուեց ճակատագրական բախումը թշնամու հետ: Արտմի մէջ այդ ուժը ճառագայթում էր սկզբից ևեթ: Նա շարունակ ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգութեան միակ առարկան էր:

Թէև ռազմաճակատի և թիկունքի միջև առանձին տարբերութիւն էլ չկար, բայց Արամի միտքը կլանուած էր առաջին գիծը ամուր ու անսասան պահելու հոգսով: Անընդհատ յարաբերութեան մէջ էր գլխաւոր շտա-

բի հետ, որ աստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամէնքին: Ո՛չ ոք չէր խնայում հնարաւորը:

«Մէկ նշանաբան կ՛իշխէր ամէնուրէք.- դէպի Սարդարապատ, ամէն ինչ ճակատի համար:

Ոգևորիչ զեկոյցներ սկսան հասնել շրջաններից, Էջմիածինն իր գլուղերով, Աշտարակ-Օշականն իր շրջաններով կը խուժէին դէպի Սարդարապատ...

Ժողովուրդը, թողած գարնան աշխատանքը, օժանդակ խումբերով կը դիմէր դէպի ճակատ. պարէն, մթերք, փամփուշտ գիտացիութեան կողմէն, շալակաւորներով, բեռնասայլերով ու անասուններով կ՛ուղարկէին իրենց վաշտերուն:

Ո՞վ կարող է մոռանալ Կոտայքէն իջնող հայ գիտացիներու կամաւոր խումբը՝ առաջնորդութեամբ Թազա գիւղի Չաքար քահանայի: Տրեխաւոր գիտացիները, զինուած իրենց սեփական զէնքերով, տաս օրուայ պաշար սայլերին բարձած, մտան Երևան և անցան Սարդարապատ:

Ինչ ջերմ և սրտագին ճառեր և ողջոյններ տեղի ունեցան Ազգային Խորհրդի շէնքի առջև հայ գեղջուկ զինուորութեան այդ շարժումին առթիւ» (Հայկակ Կոտոյեան):

Երևան քաղաքը գաւառից յետ չէր մնում: Նա ևս իր ունեցածը տրամադրել էր Սարդարապատի անապատներում թշնամուն կուրծք տուող իր հերոսներին: Տներից կապոցներով ու ամաններով պաշար էր ուղարկում, բեռներով թարմ ջուր, որպէսզի հայ զինուորը որևէ պակասի հոգս չունենայ ու վստահ լինի, որ թիկունքը ամբողջովին իր հետ է:

Այդպիսով, թիկունք ու ճակատ հոգով ու մարմնով միացել էին իրար: Ստեղծուել էր հոգեբանական մի մթնոլորտ, ուր ամէն ինչ յիշեցնում էր պարտաճանաչութեան ու պատասխանատուութեան մասին:

Այդ մթնոլորտը գնալով քանձրանում էր: Մարդիկ բարոյապէս աճում, կերպարանափոխւում էին, ուղղակի ւանճանաչելի դառնում: Հայ զինուորը Մայիսի սկզբնկլին և այդ նոյն զինուորը Մայիսի վերջկլին իրար հետ չհամեմատուող մեծութիւններ էին:

Ահա հոգեբանական այդ պայմաններն էին, որ ծնունդ տուին Սարդարապատի հրաշքին: Յաւսահատութիւնը չքացաւ, մարտիկների հոգիները բևեռեցին, միջակները մեծացան, մեծերը հերոսացան: Թիկունք ու ճակատ մի մարմին և մի կամք դարձած՝ դրսևորեցին իրենց հոգու բովանդակ կարողութիւնը: Ծառացան իրենց արեան ծարաւի դարաւոր թշնամու դէմ հեքիաթային հերոսութեամբ ու անհնարինը հնարաւոր դարձրին: Փոքրաթիւ հայ քաջերը Մայիսի 20-ից 26 ոչ թէ միայն կանգնեցրին թուով գերազանց տաճիկ բանակի յաղթական առաջխաղացումը, այլև՛ այդ թշնամուն անսպասելի քաջութեամբ շշմեցրին, ջարդեցին ու փախուստի մատնեցին:

Սարդարապատի տակ հայ զինուորը մինչև վերջ էլ մնաց յաղթողի դերում:

Զօրավար Սիլիկեանը, որ կռիւներից առաջ Ազգային Խորհրդին տուած զեկուցումներով միշտ յուսահատում էր, մի քանի որ Արամին վշտացնում – ցաւ էր պատճառում, ճակատամարտի օրերին ու այնուհետև Կարսի մասին էր մտածում:

Հայ ժողովուրդը Սարդարապատի տակ ապրեց հերոսական վայրկեանները և կերտեց հայոց պատմութեան փառաւոր էջերից մէկը:

Ասացի, որ Արամը մշտական կապ էր պահում ճակատի հրամանատար զօրավար Սիլիկեանի հետ, որը գտնւում էր Վաղարշապատում: Թէև Երևանը շտաբի հետ կապուած էր հեռախօսով և հեռագրով, բայց և այնպէս Արամը գերադասում էր կենդանի կապը – կամ ինքն էր գնում Վաղարշապատ կամ նրա յանձնարարութեամբ Վարիչների Մարմնի անդամներից մէկն ու մէկը:

Յիշում եմ, Սարդարապատի օրերին Արամի ցանկութեամբ բժ. Յ. Միքայէլեանը (Օվի) և ես գնացինք Վաղարշապատ:

Երևանից Վաղարշապատ թէև ընդամէնը 18 վերստ է, բայց մեր ինքնաշարժը այդ կարճ տարածութիւնը հազիւ երեք ժամում կտրեց: Ամբողջ ճանապարհը բռնուած էր գաղթականներով:

Ընդամէնը մի երկու օր առաջ էի եղել շտաբում (որը տեղաւորուած էր ճեմարանի շէնքում): Զօրավար Սիլիկեանի արտաքինի մէջ ոչ մի փոփոխութիւն: Խաղաղ ու հաւատարակշռուած մարդ էր, բնաւորութեամբ զուսպ: Ծանր վայրկեաններին տխրութեան մի թեթև քօղ էր գալիս խստաղէմքին, իսկ յաղթութիւնների մասին խօսելիս՝ փոքրիկ ժպիտ էր խաղում երեսին:

Զօր. Սիլիկեանի հակառակ գնդապետ Վեքիլեանը, սպայակոյտի պետը, երեք-չորս օրուայ մէջ ճակատելիօրէն փոխուել էր, ճիհարել ու գունատուել. գիշեր ցերեկ աշխատանքի սեղանից ու քարտէզից չէր հեռանում:

Սիլիկեանը մանրամասն պատմեց զինուորական գործողութիւնների մասին: Զինուորների ցոյց տուած տոկունութիւնն ու քաջութիւնը գերազանցել էին իր բոլոր ակնկալութիւնները: Գիտենք արդէն, որ ընդհարումների նախօրեակին նա յոռետես էր: Իսկ այժմ թշնամին նոյ զինուորների հարուածների տակ փախչում էր և ինքը դժուարութեամբ էր զսպում այդ զինուորներին:

«Բոլորը մտածում են Ալեքսանդրապոլի մասին», վերջացրեց խօսքը զօրավարը:

Այդտեղ գնդապետ Վեքիլովը միջամտեց, ասելով, որ ինքը կասկած չունի, որ մի երկու օրից յետոյ քաղաք (Ալեքսանդրապոլը) պիտի վերադարձնենք, և այն ժամանակ տաճիկները հարկադրուած յետ պիտի քաշուին Քաշ-Աբարանից և Ղարաքիլիսայից:

Երբ բաժանւում էինք, զօր. Սիլիկեանը ինձ մի կողմ տարաւ ու խնդրեց յայտնել Արամին, որ գործողութիւնների յաջող շարունակութեան դէպ-

քում,- մի բան, որի մասին նա այժմ կասկած չունէ,- ինքը տրամադիր էր շարժուելու Կարսի վրայ՝ մի կողմ թողնելով Ալեքսանդրապոլը:

Յաղթական բանակը իր բարձր տրամադրութեամբ ու յաղթելու կամքով վարակել էր ծերունի հրամանատարին այն աստիճան, որ նա մտածում էր մի հարուածով կտրել թշնամու մէջքը իր տրամադրութեան տակ գտնուող փոքրաթիւ բանակով: Հայկական զօրքերի ընդհանուր թիւը հասնում էր տասը հազարի:

Բայց... զօրավար Սիլիկեանին վիճակուած չէր ստորագրելու այդ հրամանը: Ով գիտէ, ի՛նչ անակնկալներ էր բերելու հայ ժողովրդին նրա քաջարի բանակը, եթէ զօր. Նազարբէգեանի հրամանը զինադադարը կնքելու մասին մի քանի ժամ աւելի ուշ հասնէր զօրավար Սիլիկեանին...

Հոգեբանական այդ վերելքի օրերին էր, որ եկան զինադադարի և հաշտութեան պայմանները: Որքա՜ն դաժան, որքա՜ն սարսափելի էին այդ պայմանները: Որպիսի՛ զայրոյթ ու ցասում առաջ բերին ամէն կողմից: Ճակատից հեռախօսագրերով խնդրում էին Ազգային Խորհրդին չհամաձայնել ու չընդունել թուրքերի պայմանները:

Սիլիկեանը, Նազարբէգեանի հրամանը ստանալուց յետոյ, բնականաբար ինքնագլուխ չէր կարող նոր յարձակման հրաման տալ: Խնդրի լուծումն նա ձգեց Երևանի Ազգային Խորհրդին: Սիլիկեանը պատրաստ էր կատարելու Ազգային Խորհրդի կամքը, եթէ վերջինը հրահանգէր նրան՝ չենթարկուել Նազարբէգեանին հրամանին և շարունակել պատերազմը: Ազգային Խորհուրդը, սակայն, այդ կամքը չունեցաւ: Նա շարունակ նիստեր էր գումարում, բայց - առաջին անգամ իր գոյութեան ընթացքում – մեծամասնութեամբ որևէ որոշման վրայ չէր կարողանում կանգ առնել:

Նազարբէգեանի հեռագիրը կաշկանդել էր Արամին: Նա ողբերգութիւն էր ապրում: Այստեղ ևս նրան խանգարում էր նրա պաշտօնական հանգամանքը: Նա ինքնագլուխ չէր, այլ ենթարկւում էր Թիֆլիսին, այսինքն՝ նրա համար էլ պարտադիր էր Նազարբէգեանի հրամանը զինադադար կնքելու մասին,- մի հրաման, որի բուն հեղինակը Անդրկովկասի կառավարութիւնն էր:

Ի՞նչ դրութիւն կը ստեղծուէր Թիֆլիսում Հայոց Ազգային Խորհրդի և Անդրկովկասի կառավարութեան հայ անդամների համար, եթէ Երևանը չենթարկուէր այդ կառավարութեան, ըմբոստանար և ինքնագլուխ քայլեր անէր:

Արամը շատ լաւ ծանօթ էր այն փոխյարաբերութիւններին, որ գոյութիւն ունէին Թիֆլիսում վրացիների, ատրբէյջանցիների և հայերի միջև: Դիտէր, որ հայերի համար իր հարևանների վերաբերմունքը, մեղմ արտայայտուած, բարեկամական չէր, և եթէ իր ընկերները Թիֆլիսում համաձայնել էին զինադադար կնքել թուրքերի հետ, կը նշանակի՝ պատճառներ ունեցել էին:

Բացի այդ, կար մի հանգամանք, որ չէր կարող չազդել Արամի վրայ: Ինչպէս տեսանք, Սարդարապատի ճակատում յաղթութիւնը ըստ ամե-

նայնի հայերի կողմն էր: Սակայն, միւս ճակատներում մեռնից դրութիւնը այնքան էլ փայլուն չէր. յատկապէս ծանր օրեր էր ապրում Ղարաքիլիսայի ճակատը: Այդ բանը գիտէր Արամը, և ահա թէ ինչպէ՛ս:

Սարդարապատի երանելի օրերին հեռագրատնից հաղորդեցին, որ Դիլիջանից Արամին խնդրում են հեռագրաթելի մօտ: Խնդրողը Սարգիս Մանասեանն էր, որ Ղարաքիլիսայի շրջանի զօրամասի կոմիսարն էր:

- Երևի տեղեկութիւններ է ուզում: Նեղութիւն քաշիր, Արշալոյս, գնա, խօսիր ու հաղորդիր ինչ որ գիտես,- դիմեց ինձ Արամը:

Իմ և Ս. Մանասեանի միջև տեղի ունեցաւ այսպիսի մի խօսակցութիւն.-

Ս.Մ. – Ո՞վ է խօսողը:

- Ա. Ա.-ն:

Ս.Մ. - Ես խնդրել էի Արամին: Նորից խնդրում եմ, ասացէք, որ կարևոր խօսակցութիւն ունեմ:

- Արամի յանձնարարութեամբ ի վիճակի եմ պատասխանելու ձեր հարցերին: Նա այժմ անկարող է կտրուել աշխատանքից և գալ հեռագրատուն:

Ս.Մ. – Ի՞նչ տեղեկութիւններ կան ճակատից:

- Դրութիւնը աւելի քան մխիթարական է: Ամբողջ գծի վրայ մերոնց յարձակումը պսակուել է մեծ յաջողութեամբ, թշնամին ամէնուրէք նահանջում է, մերոնք ոգևորուած են:

Ս.Մ. - Եղբայր, ես խնդրում եմ ճիշդ տեղեկութիւններ տալ: Երեխայ չեմ և ոգևորուելու կարիք չունեմ:

- Զարմանում եմ, որ չէք վստահում ասածներիս: Ասենք, մի քանի օր առաջ այս յաջողութիւնների մասին այստեղ էլ ոչ ոք չէր երազում: Բայց այժմ ես ձեզ տեղեկութիւն եմ տալիս կատարուած փաստի մասին: Այդ տեղեկութիւնները քաղուած են զօրավար Սիլիկեանի հեռախօսագրից: Հայ զինուորների տրամադրութիւնը անգերազանցելի է: Հրամանատարութիւնը մտածում է օգտագործել այդ տրամադրութիւնը և անընդհատ առաջ խաղալ: Ժողովրդի տրամադրութիւնն էլ շատ բարձր է, և նա ամենայն պատրաստակամութեամբ ընդառաջ է գնում իրենց արած պահանջներին:

Այնուհետև իմ հարց ու փորձին Մանասեանը ճնշուած տրամադրութեամբ ու մռայլ գոյներով նկարագրեց կացութիւնը Ղարաքիլիսայի և Դիլիջանի շրջաններում: Տաճիկները, մեծ թւով օգնական ուժ ստանալով, վերագրաւել էին երեք-չորս օրուայ կատաղի կռիւներում իրենց կորցրած դիրքերը և բարձ ուժերով սպառնում էին անօգնական ու յոգնած հայ ուժերին:

Ծանր տպաւորութեամբ վերադարձայ Ազգային Խորհուրդ և պատմեցի Արամին Մանասեանի հետ ունեցածս խօսակցութիւնը:

Այդ ամէնի հետ Արամը չէր կարող հաշուի չնստել: Լուռ ու մռայլ, անտեղեակ դրսի աշխարհի անցուդարձին. նա անհամբեր սպասում էր զօր.

Նազարբէգեանին ու գրեթէ չէր մասնակցում (առաջին անգամ լինելով) Ազգային Խորհրդի նիստերին: Իսկ Ազգային Խորհուրդը ալեկոծւում էր, բայց մի ընդհանուր լեզու չէր կարողանում գտնել:

Դաշնակցութեան ներկայացուցիչները Ազգային Խորհրդում պահանջում էին չեղեալ համարել զօր. Նազարբէգեանի հրամանը, ընդհանուր հրամանատար նշանակել զօր. Սիլիկեանին և պատերազմը շարունակել: Այդ առաջարկը յենւում էր ժողովրդի տրամադրութեան վրայ: Հաշտութեան պայմանների դէմ էին թէ զէնքի տակ գտնուողները ու թշնամի հարուածող զինուորները, և թէ՛ թիկունքի բնակչութիւնը:

Ղամարլուի շրջանը, Արարատեան Դաշտի սիրտը, բազմաթիւ ներկայացուցիչներ էր ուղարկել Երևան Ազգային Խորհրդին յայտնելու, որ նրա տրամադրութեան տակ է դնում իր շրջանի զէնքի ընդունակ բոլոր մարդկանց և շրջանի հարստութիւնը ու խնդրում՝ չընդունել զինադադարի պայմանները ու շարունակել պատերազմը: Նոյն պահանջները բակում էին Հ.Յ. Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէի դուռը:

Իբրև բողոք հաշտութեան պայմանների դէմ, Ղամարլուի շրջանը Երևան էր ուղարկել նաև բազմաթիւ կանանց, որոնք տղամարդկանց հետ միասին կանոնաւոր շարքերով անցնում էին Ազգային Խորհրդի շէնքի առջևից ու յուզումի մատնում դիտողներին՝ իրենց կեցուածքով զինադադարի պայմանների դէմ ու պատերազմը շարունակելու անսասան կամքով: Անհնարին էր անտարբեր մնալ...

Սակայն, Ազգային Խորհուրդը չընդառաջեց իր դաշնակցական անդամների առաջարկին, և զօր. Սիլիկեանը հարկադրաբար ենթարկուեց զօր. Նազարբէգեանին ու կատարեց հրամանը:

Երբ բանը վերջացաւ նրանով, որ տաճիկները հաստատուեցին վեցեօթ կիլոմետրի վրայ Երևանից, քաղաքացիների համար սկսուեցին մղձաւանջային օրեր: Ո՞վ է կարծում այսօր, որ եթէ Գերմանիա չպարտուէր, կամ մի քիչ աւելի երկար դիմանար, տաճիկները չէին մտնելու Երևան: Սարդարապատից յետոյ, նրանց խանգարեց Բագուն իր հերոսամարտով, իսկ Բագուից յետոյ՝ Գերմանիայի պարտութիւնը: Բայց Երևանը ոչինչ գիտէր, ո՛չ Բագուի, ոչ Գերմանիայի մասին և չէր կասկածում, որ թուրքերը մտնելու էին Երևան: Անել, դժոխային կացութիւն էր ստեղծուել, և զարմանալի էր, որ բոլորի ջղերն էլ ծայրայեղօրէն լարուած էին...

Ազգային Խորհրդի անդամներից մի քանիսի մէջ միտք էր ծագել հեռացնել Արամին քաղաքից՝ անակնկալի դէպքում փրկած լինելու համար նրա կեանքը: Նրանք մտածում էին, որ Երևանից յետոյ ազատուող ժողովուրդը, եթէ գլուխ ունենար, կը կազմակերպէր իր ինքնապաշտպանութիւնը և երկար կը դիմանար, հակառակ պարագայում հեշտութեամբ կը կորչէր, կը փչանար: Իսկ քաղաքի համար, քանի նա կանգնած էր, Արամը կարող էր աշխատել դրսից:

Այդ խօսակցութիւնը տեղի էր ունենում Արամի առանձնասենեակում, յետագայում պարլամենտի նախագահութեան սենեակը: Արամը նստած էր՝ գլուխը յենած ձեռքերին:

Ես այն տպաւորութիւնն ունէի. որ տրուած առաջարկութիւնը և այդ առթիւ եղած խօսակցութիւնը նրան քնաւ չէին զբաղեցնում: Մէկ էլ վեր կացաւ տեղից և, կարծես ընդհատելով իր միտքը, հանգիստ ու տխուր ձայնով ասաց, թէ իրեն համար անհնարին, անըմբռնելի բաներ ենք մտածում, թէ իրեն համար գերադասելի է տաճիկների ձեռքով կախաղան բարձրանալ Ազգային Խորհրդի շէնքի առջև (մատով ցոյց տուեց շէնքի դիմաց), քան հեռանալ քաղաքից: Ապա աւելացրեց, որ քաղաքից հեռանալու մասին չէ, որ պէտք է մտածել, այլ քաղաք փրկելու մասին:

Սակայն, քաղաքը և երկիրը փրկեցին յետագայ բարեյաջող քաղաքական դէպքերը՝ Հայաստանի սահմաններից դուրս, որոնց մասին խօսելը դուրս է մեր նիւթի սահմաններից:

Մինչև Թիֆլիսում կազմուած Քաջազունիի կառավարութեան Երևան տեղափոխուելը (1918, Յուլիս 19), «Երևանի կառավարութեան» (իմա նախ Յատուկ Կոմիտէ, ապա՝ Վարիչների Մարմնի, Ա.Ա.) ի վերջոյ յաջողուեց մաքրել ռազմական նշանակութիւն ունեցող գլխաւոր ճանապարհները, խռովութիւնների բոյն ծառայող թրքաբնակ վայրերը (երկաթուղագծի և ընդհանրապէս հաղորդակցութեան հրջաններու, Ա.Ա.) և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակայ հրջաններում: Նա միջոցներ ձեռք առաւ դասալքութեան և աւազակութիւնների դէմ: Նրա տրամադրութեան տակ կային 10-12.000 բաւականին մարզուած զինուորներ: Նիւթական դրութիւնը կարգաւորելու համար, պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրայ, որը տալիս էր անտրտունջ, անգամ սիրով «երկար պահերով» քաղաքացիները հերթաշար էին կազմում Ազգային Խորհրդի շէնքի մուտքի առաջ՝ իրենց վրայ դրած տուրքը վճարելու համար: «Երբէք, գուցէ, հայ կեանքում իշխանութիւնը և հասարակութիւնը այնքան համերաշխ միութիւն չէին կազմել, քան 1918 թուի գարնան ու ամառուան պատմական ամիսներին Արարատեան Դաշտում, Մասիսի հովանու տակ» (Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Բ. տպագրութիւն, էջ 137):

Այդ իրօք բացառիկ համերաշխութիւնը ստեղծել էր Արամի ներկայութիւնը, որով հնարաւոր եղաւ ընդամէնը վեց ամսուայ ընթացքում այնքա՜ն ծանր պայմաններում գլուխ հանել այն ամէնը, որի մասին խօսք եղաւ վերը:

* * *

Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ կառավարութեան մէջ Արամը ստանձնեց ներքին գործոց նախարարութիւնը, որի մէջ մտնում էին լուսաւորութեան և պարենաւորման բաժանմունքները:

Ընդհանրապէս ներքին գործոց նախարարի պաշտօնը պատասխանատու պաշտօն է համարուում: Սակայն, այդ պաշտօնի պատասխանատուութիւնը բազմապատիկ մեծանում է, եթէ աչքի առջև ունենանք ընդ

հուր և բոց սուր անցած նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան ներքին վիճակը:

«Այո, արցունքի ու արտասուքի ծովից ծնուեց Հայաստանի անկախութիւնը: Ոմանք չէին հաւատում նրան: Անկախութիւն և հանրապետութիւն բառերը դնում էին չակերտների մէջ: Եւ այդպէս վարւելու հիմքերը շատ էին զօրաւոր: Իրօք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախութիւնը այդ պայմաններում թւում էր հեգնանք:

Փաստօրէն հայերի ձեռք մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիւ 12 հազար քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկուած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնուած գաղթականներով ու որբերով, շրջապատուած ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անտեր, անօգնական: Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու թշուառութիւն, կոտորածի սարսափ» (Անդ, էջ 117): Իսկ անողորմ թշնամու բանակի առաջամասերը կանգնած էին Հայաստանի մայրաքաղաքից ընդամէնը մի քանի կիլոմետր հեռու:

Ահա այդ պայմաններում Արամը յանձն առաւ ներքին գործոց նախարարի պաշտօնը: Ս. Վրացեանը աւելի քան իրաւունք ունի երբ գրում է, որ Արամը «միակ մարդն էր, որ այդ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում և պետական շինարարութեան սկսել» (Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 467):

Սակայն, ի մեծ դժբախտութիւն բոլորիս, Արամին այլևս վիճակուած չէր այս անգամ ևս արդարացնելու իր հետ կապուած յոյսերը. նրա օրերը համրուած էին...

Հայաստանի Հանրապետութիւնը, ինչպէս տեսանք, ծնունդ առաւ արտակարգօրէն ծանր պայմաններում: Հանրապետութեան գոյութիւնն ու զարգացումը ապահովելու համար անհրաժեշտ էին նոյնպէս արտակարգ, ոչ սովորական միջոցներ: Արամի միտքը, որքան ես հասկանում էի նրան, աշխատում էր այդ ուղղութեամբ: Սակայն, նրա կեանքի թելը կտրուեց շատ շուտ, և նա հնարաւորութիւն չունեցաւ իրականացնելու իր մտածումները – մտադրութիւնները:

Իր այդ մտածումները Արամը որոշ չափով արտայայտեց մի դէպքի կապակցութեամբ, որի պատմութիւնը անտեղի չեմ համարում բերել այստեղ: Մանաւանդ, որ դա կապ ունի Ռուբէնի մի վարմունքի հետ անկախութեան գրեթէ առաջին օրերին,- Ռուբէնի, որը հոգով-սրտով Արամի հետ էր լինելու նրա ծրագիրների իրագործման մէջ, ինչպէս որ Արամ Ռուբէնի հետ էր վերջինի ձեռնարկած ու գլուխ հանած ազգայինպետական անմահ գործի՝ հանրապետութիւնը թշնամի տարրերից մաքրագործելուն մէջ:

Այդ պատմութիւնը, որ որոշ կրճատումներով անելու եմ վարը, ես բերել եմ իմ անձնական յուշերում Ռուբէնի մասին «Հայրենիք» ամսագրում, 1954 Յուլիս:

1918-1919-ին, այսինքն՝ Հանրապետութեան ստեղծման և կազմակերպման առաջին տարին, երկիրը ինչպես կը յիշուի, անօրինակ ծանր վիճակ էր ապրում: Փոքրիկ Հայաստանը լեփ լեցուն էր գաղթականի բազմութիւններով, իսկ եղած միջոցները բաւական չէին՝ տեղափոխների կեցական պահանջները բաւարարութիւն տալու համար: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ համատարած սով էր իշխում այդ ժամանակ մեր նորաստեղծ պետութեան մէջ, պարզելով գարհուրելի տեսարաններ:

Առնենք նրա մայրաքաղաք Երևանը: Փողոցներում, շուկայում, այգիներում մարդիկ գալարւում էին քաղցից, օրն ի բուն լսւում էին հառաչանքներ, տնքոց-նըւոցներ: Աբանոցներում կմախքացած երեխաներ ուտելու բան էին փնտռում՝ բաթիկներով կեղտերը փորելով: Անցնում էիր փողոցով, գործի գնալու ժամանակ, և տեսնում էիր, որ մայթի վրայ պատի տակ կուչ եկած, ցնցոտիներով ծածկուած կին ու երեխայ՝ ցրտից սրսրթում էին ու նւում. ձեռք չէին պարզում, ոչինչ չէին ուզում, աչքերիդ առաջ մաս-մաս մեռնում էին սովից, այլևս անտարբեր դէպի իրենց ճակատագիրը...

Այժմ իսկ, տասնեակ տարիներ յետոյ, առանց յուզում ու արտասուքի անհնար է վերյիշել այն սարսափները, իսկ այն օրերին այլևս արտասուք չէր մնացել մեր աչքերում... Ասում են՝ մարդ ամէն բանի վարժւում է: Վարժուել էինք և՛ մենք... Կան բաներ, որոնց հետ անհնար է հաշտուել: Սակայն, ուժեղ էր այն գիտակցութիւնը, որ ճակատագրի բերմամբ հնարաւորութիւն ունեցողները պէտք է ապրէին ու աշխատէին, որպէսզի վերջ ունենային մայրաքաղաքի փողոցներում և ամբողջ երկրում իշխող սարսափները: «Մեռնողը կը մեռնէր, իսկ ապրողը մեռելի կողքին ապրելու ձևեր ու պայմանները կը մշակէր» (Ռուբէն)՝ երկրի և ժողովրդի վիճակը բարեփոխելու մտահոգութեամբ:

Երևանի քաղաքային ինքնավարութիւնը այդ օրերին ամէն կերպ աշխատում էր նաև գաղթականներին և որբերին օգնութեան հասնել, որքան որ քոյլ էին տալիս իր միջոցներն ու հնարաւորութիւնները, որոնք շատ սահմանափակ էին կարիքի համեմատութեամբ: Մի օր մօտս եկաւ քաղաքային դպրոցներից մէկի տնօրէնը և վրդովուած ձևով յայտնեց, որ դպրոցի շէնքը ապօրինի կերպով գրաւել են և աշակերտներին դուրս արել և, երբ ինքը կամեցել էր միջամտել քանի որ շէնքը գրաւողները որևէ պաշտօնական հագամանք չունէին, գոեհկօրէն անպատուել էին՝ յայտնելով, որ իրենք կատարում են Ռուբէն փաշայի կարգադրութիւնը և որ շէնքը պիտի յատկացուի որբանոցի համար:

Առաջինը անգամը չէր, որ Ռուբէնը կարգ ու կանոնի դէմ անթոյլատրելի ելոյթ էր ունենում:

Ես հանգստացրի դպրոցի տնօրէնին՝ բացատրելով, որ մեր պայմաններում Ռուբէնի նման վարմունքը պատճառներ ունի: Սակայն, ինքս

դժգոհ մնացի նրա այդ վարմունքից և որոշեցի այդ հարցը անհետևանք չթողնել:

Ռուբէնը իր դիրքով և կոչումով պատասխանատու դէմք էր: Նա երկրի օրէնսդրական մարմնի անդամ էր պետական գծով և Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ՝ կուսակցական գծով: Այդպիսով, կրկնակի իրաւունք ուներ ակնկալելու նրանից, որ յարգէր օրէնքն ու հեղինակութիւնը: Սակայն, Ռուբէնի հետ ունեցածս անձնական բացատրութիւնից դժգոհ մնալով և հարցը պետական կամ կուսակցական գծով հրապարակ հանելը անյարմար համարելով՝ ես որոշեցի այդ մասին խօսել Արամի հետ՝ Ռուբէնի ներկայութեան:

Երբ առիթը ներկայացաւ, մենք նորից պարզեցինք մեր տեսակէտները Ռուբէնի վարմունքի մասին Արամի ներկայութեան: Ռուբէնը նկարագրեց քաղաքի փողոցներում և անկիւններում թափուած որբերի վիճակը և այդ որբերին տեղաւորելու, պատսպարելու անհրաժեշտութիւնը ամէն գնով՝ նրանց կեանքը փրկելու համար: Մի բան, որի հետ, ի հարկէ, ես համաձայն էի:

«Եթէ դու համաձայն ես ինձ հետ, ինչպէս առաջին օրն ասացի, իրաւացի և արդարացի պիտի համարես իմ վարմունքը: Երբ խնդիրը վերաբերում է մեր երեխաների կեանքի, ի՞նչ արժէք ունին դպրոցները: Ողջ և ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարևոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը»:

Պատասխանեցի, որ ըստ էութեան նրա ասածների դէմ անհնար է առարկել: Բայց անթոյլատրելի է ու դատապարտելի է նրա վարմունքը ըստ ձևի, որովհետև նա պատասխանատու գործիչ է և պէտք է հասկանայ, որ իր վարմունքով ուրի տակ է առնում օրէնքն ու իրաւունքը ու վատ օրինակ ծառայում ուրիշների համար. և որ նա կարող էր գալ ինքնավարութիւն, խորհրդակցէր այդ հարցի մասին Մ. Մուսինեանի (քաղաքագլխի) կամ ինձ հետ (փոխ-քաղաքագլխի), ու իր ցանկացածը գլուխ բերել օրինական և ոչ ապօրէն ճանապարհով:

Պատասխանեց, որ այդ ամէնը հասկանում է, բայց լաւ գիտէ, որ իմ ցոյց տուած ճանապարհով խնդրի լուծումը պիտի տևէր շաբաթներ. գուցէ և՛ ամիսներ, և այդ ժամանակում չգիտէ, թէ քանի՞ երեխաներ պիտի մահանային: «Իսկ իմ վարմունքով ես արագացրի գործը: Ինքնավարութիւնը քաղ անմիջապէս շարունակի իմ սկսածը: Նման դէպքերում ճնշկանութիւններն ու ըսի-ըսաները չեն, որ պիտի զբաղեցնեն ինձ: Բաւական է, որ ես իմ արածի անհրաժեշտութիւնը գիտակցում եմ, և դու էլ ինձ հետ համաձայն ես, ինչպէս որ պիտի համաձայնի ամէն մի հայ մարդ»:

Արամը ուշադրութեամբ լսելով Ռուբէնին և իմ դժգոհութիւնը նրա վարմունքի առթիւ, ասաց բաներ, որոնք ինչպէս վերը յիշեցի, իրաւունք էին տալիս մտածելու, որ նա խորհում էր արտակարգ պայմանների ստեղծուած կացութեան դէմ:

«Կուսն դէպքեր,- ասաց Արամը,- երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցատրներ ու չարագործներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի բացառիկ ծանր ու անբնական ժամանակներում, երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ և ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր արդեն նախատեսել»: Յիշեց Յատուկ Կոմիտէի շրջանը և այնուհետև մինչև Թիֆլիսից կառավարութեան Երևան գալը և Հայաստանի խորհրդարանի կազմուելը: «Ինչպէ՞ս էինք անում: Նախ՝ օրէնք էինք հրատարակում և ապա՞ գործ անում, գործ կատարում համաձայն այդ օրէնքի: Գիտես, որ կեանքը մեզ հարկադրում էր նախ՝ գործ անել և ապա՝ երեկոները մեր նիստերում վաւերացնել, օրինականացնել մեր այդ արածը: Եւ ես այժմ, գործերի յաջողութեան տեսակէտից՝ երանի եմ տալիս այն օրերին: Շատ յաճախ Խորհրդարանը իր ձգձգումներով, թէ օրինական պատճառաբանութիւններով, կաշկանդում ու խանգարում է մեզ, որ նախարարներ ենք, և դրանից գործն է տուժում: Եւ՛ վայն էր եկել մեզ տարել, եթէ մենք բոլոր պարագաներում առաջնորդուէինք օրէնքով, սպասէինք օրէնսդրական մարմնի խօսքին: Պատահում են դէպքեր, երբ ես հարցերը չեմ տանում քննութեան անգամ կառավարութեան նիստերին, այլ լուծում եմ տեղն ու տեղը իմ պատասխանատուութեամբ, թէև այդ իրաւունքը չունեմ: Բայց ա՛յդ է պահանջում գործի շահը, գործի յաջողութիւնը: Ռուբէնը իրաւացի է իր վարմունքի մէջ», վերջացրեց Արամը իր խօսքը:

Թերևս տեղն է այստեղ նորից վերյիշել Գ. Պետրոսեանի կարծիքը Արամի մասին: Այդ շնորհալի իրաւաբանը, որ իբրև արդարադատութեան նախարար, ինչպէս վերը յիշուեց, աշխատում էր Քաջազնունու դահլիճում և որ իր քաղաքական-ընկերային հայեացքներով ազատական էր, շատ բարձր կարծիք ունէր Արամի մասին նաև այն պատճառով, որ նա՝ Արամը՝ արհամարհում ու ոտքի տակ էր առնում օրէնքները, երբ այդ պահանջում էր ժողովրդի շահը:

«Սովորական մարդիկ,- ասում էր Պետրոսեանը,- կարող են հասկանալ, որ երբեմն օրէնքն ու ժողովրդի շահը հակասում են իրար, բայց համարձակութիւն չեն ունենում գնալու օրէնքի դէմ: Այդ կարող են անել միայն մեծ մարդիկ, որոնց ժողովուրդն էլ բարձր է համարում օրէնքից: Աղպիսիներից էր Արամը»:

Ինձ թւում է, որ Արամին վերջ ի վերջոյ յաջողուելու էր ստեղծել նպաստաւոր պայմաններ Հանրապետութեան կեանքում՝ անարգել ու անկաշկանդ գործունէութեան համար: Նրա անձնական հմայքը, մարդկանց մօտենալու, ընդհանուր լեզու գտնելու, իր և գործի հետ կապելու շնորհքը, գործ կազմակերպելու տաղանդն ու այն գլուխ հանելու ուժեղ, յամառ, բայց որ փշոտ կամքը, միացած ազգի ու հայրենիքի անվարան նուիրումին, զրաւականներ էին, որ նա հասնելու էր իր նպատակին, եթէ Հանրապետութիւնը և ինքը երկար կեանք ունենային:

* * *

1918-ի վերջերին և 1919 սկզբներին բծաւոր տիֆը Երևանում առատ հունձք էր անում: Նրան զոհ գնաց և՛ Արամը:

Թէ՛ իր պաշտօնի բերումով և թէ մանաւանդ իբր հասարակական կենտրոնական դէմք, նա շարունակ յարաբերութեան ու շփման մէջ էր բազմաթիւ մարդկանց հետ՝ ազգաբնակչութեան բոլոր խաւերից: Եւ որովհետև իր մասին մտածելու ազատութիւն չունէր, զարմանալի չէ թնաւ, որ նա էլ վարակուէր տիֆով. բայց հիւանդութեան սկզբի օրերը մնաց ոտքի վրայ. առողջ կազմուածքի տէր էր:

1918-ի Դեկտեմբերին վախճանուեց (նոյնպէս բծաւոր տիֆից) Սարգիս Օհանջանեանը, Դաշնակցութեան հին գործիչներից, որ այդ օրերին ներքին գործոց նախարարութեան գործավարն էր: Արամը ուղեկցեց ընկերոջ դագաղին, բայց մինչև գերեզմանատուն գնալ չկարողացաւ: Հիւանդութիւնը զգալ տուեց: Կէս ճամբից նա վերադարձաւ: տուն ու պառկեց՝ առանց իմանալու հիւանդութեան բնոյթը: Երբ պարզուեց որ հիւանդութիւնը տիֆ է, նա չափազանց անտարբեր վերաբերմունք ցոյց տուեց: Վիշտը, կասկածը, երկիւղը մինչև վերջ խորթ մնացին նրան: Ընդհակառակը, տրամադրութիւնը լաւ էր ու իր տրամադրութեամբ վարակում էր մտերիմներին ու այցելուներին:

Բծաւոր տիֆը այդ տարի Հայաստանում յատուկ դաժանութեամբ էր արտայայտում և աջ ու ձախ կոտորած անում: Բաւական է ասել, որ Երևանի պէս փոքր քաղաքում չորս բժիշկ (Անդրէասեան, Զաքարեան, Շահպազեան, Նալբանդեան) զոհ գնացին այդ հիւանդութեան: Բնական էր, որ մարդիկ զգուշանում էին, իսկ հիւանդները՝ ահ ու սարսափով անցկացնում իրենց օրը:

Երբ Արամի հիւանդութիւնը պարզուեց, Երևանի բժիշկներից շատերը ինքնաբերաբար ոտքի կանգնեցին: Դրանց մէջ էր և բժիշկ Ս. Կամսարականը: Սա միաժամանակ բժշկում էր և պետական վերահսկիչ Մինաս Բերբերեանին, որը նոյնպէս հիւանդ էր բծաւոր տիֆով: Այդ նոյն օրերին կինս էլ հիւանդ էր, նոյնպէս տիֆով: Նրան ևս բժշկում էր Կամսարականը, որը, լաւ բժիշկի համբաւ ունենալուց զատ, մի շատ համակրելի ու սիրալի անձնաւորութիւն էր: Որևէ կուսակցութեան չէր պատկանում: Բժիշկը նախ այցելում էր Բերբերեանին, յետոյ Արամին, ապա գալիս էր մեզ մօտ:

Բնականաբար, ես ամէն անգամ հետաքրքրւում էր Բերբերեանի և Արամի առողջութեամբ, բէև վերջինիս մօտ լինում էի օր ու մէջ: Բժիշկ Ս. Կամսարականը, ամէն անգամ էլ առանձին գոհունակութեամբ էր խօսում Արամի մասին:

- Զարմանալի մարդ է: Ինչ հիւանդ. ես նրա մօտ հանգստանում եմ, մանաւանդ Բերբերեանից յետոյ: Սա ամբողջ ժամանակ դժգոհում է, գանգատւում, սարսափում իր վիճակից, յիշում է իր լաւ անցեալը և ողբում ներկան: Սիրտս ճմլւում է նրա մօտ: Իսկ Արամի մօտ ամբողջ ժամանակ տրամադրութիւնս լաւ է լինում: Ոչ մի գանգատ, ոչ մի սրտնեղութիւն:

Հիւանդ տեղով մեզ՝ բժիշկներիս ձեռք է առնում, ծաղրում է, որ բծերը[314] լաւ չպահեցինք ու նրանք էլ խռովեցին ու փախան և որ լաւ «հեքիմ» չենք»: Խօսում է այլևայլ նիւթերի մասին: Իր հիւանդութիւնով, կարծես, չի հետաքրքրւում: Այո՛, զարմանալի մարդ է Արամը:

Այդ օրերին պարկած էին, ի միջի այլոց, և՛ Սահակ Թորոսեանը, ինժ. Թորգոմ Նիկողոսեանը, քաղաքային վարչութեան անդամ Յակոբ Յարութիւնեանը (վերջին երկուսը վախճանուեցին), որոնց այցելում էի յաճախ: Երբ գալիս էի Արամի մօտ, միշտ հետաքրքրւում էի իր մասին, միշտ էլ պատասխանում էր՝ «լաւ եմ»: Եւ այդ ասում էր ոչ թէ նրա համար, որ լաւ էր, այլ որպէսզի մենք չանհանգստանայինք: Իսկ իրապէս լաւ չէր: Իր վիճակը գնալով բարդացաւ ու վերին աստիճան սաստկացաւ: Հիւանդութեան 18-րդ օրը կորցրեց գիտակցութիւնը և գրեթէ մինչև վերջ մնաց այդ վիճակում՝ օրհասական պայքար մղելով հիւանդութեան դէմ: Եւ մահը յաղթեց: Յունուար 29-ին Արամը այլևս չկար:

Գիտակցութիւնը կորցնելուց յետոյ, մի երկու անգամ, շատ կարճ ժամանակով, ուշքի եկաւ: Սկզբներում Արամի վիճակը բժիշկներին մտահոգութիւն չէր պատճառում. փտուած էին, որ նրա առողջ կազմուածքը վերջ ի վերջոյ պիտի յաղթանակէր: Բայց երբ ուշագնացութիւնը տևեց շատ երկար, նրանց սիրտը կասկած մտաւ: Եւ այդ կասկածը նրանք բարձրաձայն յայտնեցին հիւանդի մօտ, վստահ, որ նա չի կարող լսել: Սակայն, որքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ հիւանդից լսեցին.

- Ի՞նչ էք ասում, ոտքս գետին տամ՝ սարերը կը դղրդան:

Եւ այնուհետև բժիշկները որքան աշխատեցին, այլևս ոչինչ չլսեցին նրանից:

Թէև քաղաքն այն օրերին լի էր հիւանդներով, գրեթէ ամէն օր յուղարկաւորութիւններ էին տեղի ունենում, և մարդկանց սիրտը քարացել էր, բայց Արամի վիճակով հետաքրքրւում էին ամէնքը և ուշադրութեամբ հետևում նրա հիւանդութեան, որի բարդանալուց յետոյ, մարդիկ սկսեցին մեծ անհանգստութիւն արտայայտել: Երբ Արամը գիտակցութիւնը կորցրեց՝ քաղաքում ծայր տուին չարագուշակ լուրեր:

Անծամբ երկու-երեք անգամ, փողոցով անցնելիս, լսել եմ Արամի մահուան մասին այն ժամանակ, երբ բժիշկները դեռ իրենց յոյսը չէին կորցրել: Այդ լուրերը, չգիտեմ ի՞նչ ճանապարհով, հասնում էին և՛ Արամի ականջին:

Մի անգամ, մի քանի վայրկեան ուշքի գալով, նա կանչում է իր մօտ կնոջը և հարցնում.

Լսեցի՞ր, Կատիւշա:

Ի՞նչ, Արամ:

Ժողովուրդն ասում է՝ Արամը մեռաւ:

Եւ նորից ընկղմւում է մոռացութեան մէջ:

Դրանից առաջ էլ, նրբ նորից ուշքի է գալիս, հարցնում է Ռոստոմի մասին (այդ ժամանակ Ռոստոմը չկար, վախճանուել էր, բայց Արամը չգիտէր): Տիկինը նրան ուրախացնելու նպատակով պատասխանում է.

Ռոստոմը շուտով պիտի գայ Երևան:

- Դէ՛, հալաւս պատրաստի՛ր: Ռոստոմը որ գայ, վեր եմ կենալու,- ասում է Արամը:

Եւ դարձեալ ուշքը գնում է:

Վ. Մինախտրեանը պատմում էր, որ Արամի մահուանից մի քանի օր առաջ, հիւանդի մօտ եղած ժամանակ նկատում է, որ նա ուշքի գալու փոքրիկ նշաններ է ցոյց տալիս: Փորձում է հետը խօսել:

- Արա՛մ, Արա՛մ, ինչպէ՞ս ես,- կրկնում է մի քանի անգամ:

- Լաւ եմ, լաւ,- վերջապէս հազիւ լսելի ձայնով պատասխանում է հիւանդը:

Արամի վերջին խօսքն էր այդ:

Նա մեռաւ Յունուար 29-ին, ցերեկուայ ժամը 3-ին: Բօթը ինձ հաղորդեցին հեռախօսով:

Երբ մի երկու րոպէ յետոյ, մօտենում էի Արամի բնակարանին, այնտեղից դուրս էին գալիս Յ. Քաջազնունին և Աւ. Սահակեանը: Ներսը, ընդարձակ սրահի մի անկիւնում, լուսամուտի մօտ, տխուր, մտազբաղ կանգնած էր բժիշկ Բաբալեանը: Արամի ննջարանը տանող դուռը բաց էր: Ինքը անշնչացած պառկած էր մահճակալի վրայ: Հարևան սենեակից լսում էին հեծկլտանքներ: Մօտեցայ մահճակալին և ծունկի եկայ...

Ինքնամոռացութիւնից ինձ հանեցին աղիողորմ, սրտամորմոք հառաչանքները: Գլուխս բարձրացրի: Վանեցի քոյրիկն էր, որը խնամում էր Արամին մինչև նրա տիկնոջ Երևան փոխադրուելը:

Սրահը լցուել էր այցելուներով:

Արամի յուղարկաւորութիւնը համաժողովրդական մեծ սուգ էր: Հազարաւոր մարդիկ եկել էին վերջին յարգանք մատուցանելու այն մարդուն, որին վստահել էին իրենց բախտը կեանքի ամենածանր օրերին: Ես գիտէի, թէ ի՞նչ էր եղել Արամը այդ ժողովրդի համար, բայց և այնպէս երբ դագաղը դուրս բերեցինք բնակարանից, այն, ինչ որ տեսայ դուրսը՝ մի վայրկեան սթափեցրեց մեծ կորուստի ազդեցութիւնը ու զարմանք պատճառեց: Աչքդ որ կողմ ուղղում էիր՝ ծով բազմութիւն: Փողոց, տանիք, պատշգամբ, լուսամուտ՝ ամէն տեղ բռնուած էր մեծ ստրածութեան վրայ: Ամբողջ քաղաքը, մեծ ու փոքր, դուրս էին եկել փողոց: Պօղոս-Պետրոս եկեղեցուց սկսած մինչև հանգստարան դիակառքը մնաց դատարկ: Դագաղը տանում էին ձեռքերի վրայ:

Դաշնակցութեան Տան առջև դամբարանականներ խօսուեցին: Հոյակապ էր ու անմոռանալի մանաւանդ Նիկոլ Աղբալեանի խօսքը: Հանգստարանում խօսեցին Յ.Քաջազնունին, Ա. Գիւլխանդանեանը և ուրիշներ:

Այդ օրը Հայաստանի մայրաքաղաքը համակուած էր ընդհանուր սուգով...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կոմս (Վահան Փափազյան, 1876-1973), ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՀԴ անդամ, 1903թ. անցել է Վան ՀՀԴ կազմակերպությունը գլխավորելու, 1906-1907թթ. ղեկավարել է Կովկասից Վան ռազմամթերք փոխադրելու գործը: -Ծանոթ.կազմ.:

[2] Իշխան (Նիկոլ Պողոսյան) ծնվել է Շուշիում, սպանիրացել է Շատախի գավառի Հիրծ գյուղում՝ 1915-ին, ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՀԴ կուսակցության անդամ: 1915 թ. Շատախում հայ-թրքական միջադեպը հարթելու նպատակով նա ուղևորվում է Շատախ, սակայն Հիրծում զինվերը քնած ժամանակ դավադրաբար սպանվում է թուրքերի կողմից: -Ծանոթ.կազմ.:

[3] Շամ, Շամիր կամ Շամիրամ – Հ. Հ. Դաշնակցության Վանի կենտրոնական կոմիտեի ծածկանունն է: -Ծանոթ.կազմ.:

[4] Իշխանը անցել էր Կովկաս, այնտեղից գենք ս. Թադեյի վանք ուղարկելու, որտեղ գտնվող Ա.Մանուկյանը պետք է ապահովեր դրանց երկիր փոխադրումը: -Ծանոթ.կազմ.:

[5] Քար կամ Քարաբերդ՝ Ալեքսանդրապոլի ծածկանունն է:-Ծանոթ կազմ.:

[6] Կովաղաշտ՝ հավանաբար Սուրմալուի ծածկանունն է:-Ծանոթ կազմ.:

[7] Նկատի ունի հին և նոր նմուշի հրացանների փամփուշտներ:-Ծանոթ. կազմ.:

[8] Մեսրոպ Մաշտոց- մակվեցի, հիմնականում զբաղվել է զենքի փոխադրութրան կազմակերպմամբ:-Ծանոթ կազմ.:

[9] Զենքի փոխադրման այդ գիծը սկսվում էր Երևանից, ապա Դավալու-Ջուլֆա-Խոյ(Ավարայր), այնտեղից Աբաղայի դաշտ՝Նազարավան և Խաչան գյուղեր, իսկ այնտեղից Արճակի կամ Թիմարի ճանապարհով Վան:-Ծանոթ կազմ.:

[10] Աբաղայի Խաչան գյուղի ծածկանունն է:-Ծանոթ կազմ.:

[11] Նկատի ունի զենքի վերջին փոխադրումը:-Ծանոթ. կազմ.:

[12] Նկատի ունի հրացան:-Ծանոթ կազմ.:

[13] Խոսքը հատկապես կոզակների համար ստեղծված 1891թ. նմուշի եռագիծ հրացանի մասին է:-Ծանոթ կազմ.:

[14] Ով լինելը հնարավոր չեղավ պարզել:-Ծանոթ կազմ.:

[15] Որ վայրի ծածկանունն է, հնարավոր չեղավ պարզել:-Ծանոթ կազմ.:

[16] Նկատի ունի Կարսը, որտեղ գործում էր ՀՀԴ Ջրաբերդի կենտկոմը:-Ծանոթ կազմ.:

[17] Կրպակ:-Ծանոթ կազմ.:

[18] Նկատի ունի ՀՀԴ 4-րդ ընդհանուր ժողովը, որը գումարվելու էր 1907թ. փետրվարին Վիեննայում:-Ծանոթ կազմ.:

[19] Միալիցք հրացան:-Ծանոթ կազմ.:

[20] Որ վայրի ծածկանունն է, հնարավոր չեղավ պարզել:-Ծանոթ.կազմ.:

[21] Այստեղ և հաջորդ փաստաթղթերում նկատի ունեն զենք փոխադրող բեռնակիր քրդերին:-Ծանոթ.կազմ.:
[22] Նկատի ունի Թեոս Տեղտրիկյանին:-Ծանոթ.կազմ.:
[23] Արամը այդ ժամանակ գտնվում էր սբ. Թադե վանքում:-Ծանոթ.կազմ :
[24] Որ վայրի ծածկանունն է, հնարավոր չեղավ պարզել:-Ծանոթ.կազմ.:
[25] Արհեստակցական:-Ծանոթ.կազմ.:
[26] Քմահաճույքները:-Ծանոթ.կազմ.:
[27] Հետաքրքրության:-Ծանոթ.կազմ.:
[28] Մարտավարության:-Ծանոթ.կազմ.:
[29] Քարոզչություն:-Ծանոթ.կազմ.:
[30] 28-րդ և 29-րդ նիստերը գումարվել են նույն օրը՝ առավոտյան և երեկոյան: Ծանոթ.կազմ.:
[31] Գոյութեան իմաստ:-Ծանոթ.կազմ.:
[32] Ցեղ, տոհմ:-Ծանոթ.կազմ.:
[33] Շրջանային:
[34] Հ. Հ. Դաշնակցության Դ. ընդհանուր ժողովին մասնակցելու համար Վանի շրջանից պատգամավորներ են ընտրվել Արամն ու Սալմանը (Համազասպ Բաղեշցյան): Սալմանը, հիվանդության պատճառով, չի կարողացել մասնակցել ժողովին, և իր ձայնը տվել է Արամին կամ Իշխանին:-Ծանոթ.կազմ.:
[35] Նկատի ունի Մատզեր մակնիշի ատրճանակ:-Ծանոթ.կազմ.:
[36] Թրի, դաշույնի պատյան:-Ծանոթ.կազմ.:
[37] Աբաղայի Խաչան գյուղի ծածկանունն է:-Ծանոթ կազմ.:
[38] Հայդարանցի քուրդ ցեղապետ Մահմեդ բեկի ծածկանունն է, որը օգնում էր զենքի փոխադրության գործին:-Ծանոթ. կազմ.:
[39] Նկատի ունի ս.Թադե վանք- Խաչան գիծը:-Ծանոթ. կազմ.:
[40] Մակուի գավառի Քիշմիշթեփե գյուղի ծածկանունն է:-Ծանոթ. կազմ.:
[41] Հետևում է մեկ անընթեռնելի բառ:-Ծանոթ.կազմ.:
[42] Նկատի ունի ս.Թադե վանքը:-Ծանոթ.կազմ.:
[43] Հավանարար, խոսքը ռումբի մասին է:-Ծանոթ. կազմ.:
[44] Նկատի ունի հրապատիճի տուփ, աման:-Ծանոթ. կազմ.:
[45] Նկատի ունի լեզիրված:-Ծանոթ. կազմ.:
[46] Թուրքական դրամական միավոր, որը համարշեք էր ռուսական 8 կոպեկի:-Ծանոթ.կազմ.:
[47] Նկատի ունի ավարտին հասցնել:-Ծանոթ.կազմ.:
[48] Խոյի ծածկանունն է:-Ծանոթ. կազմ.:
[49] Մակուի գավառի Քիշմիշթեփե գյուղի ծածկանունն է:-Ծանոթ. կազմ.:
[50] Մեսրոպ Մաշտոց- մակվեցի, հիմնականում զբաղվել է զենքի փոխադրության կազմակերպմամբ:-Ծանոթ կազմ.:
[51] Խոսքը ՀՀԴ «Դրոշակ» պարբերականի մասին է:-Ծանոթ. կազմ.:

[52] *Խոսքը Թիֆլիսում 1907թ. հրատարակվող «Խարիսխ» օրաթերթի մասին է:-Ծանոթ. կազմ.:*

[53] *Խոսքը Թիֆլիսում 1907թ. հրատարակվող «Կավկասի առավոտ» թերթի մասին է:-Ծանոթ. կազմ.:*

[54] *Խոսքը Թիֆլիսում 1907թ. հրատարակվող «Խարիսխ» օրաթերթի մասին է:-Ծանոթ. կազմ.:*

[55] *Խոսքը Երևանի մասին է:-Ծանոթ. կազմ.:*

[56] *Նկատի ունի մեկ փոխադրմամբ:-Ծանոթ. կազմ.:*

[57] *ՀՀԴ գործիչ Գևորգ վրդ. Նալբանդյանի ծածկանունն է, որը այդ ժամանակ ս. Թադեի վանքի վանահայրն էր:-Ծանոթ կազմ.:*

[58] *ՀՀԴ գործիչ Ղազարոս Ղազարոսյանի ծածկանունն է, որը այդ ժամանակ ուսուցիչ էր Ատրպատականում:-Ծանոթ կազմ.:*

[59] *Աբաղայի Խաչան գյուղի ծկանունն է:-Ծանոթ կազմ.:*

[60] *Թռչուն-մոկացի զինվոր, զբաղվում էր զենքի փոխադրմամբ:-Ծանոթ. կազմ.:*

[61] *Լեռնապարի ՀՀԴ գործիչներից, Արմաշի դպրեվանքի շրջանավարտ:-Ծանոթ. կազմ.:*

[62] *Փաստաթուղթը վնասված է:-Ծանոթ. կազմ.:*

[63] *Արամը իր հուշերում պատմում է, որ արճեշցի Ալի բեյը իր բշնամի ալջավազցի Քոռ Հյուսեին փաշայի դեմ եղած կռիվների ժամանակ օգնություն էր խնդրել: Նրա մոտ էր ուղարկվել խմբապետ Մոդոն մի քանի ընկերով, որը մեծ անուն էր հանել և Ալի բեյը հաղթող էր դուրս եկել:-Ծանոթ. կազմ.:*

[64] *Ստորագրությունը անընթեռնելի է, այլ ձեռագրով ավելացված է Իպրահիմ:-Ծանոթ. կազմ.:*

[65] *Ս.Վրացյանը այդ ժամանակ հանդիսանում էր Ամերիկայում՝ Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» թերթի խմբագիրը:-Ծանոթ. կազմ.:*

[66] *Նամակը անբվակիր է: -Ծանոթ.Ս.Վրացյանի:*

[67] *Անուշադրության չես մատնի:-Ծանոթ. կազմ.:*

[68] *Գրաբերի ով լինելը բոլորովին մոռացել եմ: Նամակներում յիշուած անուններից Հրանտը՝ Հրանտ Կարինեանն է: Բագրունի , որ Վանից թղթակցութիւններ էր գրում «Հայրենիք»ին: Վերջը իսկապէս որ «զուզակ» դուրս եկաւ: Հմայեակ-Համյեակ Խոռոզեան, Մանուկեան: Թոմազեանը-հետագային երգիծաբան Լեո Կամսար, «Հայրենիք»ին աշխատակցում էր Լեո կամ Սար ծածկանունով: -Ծանոթ.Ս.Վրացյանի:*

[69] *Крестовый поход во имя правды // Русская жизнь. Сан-Франциско. 1956, "5 октября. -Ծանոթ.հեղին.:*

[70] *Նիկոլաև Անդրեյ Միխայլովիչ (1858-1926), 1915թ. Կովկասյան բանակի Բայազետյան զորաջոկատի հրամանատար: -Ծանոթ.կազմ.:*

[71] *Ստորագրությունը անընթեռնելի է:-Ծանոթ. կազմ.:*

[72] Ինչ վայր նկատի ունեն, անհասկանալի է: Համանուն գյուղ կար Վանի Հեքյարի գավառում, սակայն դժվար թե այդ գյուղը նկատի ունեն գրության հեղինակները:-Ծանոթ. կազմ.:

[73] Ազգանունը անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:

[74] Գալիկյան Հրանտ (1889-1938)- Հրապարակախոս, ծնվել է Վանում, սովորել Կ.Պոլսի իրավաբանական համալսարանում, եղել է հնչակյան կուս. անդամ, 1922թ. վերադարձել է Հայաստան, աշխատել պետական համալսարանում և գերագույն դատարանում, բռնադատվել է:

[75] Ստորագրություն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:

[76] Ստորագրություն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:

[77] Ստորագրություն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:

[78] Փոխադարձ վարկավորման ընկերության կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:-Ծանոթ.կազմ.:

[79] Բառացիորեն նշանակում է ծաղկավորվել, նկատի ունի աղի փչանալը և գույնը փոխելը:-Ծանոթ կազմ.:

[80] Մառզեր:-Ծանոթ կազմ.:

[81] Չափաման, որ պարունակում է 10 կգ:-Ծանոթ.կազմ.:

[82] Համբարակային գնդապետ: -Ծանոթ.կազմ.:

[83] Մանրավաճառ ապրանք: -Ծանոթ.կազմ.:

[84] Կտորեղեն: -Ծանոթ.կազմ.:

[85] Մանր ապրանքներ: -Ծանոթ.կազմ.:

[86] Արդուզարդի ապրանքներ: -Ծանոթ.կազմ.:

[87] Անպետք, անիմաստ ծախսեր:-Ծանոթ.կազմ.:

[88] Թուրքական ոսկե դրամ, որը համարժեք էր ռուսական 7 ու կես ռուբլու:-Ծանոթ.կազմ.:

[89] Բրաունինգ:-Ծանոթ.կազմ.:

[90] Ինչ խմբագրություն է, հնարավոր չի եղել պարզել:-Ծանոթ. կազմ.:

[91] Հետևում է ևս 12 ստորագրություն:-Ծանոթ.կազմ.:

[92] Հայկազյան կենտրոնական վարժարանը հիմնվել է Մ. Փորթուգալյանի օրոք Վանում, 1870-ական թվականներին:-Ծանոթ.կազմ.:

[93] Մետաղյա: -Ծանոթ.կազմ.:

[94] Մարաբա - սա այն դասակարգն է , որը զուրկ է սեփական հողից և մշակում է բեկական (տվյալ դեպքում՝ եկեղեցապատկան) հող: Տարբեր գավառներում բառը ունեցել է տարբեր արտասանություն՝ մարաբա, մարապա, մրիպա, մրեպա, միրիպա և այլ:-Ծանոթ.կազմ.:

[95] Փաստաթղթում այդպես է, պետք է լինի քյուրդի:-Ծանոթ.կազմ.:

[96] Շարունակությունը վնասված է:-Ծանոթ.կազմ.:

[97] Շարունակությունը վնասված է:-Ծանոթ.կազմ.:

[98] Ռ.յաբինկին Ֆյոդր Տրաֆիմովիչ (1858 -19) 1915թ. ապրիլ-հուլիս ամիսներին 4-րդ Կովկասյան բանակային կորպուսի շտաբի պետ:

[99] Հացահատիկից հավաքվող հարկատեսակ Թուրքիայում (աշար, ուշար), որ հավաքագրվում էր կապալառուների միջոցով:-Ծանոթ. կազմ.:

[100] Փաստաթուղթը կիսատ է:-Ծանոթ.կազմ.:

[101] Բրաունինգ:-Ծանոթ.կազմ.:

[102] Պաշտոնապես այդպիսի գավառակ չի եղել: Այսպես է կոչվել Վանի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ ժամանակավորապես ազատագրված շրջանը, որը ընկած էր համանուն գյուղի շրջակայքում: -Ծանոթ.կազմ.:

[103] Ազգանունը անընթեռնելի է: -Ծանոթ.կազմ.:

[104] Խոհարար:-Ծանոթ.կազմ.:

[105] Մայիսի 29-ին 4-րդ կորպուսի հրամանատար, գեներալ Օգանովսկին հետևյալ հեռագիրն է ուղարկել գեներալ-մայոր Նիկոլաևին. «Назначенные Вами в помощь русским войскам начальники уездов силой отбирают от чиновников интендантства конфискованный ими скот, как это было в Бегри-Кале. Прошу сменить начальника уезда и назначить более способного. Генерал Огановский»:-Ծանոթ.կազմ.:

[106] Ստորագրությունը անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:

[107] Հավանաբար՝ ըստ Եվրոպայի:-Ծանոթ.կազմ.:

[108] «Վան-Տոսպ», հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1911-1915թթ. Վանում, 1915-18-ին՝ Թիֆլիսում և 1919-ին՝ Երևանում: Սահմանադիր ոմկավար կուսակցության (հետագայում՝ Ոամկավար ազատական կուսակցություն) Վասպուրականի շրջանի, 1919-ին՝ ՌՍԿ-ի Հայաստանի կենտրոնական խորհրդի հրատարակություն:-Ծանոթ.կազմ.:

[109] Նկատի ունի կամավորական 2-րդ ջոկատը:-Ծանոթ.կազմ.:

[110] Թուրքական կշռի միավոր:-Ծանոթ.կազմ.:

[111] Ծանրության միավոր, հավասար է 4,53 գրամի, սակայն այստեղ, հավանաբար, այլ չափ ունի:-Ծանոթ. կազմ.:

[112] Հունիսի 17-ին Բայազետյան ջոկատի հրամանատար գեներալ-մայոր Նիկոլաևին է ուղարկել հետևյալ գրությունը. «Вследствие запроса от 4 июня N 114, препровождаю при сем сведения, сообщенные мне Ванским управлением "Dette publice" 9-го с. июня N 23.

1. Еженедельный отпуск соли находится в зависимости от числа покупателей: в истекшем мае месяце, как известно, дороги не были вполне безопасны и сельчане не находились в своих селениях и потому продавалось 150-400-1400 кило соли в день; в текущем же месяце продажа соли уже начала достигать 500-1000-2000-2500-4800 кило в день.

2. С 1го по 31е включительно мая продано всего соли 14016 кило, а в июне, с 1го по 8е включительно, сбыт выразился в 14496 кило. При пожаре в Управлении все счетоводные книги сгорели, не уцелело ни одной деловой бумаги; в особенности, вследствие апрельских событий

двери некоторых складов управления сгорели и заставлены кирпичем, двери же других были открыты лицами подлежащими следствию, и склады были частью разграблены, частью предоставлены грабежу, причем были две жертвы из-за грабежа. Поэтому нет возможности определить количества ни наличного, ни прочих скадов, когда возобновятся почтово-телеграфные сношения с Эрзрумом и Константинополем, будет возможно выписать записи о содержании складов и взвесов; наличное в складах количество определит общее количество, а следовательно и причененный убыток. В большинстве складов сохранилось соли $^{4}/_{8}$ и $^{1}/_{8}$ часть, причем склады отпечатаны комендантом г. Вана. За Ванского губернатора П. Левонян, Секретарь А. Дарбинян» (ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թթ.122-123):-Ծանոթ.կազմ.:

[113] *Արգելոցապահ ջոկատ:-Ծանոթ կազմ.:*

[114] *Կարծելով:-Ծանոթ. կազմ.:*

[115] *Ներկատուն:-Ծանոթ.կազմ:*

[116] *Նմանատիպ դիմում է գրվել նաև հուլիսի 8-ին, տես փաստաթուղթ N 215: -Ծանոթ.կազմ.:*

[117] *Այստեղ և հաջորդ փաստաթղթերում՝ խոշոր եղջերավոր անասուն:-Ծանոթ.կազմ.:*

[118] *Հեռախոս: -Ծանոթ.կազմ.:*

[119] *Նկատի ունի ռուսական հրամանատարությանը:-Ծանոթ.կազմ.:*

[120] *Մարզ:-Ծանոթ.կազմ.:*

[121] *Այդպես է տեքստում, պետք է լինի Արշեա:-Ծանոթ.կազմ.:*

[122] *Մեկ անգամ հավաքվելիք բերք:-Ծանոթ. կազմ.:*

[123] *Ամերիկայի Ազգաստամատույց կոմիտեի (Ամերկոմի) գլխավոր տնօրեն, կապիտան Եարրոն երկար տարիներ Հայաստանում զբաղվել է որբախնամ գործունեությամբ:-Ծանոթ.կազմ.:*

[124] *Նկատի ունի Թեոս Տեղտրիկյանին:-Ծանոթ.կազմ.:*

[125] *Փաստաթղթի բնագիրը տես ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.34, թ.1:-Ծանոթ.կազմ.:*

[126] *Հավանաբար տակտիկա բառն է:-Ծանոթ.կազմ.:*

[127] *Ինքնորեն:-Ծանոթ.կազմ.:*

[128] *Նույն օրը Վանի նահանգապետի գրասենյակը հետևյալ գրությունն է ուղարկել Վանի էտապային պարետին. «Вследствие письма вашего высокоблаг. N92 от 10 июня по распоряжению Военного Губернатора честь имею сообщить, что заросшая клевером площадь была продана Управлением Армянской Араратской дружине, почему всякого рода переговоры и распор жения о названной лощади могут происходить через Штаб названной дружины»:-Ծանոթ.կազմ.:*

[129] *Նշված կարգադրությունը տես նույն տեղում, թ.46:-Ծանոթ.կազմ.:*

[130] *Սույն հասկացությունը նշանակում է պարտքի վճարման ժամկետի հետաձգում:-Ծանոթ.կազմ.:*

[131] *Թուրքական դրամական միավոր:-Ծանոթ.կազմ.:*

[132] Օգանովսկի Պյոտր Իվանովիչ 1915թ հունվարից դեկտեմբեր 4-րդ կովկասյան բանակային կորպուսի հրամանատար: -Ծանոթ.կազմ.:

[133] Հապաղելու,դանդաղելու:-Ծանոթ.կազմ.:

[134] Գեներալ-մայոր Նիկոլաևի կողմից Պետրոս Քոսյանին վկայական է տրվել հունիսի 27-ին (ՀԱԱ, ֆ.242, ց.1, գ.6, թ.146):-Ծանոթ. կազմ.:

[135] Համազասպ (1873, Վան-1921, Երևան), ազգային-ազատագրական շարժման գործիչ: Կովկասում մասնակցել է հայկական կամավորական շարժմանը, նշանակվել է 3-րդ գնդի հրամանատար: Ձերբակալվել է Հայաստանի խորհրդային կառավարության կողմից և բանտում կացնահարվել: -Ծանոթ.կազմ.:

[136] Ամառանոցավայր, յայլա:-Ծանոթ.կազմ.:

[137] Չարշը – շուկա (թուրքերեն):-Ծանոթ.կազմ.:

[138] Հետևում է շուրջ 100 ստորագրութիւն:-Ծանոթ.կազմ.:

[139] Շրջաբերականը ուղարկվել է Վանի դատարանի նախագահությանը, դատախազին, տնտեսական մարմնին, քաղաքապետին, ոստիկանապետին, ընդհանուր քննիչին, երկրագործական մարմնին և ելևմտական վարչությանը.-Ծանոթ.կազմ.:

[140] Փաստաթղթի ռուսերեն բնագիրը տե՛ս նույն տեղում, թ. 49:-Ծանոթ. կազմ.:

[141] Շարպանտե Կլաաս-Գուստավ-Ռոբերտ Ռոբերտովիչ (1858 -1918թթ.), 1910-1915թթ. Կովկասյան հեծյալ դիվիզիայի պետ:-Ծանոթ.կազմ.:

[142] Նույն բովանդակությամբ նամակ է հղվել գեներալ Շարպանտեին:-Ծանոթ.կազմ.:

[143] Մաղեն իշարեսի հանքերի վարչություն (թուրքերեն):- Ծանոթ. կազմ.:

[144] Փաստաթուղթը վնասված է:-Ծանոթ.կազմ.:

[145] Վերնագիրը փաստաթղթինն է: -Ծանոթ.կազմ.:

[146] Խոսքը Չավուրմի բաղի մասին է: -Ծանոթ.կազմ.:

[147] Այս հրամանագիրը ուղարկվել է նաև Շահբաղի, Խոշապի, Ալթուրի, Ճանիկի, Բերկրիի, Հայոց-Ձորի, Մոկսի, Արճակի, Արճեշի, Ոստանի, Կարճկանի և Արտամետի գավառապետներին: -Ծանոթ.կազմ.:

[148] Քյուչուկ չափ- Մաուզեր մակնիշի հրացանի թուրքերեն անվանումը:-Ծանոթ. կազմ.:

[149] Ամառանոց, յայլա:-Ծանոթ.կազմ.:

[150] Մեքրայուզ (թուրք.)-հարյուր մետրից [փոխառ], նկատի ունի ականանետ:-Ծանոթ.կազմ.:

[151] Խոսքը վերաբերում է 1915 թ. ապրիլի 17-18-ը Դիլմանի (քաղաք Պարսկաստանում, Սալմաստ գավառի կենտրոնը) մոտ թուրքական ու ռուսական զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտին, որն ավարտվեց ռուսների հաղթանակով: Ճակատամարտին մասնակցել է նաև զորավար Անդրանիկի կամավորական ջոկատը:-Ծանոթ.կազմ.:

[152] Փաստաթուղթը կիսատ է:-Ծանոթ.կազմ.:
[153] Ստորագրությունը անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:
[154] Ինչ նմուշի մասին է, հնարավոր չի եղել պարզել:-Ծանոթ.կազմ.:
[155] Խոսքը ռուսական միալիցք Բերլյան նմուշի հրացանի մասին է :-Ծանոթ.կազմ.:
[156] Խոսքը ամերիկյան միալիցք Պիբոդի –Մարտինի նմուշի հրացանի մասին է :-Ծանոթ.կազմ.:
[157] Նկատի ունի մոդել՝ նմուշ բառը:-Ծանոթ.կազմ.:
[158] Նկատի ունի եղանակի:-Ծանոթ.կազմ.:
[159] Իր ուժերի չափ, ըստ կարելույն:-Ծանոթ.կազմ.:
[160] Թարգմանությունները տես նույն տեղում, թ.7-11:-Ծանոթ.կազմ.:
[161] Կալվածքների կապալառուներին:-Ծանոթ.կազմ.:
[162] Նկատի ունի Թեոս Տեղտրիկյանին:-Ծանոթ.կազմ.:
[163] Նկատի ունի 1915թ. դավաղրաբար սպանված Իշխանին՝ Նիկոլ Պողոսյանին:-Ծանոթ.կազմ.:
[164] Նկատի ունի պրապորշչիկ:-Ծանոթ.կազմ.:
[165] Հուլիսի 4-ին գեներալ Նիկոլաևը հետևյալ զրությունն է ուղարկել Վանի նահանգապետ Արամին. «Прилагая к сему список армянам, освобожденным от курдов 26-27 июня сего года и переданным жителям сел. Крел, прошу навести справку о том, не входят ли в число освобожденных армян и 12 мальчиков, о коих сообщается в переписке. В противном случай мною будет приказано заложнику курдов Бегри-беку немедленно их освободить. Начальник отряда, генерал-майор Николаев. 4 июля 1915 года. N 1601. кавказская армия» (Նույն տեղում, թ.174): -Ծանոթ.կազմ.:
[166] Վարդան Մեհրաբյան, Խանասորի Վարդան, քաղաքական, ռազմական գործիչ: Ծառայել է ռուսական բանակում: 1897-ին նշանակվել է Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատար: 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ նրան է վստահվել Ղարաբաղի ինքնապաշտպանությունը: 1915-ի գարնանը նշանակվել է Արարատյան գնդի հրամանատար: Մահացել է 1943թ. Երևանում: -Ծանոթ.կազմ.:
[167] Գդալներ:-Ծանոթ.կազմ:
[168] Գեներալ-մայոր Նիկոլաևի կողմից Ղ. Խանջյանին, Գ. Շահինյանին և Վ. Բաբայանին վկայականներ է տրվել հուլիսի 5-ին (ՀԱԱ, ֆ.242, ց,1, գ.6, թթ.157, 159, 160):-Ծանոթ.կազմ.:
[169] Ստորագրությունն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ:
[170] Հուլիսի 6-ին Բայազետյան զորաջոկատի հրամանատար գեներալ-մայոր Նիկոլաևը հետևյալ պատասխանն է ուղարկել Վանի նահանգապետ Արամին. «Անհրաժեշտ է հաւատացնել ազգաբնակչութեանը, որպէսզի առաջւայ նման դաշտերը մշակէ և ծանուցանել, որ արտերը կերցնելու մասին եղած բոլոր խնդրանքները ուղղին արտերի վնաս-

ները քննող Յանձնախմբի Նախագահին: Բոլոր հիմնաւոր բողոքները կ'բաւարարուեն: Զօրաջոկատի հրամանատար Գեներալ-մայոր Նիկոլաև»: -Ծանոթ.կազմ.:

[171] *Հունիսի 5-ին գեներալ-մայոր Նիկոլաևը զրոյցը ետ է վերադարձրել Ս. Մանուկյանին, որի ետևի մասում մեքենագրված է հետևյալ գրությունը. «Ванскому губернатору.Необходимо подтвердить населению, чтобы поля ими обрабатывались, по-прежнему, распространить между жителями, чтобы все заявления о потравах направлялись председателю комиссии по рассмотрению жалоб на потравы. Все основательные претензии будут удовлетворены. Начальник отряда генерал-майор Николаев. 5/6 июля 1915 года N 2621»:-Ծանոթ.կազմ:*

[172] *Չավակն:-Ծանոթ.կազմ:*

[173] *Հետևում է մի խումբ բնակիչների ստորագրութիւններ:-Ծանոթ.կազմ:*

[174] *Մաուզեր ևմուշի հրացան:-Ծանոթ.կազմ.:*

[175] *Տես ծանոթագրություն 154:*

[176] *Հացահատիկից հավաքվող հարկատեսակ Թուրքիայում (աշար, ուշար):-Ծանոթ. կազմ.:*

[177] *Տես ծանոթագրություն 90:*

[178] *Ներկատուն:-Ծանոթ.կազմ:*

[179] *Գավառակ:-Ծանոթ.կազմ.:*

[180] *Տղամարդկանց զորակոչ թիկունքում աշխատեցնելու համար:-Ծանոթ. կազմ.:*

[181] *Տրվում է փաստաթղթի վերջում:-Ծանոթ. կազմ.:*

[182] *Ռուսերեն սզոляци՝ բառն է:-Ծանոթ.կազմ.:*

[183] *Նույն ոստիկանությունն է:-Ծանոթ.կազմ.*

[184] *Գաղել-քաքցնել:-Ծանոթ.կազմ.:*

[185] *Թղթի կապոց բաղկացած 500 թերթից:-Ծանոթ.կազմ.:*

[186] *Հացահատիկից հավաքվող հարկատեսակ Թուրքիայում (աշար, ուշար), որ հավաքագրվում էր կապալառուների միջոցով:-Ծանոթ. կազմ.:*

[187] *Գավառապետ:-Ծանոթ.կազմ.:*

[188] *Թշնամին:-Ծանոթ.կազմ.:*

[189] *Խոսքը գեներալ Շարպանտեի մասին է: Տես ծանոթ. 141:*

[190] *Խոսքը գեներալ Օգանովսկու մասին է: Տես ծանոթ. 132:*

[191] *Հուլիսի 6-ին Բայազետի զորամասի պարեկը հետևյալ գրությունն էր հղել Վանի նահանգապետ Արամին. «Քաղաքի զորքի մեծաւորի հրամանի համաձայն, խնդրում եմ հարցնել Սահակ Արքեպիսկոպոս Այվատեանին, արդեօք ծախե՞լ է նա ոչխարներ Ղևոնդ Սէրովբեանին, ի՞նչ քանակութեամբ և ե՞րբ, ՈՒ՞մ էին պատկանում այդ ոչխարները և ի՞նչ հիմամբ են ծախել»: Հուլիսի 8-ին Վանի նահանգապետը դիմում է*

Սահակ արքեպիսկոպոսին՝ վերոհիշյալ հարցերին պատասխանելու խնդրանքով (ֆ.242, ց.1, գ.10, թ.48):

[192] Վանդակավոր նախշ ունեցող կտոր:-Ծանոթ.կազմ.:

[193] Ամերիկյան բյազ- բամբակյա խիտ գործվածք:-Ծանոթ կազմ.:

[194] Գամ, հեղյուս, մեխ:-Ծանոթ.կազմ.:

[195] Հեղինակը նկատի ունի սպանված:-Ծանոթ.կազմ:

[196] Ամառանոց, յայլաղ:-Ծանոթ.կազմ.:

[197] Առերես:-Ծանոթ.կազմ.:

[198] Նախկին բնակավայրերում: -Ծանոթ.կազմ.:

[199] Հանճնաժողով:-Ծանոթ.կազմ.:

[200] Չեկույցագիր: -Ծանոթ.կազմ.:

[201] Վանի ռուսական կայազորի պետի նստավայրը: -Ծանոթ.կազմ.:

[202] Հանճնաժողով:-Ծանոթ.կազմ.:

[203] Նկատի ունի ռուսներին: -Ծանոթ.կազմ.:

[204] Այդպես է տեքստում, պետք է լինի տրադիցիայի:-Ծանոթ.կազմ:

[205] Քեռի (Գալֆայան Արշակ Գրիգորի, 1858-1916), ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՀԴ կուսակցության անդամ: 1890 թ. մասնակցել է Ս. Կուկունյանի արշավանքին, 1904 թ.՝ Սասունի ապստամբությանը: Հայկական 4-րդ կամավոր. գնդի հրամանատար: Զոհվել է 1916 թ. մայիսին՝ Ռևանդուզի մոտ: -Ծանոթ.կազմ.:

[206] Նկատի ունի Հովսեփ Արղությանին (1865-1925), 1915թ. կամավորական 7-րդ ջոկատի հրամանատար: -Ծանոթ.կազմ.:

[207] Բնագրում 1919-1907թթ.-Ծանոթ.կազմ.:

[208] Բնագրում 1919-1907թթ.-Ծանոթ.կազմ.:

[209] Հունվարի 3-ի նիստում ընդունվել էր հետևյալ որոշումը. « Փոխադրել Յատուկ Կոմիտէի Երևանի բաժանմունքին 200.000 ռ. համաձայն Յ. Կ.-ի անդամ պ. Արամ Մանուկյանի պահանջի» (ֆ.222, ց.1, գ.24, թ.89):-Ծանոթ կազմ.:

[210] Փաստաթղթում այսպես է, ճշանակում է՝ отдельный поезд с товарами для дивизии:-Ծանոթ.կազմ.:

[211] Փաստաթղթում այսպես է, ճշանակում է՝ Самарцев требует восемьсот человек:-Ծանոթ.կազմ.:

[212] Յապոն (Պարոնյան Հոհաննես (ծն. 1878թ.), գորիսցի, Դարալագյազի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար և գավառապետ, տարագրվել է Պարսկաստան, երկար տարիներ բնակվել Մուժամբար հայաբնակ գյուղում և այնտեղ կնքել իր մահկանացուն: Չպետք է շփոթել Յապոն-Համբարձում Սարգսյանի հետ:-Ծանոթ.կազմ.:

[213] Խոսքը Վանում տեղաբաշխված 5-րդ գնդի հրամանատար Պողոս (Պավել) բեկ Փիրումյանի մասին է:-Ծանոթ.կազմ.:

[214] Անսահման իրավունք, լիազորություն,որը կարելի է գործադրել ըստ ցանկության: -Ծանոթ կազմ.:

[215] *Մարտի 24-ի:-Ծանոթ.կազմ.:*

[216] *Խոսքը հայկական կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատարի տեղակալ Դանիել բեկ Փիրումյանի մասին է:-Ծանոթ.կազմ.:*

[217] *Նվաճի ուճի Սմբրկովկասյան Սեյմի կողմից ապրիլի 10-ին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը և թուրքերի կողմից ռազմական գործողությունների դադարեցումը:-Ծանոթ.կազմ.:*

[218] *Նույն օրը Քաբումից ստացվել էր հետևյալ հեռագիրը. «Командиру Корпуса Генералу Назарбекову.*

Извещаю Вас, что вчера нами был подписан мирный договор с Турцией. Главные пункты договора следующие:

1. Граница начинается от восточного угла Ахалкалакского уезда и следует на юг мимо ст.Аг-Булаг по прямой линии через вершину Алагеза до Вагаршапата, который остается за нами, затем параллельно железной дороге до Аг-Булага и дальше до Арпа в Шарур.

2. В течение недели наши и Оттоманские войска должны быть оттянуты на свою территорию.

3. На время войны Турция имеет право перевозить войска по нашей территории.

4. Солдаты и беженцы из Джульфы получают свободный пропуск в Эривань и, вообще, в Армению.

5. На время войны мы можем содержать одну дивизию, раположенную по соглашению с Турцией.

6. Обмен военнопленных.

7. На время войны армяне областей, отошедших к Турции, будут освобождены от несения воинской повинности.

Ввиду изложенного и на основании полномочий Национального Совета мы Вас просим:

1. Прекратить военные действия против Турции.

2. Войти в соглашение с турецким командованием относительно возвращения войск обеих сторон на свои территории.

3. Пропустить турецкие войска через Делижан на Казах.

4. Войти в соглашение с Шефки-Пашой относительно прекращения военных действий.

Горячо поздравляю с боем у Караклиса, получившим со стороны Главнокомандующего Вехиба-Паши одобрение и горячую похвалу за блестящее действие солдат армян.

Договор подписан нами от имени Независимой Армянской Республики.

Председтель Мирной делегации Ал.Хатисов.

Члены: Пападжанов и Качазнуни.

С подлинным верно: поручик ստորագրությունն անընթեռնելի է» (Ֆ.289, ց.1, գ.2, թ.2): -Ծանոթ.կազմ.:

[219] *Խոսքը Քաթումի բանակցություններում թուրքերի կողմից մայիսի 26-ին հաշտության իրենց պայմանները ընդունելու մասին Անդրկովկասի կառավարությանը ներկայացրած վերջնագրի մասին է:-Ծանոթ.կազմ.:*

[220] *Հրապարակվող փաստաթղթում այս բառի փոխարեն գրված է անընթեռնելի, այն վերականգնվել է ռուսերեն տարբերակից (Ֆ.289, ց.1, գ.2, թ.10):-Ծանոթ.կազմ.:*

[221] *Այդպես է տեքստում, ինչ հեռագրի մասին է խոսքը, հնարավոր չէ պարզել:-Ծանոթ.կազմ.:*

[222] *Ռազմաճակատների:- Ծանոթ.կազմ.:*

[223] *Կարպուսի հրամանատարությունը:-Ծանոթ.կազմ.:*

[224] *Նկատի ունի խուժան:-Ծանոթ.կազմ.:*

[225] *Ստորագրություններն անընթեռնելի են:-Ծանոթ.կազմ.:*

[226] *Զեկուցագիրը գրվել է 1918 թ. հուլիսի 25-ին (ՀԱԱ, Ֆ.201, ց.1, գ.215, թ.12): Նույն խնդրի վերաբերյալ 1918 թ. օգոստոսի 6-ին Արամ Մանուկյանը հետևյալ գրությունն է ուղարկել ՆԳՆ բժշկա-սանիտարական վարչությանը. «Эчмиадзинский Уездный комиссар доносит, что в 1-ом участке вверенного ему уезда появились болезни: оспа и дезинтерия, в виду чего, предлагаю принять срочные меры к прекращению этих эпидемических заболеваний. Министр внутренных дел Арам»:-Ծանոթ.կազմ.:*

[227] *Այդպես է տեքստում, պետք է լինի «по решенному»*

[228] *Պետք է լինի Կրեսս ֆոն Կրեսսենշտեյն:-Ծանոթ.կազմ.:*

[229] *Հուլիսի 30-ին գեներալ Վիշինսկին հետևյալ հեռագիրն է հղել Ա. Մանուկյանին. «Передаю копию только что принятой Канакирской станцией радиограммы: "Эривань. Правительству Армении. Немецкая миссия выезжает по железной дороге через Александрополь, прибудет в Эривань во вторник вечером. Сообщите в Делижан Джамаляну." Вышинский » (Ֆ.201, ց.1, գ.37, թ.90):-Ծանոթ.կազմ.:*

[230] *Լեռնանցքի:-Ծանոթ.կազմ.:*

[231] *Ամառանոց, յայլաղ:-Ծանոթ.կազմ.:*

[232] *Նկատի ունի Նախիջևանը Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս հայտարարելու մասին հրանանը:-Ծանոթ.կազմ.:*

[233] *Ամառանոց բարձրացող ջոչեր: -Ծանոթ. կազմ.:*

[234] *Հրանոթային դասակ :-Ծանոթ. կազմ.:*

[235] *Անբան, անեռանդ:-Ծանոթ.կազմ.:*

[236] *Ճիպոտահարել:-Ծանոթ կազմ.:*

[237] *Օգոստոսի 13-ին ՆԳ նախարարը հետևյալ պատասխան հեռագիրն է ուղարկել Զեմստվային վարչության նախագահին. «Распоряжение Ваше начальнику участка относительно предложения турецкому офицеру*

оставить пределы уезда подтверждаю, и в будущем также не допускать подобных явлений без особого распоряжения нашего Правительства. Министр внутренних дел» (Նույն տեղում, թ.164): -Ծանոթ. կազմ.:

[238] *Այդպես է տեքստում պետք է լինի «Шахрибея»:-Ծանոթ.կազմ.:*

[239] *Խոսքը Կողբ գյուղի բնակիչ Կարապետ Տեր-Առաքելյանի մասին է: Օգոստոսի 12-ին նա դիմել էր ՆԳ նախարար Ա. Մանուկյանին՝ իր կրած վնասը փոխհատուցելու խնդրանքով: (Նույն տեղում, թ.4): -Ծանոթ. կազմ.:*

[240] *Օգոստոսի 3-ին Երևանի քաղաքագլուխ Ծ. Ծոշյանը դիմել էր ՆԳ նախարար Ա. Մանուկյանին՝ վարչական ձերբակալություններից բացի դրամական տուգանքներ կիրառելու հարցի մասին: Օգոստոսի 7-ին ՆԳ նախարարը այդ գրությունը ուղարկել է արդարադատության նախարարությանը, իսկ օգոստոսի 26-ին հետևյալ պատասխանն է ստացել Երևանի քաղաքագլխին. «В ответ на представление, от 3-го сего августа за N 1596, сообщаю Вам для сведения и соответствующих распоряжений, что Совет Министров в заседании своем от 21 сего же августа, постановил: предоставить право начальнику Эриванской городской милиции налагать взамен ареста денежный штраф до трехсот (300) рублей, но с обращением этих денег не в доход города, как об этом Вы ходатайствуете, а в доход казны. Министр внутренних дел» (նույն տեղում, թթ. 10շրջ-11):-Ծանոթ. կազմ.:*

[241] *Ստորագրությունն անընթեռնելի է: -Ծանոթ. կազմ.:*

[242] *Նկատի ունի բանող անասուն, հիմնականում եզ:-Ծանոթ.կազմ.:*

[243] *Բժշկա-սանիտարական վարչությունը ՆԳ նախարարի գրությունը ետ է ուղարկել, որի վրա գրված է. «Хорен Тер-Степанян, Арам Мнацаканов, Арам Бабаев, Вардан Тер-Сааков, Михаилян, Гарян, Мартиросян, Драмбян»:-Ծանոթ. կազմ.:*

[244] *Օգոստոսի 22-ին ՆԳ նախարար Ա. Մանուկյանը, ի պատասխան զավառապետ Ծասալյանի խնդրանքի, հետևյալ հեռագիրն է ուղարկել. « Остаток национальных сумм предписываю сдать в Казначейство о произведенных расходах по реквизиции предметов первой необходимости для воинских частей. Вам надлежит представить подробный счет Военному министру относительно расходов по перевозке почты Еленовка-Новобаязет. Представить смету Министр внутренних дел» (Ф.201, д.1, д.37, р.70): -Ծանոթ. կազմ.:*

[245] *Տեքստում այդպես է:-Ծանոթ. կազմ:*

[246] *Օգոստոսի 20-ին քննիչ Հովսեփյանը հետևյալ զեկուցագիրն է հղել Երևանի շրջանային դատարանի դատախազին. «Возвратившись 17 августа из служебной поездки, сообщаю Вам, для зависящих распоря-*

жений и доклада г. министру Юстиции на циркуляр его от 12 сего августа, за N12, следующее:

Положение в уезде, лишавшее последние месяцы следователей возможности работать, пока к лучшему не изменилось, никаких экипажей для разъездов государственных служащих не существует, верховых же лошадей можно достать с громадным трудом и за баснословно высокую плату. Если же пытаться получить их за установленные прогоны чрез местных комиссаров, то это ни к чему не ведет, так как эти должностные лица никаким авторитетом среди населения не пользуются и никакой помощи оказать не могут. Чтобы не быть голословным сообщаю следующее:

Проездом 16 августа через Канакир я просил участкового комиссара приготовить к полудню 17 августа для меня, врача и фельдшера верховых лошадей для поездки в сел. Джвриш.

Возвратившись 17 августа в Канакир, мы узнали, что участковый комиссар уехал в Эривань, поручивши заботу о лошадях общественному комиссару, а последний отправился для оказания нам содействия в сел. Джвриш, но лошадей не приготовил.

И вот, не смотря на меры, принимавшиеся помощником участкового комиссара и сельским комиссаром, достать лошадей не представилось возможности, и мы, не сделавши половины того, что предполагали сделать, пешком вернулись в Эривань.Считаю не лишним добавить, что во всех тех, переполненных голодными беженцами, селениях, чрез которые нам приходилось проезжать, свирепствует эпидемия холеры, что пока никаких санитарных и медицинских мер к борьбе с ней не принято, и что поездки при таких условиях сопряжены с громадным риском для жизни. Следователь В. Осипов» (Նույն տեղում, թթ.3-4): -Ծանոթ. կազմ.:

[247] *Խոսքը «Ժողովուրդ» թերթի մասին է: -Ծանոթ. կազմ.:*

[248] *Նկատի ուն Զեյնալ գյուղում գտնվող գաղթականներին:-Ծանոթ.կազմ:*

[249] *Խոսքը բրինձի ցանքսերի մասին է:-Ծանոթ.կազմ.:*

[250] *Հետևում է գյուղացիների անունները և գողացված անասունի քանակը: -Ծանոթ.կազմ.:*

[251] *Ստորագրությունն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:*

[252] *Հետևում է Երևանի գավառային կոմիսարի ստորագրությունն ու կնիքը: -Ծանոթ.կազմ.:*

[253] *Սեպտեմբերի 4-ին ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանի դիմել էր ներքին գործերի նախարար Ս. Մանուկյանին՝ մաքսատների բացմանը օժանդակելու խնդրանքով (Ֆ.201, ց.1, գ.15, թ.68):-Ծանոթ.կազմ.:*

[254] Նոր-Բայազետի գավառային կոմիսար Միսակ Թասալյանը ՆԳՆ Ա.Մանուկյանի սեպտեմբերի 13-ի կարգադրությամբ հեռացվում է պաշտոնից:-Ծանոթ.կազմ.:

[255] Նկատի ունի տաքրեր իրեր:-Ծանոթ.կազմ.:

[256] Խարազյան Երո (Անուշավան) - ցարական բանակի պոռուչիկ, անկուսակցական, 1917 թվականի վերջերին Թիֆլիսից, իբրև Անդրկովկասյան կոմիսարիատի լիազոր ներկայացուցիչ, գործուղվել էր Ջուլֆա, խնդիր ունենալով հավաքել և ամբարել ռուսական բանակի կողմից լքված զենքերն ու ռազմամթերքը: Նա պատվով էր կատարել իր առաքելությունը և ամբողջ գավառի հայության մեջ մեծ համարում էր ձեռք բերել հիմնականում այն պատճառով, որ պահեստավորված զենքի զգալի մասը անվճար տրամադրել էր հայ բնակչությանը (ՀԱԱ, ֆ.370, ց.2, գ.15, թ.1): 1918թ. Նախիջևանի հայերի ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչը: Արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ հետագայում՝ 1918թ. աշնանը, Երևանում, Ե.Խարազյանը ձերբակալվել է: 1919թ. մայիսին նրան ներում է շնորհվել և զորակոչվել բանակ: 1921թ. հունվարին սպարվել է Ռյազան, այնտեղից վերադառնալուց հետո զբաղվել է մսնկավարժությամբ: 1938թ. ձերբակալվել է և հարցաքննության ժամանակ իրեն դուրս է նետել ՆԳԺԿ շենքի երրորդ հարկի պատուհանից ու զոհվել (ՀԱԱ, ֆ.571,ց.5,գ.467): -Ծանոթ.կազմ.:

[257] Սեպտեմբերի 12-ին Նոր Բայազետի գլխավոր լիազոր Բայալյանցը հեռագրով հայտնել է ՆԳ նախարար Արամ Մանուկյանին՝ վերոհիշյալ անձանց կողմից հավաքված ցորենի յուրացման մասին (ֆ.201, ց.1, գ.15, թ.79):-Ծանոթ. կազմ.:

[258] Տես նաև «Կառավարության լրաբեր», 20 սեպտեմբերի 1918թ.: -Ծանոթ. կազմ.:

[259] ՆԳ նախարար Ա. Մանուկյանը սեպտեմբերի 8-ի գրությամբ պրապորշիկ Գրիգորյանին էր հանձնարարել նաև եզդիներին շարայինի ծառայության վարժեցնելու գործը (ֆ.201, ց.1, գ.15, թ.108):-Ծանոթ.կազմ.:

[260] Տեքստում այդպես է:-Ծանոթ. կազմ:

[261] ՆԳ նախարար Ա. Մանուկյանը հոկտեմբերի 5-ին ստացել է հետևյալ հեռագիրը. "В селении Солак поселилась какая-то команда во главе хумбапетом Шмавоном, которая производит самочинности и силою отбирает все нужное для себя. Просим распоряжения. Месроп Вартанов. Оганес Асланов" (ֆ.201, ց.1, գ.15, թ.158):-Ծանոթ.կազմ.:

[262] Գաղթականներ Հովհաննիսյանն ու Օրդուևը ձերբակալվել են հոկտեմբերի 4-ին, Երևանի գավառի 2-րդ տեղամասի կոմիսարի կողմից: Հովհաննիսյանի մոտից առգրավվել է հրացան՝ 35 փամփուշտով, Օր-

դաևի մոտից՝ բաւրքական հրացան: (Նույն տեղում, թ.34 և շրջ.): -Ծանոթ.կազմ.:

[263] *Հոկտեմբերի 12-ին Կամսարականը հետևյալ հեռագիրն է ստացել Խաչատուր Չիրուխչյանից և Մկրտիչ Աֆրիկյանից. «Քաւառչային և ցակքարչային կառավարութեան տեցինք 38000 ռուբլի մինչև Դեկտեմբերին. 38000-ից զատ ունենք պետական ծախքեր: Նորդուզ, Կշլաղ, Յաքար գիւղերը չեն թողնում որսալու ծուկ, իրենք էն որսում՝ չ'ծանաչելով ոչ մի իշխանութիւն: Օրուայ վնասներին դիմանալ չենք կարող, կառավարութիւնից աջակցութիւն չենք տեսնում, այն ինչ՝ մեզ խոստումներով ծախեցին: Եթէ կառավարութիւնն չէր կարող զետն պաշտպանել գիւղացիներից, չ'պէտք է ծսխեր և մեր երեխաների վիզն կտրեր, խնդրում ենք հանուն կառավարութեան չահերի միջոցներ ձեռք առնէք պաշտպանելու կառավարութեան արէնդատորներին» (ֆ.201, ց.1, գ.15, թ.161):-Ծանոթ.կազմ.:*

[264] *Կամսարական Ստեփան (1876-1955), գյուղատնտես: 1902-ին ավարտել է Մոսկվայի Պետրովյան գյուղատնտեսական ակադեմիան: 1920-21թթ. եղել է ՀԽՍՀ հողժողկոմի պաշտոնակատար, 1924-30-ին՝ ՀԽՍՀ Պետպլանի գյուղատնտեսական բաժանմունքի նախագահ:*

[265] *ՆԳ նախարարը Ս. Մանուկյանը Հայկական դիվիզիայի պետ գեներալ-մայոր Սիլիկյանից հոկտեմբերի 17-ին ստացել էր հետևյալ զրույցը. «По полученным от начальника Штаба Делижанского района сведениям, в районе Казаха начались грабежи.Турки и татары грабят проезжих и заставляют их работать. Об изложенном желательно предупредить всех следующих по этому пути. Генерал-майор Силиков» (ֆ.201, ց.1, գ.15, թ.136):-Ծանոթ.կազմ.:*

[266] *Երևանի ռուսաց ազգային խորհուրդը հեռագիրը ստացել է հոկտեմբերի 20-ին (ֆ.201, ց.1, գ.15, թ.139): Հոկտեմբերի 23-ին Խորհուրդը հետևյալ զրույցն է առաքել ՆԳ նախարար Ս. Մանուկյանին. «Член Эриванского Русского Национального совета и Совета Армении И.И. Зорин дважды обращался к Вам с личной просьбой о принятии Вами мер против беженцев, находящихся в сел. Александровка, которые разоряют дома молокан, и дважды Вы давали обещания принять меры, но как видно из прилагаемой при сем телеграммы, отданные Вами приказания уездным комиссаром не приводились в исполнение, а посему Русский Национальный Совет вновь обращается к Вам, господин Министр, с просьбой оградить сел. Александровку от разрушения ее беженцами путем удаления последних из названного селения. Председатель [И. Филаров] (նույն տեղում, թ.138):-Ծանոթ. կազմ.:*

[267] *Ս.Հարությունյանին ու Ս. Սահակյանին կալանավորելու և Երևանի նահանգային բանտ տեղափոխելու որոշումը ՆԳ նախարար Ս.*

Մանուկյանը կայացրել է հոկտեմբերի 22-ին: (Նույն տեղում, թ.55): -Ծանոթ.կազմ.:

[268] *Ստորագրությունն անընթեռնելի է:-Ծանոթ.կազմ.:*

[269] *Խոսքը Գարեգին Նժդեհի մասին է:-Ծանոթ.կազմ.:*

[270] *Նոյեմբերի 4-ին ՆԳ նախարար Արամ Մանուկյանը հետևյալ գաղտնի գրությունն է ուղարկել Երևանի զավառային կոմիսար Լ. Ամիրխանյանին. «Вследствие рапорта от 3-го сего ноября за N 507, предписываю Вам еще раз в категорической форме предложить жителям Милли немедленно исполнить предъявляемое к ним требование Правительства, и в случае, если они и на этот раз откажутся от исполнения такового, то разрешаю Вам применить к ним силу оружия» (նույն տեղում թ.2):*

[271] *Խոսքը Գարեգին Նժդեհի մասին է:-Ծանոթ.կազմ.:*

[272] *Ղարաքիլիսայի զավառային կոմիսար պորուչիկ Անիևը դեկտեմբերի 3-ին զեկուցագիր է հղում ՆԳ նախարարին, ըստ որի զավառի 8 գյուղերից բռնագրավել էին 89 սայլակազք և 33 ձիասայլ (ՀԱԱ, ֆ.201, ց.2, գ.573, թթ.20, 21):-Ծանոթ.կազմ.:*

[273] *Գրագրության մեջ նշված է 13 գաղթականի անուն, տե՛ս նույն տեղում, թ.84 և շրջ.: -Ծանոթ.կազմ.:*

[274] *ՆԳ նախարարությանը կազմել էր Հայաստանից դուրս գալու կարգի վերաբերյալ հրահանգի հետևյալ նախագիծը. «1. Все граждане, желающие получить пропуск на беспрепятственный выезд из пределов территории Армении, обязаны для получения означенных пропусков предъявить:*

а) вид, удостоверяющий его личность, а также отношение к отбыванию воинской повинности;

б) представить свой продовольственный паспорт, а за неимением такового, официальную справку от городского карточного бюро о том, что паспорт этот ему не выдавался;

